Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով


This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material


Llin
1251

1999

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԱՆԿԼԻԱԿԱՆ
ՆԱՄԱԿԱՆԻ
ԿԱՄ
ՀԱՅՈՒ ՄԸ ՁԱԿԱՏԱԳԻՐԸ



ՀՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
АРМЯНСКОЙ ССР
Ա. Մ Ե Ր Ի Կ Ե Ա Ն
ՀԱՅԱՆԻԿԱՅԻ ԻՆ-ՏԻՒ

ՁՄԲՈՒԹԵՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԼԲԱՐՑ ՏԷՏԷՆԵԱՆ

1881

28. 1254

41254-ա

Ա.ռ

Ա.զնիւ Տ.երենց,

Շատ տարիներ առաջ՝ Լ.ոնտօն գտնուելով՝ գրել սկսած էի այս Ն.ո.վ.ե.ն.ն, որու ուրուագիրն՝ ի դարձիս Կ. Պոլիս, Ձեզի ցոյց տուի, իբրեւ իմ վաղեմի դաստիարակիս, որ՝ առաջին անգամ՝ ազատ մտածման ճաշակն ինծ ներշնչած էիք, եւ իբրեւ սրտակից բարեկամիս, որ իմ վիճակիս միշտ համակիր գտնուած էք: Ցորդոր տուիր ինծ, այն ժամանակ, աւարտել ու հրատարակելու այս Ն.ո.վ.ե.ն.ն, որմէ հազիւ մաս մը (16 նամակի չափ) Ա.ղէ.ք.ս.ն անուամբ, լոյս տեսաւ Ջ.միւռնիոյ Տ.ե.ր.ե.ն հանդիսին, եւ ապա Թիֆլիզի Հ.այ.ց Ա.ղ.բ.ս.ի կ.ո.չ.ն.ա.կ.ն մէջ, իսկ միւս մեծագոյն մասը (90 նամակի չափ) ծեռագիր կ'մնար գրասեղանիս մէջ:

Ինչպէս կ'տեսնէք, Ա.զնիւ բարեկամ, հին գործ մ'է այս, որ Ձեռեաս նոր երկերու ու գրիչներու մօտ անլի երեւի, սակայն արժէք մը ունի՝ զէթ ինծի համար, վասն զի Ձեր քաջալերութեան մէկ արդիւնքն է եւ իմ պանդխտութեան մէկ յիշատակը:

Ա.հա այս քաջալերութիւնն ու յիշատակը կ'յորդորեն զիս այսօր ոչ միայն բոլոր նամակներն ամփոփել եւ գրքի ձեւով հրատարակել, այլ եւ զայն Ձեզի նուիրել:

Ցուսամ որ կ'ընդունիք այս նուէրս իբրեւ նշան համակրութեան եւ յարգանաց,

Ձեր բարեկամին

Մ. Մ.ԱՓՈՒՐԵԱՆ

17 ապրիլ 1881
Զմիւռին.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Լոնտօն էի՝ երբ մի անգամ՝ ընկերութեան մը մէջ՝ մարմնեղ և խստադէմ անկլիացի մը քովս եկաւ և դրեթէ սպառնական ձայնով մ՚ինձ ըսաւ.

— Օտարական պարոն, կ՚իմանամ որ Հայաստանի էք. կը փափաքէի դիտնալ թէ մեր վերհսփաւ թագուհիին մօտ ձեր աղդին կողմէ դտնուող դեսպանին անունն ինչ է և ուր կը բնակի, վասն զի կարևոր բան մ՚ունիմ անոր հաղորդելիք։»

Այս հարցմունքը՝ թէև բնական՝ անակնկալ դտնելով պահ մը շփոթած ձգացի, և լաւ մը նայելէյ խօսակիցս անկլիացին երեսն որ հասկընամ թէ կատակ կ՚ընէ իմ շփոթութեանս վրայ ծիծաղելու դիտմամբ, թէ ոչ միամտօրէն կը խօսի։ Երբ սեսայ որ ինք՝ յուրտ ու հանդարտ դէմքով՝ իմ պատասխանիս կ՚սպասէ, ըսի.

— Պարոն, ներկայ դարուս Հայն, իր քաղաքական կացութեան համեմատ, չորս հինգ տեսակ տէր և չորս հինգ տեսակ դեսպան ունի ուրիշ Տէրութեանց մօտ, բայց իրօք՝ Հայու մը դեսպանը նոյն ինքն է. ուստի կրնաք հաղորդել ինձ ձեր խօսելիքը։»

Անկլիացին ծուռ ծուռ նայեցաւ և գլխ վերէն վար չափեցաւ ետև,

— Բնաւ չէի կարծեր, ըսաւ, որ այդ կերպարանքդ ունեցող անձ մը դերի լինի։

— Կ'մոռնաք, պարոն, ըսի, որ Անկլիա ոտք կոխողն ազատ է։»

Այս պատասխանիս վրայ՝ խօսակիցս ձեռքս բռնեց և այնպէս ուժգին թօթուեց որ մի քանի րոպէէն ետք իմ լինելն զգացի. ապա իր այցետոմսը տուաւ ինձ և խնդրեց որ միւս օր իր բնակարանն երթամ գինք գտնեմ։

Որոշեալ ժամուն՝ գացի իր բնակարանը։ Պարոն Հարլէյ, այս էր նոր բարեկամիս անունն, ծրար մը բռնած ձեռքն եկաւ և ըսաւ.

— Բաւական ժամանակ կայ որ իմ մէկ բարեկամն՝ մեռնելու ժամանակ, այս թղթերու ծրարը յանձնեց ինձ, և պատուիրեց որ կարդալ տամ։ Այլ և այլ լեզուագէտներու, հնագէտներու ցոյց տուի. ոմանք ըսին թէ մեհենական գիրեր են, այլք՝ հայերէն, մինչև անգամ Հիլօկրատէսի դեղագիրներ են, ըսողներ եղան։ Սակայն ես այս կարծիքն ունիմ որ Հայոց հին քաղքենդէին դիւանէն ելած մանր մունր յիշատակագիրներ պիտի լինին. ուստի միտքս դրի ձեր դեսպանին հաղորդել։

«Այժմ բացէք ծրարը նայեցէք. եթէ ձեր բանին կ'գան և օգուտ մ'ունին այդ թղթերն, կ'բաշխեմ ձեզի, այս պայմանաւ անշուշտ որ քաղելիք շահուդ կէսն ինձի բաժին հանէք։»

Բացի ծրարն և ինչ գտնեմ աղէկ. ձեռագիր նամակներ,

որոց մէկ մասը հայերէն և մաս մ'անկլիարէն գրուած, սակայն խառն ի խուռն և կէս մը պատառած և կէս մը խանգարուած էին։

— Զարմանք են, ըսի դառոզամիտ բարեկամիս, որ իրրև հին և տարօրինակ բան մը կ'ներկայէք ինձ թղթեր որ թէև մեզի համար քիչ շատ կարևորութիւն մ'ունին, սակայն իրրև շահադիտական դործ՝ ստակ մը չեն արժեր։

— Ուրեմն, շուտով կրակը նետեցէք, պատասխանեց Պ. Հարլէյ։ Կ'ցաւիմ որ քանի մը պահարան և քիչ շատ հոգ տարի այդ մնոտի թղթերը պահելու համար։

— Կրակը նետածի և մոխիր դարձածի պէս սեպեցէք, ըսի, վասն զի պիտի հրատարակեմ այդ թղթերը։»

Ապա շնորհակալիքս յայտնեցի, և ծրարը գրպանս դնելով դուրս ելայ։

Ահա այս նամակներն աչքէ անցընելով՝ ջանացի կարդալ դնել։ Թուական չգտայ. բայց յիշուած դէպքերէն կարելի է որոշել թէ ո'ր ժամանակի Հայոց կ'վերաբերին այս թղթերը։ Նէ-ՂԷ խառն է, և մեծ մասամբ Հայոց վրայ։ Ունի նաև վիպական կապ մը, որ թէև տեղ տեղ կ'կտրի, բայց ի վերջ կ'շարունակուի և վախճանի մը կ'յանգի։

Կան այս նամակներուն մէջ ակնարկութիւններ, անկլիական տեսակիտով կարծիքներ, որ թերևս ընթերցողին քիչ մը մութ երևին, կան նաև անաչառ դատումներ և յանդուգն տեսութիւններ որ թերևս մեր ինքնասիրութիւնը քիչ մը կծեն վիրաւորեն և մեր նախապաշարմունքը վրդովեն, սակայն պէտք չէ մոռնալ թէ՝ գրողներն անկլիացիներ են, որ մեր վիճակին լրենց յատուկ դիտակով կ'դիտեն ու կ'դատեն . . .։

Թէև այս նամականին նիւթն ու գոյնն այլազան, բուն ոգին հայկական է, և իրողութիւններու թագուն յարակցութիւն մը ունի։ Ուստի արժան դատեցի Հայոց մը ճակատագիրը կցել իր հին անկլիական անուան։

Մ. Մ.

Ա.ՆԿԼԻԱԿԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

ՆԱՄԱՆ Ա

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Առջի շաբաթ հոգ Լօնտօն մօտը էի, բարեկամ, այս առտու շոգենաւը զիս հոս նետեց երեք հալար մղոն տեղ ինծ առաւ մէջ կարելով: Ճամբորդութեան մը նկարագրուԹիւնն ընելու համար շատերը շատ մը տաղտկալի թերթեր կրնան ընել. իսկ ես զանց կ'առնեմ, միայն այսքան ըսելով որ շոգենաւի շարժումն ալ ծանր գաղ: Երկեօք որ օր մարդիկ թռչունի պէս պիտի թռչին: Թող անշուշտ՝ մեծն Բրիտանիա պիտի տայ աշխարհիս: Այս գլուխս իւր հնարագիտութեան կ'վերաբերի:

Ահա փախաքիս հասայ, հայ եմ լեղաւ՝ և քեզ հայասիրիդ հայերէն դրելու առիթ ունիմ: Եթէ իմ անկիրթս լինելս չգիտնայիր, կարծեմ որ զիս բնիկ հայու տեղ կ'բռնէիր դիրս կարդալուդ: Սակայն լիովին վստահ չեմ աս բանիս վրայ, ինչու որ դրիչն՝ որու եաին մարդս չերևիր իրօք, որչափ վարժ լինի և յստակ դրէ, եթէ դրողը լինձի պէս օտարազգի է, կրնայ այնպիսի նորաձև խմաստ մը, ոճ մը, դարձուածք

մը յառաջ բերել՝ որ իսկոյն մատնուի։ Ուր ինչ անկլիացին որ աշխարհիս բանական կենդանիներէն էն այլանդակն է, որ կազմուածքեամբ և բնութեամբ ազգերու մէջ անիման երեւոյթ մ'է, որ ինչ վարագուրի ներքեւ մնայ՝ մղձն մը հեռուէն իր շուքը միայն գինքը կ'մատնէ։ Իր դէմքը, քալուածքը, գեղուրին ձեւը, ձայնին շեշտն ու մինչև շունչը՝ գինքը ամենուն կ'յայտնեն։ Ո՛ր մեր վարմունքը. ո՛ր մեր դործը օտարին կ'նմանին, նեռէ անկլիացի մը միլիոն մը եւրապացիի մէջ ու հեռուէն մատով ցոյց տամ քեզ զայն։ Տար զանի աշխարհիս մէկ ծայրը, և հոն ալ իւր բնական և հայրենական սովորութիւնները ու դաղափարները հետը կ'տանի։ Մէկը նոր, անհպելի ու անյայտ երկիր մը դտաւ, ինչպէս Տրէք, անկլիացի է ան անշուշտ, ուրիշ մը Սառուցեալ բեւեռը ոտք կոխեց, ինչպէս Փրանքլին, անկլիացի է. խորհուրդ մը ելաւ Ովկիանոսը Ճեղքելու և նոր ու հին աշխարհը կցելու թելով մը, անկլիական է այն. ընկերութիւններ կանդնեցան՝ բոլոր տիեզերքը ապակեայ պալատի մը մէջ ամփոփելու և ներկայացնելու, ահաւոր ծովածուփ քաղաք* մ'անդունդին վրայ անկելու, անկլիացւոյ դրգռմամբ են։ Ասկէ եաև ո՛ր անկլիացին կրնայ ըսել. «Ես աւիծած՝ երբ մանաւոր նպատակի մը համար կովի մորթ կ'հագնիմ, կ'տրտմիմ, որ բաշը և մնչիւնս գիս երևան կ'հանեն։» Մխիթ փառք չէ՞ մի, բարեկամ, որ մարդս իր մարդկութեան և ազգութեան մէջ միշտ և ամէն ուրեք Ճանչցուի։ Աւելի չեմ սիրեր քու անկլիական մերկութեանդ մէջ պատիլ ու յայտնուիլ՝ քան թէ օտարին մորթը քեզ սեպհականել, մանաւանդ երբ մորթը տաք է ու մարմնոյդ փակչելը կ'բունէ։ Ցիրաւի՝ ախորժելի վիճակ մը չէ կամաւ աստնէն անաստն դառնալ։ Կան մարդիկ և ժողովուրդներ, որ քաղաքականութիւն կ'համարին անբռանալ ժամանակ մի, որու վերջը չդալով՝ նոյն քաղաքականութիւնը

* Հոլլանդական Ամստերդամ կամ Անգլիական Նոյեմբեան։

ազգութեան կ'փոխուի, և՝ ի հարկէ պղտերին չեն կրնար տեսնել։

Ուստի անհոդ եղիր, ազգային դուռդութիւնդ թող չվիրաւորի պահ մը վիս հայագիր տեսնելուդ։ Մի վախնար, ոչ պղտ ունիմ և ոչ փափաք ստանալու։ Տրդատին լեզուն խօսելուս համար անոր պէս վարազ չեմ սեպուիր։ Անկլիացիի խմորը շատ պինդ ու զօրաւոր է և ուրիշ թեթև խմորի մէջ անգամ զուտ և անարատ կ'մնայ։ Աւելի դիւրին է ահաւոր Հիմալայա լեռը գլտորել՝ քան թէ անկլիական բնատուր ինքնասիրութիւնս՝ որ շաղուած է հայրենասիրութեանս հետ՝ ընչջել։ Ազգերուս մէջ ես-ի անգամ չէ որ կ'թափառիմ, ինչպէս որ գիտես, ու այս հեղուն նպատակս ուսումնական խուզարկութիւն մ'է, զոր վարը պիտի բացատրեմ։

Ցոյները յոյն չեղողին բարբարոս կ'անուանէին և անորմէ հեռու կ'կենային, սակայն մենք աւելի ազգասէր չէինք։ Մենք օտար ազգերը չենք ատեր, այլ զանոնք կ'քննենք, ինչպէս բուսաբանը առունները, որպէս զի եթէ մեզի անծանօթ բնական յատկութիւն մը, պիտոյք մը, փափաք մը անոնց մէջ գտնենք՝ անկէ օգուտ քաղենք։ Մեր հայրենիքը մեծ կորուստ մը չկրեր թէ որ լինձի պէսներ թողուն ելնեն և տար աշխարհ երթան։ Իր կառավարութեան անիւը դարձնող արժանաւոր և ընտիր անձինք ունի իր ծոցը։ Իր իրաւունքը և ազատութիւնը պաշտպանելու համար ախոյաններ չեն պակսիր հոն։ Ես միթե երբ հեռուն ալ դտնուիմ և ծերունի Անկլիայի յիշատակները և սկզբունքները սիրտս պահեմ, ինչ ձեռնարկութիւն ու գործ որ ընեմ՝ միշտ իմ ազատ հայրենի աշխարհիս համար աշխատած չեմ լինիր։ Անկլիացի մը աշխարհաշրջիկ լինելէն առաջ՝ մարդ կ'լինի, անկլիացի կ'լինի, ու ինչ ձիգ, ինչ քրտինք որ թափէ, ինչ արիական գործողութիւններ որ ընէ, անոնց օգտաւէտ ազդիւրէն բղխածը կ'երթայ բրիտանական մեծութիւնը և բարօրութիւնը կ'աճեցնէ։ Քանի քանի սոսկականներ իրենց քաջութեան և

հանձարի զօրութեամբ, անկուն յանդգնութեամբ մեր մայրենի երկրին ազդեցութեան և աշխարհակալութեան տարածելուն պատճառ չեղան: Ցասն հազարայ նահանջը, թէրմոպիլէի գործը, սին և հասարակ բաներ կ'թուին անոնց շահատակութեանց դիմ: Մեր մայրերը փոխանակ սպարտացի կնիկան պատուերը տալու մեզ թէ «Թշնամիդ յաղթէ, ու թէզ վահանդ լինի կամ յաղթական դահդ կամ դագաղդ» կ'ըսեն, «Ձեր հայրենիքն են ձեր ստնտուն և պաշտպանը ու աշխարհ ձեր ասպարէզը, մանք հոն. ձեր ազատական արի և արդար գործերը արձագանք պիտի տան մեր սրտին և պատմութեան մէջ, գայէք»: Եւ ահա Գուք մը, անյաղթ նաւապետ, աշխարհիս ղբջանը կ'կատարէ. Հիւսոսն մը՝ Ամերիկեան հիւսիսը ու նոր նոր շաւիղներ կ'գտնէ, լորտ Քլայվ մը՝ ափ մը գունդով բոլոր Հնդկաստանի ահ կ'ազդէ. Լիվինկսդըն՝ Աֆրիկէի խորերը կ'թափանցէ: Բայց բարեկամ, ինքնապարծութիւն չլինի ըսելս ես, ուսոի է որ ուրիշ ազգեր այս մեր ազատասիրութեան, անձնիշխանութեան վրայ կ'զարմանան: Պատասխանդ կ'դուշակեմ. անոնք մեզի պէս չեն գաստիարակուիր պիտի ըսես: Վասն զի ընտիր կամ թիւր գաստիարակութեան համեմատ մարդ մեծ ու քաջ կ'լինի. կամ ստորին, վատ ու անբան. այս դիտեմ, սակայն չեմ մեր հոգւին մէջ նոյն գրգիռն զատ գրգիռ մը որ զմեզ անգուլ հոյակապ գործերու մղէ: Կարծեմ, փոքր ինչ մեր երկրին դիրքը, մեր կառավարութեան դրութիւնն ու մանաւանդ մեր հետաքրքիր և ինքնավստահ հոգին կ'գրգռեն զմեզ գործս նեռաւելու, գժուարութիւններու դիմագրաւ լինելու: Անկլիայի նոր նոր գուռներ, նաւահանգիստներ բանալու առևտուրին համար. ազատութեան շունչն ազգերու մէջ սփռելու և ամեն բանի էութիւնը ու պատճառը գտնելու: Իսկ այս ամէն պատճառները շահասիրութեան ոգին կ'պահակ, ու այն ոգին է որ անմիտ մարդիկ իբր նախատինք մեր երեսին կ'տան: Ո՛ր մարդս, որչափ վեհ լինի կոչումը, որչափ առաքինական լինի գործը, շահու կամ փառասիրութեան չնայիր աշխարհիս մէջ: Անտարակոյս, երբ նիւթդն մը մոլորակներուն օրէնքը կ'գտնէ, Կալիլէոս Հշմարտութեան զոհ և Ապելար սիրոյ նահատակ կ'լինին, իսկական շահէ աւելի՝ վսեմ նպատակ մը՝ իմաստասիրութեան և անմահութեան սէրն ուներին իրենց հրապոյր. բայց դարձեալ անոնց արդասիքը մեր երախտագիտութիւնը և յարգը չէն դրաւեր, և անկէ մարդուս միտքը ու սիրտը վաստակ մը չէն ըներ: Եւ ինչ են վաստակաւոր և լուսաւոր միտ, այլ միայն գալիք կանոնաւոր գործողութիւններու ազբիւրն ու պահարանը, ուստի և անոնց յաջողութիւնը և արդիւնաւորութիւնը:

Հիմա չկարծես որ ես ալ Լէոնարի* աշտարակին և Այա Սոֆիէին մօտ լինելով՝ մեծ բան մը պիտի ընեմ, և մեր եւրեւելի հայրենակիցներու կարգը (որոյ գովեստը ընելը աւելորդ էր, ու միայն ախորժելի՝ ազգային հպարտութեանս՝ որ հայ լեղուին նորաձև քողին տակ կ'թաքչի), չկարծես, կ'ըսեմ, որ անոնց կարգը գաստւելու փառասիրութիւնն ունիմ այս ուղեւորութեանս մէջ:

Հետաքրքրութիւնէ ծագած անշուք ձեռնարկութիւն մ'է իմս, որովհետև իրարու կ'խոստովանինք որ երբեմն այլանդակ տեսիլներու հիանդութիւնը կ'բռնէ զմեզ: Ձես ծիծաղիր վրաս, յուսամ, թէ որ համառօտ բայտարեմ քեզ այս առաջին նամակիս մէջ նպատակս:

Ցիրաւի ոչ բադդ, ոչ փիլիսոփայական քար, ոչ ոսկեզեղմն** և ոչ Էրօ*** մը գտնելու արշաւեցի այս կողմերը: Սակայն կ'վախնամ որ անոնցմէ աւելի գժուարագիւտ բան մը

* Գըղ. գոռ-էօք:

** Առասպելը կ'ըսէ ԹԷ Հայաստանի հիւսիսային գին, Սղէյս, ոսկեղէն քուրքով իոյ մը գտնուելով Յասոն ու շատ յոյներու գլուխն անցած այն երկիրը գնաց ձեռք ձեռքս:

*** Լէանդրի սիրուհին:

չդառնայ վիտուածս, թէև պատմութեան մէջ սկիզբ և տեղ մ'ունի: Հայկայ թոռներ եկայ աստ որոնելու, բարեկամ, ու թէև ինչպէս Ասորեստանցիք, Քաղդէացիք, Հռոմայեցիք անհետ են եղեր ժամանակին փլատակներուն տակ, նոյնպէս հայերն ալ անոնց վիճակակից լինելնին կ'երևակայեմ, սակայն երբ Անկլիա, քանի մը դրքի մէջ կենդանի հայու նշոյլներ աչքիս զարկին, հարցուփորձ ըրի և իմացայ որ մանաւանդ Պօլիս դունդ դունդ կ'շարժին ու շատեր ալ ընդ կ'առնուն կ'տան եղեր: Զարմանքս տարաւ. վասն զի պատմութեանց և Հայաստանի մէջ Հայերուն մասունքը և ոսկորոթիքը գինելու առեննիս, անոնց յարութիւնը ո՛վ ներդործեց: Եթէ այս յարութիւնը ստոյգ է, այսուհետև ուրիշ յարութեանց ալ պիտի հաւատամ: Ուստի ես որ քէմպրիճի համալսարանին առաջին հայագէտ աշակերտն եղայ քեզի հետ, ես որ նոյն ազգին գրականութիւնը ու պատմութիւնը քիչ շատ լսեր եմ, ու հիմա վարժելու համար լեզուներն կ'մրոտեմ, պէտք է որ այս մասին դիտցածս և սորվածս փորձով ստուգեմ: Կայ ազգ մ'որ մեզի չափ դործ ու փորձ տեսնել ուզէ որ համոզուի, մանաւանդ հին պատմական իրաց մասին, որոց յետին աստիճան զգուշութեամբ հաւատ ընծայել պարտ է: Մի շատ առասպելներ, որ իրարմէ օրինակուած են, ու նորութեան արժէքն անդամ չունին, իբր զուտ պատմութիւն տգէտ մարդիկ կ'կլլեն: Հայու բերնէն իր կենդանի լեզուն լսել, անոր սովորութիւնները և բարքը գինել, անորմէ թէ հին և թէ այժմեան Հայաստանի վրայ տեղեկութիւններ քաղել՝ միթէ բաւական միջոց մը չէ մեր ստացած խելմը մութ հմտութիւններու լոյս բերելու: Վասն զի պատմութիւն բսածդ պատկեր մ'է, որ մարդկան և անձից գոյնը՝ նահմ կամ խիստ փայլուն՝ կ'ընծայէ, և նոյնը քիչ կամ շատ ըմբռնելի է մտաց աչքին, նկարչին կողմնապիրութեան կամ ճշմարտասիրութեան համեմատ:

Սակայն երբ բուն իսկ դիպուածներուն հիմնականերն մեր

աչքին առջև առնունք, իսկոյն՝ պատկերին հետ համեմատելով կ'որոշենք ճշմարիտը: Արդ՝ որովհետև հայերը ճանչելու հետաքրքրութիւնն ունիմ անոնց հետ միայն պատմութեան մէջ տեսնուեր եմ, ինչո՞ւ անձամբ իրենց բնատիպ պատկերը չփրնռեմ, քանի որ շնչաւոր էակներ են ցարդ, կ'ըսեն: Այս հետաքրքրութեանս գլխաւոր դրդիչներէն մէկն ալ եղաւ հայու բնութեան մերինին հետ մասամբ նմանութիւն պտնելս, չէ թէ կիսամերկ, հիւղի տակ ու որսորդութեամբ ապրելու և անտառներու մէջ պտըտելու առեննիս, այլ մը նոր կացութիւնը անոնց հինին հետ բաղդատելով: Վասն զի մենք վայրի մորթ հագած՝ կաղնի պաշտած ժամանակ՝ անոնք մետաքսի ու դոհարի մէջ կ'ծփային, պալատներ կ'բնակէին, տաճարներ ու թատրոններ ունէին, ու աւելի ընտիր էակ մը՝ արևը կ'պաշտէին: Թէպէտև մեզի պէս ծովային ժողովուրդ մը չէր հայը, սակայն իր ցամաքային վաճառականութիւնը միչև Հնդկաստան կ'տարածէր, և պատմութենէն կ'իմանանք որ անոնց բնութիւնը, ընտանեկան և քաղաքական կեանքը մերինէն շատ հեռու չէին: Հայք չարքաշ, հուժկու, աշխատասէր, ճարպիկ ու ծանր մարդիկ են եղեր, ու միայն մեր երկայնամտութենէն, միաբանասիրութենէն և հնարագիտութենէն զուրկ ու հետևապէս ալ շատ հեշտիւ օտար արիւնոտ շա իշխաններու լծին տակ մտեր են: Հայ տանտէր մը մեր ձօճն-պօալէն ինչ տարբերութիւն ունէր: Իրև նահապետ՝ ընտանեաց և տան տիրելով, իրեններուն սէրն ու վստահութիւնը դրաւելով՝ հարկին միանգամայն օրէնսդիր, գատաւոր և զօրական կ'կանգնէր. ու եթէ ինքնասիրութիւնը շուտ մը բռներ, առանց հասարակաց օգուտը մտածելու, իր տան մէ՛ որ դղեակին էր, կ'փակուէր: Երբ Հայաստան աշխարհը զատ զատ նահապարութիւններու բաժնուած՝ ու թագաւորին իշխանութիւնը անոնց ազդեցութենէն բնականապէս չափաւորած կ'տեսնենք, մեր կալուածական դրութեան մէկ տեսակը, մեր Նորմաններուն տիրապետութիւնը միտքերնիս չիյնար: Վաղարշակ

պարթևին ըրածը մը Ուիլեամ Յաղթողին դրեթէ օրինակն է: Առաջինը իւր հետը Հայաստան բերած խել մը գինա-կից իշխաններու բաժնեց նոյն երկրին դեղեցիկ նահանգները, վերջինը իրեն նուիրմանտացի զօրականներուն՝ Անգլիան: Այս ատոյգ է՝ որ լուսաւորութեան եռանդը ու ազատութեան ոգին ժողովրդին յետին աստիճաններուն մէջ մտած չլինելով, կարող չեն եղեր ժամանակին հետ մղի պէս ազգային առեւանգներ և ժողովներ հաստատելու, իրենց իրաւունքը, շահը, անկախութիւնը պաշտպանելու, ներքին քաղաքային կռիւներուն վերջ տալով արտաքին ասպատակութիւններու դէմ պատերազմելու: Այլ մեծագոյն մասն՝ որ հետզհետէ որոնիներ էր դառ մը արտնակալ և բռնասէր մարդկան, այս է՝ իշխան, եպիսկոպոս և կրօնաւոր, վերջի ժամանակները մանաւանդ իւրաքանչիւրը ձեռքէ յափշտակելու ձիգ կ'ընէին ժողովուրդը, իբր թէ նոյն հայրենեաց զաւակ, նոյն Հայկայ ծնունդը չլինէին: Իրաւ է որ հայ ազգէն աւելի հոգեկաղ ժողովուրդներ դեռեւման լինան: Ո՞ւր են Հռոմայեցիքդ, ո՞ւր են Կարքեդոնացիք: Հռոմ ձեր քահանայի մը բաժին լինաւ. Աննիբալին ատուերը անապատներու մէջ կ'ոսկռտի, իսկ հայը որ ա-նունցմէ հին է, կենդանի մնայ: Ինչպէս մարդիկ, նոյնպէս պետութիւններ իրարու կ'յաջորդեն, սակայն այն պետութիւնը որ կ'ծնի, կ'տարածի, կ'փայլի և մարդկային ազգին իր պատմութիւնը թողլէն ետև՝ ժամանակին փոշին տակ անհետ կ'թաղուի, մարդկօրէն մտածելով՝ բնական շրջանը կատարած է, կ'ըսենք, ու մեր ուշադրութեան արժանի: Իսկ երբ ազգ մը մահուան կ'մօտի, ու չորս դիէն՝ ըստ մասին իր անզգուշութենէն դաղանները Ճանկին տակ լինած՝ վերջին ժամուն կ'նայիս որ քանի դլուխը կարէն, եօթնագլխան հրէշին պէս նոր մը տեղը կ'դնէ, արեան և արտասուաց հեղեղները մշջէն կ'ելնէ կ'կանդնի, ու դարէ դար մինչև մեր օրը կ'հասնի, հայրենական ժառանգութենէն թափուր, իրաւ, ու միայն անոր բեկորները ու մասունքը շալկած, այն առնն

նոյն ազգին վրայ ոչ միայն հիանալ, այլ նաև նախանձիլ մեր թան դաղտնի վէճերուն մէջ նոյն ազգին պաշտօնը և առաքելութիւնը ազգաց մէջ չկատարուած սեպել պարտ է: Ահա այսպիսի ազգի մը սերունդը տեսնելը կ'արժէ, կարծեմ. ու Թովմաս առաքեալին պէս՝ անոր վէրքը շօշափելու եկայ որ հաւատամ: Թող մեկդի այն կարևորութիւնը՝ որ ունի արդէն հնասէրներուն աչքին, Արարատը, Ագռաին եդեմը, Նոյին տապանը անոր ծոցը դանուելուն: Վասն զի այսպիսի հնութիւններու վրայ ազգի մը պարծանքը ու զոյութիւնը չեն կայանար, զանոնք պատուելու է առանց քննելու: Կարծեմ թէ հայերուն երևակայութեան բուժողներն են անոնք, որ միևնոյն ականջին թերևս զարհուն, առանց միտք համոզելու: Ազգ մը ճանչելու համար նաւու կամ լեռի մը երկայնութիւնը չափելով չլինիր, անոր բարուց, հիմնարկութիւններու, գործերու, հանճարի մէջ փնտռելու է հոգին: Եւ այս՝ անոր մէջ ապրելով և տեսնելով կ'լինի:

Բայց դեռ նոր հասայ, փշոտ մրոտ նաւայ քեզ պրկելու ու տեղէս շրնաւելու սիրտս չուզեր, մանաւանդ այս զմայլելի պօսֆորի տեսարանէս զատուելու, որ հայելիի պէս առջևս կ'փայլի: Թարաւիա կ'պտնտիմ, բարեկամ, կամ լաւ ևս ըսեմ, մարդարէին հինգերորդ երկինքը, այս հեշտութիւններու օրօրոցը, ուր որ բոլոր ղգայմունքս և երևակայութիւնս կ'օրօրուին, և աչքս չի դոր կ'չհանայ պրկել այս օձաձև նեղուցը, կանանչաւէտ բլուրները, ծովեզերեայ պարտէզները՝ որունք կարծես թէ օդին մէջ գոյնզգոյն նշոյլներ արձակելով կ'ծածանին: Սակայն ծրչափ պայծառ լինի քու երկինքդ, ո՛ Պիզանդիոն, ծրչափ աքանչելի թուի քու բնական դիրքդ, չեմ փոխեր քու արևիդ հետ Ալպիոնի մշուշը՝ որուն եաին վառող քաղաքակրթութեան լոյսը միտք և հոգի կը լուսաւորէ, մինչդեռ քու դիդ երաշներու և մեղկութեան կ'տանի:

Հերիք լեզու թափեցի, այս է մեր սովորութիւնը, երբ իրարու մօտ ենք ափ ի բերան կ'մնանք, վասն զի մեր վար-

մունքը կ'խօսին, իսկ հեռանալով շատախօս կ'դառնանք։ Տուր ինձ լուր Անդղիայի վրայ, Բոլշեվիզմի բայուելը կ'մօտի. ինչ խնդիրներ պիտի յուզուին այս տարի։

Գնա տես նաև իմ սիրական Լիլիս (Շուշան) ու սիրուհտ, վասն զի գիտեմ որ իմ մեկնիլս իրեն շատ ծանր եկաւ, բայց ինչ օգուտ, եթէ այդ տեղ ալ գտնուէի՝ ծնողացը կամակորութեան և մնափառութեան հետ գլուխ պիտի չկրնայի եղնել և միշտ բաժնուած պիտի մնայինք։ Լօրտի մը օրէնքը ոսկին է, մեր սիրտերը միայն անկեղծ սիրով կ'վաճառին։

Խնդրեմ զիս անդիր մի թողուր։ Հայոց վրայ խորհրդածութիւն մը, լուր մը յօժարամիտ կ'ընդունիմ քեզմէ։ Ուստի աջակից գտնուէ իմ նպատակիս։ Ապահովեմ որ հետս պիտի գայիր, թէ որ առաջուց միտքս քեզ յայտնէի։

Ընդունէ սրտագին բարեւներս։

ՆԱՄԱԿ Թ

ՎՈՒՏ ԱՒ ՆԵԼՍՕՆ

ԼՕՆԴՈՆ . . .

Բարեկամ, գիրդ առի, արեւելեան հով, հայերէն ոճ ու անկլիական ոգի կ'բուրէ։ Նոր կ'լմնանամ ուղղութեանդ բուն նպատակը, զոր արդարացընելու համար ուրքան լեզու թափեր ես։ Մինթէ ահն յայտնի բան մի պատճառ կարօտ ու զարմանալի է։ Հիանալին մեր Հոպսն* է որ մարդուս հոգին շարժական մեքենայի մը կ'ուզէ փոխել, որպէս զի ամէն բնաւորութիւն ուզածին պէս զայն լարէ ու գործածէ։ Մարդուս վայել է ճշմարտութիւն փնտռել, գիտցածը կատարելագործել և գժուարութենէ չընկրկիլ։ Որչափ որ քեզի չափ հետաքրքիր չեմ նոր հայու մը ինչ լինելը հասկընալու, քանի որ հինին վրայ ալ խիստ որոշ տեսիլներ չունիմ, դարձեալ ձեռքէս եկածը պիտի ընեմ քեզի օգնելու խուզարկութեանդ մէջ, տեսնելով որ հայասիրութիւնս պիտի չկրնամ ձգել հայադէտ պատգամ կոչուիլ յԱնկլիա և պարծիլ, ու նոյն միջոցին չգիտնալ որ Եւրոպայի կեդրոնը հայկազուններ կ'գտնուին։ Ես ալ քեզի հետ կ'զարմանամ մեր տգիտութեան վրայ այս մասին։ Յանկարծը որո՞ւէ. Թէ որ ըստ մասին մերը, մեծ մասամբ հայուն է։ Փոքր ինչ մերն է կ'ըսեմ, վասն զի մեր անթիւ անձնական ու իսկական գործերն ու ինքնահաճութիւնը չեն թողուր մեզ անուշ բաներու ուշադիր լինելու, թէև վարժարանը ուսեր ենք թէ Բրուտոս ինչու կեսարը սպաննեց, թէ Տիմոսթենէս ինչպէս յորդորեց Աթենացիքը Փիլիպպոսի դէմ, և թէ Արամ ինչ քաղաքականութեան կը հետեւէր։ Հին պատմական եղելութիւնները ուշի ուշով կ'քննենք ու մեծ կ'համարինք այն ազգը՝ որուն ազդեցութիւնը մինչև մեր օրը կ'ներգործէ։ Թէ աստուածներէ իջնէ և թէ դևերէ, կործանման ժամը զարկաւ, դիրքը կ'պոռնկանք, աւերակներուն վրայ տապանագիրը կ'կարդանք, ու խրատ առնելն ետև մնաս բարեւ կ'ըսենք, առանց պատնաշու ու նայելու որ մեռելին շունչը դեռ վրան է ու գլուխը շիրմէն դուրս է հաներ։ Իսկ միւս կողմէն աւելի մեղադրելին հայն է, որ չշարժիր, չկանչեր, մեր աչքին չերեւիր. և կարծես թէ երկնաւոր հրեշտակի մը կ'սպասէ որ զինք խոր վիրապէն հանէ։ Լաբռնա-

* Կ'երեւի ըլլ հոս Վոլտ երեւելի Հոպս փիլիսոփային կ'ակնարկէ, որ Թռանիզան կառավարութենան ջերմ պաշտպան կ'ելլար։

ցիք անգամ մեզի ծանօթ են, հիւսիսէն վար մուշտակ և ձուկ կ'ղրկեն մեզ: Կովկասու խորշերէն Ճամլըի դոռն Եւրոպա արձագանգ կ'արձակէ և մեր համակրութիւնը և ուշադրութիւնը կ'շարժէ: Մինչ պարտաւոր ենք շարունակ ձրագ և սպեղանի 'ի ձեռին կիսամու դիակներ փնտռել ու դարմանն սատարել: Հին ազգի մը ձայնը պատմութիւն է, իսկ նորինն՝ իր գործերը: Ինչպէս հնարաւոր է որ մի հայ ազգ գտնուի ու ողջ լինի: Կ'երևի որ արդի հայը, առաօրէն առաքինութեան տէր, բոյսերու կեանքը կ'ապրի: Ման զի կամ ես ականջ ու աչք, կամ նա լեզու չունի, չունի ձայն ու գործ յԵւրոպա, չունի աթոռիկ մը ազգայ կառաւին մէջ: Արդեօք Հայկայ ուրուականն երևցաւ երազդ. միթէ հիւր մ'է հայն որ սխալ դուռ զարկաւ ու ազգերու դրան սեմին վրայ նստաւ. միթէ գերի մ'է շղթայի արժանի. ինչ է խնդրեմ, ժամ մ'առաջ նկարագրէ ինձ այդ էակը:

Մեծ կարևորութիւն կ'տաս դու այն ազգին որ կ'գլորի ու նորէն կ'կանգնի: Այո, երբ վերջի կանգնումը առաջինին պես փառաւոր դառնայ, ապա թէ ոչ նոյն ազգը շատ կ'վնասի թէ իր նախնի համբաւին ու մեծութեանը մասին և թէ մեր համարումին կողմէն: Ուստի լուռ պղտիկ կ'սեպեմ որ ազգ մի պարծանաց գագաթը հասնելէն եաև առօք փառօք կործանի, անդիմադրելի պարադաներէ ստիպեալ՝ անհետ մարի, քան թէ շքեղ անցեալէ մ'եաև՝ անփոյթ ու հաշտ թափառի ներկային մէջ, աղքատիկ ապրի ու ազգայ դուռը մուրայ: Ման զի՝ հինները մեր աչքին իրր գիւցազնէնք կ'երևին, թէև նոյն անուան յաւելի արժանիներ կ'գտնուին այս պահուս մեր երկիրն և ուրիշ տեղեր: Ժամանակը խոշորացոյց մ'է, որ քանի հեռանայ, մեր երևակայութեան տակ հասարակ բաներու անգամ, խոշոր, փայլուն ու խորհրդաւոր գոյն մը կ'րնծայէ: Ասկէ զատ՝ ամեն դար իր յատուկ և յարմար մարդիկն ունեցեր է: Երբ աշխարհ դեռ տղայ էր, անոր յառաջադիմութեան միջոցներն անուտաշ ու սահմանաւոր էին,

միևչդեռ հիմա անհամար են և դերազոյն: Մեծն Վարդան, ստուգիւ մեծ մարդ է, թէ որ այսօր գար և մեզի դէմ խաչակիր մը հաներ՝ խիստ պղտիկ մարդ մը կ'դառնար: Այս դարուս մէջ Դէլ մը, Ֆրանքլին մը, Ուօշինկթըն մի պէտք է լինի, որպէս զի մեծութիւնը պահէ: Ուստի եթէ հայը, զոր քննելու սկսար, դարուս լուսաւորութեան և քաղաքակրթութեան հետ չքալէր, նոր բան մը հաղորդած չես լինիր ինձ՝ եթէ ըսես թէ նոյն հայը, Տիգրանայ, Տրդատայ և Վահրազատայ որդին է միայն: Հիմա Տրդատայ մի ձեռամբ երկու ցուլերու եղջիւրը թափող ոյժը իրեն թագաւորութիւն մի շահել տալու առիթ մը չէր լիներ. վասն զի՝ շոգի և բանական զօրութիւն ունինք, և ոչ սրտեայ և քաջամարտիկ վարազդատ մի արիաբար ձի աշտանակելուն՝ կայսեր մը շնորհն ու Հայաստանի գահը պիտի ստանար, վասն զի՝ ահա մեր Բալմերսդն ու Տէրպին քաջ որսորդներ են, ու ասոնց նմանները փոսի ու բլրակներու վրայէն ամեհի ձիով ցատկելնուն համար չէ որ Բաբելքէրին մէջ աթոռ և մեծ ազդեցութիւն ունին: Այս բարձր ասոլճանն աւելի իրենց մտաւորական հանդամանաց ու հայրենասիրական հոգւոյն պարտաւոր են: Իրաւ կ'խոստովանիմ նաև որ կ'սիրեմ այն ազգը որ թէև թշուառ, ներքին արժողութիւն, անպաշար գլուխ, կորովի բնութիւն մ'ունի, միաբան սիրով կանգնելու ձիգ կ'թափէ և ինքն իր ճամբան կ'յարդարէ և առաջ կ'քալէ:

Ուրեմն եթէ հայդ իր հայրենական բնութեան հետ շաղեր է նաև դարուս հոգին, աղատասիրութիւնը և յառաջադէմ կանգնելու կարողութիւնները, ան ատեն կրնամ ըսել քեզի հետ որ Նախախնամութիւնը զինքն ապագայի և առաքելութեան մի սահմանած է աշխարհիս մէջ: Իսկ այս առաքելութիւնը ինչպէս կ'կատարէ ազգ մը եթէ ոչ տար ազգայ վրայ թէ նիւթական և թէ բարոյական ազդեցութիւն մի, իրաւունք մի, անոնց հետ յարաբերութիւն մի ստանալով: Ազգերու հրապարակին մէջ ամէն մէկն իր որոշ դրոշակով կ'մանէ,

իր սեպհական վաճառքը հոն կ՚բերէ, հարկը կ՚վճարէ, քաղաքականութեան համբարին ու փոխարէն անուն, կայունթիւն ու իր հաստատ դոյութեան երաշխաւորութիւններ կ՚ընդունի: Ինչ նոր սկզբունք, ինչ նոր գիւտ, ինչ գործի հնարած, ինչ տոհմական առաքինութիւն, ինչ ինքնահնար ճարտարութեան արդասիքը բերած ունի հայդ նոյն ընդհանուր ատենին առջև*: Որ ժողովրդեան սրտին մէջ կ՚տիրէ, որ պահլիճին մէջ անունը կ՚յիշուի, որ ընկերական վիճակի, որ քաղաքական դաշնոյ մէջ կշիռ մ՚ունի, ցցուր ինձ ատոնց մէկ նշմարանքը, փորձը, և իսկոյն գլուխ կ՚ծռեմ գրածիդ:

Ճեմ ուրանար որ հին հայը իրեն շրջակայ ազգերուն վրայ փոքր չի շատէ ազդեցութիւն բանեցուցած է թէ լեզուի, թէ գինու, թէ վաճառականութեան և թէ իրեն լուսաւորութեան զօրութեամբ: Ինչպէս մենք Ցունաստանէն և Հռոմէն, անտարակոյս նոյնպէս և Պարսիկք, Վիրք, Աղուանք անոր մէ շատ բան ուսած են: Խորենացին իրաւամբ կ՚ըսէ որ «Հանուց հիւսիսականաց վճհադոյն էր այն»: Վճհադոյն չէ թէ պատերազմական փառայ մէջ, որ ժամ մի միայն փայլեցաւ, չէ թէ մարտիրոսներու և նահատակներու արեան համար, որ ընդհանուր եկեղեցիին խորանը մաքրեց, առանց Հայաստանը բոլորվին ազատելու, այլ հայոց բարոյական բարուց, անոնց առ հայրենի աշխարհն տածած անշէջ սիրոյն համար, այլ ո՛չ դիտէ, թերևս նաև արևպաշտական մառնապրութեան մասին, այլ և այլ մեհեաններու մէջ փակեալ, և զոր քրիստոնէական եռանգ մը հրոյ ճարակ տուաւ, հայ ազգին մէկ թևը կոտրեց ու անոր արմատը քակեց: Արևելք էր մարդկութեան օրօրոցը և բանաստեղծութեան աշխարհը, և միթէ հայք սիրտի չունենային իրենց Պինտարոսը, Հոմերոսը. Պլա-

*Վատ շատ քան կ՚ինդրէք հայէն երբ անկէսկան քաղքրութենէ ոտ պիտ անոր արիանալի վերերը ընդունէր:

տոն մը չելաւ անոնց մէջ, անշուշտ ունէին, և երբ Խորենացին հին երգերէ, առասպելներէ քանի մը հատ ու կոտոր կ՚յիշէ՝ վկայ է խօսքիս: Սակայն զարձեալ այս ամենը, և ինչ գրաւոր գանձեր որ գտնուին հայուն ձեռքը, իր արժանաւորութեան վաւերաթղթերը չեն սեպուիր՝ թէ որ անոնց ճակատը ներկայ դարուս դրոշմը չկրէ: Նմանապէս թէ Արշակունի մը Աբգարէն փրթելով պայ առ քեզ մէկ ձեռքը նոյն տապանէն կտրած փայտ մի, և միսը պատառուն ծիրանի մը ու քու նպաստդ խնդրէ, միթէ չես գառնար անոր ըսելու. «Պարոն, քու հարցդ պանծալի պատմութիւնը գիտեմ ու կ՚յարգեմ, դուն ինչ կ՚արժես հիմա, հայրենասիրութեանդ և արծանաւորութեանդ փորձը առէր հիմա ինձ, ու անկէ ետև թերևս իմ նպաստիս իրաւունք մի ստանաս»: Նոյնպէս է և ամբողջ ազգի մը համար: Հաղար տարի հնոտի և պատառած արքունական ծիրանին հագնի ու դուռ դուռ մուրայ ասեղ մի գտնելու՝ դարձեալ անօգուտ է, և ոչ դերձան կ՚տանք անոր, քանի որ ինքը նոր ծիրանի հագուստ մը կարելու միջոց մը և կարելու ասեղը չունի: Ուստի հայը ներկայ դարուս մէջ ինչ վիճակի և ճամբու մէջ է այն կը հարցնեմ. միթէ ճակատագրի կ՚հատայ՝ թէ ոչ ապառնին չինելու կ՚յուսայ և պէտք իր վրայ ազգութեան նշան մ՚ունի:

Արդեամ ըսել թէ՝ մարդկիկ նոյն շրջանի մէջ նոյն լեզուն, նոյն կրօնը, նոյն արհեստը ունենալուն համար միայն ազգ մը չեն կազմեր: Ահա քեզ Ամերիկացիք որ թէև մեր կրօնը գրեթէ կ՚գտանին, մեր լեզուն կ՚խօսին, որ աւելին է մեր զարմէն եղած՝ մեր զաւակներն են, սակայն իրօք, որքան Հնդիկը՝ այնքան անունք մեզի անծանօթ են, Թող իրենց արմատացեալ առելութիւնն մեզի դէմ, և որ մեր լորա Ջէգամին բռնաբեր քաղաքականութենէն ծագեցաւ: Ուրեմն ազգութիւն մ՚առելի էական և հաստատուն պայմաններու վրայ պէտք է որ հիմնուի: Անոնց աղբիւրը պէտք է մարդուս սեպհական բնութեան մէջ փնտռել: Ա՛ս բաւական մեծկակ ժողովուրդ մը միևնոյն

հողի մէջ՝ նոյն տոհմէ եղած, քննէ անոր թէ նիւթական կազմուածքը, թէ բարոյական յատկութիւնները, նշանակէ անոր հողին, բարքը, կենսավարութեան կերպը, ընտանեկան և քաղաքական կեանքը և կայունութիւնը; անոր հանդէսները, խաղերը մինչև նախապաշարմունքը, կարգ անոր գրականութիւնը և պատմութիւնը. բազդատէ զնոսնք ուրիշ ազգի մը հանգամանաց հետ, թէ որ գանազանութիւն գտար, ըսել է թէ այն ժողովուրդը, ինչպէս անհատ մի բազմութեան մէջ, իր որոշ կերպարանքը և նշաններն ունի ժողովրդոց մէջ ու մի որոշ ազգ կոչուելու արժանի է: Իսկ նախակարգ կ'դասուի ազգաց մէջ երբ իր ամէն պարտաւորութիւններուն հաւատարիմ գտնուի, թէ ընտանեկան, թէ կրօնական և թէ ընկերական. երբ լուսաւոր դաստիարակութեան պտուղները վայելէ, արդար օրինաց և իշխանութեան տակ կառավարուի, իր հայրենի աշխարհը, իր գոյութիւնը, ազատութիւնը, ի բաւունքը պաշտպանելու համար յետին ճիգը թափէ ու բոլոր ուժովը վրնի չարագէպ ու թշնամական յարձակումներու դէմ: Ստուգիւ այն ատեն նոյն ազգը գործով ցոյց կ'տայ որ մի գեղեցիկ ապագայի կ'դիմէ:

Թէև Բիւզանդին բացման ժամանակ կայ, արդէն դուրսը թէ ակումբներու, թէ լրագիրներու և թէ տուներու մէջ լուրտ, վաճառական, կլին ու սպասաւոր կ'խօսին այն խնդիրներու վրայ որ այն մեծ ատեանին մէջ վիճաբանութեան նիւթ պիտի լինին: Անկլիացին պարտ կ'սեպէ ոչ միայն առանին գործերու ազատօրէն պարապիլ, այլ և քաղաքականին՝ որ սերտիւ կապուած է շահուցը հետ: Ձկայ խնդիր մ'որ նախ հասարակայ կարծիքն չգրաւէ, չյուզէ, չզուարճացնէ. հրդարանը չբացած: Անբաղդ է անի՝ որու կայունութիւնը չնեղեր, և վատ՝ երբ կամաւ կ'հրաժարի իր երկրին քաղաքական գործերուն մասնակից լինելէն: Ինչ անուն տանք այն ազգին որ հողին, կամքը, մարմինը մարդու մը յանձնած է, ու ասոր ոտքը կ'սողայ, կամ գանազանէն երկնչելով՝ կամ ոսկիէ,

շքանշանի հրապուրուելով և կամիր գանգաղութենէն: Ժիրսինները* անունցմէ աւելի յարգ ունին, գոնէ աղատ օդ կ'ծծեն:

Գեղանի Լիլիւ գայլ տեսնելու, շատ փոխուած գտայ, և կարծեմ թէ բան մի անցած է ձեր մէջը, իմմէ ինչոմն կ'պահես: Ամէն անգամ զիս տեսնելուն գլեզ տեսածի պէս կ'լինէր, բայց այս հեղուն՝ պաղ կերպարանք մը գտայ ու տրտում էր: Գիրդ շուտ մը աչքէ անցուց ու ըսաւ, «Ուրեմն սարսն Նեպօն բոլորովին հայ է գարձեր ու այնքան հոգը հատեր՝ որ մի աննշան ազգի փշրանքը գտնելու եկեր է, երբ ինք ուրիշի հոգին կ'փշրէ»: Պատրաստ կեցիր, փոթորիկ մը պիտի փրթի գլխիդ, զի Լիլիւն անոյշ աչքերուն մէջ ամպ մը, կայծակ մը տեսայ:

Շատ կան ըսելիք, սակայն նամակի սահմանէն դուրս ելլ նելն ձանձրոյթ տալ է: Գրելիքս կ'գուշակես. մենք քու լուրերուդ անհամբեր սպասելով կ'սպասենք, ոմ Պիւզանդեան Անագարսիս:

ԳԼԱՒԱՆ Գ

ՆԵՊՈՆ ԱՌ ՎԱՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, զարմանաս թէ ոչ ծիծաղիս սիտի եթէ խոստովանիմ՝ որ Թարասպիաէն Կ. Պոլիս իջնելուս ու անգամ

*Գնդապետը պատասխանեց Անգլիա, ուր՝ ընտանիքն ապրի, գանազան գաղանք ցեղերը կ'շրջին:

մի չորս դիս՝ նեղ, փղմուտ զաղրալի փողոցներ, կիսա-փուլ ու անձև փայտէ տուներ, այլանդակ գէմքեր, անմաս հագուստներ տեսնելուս՝ ապուշ մնացի, ինքզինքս փարախներու մէջ կարծեցի, և քիչ մնաց որ կրկին նաւ մտնելով եկած տեղս ալիսի դառնայի: Ելիսեան դաշտէն Պլուտոնի բնակարանը իջնելուն այնքան դառն տպաւորութիւն չզգայ Տելեմաք անզուշա, որչափ ես Պօսֆորի գեղածիծաղ տեսարանէն Ղալաթիայի մութ քարայրը մտնելուս: Մեր Լօնտոնի Սէնթ-Կայլս անոր քով արքայութիւն է. ալ դնա մտածէ տեղւոյս աղտեղութիւնը, Սակայն իմ քաջութեանս նայէ որ համբերեցի և ասգիս անդին ալ պտոյտներ ըրի, դիտեցի: Ստուգիւ՝ կամ մի անքան բնիկ լինելու կամ մանաւանդ նպատակ մ'ունենալու է մարդ մ'օր այս տեղ կարենայ ապրիլ: Գիտեմ որ երևելի ճամբորդներ Արևելքի բնական շքեղութիւնը երկինք հաներ, և այս քաղաքն՝ իր չքնաղ դիրքը գիտելով՝ աշխարհիս մայրաքաղաքը լինելու արժանի սեպեր են: Իրաւի՝ դիրքն ուր որ էր այն տեղն է: Հին հոյաշէն Պիզանդիոնի պեռնաշարժէ փլեղէն 'ի վեր, մինչև յայն ձկնորսներու, Քսերքսէսի, Արտաշիսի, Միհրդատի և Ալեքսանդրի ժամանակ, որ հետզհետէ այս երկիրս բնակեցան, պրաւեցին, անոր ծովերը սրշաւեցին, և Մեծն Կոստանդիանոսէն մինչև այսօր բնութիւնը միևնոյն հրաշալիքը և զարդը կ'սարզէ աչաց, 'ի բնէ անտի եւրոպական փառաւոր ներքը՝ ասիականին գալարագեղ գէմքը և աստուածաբնակ Ողիմպոսը կ'բարևէ. սակայն լինչ ընեմ ես երկրի մը դրսի տեսքը, երբ ներսի դին նողկալի է: Պատկերհանին վրձինն գործն է այն սիրուն հովիտները, մարգագետինները, անուշ և վճիտ ակներն ու առուներն, որ Պօլսի շրջակայքը կ'զարդարեն, նկարել. իսկ անոր պատիները կատարեալ ընելու համար զարմանք է որ՝ երկրացիք՝ փոխանակ ժահահոտ և վտառուղջ խառնիներու մէջ սմքելու, զոր տուն կ'անուանեն, և անյատակ և ծուռ մուռ ճամբաներու վրայ իրենց

տաքը ծեքելու և կոտրտելու, ամէնքը միասին դուրս չեն թափիր ու չեն երթար Պէօյիւք-Տէրէ, Կէօք-Սույու, Քէհաթ-Հանէ և ուրիշ գեղեցիկ դաշտեր ու բլրակներ, վրանները կանգնելու ու անոնց տակ ամառ ձմեռ բնակելու. քանի որ անփոյթ են, գէթ բնութիւնը օրինակ առնելով, քաղաքին շէնցնելու, և քանի որ մարդկութեան պայմանները մոռնալով՝ ոչ քաղաքական և ընկերական իրաւանց վայելքն ունին և ոչ նիւթական հանգստութիւնը: Ուրեմն պարտաւորեմ չէ թէ բնութեան՝ այլ մարդկան ձեռակերտը քննէք. վասն զի քաղքի մը պարծանքն են նախ շէնքերն, որ նոյնպէս բնակիչներուն ճարտարութեան աստիճանը կ'ցուցնեն: Չկայ աստ նշանաւոր նոր շէնք, ու հինուց մնացորդներն ալ փոքր առ փոքր կ'փլփլին: Ահա Ցունաց ճարտարապետութեան նշխարներն. Այա-Սոֆիա, որ մեր սուրբ Պօղոսի եկեղեցին հետ թէ ոչ բարձրութեամբ, հնութեամբ և պղեղեգութեամբ կ'մրցի. փլփլած պարիսպներ, որոց արգի մի հատներու մեծագործութիւնները ալ աւելցնելով ինչպէս մզկիթներ ու մինարէներ, որ գոյնզգոյն տուներու մէջէն կ'բարձրանան, մի շատ արքունի ծովափնեայ պալատներ, որ Հմայական զօրութեամբ օր օրի Պօսֆորի եղերքը կ'շարուին, և կամարաշէն քարկիր շուկաներ, ահա ասոնք բոլոր Պօլսի արուեստական հարստութիւնները կ'կազմեն: Իսկ մանաւանդ գեղեցկութեան և շռայլութեան համար շինուած քէօշկերուն, որ ընդհանրապէս ծաղկաւէտ բլուրներու կատարը կ'պսակեն, համարը չկայ: Ոչ Թանզիմաթան, ոչ Ժողովարան, ոչ դրամատուն, ոչ սակարան և ոչ +լըչ կ'տեսնեմ աստ: Հաւանական է որ այս երկրին օրինաց դէմ է խորհիլ, լուսաւորել, վիճաբանել, կանոնաւոր առևտուր ու տակ վարել ու յառաջ քալել: Քաղաքակիրթ Եւրոպայի մի փառաւոր դուռը բանող ազգն, քաղաքակրթութեան յետին դռնակը նստեր, անոր բանալին վերնատաք աղանդի մը կտուցէն կամ հազարումէկ գիշերներէն կ'սպասէ. . . . .

ժոռեալով և ահուդողով կ'նայի արդի լուսաւորութեան, յառաջադիմութեան և հարկին պահանջած նորոգութիւններու բռնի հպատակիլը, աչքը պինդ կ'գոյէ հեռուն արևմտեան հորիզոնին վրայ մշտավառ քաղաքակրթութեան փարոսին առջև, բերանը անէծքի՝կարդայ զայնվ առողին, միտքը հնար ու նենդ կ'հնարէ որ անոր ձառագայթներուն դէմ մաքառի, և դեռ նոր կ'երազէ որ մարդս հոգի, կամք և իրաւունք կրնայ ունենալ: Իսկ այն պլուխը չունի երես ու աչք ապագային համար, այլ ձակատագրական մութ ամպերու մէջ կ'թաւալի և ամէն ձիզը կ'թափէ որ անցեալին մէջ ապրի:

Իրաւ է նաև որ երբ մէկ կողմէ այսպիսի անհեթեթ պլուխ կ'տեսնեմ, և միւս կողմէ՝ մի անուշ կլիմա, շռայլ բնութիւն, բերրի երկիր, սակայն մարդկային կեանքը աժան, կալուածքը անստոյգ, շահու դռները մի քանի մնալաձառնեղու ձեռքը, նենգութիւնն ու անկարգութիւնը միշտ կանոնաւոր, ՝ի հարկէ և ընդհանրապէս կ'դուշակեմ որ մարդիկ անգործ և թոյլ մի կեանք կ'վարեն, ճարտարութեամբ անոնց բերքը և արդիւնքը առատացընելու չեն աշխատիր, այլ ամէն բան բաղդին կ'թողուն: Սակայն եթէ յանկարծ անկլիայիս աստ՝ և այս ժողովուրդը այդ տեղ փոխադրուին, մենք մեր սովորական պիտոյքը և անհատնում փափաքը շատացընելու համար իսկոյն գործի կ'սկսէինք, ու նախ մեր իրաւունքը պաշտպանող օրէնքներ հաստատելէն ետև, մեր պարտաւորութիւնը կ'կատարէինք. հողէն, ջուրէն, օդէն առատ դանձեր կրնայինք քաղել, նաև բոլոր աշխարհի պիտոյքն հոգալու չափով, մի միայն մեր հնարագիտութեան կէսը՝ի գործ դնելով՝ քանի որ աստ բնութիւնը մերինին պէս ապահով չէ: Իսկ ասոնք մեր գործարաններուն և հսկայական մեքենայից առջև իրրև ընչաւոր թզուկներ պիտի ապուշ ծնային, և դժուարին չէ գուշակել թէ մեր հարստութեանց գործիքներուն գիրկն օրչափ ժամանակ պիտի կրնային ողջ մնալ:

. . . . . և զարմանք չեն: Ատոնցմէ և Լէհկէիմուրի արշաւանքներէն ակն յայտնի կ'երևի որ վրանաբնակ ու միանգամայն յաղթական ժողովրդեան մը կոխած տեղը աւերակ՝ և պադարած վայրը որչ դառնալէն զատ, եթէ ձեռքի սուրը, որուն տէրատեսութիւնը միշտ կարճատես է մարդկային մտայ անկուն յառաջադիմութեան առջև, վար դնելով բարեկիրթ ազգայ հետ չխմորիր, ինքնիրեն կ'թթուի և այն թթուածէն կ'ծնի հրէշ մը, կամ ինչպէս Եղնիկ կ'ըսե, Արհմն, որ իր մօր որովայնը ծածկելով յանկարծ դուրս կ'ցատկի ու Որմզդին լուսաւոր տիրապետութիւնը ժամ մը կ'պղտորէ: Լաւ կ'ըսե Թողվիլ* թէ մշանջենաւոր անիշխանութեան և ինքնակամզեբութեան մէջ տատանող ժողովուրդ մը պէտք է որ իր սովորութիւնները և օրէնքը նորոգէ և կամ կորսուի: Թէպէտև իմ նպատակս քաղաքական չէ, կարող ես ինքնին զանազանել՝ թէ այս գեղեցիկ երկրիս յետագէմ վիճակը բնակիչներուն թմբրութենէն ու տգիտութենէն կ'ծագի թէ ոչ կառավարութեան մեքենայէն, որու մի քանի թելերը քրիստոնէից ձեռքն են. եթէ ըսեմ միայն՝ որ տէրութեան դրութիւնը Ջանոսին երկդէմ գլխուն կ'նմանի՝ որու մէկ երեսը դէպ անցեալն, աստուածապետական իշխանութեան, երկնատուր և խորհրդաւոր օրինաց կ'նայի, անմեկնելի վճիռներ, ընտրհարաշխութիւն, արտօնութիւն, հարստահարութիւն, կրակ ու բոց կ'փչէ, մարդուս էն նուիրական իրաւանց, այն է կենաց, պատուոյ, ստացուածքին ապահովութիւնն՝ իրրև առասպելարանութիւն կ'ըսէ, ստութիւնը իրրև արդարութիւն, տգիտութիւնը և շղթամարտութիւնը իրրև արժանաւորութիւն, իսկ մոլի տիրապետութիւնը իրրև առաքելական առաքինութիւն կ'նկատէ: Միւս երեսը՝ ակամայ դէպ ներկան՝ խո-

*Գաղղիացի պատմագիր, որ շատ անուանի է Անգլիական հասարակապետութեան վերջի դարուն վրայ:

Բայց բնակիչներուն դառնանք և մանաւանդ հայուն: Կ. Պոլիս անհամար ազգերու, տոհմերու բնակարանը կամ ապաստանարանն է, որոյմէ իւրաքանչիւրն իր յատուկ կրօնը, լեզուն և հնարքը գործածելու կ'նայի: Ահա մատրան քով մզկիթ մը, խաչին մօտ մահիկը կ'տեսնես, յամր ֆէսը, արագաշարժ փեղոյրը, բուռթ ալորօշը, սրամտ ֆոֆխը, բրդեայ փարթամ խոյրը իրարու մօտ կ'տատանին: Արգարև շատ նկարագեղ է տեսարանս և անոր օրինակը մենք Լօնտօն թատրի վրայ երբեմն կ'տեսնենք: Սակայն կարծեմ որ այս քաղաքս ալ տեսակ մը թատրոն է, ուր մէն մի ազգ իր յատուկ հագուստով սորված դերն առանձին կ'խաղայ, ու չգիտեմ որ եթէ վարագոյրը իջնէ և իրենց բնական կերպարանքով երևին, անոնցմէ ո՞րը յաղթական պսակը պիտի տանի: Որչափ որ առ երեսս իրարմէ տարբեր են ամենքը, իրօք գրեթէ ամենքը թիւրք են՝ ի ծնէ, դաստիարակութեամբ, շահասիրութեամբ կամ սովորութեամբ: Ուստի այս նոր տեսակ Բաբիլոնս, հինին շքեղութենէ զուրկ, որպէս կանգուն կ'կենայ և վերին բարկութիւնը չշարժեր, ինձ չինար վճռել: Թերևս կան ասա քանի մ'անմեղներ, հինօրեայ աստուածապաշտ նահապետներ, որ այս խառնակ աշտարակին շինութեան ոչ քար, ոչ կիր և ոչ աղիւս կ'կրեն, ուստի և Ամենակալին հուրը կ'մեղմեն ու Յովհան մարգարէն շանթովը կ'յուզարկէն որ քիչ մ'ատեն կիտին փորը երթայ սպասէ:

Այս նահապետները հայերը պիտի լինին անշուշտ, Հայր Աբրահամն թոռներուն պէս հանգարտօրէն հօտը կ'արածեն ու զանոնք մի նոր ու ընտրեալ ժողովուրդ կազմելու, քանանու մեղրալի երկրին դուռը ցուցնելու համար ոչ հրեշտակ ունիմ որ անոնց ձայն առմ և ոչ Մովսիսական զօրութիւն՝ որ փարաւոնի ձեռքէն ազատեմ ու վարձատրեմ: Եկու նայէ որ Աստուած ալ ձանձրացաւ ժողովուրդ ընտրելէ ու Իսրայէլի ապերախտութենէն, և թողուց որ մարդիկ իրենց բնակութեան զօրութեամբը և արիութեամբը իրենց լինկերա-

կան կացութիւնը ընտրեն. ինչպէս որ երին մեր օրերը յոյնք. և 1600ին ՃօՀն Սմիտ, լորտ Տէլավար և մանաւանդ Պրաունեան Բիւրիդանները, որ մեր հայրենիքին ամենէն ազատասիրտ զաւակները բնութենէ ազատելով՝ առին տարին ու նոր Անկլիայի Վիրգինիա ու Մասաչուսէթ աշխարհին մէջ հաստատեցին. և ինչ որ երկնային շունչը, որ միշտ մարգուս ազատ կամքին անխափան է, Մովսէսի բերնով չուզեց բանի կատարել, նոյն դիւցազունները տարուէ տարի շատնալով մի և նոյն Աստուածաշունչ գրոց վրայ կաղմեցին, հիմ բռնելով ղեկնոք իրենց նոր հայրենեաց սահմանադրական օրինաց և աշխատասիրութեամբ յառաջ գնալով հոն անկեցին Ամերիկեան Միացեալ-Նահանգաց ազգութեան այն կաղնին որուն արմատը անդադար խորունկ կ'տարածի կ'ամրանայ և ճիւղերը չորս դին սաւառնելով անոնց հովանին մինչև մեր հինցած աշխարհին շուք և զառամեալ երկաթասէր բնաւորներու ահ կ'սպառնայ: Սակայն ես տարբեղէն լինելով՝ նախ պէտք է որ նոյն հայ մարդիկը աչքս տեսնեմ, և վերջը եթէ բաստծիդ պէս ազատութեան արժանի են, Բէն* մի կրնայ եղնել անոնց առաջնորդելու: Անշուշտ եթէ աչք զարնելու բան մը կայ հոս, աս ժողովուրդը պիտի լինի կ'բաւէ ինքնիրենս: Ուստի՝ առանց յանձնարարական նամակի կամ սիկիւրոնի՝ ասդիս անդին ընկայ որ հայու դէմք գտնեմ: Կ'երևակայէի զանի բարձրագլխակ, լայն ճակատ, հաստաբազուկ, Հայկին ոգւովը վառ, Աշոտին պէս երկաթ, Գադիկին վրէժխնդրութեամբը լի և այս խառն հրոսին մէջ իբրև Արարատեան փայլուն գոհար:

Սակայն քանի քանի վրիպեր եմ, բարեկամ, և դու ուրչափ իրաւունք ունիս ըսելու՝ որ հայութեան անունը կայ աշ-

*Բէն հաստատեց 1680ին Բինսիլվանիոյ գեղեցիկ գաղութին հաստատութեանը. երևելի է իբրև փոքրագոյն ջրհնաքիր, և մանաւանդ մարդասիրութեանը և արդարադիրութեանը համար:

խարհիս ամէն անկիւնը, բայց ինքը չկայ. արդեօք խլուրդի պէս գետնափոր տեղուանք կ'ապրի, վասն զի որ կողմն որ զարկի, որուն որ քսուեցայ, ինչուան որ գայլ. 'ի զուրնկատրաշած նշանուկս կերպարան մը, 'ի զուր հայու ձայն փնտռեցի: Անկլիացւի վրայ դառնալով՝ կարծէի որ հայն ալ անոր պէս առաջին տեսքին կ'ճանչցուի, սակայն հիմա կ'հասկնամ որ Արևելեան նշանաւոր գերութիւնը ամէն ժողովուրդներուն ճակատին սև աղտ մ'է կսխեր և անոնց սերմը արատեր է, ուստի գծապրութիւնին զանազանելը դիւրին բան չէ: Այս պէս՝ այս ընդհանուր տեսութիւնս ընելէ ետև, պէտք է որ ասոր անոր դիմեմ. բարեկամներէ հրահանգ սպանամ, որպէս զի Տան Քիշոդին պէս հեռուէն մսացածին հայ Տիւլսինէլի մը չզարնուիմ, այլ իսկականին ներկայանամ, երկար բարակ քննեմ զանի և ըստ այմմ ուրիշ անգամ նկարագրեմ քեզ անոր վիճակը:

ՆԱՄԱՅ Գ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏՏ

Կ. Պոլիս . . .

Նախընթաց գրոյս մէջ տեղ չգտայ պատասխանելու Լիլիի մասին գաղտնապահութեանս հետեւած քաղիդ: Մանաւանդ գիր մը այն ակնարկած սիրալիր էակին նուիրել քաշոյր է սրտիս, թէև անոր յիշատակը գառն: Ամէն ժամանակ իմ

հոգերս ծոցդ թափելով սիփոփում գտած եմ, ու եթէ այս պարագային քանի մը մնոր արկածներ սիրոյս վրայ լռիկ անցայ, պատճառ. կան ցաւեր որ սրտակից մ'անգամ չկրնար մեղմել, և անոնց խոստովանութիւնն ընելը ոչ միայն հպարտութենանս կ'դպչէր, այլ և հոգւոյս ակարութիւնը պիտի յայտնէր: Անկլիացի մը՝ լաւ գիտես որ բան գործ չուներ անդադար հառաչել, և ինչ կարելիէր աղէտից տակ իյնայ՝ լռելեայն անոնց դէմ ցմահ կ'կռուի: Բայց որովհետև առնուեր ես իմ լռութենանս մասին, համառօտ ու պարզ պատմեմ քեզ սիրոյս՝ մանաւանդ վերջին պարագաները, առանց քեզնէ մխիթարութիւն ու զարման խնդրելու:

Լեհաստանէն, այս թշուառ քաջերու հայրենիքէն գարձիս՝ Լօնտոն Խոհէմ կոմսին յատուկ գործով մը ներկայացայ: Այնքան համարում և յարգ ստացայ անոր մօտ, որ իր տունը սկսայ երթալ գալ, և գիս իր աղեցութեամբը մինչև Բրըքենի անգամ ընտրել տալու առաջարկեց, և ես մերժեցի: Փառասիրութեան գրգիռ մը միաքս չհրապուրեց, սակայն անոր աղջկան Լիլիին գեղեցկութեան ու շնորհներուն սիրոս անհնարին էր դողալ:

Իմ աստիճանս համեմատաբար անորմէ շատ վար էր, չունէի անունիս կպած լորտ պատուանունը, չունէի գեղեր ու ագարակներ, չունէի շքանշան, այլ և այլ զժուարութիւններ առջիս կային զլուխ, բայց ունէի ձարտարութիւն ու հարուստ հոգի մ'որ անսակ կապեր կ'թոթռէր և ուրիշ աղնիւ հոգիի մը կ'ուղէր կապուիլ. եթէ մեր այս հոգին ամպեր պատուելով անհուն էութեան կրնայ սքանչել անարգել, անոր էն ընտիր և շնորհալի արարածին, անուշ Լիլիին ծոցը ինչո՞ւ պիտի չկարենար հոգիս դպարիլ, թէև ազամանդեայ անգծելի վանդակի մէջ անգամ պահուած կենար: Պատարեալ սրտի մը ոչ ոսկեզարդ ճակատ և ոչ ականակուռ նշաններ կան, այլ միայն ճշմարիտ սէր և առաքինութիւն: Լիլիին ոչ անբաւ օժտին, աղնուական առհասին. և ոչ գոհարներուն զարնուե-

ցայ, այլ անոր բարակ ու լեցուն հասակը, շուշանի պէս սպիտակ ու թարմ դէմքը, ոսկեթել մազերը, երբ աշխուրեն մանրիկ և վարդագոյն բերանը երևակայութիւնս յափշտակեցին, իսկ անոր կապոյտ աչերուն անմեկնելի անուշութիւնը, սիրուն սիրատու ժպիտը և մանաւանդ աղայական անմեղ պարզութեան հետ ունեցած ազնիւ լեզուն, ուղիղ դատողութիւնը, լուսաւոր միտքը և հոգւոյն անկեղծութիւնը սիրտս բոլորովին գրաւեցին: Նախ մեր սիրոյն թարգմանը մեր աչքերն և մեր նամակները եղան, և մեր մտերմութիւնն օր օրի կ'աւելնար և իմ վիճակիս համար անտանելի կ'դառնար: Այս անխօս սրտակցութիւնն երկու տարիէ աւելի շարունակելէն անհնարին լինելով վերջապէս իրարու սիրտ բացինք: Օրիորդը ապահով իսկ ինձ կասկածելի էր որ անոր ծնողքը մեր միութեան արգելք չեն լինիր: Վասն զի գիտէի որ լորտերը որքան աղաւտականութիւն դասեն մեր օրերը և իրենց գումը սորին բայց արժանաւոր անձանց բանան, գարձեալ հին ազնուապետական սովորութենէ չեն կրնար զատուիլ, և կ'կարծեն թէ արիւննին կ'արատի եթէ անոնց հետ խնամութիւններ սկսին: Ասկէ զատ՝ էն մեծ ընդդիմութիւնը լէտի Խահէմէն կ'սպասէի որ արդէն իր աղջիկը բթամիտ այլ տոհմիկ Տէնսի պատանիին տալու միտք ունէր: Այս ամէն դժուարութիւնները բանի տեղ չէի դներ թէ որ Լիլլին գեղեցկութեան հետ քիչ մը զօրաւոր կամք ունենար: Վասն զի՝ որչափ որ սրտով ինձ յարած էր, տեսնելով անոր անհնարին երկչոտութիւնը, աւ ծնողս իւր ունեցած կոյր հպատակութիւնը և լուծը թօթափելու անկարողութիւնը, դուշակեր էի որ մեր սէրը պիտի չպսակուի: Ձերկարեմ, պարտքիս և պատուոյս պահանջածն ըրի և Լիլլին հաւանութեամբը իմ գիտաւորութիւնս ուղղակի ըրտին առաջարկեցի և իր կողակից՝ լէտի Խահէմէն աւելի այս ըրքենի պատասխանը.

Պարոն Նէլսօն,

Լիլլիս հետ կարգուելու երազելդ անգամ յանդգնութիւնը ֆ

քեզ, ուր ձեզ առաջարկելդ: Ան ոճր է, գուն ոչ: Անոր երակներէն վազած արիւնը դիւցազուններէ կ'ինչնէ ու վեց դարեան է, քուկդ որոնն մրուրն է: Այն միտքէն՝ որ զձեզ կ'զատէ՝ ցատկել կ'ուզես որ անոր հասնիս: Մեծ բաւական պատիւ չէր քեզ մեր տունն մտնել եղնելդ, երես աւիր մինչև աղջիկս հրապուրելու: Սակայն զգաստացիր, անոր չքնաղ հոգւին միայն արքայազնի վայել է, և արդէն նշանուած է, գուն տալանդ և ճարտար լեզուս ունենալուդ համար միայն մեր քաղաքավարութեան արժանի ես, անկէ զատ բանի մի ոսլասեր:

«ԼԷՏԻ ԻՍՏՀԷՄ»

Այս տումակը վրէժ կ'կանչէր, պրոզը իժ մ'էր, ու եթէ լորտին գրչէն ելնէր, անտարակոյս անոր արիւնովը զայն արդէն ներկեր էի: Այս բանիս վրայ սէրս սրտմտութեանս հետ պրպռեցաւ, և Լիլլին ինձ գաղտնի սիրտ տալով աւելի զայն արծածեց: Բայց օրիորդին երեսը տեսնել, անոր բէրնէն ոչ մի պատասխան մ'առնելու միջոց չկար: Ծնողքը մեր հաղորդակցութիւնը բոլորովին կտրելու համար՝ աւելի զանգղեղ տարին: Առեն անցաւ և յանկարծ ուրիշ գիր մը հասաւ ինձ Լիլլին ձեռագրովը, որուն մէջ ինքը կ'ըսէր մօրը թէ՝ աշխարհ մէկ քով գայ՝ երբէք զիս ամուսին չընդունիր, և թէ զիս իբրև ծանօթ և չէ թէ իբրև սիրահար կ'ճանչէ: Ո՛հ, նենգութիւն, քանի միտքս գայ գոռալ կ'բռնէ, այն գիրը չկրցայ լմնցնել, ինքզինքս կորուսի, վնասրկեան մը առաքինութեան, սիրոյ, պատուոյ վերայ ունեցած զուտ տեսիլներս շփոթեցան մտքիս մէջ, շատ ցաւ կրեցի, բայց համբերեցի, և յաւիտեան սիտի առէի Լիլլին, թէ որ ատոյգ աղբիւրէ չիմանայի որ վերջին գրին հեղինակը ինքը չէ եղեր, այլ կ'երևի որ իրեն մօրը մեքենայութիւնն էր այն: Ինչ և է լորտի մը ճանկէն այն աղաւնին աղատելու գժուարութիւնը նկատելով՝ սիրոյս մրմունջ խեղդել ջանացի, թէև ես ալ անոր

ծնողաց պէս պատիւս եթէ չհանչնայ, աղաւնին գաղտուկ առնել թուչիլը ձեռք կը։

Հիմա կ'ըսուի քեզ պատել թէ ինչ իրաւունքով Եիլին կրնայ փրիսիլ և որոտալ իմ դէմ։ Ես պարտքս ըրի և միշտակս լուտերաս ոսկեզրահ քանակին և գարաւորնախապաշարումներու դէմ չէի կարող դուրս ելնել։ Դուն ալ թերևս ըսես որ Եիլին սիրտը թէև հետ էր, ինքն ալ պարտքը կատարեց ծնողացը հրամանէն դուրս չելնելով և առաքինութիւն գործեց։ Ո՛չ, թէ որ սուտիւ առաքինութիւն կ'անուանես զայն, ուրեմն այլանդակ տեսակէն է և մեր դեղադէմ օրիորդներուն մեծ մասին դաստիարակութիւնը հակասական դրութեան վրայ հիմնուած կ'երևի։

Մէկ կողմէն օրինաւոր հասակի հասնելով կատարեալ ազատութիւն կ'ստանան իրենց շրջանին մէջ շարժելու։ Աշխարհ ու մարդկան բնութիւնը ճանչնալու կ'ներուին, բարին ու դէշը զանազանելու կ'սորվին, յուղիղ և ընտիր տեսիլներով գլուխնին կ'լեցուն, երևակայութիւնին կ'զարգանայ, ոչ սուտ կրօնասիրութիւն և ոչ ծագրելի և մնապարծ առաքինութիւն դասելու կ'վարժին, համեստութեան չափէն չեն խոտորիր, շողոքորթութենէ կ'հեռանան, պատուոյ թիւննին կ'մշակեն, մայրութեան, բարեպաշտութեան, հայրենասիրութեան պարտիքը կ'ուսնին, ու երբ այս ազնուական գործառնութեանց պատրաստ աղջիկ մը՝ իր փորձառութիւնը և ազատութիւնը՝ ի գործ դնելու ժամը հասնելով՝ կ'ելնէ ու շատ երիտասարդներու մէջէն ընտրութիւն մը կ'ընէ, կ'սկսի սիրել ու սիրուիլ պատուով և անկեղծօրէն և վերջապէս փափաքը ծնողացը կը յայտնէ, քու խօսքիդ նայելով իսկոյն մայր կամ հայր, երբեմն երկուքը մէկէն, պէտք է մէջտեղն ու եսական չնչին խորհրդով դրդեալ առանց իրենց զաւկին երջանկութեան պայման ին ուշ դնելու ըսեն։

—«Աղջիկս, իրաւ ընտրութիւնդ հիմնաւոր է, մտքդ և սիրտդ այն նպատակին կ'պիմեն, բայց ամուսնութեան մասին մերինը աւելի ընտրելի է, ու թէ և աղատ ես դուն, բայց կամքդ աղատ չէ»։

Ձէ, բարեկամ, անոնց վճիռը բնաւ արդար չէ, և օրիորդին կամքը լուվին ազատ է քանի որ արդէն իր կիրթ հոգին զայն կ'առաջնորդէ։ Քանի քանի աղէտից պատճառ կ'լինինք, դուք մայրեր, եթէ այդ բռնաւորութիւնը շարունակէք։ Մէկ ժամու մէջ քսան տարուան դաստիարակութեան արդիւնքը կ'խորտակէք, այդ ընթացքով ձեր օրիորդին սառել, նեղսրտել, անհաստատմութիւն, լարշութիւն կ'քարոզէք, առանց գիտնալու, անոր մտքին մէջ ամէն բարի սկզբունք կ'առնէք, իսկ մի կարծէք որ ասկէ ետև ձեր կամքին պիտի հնազանդի, ոչ. թէ գձեզ, թէ ետևէ ետև սիրելի անձինքն, և թէ առնելիք ամուսինը պիտի խաբէ, վասն զի դուք ըսիք անոր որ խաբելը ներելի է։ Ուրեմն կամ կոյր, ապուշ, անսիրտ ծնեցեք աղջիկնիդ, անոր հոգին, եթէ ունի, ճմլեցեք, աչքը հանեցեք և ձեր հատածին կամ լաւ ևս ըսեմ, ձեր սիրածին տուէք զանի, և կամ անհեթեթ մի լինիք, ու անոր միտքը ու սիրտը մշակելէ ետև, թողէք անոր ասպարէզը բաց. ազատութիւնը խոհուն մտաց էն ամենէ առաջնորդն է, մի վախնաք չեն ինար հոն ուր ..... թերևս ձեզմէ սահողներ կան .... Երբ օրիորդ մ'ուղիղ և լուսաւոր դաստիարակութեամբ զինած է, իրրև վահան փորձութեանց և մարդկային դարանները աւելի անթափ կ'մնայ՝ քան թէ ան աղջիկը որ կղզակի ու շղթայի տակ կ'մաշի, կ'փսի և մինչև անոր խաւարին բոյնը մոլութիւնը կ'սպրդի շատ անգամ, և անդ գիւրին Ճարակ, միամիտ որս կ'գտնէ։ Ձեմ իմանար ասով այն ազատութիւնը զոր թերակիրթ ու ֆրանսամոլ օրիորդ մը տեսա կարծելով իր յատուկ սեռին շրջանէն դուրս կ'գործածէ ու կէս մարդ կէս կին կ'ձևանայ, վասն զի այնպիսին երկու սեռէն դուրս հրէշ կ'համարիմ։

Արևելեան օրիորդաց պարզասիրութիւնը և համեստութիւնը լսած եմ, հաւատարիմ սիրուհիներ, առաքինի մայրեր, ըն-

տանեսէր տիկիններ կ'լինին, կ'ըսեն, թէ աստսերը բնական է և թէ սիրայօգ հոգիները իրարմէ չեն զատուիր, նայիմ ի՞նչ բան է: Ասեն ատեն այսպիսի նկութերու վրայ խօսելով՝ որ մարդկան բարուց վրայ մեծ ազդեցութիւն ունին, իմ գառն փութաւորութենէ օգուտ կ'քաղեմ: Որչափ որ ասով ձանձրացընեմ պիտի ղքեզ յուսամ ներէլդ, դիտնալով որ այս սիրտս չձանձրանար ղքեզ սիրելէն:

ՆԱՄԱԿ Ե

ԼԻԼԻ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լ.ծ.ոցն . . .

Ուրեմն փոքրիկ ճամրորդութիւն մի կ'հաւարիս դու մինչև կ. Պօլիս գնալը, այս լուրս թէ ոչ՝ի բերան՝ դէթ գրով քեզի լսելու տեղ Պ. Վուտէն իմանամ: Ա՛յս ինչ պաղատութիւն է, որ ձեզ մեր առջի մտերմութիւնը, ինչ եղան մեր սիրաշարժ խոստումները, որ չարաշունչ հովը վանեց մեր երփնապոյն յոյսերը, ինչպէս սիրտ ըրիր, Նելսօն, դիս այս անդնդային վիճակին մէջ թողլով մեկնիլ, առանց խօսք մի, բառ մի, նշան մի տալու քու ապագայ դիտաւորութեանդ վրայ: Գաղտնիք մ'կը արդեօք նպատակդ որ քու սիրականիդ անյամբանալ չուզեցիր, վասնզի արդեօք որ ղքեզ կ'ղրկեմ ոտքդ, ինչպէս իմն ձեռ ըրած, կամ գինդեին պէս լաց ու

ողբ թողում, շանթ արձակեմ եանէդ: Ո՛հ, չէ, չէ դիւցազանց և ասպետաց դար չէ մերը, նիւթասպաշտ, մեքենադործ, անսէր աշխարհի մը մէջ կ'ապրինք մենք: Թրուպատուրներու* դեղդեղին և քնարին, ու թռչուններու անուշ գայլայլիկին տեղ ստորերկրեայ հնոցներու անգունդէն կիկրոպներու կռանին կոփն ու կոփիւնը, շոգեշարժ վիշապայ ամպրոպն, կռինչն ու շռինչն մեր ականջին անդուլ կ'որոտան իբրև վեսուվի փուչն եւած՝ մեր մթնոլորտին թանձր մուխն ու լաւան մեր աչքէն երկնից կամարը արեւուն պայծառութիւնը, ծաղիկներու և դաշտայ տեսարանը կ'ծածկեն, կ'ձմլեն մեր մղձուկ սիրտը, կ'պաշարեն անոր վեհ թռիչքը, անուշադրոյր զգայմունքը, ու միայն մաղձային, եսական, շահախնդիր խորհուրդներ կրկնել կ'տան երիտասարդաց և կ'քաջալերեն:

Մինչ իմ մեղմ տատրակի ձայնս այս ընդհանուր դործունէութեան և դոռ ու դոչումին ատեն կարելի է լսելի ընել, մինչ դուն, դուն միայն անոր հաւատարիմ արձագանքը չէիր, և որո՞ւ սիրտն իմն կրնար հասկընալ: Գիտեմ որ անկասկիպ ամէն բանէ առաջ պարտք կ'դասես, բայց մինչ սիրոյ ընկածը, որ ամենուն աղբիւրն է, սկիզբ է մի մուսնալ: Հետաւորութեանդ տեսիլը չէ լինդ այնքան անբերելի՝ որքան դասած անտարբեր երեսդ: Մի կարծեր թէ կանացի ակարութիւն է իմն, հոս սորվեր ենք տարիներով հետու մնալ մեր սիրականներէն, անոնց արիական դործերը լսելով բեկրիլ, անոնց պատկերը, յիշատակը, նամակը միշտ մեր ծոցը պահել ու զգուել, անոնց հետաւոր շունչին ու ձայնին մեր անձկալի հոգիին տապը ամրքել և մինչև անոնց յետգարձ մահը փառաւորել՝ եթէ հայրենեաց և առաքինութեան զոհ են ընկերը: Սակայն դիտենք դոնէ որ ինչպէս մեր ուխտը հետերնին, նոյնպէս անոնց սիրտը մեզի հետ են: Իսկ՝ դուն Նելսօն, Թո՛ղ, Թո՛ղ սրտամերկ խօսիմ և խոստովանիմ որ անկար եմ

*Մէջէն դարու քանահիանալու պրոտեստ անուն:

հասկնալու թէ դուն, ինչ տեսակ զրկիս, ինչ պարտաւո-
րութիւն ունէիր Արեւելք գնալու այս անգամ։ Միթէ հայ-
րենիքդ հոգ չունէր զքեզ պաշտպանով, թէ ուշ անորմէ և
և մնէ տաղտկացար։

Արդէն գիտեմ որ հայկեան տենդը բռներ էր զքեզ, գի-
տեմ որ Հայաստան իբրև Արդատեան աշխարհ զարկեր է
վառվռուն երեւակայութեանդ, որ անցեալին մէջ դարէ դար
ոստոստելով՝ պատմութեան մեխրատպատ և լօռուտ պերեզմանը
կ'փորէր և կ'երթար Արարատեան դաշտը կ'պադարէր, Հոն
քանի տեսնէիր Արայ գեղեցկին չքնաղ բարուց գեղեցկու-
թիւնը, օրէնսգիր Անուշաւանին սրբատեսր սրտին՝ Արմաւրի
սօսիներուն հովանիին ներքև երկնատիպ պաշտօն առնելը,
Հրաչ Վահագնի, Հայկազանց Թէսէոսի, շահատակութիւն-
ները, արիասիրտ Վահէին հայրենասիրութիւնը և երկնային
իրաւամբ Մեծն Աղէքսանդրի՝ Արամազդայ աչայ լուսին դէմ
՝ի վէպ գալը, երեսիդ գոյնը կ'նետեր, սիրտդ կ'թնդար և
վշտալից շատ անգամ կ'ըսէիր ինձ, «Ո՞ւր էր թէ, Լիլիս,
Հոն Արագածու լերան սառոյցը, Երասխայ մօտ ծնէիմը,
մարդկային կրից աղէտքներէն աղատ՝ նոյն երկրին ժողովրդեան
պէս սիրոյ և խաղաղական օրինաց հնազանդ պարզ և բնական
վարուք, հովիտ, պարտէզ և անդաստանք լինելով մեր
դանձը, մեղր, կաթ, միրգ մեր մնունդը, սէր, մեր ամեն
գործոյ շարժառիթը, ըղձաերու և քաղաքակրթութեան ա-
պականակից բռնութենէ, փառասիրութենէ, շահու, քինու
և մոլութեան կռիւներէ հեռի։» Այս ինչ սէր է որ կ'տա-
ծես առ հայս, միթէ մոռցար նեղսօն, որ Մեծն Բրիտանիա
է քու մայրդ և Լիլին անոր աղջիկը, չես մտածեր որ այն
սիրած աշխարհիդ հորիզոնը սեփական է, անոր երկնից երեսը
արիւնալից նշաններըը չես տեսներ, պիշակեր անգղ մի, պի-
շերագէմ աղուէս մի, անողորմ գայլ մի անոր ահաբեկ որդիքը
կ'յարձակին կ'յօշոտեն։ Արմաւիրդ երուանդակերտդ գաղա-
նաց որջ կամ երկրիս խորն են մտեր։ Դուն էիր ինձ համար

բոլոր աշխարհ և դու երեւակայական երկիրը մի փնտռելու
ելեր ես, միթէ առ իս սերդ սուր երազիդ կ'նմանի։ Եթէ վաեմ
և արդիւնաւոր լինիր նպատակդ, ես պիտի լինիմ քեզ առաջ
ջին քաջալերը, բայց ափսո՛ս. հայկական եռանդդ յաղթեց
վերջապէս սիրոյդ, և ես մնացի միայնակ։

Ուրեմն հերիք է իմ դանդաղս, դու որ իմ սիրոս և
ինչ փափուկ վիճակի մէջ լինելս կ'ճանչես, դու որ ինչ-
պէս հոգւոյս տիրելդ գիտես, գիտցիր նաև որ թէև տկար,
թէև չունիմ քոյր և եղբայր որ անոնց երեսիմ և քիչ մը
պաղչիմ, թէև հայրս և մայրս ինձ ծանր կ'նային պաղանի
կամակորութեանս համար, թէև հղօր թնդիդ և ձայնիդ կա-
րօտ եմ, սակայն մեռնիլս գիտեմ քնաւ օգնութիւնդ և գութդ
չպիտի մուրամ։ Ձեմ ուզեր շարժել քեզ վիշտերովս, և
լաւագոյն կ'սեպեմ ամփոփիլ ու անմեղութեանս մէջ զօրու-
թիւն գտնել։ Վասն զի գութէ առաջ եկած սերը կ'անգոս-
նեմ, ճշմարիտ սերը մուրացկան չէ, ինքնօրէն կ'ծնի, ու կը
գոխի. անսպառ կայծ մ'է երկնային՝ որ սրտիս մէջ անգուլ
կ'բորբոքի։

Ես թշուառս, գիտեմ նոյն կայծին մի աղօտ նշոյլն անգամ
չտեսած՝ աշխարհ ինչ է չգիտցած, երբ մանկական անմեղ
խաղերուս առեն անմեկնելի սրտմտութիւն մի հոգիս կ'պատէր,
աչքս զուտ վտակի կամ պիշերը փայլփլուն աստղի մը վրայ
պաղած՝ իբր երազահար կ'նայէի, մօր և հօր գորովալիր
ձայնէն տարբեր անորոշ ձայն մը սրտիս կ'փսփսար որ մի-
նակ եմ ես, արտասր մը այտերէս կ'սահէր, և քանի երի-
նից յուսատու կամարին կ'նայէի կարծես թէ քու նկարդ ինձ
կ'երևէր։

Այս երազը քանի գնաց վրաս ղմայլելի տպաւորութիւն մը
ներգործեց։ Առանձնութիւնը սիրելի գարձաւ ինձ, փայլել
ատոր անոր առջև չէի փափաքեր. խաղալ խնդալէն դադրե-
ցայ. սիրելի ընկերուհիներէս ալ համ չէի առներ. անունս
մէ ոմանք լըսեի տղայ, ոմանք ղօրասպան մը, ոմանք բարե-

մէկդի անդամ մը դրաւելու կ'աշխատէին և իրար կ'անցնէին։ Ինկ ես զգրաւոր մի հոգի, մի մարդ, քիչ աստիճանէ որ լինէր, կ'փափաքէի սիրել և սիրել բոլոր հոգւոյս զօրութեամբ։ Այն պատանիներն, որ խունկով և շողոքորթութեամբ ամէն առթիւ կ'պաշարեն աղջիկները, ամենևին սիրտս չէին շարժեր, ՚ի զուր կ'որոնէի անոնց մէջ անձ մը որ իմ տեսլական նկարիս նմանէր։ Ահա այս խուզարկու այլայլութեանս ատեն առջև եկար։ Լեհաստանէն՝ որու թշուառ՝ բայց ազատասէր որդւոց օգնութեան ինքնակամ գայեր էիր, նոր եկեր էիր և հօրս այցելութիւն տուիր։ Օ՜հ, քիչ օր էր այն։ Արդէն քաջութեան համբաւէդ ամէն պատանիէ գլուխ կ'տաքնար, Լոնտոնի օրիորդներու սիրտը կ'տոփէր։ Թէև լրտա Գայլընին պէս յայտնի ելք մը չունեցար արիութիւնդ, սակայն դի Թուրքերէն աւելի զօրաւոր էին Լեհաստանի թշնամիները, սակայն ազատութեան դրօշին տակ կռուեցար և եթէ այն դրօշակը պահ մը բռնաւորներու հնարիքը կ'պատռէ, փոյթ չէ, անշուշտ քեզի պէս կարիճներու ձեռքը գարէ գար աշխարհիս շրջանը սլիտի ընէ և մեռեալ ազգերը կենդանութեան սլիտի բերէ։ Ինկ ես անունդ միայն լսելուս դոյնս կ'նետէր, կարծէի թէ շատուց հորուսեր էի քեզ և դասդ. լեզու չունէի խօսելու և ոչ կարողութիւն սրտիս յուզմունքը զննելու։

Այս անհանգիստ վիճակս մի տարի տևեց, քու նայուածքդ ինձ սիրտ կ'տար. քիչ ահագին արդելք որ կար առջևս մտացայ, և քիչ պէտք ունէի գիտնալ որ մի կոմսի աղջիկն եմ, որ իմ աստիճանիս սովորութեան դէմ կ'շարժիմ։ Իմ միակ փափաքս, բոլոր փառասիրութիւնս, երջանկութիւնս սիրուիլ էր քեզմէ, թոխովելով բայց քեզ սիրտս, իջայ առ քեզ և նոյն օրէն քու աչիւդ սիրտդ եղաւ ինձ ապաւէն և թագուհիի մը գահէն դէր ՚ի վեր բարձրացայ գիս։ Աւելի ազատօրէն սկսայ շունչ առնուլ, նոր կեանք երակներս, նոր լոյս աչքերուս մէջ կ'շրջէին։ Քանի կայսաւ ձա-

կատը անուշ ակնարկդ դիտէի, քանի սիրոյ և առաքինութեան վրայ ըսածներդ լսէի, անպատում ուրախութեան հեղեղներ կ'ողողէին հոգիս և փառք կ'տայի Աստուծոյ ըրած ընտրութեանս վրայ։

Ո՜ւր են այն օրերը երբ Ուայտ կղզին թև թևի տուած ժուռ կ'գայինք բլրակէ բլրակ, բուրաստանէ բուրաստան, ազդին ծաղիկ, անդին համբոյր մը ժողվելով։ Բոլոր բնութիւնը, արև, ծառ, թռչուն և վտակ մեր ներկայութիւնը կ'ընորհաւորէին։ Քու ձայնիդ՝ սրտիս մէջ սիրոյ նորանոր ազբիւրներ կ'բղխէին, ու թէև լեզուս չէր շարժեր, իրար ի՛նչպէս շուտով կ'հասկընայինք։ Թռչ, թող ըսեմ հիմակ, թագուհին պալատին չէի փոխեր այն ծառը որ անոր դիմացը կ'իյնար և որու շուքին տակ քանի՛ քանի անուշ ժամեր անցուցեր ենք։ Եա ՚ի քեզ և դուն յիս կ'ապրէինք. չկար զգացում մը, չկար փափաք մը, խորհուրդ մը, վիշտ մը որ ձեռնին չզգայինք, զոհ մ'որ չկատարէի քեզի համար։ Հաչերէնը անգամ'զգտնէի սորվեցայ, վասն զի այդ լեզուին համակրութիւն ունէիր։

Ափսո՜ս, այս երջանկութիւնս երկար չտևեց, չգիտէի որ անարատ զգացում մը այս աշխարհիս մէջ գառնութիւն և հալածանք կրնայ կրել։ Ինչպէս մանկիկ մը իր մօր փափկիկ ծոցը վատահ և խնդումերես կ'պառկի, նոյնպէս ես սիրոյս վարդագոյն երազներու և յոյսերու ու քու անկեղծութեանդ և հաւատարմութեանդ վրայ անվրդով կ'նիրհէի։ Չգիտէի որ մայր մը իր աղջկան կեանքին թշնամի կրնար լինիլ, չգիտէի որ ՚նէլսօն մը կրնար փոխուիլ. վասն զի իմ սէրս էր իմ կեանքս, քու հաւատարմութիւնդ՝ իմ հաւատս։ Ուստի. աւելի չէի կարող պահել զայն, մայրս զուշակեր էր արդէն վիճակս իմ այլայլութենէս, և խիղճս կը տանջէր գիս քիչ մը՝ մօրմէս պաղտնի սիրելուս։ Ոտքն ընկայ վերջապէս, բայց սիրտս, օգնութիւնը, դաւթը խնդրեցի։ Ինկ անոր պատասխանը և բռնած ընթացքը սիրտս կտոր

կատր ըրին։ Եւ ինչէր յանցանքս, Տէր Աստուած, լոյսի մը տուղ տեղ՝ պարան մը կ'օրհնի։ Ա՛հ, քու անձդ, Նիլսօն, կամքերէ և իշխանութիւններէ վեր կ'պահեմ ու եթէ լոյսերու ժողովին մէջ աթոռ մը չունիս, սիրաս ունիս միշտ իրենց պահդ։

Հոս խելահաս օրիորդ մը ազատ է ուզածին կապուիլ, ու ինչն է իր երջանկութեան կամ շուայտութեան պատասխանատուն, կ'ըսեն. լաւ, ձեր է այն ազատութիւնը, և թէ որ կայ, ինչ գազանի կապերով զայն բոլորովին սահմանած են։ Պէտք էր որ ծնողացս աչքով պատանի մ'ընտրէի որ ընդունելի լինէր. պէտք էր որ նախապաշարմունքներու, սահմանի, անցակ սովորութեան հնազանդ լինելէն զատ՝ հօր և մօր մը շահը, հանգիստը, մտապարծութիւնը չվիրաւորել ընտրութեամբս. թէ ոչ թաւք ու մուր, նախատինք, աքսոր պէտք էր աչքի առնուլ։ Ասոնց պարտաւորութիւն կ'անուանեն, և քան ինքեան այնքան սոսկալի բռնութիւններ են, որչափ որ անոնց շարժառիթը ծածուկ, ողորմելի ու փծուն կրից ծնունդ է։ Այո՛, պարտաւոր եմ սիրել, յարգել ծնողքս, իմ պատիւս որ նաև անոնցն է, պաշտպանել միշտ, երախտագէտ մնալ անոնց հոգերուն և խնամքին, բայց Նիլսօն, իրաւունք է որ երբ իմ սրտիս ուղիղ և օրինաւոր յօժարութեանդ կ'չհանան ամրել առանց հաստատ պատճառ մը մէջ բերելու, իրաւունք է, ըսէ խնդրեմ, որ զլուխ ծռեմ։ Խակ թէ որ երախտապարտութեան և ծնողասիրութեան պատճառով լեզուս և մատիտս կապուն, միթէ սիրտս և բնութիւնը չե՞ն մի բողբոջեր լռելեայն հայրական անզգուշութեան գէմ։ Թէ որ մայրս ունենար իմ տարիքս, պատմա, թէ ոչ ձանձրը քու արժէքդ, այսպէս չարաչար չէր վիրաւորեր դիս, քանի որ ջնջմամբ միայն երջանիկ կրնայի լինել։ Բայց դուն՝ եթէ ուզէիր՝ կրնայիր հաւատալ հայրս որ բարեսիրտ և սքանչելի մարդ մ'է։ Ո՛օրս առ քեզ ուղղած դիրէն և իմ վերկացութենէ և կարծեցեալ թոյլատուութենէ վհատեցար։

Ախտէն ձանձրոյթ ես զիս։ Քու ինքնասիրութիւնդ և հպարտութիւնդ սէրէ աւելի զօրաւոր էին. Թէև կարմրելով կը խոստովանիմ որ խօսքիդ կ'սպասէի աւելն աւելն որ եսակից ... չէ, չէ. առայդ չէ բնաւ Ռուսօին խօսքը թէ «Ընչաքի որ մարդուս բաժինը խելքն է, անոր գործերու շարժիչն է զգայնութիւնը»։

Ահա դուն թաւալ գալիր թերևս կրկին չգտնելու դիւամանդ։ Ո՛չ, ինչո՞ւ թևերը չունիմ։ Քանի երջանիկ են մարդիկ, աշխարհ իրենց ասպարէզն է, հոն ուզածնուն պէս կ'շարժին, իսկ մեր Ճակատագիրն է միայն, կ'ըսեն, դեղձանիկի պէս շարունակ ոսկեզօծ վանդակի մէջ թռթռիլ, ձչել, պգռիլ, և երբ գուրս նետուիլու երկինքը մաքուր օդը ծծել ուզենք, կ'նայինք որ մեր բնական փետուրները կտրեր են։ Հոս իմ շրջանիս մէջ ամէն մէկ քայլս չափի գրուած է, էն անհնչան շարժուձևս կանոնն ունի. սիրտ ըսած բանը խեղդուեր է խղճ մի անհամ արարողութիւններու տակ, պատշաճութիւն կ'ըսեն կ'երեսին առանց բնութեան ձայնին միտ դնելու։ Խօսիլ, խնդալ, քալել, մինչև հառաչել, որ ստէպ կ'պատահի ինձ, իր յատուկ կերպն ունի պիտես։ Այս ոսկիպայր գերութենէ ազատելու համար կենացս կէսը տայի որ միւս կէսը վայելեմ. վատ պի ապրիլ չէ իմն՝ այլ բուսնիլ աւազուտեան ծաղկին պէս և արևը չերած թոռմիլ։ Ինչո՞ւ կոմսի աղջիկ եմ ծնած, կամ ուր էր թէ էրիկ մարդ ծնէի։ Սակայն միթէ մեղաւոր եմ աղջիկ ծնելուս։ Ծնական հոգ, ներողութիւն, մարդկան անիրաւ կարծիքը և ուրիշ շղթաներ մեր վզին համար միայն շինուած են։ Միթէ մենք ալ մարդկային ազգի բնաիր կէսն աւելին չենք մի կաքսեր. միթէ մենք ալ չենք կրնար ըղալ, խորհիլ և գործել, չե՞ն խոստովանիր անդադար Աստուծոյ մէջ որ թէև կանանց մազը երկայն և իրենք անմտուս են, գործնալ ատե մը չեն շնորհը, ընկերութեանդ զարդն են և կարևոր ներգործութիւն մ'ունին անոր սովորութիւնները և բաղքը մաքրելու և քա-

քակըթելու։ Ուրեմն ինչո՞ւ ատեն ատեն զմեզ կ'գձձեն, կը ձղմեն, կ'բանտեն և մեր բնական արտօնութիւնները անդամ զմեզ կ'զրկեն, թուղ քաղաքական իրաւունքները։ Բայց բոլոր աղջիկներուն վիճակը իմինիս վրայ դատելով կ'սխալիմ։ Ատեն մ'ուրախ եի լինելուս ինչ որ եմ, վասն զի քու սրտիդ կ'տիրեի, և հպարտ՝ որ քու երջանկութիւնդ կ'կազմեի։ Ներկայ վիճակիս ծանրութիւնը զիս և զրիչս բոլորովին կը մոլորե և այլանդակ խորհրդոց կ'տանի։ Աչխարհ մութ է աչքիս, և իրրև աննշան ուռուեր մը այս ահագին ապարանիս մէջ ասդիս անդին կ'շրջիմ սիրտս գտնելու համար։

Մարած ձայնով ես ալ գերի մ'եմ
Թէ ոչ ողբէս բանաս պիտի թնտար
Հովէ լեզուն իմիս պէս անձայն գառնար
Ռոմէօիս անունը լսելէն*

Առջի սրտաշարժ յիշատակներս քանի յիշեմ՝ սրտիս վէրքը կ'բացուի, աղօտ յոյս մը կ'փալփլի աչքիս ու կ'մարի նկատելով քու հեռաւորութիւնդ։ Հեշտալի երկիր մը կը գտնուիս. նոր տեսարան, նոր էակներ առջեդ պիտի ելնեն ու թերևս շուարին և զրաւեն զքեզ։ Ձեմ սրտմտիր եթէ ուրիշին հետ երջանիկ լինիս. եթէ նոր Սաթինկի մ'անուշ ձայնին և յամրոյի (Ջէյրան) աչքերուն զարնուիս։ Եւ ինչ իրաւունք ունիմ սրտմտելու քանի որ նոյն իսկ իմ սիրելիներս են իմ թշուառութեանս պատճառ։ Ցաջողութիւն կը մաղթեմ նպատակիդ։ Թերևս օրին մէկը Հայոց նահապետ մը, Արտաշէս մը տեսնեմ քեզ, քանի որ հայէն աւելի կ'սիրես զՀայն։ Սակայն թէ սաղատարտ, թէ թագ, թէ վեղար հագնիս, ինչ գոյն որ առնուս, դարձեալ Լիլիին սիրտը՝ եթէ երբեք հեռուէն քեզ տեսնէր միայն, ահա նեղսոյն ինքն է, պիտի կրնար կոչել վշտալին։

* Շէյսբիր։

ՆԱՄԱԿ Զ

ՆԵԼՍՈՆ ԱՌ ՎՈՒՏՑ

Կ. Պոլիս . . .

Սիրելի վուտ, երբ տակաւաբնակ շնակիսը լսպաներ կ'ձեռին կէսօրին մարդ կ'որսներ, նորը իմաստակութիւն մ'էր ըրածը. վասն զի Պղատոն և Արիստոտել, մարդկան մէջ սնոտիներ և վեհ հոգիներ, իրրև մարդկութեան արև նոյն ժամանակ կ'փայլէին։ Իսկ երբ Նելսոնը Խորհրդային ձեռքը, ճշմարտութեան ու հայութեան սիրով վառ՝ հայկեան զուտ սերունդը կ'փնտռէ, արդեօք ինչ խղճալի վիճակի մէջ կը տեսնուի, քանի որ անկեղծ է իր խոզարկութեան մէջ։

Մինչէ չես մրմնջար ժպտելով «Նելսոնը մեծ մեծ խօսքերէն ետև նախնի Հայոց վրայ, անունչ արդի կացութիւնն ալ ասդրնին համաձայն կ'ուզէ երևակայել և մինչև հիմա միայն իր դուշակութիւնները հաղորդեց ինձ, իր յոյսերը ձգնեց առանց հիմնաւոր բան մը գրելու, թերևս շուքի ետևէ երկեր կամ Արևելքի պէս կ'բանդապուշէ»։

Ձէ, բարեկամ, չեմ երազեր, մի շուտող մեղադրեր զիս. թէպետ շատ իրաւ է որ կլիմայի և երկրի ազդեցութիւնը ոչ միայն բոյսերու և անասուններու այլ և մարդկան վրայ կ'նեգործէ, ինչպէս տունկը՝ նոյնպէս մարդս տեղէ տեղ փոխադրուելով իր բնիկ մի քանի յատկութիւնները կ'կորսնէ, կ'գձամոր ճիներու և ֆերճներու աշխարհը կ'գտնուիմ, որ իմ գործնական պաղատիարներս թերևս ուր ուրեմն կ'վերանան, չեմ զարմանար եթէ Արևելք գունդ գունդ մարդասրեներ, վհուկներ, երազատեսներ ծներ է ու դեռ կ'ծնի։

Գիտեմ որ եթէ ինքզինքս նոյն անրջական հոսանքին թողում և դուշակութիւններս շարունակեմ՝ անկլիական պաղ և դժոխեայ բանականութիւնը վճիռ պիտի արձակէ ինծի դէմ իբրև Պետլէմի* նորընծայ. սակայն արչափ որ այս բաներս չեմ ուրանար, որչափ որ մեզառոս Հայոց նոր մարգարէ կանխնելու փափաք չունիմ, դարձեալ կ՝ըսեմ որ Անկլիացի եմ ես, և գլխիս մէջ կան քանի մը սկզբունք՝ որոց համեմատ կ՝շարժիմ ուր որ գտնուիմ, և թէ կերպով մը կը հաւատամ մարգարէութեանց և դուռ ալ պէտք է որ ինձ հաւատաս. ինչու,

Նախ՝ լուսատու գաղ մը խաւարին գաբերու գործածած բառերու իմաստը գանազանութեամբ կ՝ընդունի: Հին աստեղ հրաշք կ՝անուանէին ինչ որ հիմա հետաքրքրին և բնական երեւոյթք են կամ նենգ. գիւցազն, կիսաստուած, մինչև դիք համարուն են մեր ժամանակի Գոլամպոսի, Նելսոնի, Նապոլէոնի, Ուօշինկթընի, Պիթթերի, Վադի Հալլեն: Ամեն գար և ամեն ազգ իր գրութեան համեմատ ունեցեր է իր Մովսէսը, իր Նուման, իր մոգպետը, իր աստղագէտը, իր մարգարէն, իր վարդապետը, իր իմաստասէրը:

Հետզ՝ պատգամ, մարգարէութիւն կ՝անուանէր ամիկը՝ ինչ որ հիմա հետաքրքրութիւն կ՝կոչենք, ինչպէս հիմա մենաւաճառութիւն, նոյնպէս ան ատեն մենագիտութիւն կար, և միայն կրօնի և այլաբանութեան շարով իմաստասիրական ճշմարտութիւն մը, երբեմն ստով համեմատ, ընդունելի էր խակ և տգէտ ժողովրդոյ: Իսկ այն հետաքրքրութիւնը, զգայուն ընդարողութիւն, խորագիտութիւն և այլազան գաղափարներու, սկզբանց և գիտութիւններու համբար մը կ՝ենթադրէ: Երբ Դարեհի կամ Աբգարէսի մը բանակը արեւուն համ լուսնին խաւարման հանդիպելով արհաւրօք լի նաբ կը քաշուէին, դուհիկը Տելփեան կամ Ամմոնեան պատգամին

* Յիսուսածնէ:

դուշակութիւնը եղաւ՝ կ՝պատաբ, մինչդեռ Թալէս ատաղաշաշխը թերևս տանիսին վերջն գիտութեան կարկինով գիտեր, չափեր և նշանակեր էր նոյն երկնային երևոյթին պատահելիք օրն ու ժամը: Եթէ Երեմիա Երուսաղէմ միանգամայն գուշակեց, Պրըք, այս մեծիմաստ քաղաքագէտը, ամպիոնէն Ամերիկեան անկախութեան օրը կենդանի լեզուաւ յաւաջագոյն հռչակեց: Առաջինին մարգարէութիւնը՝ մարդկօրէն դատելով Իսրայէլի ընչակայ ազգերու քաղաքականութեան հմտութեան վրայ կ՝կայանար. երկրորդին հեռատեսութիւնը այն ամբոխմունքան վրայ թէ՝ նոր, աւույդ ու ազատասէր ժողովրդեան մը առաքինութեան դէմ անկլիական մեծազօր զօրութիւնը անդամ անզօր եա պիտի քաշուէր ասպարէզէն: Եթէ Եսային մարգարէական ոգի ունէր Ցուդայի ծոցէն Փրիչին գալստեան աւետելու, Ռուսոն քաղաքական մանր զննութեամբ Ֆօրսթքայի ապառաժուտ կողերէն աշխարհիս վրայ ուսումը* դաւանելով իջնելիքը նշանակեց:

Ուրեմն մարգարէ ալ կայ հետաքրքրաշարժ տաք երևակայութեամբ են և օդին ազդեցութենէն իրենց ոճը և ձևը փայլակներ ու շանթեր կ՝արձակեն: Խակ հիւսիսայինք՝ խոհուն, ծանրագլուխ, իրենց իմաստները քաղաքագիտութեան և գիտութեանց բովէն զտուած գուրս կ՝հանեն:

Ասիկ ինչ կ՝հետևի. այս թէ՝ օրովհետև կան ընդհանուր տեսութիւններ որ տեսակ տեսակ քննութեանց և դործնական յարակից և փորձուած հետևութիւններ են, զանոնք երբեմն կանուն և սկզբունք մեր մտաց մէջ տպաւորել, ի հարկին յիշել, և մեր գատողութիւնը անոնց համեմատելով ուղղել շատ հարկաւոր է. ինչպէս ամեն անկլիացի և ես՝ սպրդնչ է, հառաջարութիւն, քաղաքական անտեսութիւն, իրաւունք, ազատութիւն ինչ են, տեսակէս փորը ի շտուե

*Մեծն Նաբոլեօն:

պիտնալով և գործնապէս լիովին վայելելով, երբոր մի օտար ազգի գոյութիւնը կ'իմանանք ու պատմութիւնը կ'կարդանք, գեռ զայն չտեսած՝ իսկոյն կ'տրամաբանենք այսպէս. —«Քանի որ այն ժողովուրդը կ'յանդգնի աշխարհիս առջև ազգ կոչել ինքզինքը, ինչպէս հայը, ի հարկէ ազգութեան ամէն գործնական պայմանները պիտի ունենայ, վասն զի՝ պատմութիւն, ազգային մեծամեծութիւն և պատիւ ինչ ըսել է պիտի դիտնայ. և անշուշտ չփափաքիր ծաղր ծանակ լինելու, երբոր ընդհանուր քաղաքականութեան դարպասին առջև համար տալու եղնէ։»

Այս հետևութիւնս մանաւանդ հայ ազգին նկատմամբ ինչպէս որ հիմա կ'կոչուի, քանի մը խորութեամբ՝ եղրակացնելը որչափ որ ճիշտ էր տրամաբանօրէն և պատմութեան համեմատ, այնքան ցանկալի էր հայասիրութեանս։ Պատմութեան համեմատ ճիշտ ըսի, վասն զի՝ քանի հայք թագերնին կորուսեր են, նորէն վերականգներ են. և կարծես թէ կամաւ նախ լուծի տակ կ'ինային որ յետոյ թշնամւոյ զգալի կերպով արիութիւնին ցուցնեն. հայասիրութեանս ցանկալի, վասն զի այնպիսի հին ազգ մը յառաջադիմութեան արժանի կ'սեպեմ, և կ'ուզէի հռչակել և գովել անոր կենսական յատկութիւնները որով այնքան քաղաքական յեղափոխութեանց դիմանալու կարող եղաւ։ Ուստի իմ ենթադրութեանց հիմը Հայոց մասին նոյն սկզբունքս լինելէն զատ՝ կարծէի նաև որ հայն իր առած անուան համաձայն կ'վարուի։ Սակայն մոռցեր էի որ ամեն ազգ, մանաւանդ արևելեայք, անկլիացւոց պէս բնածին դատողութիւն, ազգասիրութիւն և տրամաբանութիւն շարունակ չպահելով, մեր տրամադրութեանց չփոթութիւն, մեր ուղիղ դրութեանց վրդովում կ'պատճառեն և մեր օրինաւոր ակնկալութիւնը՝ ի դերև կ'հանեն։ Վասն զի ինչպէս հիմա համաձայնեցանք թափուր, անհիւս և դերի ժողովուրդ մը, ազգ բառին հետ, զի ստուգիւ գեր լի, սորուկ է հայը։ Ինչպէս խորենացին առաջնորդ առնում

ինձ ծանօթանալու համար ժողովրդեան մ'որ նոյն ինք չճանչեր այն ալևոր ծերունին, ինչպէս խօսակցիմ հետը՝ երբ նոյն ինք անոր լեզուն չհասկընար. ինչպէս գծագրեմ անոր կերպարանքը և գէմքը՝ երբ բոլորովին այլագէմ և կերպարանափոխ է եղեր։ Ուրեմն, բարեկամ, ես չեմ երազողը և թիւրաբանողը, այլ հայ ազգը որ մարդ կ'անուանէ ինքզինք ու Միտասի գլուխն է առեր, ան է իր նախկին ճամբէն շեղողը և թերևս ինքզինքը ուրացողը։ Եւ կայ բան մը այնքան զզուելի, այնքան վատանուն ու քստմնելի, որչափ իր հոգին, պատիւը, իր ազգութիւնը, իր կրօնքը, իր նախնիքը ուրացող և ընացող ազգ մը, և ինքնովին պիտակութեան աղտով ճակատը մրոտողը։

Անոր համար քանի եկեր եմ հոս, չէի կարող զանազանել զանոնք. վասն զի մրջիւնի և սողունի պէս չորս դին կը շրջին, մինչդեռ ես բարձրադոյն աստիճանի մէջ կ'փնտռեմ հայը։ Իսկ հիմա որ անոր ներկայն, անոր հալևմաշ հոգին, խուրգուխաշ անգամները, վշտաբեկ ճակատը կ'գիտեմ կանգ մը կ'առնում և իւրովի կը հարցընեմ։

— Եթէ թէ իսկութիւն է տեսածս։ Մի թէ անոր յառաջադիմութեան հանդիսատես լինելու եկայ հոս։ Ինչպէս այս Արամեան վեհ ազգը Մասեաց սարերէն այս անգունդը ընկեր թաղուեր է, ուր են անոր հայրենիքը, քաղաքական սահմանադրութիւնը. ամրոցմարմինը, և ինքնաբուն գլուխը՝ ուր են։ Այո, բարեկամ, մարդասիրական զգացմունքս ի գործ շարժեցան այս աղետալի տեսարանիս։ Ճշմարիտ հայութեան դրոշմական նշանները գտնելու համար պինդ և պինդ նայեցայ այս ազգին երեսէն վար, և հազիւ հազ անոր քանի մը նրաևները Հայկայ արիւնով վաղուն գտայ։ Իսկ միւս մասերը ամեն տեսակ խառնուրդ կ'պարունակեն։ Ո՛ւզէի որ հայը միայն Արտաշայ որդի չլինի, այլ նաև արդի քաղաքական կրթութեան ուշիմ աշակերտ, էհ լաւ, ուխտդ կատար։ Քաղաքակրթութեան այնպիսի կայր կողմնակից է

դարձեր, որ միայն անոր մոլութիւնները ծծած կ'երևի, ա-նոր լոյսէն շրտնեղած։

Ուստի Աշտաներ, Սմբատաններ, Դաւիթներ պտնելէ հրա-ժարեցայ յուսահատ. և գոհ պիտի լինիմ թէ պարզերես հայիոգուններու հանդիսիմ, երբէք չերազելով նաև որ քե-զի պէս բարեկամ մը կրնամ ստանալ հոս։

ՆԱՄԱՆ Ը

ՆՓԼՍՕՆ ԱՒՏ ԿՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Երևակայէ, բարեկամ. երբեմն կարովի և կայտառ մար-դին մը, լի կենդանութեամբ և բարոյական ուժով՝ որ տա-կաւ առ տակաւ ու տարուբեր սարի ներքին հիւանդութեան նշանները ի'յայտնէ ու յանդիման ի'ձարակէ, այնպէս որ դարեր անցնելով անոր քանի մը մասը անպէտ և անզգայ դարձած՝ անոր սպիտակ ձակտին վրայ կնճիռներ դրոշմած՝ պատերազմէ, կրակէ, կտտորածէ շնչասպառ, յոգնած, դադ-րած, դողդոջուն ձեռամբ Աւետարան մը բռնած, կուրծքը Լուսաւորչայ պատկերը կախած՝ կռթնած է կէս մը Արարատ-եան խարխուլ և բազմադարեան կոթողին, չորս դին աւեր, արիւն, ներեզման, ջարդ, դիակ, ղէնք և դահու բեկորներ սփռած, մինչդեռ դէպ'ի հորիզոն առանց տեսնելու կ'փնտռէ նշոյլ մը, յոյս մը, միխիթարութիւն մը, աղերսակ դէմքուն վրայ արծիւ մը դադարած՝ իր լայնատարած թևերովը կ'ծածկէ այն մարմինը՝ի նշան պաշտպանութեան թէև իրօք ահաւոր

կատուովը կ'ծակծկէ, կ'կտտէ, կ'մաշէ անոր ըղեղը՝ մինչև որ սպառապուռ սպառէ ու անպլուխ մարմին մը, կմախք մը գարձնէ, ու պատկերն ալ աւերէ։ Անգին սեամօրուս դայլ մը՝ անոր արիւնը արգէն ըմպելէն անկուշտ՝ հրացայտ աչ-քերը որսին վրայ սեեռած՝ արծիւին սեատեսիլ շուքէն կը խրտնի ու ետ ետ կ'ընկրկի։ Ադիս վագր մը, արդի տակ-րութենէ ազատելի կերպարանք մտած՝ նենգութեամբ կ'ջանայ որսալ, բռնութեամբ յափշտակել չկրցածը, ու եթէ ատեն ատեն հանգարտ ու նենգութիւնն ապարդիւն մնայ, վրիժու-ոյին բռնելուն՝ բնակից և գենակից վարազներու ձեռօք կ'այրէ, կ'քանդէ, կ'քակէ նոյն թշուառ մարմնոյն բնաբուն յօդուածները։ Իսկ ուրիշ գոյնզգոյն ձկներ ու միջատներ այն մարմնոյն աչքը կ'փորեն։ Ձակատը, երեսը, ուսը կ'խայ-թեն, կ'շոյեն, կ'պղտուն, անտեսանելի և թիւնաւոր որդեր, ոսկրի ու ծիածանի գոյներով մեղմիկ կ'սպրդին անոր կուրծքը և այն ինչ սիրոյն անդամ կրծելու կ'սպասնան։

Ահա քեզ արևելեան ոճով հայկական արդի մարմինը, ո-րուն վրայ ընդհանուր տեսիլ մը տալու համար այս ձևս ըն-տրեցի։ Թայց այս կիսամեռ մարմինը աշխարհիս քաղաքական յեղափոխութեանց և ալեկոծ գարուց և կրից իրը վսեմ և կենդանի պատկեր՝ բարձրագլուխ պետութեանց սոսկալի և Հարատևան ազդարարութիւն մ'է։ Ան երբեմն այնպիսի ազդու և զօրաւոր հառաչանքներ կ'արձակէ, որմէ կ'ենթա-դրուի թէ 'ի խորոց սրտի կ'զայ և կ'ճանչէ իր ցաւե-րը և թերևս իր անորոշ՝ բայց սրտաշարժ հեծեծանաց ի-մաստն է «Հայաստան, Հայաստան» սրբազան բառ մի՝ որ իր մէջ ամբողջ գարեր և մեծ և անկեալ ազգի մը անցեալն ու ապառնին կ'ամփոփէ։

Ուրեմն եթէ բնական և անթափ է անոր հոգիին զբուս-թիւնը և զգայողութիւնը այնքան սուր, ինչո՞ւ այնպիսի հի-ւանդ ու վշտաբեկ մարմին մ'է հարեր, ինչո՞ւ գերի է և ին-չո՞ւ գարձեալ ազգ կ'կոչուի, գատ նամակի առատ նիւթեր են։

ՆԱՄԱՆ Ը

ՎԱՌՏ ԱՌ ՆԱԼՍՈՆ

Լօնդօն . . .

Հայը դերի է եղեր՝ կ'ըմպլնես, բարեկամ. սակայն՝ ըստ ին՝ հայ կռչուիլ և դերի լինիլ հականական է: Այս կարծեցեալ հաստատութեան և վկայութեան համար ահա եռանէ եռանա աւելցս կ'երևին Հայկ, Արամ, Արայ, Վահէ, Տիգրան, Վարդան, Վահան, Գագիկ, Աշոտ և շատ մը դիւցազունները: Ուստի չեմ կարող հասկընալ և հաւատալ որ այժմեան տեսած հայերդ անոնց սերունդէն իջած լինին, քանի որ, թէև եւրոպական լուսաւորութենէ, անոնց առաքինութենէ, հայրենասիրութենէ և ազատասիրութենէ անդամ զուրկ են: Առ ձեռքդ հայ պատմութիւնը և նայէ, մինչև տասներորդ դարը ամեն անդամուն որ հայերը լուծի տակ են մտեր, սակայ իրենց քաղաքական կուիւներէ ու անմիաբանութենէ, երբեմն անդիմագրելի պարագաներէ դարձեալ ինքն իրենց գալով նկրտեր են որևէ կերպիւ գլուխ բառնալու. և օտար իշխանութեան հնազանդելու պահուն ևս Հայաստանի մէկ անկիւնը աննկուն նախարարի կամ իշխանի ձեռօք անկախութիւնը շունչ կ'առնուր և հեռուն գերելոց օրինակ կ'տար և խրախոյս կ'կարդար: Նամակիս շրջանը չներեր մի առ մի ի գլուխ հանել այս մասին անոնց շահատակութիւնները: Այլ միայն վշտակիր պարտաւոր եմ յիշել թէ այն օրէն որ Բագրատունեաց վերջին Գագիկն ընկաւ կարգաւոր դատաստանի և յոնական նենգութեան զոհ, ըստ ին՝ Հայաստանի բանը բուսաւ: Ան Գագիկն՝ զոր հա-

թագաւորաց մէջ հայրենասիրութեան և քաղաքական գիտութեան կողմանէ առաջինը կ'սեպեմ, իր ապրած ժամանակին աչկառութիւնները նկատելով իր թշուառութեանց մէջ անդամ քան զԱրտաշէս Արշակունին դեր ի վեր կը դասեմ, ուներ չէ թէ միայն ազգը վերականգնելու մեծ բարոյական զօրութիւն, այլ և ի հարկին նոր ազգութիւն մը ստեղծելու և կազմելու կերպովն համաձայ: Անոր աղետալի անկումը, որ հայ անուան յաւիտենական նախատինք պիտի մնայ, Պարսից, Թաթարաց և Արաբացւոց սուրը աւելի զօրացոյց, անոնց ասպատակութիւնը փութացուց, Կոստանդնուպօլսի առումը գիւրացուց և Հայոց անդարմանելի հարուած մը տուաւ, հարուած մը՝ որ իրենց անօրինութեանց կ'վայելէր և որուն բացած խորին վէրքը մինչև այսօր կ'քաշեն: Վասն զի եթէ Հռոմոյ կռնամօլութեան ու փչացուն և վատ քաղաքականութեան, և հայոց ինքնահաւան ու երկպառակ ոգւոյն հետևանս լինելը հնարաւոր լինէր, պիտի գիտէին իսկոյն որ Բագրատունեաց մահը իրենց ևս կործանում կ'ըսպառնար և Գագիկ միայն կարող էր ահաւոր թշուամբ մը կանգնել հիւսիսային հինից և եղուզակաց դէմ, Հայկազեան տոհմին քաղաքական կացութիւնը անկործան պահելով:

Այս մեծ մարդուն վրայ քիչ մ'երկարօրէն խօսիլն այս առթիս քաղցր է ինձ ու միանգամայն արժան: Մարդն կ'սեմ, վասն զի իր մէջ մարդն մեծագոյն է քան թագաւորն, վասն զի ժառանգական իրաւամբ, կամ երկնատուր շնորհիւ թագաւոր հայոց օծուելուն համար չէր որ յամէ իր հոյակապ Անիէն անհրաժեշտ կեցաւ, այլ հաստատուն համոզմամբ կ'զգար որ նոյն բազմազէպ ժամանակները ինք միայն կարող և արժանաւոր է հայոց պետութեան գլուխն և պահիչ լինելու: Իր օրատես աչքը Հայաստանի սահմանէն դուրս չորս գին կ'հսկէր, լաւ կ'ճանչէր նա իր դարը. դուժալի դար. երբ Արաբացին Պաղտատէն մինչև Սպանիա իր աշխարհակալութիւնը տարածելէն առև՝ սկսեր էր քայքայիլ

ու անոր ահագին բեկորներէն նոր վայրագ ազգեր ժայթքիլ, Թաթարք՝ հեղեղի պէս՝ Արեւելեան կողմէն իջնել և բոլոր Ասիան ոսկալի անիշխանութեան և յեղափոխութեանց մէջ ընկղմել։ Դա կ՚գիտէր գալիք փոթորիկները. Կոստանդիանոսի գահուն խարխուլ վիճակը, անոր ընդարձակ պետութեան չորս դիէն տորորիլ, պառակտիլը, Եւրոպայի ներքին կրօնական և իշխանական յուզմունքը։ Ուստի բոլորովին քրիստոնեայ ազգայ օգնականութենէն յուսահատ, գիտէր նաև թէ ռրպիսի խորագիտութեամբ պէտք էր դնալ՝ յունաց ծակաչք և խարդախ քաղաքագիտաց հետ և ինչպէս դիմաւորել սուտ դաշնակցայ մտերմական յանդիմանութիւնները և հրաւէրքը։ Ա՛յս չարագուշակ երեւոյթներէն՝ որ Հայաստանը կրակի և սուրի պիտի մատնէին, որչափ որ սոսկալով կ՚նկատէր Գագիկ և անոնց առաջն առնելու ուժն ունէր, սակայն Հայաստանի ապառնին կ՚մթնոլոր, սիրտէն արիւն կ՚քաղէր քանի նախարարաց անզուսպ և նախանձոտ բնաւորութեանց հետ երկպառակութիւնը կ՚տեսնէր։ Մինչ նա վհատեցաւ, ամենևին ոչ։ Կառավարութեան ղէկը ձեռք առնելուն պէս նոյն ներքին ապստամբ և դինակիր մարդիկը իր պարզ և յորդորիչ ճարտասանութեամբ զինադադար ըրաւ, կարգի բերաւ, հայ ժողովուրդը՝ որու վրայ էր դրած յոյսը, իր սրտին հայրենասիրական անչէջ հրով զրգռեց, վառեց, միացուց և զրեթէ զոյն իբրև նոր աւոյգ ազգ մը կազմից, մինչդեռ երերակ՝ իր քաղքին դռները թշնամեաց բանալու վրայ էր։ Զինւորական և քաղաքական նոր կարգադրութիւններ դրաւ, զԱնին կրկին ամրացուց, այլ և այլ կողմերը գանուող հայ ինքնագլուխ իշխանները լռեցուց ու իրեն հպատակեցուց, և երբ ապահով եղաւ որ ժողովրդեան սէրը, զոր ամրապատ պարիսպներէ հզօրագոյն կ՚համարէր, նախարարաց համարումն և զինակցութիւնը, եկեղեցականաց հոգևոր օգնականութիւնը դրաւեր է, ներքին խաղաղութիւնը հաստատեր և ինչ նոյն վտանգալի պարագայից մէջ կատարե-

ճալ սեր է, յաղթութիւնը առաջուց դուշակեց և սուրը քաշեց, վազեց առիւծի պէս Թաթարաց դէմ, կոտորեց, վանեց և Հայաստանի մեծ յաղթանակը տարաւ։ Մանր մունր այլազգ աւազակապետներ որ արևելեան Հայաստանը կ՚արշաւէին, անոր արիւնեն ահաբեկ փախան։ Ապա Ասիոյ սպարապետին դէմ դարձուց զինքը և իր հօրեղբօր Սմբատին վատութիւնը, որ Կոստանդին կայսեր Անին յանձնելու դաշնագիր էր ղրկած՝ Յունաց արիւնով լուաց և եղծեց՝ չարաչար ջարդ տալով անոնց։ Այսպէս սպառեց Գագիկ զՀայաստան և երկու երեք տարուան մէջ Բագրատունեաց իշխանութեան այնպիսի ամրութիւն տուաւ որուն նմանը պատմութեան մէջ քիչ կը տեսնուի։ Սակայն ինչպէս ամեն մեծ և վեհանձն հոգի՝ ինքն ալ խաբուեցաւ, վասն զի ինքն էր ճշմարիտ քրիստոնեայ, ճշմարիտ հայրենասէր, և քնաւ չէր կրնար երևակայել որ իր արենակիցները, իր կրօնին պաշտօնեայքը այնքան վատազգի լինին որ յանուն արեան Քրիստոսի զինքը Յունաց կայսեր մատնեն։ Վասն զի այնքան մեծ էր սէրը հայրենեաց, զոր իբրև իր սիրական զաւակը, անոր պաշտպանութիւնը և վերաւորեչութիւնը իր իշխանաց անդամ չուզեց յանձնել և Կոստանդնուպօլիս՝ կայսեր հրաւէրին վրայ գնալ, յորում Քրիստոսի դաշն ու երդում չառած որ զԱնին ցմահ անվտանգ և անաւրէն պահեն՝ մինչև իր դարձը։ Այս հանդիսական երդումն իր մեծ խորհուրդն ունի որ թագաւորե մը գալով՝ անոր փառասիրութեան ոգիէն ծնած պէտք չէ համարել. այլ անով կ՚ուզէր կնքել կասկածելի սիրտերու մէջ հայրենեաց սէրը Քրիստոսի սիրոյն հետ և ցոյց տալ հրապարակաւ որ քրիստոնեայ եղողին սրբանուէր պարտուց մին ալ հայրենասիրութիւնն է և հետևապէս այս գժրոյզը միւսն ալ ուրացած կ՚լինի։ Բայց Գագիկին չերմեռանդ հոգին չէր կարող ըմբռնել որ անկրօն ուստի և ազգատեաց մարդ կ՚գտնուի իր բոլորտիքը։ Վասն զի իրօք անհաւատը յաւուրս հայրենիք չունի։ Հնակա-

նա, կամ լաւ ևս ըսեմ, ողջ ողջ թաղեցին զանի, թէ՛ն անհաճ մնաց հոգին հայրենատենչ սիրտերու մէջ, Հայաստան դերեզման դարձաւ և մահիկը յաղթական կանդնեցաւ։

Աս առեն նորելուկ մաքզարէին արբանեակները աղատրէն և անարգել հուր տեղալով՝ Հայոց դէղադէզ դիակներ անդնելով հասան Պոսֆորի եզերքը և ահռելի խրախճանայ ձայնով տնկեցին հոն իրենց արիւնաներկ դրօշակը։ Ի զուր Եւրոպա կրկին և կրկին խաչակիր զօրք հանեց. տուած թեան ձգած արնատը ապխատ թեան խաւարին մէջ շատ խորունկ էր բռնած և դիւրաշէր քակուեր արևմտեան լուսաւորութենէ. իսկ այս լոյսն ալ սկսեր էր նսեմանալ կրօնամոլութեան և հաւատաքննութեան արիւնադրոշմ առեանններու առջև և հետևապէս Մաւրիտենական - իշխանութիւնը արևմուտքէն, Թիւրքաց յաղթանակները արևելեան կողմէն զներոպա ահուդողի մէջ ձգեցին։ Ուստի եթէ այս աշխարհագրական մեծ տեղափոխութեանց մէ գլխաւոր պատիրը փնտրենք, որ Եւրոպան դարձեցին և ցարդ անոր քաղաքականութիւնը անորոշ և յուզեալ վիճակի մէջ կը պահեն, Բաղրատունեաց տան վերանալն է։ Խուժամուժ բարբարոսաց և ասազակ հրոսներու դէմ իրրև Տերպենդ մը, չինական պատուար մը, երկայն ատեն Ճակատ տուաւ Հայաստան, իրրև կանոնաւորեալ, բարոյական և լուսաւոր պետութիւն մը և երբ մանաւանդ մատնութեամբ կորաւ, կորաւ և Եւրոպայի խաղաղութիւնը, Ասիայի լուսաւորութեան միջոցը և Հայկեան սերունդը։

Հապա Ռուբինեանց իշխանութիւնը բանի տեղ չէն դներ, կ'հարցնես։ Ո՛չ, Ռուբինեանք հոգեվար պետութեան մը վերջին ձգնաժամի, վերջին ողբալի արարուած, Հայկազեան, Արշակունեան և Բագրատունեան վսեմ հանդէսներու անարժան վախճան։ Ցիլաւի երկու հարիւր տարի նշանաւոր խաղ մը խաղացին և անունք յԱսիա, սակայն այն խաղը սարսափելի էր և Յունաց պէս կրօնական կռիւներուն հիւսուած։ Ձանձրացուցին մեզ գէմերը, սակայն վատ անորոշ և

պղտոր գոյներով խիստ տարբեր այն շքեղ գոյնէն որով ներկայացաւ մեծն Տիգրան, թէև ամբարտաւան, պերճ և մեծախօս գոռոզութեամբ, Հռոմայեցւոց և հին պատմագրաց իր անունովը կրկին և կրկին հայու անունը գրոշմեցուաւ և պանծացուց։ Արտաշատ՝ փառաւոր վեհարանի մը շիրիմը և Անի՝ հայրենասէր թագաւորի մը տապանագիրը՝ աւերակաց և փոշիի մէջէն վիմտուելը իմերնակայութենս աւելի կ'յուզեն, յիշողութեանս մէջ անցեալը, և հոգւոյս մէջ աւելի մեծ և ընտիր զղացումներ կ'արթնցնեն, քան թէ Բարիզի Սէն-Տընի եկեղեցւոյն ստորերկրեայ դերեզմանատան մէջ ինքնաքաղց եղած թագաւորի մը անձայն մահարձանը, պաղ և շքեղ գամբանը։ Առաջնոյ մոխիրը կ'հրաւիրեն անդադար հայերն որ հայրենիքը պաշտպանեն և իրենց արեան վերջին կաթիլն անոր նուիրեն, իսկ տարագէմ իշխանի մը տարաչէն գերեզմանը, վհատութեան, սարկութեան, կթծոտութեան և կորտեան օրինակ կ'ընծայէ։

Ուստի կրկին կ'սպեմ որ հայ անունը Գագիկին թափուր և սրտաշարժ տապանին մէջ փնտռենք, որու ոսկորներէն գեռ նմանը չծնաւ և անոր արեան վրէժխնդիր ոչ ոք եղաւ։ Ա՛հ, ախուր է հայ պատմութեան այս թերթը, սգալի է անոր մէն մի տողը, զոր քանի կարդամ իմ օտարիս սիրտն անգամ կ'ելնէ և արտասուքս չեմ կարող բռնել։ Հապա ինչ կ'զգայ ազգասէր բնիկ հայրենասիրի մը հոգին, երբ աչաց առջև կ'բերէ Գագիկին վերջին գառնալն և կսկծելի ժամերը, երբ կ'դիտէ այն ծիրանազարդ թշուառ հայկազնին՝ սեսարիոյ բարձր լեռները ելած՝ աչքը համայն Հայաստանի հորիզոնը դրկելով հալ և մաշ հոգւով ողբալն ու շղթայակապ առիւծի պէս գոռալը. Ո՛վ հէդ և վեհդ իմ Հայաստան, մարեցար քու արեգ, ամ Հայք, կորաւ ձեր ապառնին, ո՛ Աստուած իմ, գետ, ձոր, դաշտ և լերինք հայ արեամբ ներկուած և դիակներով ծածկուած կ'տեսնեմ, ինչ աշխատանք և գոլաասանք։ Աշտարակ գետինը անոնց արիւնը քամե-

լէն, սակայն մարդակերպ պազանները գեռ չկշտացան: Արիւնաոռքու Տուղրիլ, այսահարդ Ալբասլան, եկէք, եկէք իմ աբիւնս ալ խմեցէք, աչքերս փորեցէք որ չտեսնեմ այս սեւ օրերը: Ա՛խ, ուր եր թէ ազատ լինէի, և դէպ յԱնիս թռչէի, և գձեզ ամենքդ յաստպարէզ կանչէի: Դաւաճան, տիրանենդ, վիստ Այէն դու, այս անմեղաց արիւնը շլինիքդ գառնայ, Ջշմարիտ Հայկազունք իմ վերջին կտակս և շունչս է ձեզ այս, վրէժ, վրէժ» : . . . . .

Ո՛չ ինչ, մահու լռութիւն, անդորրութիւն, այս է սիրելի Նեղսօն, նոյն ահաւոր և զօրեղ կռչումին Հայոց կողմէ տրուած պատասխանը, ինչ Հարիւր տարիէ ՚ի վեր: Այս կռչումը մինչև այսօր Հայաստանի ամեն մի դիւցազնին, նահատակին, դերեզմանաց ամեն մի մատնանքին, ամեն մի քարին, հողին և օդին մէջ անդամ դրոշմուած է և կ՚հնչէ: Ուրեմն այսպիսի ազգու դամբանական հեծկլտանաց անհոգ և խուլ կեցող Հայերն, միթէ կ՚ապրի՞ն, միթէ ազատութիւն և Հայրենի աշխարհ կ՚սիրե՞ն, միթէ Հայկայ բուն Թոռներն են կրնանք մի ըսել, քեզ կ՚թողում որ վճռես:

Իսկ դու Նեղսօն, կ՚նայիմ որ առ Հայաստան կրած պարզ հետաքրքրութիւնդ ջերմհամակրութեան փոխեր ես: Լիլիէդ քանի կ՚հեռանաս Հայաստանի կ՚կապուիս, և ինչպէս առաջինը անգլատ էակ մը գտեր էիր մի առեն, նոյնպէս վերջինը գեռ չառած նախկին շքովը զարդարեր էիր երևակայութեամբ, իսկ հիմա որ ՚ի գերև ելան ակնկալութիւններդ երկուքն ալ, կ՚գանգատիս, վասն զի սիրտիանի աչքով դատեր էիր երիուսն ալ:

Արդ՝ միակ մխիթարութիւն ձեզ երևուսեք: Որպէս Հաւատամ եմ որ Լիլիէդ Հոգին, իր վիճակին բռնութեան և կապանաց չնայելով ՚ի քեզ կ՚սպրի և միշտակովդ կ՚շնչէ լռութեամբ, նոյնպէս եթէ նկարագրածդ Համեմատ է և ստոյգ թէ Հայաստանի սիրտը տակաւին ողջ է կեցած՝ և ՚ի խորոց կ՚հառաչէ կենդանութեան համար, թէև մարմինը

կաշկանդած ու վատոյժ, դարձեալ յուսակտուր թող չձանիք ապառնիէն: Վասն զի օրիորդի մը սերը յարատև կ՚դիմանայ երբ սիրականին անստուգիւս արժողութեան վրայ հիմնած՝ արտուվը կ՚մնանի և հեռաւորութեան կարօտիւ կ՚գրգռի, նոյնպէս մի նժդեհ ազգի կանգնումը յուսալի է, երբոր թէ և ինքը տարագիր, գլուխն ապուշ, լեզուն անխօս, անդամներն անշարժ դարձած, կ՚զդար իր Հայրենեաց գեղեցկութիւնը և անուշութիւնը, սիրան է բրած անոր տաճար և իր հաւատքին վկայարան, ու հոն լռելեայն իր խունկը և պաշտօնը կ՚նուիրէ իր Հայաստանեայց եկեղեցւոյն, ազդասիրութեան, ազատութեան և լուսաւորութեան:

ՆԱՄԱՆ Թ

ՆԵՂՍՕՆ ՅՈՒ ԼԻԼԻ

Կ. Պոլիս . . .

Անուշիկ իմ Լիլի, քանի որ քու հրեշտակային երեսեդ հեռացեր ու տար աշխարհ եմ ընկեր, ժամ մը հանգիստ չեմ վայելած: Վերջին արկածներէն՝ ես ինքս մարդկութենէ ելած՝ Հայ մարդ գտնելու եկեր եմ հոս և գեռ ինքզինքս չեմ գտած. այլ կ՚ապրիմ ուր որ քեզի հետ ատեն մ՚ապրեր եմ: Անդեաչն է իմ ապաւէնս և առանձնութիւնը իմ մխիթարութիւնս: Ակսպէս առաւօտ մ՚իմ ծովահայեաց բլրանիստ պարտէզս քաշուեր էի, երեկոյեան աղօտ երանկներս Պոսփորի կծու քամիին տուած՝ սոխակին ձայնին գքեզ կ՚իշէի, ու թէև թռչուններդ զուարթ, տուն-

կերը դալարագեղ և ծաղկունք անուշահոտ էին, և Արևելքի կողմն արշալոյսը վարդագոյն շապիկը հագեր էր ու կ'ծիծաղէր, իմ աչքս Անկլիոյ մշուշապատ ջուրերը ման կ'դար և Արևմուտք կ'որոնէր իմ հոգւոյս մարած արևը: Ահա այն պահուն սպասաւորս երևցաւ ու դէր մը տուաւ ինձ, դեռ չբացած սիրտս ի թունետ վկայեց որ քեզմէ է, չկարդացած պզտիկ անոր հրաւէրն և դալի խօսքերը: Խնդոյն ծոլ, երկինն, երկիր աներևոյթ դարձան. սոխակը դայլայլիկը լռեց և Թողուց որ անուշիկ ձայնիդ կարօտս, կրկին և կրկին ինարդամ պիրդ և անով շունչ առնում և յափշտակուիմ:

Աւաղ, այս գմայլումն ժամ մը միայն տևեց, մոմոուրը վրայ հասաւ և անոր յաջորդեցին ահ ու վահ, տագնապ և սրամտութիւն: Ինչ, դու լինիս դժբաղդ և վշտակիր, մինչդեռ կ'ծիծաղ և կ'փայլիս մարդարտի, յակինթի և դիպալի մէջ: Դու լինիս այնքան միամիտ և անմեղ՝ երբ մայրդ քոյն կ'ծածկէ սրտիդ մէջ և անոր ոսկեզօծ և չարաշուք ամպհովանիին ներքև կ'ապաստանիս. իսկ Թշուառ պանդուխտս, ես կրեմ քու բոլոր Թշուառութեանդ բեռը. ես սեպուհիմ անողորմ, սիրագրուժ և Թերեւսիտ, մինչդեռ իրօք մայրդ մէկդի, դու աքսորեցիր դիս ներկայութենէդ, դու ուրացար դիս կարծէի . . . : Սոսկալի՛ պատրանք, անհնարին հեգնութիւն: Փա՛ռք որ նամակդ եկաւ և իմ մեղին կասկածներուն լոյս տալով աչքս բացաւ: Հիմա կ'նայիմ դեռ Թէ ինչո՞ւ այնքան վիշտ, պաղատիլն և դժգոհութիւն մտան մեր մէջ և ինչպէս փոփոխակի պիրար միամտօրէն կ'ամբաստանէինք: Էլիզ, անլուր նեղութեան մը դուրն ենք ընկած միասին, ասա Թէ ոչ պիտի ստիպուիմ կասկածելու որ դու շատ խորագէտ և անըմբռնելի էակ մ'ես, կամ ես կոյր և չեմար սիրահար մ'եմ:

Այո՛, ես ալ ունիմ յանցանք, ես ալ անգամ մը մոռացեր եմ որ, երբ մայրդ փոխադրիկը փրցուց ժամուսնական առաջարկութեանս վրայ, դու վհատ ձեացիր, մեղքդ մնայ կարծելով Թէ մեր սիրոյն ասՀն պարագաները կշռելէն ետև, անոր Թշուառ վախճանը ոչ քու և ոչ իմ այլ մեր բաղդից անհատաորութեան և ընկերութեան դործը սեպելը ես, անձդ մօրդ բունի կամայը յանձներ, իշխանաղան նշանածիդ ձեռք տալով անհամ և անսիրտ կեանք մը վարելու հաձեր ես, ծոյդ պահելով մեր առջի սիրաշարժ յարաբերութիւնները և բաւ սեպելով որ ուր ուրեմն իմ տխուր յիշատակս իբրև երազ երևի քեզ, և ահ մ'առնելով Թուի անոնի: Այսպէս կ'պատուիրեին Թուղթիկ սէր մը, քու երկչոտութիւնդ և Լէտի ԽաՀէմի ամբարտաւանութիւնը. իսկ ես քաջ դիտեմ որ Համեստ և պատուասէր աղջիկ մ'իր խոհեմութեամբ ընտրած՝ և որուն խօսակցութիւը սիրածը այնպէս չՀողուր չնեաեր, այլ սիրոյ ուխտը այն ատեն միայն կ'քակէ երբ գեղադրդոն պարտք և առաքինութիւն գինքը այլևստ կ'կոչեն, և դու, Էլիզ, երբ մի կողմէ առաքինութեանդ և սիրոյդ նուէրը կ'նուիրեիր ինձ, միւսէն կարծես Թէ կ'բերկրիս գիս մեզապարտ գտնելով և դատելով: Եթէ երբէք անիրաւութիւնը կամ անդիտութիւնը քու ապագայիդ կրնան նպաստել՝ անտրտունջ կ'ընդունիմ Ձայն վՀատդ, ինչպէս արդէն մօրդ ուղղած նախատալի գիրը կուլ տուի քու սիրոյդ Համար, և այժմէն կ'դոցեմ իմ դիրս, Իսկ եթէ ստուդիս իմ յանդգնաբար երևնալս քեզ կսկիծ է, և դու անուշ խօսքերով դժգոհութիւնդ կ'սրդես, պէտք է որ Ճշմարիտը երևան Հանեմ և ինքզինքս արդարացընեմ:

Քանի՛ վշտալի և պատե՛ր է վիճակս, օրըստ որ կ'ելնեմ և կ'մտնեմ որ ծոյդ Թափեմ այն անուշ դգայնութիւնը որու վրայ ատեն մ'ապագայ երջանկութիւնս էի հիմներ, այնքան մօրդ նենդը, լարած դարանին սեսիլը, ինքնասիրութեանս կրած վէրքը, սիրտս կ'ճնշեն ու կ'ճմլեն: Հա՛, սղտորեց նա մեր սիրոյ սպայծառ աղբիւրը, անխնայ կերպով գիս քեզմէ զատող վիհը յղյուց և քու բուն նշանածիդ նկարագրութիւնը տուաւ ինձ, նախանձ, սիրտի որդ և անմեղութեան դահիճ,

նա թափեց քու լեղիդ իմ ծոցս: Ձի, չէ, Ելիւի, պէտք է որ լռեմ իմ սէրս, պէտք է քու հանդստութեանդ համար հրաժարիմ քենէ, ամեն բան պատմելէն առաջ: Դու ես իմ դատախազս և դատաւորս, նոյնպէս և արդարադատ եղիր: Թերևս ըսես, ինչ պէտք է խօսիլ և վայել անյած գայածին վրայ, քանի որ մեր սիրտերը հարձակեալ են և համակիր: Աստուածեղէն չունի, թէղ, պիտի ըսես, մարդիկ իրենց շինած անբնական դաշանց համեմատ հոգւոյ անհնդ կապակցութիւնը ապօրինաւոր սեպեն, թէղ սէրն անդամ անօրէնները իրենց շահախնդրութեան և փառասիրութեան գործիք ընեն, թէղ որչափ որ ուզեն մոլիին խլրտին ու մեզի համար շղթաներ պատրաստեն, մեր դլխին աղէտք աղէտից վրայ դիլեն, պարձեալ, վկայ են մեր անդրդրուելի ուխտը, իմ հոգիս, քու խիղճդ, վկայ Աստուած, որ մեր սիրտը վառող կրակը, անմահութեան այս սկզբնաձաշակը, չեն կարող մարել: Այո, իրաւ է, Ելիւիս, սակայն երբ մեր թշնամիներն անոր զօրութիւնը անհուն դտնելով դինք կ'փսխեն, նոր հնար կ'հնարեն որ դինք դաղտնի իրարու առջև սպրդնեն և ժամը կ'յաջղին, ա՛հ, մարդասպանութիւն, այն ատեն մենք որ զգայմամբ և վստահութեամբ հրեշտակ էինք դարձած՝ կ'իյնանք մեր երկինքէն դլխիվայր իբրև սատանայ, Ճարակ մարդկային բոլոր տկարութեանց և կրից, և հեռուէն մեր ոտխները դժոխային ժպիտով զմեզ կ'դիտեն:

Խիղճս իբրև հրաշէկ շամբուրէ մը կ'տոչորի և անկէ ազատելու համար պէտք է ուրեմն խոստովանիմ քեղ զգլմամբ որ այսպիսի ոդբալի տկարութիւն մ'և ես կրեցի: Ես նղովեցի և անիծեցի դքեզ, ես ուրացայ որ դու Հոգի ունիս, երբ որ դիր մ'առի որ շուարեցուց դիս: Այո, նոյն միջոցին յիշողական տեղդե մը բռնուած՝ ինքդինքս կորուսի և եթէ ձեռքս տային դքեզ՝ արիւնդ կ'խմէի, ես քու սպաշտողդ, ես հեռուն քեզի դրեր էի ատեն մը մատաղ, ես մաղիդ անդամ անհաշտ թշնամին, ես քու սիրոյդ և արեանդ եմ ծառաւի . . . . վասն զի դու, Տէր Աստուած, կարելի էր, և ինչպէս հաւատացի որ դու վարպետ օրիորդ մ'ես եղեր, բնական գեղդ, այդ անուշ, անմեղ և սիրարոյր աչունեդդ որոց մեռաքոի պէս արտևանունքէ ցայտած մեզմ նշոյլները սիրտս կ'սպրդէին, այդ քու սիրուն բերանդ՝ որ միայն հրնչտակային շունչ և հոգւոյ անմահութիւն և հաւատարմութիւն կ'խոստանային ինձ, այն ամեն մի ընորհալի և անհշան ձևերդ, զոր իբրև սիրոյ խորհուրդ և նշան կ'ընդունէի ես անմիտս, մէյ մէկ որոգայթ են եղեր: Դու առաքինութեան, պատուոյ և համեստութեան շրյարով միայն կը քաոխս եղեր, մերթ երկչոտութիւն, մերթ ընտանութիւն գործածելով՝ որպէս զի աւելի հեշտիւ և ապահովի ներսդես և պատրես ինձ նման յիմարները և միանգամայն աշխարհիս մէջ համարումդ պահես: Իմ բաղդիս, իմ երիտասարդութեանս չդիտալով՝ քու չարասիրութեանդ և անկանոն հաճոյից խաղալիկ ես ըրեր զիս և իմ սիրոյս և անկեղծութեանս վրայ սկսեր ես ծիծաղիլ: Հետևապէս դու կ'խանդաս եղեր որ սիրահարներ շատցնես, իրար անջընես, սիրտեր փշրես, տուներ աւրես, ոտքդ պագնողները ուրախ սրտիւ գերեզման ղրկես: Ուրեմն մօրդ հարազատ աղջիկն ես եղեր դու, դու դժոխք ես եղեր արքայութեան և անմեղութեան անուշ դիմակով . . . մի՛, մի՛ նետեր դիրս մեկդի քաշելով, կարդա՛ մինչև վերջը, հարցուր թէ ո՛վ է այս նկարագիրը ինձ տուողը, ո՛վ է այս դրպարտիչը . . . ՚այն է քու մայրդ, կ'ըսեն, կամ նոյն ինքն . . . Ելիւ՚ն է արդեօք. կարգա՛ վարի դիրը ու դատե:

«Դորոթէայի մայր

Որովհետև ամուսնական առաքինութեան մը համար իմ հաւանութիւնս ստանալը կարևոր սեպեր ես, այս անգամ ձշմարտութիւնը՝ ի բերան չդնելու չհամարձակիլս պիտանալով, դայն երկտող դրութիւն մը ընել խոսիմ իմանալով որ պարոն

ընելօնը իրրև մեր տան ծանօթը յարգած եմ, սակայն ոչ միայն սիրաշարժ խօսք մը, յուսատու ժպիտ մը, ակնարկ մը չէ անցած մեր մէջ որ անոր այս առաջարկութիւնը արդարացնէ, այլ և ասկէ ետև երկին և երկիր լինծի համար դղրդելու կարողութիւն անգամ ունենայ՝ պէտք չէ յուսալ որ սրտիս ամենափոքր տպաւորութիւն ներդործէ և այս ու միայն այս իրաւամբ անոր արժանանայ։»

«Քու սիրական աղջիկդ ԼԻԼԻ»։

Ա՛յս է քու քնքուշ մտիկդ դրոշմը, այս է անուշաբոյր անուանդ առարկիլը, կրնա՞ս ուրանալ, Լիլի։ Ա՛հա այն գիրը մայրդ գրկեց ինձ իմ յանդգնութիւնս, ապշութիւնս, կոյր վստահութիւնս պատժելով դադրեցնելու համար. կայծակ մը դլխես իջնէր, վիհ մը ոտիցս տակ բացուէր այնքան չէի հիանար, արևը մարէն ծագէր այնքան չէի թերահաւատեր, որքան այս ահռելի տոմսակը քու դրչէդ, և Լիլի մը ստանալուն։ Սոսկալի ժամ, հիմա ընելօն եղիր, անցյուր աչքէ անոր կենսայ պատմութիւնը, եօթ տարեկան անհայր և անմայր մնալը, ամեն տեղ ընտանութիւն, խաբեութիւն առնելէն ետև, պատերազմի մէջ մահ փնտռելը և Լէհաստանէն դարձին՝ ի քեզ միայն քոյր մը, բարեկամուհի մը, սիրուհի մը գտնելը, յիշէ ատ քեզ ջերմեռանդութիւնը և մտածէ անգամ մ՚որ մահ քան տոմսակդ աւելի ցանկալի չէր երևեր անոր։ Սրտիդ մր խորը, առաքինութեանցդ մր անկիւնը, խոստմանցդ և յիշատակացդ ո՞ր նշոյլը աւերեալ սրտիս ապաւէն գտաւէի, խնդրեմ այդ ինքնագիրը մահադուշակ տոմսակդ, Մադպէդին երկյաց ուրուականին պէս՝ առջևս կ՚անկուէր և ցնո՛ւ ի դող հանելով՝ յուսոյ ատուերը անգամ կ՚փարատէր։

Եւ ատուգիս խենդնալս, ինքզինքս սպաննելս բան մը չէր, թէ որ մահանալութիւնը քեզմէ եկած տեսնելով՝ վրէժխնդրութեան ոգին չիս չարթնցուր և բոլոր առնտղի զղացումն,

ինքնասիրութիւնս, պատիւս, արժանաւորութիւնս, զոր փոշիի պէս փշրեցիր, կրծուն նախանձի հետ միացած՝ զայրոյթս չգրգռէին ու ապրելու դյժ և խորհելու զօրութիւն չազդէին ինձ։ Խակայն երդում ըրի որ ես լինիմ քու պատիժդ, ես ապրիմ աւերելու համար քու առնդ և ապառնիդ, ես թիւնաւորեմ կենացդ ամեն մի ժամը, ես քու անմեկնելի տառապանդ լինիմ վերջապէս։ Առաքինութիւն, մեծանձնութիւն, թռան յինէն, բոլոր աշխարհ և ես ինքզինքս կ՚ատէի։ Որքան ձշմարիտ է որ մի ձշմարիտ սիրուհի մարդս դիւցազն կրնայ դարձնել, նոյնքան անուրանալի՝ որ մի դևուհի զանի գազանի փոխել . . . Օրեր անցան և մինչ կ՚տատանէի այս մտայղկրից մէջ՝ բանականութեան ձայնը ականջիս զարկաւ, քիչ քիչ համոզուեցայ զոյ, և իմ անարժան վիճակս քննելու կարող եղայ։ Ես առանձինս ըսի, հոգիս սնգաւ, կորոյս մեծութիւնը, ինչո՞ւ լինիմ նաև կրիչս գերի։ Ուրախ եմ և շնորհապարտ Լէտի Խատէմին որ Լիլիին անհաւատարմութեան կենդանի նշանը հաղորդեց ինձ, թէ ոչ ապառնիս ալ հորուած էր։ Ինչո՞ւ իյնամ մի այնպիսի նանիր և նենգամիտ արարածի հետ, չէ. ես չեմ լինիր անոր դահիճը, այլ իր խղճի՝ եթէ ունի, իր նոր նշանածը. այլ աշխարհ, այլ իմ վերհանձնութիւնս թող կրծեն անոր սև սիրտը։ Ափսո՛ս, իմ զղայուն հոգիս, սիրոյ կարօտ, շատ բարձր կարգի աղջկան մը դուռը զարկաւ կուրօրէն, և այժմ աչքիս շատ սին ու ցած է նա զղացմամբ և պատուով։ Ես հարստութեան չէի պատկերը այլ միայն անխառն սիրոյ և խաղաղ կենաց։ Ես թերևս մխիթարուիմ փիլիսոփայութեամբ՝ որու մի մեծ փորձական մասը Լիլիին ինձ մեծարած դառն բաժակէն ըմպելն է, թող նա եթէ կարող է խաբէութեան մէջ երջանկութիւն գտնէ . . . Այսպէս խաւն ի խաւն կ՚քաշուտաէի, չկասկածելով բնաւ որ արտասանած ամեն մի բառս քեզի դէմ ապերախտութիւն, հայհոյութիւն, սրբապղծութիւն է եղեր . . . ։

Խմաստութիւնը յուսացածիս պէս շուտ մը չբուժեց սէրս և քէնս, իսկ կրկին անսերբևի տակաւրութեան մէջ չկրնալս համար, առի գլուխս արևելք եկայ և կ'նայիս, Լիլիս, որ ոչ փառասիրութեան և հայասիրութեան անզուսպ եռանդ մը (թէև հայերը շատ կ'սիրեմ) և ոչ բաղդախնդրութիւնս է իմ ուղևորութեանս պատճառ, այլ ուրիշ կլիմայի ներքև եկայ փնտռելու այն անդորրութիւնը որ հայրենեացս և քու սրտիդ մէջ չգտայ: Իրաւ է որ պարոն Վուտին, իմ մէկ հատիկ բարեկամիս առջև ամօթով չերևնալս համար իմ ճամբորդութեանս նպատակը տարբեր կերպով նկարագրեր էի, բայց ինչ ընեմ. այս է ընկերութեան արդի ընթացքը:

Մարդուս ներքին աշխարհը, Հոգին, այնքան անտես կ'առնեն որ արտաքինին վրայ կ'շինեն ամեն բան, կ'ուզեն որ երևինք ինչ որ չենք, կ'ուզեն խմորել, մարդել զմեզ ցմահ բնականին զէմ և անհիմն օրինապրական սովորութիւններ բնութեան դարձնել: Ողջոյնք այս բռնութեան զէմ. այսպես է աշխարհ, կ'պռատն, ապստամբէ, և իսկոյն սուտին թևին կ'հասնի զէնքը, ու ապստամբը կ'իյնայ: Ուստի սէրս, զոր սկզբան աշխարհիս քարոզել կ'ուզէի, ինչպէս դաւանելով մարդկան ձեռօք սուզաս արեան խորը և վիրաւոր ինքնասիրութիւնս կեղծդիմութիւն սորվեցուց ինձ, թէև քանի իշատակդ յուշս գար տեսակ մը ջերմ գիս կ'բռնէր, սակայն միշտ սուտ ուրախ և զուարթ կ'տքնէի երևիլ ծանօթիդ առջև, որպէս զի անոնց վայը ու հեգնութիւնն ալ կրակս չաւելցնեն:

Ո՛ մարդկային հինծու բնութեան տկարութիւն, որչափ կ'սիրես ինքզինքդ խաբել և ինչպէս վարժեր ես հոգուդ և համոզմանդ ներհակ վարուիլ: Անկիւացին մանաւանդ գրանց մարմարեայ պատ կ'պատէ չորս դին, թէև ներսը շատ անդամ մղձուկ եփուն և երերուն հրաբուխ մ'է: Իմ ներքին տրտմութիւնս խաբելու համար, զոր իրօք սնուցանել էր, քեղի հետ ստէպ խօսած ևիմ, Հայաստան աշխարհը ձեռք առի, և հոս տեղի հայկեան մարմինը վերլուծելու սկսայ:

Ահա այս միջոցիս էր որ իմ պատուէրիս համաձայն ձեր տան նաժիշտը Աննան գրեց ինձ թէ հարցուփորձ ընելով իմացեր է որ վերոգրեալ տոմսակը խորամանկութեամբ մը քեղ գրել տուեր են: Այս լուրէս առաջին զրդումն եղաւ գալ ոտքդ իյնալ. սակայն դեռ ամպ մ'աչացս առջև կ'երևար: Չէի կարող միաբանել բուն ստորագիրդ անոր իմաստին և քու լուութեանդ հետ: Ասկէ զատ սիրտս էր կտրած, աչխարհս մռայած և աչքս շատ կիրթ ու սուրբթէ ատումնական կիներէ վախցած: Ա՛հ, կրակէ, վառօդէ ու ռումբէ չվախցող զինուորս Լէսի Խտհէմէն կ'դողայի: Վասն զի այն անիրաւը վառօդով և զէնքով չէր խաղար, այլ ժիտէ, սատանային ծր ոտայնը կ'հինէր: Ուստի կրկին տեղս նստայ ու անկլիական գուռղութիւնս չաւրեցի, մինչև որ վերջին դիրդ առնելով ճշմարտութիւնը փոքր 'ի շատէ իմացայ բերնէդ և հանդարտութիւնս ու քեղ գտայ:

Անուշ օրիորդ, հոս կ'վերջացընեմ խօսքս, յուսալովը իմ յուզմանցս և ճամբորդութեանս բուն իսկ պատճառը իմացընելովս ինքզինքս արդարացուցի առջևդ: Սակայն հոս չեն լրանար և քու պարտքդ, քու արդարութիւնդ: Այն ինքնակիր տոմսակդ, վերջին դիրդ չարաշուք տուեր մը կ'սիտէ, զոր փարատելու համար մեկնութեան կարօտ է: Այս մեկնութիւնը կ'սպասեմ քենէ որ մեր առջև անվրդով անբիծ հաղորդակցութիւնը շարունակեմ և հոդ դառնամ: Միթէ այն դիրդ՝ յօժարամիտ գրելէն ետև՝ անուղ իմ'սիրտս քաղաքավարութեամբ առնելու և անոր ապաւորութիւնը մեղմելու համար վերջին դիրդ ղրկեցիր. ասոնցմէ ծրն է պէտք է իմանամ որպէս զի ըստ այնմ դիտնամ թէ յարգել, պաշտել կամ ատել պէտք եմ քեզ:

Երբ կասկածը միտքը կ'արթնցնէ ու կ'սրէ, ու անհաւատութեան երևոյթը միայն անվստահութիւն կ'ազդէ, սէրը իր առջև կուսական անմեղութիւնը, մերկութիւնը և դիւ-

բահաւանութիւնը կ՚քաղարիէ, կ՚ծածկէ և փոխանակ հաւատալու՝ համոզուիլ կ՚ուզէ։

Այսպէս և ես՝ երբ առեն մը քու մէկ հաստատական ժպիտդ, մի ձևդ, մի աչքիթարթդ իբրև պատգամ կ՚ընդունէի, փարձի կարօտ չէի, իսկ հիմա թշնամիներու հանած փոշիէն և մուխէն աչքերս տկարացած, քեզ սեւաթոյր ամպերու մէջ անորոշ կ՚տեսնեմ։ Շունչովդ ցրուէ, Էլիա, այն մշուշը և անոր մէջէն ցոյցդ ինձ քու հրեշտակային առջի գեմքդ և իմ սրտագին երկրպագութիւնս ընդունէ։

ՆԱՄԱՆ Ե

ԱՂՈՒՏ Ա.Ո ՆԱԻՈՆ

> Ջ . . .
>
> Օգտակար պատմագիրը ոչն է. նա որ մեր պարտքը եւ իրաւունքը մեզ կ՚ուսուցանէ առանց վարդապետական ձայնի։
>
> ՊՕՒԼԴԷՐ

Բարեկամ, կ՚ըսեն թէ — պատմութիւնը մի հայելի է որ ամենուն կ՚ցուցնէ մարդկան գործերը, շարժմունքն ու այլ եւ այլ դէպքեր։ Սակայն աւելի՛ճշմարիտ սահման մը առած չեմ լինիր անոր եթէ ըսեմ — պատմութիւնը մոգական լապտեր մ՚է որ ամեն բան մեծ կամ փոքր, որոշ կամ անորոշ կ՚ընծայէ աչքի՝ դիտողին ընտրողութեան և արամագրութեան համեմատ։ — Ո՞ր հին ազգին ծնունդը, մանկութիւնը, արբուն հասակը բացորոշ գոյներով աւանդուած են մեզ, որ ազգը իր կենաց նկարագրութիւնը, իր ամեն պատահարները, ամեն գործողութեանց՝ թէ ընկերական և թէ քաղաքական՝ պատճառները քննաքննօրէն արձանագրած ունի, որ ազգը կրնայ ճակատը բայ պարծենալ որ իր հիմնագիրը Աբրահամզդ մը կամ անոր արբանեակը չէ . . . ։

Եւհակայութեան ընտանի խաղերէն մին է մեզինը և անկայտը սեղեւեթի զարգարել ու պաճուճել, և ամեն ինչ որ հրաշալի, անսկիզբն, խորհրդաւոր և հակայական է այս գործին թեւ ու ոտի կ՚տան, ըստ որում մարդուս պիտոյից բնութեան դգուելի և մնապարծութեան ախորժելի են։

Ուստի պարտանք չեն եթէ մի շատ ազգեր իրենց առհմին ծագումը երկնից մոլորակներուն և աստղերուն մէջ գտան որոնելու։ Արեգակը, լուսինը, Աստղիկը ու Օրիօն երկրիս վրայ զաւակներ ու թոռներ ունեցան, որ իրենց հարց պէս լուսաւոր չէին գիջրաղդաբար. բայց երբոր ժամանակին և դիտութեան շնորհիւ երկրայինք փոքր ինչ շիտակ տեսան, իրենց ազգակցութիւն՝ իբրև քերթողական հանճարի փալփլուն քայլ աստղօդ գոհար, գուրս նետեցին և խաւարը իր անունովը խաւար անուանեցին։ Վասն զի չէ թէ հին զարմի, այլ կորովին և անսակարին վրայ աչխուսականութիւն, արժանաւորութիւն և պարծանք պատ։

Ես ատոնց ուրախ եմ տեսնելու որ հայոց առաջին պապը դանելու համար ոչ Պաղտոնին խաւատիկ դուռը և ոչ Ասղղնին բազմաձայն քնարը սիտի գարնեմ, այլ շիտակ կապուտակն Ալեհնասայ գիրկը սիտի խնամ (չնախանձիս) և անոր քնքուշ մատիկը իմաստութեան բանալիները խնդրելով հայ պատմութեան տաճարը սիտի մտնեմ։

Թէև դժուարին է որ առ ազգին առաջին նահապետը մարդ է և ոչ աստուած կամ աստուածուհի, սակայն միւս կողմէն այն տաճարին անշուք շինութիւնը նկատելով կ՚զարմանամ կ՚ձեամ։ Ոչ քանդակ, ոչ սիւնակ, ոչ անդրի ունի վրան։ Շունի իր հնութեան ահաւորութիւնը որ մարդուս սիտ ու

պատկառանք կ'ազդէ, այլ կարծես թէ անոր ձարտարապետը նոյն իսկ բնութիւնն է, և սրուեստը իր կարկինով մասանց համեմատութիւն և հիմանց ամրութիւն չէ տուած։ Պատճառը դիւրին է գտնել։

Երբոր արևելեան դահավէժ երևակայութիւնը օր ըստ օրէ հմայից և աստեղաբանից շնորհիւ հրէշներ կ'ժայթքէր իր պատմական և դիցաբանական աշխարհին մէջ, Հայաստան իր մէկ հատիկ ու կորովամիտ պատմիչը ծներ էր որ ճշմարտութեան մանգաղն 'ի ձեռին ահագին հարուածով կ'յօշոտէր ու կ'կեղեքէր բնիկ այլաբանական ծառին փուտումուտ ճիւղերը, և հայ պատմութիւնը իր նախկին պարզութեան կը բերէր։ Ա՛յս լաւ է։ Սակայն ժիր պարտէզպանը իր սաստիկ շտապէն ու եռանդէն մի շատ պիտանի բողբոջներ ու երեսեմն պտուղներ գետին կ'կորզէր և հետևապէս ծառին բունը կ'մնար անտերև ու անղարդ, ճշմարիտը մերկ ու պաղ։ Ա՛յս մերկութիւնն է ահա ցաւալին և այս թերութեան մէջ ընկաւ Խորենացին երբ հերքեց, զանց առաւ նշանագրել Հայոց աշխարհին նախնական աւանդութիւնները, առասպելները, որոնք՝ որչափ որ ողջամիտին ծիծաղելի, քրիստոնէին գատապարտելի ու բթամիտին սքանչելի կ'երևին, խմաստասիրին առջև բարոյական նշանակութիւն ունին ու պատմական պահերին նկատմամբ արտայայտիչ ու գունատու ստուերներ են։ Բայց թող այս մեկզի։ Եթէ միւս կողմէ երևես հարցնես թէ առջի հայկազունք ի՞նչ կրօնական ծէսեր, ի՞նչ ազգային հանդէսներ ու արարողութիւններ կ'կատարէին, 'ի հարկէ Խորենացին պիտի բանամ և նա պիտի մեկնէ ինձ որ Աբծրունի, արծիւ ունի, Գնունի, գինի ունի, Անդեղ, ժամ գէմք ունի կ'նշանակէ։ Եւիր հարցնէր անոր թէ Հայկեան ու Արշակունեան պետութեանց կառավարութեան տեսակը ի՞նչ էր, թագաւորին, նախարարաց և ժողովրդեան մէջ որպիսի՞ դաշն ու յարաբերութիւն կ'տիրէին, ամեն մէկը ի՞նչ իրաւունք ունէր, իսկոյն Խորենացին նայուածքը գահի ու

ձիրանիի մինակ դարձնելով պիտի պատմէ քեզ մեծ ու ազգիկ նախարարի իւիկը ծլիին, արուծութիւնները, մարտի, պաշարումներու, յարձակումներու նայն նկարագրութիւնը։ Իսկ ժողովրդեան ոչ նիշը կայ և ոչ նշմարանքը, ու կարծես թէ մինակ արքայազնայ և նախարարու ընանց հայրենիքն է Հայաստան ու ամբիկը հոն անբան կամ բռնասեան էութիւն մ'է։

Բայց այս ըսելով միթէ այն վսեմ և արդարադատ գրիչը մեղադրել կ'ուզեմ. ամենևին ոչ. ընդհակառակն մինչև տասն և ութերորդ դարու եւրոպացի պատմիչներ իրաւամբութեան կողմէ անորմէ կրնան դաս առնուլ և հիմա սա ինդիրը մէջ կ'բերեմ թէ արդեօք ան ալևոր ծերունին ազն զննողութիւնները դիտմամբ բրաւ թէ ոչ իր ժամանակին բերմունքին նայելով։

Արդի Հայոց մէջ չտեսայ գրութիւն մ'որ այս նիւթս քննաբանէ, թերևս պատմագիրը վերարաւոր չինելուն, յանդգնութենէ, անոր մատ չեն համարձակիր պպղնել։ Սակայն կ'մտածեմ որ պատմիչ մ'ինչ կարգ որ ունենայ, իր առաջին կարգն ու պայմանն է ճշմարտախօս մարդն և իրեն այն՝ միշտ մեր մտադրութեան և քննութեան արժանի։ Ասկէ զատ ինչ բանաւոր դատ կրնայ քաղել աղգ մ'իր սնոտիական պատմութենէն՝ եթէ պատմողն և անոր ժամանակին ոգին ուշի ուշով չքննէ ու հետևութիւն չհանէ։

Ցայտնի է որ նորածին ու վայրագ մարդկային ընկերութիւն մ'ոչ յիշատակարան, ոչ արձանագիրը կ'ունենայ մինչև որ ընկերական բաւական հանգարտ և յառաջադէմ վիճակի չհասնի, այլ իր նեղ շրջանին մէջ նշանաւոր թուած եղելութիւնը, այս է, մի տեղատեսի քաջագործութիւնը, դազանաց դէմ արի արձակման մը պատմութիւնը, փայլակի, պետնաշարժի, տեղական հեղեղի երևոյթը բերնէ բերան կը պատմուին, կ'պտրաին, զարմանք ահ ու ապշութիւն թող

լով ամէն ազէտ ունկնդրայ վրայ։ Այնպիսի անցքեր քանի կ'երթան բերնէ բերան, սերունդէ սերունդ կ'աւանդուին և դարէ դար աւանդութեամբ այնքան կ'այլակերպին, կ'ուռչին, կ'խոշորնան՝ որ յանկարծ բանահիւսի մ'երևակայութեան գոյները առնելով ցելապետը՝ Հերակլէս, կնդանիները Հիդրա, փայլակը՝ Արամազդայ շանթը, պեռնաշարժը՝ կիկլոպի կռանին մի շարժումը ու սահանքն՝ ջրհեղեղ կ'պատնան բոլոր իրենց պարագաներովը ու Առասպելին հիմունքը շատ մ'աւագի և մի քանի քարի վրայ կ'դրուին։

Սակայն երբ յունական փիլիսոփայութիւնը եկաւ այն աստուածաբնակ Օլիմպոսը, որ զաշխարհ կ'զրդռեր, տեղէն խախտեց, այլևս չկանգնեց Ճշմարիտ պատմութեան հոյակապ տաճարը։ Իրաւ մի քանի հատ անկիւնաքար բերաւ նոյն շէնքին համար, բայց այն ժամանակ անգամ այժմու առմամբ բանասէրը պատմաբանի ոչ կիրը կար և ոչ բնազիրը։ Հապա ժամանակին տարեգիրը կամ գալիքը դիւցազնից գործերը, պատերազմներ և անուններ երբեմն այլաբանելով երբեմն խառն ի խուռն և կիսկատար կ'շարէր իրեն ամպատ դլխուն հետքն ալ վրան դրոշմելով։ Ցակաւին մեր օրերը սկսան պատմիչներ՝ անդին վար, վարը կեցող ժողովուրդ բռաւած կենդանիին ալ աչք մը ձգել, հասկընալով որ ամեն բան աշխարհիս մէջ անով և անոր վրայ կ'պատնայ և թէ իշխան միշխան անոր վարձկան ծառաներն են, որ՝ եթէ շեղակի կամ խոտորնակ քալեն՝ իսկոյն գլխիվայր կ'ընկնին։

Ցատի այլ և այլ ազգաց բարքը, հիմնարկութիւնները, օրէնքը սկսան վերլուծել ու շատ անգամ ստոյգ ազբիւրէ զուրկ լինելով՝ անոնց առանձին գործոդութեանց ու անցից գարձից նկարագրութենէ իւրաքանչիւրին մտաւոր, ընկերական և քաղաքական յառաջադիմութեան ատիճանները որոշել և այնպէս հին և նոր քաղաքակրթութեան համեմատական չափը հաստատել։ Պատմագրութեան մասին այս

գլուխի յեղափոխութեան դրեթէ առաջին հեղինակը եղաւ Վոլդէր իր Տէօռնէ քաղաք և պատ ազգաց վրայ անուն դիրքովը, և որ մեծն Կարոլոսի գարէն սկսելով անաչառութեամբ մաղեց արկած, արարողութիւն, սովորութիւն, գիր, օրէնք և այլն, ու պատմական սուտ ու մուտ ու դեղագէզ ամպերը պատռելով հանեց և ստուգիւ ցոյց ազգաց ոչին, փոխեց իր գարուն մտածութեանց ընթացքը, սարսեց, արթնցուց Եւրոպայի յոյլ բանականութիւնը, թօթափեց, ցնդեց Լոյօլայի աշակերտաց ձեռօք ժողովրդոց խմած թմբիրը, ու թէև սոյն կրօնաւորաց դէմ ունեցած անհնարին ատելութիւնը զինք աեզ տեղ խոտորեցուց, սակայն անուրանալի է որ ինքն եղաւ մեծ և լուսաւոր թուական մը բացողը։ Հետզհետէ ուրիշ քաղաքագէտ պատմիչներ ալ ծնան, Թօպէրդին, Պէնդհըմ, Գիզօ և Հիւմա պատմագրութեան արհեստը չէ թէ միայն չոր ժամանակագրութեան և առասպելաբանութեան այլ խմաստութեան, քաղաքականութեան և բանասիրութեան վրայ հիմնեալ է։

Արդ՝ խօսքը հայ պատմագրին բերելով եթէ այս այսպէս էր Եւրոպա, որչափ ևս առաւել ներելի կ'գտնենք արևելեանին ընթացքը, մանաւանդ երբ միանգամ դիտենք թէ նա որ և երբ կ'ապրէր, որ գասու մարդ էր, և որու հրամանաւ պատմութիւնը կ'գրէր։

Քանի որ տապանը Արարատ իջեր է, ի Հարկէ Արարատեան երկիրները ի վաղուց անտի սկսան շէննալ և հետզհետէ այնպէս նշանաւոր Հանգիստեան, որ նոյն ինքն Խորենացին կ'ըսէ՝ թէ յիշատակի արժանի էին։ Ըսել է նաև թէ շատ հնութիւններ, շատ հետաքրքրական զրոյցներ, երգեր կ'գտնուէին Հայաստան սկիզբէն մինչև ծերունիին ժամանակը միջոց մը որ շուրջ երեսունհարիւր գար կ'բռնադրէ։ Ինչո՞ւ զանց ըրաւ գէթ ըստ մասին զանոնք յիշատակագրել։ Նա չէր գիտեր թէ որչափ անբռնական լինէին ատենական զրոյցները, գարձեալ նոյն հին գարերու ոգւոյն մի թէթև

նշոյլը կարող էին յայտնել: Այլ, դիտեր և ինք անոնց արժէքը գիտնալով կ'ըսէ: —«Մի արդեօք յունական պերճ և ողբկ առասպելքն իրեն հանդերձ պատճառաւ, որք զՀելլադա իրայ այլաբանաբար յինքեանս ունին թագուցեալ»: Սակայն դարձեալ նա անբասիր կ'ելնէ եթէ նախ՝ մտածենք որ ծերունին Քրիստոսի զուտ եւանգով վառուած՝ անոր երկնային խրատները քարոզղներէն և Հայոց ասկի գարու սրբազան պոհարներէն մին լինելով՝ անկարելի է յուսալ որ նա երթար Լուսաւորչայ ձեռօք մեհեաններու մարած կրակին մխիթը խառնէր և Հայոց արևպաշտական նոր Թմրած յիշատակները յուզէր, որոց ընդհակառակն և ոչ նշմարանքը կ'ուզէին թողուլ:

Երկրորդ՝ ինքն արդէն իր առաքելական գործունէութեան պարապեալ՝ երբ Սահակ Բագրատունիին պատուէրը կ'ընդունի և գործի կ'սկսի, անդուլ արագութիւն և համառօտութիւն իր պատմագրութեան հիմ կ'դնէ և կ'ըսէ: —«Եթէ զամենայն եղեալս յաշաւարակագործութիւնէ մինչև առ մեզ՝ ի հասոզութիւն քեզ՝ ի մէջ ածել ջանայցեմք պատմութիւն, երբ ապայրղձալին քո հասանիցեմք զբազայ պատմութիւն, մանաւանդ զի առաջիկայս մեր երկար է գործ և ժամանակ մահկանացուաց սուղ և անյայտ. այլ սկսեալ ցոցից քեզ զմերն թէ ուստի՛ և որպէս»: Եւ անդէն Մար Աբաս Կաթինան ձեռք կ'առնու և անկէ կ'քաղէ Հայոց ազգին «Զաւապագոյն զարս և զնախինս» ի բաց թողլով ամեն ինչ որ ժողովրդեան կայութեան կ'վերաբերին: Երրորդ՝ ընդհանրապէս հին պատմիչներ աչքի զարնող ու նորահաս գէպքերը ի գիր կ'առնէին, ենթադրելով որ իրենց ապրած երկրին ներքին վարչութեան կամ օրինաց ծանօթութիւնը ամենուն յայտնի է: Չորրորդ՝ թէպէտև Խորենացին իր ժամանակի պատմութիւնը շարադրելու առեն լոկ Թագաւորաց գործերը յիշելով չշատանար և ուր ուրեմն հասարակաց շինութեան և բարօրութեան, զղացմանց և յօժարու-

թեանց վրայ կարճ ի կարճայ կ'խօսի, երբոր ժողովուրդն իշխանական մեծ անիրաւութեան չդիմանալով կ'խռովին ու իրենց ազատութիւնը և իրաւունքը առաջ քշելու փորր ինչ կ'խլրտին, սակայն գարձեալ նշանակելի բան է որ «Տէրանց կայր հնազանդութիւն» սկզբունքը Հայ պատմիչին գրիչը կ'ուղղէր, և որչափ որ քրիստոնէութիւնը հին բռնակալութեան ձանկերը թափել, կրկին Թագաւորաց իշխանութիւնը և գահը իբր սրբանուէր ու երկնատուր շնորհ կ'քարոզէր, հպատակաց անտարտունչ հաւատարմութիւն և անձնուրացութիւն կ'պատուիրէր և հետևապէս ժողովուրդը իբրև հօտ պատանց շատ անգամ բնիկ կամ օտար իշխանի և բռնաւորի անխիղճ կրակին կ'այրէր և անունը անյիշատակ կ'մնար:

Ահա ասոնք են, սիրելի Վատա, պլխաւոր պատճառները որ ըստ մասին պակասաւոր և նիհար Թողուցին Հայոց հին պատմութիւնը, և որոց համար բնաւ մեղադրելի չէ Խորենացին, ինչպէս որ ցցուցի:

Սակայն այս վերիվերոյ խորհրդածութիւններս հարկ գտայ ընել այն դիտմամբ որ եթէ հետագայ գրուածս Հայոց նախկին քաղաքական վիճակը քննաբանելու եղնեմ, գիտցած լինիս որ շատ տեղ մութին խաբխաբելով պիտի քալեմ և այն հարևանցի տեսութիւնս ընելով հասկանալի ձամբայ մը բռնած պիտի լինիմ՝ արդի տարաբնակ հայերուն միտումները և հանդամանքը լաւ ևս ըմբռնելու:

ՆԱՄԱՆ ՅՈՒ

ԱՂԱՒՆ ԱԼԻ ՆԱԼՄՈՆ

Լօնտօն . . .

Թարեկամ, Սոկրատէս ըսաւ, իմ դիտութիւնս տպիտութիւնս Ճանչնալս է: Եթէ սոյն խոստովանութիւնը բաւ առ բաւ մեկնենք, ամենևին հարկ չմնար որ մարդս իր գլուխը մշակէ և յիշողութիւնը ու դատողութիւնը զօրացնէ: Իսկ դու պէտք չես ունենար հայուն պատմական կեանքը ջննելու, այլ իսկոյն պիր ու պրիչ, քաղաք ու մարդկութիւն կրողին տալով՝ պէտք է որ չորս ստրով լեռը քաշտինք, և հոս մեր ապէտ Ճակատը թափ ու պակ կապելէն ետև՝ Թաղասպին իշուն առջև ծունր դնենք: Բայց արդեօք այն խմաստունը կաւռան ըրաւ ու մեր քիթէն բռնեց, ան որ՝ ի սեր Ճշմարտութեան Թուռային բաժակը մինչև մրուրը սիրով խմեց ու իր կեանքը Անեղին պատարագ մատուց: Ընտարակոյս իր խօսքովը անհունը և ամբողջին քննող իմաստակաց ակնարկել ուզեց որ ամբարտաւանութեան և ազատամտութեան կատարը եղնելէն ետև՝ մոլորութեան անդունդը դլորեր և անշահ դրութիւններ ու երազական տեսութիւններ կցկցելով՝ մեծը կրկնակի մթացուցեր և կամ գերագոյն էակը իրենց մտածութեան խաղալիք են ըրեր: Բնական և գերբնական անտեսանելի իրերու ներքին գաղտնիքը մեր խելքին, կրից և զգայմանց նեղ չափով չափելը ինչ անհնարին անմտութիւն է, միայն վէսամիտ գիտուններ չգիտեն: Թէպէտև՝ ի վերուստ չէ տրուած մեզ լուծել սոյնպիսի հանելուկներ որ մեր տկար գլուխը կ՚տապնապեն և անտուդութեան արհաւիրքը

կ՚ազդեն, սակայն այս իրաւ է որ Սոկրատէս բնաւ չատարկեց թէ անոնց հետևանքը և ներդործութիւնը ջննելը, նա մանաւանդ մեր պահպանութեան. յառաջադիմութեան և երջանկութեան նպաստող իրաց արմատը փնտռելը աւրաբաշտութիւն է, ինչպէս որ ցարդ մի շատ մարդակուռ մարդիկ. ուրը խաչով, ուրը սրով, ուրը ոսկիով այսպէս հաւատացնելու կ՚ձգտին անուս և անձարակ ժողովրդոց:

Մարդս կրնայ ապրիլ ու անմահանալ առանց պիտանալու թէ իրեն շունչ տուող անձատ էութիւնը ինչ հասակի և բնութեան տէր է. բայց մարդս անկի պէս կ՚բուսնի ու կ՚թռումի՝ եթէ չուսանի թէ նոյն էութիւնը ինչ պաշտօնի, զործի և նպատակի համար նետեր է զինքը երկրիս երեսը: Շատ հոդ չեմ տանիր այս պահուս եթէ չդիտեմ թէ ինչ գաղտնի զօրութեամբ գրիչս կ՚շարժեմ, մազը դեպ՚ի Պօսֆօր կ՚դիմեմ, սրտով չորս կողմդ կ՚թնարկեմ. սակայն շատ վիշտ պիտի զգամ եթէ իմանամ որ գրիչս անիմաստ, միտքս անմշակ և մռլաթ, սէրս անարժան և անտեղի են: Ուրնմն Ճշմարիտը հասկնալու համար ըստ կարի շուտով քննութեան պէտք է որ նստիմ. ապա թէ ոչ, եթէ երբէք սխալած եմ, իմ մարդկային ազնիւ կոչումս կոտրած և յիս ազատ բանական և յառաջադէմ էակը վիժած է:

Արդ՝ եթէ անհատի մ՚ապատնին իր անչեղ և ներկայ բարոյական վիճակին անդիտութենէ կրնայ կորնչիլ, ծրչափ աւելի ահռելի և քրէական մեղք կ՚գործէ ազգ մը (Թաղաքամագլէն կամ Հայկէն իջնէ) եթէ իր նուիրական կոչումը անտես առնէ, միշտ օտարին ագի հացը ուտէ, լեղի ջորը ըմպէ, և իր գլուխը անհոգ գերեզմանաց վրայ դնելով՝ պառկի և միանգամ ընդմիշտ չկարցնէ. նա ոչ եմ, որ կ՚պատուիմ և որ կ՚երթամ: Այս հարցմանց Ճիշդ պատասխանը միայն պատմութիւնը կարող է տալ: Այո, պատմութիւնը կարող է իմացընել թէ ինչ հայ ազգը

ձներ է, ինչպէս մի շատ դարեր ինքնագլուխ քայլերը է Ասիա, ինչ պատճառաւ թէ գլուխ և թէ հոգի կորուսեր և այս ստորին աստիճանի մէջ բնակեր է. և որ միջնայաւ նորէն կրնայ կանգնիլ և իր առաջին քաղաքական վիճակին շաւիղը գտնել։ Ասոր գէմ ժողովուրդ մ'որ իր անցեալին և ապառնիին գատուած է, երկոտանի անբանից դասակ մը կ'դառնայ։

Ինչպէս որ քաջ բժիշկ մը չկրնար պեղ հրամայել մինչև որ հիւանդին բերնէն ցաւը իմանալով չորոշէ որ նոյն հիւանդութեան պատճառը արտաքուստ է թէ ոչ ներքին, նոյնպէս և դու, բարեկամ, չես համարձակիր հայուն կիսամեռ մարմինը շօշափել ու ձար ձարակ մտածել, մինչև որ անոր աղտային կազմուածքը չիմանաս։ Այդ խորհուրդը շատ օրինաւոր դասյ և երանի թէ յաջողիս։ Սակայն զարմանալի է որ ցարդ հայ մը չէ ելեր օտարին ձեռնարկածը կատարելու։ Կ'երևի թէ հայը պատմութիւն կարդալ չգիտեր։ Թուխմակի պէս մեծ մեծ անուններ գոյ ընել ու ապագային պէս անոնց գատ գատ սուղարանութիւնը երդել՝ պատմութիւն սորվիլ է չեմ ըսեր։ Խորհնայիդ կ'ըսէ թէ «Որպէս այժմ և առ հինն Հայաստանեայց լեալ անսիրելութիւն իմաստութեան . . . » այս բանս թերևս այն ժամանակ ներելի էր։ Բայց եթէ նոյն ձերունին հիմա գար՝ ոչխարը մկդի թողլով՝ յաւտահատական ձեռագրով պիտի գոչէր. — Կնայեն հայկազունք, գարուց ի գարս ղհարց խրեանց ունին ի պահեստի գժատանգական անհիմաստութիւն՝ իբր պաշտելի մասունս, մինչ ղրարեմաստութիւնս նոցա յօդս ցնդեալ»։ Եւ այս այնպիսի առեն մը որ ուրիշ ամենուրեք աղգեր իրենց պատմութենէ և արդի լոյսերէ չոյս, հոգի ու գէնք առնելով ոտք կ'ելնեն և իրենց ազգութեան գրօշակը ազգայ աւջև կ'պարզեն։

Բայց շատ մը չդատապարտենք հայերը։ Պատմութեան ուսմունքը գէնց առնելու համար մի քանի պատճառներ կրնան

ունենալ։ Նախ՝ կարելի է որ, ըստ սովորութեան բունաւորներու՝ նոյն ուսմունքը արգիլեալ է այս սարսափներու։ Բ. կարելի է որ աշխարհային իրայ և վայելչութեանց անզգայացեն հայք ու միայն երկնային փառաց հոգի կուտան։ Գ. կարելի է, ոչ ժամանակ և ոչ ախորժակ ունին իրենց եսին և հեռուն նայելու այլ թշուառութեան և չքաւորութեան ձանձրանան տակ աճառապարել՝ չոր հայի կտոր մը կ'զոհեն ամենքան որ սովամահ չկորնչին։ Դ. Կամ ընդ հակառակն՝ այսքան զրաղած կրնան լինել օսկի օսկիի վրայ դիզելով՝ որ գայն միայն իբր Աստուած պաշտել ու հայրենասիրութիւն և ազատութիւն իբրև տգայական երազ անգոսնել։ Ե. Ազգի մէջ տեսակ մը փիլիսոփայ ազգի տեղ կրնան անցնիլ որ ամեն աղգութիւն, ամեն կրօն, ամեն երկիր անխտիր և հաւասար դատելով՝ պէտք չեն զգար իրենց յատուկ գատնութեան և համոզման նշաններուը յայտնել հրապարակաւ, այլ ամենուն և մինչև սատանային հետ եղբայր կ'լինին որ կեանց կամուրջէն անվտանգ անգին անցնին։ Զ. Ամուսնամոնաւոնդ ըսելու որ հայերը կարելի է կարծեն թէ՝ ինչպէս աղքատը հարուստին, տգիտութիւնը իրօք կ'ծառայեն, նոյնպէս բնական է որ տարտկը ազատին տարը ծղայ և իր շղթան լղէ յատեանն։

Ընդհանուր օրէնք մկը պիտի նկարագրես լինի որ սոյն պատճառներէն մրը աւելի կ'ազդէ և անոնց պատմական անգիտութիւնը կ'ճարակէ, սակայն այժմէն սա կարծիքս կ'յայտնեմ որ հայք մինչ անբնական իմաստութեան, ձոխութեան և հանճարի աւերը գանուելն, գարձեալ միշտ գերի և միշտ թշուառ պիտի ապրին և իրենց ամեն գանձը մի ժամու մէջ կրնայ մոխիր գառնալ, եթէ ազգային միութեան յուսով իրենց հոգին չվառեն։

ՆԱՄԱՆ ՅԳ

ՆԱԼՍՈՆ ԱՌ ՎՈՒՏ

Վ. Պ[illegible] . . .

Բարեկամ, ակն յայտնի կ'երևի որ հիմա հայերը մի Վաղարշակ Պարթևի թևին տակ չեն ապրիր, կամ Սմբատ Բագրատունի չունին որ գոնե բունի իրենց նախկին պատմութիւնը սորվին և բնիկ արժէքնին ճանչնան: Օտարական մը հայկազանց ծնունդը գաւ, օտարականք Հայաստանի աւերակները կ'խուզարկեն և Արարատայ սարերը կ'չափեն, և ո՞ր օտարականը արդեօք անոր ընչաւոր ձայորդոց վերջը պիտի գուշակէ: Չէ, չէ: Հայը բնաւ չէ փոխուած, մինչև հիմա իր նախահարց բոլոր պակասութիւնները միայն պինդ բռնած կեցած է, միշտ կ'սպասէ որ օտարը երթայ իր հին պետնաթաղ դանձերը փորէ հանէ առջևը թափէ: Վասն զի ինք ալըմբը քերելու ժամանակ չունի ու միևնոյն իր հողը և խնամքը քսակը տեղին քարով լեցընելու տուած է:

Բայց եկու նայէ որ ամէն Թագաւոր Վաղարշակ, ամէն Հրէայ Բագրատունի, ամէն Գերմանացի Հումպօլտ, ամէն Անգլիացի Համիլդն, ամէն Գաղղիացի Տիւլօրիէը չեն: Հապա կրնան գտնուիլ և այնպիսի հայատեաց օտարներ որ անխնայ գրպարտեն, մրոտեն և խորտակեն զհայը և անոր սրբազան բաները ծաղրեն ու գարձեալ անպատասխան և անպատիժ ձնան և իրենց ամբաստանութիւնները բերնէ բերան իբրև ճշմարտութիւն պարտին: Օտար էին Ճէնկիս Խան ու Շահ-Աբաս որ Հայոց անցեալը թաղելէն ետև՝ անոնց ապագային ևս քանդել ջանացին: Օտար էին անոնք որ զՀայս երբեմն իբրև արիւնեան, երբեմն իբրև նենտորական և երբեմն իբրև հրապաշտ ճանչցուցին քաղաքակիրթ Եւրոպայի: Օտար են և հիմա այն նրբամիտ և կիրթ բռնակալները որ ձայն ձուն չհանած՝ ամրողջ ազգը կուլ կ'տան . . . . . քաղաքավարութեամբ: Իսկ և ես օտարս որ Հայոց ինչ լինելը իրենց պատմութենէն փոքր ինչ գիտեմ, չզլտնալով անոնց վրայ ծուռ դատած և վար զարկած բաներս, անոնց արդի լուսթեան և դանդաղութեան պարտաւոր եմ:

Ուստի ուր գտնեմ ես քաջալերն և վերհանձն Վաղարշակը որ Հայոց օտարասէր գահը շատ հեշտիւ երնելէն ետև հոգ ընէ և Մար-Աբաս Կատինան նինուէի դիւանը զրկէ և անկէց իր նուաճած ազգին պատմութիւնը հանել տայ: Ինչ եջեսով պիտի երևար Հայանուն տոհմը աշխարհիս առջև՝ բայց եթէ կովկասեան անձանաչ, անկոթ և անծայր ցեղերու պէս, եթէ նոյն պարթևը չլիներ:

Վաղարշակ, թէև յաղթող՝ նաև քաղաքագէտ մարդ էր: Իբրև յաղթող՝ իր գոռոզութեան չէր թողուր որ վատ ազնց գահը նստած սեպուի, իբրև քաղաքագէտ՝ իր բանին ձեռք չէր տար որ նոր տիրած աշխարհին բնութիւնը, բարքը և յօժարութիւնները չհասկըցած՝ նոր կարգադրութիւններ հաստատէ և պէս պէս իշխանական և պատերազմական գործոց ձեռնարկէ, այլ իր գլխաւոր նպատակն էր Հայանալ ու Հայկազեան պատմութեան գիտութեամբը Հայաստանի որդւոց սրտին իշխել և անոնց տոհմային արիութիւնը, որ Մեծն Ալէքսանդրի անկարդ յաջորդաց ներքև գրեթէ նուաղեր էր, արծարծէ անոնց նախնեաց քաջագործութեանց յիշատակաւ զոր արձանիներու վրայ դրոշմել տուաւ:

Թերևս առարկես՝ թէ ինչպէս Վաղարշակ կարող էր Հայոց սովորութիւնները ու երկրին կարգ կանոնը յարգել և վերականգնել երբոր արդէն այնպիսի բաներ չկային Հոն: Ըստ որում ինք եղբօրը կ'գրէ —«Ոչ կարգ ինչ լեալ աստ յայսմհ . . . . այլ խառն 'ի խառն ամենայն և վայրենի:»

Իմ պատասխանս սա է թէ՝ նոյն անկարգութիւնը պատահական էր։ Երբ Արշակ Հայաստան կոխեց, այս երկիրը երկու հարիւր տարիի չափ անտէր և անկանոն վիճակի մէջ ընկած էր։ Խիկ առաջ երկու հազար տարիի չափ աւազ հայկազեան իշխանութիւնը անպատճառ առանց օրինաց չէր կարող քալել։ Աղեքսանդրի յաջորդները չարաչար նեղեր աւերեր էին երկիրը։ Ուստի միշտ խռովութիւնը պակաս չէր և՛ի հարկէ տեղացի անզուսպ իշխաններ մակեդոնացի կուսակալաց հետ անդադար՝ և՛ վեց գալով՝ ոչ քաղաքական և ոչ ընկերական կարգաց նշմարանքը կ՛երևար և ոչ հայկազանց ցեղին հաստատած նախնարարական առանց հետքը՝ որոցմէ ոմանք վտանգէ հեռի վայրեր գացին, և ոմանք իրենց ահպելի բերդերը քաշուած՝ իւրաքանչիւրը անկախ և ինքնագլուխ իրեն մարդիկը կ՛վարէր։ Դարձեալ կուսակալաց փոփոխութեամբ կամ անկմանէն երկրին այլ և այլ տեղական կանոնները կ՛փոխուէին կամ կ՛վերահաստատէին։ Վաղարշակ այս խառնակութեան առեն չէր կարող Հայաստանի աւազանին յանկէ անուանէ առաջ կոչել և զանոնք իրենց նախկին արտօնութեանց մէջ հաստատելով՝ իրեն տէրութեան թև և թիկունք ընել, որպէս զի անոնց հզօր ազդեցութեամբը իր նոր պետութիւնը աւելի ամրանայ և գահը իր տոհմին անխախտ և ապահով ժառանգութիւն մնայ։ Այս դժուարութիւնը բառնալու մինակ միջոց Հայաստանի հին պատմութիւնը գտնել և անոր մեծամեծ մարդիկը առորմէ որոշել էր։

Ուրեմն պնդել թէ Վաղարշակ իսկ և իսկ լեռնաբնակ և վայրենի գտաւ Հայերը, անոր պէս բարձր գահու վերէն գտնել է զանոնք, կամ այնպիսի բաղդատութեան վերին կէտ մ՛ընտրել, որուն նկատմամբ որ և է յառաջադէմ ազգ՝ քաղաքակրթութեան կողմէ ստորին աստիճանի վրայ կ՛երևի։ Անշուշտ գրաւոր օրէնք, կանոնաւոր տեսչութիւն թերևս չգտնուեր այն ժամանակ Հայաստան, մինչդեռ Եգիպտոսի և Քաղդէացոց մէջ արուեստք, դիտութիւնք աւելի ծաղկած և քաղաքական կառավարութեան ձևը աւելի կերպաւոր էին։ Բայց և այնպէս ան Հայաստակ Ասիոյ ազգաց երեւելի և ազգու օրէնքը տուին էր, որու վրայ հիմնեալ էին մի շատ առանդական անիրաւ արտօնութիւններ։ Այն արտօնութիւնները ժամանակաւ սովորական կ՛դառնան, և անոնց համաձայն օրէնքներ կ՛շինուին և արդարութեան դէմ կ՛առնուն։ Ուստի հասա և պարզ ժողովուրդներ խառն օրինաց կարօտ չէին։ Բնական անսիր կանոններ՝ որ սովորութենէն մի մասը կ՛կազմէին, բաւական էին։

Գիտես արդէն որ մինչև հիմա Անգլիա անդամ միօրինակ և կանոնաւոր օրինագիրք մը չունենալէն զատ, մէն մի գաւառ իր բնական կամ ազանդական օրինաց համաձայն կը վճռէ մի շատ խնդիրներ և գատեր և որոց ժողովուրդը յաժարակամ կ՛հպատակի։ Ասկէ զատ՝ եթէ յանկարծ այսօր այնպիսի անակնկալ պատահար մը պատահի, որով մեր բոլոր հակասական և անհատնում օրինագրութիւնները լիովին մոխիր կարին, դարձեալ ժողովուրդ և կառավարութիւն՝ դժուարութիւն չեն քաշեր առջի կարգով գնալու։ Վասն զի մինչդեռ ուրիշ ազգաց համար իրենց յատուկ օրինագիտութիւնը մանաւոր ուսմունք՝ օրինաց ներկայութիւնը անհրաժեշտ պարտ է, առ մեզ՝ մերինները սովորութիւն է դարձած և անոնց ոգին մեր բարուց վրայ դրոշմուած։ Ուսոսի (խօսքը մեր մէջ մնայ) իրօք մեր բաբիլոնական օրէնսնեերը ուրիշ բանի չեն ծառայեր, բայց եթէ մինակ Լծտօնի մէջ հարիւր հազարէն աւելի փաստաբան անուցանել ընդունայն, և անոնց ձարտարամտութիւնը դրդռել որ ամենաչնչին դատաստանի առթիւ անկուշտ ոզրուկի պէս մեր քսակները ծծեն ու անխնայ պարպեն։

ՆԱՄԱՅ ՁԳ

ԼԻԼԻ ԵՒ ՆԵԼՍՕՆ

ԼՕՌՍԸ . . .

Ինձմէ զատ և կոյր սէրս պրել տուաւ ինձ իմ առաջին նահանգակս, այս երկաղ գլուխս պիտի լինի վերջինս: Ի՛նչ որ Հայր, մայր, Աստուած անգամ անկարող էին կատարել. քակել իմ առջեւ ուխտս, դու, դու առաքինիդ Նելսօն, գլուխս տարիր, դու իմ սիրոյս վրայ պաղ ջուր թափեցիր. . . . այո՛ . . . ալ չեմ կարող սիրել քեզ. . . . : Ո՛հ, քանի՜ տխուր, քանի՜սս արի ես դու, Նելսօն. անմեղ և անաւատա սիրտս տակ և խորտակել կարողացար. դու յանդգնեցար իմ կոյս և մեկ հատիկ զգայուն զրպարտել և նեղգոլեհան մրոյ մրոտել. չէ՛, չէ՛, դու բնաւ չես զգացեր անոր անկեղծութիւնը և ժեժութիւնը: Ուստի մի յուսար երբեք որ Լիլին այնքան վար իջնէ մինչև քու նանիր և անարժան կասկածդ փարատելու համար բերան բանայ: Իմ վարմունքս ինքն ինքնին խօսուն ջատագով մ'է, և զանի արդարացնելու համար ոչ փորձ կ'փնտռեմ և ոչ ապացոյց:

Խիղճս հանգարտ է . . . միայն մեղաւորն է որ իր ջատագովութիւնը կ'ընէ. և միայն կոյրն է որ արևուն լոյսը կ'ուրանայ:

Ես իմ միամտութեանս չափը և անխոհեմ սիրոյս պատիժը գտայ . . . Ամենագէտին դատաստանին և քու խղճիդ կ'թողում քեզ, և յուսամ. . . պիտի ջանամ որ քեզ մոռնամ:

Ց. Գ. Մի՛միայն շնորհ մը պիտի խնդրեմ: Թող որ

մանրանկար պատկերդ քովս պահեմ, նա դռնէ բնապրին պէս անհատատարիմ չէ, ու մէկ որ երբեմն իմ անչէզ կարօտս կ'ամոքէր, հիմա տխուրագուժի մը սև սիրտը ինձ չխշեցնելով թերևս պատճառած ցաւը բժշկէ:

ՆԱՄԱՅ ՁԴ

ՆԵԼՍՕՆԷ ԱՒԱՐ ԼԻԼԻ

Ց. Պալթա . . .

Տէր Աստուած, միթէ անօրէն է այս գիրը որ շանթի պէս գլխիս իջաւ և գիս ապշեցուց, ինչ զգամ և ինչ խորհիմ: Ձեռքս կ'դողդողայ, աչքերս կ'մթնանան և չորս կողմս սև սև ամպեր կ'պատրան: Տարակուսանաց վիհէ մը ապառաժելու մօտ անոր հրեշտակային շունչը յօդնութիւնն կանչեցին, և ահա նոյն շունչը գիս առելի խորտնկ անդունդի մը մէջ թաւալգլոր նետեց:

Թող Լիլի, թող ինամ ես նոյն վիհին մէջ, թաղէ իմ գլխիս քու բարկութեանդ հուրը, մոխիր գիս, հող չէ, քնաւ չեմ դանդաղիր, սակայն լաւ միա գիր որ անիրաւ ես, որ առաջին քնաւորութեանդ և անաշառութեանդ համեմատ չես վարուիր ինձի հետ. որ այսուհետև անմեղ չես իմ աչքիս առջև և գիս տարտարոս կ'դատապարտես:

Կար ժամանակ մ'երբ մեր խօսքը երկու չէր լիներ. վէմ և կտսկած մեր սիրոյ ծիծաղ հորիզոնը չէին ամպռոտեր, սէրն իր անուշ և համբոյր շնչովն ամէն մռայլ կ'ցրուէր, իսկ եթէ երբեք կծու բառ մը, գառն արտասուք մը լեզուս իս

ծայրը գար, իսկոյն քու սիրուն ժպիտդ վստահութեան և ապահովութեան պեփիւռ բուրելով՝ անպատեհ տրտունջը յօդս կ'վանէր։ ո՛ր են հիմա այն օրերը, միթէ երազական և ստուտ աշխարհ մ'էր այն . . . սէրը քանի հինուայ կ'զատէ և կ'պարզի, կ'ըսեն. ուրեմն ինչո՞ւ համար մերինը կ'պղտորի և կ'այլայլի։ Վասն զի . . . բայց ինչ հարկ կայ անեղեալով սիրիլ երբ ահա ներկան է ահեղ, ինչ պէտք է նոր և անախորժ բաներ երևան հանել ու սիրտդ աւելի վշտացնել, քանի որ հիմա նման մօրդ՝ և դու դիմակ մը հագեր ես . . . ինչո՞ւ խօսիմ իմ վերայ, երբ դու ուրիշի հետ խօսելու և միխիթարուելու եռանդով՝ պիս ժամ առաջ մոռնալու կ'շտապես։

Մի, մի՛ շտապիր, Ելլի, չեմ և չպիտի լինիմ քեզ խոչընդոտ։ Ազատ ես դու, ասպարէզը բաց և ապատնիդ պայծառ են քու առջեդ։ Մայրդ, իշխանապուն նշանածդ, հքեղ ու ճոխ օժիտ մը քեզ համար պաշտպան և օգնական կեցած են։ Մի արտորար, Ելլի, քանի որ հիմա երկրի կանայք՝ երջանիկ չլինելէն զատ, իրենց օրն օր կ'ընեն, նաև մանաւանդ անփոյթ եղիր ու միխիթարուէ որ այն նշանաւոր ստայօդ տոմսակը մայրդ պրելէն ետև անգամ՝ խոշոր հանդարտ պահեր ես. և միշտ այնպէս պիտի լինի եթէ այսուհետև մեծագոյն յանցանք ալ գործելու լինիս, եթէ երբեք կայ օրիորդի մը համար սիրապրուժ լինելէն աւելի ծանր մեղք մը։ Ուրախ եղիր որ կերպով մը պիս յանկարծ կ'հանես այն տաղտկնակ տոմսակիդ վրայ բացատրութիւն խնդրելուս, և վհատձնութիւն ծախելով՝ կասկածներս երեսիս զարնելուդ։ Այո՛ սրտմտութիւնդ վհե և արդարացի, սէրդ անբիծ և վսեմ պիտի համարէի նորէն, նորէն քու բարկութեանդ պատճառը իմ սովորական կուրութեամբս՝ ի բարին և՝ ի չարն պիտի մեկնէի, եթէ իմ կասկածներս դիւրաւար երևակայութեան և նախանձու ծնունդ լինէին, սակայն այնպէս չէ։ Արդէն իմացայի որ ահաւոր իսկութիւնը պիս խնդի պէս ըրած

է, և այն տոմսակդ զոր մէկ խօսքովդ ջրել չհաճեցար և որով իմ կասկածներս հաստատութիւն գտան, իբր հրեշտակային սիրոյս դամբանականը արդէն եղած է։

Ուրեմն մնաս բարեաւ, մեր ուխտը քակուած է. և ահա ես կ'գարձնեմ քեզ այն մատանին, զոր՝ ի նշան սիրոյ նուիրած էիր ինձ։ Ընչին և անզօր նշան, ինչ օգուտ ունիս դու երբ որ սիրտը կ'խաբէ։ Ա՛ռ, Ելլի, քու քնքուշ մատնիդ և գարձուր ինձ չէ թէ պատկերս, չէ թէ . . . այլ աւելի անդին ատանդ մը, այլ սիրտս . . . վայ ինձ, սիրտս մատնիի մը հետ փոխանակեր եմ եղեր։

Անհնարին կուրութիւն, վերջապէս կ'նայիմ որ ինչպէս նիւթապէս նոյնպէս զգայմամբ իրարմէ հեռի ենք, և այն եռաւորութիւնը այնքան հաճելի պիտի գայ ինձ որքան որ փոքր առ փոքր ակսեր էիր բարձր, հարուստ և ազնուական վիճակիդ կարևորութիւնը զգալ, վրաս բռնանալ և անկախութեանս սպառնալ . . . . Էհ, հեռի չինէ այն սէրը և օրիորդը որ իր ոսկիին ծանրութեամբը կշիռ կ'ուզէ ստանալ և իմ աղաստութիւնս գնել, և փառք որ անոր առկախուս շղթաներէն կ'ազատիմ։

Ց. Գ. Եւ ես շնորհ մ'ունիմ խնդրելու։ Ետ զրկած մատնիս ուրիշի չշնորհես իբր նուէր։ Այն քու նուէրդ կրնայ զուրկը փոքձանքի տանիլ։

ՆԱՄԱՆ ՅԵ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՀՈՒՏ

Կ. Պոլիս . . .

«Չի կամ մեռցուք . . . եւ կամ զյաջողութիւն մատանց մերոց ՚ի նա (Բաբելայ) ցուցեալ. . . մեր եղիցուք յաղթութիւն (ազատութիւն) ստացեալք»:
Խորէն. Էջ ԺԳ.

Բաբելեամ, հին ժամանակ հարկը, սուրը, կրօնը և տիրասիրութիւնը շատ ու շատ պետութիւններ կանգնեցին աշխարհիս երեսը, սակայն ուր ուրեք տեսնուած բան է որ մեծ ժողովրդեան մը ծննդեան և ծագման սկզբունքը ազատութեան սէրն եղած լինի: Ահա սոյն սկզբան վերայ հիմնեալ է հայկական ազգութեան էութիւնը:

Արդարև գեղապանծ տեսարան է տեսնել ազգապետ մը՝ որ անկախութեան դրօշակին ՚ի ձեռին թողու եւրին քաղաք, չէն ու փառք, անցնի ընտանեօք սար ու ձոր և դայ Արարատայ սառոյցոտը կանգ առնու, լատազոյն համարելով սառնամանեաց օդը ծծել քան թէ Բելայ լծին ներքև հեծեծել: Այսպիսի փառաւոր սկզբնաւորութիւն մը փառաւորապոյն վախճանի արժանի էր ու գիտցին այնպես լմն կ՚երևի հետուէն որ Հայկական տոհմին մի բնական յատկութիւնն է զարձեր ազատասիրութիւնը, ըստ որում նոյնին պարտաւոր է իր ազգին գոյութիւնը:

Հայկ ազատասիրութիւնը գիտութեամբ և ուսմամբ չստացաւ՝ այլ բնութենէ ուսաւ, այլ իր հոգւոյն մէջ գտաւ, այլ իր մարդկային իրաւանց մէջ տեսաւ: Նա զգայ իր ձննդա-

կան իրաւունքը, որ ոտից կոխան լինելու մօտ էր, նա չիշեց իր նախնեաց պարզ և անկախ կենսավարութիւնը որ արդէն ապականելու վտանգին կ՚դիմէր, և երբոր ինքը վսեմ մարդասիրութենէ վառեալ՝ փորձ փորձեց, բայց անկարող եղաւ Բաբելոնի ժողովուրդը քաջ որսորդին բռնութենէ ազատել, առանձին դլուխ քաշեց և ապականութեան և անօրէնութեանց աշխարհէն հեռացաւ: Սկիզբ գէշ ըրաւ: Խոբենացին ապստամբեցաւ, կ՚ըսէ, որով թերևս կ՚նշանակէ թէ գտնուած երկրին օրինաց անհնազանդութիւն ցոյց և հետևապէս դատապարտելի ընթացք մը բռնեց: Սակայն ըստ իս ոչ միայն մարդասիրել՝ այլ և աստուածահաճոյ գործ գործեց: Վասն զի պետութեան մը մէջ վեհապետ մ՚որ իբրև Աստուած կամի պաշտուիլ, Աստուծոյ դէմ ապստամբ և մարդկանց առջև եղեռնագործ՝ և իբր այն՝ մահուան արժանի լինելէն զատ, երբ նոյն միջոցին մարդ մը կամ ժողովուրդ մ՚որ իր իրաւանց և կենաց ապահովութիւն և օրինական երաշխաւորութիւն չգտնէր նոյն վեհապետին տակ, ՚ի քնէ իրեն շնորհուած ապստամբութիւնը գործածած կ՚լինի եթէ նոյն բռնաւորին պահանջմանց դէմ բողոք բառնայ, և ինքզինքը սրով պաշտպանէ. իսկ եթէ սուրը չգործէր՝ այն ընկերական վիճակէն քակուի: Ահա այս ըրաւ Հայկ, որու սիրտը վառող անշէջ հուրը իր բնական ձրից և բազկին այնպիսի ոյժ և կորով ազդեց, որ կարող եղաւ զՖիտանեանը յերկիր կործանել շնչասպառ. «կամ մեռցուք և կամ ազատ կացցուք» այս սկզբան դէմ որ և է բռնակալի վհատնափակ բանակը թէ ոչ այսօր՝ օրին մէկը անշուշտ պիտի խորտակի:

Հայկ իր վսեմ ազդակէն ձեռնարկութեան արդէն սկսեր էր: Արարատայ աշխարհը՝ որ իր անուամբը ծանուցաւ պատմութեան՝ բոլորովին անբնակ չէր: Սկիւնեաց վայրենի ցեղը այն կողմերը կ՚տիրապետէր: Մարդկային ազգի առաջին օթևանը կ՚համարին հայք այն աշխարհը, սակայն չեն կա-

բաղ բացատրել թէ ինչո՞ւ երկիրը ամայի և բնիկները չիր ու ցան և պատնաբարոյ մնացած լինին մինչև Հայկայ արշաւանաց ժամանակը, մինչդեռ Բաբելոն քաղաքը՝ որ Հայաստանի նկատմամբ նորաբնակ կ'համարին, ոչ միայն բազմամարդ՝ այլ և արհեստիք և մեծակառոյց շինքերով զարդացած ծաղկած էր: Նոյնպէս տղայօրէն յաւիտեան կ'պարծենան (առանց մարդկօրէն մնինելու) որ այս Հայերէն լեզուս թէ Նոյայ և թէ Հայկայ խօսածն է, միայն թէ ենթադրենք որ երկնային մանաւանդ շնորհիւ մը Հայկայ լեզուն Աշտարակին անմիկին խառնակութենէ անխառնակ և անպատուհաս մնացեր էր . . . :

Բայց իմ նիւթիս պառնամ. հասատաքազուկ գիւցազնը իր աշխարհակալ իր որդւոց և թոռանց մէջ կ'բաժնէ Արարատայ նահանգը, փոքր առ փոքր և հեշտիւ բնիկները նաւաճելով: Հոս ծովակի մօտ, անդին մի հովտի խորը, ասդիս բլրի մը ստորոտը տակաւ առ տակաւ տուներ, գիւղեր և աւաններ կ'շինուին: Հայկաշէն, Արագածոտ, Արմաւիր, Սիսական ու Վեդամի երևան կ'նշնեն նոյն լեռնոտ, քարուտ բայց գեղեցկագիր աշխարհին մէջ: Իւրաքանչիւր նահապետ իր շինութեան քարը կ'կանգնէ իբրև ազդարար ապագայ համաստեղ սերնդոց որ նոյն աշխարհաշինութեան գործը շարունակեն: Եւ արդարև Հայկազեան պետերը ոչ միայն իբրեն ներկայ որդւոցը՝ այլ և նախատեսութեամբ իրենց յաջորդացը համար ալ հիմնարկու թիւններ կ'սկսէին և կ'հաստատէին:

Տանտիրական և նահապետական իշխանութիւնը Հայկազանց առաջին վարչական ձևը եղած է՝ մինչև Արայ: Հայկ իր ազատասէր ղեկամանց՝ յաղթութիւններ տանելէ ետև ալ, հաւատարիմ մնալով Թոզոց որ մէն մի ցեղապետ իր գերդաստանը ու տոհմը պարզօրէն և անկախօրէն հսկէ, հոգածէ և իր երիտասարդութեան ներքև պահպանէ: Գրեթէ համայն նախնի բնակերութիւնք այս դրութիւնը ընտրած են,

որ յարմար էր իրենց պարզասէր և անգործ բարոյ, տատկատպետ կենաց և տահմանատոր փափաքանաց. թէև կան շատ մը բանասէրներ որ հակառակը կ'պնդեն և կ'ուզեն որ միապետական կառավարութեան սկիզբը նախնի ժողովրդոց պատկանի, և այս՝ ըստ իս՝ ոչ թէ արդար և անմեղ բարոյ գործ է, այլ մոլեգին կրից, չարահնար մտաց և ապականակիր սովորութեանց արժանի հրէշ մը: Սակայն որչափ որ մէն մի նահապետ իր առանձին առանգութիւնը, հողն ու գաստակերտը և զանոնք պաշտպանելու միջոցները փոքր՝ի շատե ունէր, այս իրաւ է որ իրմէ վեր քաղաքական գլուխ կ'ճանչնար ուզուկի Հայկայ զարմէն իշխող նահապետը, որ ոչ միայն ժառանգական իրաւամբ այլ և մեծագոյն ազդեցութեամբը և զօրութեամբը հայրենական ձանր խնդրոց և պարագայից ատեն կարող էր վճիռ արձակել, հրաման հանել, ընդհանուր օրէնք հաստատել. իսկ միւս առնտեղները իրարու հետ անսիր դաշակից կապուած էին, հարկին և գիպուածոց բերմանց նայելով: Այնպէս որ եթէ մի կողմանէ բացարձակ իշխանութիւն ունէին իրենց տեպհական երկրին և կալուածոց մէջ՝ մանաւանդ կարգագրութիւններ անօրինել, տատանորդ պահանջել և զօրաժողով ընել, միւս կողմանէ Հայրենի ընդհանուր հոգերուն պաշտպանութեան և բնակիչներուն բարօրութեան նպատակաւ արտաքին ոստիայց դէմ իրարու նիւթապէս օգնելու պարտաւոր էին:

Այս էր ուրեմն առաջին մը պարզ հասարակապետութիւն, որ ոչ աստուային դրութեան և ոչ ռամկավարութեան կը նմանէր: Անշուշտ ատոր ընդհանուր ատեանը խիստ ձանր պարագայից ատեն մեհեաններու մէջ կամ անտառներու հովանիին տակ կ'կազմուէր, և քանի որ նեղ շրջանի մը մէջ, այս է, Արարատայ չորս կողմը մնայ՝ իր հանգարտութիւնը, անկախութիւնը և ապահովութիւնը վայելեց: Սակայն երբ հարկը և փառասիրութիւնը պահանջեցին որ Արամ և Տիգրան Հայաստանի սահմանները ընդարձակեն, սոյն ընդարձա-

կութեան պատասխանող կեդրոնական ազգու և յարատև քաղաքական իշխանութիւն մ'ևս չհաստատուելով տերութիւնը թէև տարածութիւն ստացաւ, բայց զօրութիւն և հաւասարութիւն կորսյս: Ասկէ զատ օտար իշխանաց եկն ու մուտը տկարութեան և տարտնեութեան վատ զատ որոմներ եղան, ինչպէս որ վերջը պիտի տեսնենք:

Հին Հայոց բարքն ու վարքը գժուարին չէ փոքր 'ի շատէ սահմանել: Ընդհանրապէս ժուժկալութիւնը, անասիրութիւնը անոնց գլխաւոր առաքինութիւններն էին, որոնք չէ թէ մարդկային օրինաց արգիլքը, չէ թէ ուսման և կրթութեան արգասիքը, այլ բնութենեն էին: Այս բնական չափաւորութիւնը, խաղաղասիրութիւնը և ինքնակերպնութիւնը, որ մի տեսակ ինքնասիրութիւն գարձած վերջը, Հայկեան տոհմը շքեղ գործերէ հեռի պահեցին, իրենց մէջ անգամ հաղորդակցելու եռանդն ու իղձը, որ բնական է ընկերական վիճակին, անմշակ և մարած թողին, և հետևարար ազգութեան տեսիլը կամ զգայմունքը շատ ուշ արթնցաւ անոնց սրտին մէջ: Բնական է և վայրենի մարդուն իր խորոչը կամ ծնած վայրը սիրել և բնակիլ, սակայն այս քնածին ազգմունքը Հայրենասիրութիւն չէ: Հայրենասիրութիւնը վսեմագոյն իղձ և թռիչք ունի որ ամեն հայրենական վիշտ ու խնդութիւն, վշտա և օգուտ իր սեպհական վիշտը և խնդութիւնը կ'համարէ, հայրենի երկրի փառաց և թշուառութեան մասնակից կ'լինի և իր անձնանձիր թևերը անգուլ հայրենեաց ամեն սահմանն, ամեն խորշն ու ամեն անկիւնը անձկանօք կը տարածէ:

Հայկազունք եապէս պատերազմասէր ժողովուրդ մը չէին, թէև իրենց քաջ գինուորներ ստեպ իրենց կարուսեալ անկախութեան տէր եղած են: Իրենց հողը կոխող հէնը, անպնին մնողգազը, հանդստութիւնին և պարկեշտին յափշտակող աստատակը անվրէպ որս և Ճարակ կ'լինային իրենց արիասրտութեան և գինուց, բայց բնաւին աշխարհա-

կալութեան ու յափշտակութեան ազգով ուրիշներուն կալուածքը և իրաւունքը ոտնակոխ ընելու յօժարութիւն կամ միտում չէ տեսնուած նոյն նորակազմ ազգին մէջ: Ճանչէին մարզարան, Ոլիմպիական խաղեր ու կրկէս, որով Սպարտացի և Աթենացի պատանիք անվեհեր պիւգազուններ և Հռոմայեցի գինուորը պիշատակ գալան կ'պատնային: Հայոց մարզարանն Մասեաց ապառաժուտ հրապարակն ու լեռներն էին: Մարմնավարժութիւն, ձիարշաւ, նետաձգութիւն, յորում կարի Ճարտար էին Հայք, դաստիարակական պատրաստ չէին համարեր, այլ մի բնական և հարկաւոր պիտոյք: Հայ կայտառ պատանին սար ու փոս ինկած օրէն սահպուած եր սառնամանեաց, հովի, փոթորիկի, վայրի կենդանեաց և շատ անգամ իր որսորդութեան ատեն եւրզակաց գէմ կռուելով և հետևակ կամ Թեթևաշարժ ձիոյզը հեծած, աղեղն 'ի բազկին, գաշոյնը մէջքը պիմակրաւ գիմել սէս սէս վտանգներու գէմ, որոնք 'ի մանկութենէ անտի իրեն ընտանի խաղերը և զբօսանքը կ'կազմէին: Իսկ մինչեռ այս խստամբեր կրթութեամբ մարմինք կորով և արագաշարժութիւն կ'ստանար, հոգին անկախութեան կրակով կ'եռար:

Ուստի գինուորական մասնաւոր կարգ չկար հոն, այլ ամեն մարդ 'ի բուռ գինուոր էր երբ հարկը պահանջէր: Բայց ինչպէս որ ժառանգական արուեստներ նոր իրական բաներ կ'համարուէին հին աշխարհիս մէջ, նոյնպէս 'ի Հայս մի շատ բարձր պաշտօններէ զատ պատերազմի գնալու պանծալի պաշտօնը, ինչպէս և մեր մէջ, միայն ազատ արանց, այս է, ազնուական երիտասարդաց կ'պատկանէր. և Հայկ, նոյնպէս ասոր յաջորդները, միշտ թշնամին իրենց քովանէ և սահմանից մարդկան ընտիր ընտիր գնդով գիմառորելու կ'երթային: Առն ու աւարը ընդհանուր մէջ կ'բաժնէին որ փոքր գրգիռ չէր լիներ պատերազմական եռանդը վառ պահելու: Իսկ եթէ նոր երկիր և քաղաք ձեռք ձգուէր, նահապետը մը տղուն կամ թոռան կ'շնորհուէր, որով գատ նախարա-

բուլթին, կամ լաւ ևս ըսեմ, նահապետական իշխանութեան նոր ձիւղը կ'աւելնար: Բնաւ չյիշուիր որ հայք Լիկուրղոս, Նէնոս և Նիւմա մը ունեցած լինին, ոչ միայն այս առաջի ժամանակները այլ և վերջին:

Ուստի անհնար է որոշակի ըսել թէ ինչ օրինաց և պաշտամանց կ'հետևէին: Կրնամ երևակայել նոր ժողովրդեան մ'առջի բերան խառն և գրաւոր օրինաց հարկաւորութիւնը չզլալը, քանի որ խառն յարաբերութիւններ չունենալով հայրական տեսչութեան ու բնական օրինաց և խղճի ազդմանց կ'հնազանդի ու գրեթէ տեսակ մը բուսական կեանք կը վարէ. սակայն չեմ կարող երևակայել ժողովուրդ մ'առանց տեսակ մը գրական կրօնի: Ուստի այս կարծիքս ունիմ որ 'ի սկզբան հայք մի Աստուած կ'պաշտէին: Վասն զի Թեղայ ինքնատուր աստուածութեան ծունր կրկնել չուզող և անոր բռնութենէ խոյս տուող մարդիկ Հայաստան գալով' արարածոց պաշտօն չէին կարող տանիլ: Սակայն գոհերկը երկայն ատեն աներևոյթ Աստուած մը չկրնար ըմբռնել, այլ շօշափելի ու իր թանձր մտաց և անհեթեթ կրից յարմար և շինծու եաներ կ'աստուածացնէ և անոր խունկ, զոհ և երկրպագութիւն կ'մատուցանէ: Հայք աս իրենց պաշտամանց մաքրութիւնը և զուտ թիւնը կորուսին և սկսան մեհեաններ կանգնել, ատրուշաններ շինել և արեգական ու մոլորակաց մատաղ և պաստարագ նուիրել: Անկէս որ երբ Շամիրամ Արայի մահուան վրայ հայկազն զօրաց վրէժխնդրութեան բորբոքը և զայրոյթը մարել ուզեց, դիք զանի լզելով պիտի կենդանացնեն ըսելուն՝ հայկական զօրաց կատաղութեան փրփուրը գիջուց: Ահա իրենց հատաւը գիրենք պաշարեց, գերեց և բարոյապէս սպաննեց: Քանի մեծ է և նոյնակշռուստ կամ անստուտ պատմութեան ազդեցութիւնը ոմանց վրայ: Իսկ քանի որ հայերը օտարաց հետ իրենց հաղորդակցութիւնը աւելցուցին՝ անոնց կրօնական աղդեցութենանց ևս ենթակայ եղան ու հետզհետե զրադաշտական և յունա-

կան աղանդից հետ շաղեցին և իրենց յատուկ մնապաշտութիւնները: Այս մուրացկանութիւնը և օտարին թէ լաւն և թէ վատթարը օրինակելու սովորութիւնը իրենց քաղաքական վիճակին մեծ տկարութեան և այլափոխութեան պատճառ եղաւ: Վասն զի կրօնը հին յառաջադէմ ազգերու մէջ ազգայնութեան և ատերութեան մի բարոյական հզօր նեցուկն և արիական գործոց շարժառիթն էր և իւրաքանչիւր կառավարութիւն իր ժողովրդեան ոգւոյն և բարուց յարմար պաշտօնական կրօն մը, յատուկ ծէս և պատգամ կ'ընտրէր և կ'կարգէր: Մինակ Արշակունեաց օրով կրօնը Արամազդայ և մանաւանդ Անահտայ տիրապետութեամբը մի յատուկ ազգային կերպարանք առաւ:

Արամ իր ժամանակակից նահապետներէն աւելի ճարտար և յաջողակ գտնուելով՝ կարծես թէ Հայաստանի այլ և այլ նախարարական բաժանմանց մէջ միակցութեան կապ մը հաստատեց: Հին առեն մարտական յաջողութիւն և հնարագիտութեամբ մ'ամէն ապստամբ գլուխ և անզուսպ հոգի կրնային շլացընել և հրապուրել: Նախարարք ճիկ չհանեցին անոր քաղաքականութեան դէմ: Նա եղաւ գրեթէ Հայկազնեց երկրորդ հարսղաս հիմնագիրը, որ կրկին անգամ զանազան իր անուամբը մկրտեց, և մինչեւ հայոց աշխարհը լուիկ և անխռով կ'ապրէր և կը յառաջանար, Արամ եկաւ ու շրջակայ վայրագ ժողովրդոց իմացուց որ ինքն է անոր տիրապետը և թէ անպատուհաս չմնար զայն առըշարկողը:

Սակայն Արամ որչափ որ միապետական ճամբայ բռնեց և արքայական փառք և պատիւ լիապէս ստացաւ, իր երկրին քաղաքական կացութիւնը իր նպատակին չյարմարցուց: Նա մանաւանդ Հայաստանի թշնամիքը և մանր մունր իշխանաց նախանձն զրգռեց: Ուստի՝ հայոց նորածին մեծութիւնն իր մահուամբը լինալէն զատ՝ անոնց ընկերական վիճակը վտանգի մէջ ինկաւ: Եւ ահա Շամիրամ որ աւելի աշխարհակալուհի էր, քան թէ քաղաքական, հարուածով մը նուաճեց ու

հաղիատու ըրաւ Հայաստանը, բնիկ կամ օտար կառավարիչներ կարդեց հոն և Արայի գեղեցկութիւնն ալ ըստ իս մասամբ իւիք զրկիւ եղաւ Հայկայ պիւցանդական շէնքը կիսով կործանելու, թէպէտև իբր արևելեան գեղեցիկ սիրոյ վէպ կ'ըմբռնեմ այս դէպքը։ Վասն զի Շամիրամայ պէս քաջասիրտ կին մը չեմ հաւատար որ Արայի սիրոյն համար միայն, անոր ծծած օդը և ըմպած ջուրը ճաշակելու աենչով զինուր Հայաստան կոխեր, և վանայ ծովակին մօտ հոյակապ ամրանոց և անառիկ ամբարտակ մը շիներ։ Փառասիրութիւնը իր կէտին հասնելու համար անհամար հնար և պատրուակ կ'հնարէ ու միամիտ պատմիչը մինակ այս պատրուակը կ'տեսնէ։

Հայաստան՝ այս առաջին պարտութիւնը կրելէն յետոյ՝ ինքզինքը հաւիս հաղ դաւ, և Պարսկին օրովը նորէն հոգի և անկախութիւն ձեռք ձգեց, իրաւ, սակայն սոյն հոգին հայկական սպառ և հարազատ հոգին չէր։ Հայաստան Ասորեստանեայց գաւառ դառնալէն՝ի վեր ժողովուրդ և իշխան իրենց առաքինական հանգամանքը կորուսին և պերսեպոլեան ներքև մեզի և Թոյլ բարուց սիրական։ Նոյն միջոցին աքսորատեղի կամ ապաստանարան գարձեր էր սոյն երկիրը. ուր այլ և այլ կողմերէ փախստական իշխաններ, հայրապան արքայազուններ կ'իջևանէին և որոյմ ծագեցան Գրնեթունիք, Արծրունիք, Գնունիք և ձն ու ինքնագլուխ նախարարութիւններ կազմելով Խոռխոռունեաց, Բզնունեաց և Սիւնեաց հին և ազնիւ ցեղերը գրեթէ մոռիլ Թողին։

Պարոյր, մեր Ալֆրէտ իշխանին պէս* պերսեպոլեան լուծը թոթուեց և գլուխը Թաղաւորական Թագ դրաւ Ասորեստանի կործանման համար կիաբարայ հետ զինակից լինելուն, իրաւ, սակայն ինքը և իր Թուլամորթ յաջորդները Հայաստանի անկախութիւնը գլխովին չկրցան ապահովել։ Տիգրանին պահուած էր ոչ միայն այս կարևոր գործը կատարել, այլ մեծ և նշանաւոր յաղթանակներ տանիլ օտարաց վրայ։ Բայց գարձեալ որ և է ազգ մը արքայական հրամանատ և անոր ժամանակը միայն և յանկարծակի չէ կարող սիրաւես նորոգութիւն և վերականգնիլ. և Տիգրան ինչ զինուորականի կանոն և ներքին կարգադրութիւններ որ հաստատեց՝ հիմ և արմատ չառին, ըստ որում իր ազգային գործը շարունակող չեղաւ։ Ասկէ զատ՝ ժողովրդեան մէջ նոր օրէնքներ հաստատութիւն չեն առնուր եթէ արդէն անոնց սերմը սովորութեանց և մտայ մէջ չեն գետեղուած։ Ուստի եթէ գահը նստողը ծոյլ և անհոգ կենար, նախարարք գլուխ կը բառնային, երկպառակութեան ոգին ամեն ուրեք կ'տիրեր և ոամիկ ժողովուրդը իր նիւթական հանգստութեան համար միշտ կաղմ և պատրաստ էր ներքին կամ օտար բռնակալի մը գաւազանին առջև գլուխ ծռել։ Տիգրանին մահուանէն ետև՝ մի շատ գաւառիապորտ Թագաւորներ ծնան և Հայաստան անոնց անիշխանութեան ժամանակ խիստ ստորին վիճակի մէջ անկաւ, մինչև Վահէ, որ մեծն Աղէքսանդրի գէմ պատերազմելով իբր իր նախահօրը Հայկայ վերջին արժանի զաւակ զէն՝ի ձեռին՝ ազատութեան սիրոյն նահատակ մեռաւ։ Իսկ անկէ ետև բնիկ և եկամուտ իշխաններ՝ անիշխանութեան մէջ մնալով իրարու տուն կ'աւերէին և ինչպես Խորենացին կ'ըսէ «Այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս»։

Այս համառօտ և ընդհանուր տեսութենէս, Հայկազեան հարստութեան մասին, սա կ'հետևի որ մինչդեռ մի կողմ Հայաստանի քաղաքական պարզ վիճակը կ'փոխուէր, հետզհետէ անոր սահմանները կ'ընդարձակէին, արտաքին յարաբերութիւնները կ'շատնային, դրացի ազգաց մօտ կարևորութիւն կ'ստանար, քիչ շատ արհեստ և առևտուր կ'ծաղկէին, նոր նոր և օտարոտի նախարարութիւններ կ'ծագէին. մէա կողմանէ Հայկական տոհմին կենսավարական ընթացքը

*Քրէտոսէ 900 ըուսականին այս էշխանն Անգլիոյ ծովին էշխանութիւնները իրաւ խոռնելէ ուկ պետութիւնն կազմեց և ինքզ առաջին ըսքատարն նպատ ծովնոսկետութեան։

պետութեան քաղաքականութիւնը, հաղորդակցութեան միջոցները, սովորութեանց պարզ վիճակը, ինքնիշխանութեան անձանց սերմը և թանձր ապիտութիւնը անփոփոխ կ'ձայնին, և իրաց այս անկապ և անհամաձայն կարգին մէջ, ժողովուրդը, թէև իր առոյգութիւնը և քաջասրտութիւնը տեղ տեղ պահած էր, այլ իր սեպհական շահուց և իրաւանց անհմուտ և օտարական կ'երեւար և իր ճակատագրին վճիռը միշտ բարձրագոյն իշխանութենէ մը սկսեր էր սպասել:

Ուրեմն չորս անհաղորդ տարերք կային՝ ի Հայս նոյն միջոցին. արքունականք, նախարարեանք, գիւղացիք և խուժան, որոց մէջ տակաւին չէր հաստատուած այնպիսի հաստատուն և բնական յարաբերութիւններ և աղգային միօրինակ գաստիարակութեան կանոններ, որով կարող լինէին միաձոյլ և միաւախճան քաղաքական մարմին մը կազմել:

ՆԱՄԱԿ ԺԶ

ՅՈՒՏ ԱՌ ՆԵՒՍՈՆ

Լոնտոն . . .

Թարեկամ, Հայկազանց վրայ գրած նամակդ բաւական հետաքրքրական է. կ'ըսես որ պատմական քննադատութեան լուսով մեկնել ու երեւան հանել ինչ որ խորհրդաւոր մնացեր է անցած բնաւ: Հին, մանաւանդ արեւելեան ազգերն իրարու շատ կ'նմանին բարքով, կրօնքով, քաղաքական կացութեամբ և Հայկազունք ալ բացառութիւն մը չէին: Երեք բառով կարելի է սահմանել այդ ազգերու կացութիւնը, ապուշախելօքութիւն էր իրենց կրօնական դրութիւնը, բռնապետութիւն՝ իրենց կառավարութիւնը, գերծութիւն՝ իրենց ընկերական վիճակը:

Սոյգ է, երբ պատմութիւնն մեր առջև կ'հանէ ազգ մը, որու ներքին կեանքը, գրականութիւնը, օրէնսդրութիւնն անյայտ են, անմիջապէս անոր կ'ընծայենք այնպիսի բաներ որ միայն արդի քաղաքական աշխարհի մէջ գարեդար դոյութիւն ստացած են: Ինչպէս որ մեր պերճ ու զարդարուն ակումբներուն և պճնաղարդ ընկերութեանց մէջ չենք կրնար երեւակայել որ կիսամերկ կամ վայրենի անձ մը գըտնուի, կոշտ լեզուով, բիրտ վարքով, աղտոտ կերպարանքով, նոյնպէս արդի տեսութեամբ չենք կարող ըմբռնել ժողովուրդ մ'որ անկիրթ, անօրէն, անբան եղած լինի, քաղաքական ու կրօնական դատանանք ունեցած չլինի, այլ կ'ուզենք որ անհատական ազատութիւն, քաղաքային իրաւունք, սահմանադրական իրաւունք ունեցած լինի, նոյնպէս բոլոր այն հանգամանքն որ արդի քաղաքակիրթ կոչուած ժողովուրդները կ'վայելեն, թէև այդ հանգամանքն անդուլ կռիւներու և արեան հեղեղներու պինն են: Քիչ մ'ևս, մեր պատմութեան վրայ դատելով արեւելեան ժողովրդոց մէջ habeas corpus, բարըմենդ, վէյկ ու Տոլչ (ազատական ու ազնուական) կուսակցութիւնները պիտի գտնենք:

Հին ժողովուրդ մ'ինչ որ է այնպէս նկատել պէտք է, այսինքն իր ամենէ պարզ, նախնական վիճակի մէջ, երբոր զանազան խումբերու բաժնուած՝ իրարու դէմ կ'մաքառէր, աւարառութեամբ ու եղբայրութեամբ կ'ապրէր, կեպ մը վայրենի կեանք կ'վարէր, և կրօնի, ազգային շահու, հայրենի երկրի վրայ և ոչ իսկ աղօթ գաղափար մ'ունէր: Այսպիսի ժողովրդեան մը կրօնի տարերքն երկիւղն է, իր հայրենիքը՝ վրանն է կամ՝ անակն է, իր կառավարութիւնն՝ ամենէ զօրաւորին քաղցկն ու կօրովն է: Շատ գարեր՝ Արաբացւոց ստորոտն ընկած մարդիկ, որ վերջէն Թերևս քաջ

որսորդի կամ հովուի մ'անուամբ հայ կոչուեցան, այդ վայրագ կեանքը կ'վարէին անշուշտ, ինչպէս կ'վարէին և մինչև հիմակ կ'վարեն շատ մարդկային ցեղեր: Կան պատմաբաններ որ այս տեսակ ցեղերու մէջ ընտանեկան կապ, ազգային օրէնք, օրինաւոր իշխանութիւն կ'փնտռեն և ինձի համար փիլիսոփայական քարը փնտռողներուն կ'նմանին: Կ'շինեն ու կ'կազմեն ժողովուրդ մ'որ միայն իրենց երեւակայութեան մէջ գոյութիւն ունի: Անոր սկիզբ մը, հիմնադիր մը կ'տան, անոր բնութիւնն ու բարքը կ'նկարագրեն, այլ և այլ քաղաքական ու բարոյական առաքինութիւններով կ'զարդարեն ու դրչի ծայրով կ'քաղաքակրթեն: Շատ անգամ այ պատմական իրողութեան մը, կամ ժողովրդեան մ'այնպիսի նշանակութիւն ու նպատակ մը կ'վերագրեն որ իրօք ոչ այդ նշանակութիւնն ունեցած է և ոչ այդ նպատակը: Քանի՛ քանի ապուշ աշխարհակալներ, թագակիր աւազակներ, այս տեսակ պատմագիրներու ձեռօք մեծ մարդեր եղած են, քանի՛ քանի փառասիրական գործեր՝ իբրև նախախնամական անօրէնութիւններ նկատուած են . . . :

Հին պատմիչներ՝ և ասոնց Հայրը Հերոդոտ՝ մարդկային վայրի խումբերու, այս է նախնի ընկերութեանց նկարագիրը չեն ըրած և չէին կրնար ընել, այլ ինչ որ նոր է, ինչ որ դրեթէ մեղի մօտ է, մի քանի հազար տարուան պատմութիւն, մեզի աւանդած են, չկրնալով թափանցել այն անթիւ դարերու մէջ որ թանձր մթութեան անդունդը կը կտրտուին: Յաւերժ այս է որ իրենց գրած պատմութիւնն ալ կիսկատար, սուտ ստէպ և սխալ մութ ու անզօր իրողութիւններու կոյտ մ'է: Եւ միթէ կարելի՛ էր նկարագրել ընկերութեանց կազմակերպութիւնն, որ դեռ ևս հանելուկ մ'է՝ նոյն իսկ արդի պիտուններու առջև, պիտուններ, որ թէև պիտութեան բոլոր զէնքերով զինուած, ընկերաբանական ու ֆիզիքական օրինաց հմուտ, չեն կարող վճռական եզրակացութիւն մը հանել ընկերական վիճակի ծագման մասին:

Հայոց քերթողահայրը՝ Խորենացին, կամ Մար Աբաս, աւելի խոհեմ են, հինը կ'թողուն մութը և նորը կ'նկարեն, միայն այդ նորն ալ յունական կանխակալ պաշտպաններու վրայ կ'ձևեն, հայկազուն նահապետներու, պատերազմներու, նախարարներու շարք մը կ'ներկայեն, առանց անոնց կապակցութիւնն ու պատճառները հետազօտելու: Հայկազն հիմնադիրն, որ՝ ինչպէս արդէն գրած եմ, աղատասիրական դղջացումով մը կ'ապստամբի Բելին դէմ, կարծես թէ մեր աշխարհի մարդ է: Բէն մ'է Հայկ որ Արարատ գաղթեր է, ինչպէս Բէնսիլվանիոյ ժողովրդեան հիմնադիրն Ամերիկա գաղթեց ազատութեան ոգւով վառուած: Իսկ իր յաջորդաց պատմութիւնը կենդանագրի մը կ'նմանի, պարսիկ նկարչի մը շինած պատկերին պէս, որ փայլուն ու կենդանի գոյներ ունի թէև, այլ անշուք է ու անստուեր. որոշ գծեր ունի թէև, այլ անկանոն այնպէս որ բուն բնագրին ճշդիւթեան բացատրութիւնը չէ:

Ես կ'փափաքէի տեսնել հին հայկազն ժողովուրդն իր տան մէջ, իր շուկային մէջ, իր զօրավարանին մէջ. Քսենոփոնի գրածը բանական չսեպելով՝ կ'ուզէի գիտնալ թէ ինչ ձև ունէին իր բնակարաններն ու ապարանքը, ինչ զօրվիքներով կ'հերկէր իր հողն, ինչ բարբառներով կ'խօսէր, կ'երգէր ու կ'աղօթէր, ինչպէս կ'վարէր իր պատատանեներն, ինչ յարաբերութիւն ունէր իր նահապետին, նախարարին, թագաւորին հետ, ինչ կրթութեան վիճակ ունէր և այլն: Բայց կ'խեմ նաև որ այս փափաքներս ծայրայեղ են, վասն զի՝ ի բաց առեալ Ցոյներն ու Հռոմայեցիներն, որ հակառակ ծայրը հասնելով, շատ անգամ պէտքերու կանոնաւորութիւն և իմաստասիրական շինծու ուղղութիւն մը տալու համար, իրենց ազգային գոյութեան նպաստաւոր, ճշմարտութիւնը կ'թիւրեն, չկայ հին ժողովուրդ մ'որ իր ընտանեկան ու քաղաքական կեանքն ճշդիւթեամբ աւանդած լինի ապագային իր պատմագիրներու ձեռօք: Եւ իրաւի, ինչպէս կ'ըսէ մեր մեծ

իմաստ Մաքօլէյ, եթէ՝ «Լաւ պատմութիւններ չունինք» հիմակ իսկ, ինչ իրաւամբ պահանջենք հինէրէն։ «Պատմական ընտիր վէպեր ունինք և ընտիր պատմական փորձեր»։ Ըսել կ'ուզէ թէ երևակայութիւնն ու բանականութիւնն իրենց մէջ բաժներ են պրականութեան սոյն ճիւղին, փոխանակ բոլորովին պրաւելու միասին։

Ակիլց կ'հետևցընեմ որ ինչպէս շատ նոր ազգեր, հիներն ալ և մանաւանդ հայկազուններն լաւ պատմութիւն մը չունին կարծեմ։ Բոլոր նորոգ գրուածներն ալ խորենացիէն, Զենոբէն, Ասողիկէն, Արիստակեսէն և ուրիշ հին պատմիչներէ օրինակուած են։ Ձեմ տեսներ անոնց մէջ պատմութիւնը վերականգնելու շարժուած որ Անգլիոյ և Գերմանիոյ մէջ կ'երևի։ Ռիչարասընի, Հիւմի, Կիպպօնի, Հալլամի, նոյն իսկ Մաքօլէյի պատմական եղանակը հին ու թեր կ'նկատուի. Պրքլի պէս, Թէվիննոսի ու Վեպէրի պէս նոր նոր պատմաբաններ յառաջ կ'գան, այնպէս որ պատմութեան հորիզոնը կ'ընդարձակի, նոր դիտերն, իմաստասիրական, բանասիրական ու հնախօսական խուզարկութիւններն նոր լոյս կ'սփռեն պատմութեան վրայ, որ այժմ գրեթէ իր մէջ կ'պարունակէ ազգի մը մտաւորական ու ճարտարական կենաց ամբողջ պատկերը։

Հայկազնեան իշխանութեան վրայ՝ պատմական տեսութիւնդ, Նելսօն, մասամբ հայ պատմաբաններու տուած տեղեկութեանց վրայ հիմնուած է և մասամբ ազգերու յաջորդական զարգացման օրինաց վրայ։ Այդ դովելի աշխատութիւն մ'է, իրաւ, բայց վաւերականութեան պայմանները բոլորովին չպարունակեր և երբեմն ենթադրութիւնն իրողութեան տեղը կ'բռնէ։ Ցայտնի է որ հայոց լաւ պատմութիւն մը գրելու համար բաւական չեն երևակայութիւն ու գրաւոր աղբիւրներ, այլ ուրիշ իրական միջոցներ պէտք են։ Պէտք է Հայաստանի բոլոր պատմական յիշատակարանները հետազօտել, աւերակները փորել, ամեն անկիւն ու փոս որ հնութեան

նշխար մ'ունի, կրկտել, հին գրամներ ու հին բարբառները հետքն որոնել, աւանդական զրոյցներն, առածներն ու առասպելները հաւաքել, տեղագրական մանր խուզարկութիւններ ընել, մէկ խօսքով նկարագրել, ուսումնասիրել ամեն ցիւղ, աւան, դեպք, սովորութիւն, շէնք որ Հայոն կենաց հետ վերաբերութիւն ունին։

Ով յանձն պիտի առնու այսպիսի ծանր աշխատութիւն մը։ Մասնաւորի այժ, տաղանդ ու դրամագլուխ չեն բաւեր, վանական դրագէտներ անձեռնհաս են. վասն զի եթէ պատմութիւն գրելու ամեն պիտոյնի նիւթերն անգամ ունենան, դարձեալ՝ իմաստասիրական խուզարկութեան ոգիէ զուրկ գտնուելով՝ աւ հասարակ ամեն բան կրօնական անձուկ տեսակէտով մեկնելու պիտի ձգտին։ Ըստ իս՝ եթէ ազգի մը պատմական կենաց իր ներկային վրայ ազդեցութիւն ունենալը կ'ընդունինք, կարևոր է որ Հայք յատուկ ընկերութիւններ կազմեն, դրամագլուխ դիզեն, հմտութիւն ու գիտութիւն ունեցող անձեր Հայաստանի այլ և այլ կողմերը տարածեն որպէս զի ոչ միայն իրենց նախնեաց այլ դաւառացոց վիճակը հետազօտեն և հին պատմութեան հետ նորը կապին։

Կ'տեսնէս, Նելսօն, որ երբ դու Թարապիա և ես Հայաբնակի մօտ նստած կ'ելևնենք մտովին Հայաստան կ'շրջինք, մեր Սդերնի Զգեցական ճամբորդութեան նման բան մը միայն կարող ենք յօրինել, թէև այդ հեղինակին զբաւոր երևակայութիւնն ալ չունինք։

Բայց գոնէ սիրտ ունինք, յանգգնութիւն ունինք։ Միայն կ'երկրայիմ որ քու սիրտդ ծոցդ լինի. այս տեղ թողուցիր զայն, և ես չեմ համարձակիր հարցընելու թէ ինչ վիճակի մէջ է։

ՆԱՄԱՆ ՅԻՇ

ՆԻԼՍՈՆ ՍՈՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Շնորհակալ եմ. սրտիս վիճակը կ'հարցընես: Երկար նամակիդ այդ վերջին տողը բոլորովին ուշս գրաւեց: Համբերութիւնն ալ սահման ունի, հպարտութիւնը՝ չափ մը: Երբեմն անհրաժեշտ պիտոյք մը կ'գառնայ սիրտս քանալ բարեկամի մ'առջև, երբ մանաւանդ անկեղծ ու դիմոտ է այդ բարեկամը քեզի պէս: Շատ մեծ խօսքեր եմ, կ'յուսայի՝ ստոյիկեան անտարբերութեամբ, խղդել զգացում մ'որ ցնս կ'խզդէ: Ան հասարակ՝ շատ անկլիայցւոց համար, սէրը դործ մը, առուտուր մ'է, և, եթէ կամիս, փոխանակութիւն մը; երկու սակարկողներու աղատ կամքէն կախուած, բայց ես կ'նայիմ որ ինձի համար կենսական խնդիր մը կը դառնայ և իմ ապագայիս կ'սպառնայ . . . : Թող որ պարզեմ խօսքս:

Արդէն դիտես իմ ուղևորութեանս բուն դրդիռը. ԵՒիլևի մօր, Էմի Խոհէմի չար աչքէն հեռանալ, զգաղմունք մը ընտրել, անցեալը մոռնալ, սփոփիլ ու նոր կեանք մը սկսիլ: Մրեմ նպատակիս հասայ. ոչ. աւելի անհանգիստ եմ, աւելի դժբաղդ եմ: Հայաստանի պատմութիւնը կ'թղթատեմ, Հայոց ծագումն ու կեանքը կ'քննեմ, Պոսֆորի սքանչելի բլուրներն ու պարտէզները կ'արշաւեմ, կ'գրեմ, կ'խօսիմ, կ'երգեմ խակ, բայց բոլոր այս գործողութեանց անմասն է հոգիս, որ կարծես թէ դերեզմանական լռութեան ու անդգայութեան մէջ կ'դանուի: Խօսուն է գրիչս, այլ սիրտս

անխօս, մոռթ և վհատ: Աչքս ուր որ դարձընեմ, անոր նկարը կ'նշմարեմ, միաքս ուր որ տանիմ, անոր տեսիլը կ'ընդունիմ: Ախորժելի չէ այս վիճակս. այնպէս կ'երևի որ Թագուն տենդ մ'ուտիմ, որով կ'վառի երևակայութիւնս, սառերները կ'պաշարեն զիս և երբեմն պաղ երբեմն տաք տաք ջրեր կ'թափին գլխէս: Երբոր տապով տոչորիմ կ'վազեմ ծովափը, ալեկոծ անդնդին վրայ կ'հակիմ և պաղշնչելու համար կ'փափաքիմ անոր մէջ նետուիլ. երբոր պաղ սառուռով մը բոլոր մարմինս դողդողայ՝ կ'ելնեմ կէսօրին մոտակայ լեռնային ու արևուն ճառագայթներէն կենպանութիւն կ'սպասեմ. անօգուտ: Հոգիս հիւանդ է, և քանի մտածեմ որ անարժան էակի մը համար այս տանջանքը կ'կրեմ այնքան կ'աւելնայ անոր սասակութիւնն ու ինքնասիրութիւնս կը վիրաւորի: Կ'որոշեմ մոռնալ և աւելի կ'սրի յիշողութիւնս, միաքս կ'գնեմ զուարճանալ և աւելի կ'վշտանամ, ընկերութիւններ կ'յաճախեմ, աղմուկ, պար, երաժշտութիւն կը փնտռեմ և ինքզինքս աւելի մեծ ամայութեան մէջ կ'դանեմ: Բարեկամ, երևակայէ անդամ մ'որ այս սրտապրութեան մէջ կարելի է լաւ քնանալ ու դատել, Հայոց վարքը բարքը հասկընալ և բանաւոր բան մը գրել: Ինչ որ կ'ընեմ այս տեղ կարող էի և այդ տեղ, Լոնտոն, ընել, պատմութեան ու այլ գիրքերու մէջ թաղուիլ, մոլորիլ:

Եւ միթէ արդէն մոլորած չեմ. միթէ արդէն ԵՒիլևի հետ ամէն յարաբերութիւն կարած չեմ. միթէ յիմարութիւն չէ՞ յուսալ անյուսալի բանի մը: Իմ վերջին գրոյս պատասխան չդրեց. իր անտարբերութիւնը մեկնելու համար արդարացուցիչ խօսք մը չուղղեց ինձ: Մեռած եմ ես ԵՒիլևի համար և բնաւ չեմ ուզեր որ այս իմ վիճակս իմանայ: Ան ևիլևի լաւ կ'համարիմ մեռնիլ քան թէ խոնարհիլ . . . : Բայց ինչո՞ւ չխոնարհիմ. նա այնքան բարձր է . . . խակ ես ծրչալի ապուշ եմ, ինչպէս միշտ կ'մոռնամ իմ սև ճակատագիրս . . . ո՞ գիտէ, կարելի է որ իմ կենաց վրայ ձգուած սև ժօղը

վերցուց . . . դիտեց որ անձանօթ մարդ մ'եմ, բաղդախնդիր մ'եմ: Անշուշտ այս պիտի լինի իր լուսնթեան պատճառը . . . : Կարծիքդ ի՞նչ է, բարեկամ, ինչ դարման կայ ինձի համար . ապրելու անարժան եմ: Գիտեմ, շատ կ'նուաստացնեմ, բայց անձիս սէրը չեմ . . . ինչ ընեմ:

ՆԱՄԱՆ ԹԷ

ԱՂՕՏ Ա.Ն ՆԵԼՍՕՆ

Լանդըն . . .

Բարեկամ, պատմութենէդ սիրոյ անցանք . անբնական անցում մը կ'երևի, բայց իրօք զարմանալի չէ: Մարդկային կենաց մէջ սէրն ամենէ մեծ, ազդու թէև երբեմն թափուն դեր մը կ'խաղայ և դրեթէ ամեն բանի մէջ կ'պտնուի: Քուկդ, որու վրայ մոխիր թափեր էիր, նորէն կ'առկայծի: Տկարութեան թէ ոչ կորովութեան նշան է ըսեմ: Այդ խառնուածքի խնդիր մ'է, բայց ըստ իս՝ թեթուած կաթի կ'նմանի օթեկ սէրը: Նամակդ կարդալով կարծեցի թէ կատակ կ'ընես, բայց վերջը տեսայ որ կ'ողբաս, կ'արտասուես, կ'մոլորիս և կերեզմանիդ բոլորակը կ'շրջիս քնաշրջիկի մը պէս: Յիմար ես, Նելսօն. իմ մէկ նշմարանքիս կ'սպասէիր որ սրտիդ գառնութիւնը յայտնեն ինձ, հապա ինչ պիտի ընէիր եթէ կրէի որ Լէմի խաղէմ իր աղջիկը լորա Տէնսաիի հետ կարգելու կ'պատրաստուի: Անտարակոյս չանթահար պիտի մարէիր, Ծոր նահապետին ողբը պիտի սկսէիր, պոսֆորի մէջ պիտի նետուէիր կամ ողջ ողջ դերեզման պիտի իջնէիր, այնպէս չէ: Բայց հանդարտէ, մի դողար, դեռ յոյս կայ: Միայն ես՝ յուսոյ վրայ չեմ հիմներ իմ ապագաս, շատ հաւատ չունիմ սիրոյ վրայ: Դու ալ ատեն մը թերահաւատ էիր այս մասին, Լիլլին քեզ հաւատարմորէն: Հիմակ ինչո՞ւ կ'տարակուսիս: կ'յարգեմ զգայնութիդ, բայց բոլորովին տարբեր աչքով կ'դատեմ: Ըստ երևոյթին՝ արևելեան օդն ու ջուրը ջիղերդ թուլացուցեր են, սիրտդ շատ ամոքեր են: Զայնդ վինուորի մ'արիական ձայնը չէ այլ կնկան մը մրմունջը: Միթէ Արևելք աւր չ'ա՞յ: Մինչև այս օր այդ խնդրոյն վրայ դրելու կ'զգուշանայի որպէս զի սիրտդ չվերաւորեմ իմ դրական դաղափարներովս, բայց որովհետև կ'պահանջես որ խօսիմ և ինձմէ դարման կ'փնտուես, ահա խօսքս, ահա դարմանս:

Պէտք է որ մոռնաս Լիլլին, բարեկամ, վասն զի քեզի յարմար չէ: Նախ որ լորայի մը դուստրն է, երկրորդ որ նշանաւոր լորայի մ'որդւոյն հետ նշանուած է, երրորդ որ առաջին սիրով քեզ կ'սիրէ: Լորա մը չխոնարհիր փեսայ ընել պարզ վինուոր մը, Տէնսի պատանին, թէև ապուշ, մեծ գերդաստանէ է, իսկ առաջին աէրը միշտ դժբաղդ վախճան մը կ'ունենայ: Ասոր համն այդ դժբաղդութեան ձգած տխուր յիշատակներուն մէջն է: Փափաքելի կերակուրի մը կ'նմանի որմէ շատ ուտելով անմարսութեան, հետևապէս հիւանդութեան կ'հանդիպի մարդ: Աւելի լաւ է չուտել: Առջի օրէն իրրև տղայական խաղ նկատեցի ձեր սիրոյին յարաբերութիւնն, որ բնապէս պիտի մարի ըսի, և մտքէս բնաւ չէր անցներ որ դու իրրև կենաց ու մահու խնդիր պիտի բռնես կենաս: Սթափիր, բարեկամ, եթէ կ'ուզես երջանիկ լինիլ, ապա թէ ոչ՝ կարելի է քեզ դժբաղդ ընելու դարման մը դտնել: Միջոցն է առևանգել օրիորդն ու քովդ ուղարկել, որպէս թէ այդ կողմն պակաս լինէին հրաշակերտ արարածներ, վրացի յաւերժահարսներ, սևակն ու հերարձակ հրեշտակներ: Միթէ կ'յուսաս որ Լիլլի հաւանի

գողցուելու: Փորձ մ'է, կ'ընդունիմ այդ դարմանը, բարեկամ, թէ ոչ սպառով գործ տեսնել, ծնողաց հաւանութեամբ շարժիլ կ'փափաքիս: Բայց այդ ընթացքին մէջ շատ դուռ-զութիւն ու քիչ վիպասանութիւն կ'տեսնեմ: Անթև տատրակ մը շահէնին ձանկէն խլելն է ճարպիկութիւնը: Եթէ դու սպասես որ դան քեզի ըսեն — «Պարոն Նելսօն, դու շատ ընտիր ու աղնուասիրտ մարդ մ'ես, թէև դրամ չունիս բայց Ելիլին կ'սիրես, այդ կ'բաւէ, առ ուրեմն այդ աղջնին ու երջանիկ եղիր» շատ պիտի սպասես: Այսպիսի նահապետական կամ ասպետական խնամութիւնները հիմակ չեն կատարուիր: Սէրն ալ Մայր-Տումարին մէջ Պահանջէն ու Պարտէն հաշիւն ունի: Պարտուց սիւնակին մէջ շատ ծանր կ'կշռես: Եթէ այդքան բուռն է սէրդ, բարեկամ, եթէ այդքան կը հալիս ու կ'մաշիս, պէտք է բուռն միջոցներ գործածել: Այն ատեն չեն հարցներ թէ դու չունևոր ես, քաղաքանդիր մ'ես, այլ կ'ըսեն — «Շատ ճարպիկ ու բաղդաւոր է. լորտին լաւ խաղ մը խաղայ, թէ աղջիկը շորթեց և թէ անոր գալիք ժառանգութեան մասը:»

Ի՞նչ կ'ըսես, Նելսօն, կատակի տեղ մի առներ դրածս. լրջօրէն կ'խօսիմ, գործնական միջոց մը կ'ցուցընեմ և' ի հարկին՝ քեզի պիտի աջակցիմ: Իսկ եթէ այս հնարքն անարժան համարիս, ուրիշ դարման մ'ալ կայ. արդէն ըսի, ջանա սրտիդ մէջ այնպիսի պատկեր մը քաշել որ միսը աւրուի . . . :

Բայց ուրիշ կարևոր այլ մանր կէտ մը կայ նամակիդ մէջ: Ի՞նչ բանի կ'ակնարկես . . . երբոր կ'ըսես թէ ահ է քաղցր, թէ կ'վախնաս որ կենացդ վերայն ահ չծագիլ չվերցուի: Ի՛նչ. միթէ արատաւոր ես, մեղապարտ ես: Ինչու՞ բարեկամիդ ամեն գաղտնիքդ ու վիշտդ չես յայտներ: Իրաւ է որ քիչ մը այլանդակ բժիշկ մ'եմ և տարօրինակ դեղեր կ'առաջարկեմ, վէրք շոյելու, հիւանդներն օրորելու սովորութիւնը չունիմ, բայց ասով նուազ անկեղծ չեմ: Գիտեմ փորձով որ սէրն

այլ և այլ պատահական պարագաներու, կազմուածքի ծնունդ է: Ոչ ինչէ մը կրնար ծնիլ, ոչ ինչ մը կրնար մարել և եթէ շատ անգամ դիմանայ պատճառն ոչ այնքան սիրական առարկային յատկութիւններն են որքան սիրողին ինքնասիրութիւնն ու ինքնահաւանութիւնը: Թերևս, Նելսօն, դու ալ անձդ աւելի կ'սիրես քան թէ Ելիլին. քննէ վիճակդ: Սիրոյ վերայ քարոզ տալ չէ միտքս, բայց կարդա Պայրն, կարդա Հիւկօ, Թէքերէյ, Տիկին Սգաէլ: Զուտ սիրով կազմած սիրտեր միշտ այդ սիրով չեն մնացեր: Բնութիւնը փոփոխութիւն կ'սիրէ. իսկ մնչեգին սէր մ'ընտանեկան երջանկութեան գրաւական մը չէ: Դու գիտես որ մենք Անգլիացիք աւելի հանգարտ, խոհեմ ու խորունկ զգացմամբ կը միանանք մեր սրտին հատորին հետ. և սակայն դու, Նելսօն, այն մնչեգին վիճակն ունիս:

Աւելի չեմ ուզեր խօսիլ: Ընտրէ, պատրաստ եմ թնդիրդ կատարել, եթէ անբուժելի ես. ըսէ, Ելիլին առնանդեմ, ծնողացը մօտ միջնորդեմ քեզի համար թէ ոչ զինքը փորձեմ: Մտադիր եմ տեսածս ու լսածս քեզի հաղորդել, այս պայմանաւ որ դու ալ, Նելսօն, ինձմէ բան չպահես, եթէ ատուղիս զիս իբրև մտերիմդ կ'ճանչես:

ԳԱՄԱՆ ԺԴ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ԻՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, խօսքը խօսք կ'բանայ, կ'ըսեն, և իրաւ է: Արեւս դարն վիճակը, սիրոյս նկարագիրը ծանր կ'մկնես,

ստոյգ ներկայ մը, որոշ ապագայ մ'ունեցող մարդու մը պէս կ'վճռես և երբեմն կ'հեգնես, սակայն, թէև իմ բարեկամն ես, իմ անձս, իմ անցեալս չգիտես և անդիտօրէն զիս կը վշտացընես: Փոյթ չէ. ես ալ յանցանք ունիմ քու առջևդ, իմ կենացս պատմութիւնը քեզմէ ծածուկ պահեցի, կամ յայտնելու պէտքը չզգացի: Եւ ինչ հարկ կար յայտնել, քանի որ դպրոցի դասընկեր՝ մեր սրտակից յարաբերութիւնները զուրկ ալ չարունակեցինք: Համակրութիւնը մեզ կապեց, ընկերական անհատասիրութիւն, խորութիւն այդ կապը չքակեց: Մենք վարժարանի մէջ սրտակից ընկեր, աշխարհի մէջ ալ մտերիմ բարեկամ մնայինք:

Բայց ահա եկաւ ժամ մ'ուր կ'տեսնեմ թէ մարդկային օրէնքը կ'պահանջէ որ մարդ պատասխանատու մնայ իր չբոսծին: Անիրաւ է այդ օրէնքն և այդ զգալով իմ առաջին զրոյս մէջ քանի մ'անորոշ, զառն խօսքեր գրեցի, որ իմ անցեալոյս կ'ակնարկեն: Արդ՝ պէտք է այդ ակնարկութիւնը բացատրեմ. համառօտ սրտի խօսիմ:

Սիրելի վ.ուտ, իմ մանկական օրերս լաւ չեմ յիշեր, այս գիտեմ միայն որ հինգ վեց տարու էի երբ երկարատև ծովային ձամբորդութենէ մ'ետև Անկլիա բերին զիս: Ուղեկից էին ինձ մարդ մ'ու կին մ'որ զիս իրրև իրենց զաւակը կ'սիրէին ու կ'խնամէին՝ բայց իմ ծնողքս չէին: Աղօտ կերպով կ'յիշեմ որ անոնք հեռաւոր, օտար, տաք երկիր մը ծնացին, սակայն չեմ կարող ստուգապէս հաստատել: Այն ժամանակ այս պարագան իմ վրայ տպաւորութիւն մը չբերաւ, մանաւանդ՝ երբոր Լոնտոն գալով և մի քանի տարի անցնելով՝ ինքզինքս գտայ Հոգասէր, Հարուստ, ընտիր դերդաստանի մ'ապարանքն, ուր իրրև տան սիրասուն զաւակին իմ բոլորը պիտոյքս կ'հոգային և մինչև իսկ իմ քմահճին հաճոյքս գոհ կ'ընէին: Բայց երկար չտևեց այս մանկային զուարթ, ազատ, ախորժելի կեանքը: Գիշերօթիկ դպրոց մը գրին զիս և իմ կրթութեանս հոգ տարին: Այս վիճակս ալ վեց տարի տևեց. ուրախ, գոհ էի. կարօտ մը չունէի: Ծերունի մը տարին մի քանի անգամ կ'այցելէր դպրոցն և կ'ըսէր թէ իմ ծնողացս կողմէ պաշտօն ունէր իմ վրայ հսկելու, թէ անոնք հեռու աշխարհ մը կ'ապրէին և թէ ուսմունքս աւարտելէն ետև՝ իմ ընտանեաց մօտ պիտի ղրկուէի: Այնքան բարեսիրտ, ազնիւ ու խնամածու էր այս ծերունին որ բոլոր ըսածներուն կ'հաւատայի, և՝ ինչսն ընելով՝ մէծ փափաք մը չէի զգար այն ժամանակ ծնողքս տեսնելու:

Ի վերջ Քէմպրիճի համալսարանը փոխադրուեցայ: Այդ դէն տասն չորս տարու էի, իրրև ազնուական զերդաստանի որդի կ'նկատուէի, լորտերու աղոյ հետ կ'տեսնուէի, լորտ Պայրընի, Պրուհէմի, Ռոպէրդ Օվէնի հետ կռփամարտեր և ուսմանց մէջ մրցեր եմ: Ամեն աշակերտաց ծնողքը գէթ երեք ամիսն անգամ մ'իրենց զաւակները կ'տեսնէին, ես կերպով մը որբ էի: Ազնուական տղայք սկսան պաղել իմէ երբոր գիտեցին որ զիս փնտռող Հայր ու մայր չունիմ և արձակուրդի տաեն ալ վարժարանը կ'անցընեմ: Այս դասական խորութիւնները մեր մէջ դպրոցներէն կ'սկսին, գիտես: Ազնուականին որդին տարբեր, վաճառականինը տարբեր կրթութիւն ու խնամատարութիւն կ'ընդունին, որպէս թէ դիտութիւնները յատուկ ցեղ ունենային: Ես փոյթ չըրի, կարծես թէ երակներուս մէջ հանրավարի արիւն կ'հոսէր: Աւելի վէս եղայ, բոլորովին ժողովրդեան զաւակաց դասդը մնայ, պատրիկ պատանիներու դէմ տաեն տաեն ձակատ մղեցի: Երանի թէ միշտ այսպէս վարուէի...: Միայն կ'զարմանայի որ ինչո՞ւ համար զիս իրենց տան մէջ ընդունող մէծ մարդիկ տաեն տաեն զիս չէին փնտռեր: Այս հոգս ու զարմանքս ալ անցան: Այն ժամանակին էր որ քեզի հետ կապուեցայ, սիրելի վ.ուտ, և գիտես թէ մեր դպրոցական պայքարներուն գլուխն էինք:

Իմ ծերունի խնամակալս յատկապէս ուզեց որ հայերէն լեզուն սորվիմ: Իրրև նորութիւն, իրրև վարժութիւն մ'որ

իմ մտային կարողութիւնս պիտի մարզէր, սկսայ դեղերիդ դրաբառի մէջ, թէև անոր օգտակարութիւնը չէի կարող ըմբռնել և այս բանիս մէջ նոր գաղտնիք մը կ'նշմարէի։ Մի քանի աշակերտներ, հնասէրներ կ'հետևէին այս թափուր գաւառն։ Հայ անունը նոր կ'լսէի, մարի, ասորիի, պարսկի հետ կ'շփոթէի։ Դու որ միշտ կ'փափաքէիր իմ ետ չմնալ, հայերէնի դասակիցս եղար։ Որո՜ւ մտքէ կ'անցնէր այն ժամանակ որ երբեմն այդ հին լեզուով պիտի դրակցէինք։ Շատ անգամ խնդուքս կ'բռնէ երբոր մեր հայերէնի անկլեայի դասատուն միաքս կ'բերեմ։ Կոլոմբոս այնքան փառաւորուած չէր անշուշտ երբ Ս. Սալվատոր ոտք կոխեց որքան կ'փառաւորուէր Հէյլօք երբոր Խորենացին կ'կարդար իր անիմաստնալի աւազանութեամբ։ Ապշած անոր երեսէն վար կ'նայէինք։ Նոր գիտ մը հնարողի պէս կ'ուռէր և Հերշէլ անոր մօտ բան մը չէր։ Այսպէս չորս հինգ տարի անցուցի այդ համալսարանին մէջ առանց անցեալս ու ներկաս մտածելու։ Սակայն վերջին տարին կասկածներ ծագեցան մտքիս մէջ իմ ծնողաց մասին։ Վիշտ ու տրտմութիւն պաշարեցին զիս. ընկերներուս շրջանէն կ'հեռանայի։ Ես որ՝ի բնէ զուարթ, վառվռուն և անհոգ բնաւորութիւն ունէի, մելամաղձիկ դարձայ։ Դու միայն իմ սրտակիցս էիր, բայց չէի համարձակեր ցաւս քեզի հաղորդել։ Շատ անգամ կ'ըսէի ինքնիրմէ. — «Մութ բան մը կայ էութեանս մէջ։ Ինչո՞ւ մինակ եմ. ո՞ւր են հայրս ու մայրս. որո՞նք են պաշտպաններս։ Ո՞վ կը խնամէ և կ'պահէ զիս։ Ընկերիկ տղայ մ'եմ թէ որբ։ Եթէ ծնողքս մեռան, ինչո՞ւ ծածուկ կ'պահեն այդ սև լուրը. եթէ անծանօթ մ'եմ այս աշխարհիս մէջ, ինչո՞ւ Քէմպրիճի համալսարանը կ'գանուիմ։ Արդեօք գաւի մը, բռնութեան մը զո՞հն եմ։ Մինչև երբ պիտի տևէ այս տարտամ վիճակս։ Պէտք է որ դպրոցական շղթաս խորտակեմ, ճշմարտութիւնը փնտռեմ»։ Այս տարակուսանաց մէջն էի, երբոր յանկարծ հեռավոր տոմսակն առի.

«Պարո՛ն Նէլսօն Մանկենց,

«Դպրոցական շրջանդ լրացար. չափահաս ես (քսանեմէկ «տարեկան էի), ուստի ազատ ու գործօդ պատասխանա«տու։ Քու դաստիարակութեանդ համար հոգ, խնամք ու «դրամ չխնայեցին քու պաշտպաններդ։ Այսուհետև ազատ «ու անձիդ տէրն ես, ընկերական կեանքդ մէջ ցոյց պիտի «տաս անշուշտ որ լաւ ու կիրթ մարդ, ընտիր քաղաքացի «ես։ Կ'մնայ քեզ անուանդ ու կրթութեանդ յարմար աս«պարէզ մ'ընտրել և ժիր ու արժանի կեանք մը վարել։ Ու«զիղ ու արդար Համբայ մը, հաստատ անձնական արժանիք «մը կ'տան մարդու ազնուականութիւն մ'որ ծննդեան ազ«նուականութենէ շատ բարձր է։

«Հրաման ունիմ յայտնել քեզ, Պարո՛ն Նէլսօն, որ 240 «լիրա ստերլինի տարեկան թոշակ մը կապուած է քեզի «մշտապէս։ Ինչպէս որ կամիս, երբոր կամիս կարող ես «ստանալ այդ դումարն Անկլիոյ Պանքայէն, որու Տոմարին «մէջ այս հասն անուանդ բացուած է։

«Քու բաղդիդ համակիր խնամակալդ

Լոնտոն 183... «ԲԻՆԿ»

Այս երկտող տոմսակը բոլոր էութիւնս յեղաշրջեց։ Կայծակի մը կ'նմանէր որ մութ ամպեր պատռելով պահ մը կը լուսաւորէ հորիզոնն՝ նորէն աւելի խոր մթութեան մէջ թողլու համար։ Իրօք կարծեցի թէ վիպական մը ապրած եմ. ՚ի զուր լուսատուտ մը փնտռեցի։ Տոմսակին մէն մի տողը հանելուկ մ'էր լուծի համար։ Մի և նոյն հարցումներն ըրի ինքզինքիս։ — Ո՞վ է Հրաման ունէր Քինկ, որ իմ բաղդիս կ'համակրէր. ինչո՞ւ համար ինձ թոշակ մը կ'կապուէր. ի՞նչ կ'նշանակէր այս ակնարկութիւնը թէ մարդու մ'ազնուականութիւնն իր արժանիքն է, ինչպէս հնար էր արժանի լինել անուան մ'որու ծագումն ու արժանիքն անյայտ կ'մնային. ի՞նչպէս պատասխանատու մնալ գործերու զոր ուրիշներ ըրած են։ Ի՞նչ կը նշանակէին այս հակասութիւնները...։

վերջապէս, բարեկամ, խենդի պէս էի։ Միտքս դրի այս հանելուկները լուծել։ Եւ այդ ժամկրիճէն, առաջին գործս եղաւ երթալ փնտռել Լամամակալը։ Հասյէն չգիտէի, անշուշտ դիտմամբ պահեր էր և Լոնտոնի մէջ հազարաւոր քինկեր կան։ Այլ և այլ դուռ զարկի, միշտ զգուշութեամբ, բայց այդ մարդկային ովկիանոսին մէջ ուր որ դիմեցի, տգիտութիւն, լռութիւն ու ինքնասիրութիւն գտայ։ Ցետին չոյս մ'ունէի։ Անկլիոյ Պանքան գայի որ ինձ կապուած թուշակին ստուգեմ ու ըսյս մ'առնեմ։ Այն ալ իր ոսկիներուն պէս անխօս ու տգէտ եղաւ։ Տեսչութիւնն իմ ձեռքս տետր մը յանձնեց և յայտարարեց որ կարող եմ ամեն ամիս չէք քաշել իր վրայ։ Հարցուցի թէ որմէ տրուած է այդ թուշակին մայր գրամը։ Պատասխան տուաւ թէ անձի հետ գործ չունի այլ տետրակներու հետ որ անձնաւորութիւն կ'ներկայեն։ Այս նրբութիւնն ալ նոր բան մ'էր ինձի համար։ Այնպէս կարծեցի որ բոլոր Լոնտոնի բնակիչներն ինձի դէմ կ'դաւակցին։ Անձարակ, վհատ և յուսահատ ճնայեր էի։

Մարդ ազատ, իր բաղդին տէրն է, կ'ըսեն շարունակ աստուածաբանները, բարեկամ. Թող դան ղիս տեսնեն, իմ սրտիս ու մտքիս պայմանները քննեն։ Իրօք այլ և այլ պարագայից ու մարդոց խաղալիկ դարձեր էի։ Ձիս Լոնտոնի հետ կապող յարաբերութեան կապ մը չունէի, բայց՝ի Պանքայի ոսկի օղակն որ աչքիս առջև արժէք մը չունէր և ողջմտութեան կամ դիմաստիրութեան տուրք մը կ'երևէր։ Օրէ օր կ'նուաստանայի ես իմ աչքիս առջև որ չէի կարող պատռել ղիս պատող քօղը։ Թող Պէքըն ըսէ, Կոմիկ կրեննալ է, ես հաղար ուզածիս մէկն անգամ կատարելու անկարող էի և դեռ եմ։ Էութեանս առաջին պայմանը չէի կարող հասկընալ, իմանալ իսկ թէ ես ոմ եմ և ինչ եմ։ Թէև նախապաշարման հետևութիւն մ'էր այս մտատանջութիւնս, բայց անպաշար ընկերութեան մը մէջ չէի ապրեր որ անփոյթ լինիմ այս մասին։ Քաջ գիտէի որ շատ անգամ

տղմէն, մութէն ելնող անծանօթ մարդիկ բոլոր մարդկութեան ծանօթացեր են իրենց հանճարով։ Ես այդ ոյժը չունէի։ Կասկած ունէի իսկ որ եթէ ղիս մաշող հոգը քեզ յայտնէի թերևս իմ պաղիր։ Ուստի լուռ ու մունջ կը մնայի, թէև ներսէս կրակ մը կ'վառէր։ Ի բնէ բարի, անկեղծ, սիրող սիրտ մ'ունէի, չարասէր, քինասէր, բարկասիրտ գառնալու վիճակը հասայ։

Որչափ իմ ծագումս անորոշ էր, նոյնչափ իմ ճակատս պայծառ ցոյց տալու կ'ձգտէի։ Որդ մը կ'կրծէր սիրտս, նախանձու աչքով կ'դիտէի ընտանեկան կեանք, յարաբերութիւն, ստէպ կ'արտասուէի երբ հայր մ'իր որդին կ'գրկէր, մայր մ'իր զաւակը կ'համբուրէր։ — «Ո՞ւր են իմ հայրս ու մայրս, կ'հառաչէի գառնապին։ Ուրեմն ես բաղդին մէկ զաւակն եմ, ընկերութեան մէջ պատուաւոր տեղ մը չունիմ։» Գոլտնի սիրոյ ծնունդ, գողի պէս պիտի ապրիմ անարգ ու թափառական այս աշխարհիս մէջ, ուր շատեր թէև իմ վիճակս ունին, բայց ծննդեան օրինաւոր վկայագիր մը ստանալու չաչդաձ են, կամ մարդոց անգգադար չարիք հասցընելով՝ ընկերային անիրաւութեանց վրէժ կ'լուծեն։ Բայց ես ոչ խաբեբայ և ոչ չարագործ կրնայի լինիլ։ Այլ մինչև որ իմ ծննդեանս հանելուկը լուծուէր, կ'փափաքէի ես իմ գործոց մարդը լինիլ, իմ անուամբս բոլոր Եւրոպա լեցընել կամ այս երկրէս դիւցազնաբար երնել։ Վերջին փորձ մ'ալ ըրի օրպէս զի անուանս կցուած Մաղնոց մականուան տէրը գտնեմ։ Լոնտոնի մէջ ազգահամարի և վիճակագրական գիւան չմնաց որ քննել չտայի. այդ անունն ունեցող ողջ կամ մեռած անձ մը չկար։

Նոյն միջոցին երիտասարդութեան առոյգ հասակիս մէջն էի։ կ'սիրէի ազատութիւն, կ'ատէի իշխանական թագ ու գաւազան։ Շարունակ միտքս կ'յուզէին ընկերական խնդիրները։ Ռուսօ, Հիւմ, Պէնթհամ, Ս. Սիմօն, Ֆուրիէ և ուրիշ ընկերհաշտական հեղինակներու գործերը կարդացեր,

լափեր էին: Զարմանօք կ'դիտէի որ մարդիկ մինչ որ կ'պատանին չեն դործադրեր, որ սկզբունք ու դործադրութիւն հակառանեայք են, վարժարան և ընկերութիւն իրարմէ բոլորովին տարբեր աշխարհներ, մին օձաձ մը, միւսն անապատ: Սակայն, ինչպէս ամեն ուսանող, ես ալ ժողովրդոց անկախութեան, բարօրութեան, արդարութեան յաղթանակը կ'երազէի: Կ'պիտէի որ Եւրոպայի քաղաքակրթութիւն կոչուածն, հարստութիւնն ու երջանկութիւնը միայն դաս մը մարդիկ կը վայելեն, իսկ միւսները թշուառ ստրուկներ են, որ ոչ միայն կրթութեամբ այլ ապստամբութեամբ պիտի վերածնին և իրենց շղթաները քակելու պիտի յաջողին: Կ'զմայլէի Մաձինիի ու Կարիպալտիի վրայ որ արդէն ոչ միայն Իտալիոյ մանր մունր բռնաւորներու այլ բոլոր Եւրոպայի դահակալներու դէմ պատերազմ հրատարակեր էին ու դաղտնի ընկերութիւններ կազմելով ազատութեան ու անկախութեան ոգին դործաւորներու մէջ սփռելու կ'ջանային: Այս ազատական սկզբանց յարած էի ինչպէս կ'յարի ծովին ընկղմող մարդը տախտակի մը և անոնց մէջ ապերու փրկութիւնը կը տեսնէի: Բայց բաւական չէր ընկերվիրական սկզբունք ուսնեալ, պէտք էր դործադրել: Անտարակոյս բիւրաւոր մարդիկ կային Եւրոպայի մէջ որ ինձի պէս դաւնացած՝ զինած էին հաստատեալ անիրաւ օրինաց դէմ, կղերին փառամոլութեան ու միրապետութեան դէմ, բռնապետական իշխանութեանց դէմ, աղնուականաց լրբութեան դէմ, դրամապղծի անիրաւութեան դէմ, մէկ խօսքով անթիւ ընկերային զեղծմանց դէմ և այս դարաւոր չարիքը ընջնջելու համար զանազան միջոցներ կ'խորհէին: Ֆրանսայի մեծ յեղափոխութիւնն մանկական արկինք մ'ունեցեր էր, հիդրային մէկ գլուխը միայն կարեր էր: Եւրոպայի ժողովրդոց համախոհութեամբ դաշնակցութիւն մը, ապստամբութիւն մը միայն կարող էին այդ հրէշը սատակել: Արդէն այդ շարժման նշանները կ'երեւէին. Եւրոպայի բոլոր ժողովուրդները մեծ յուզման մէջ

էին: Հրաբուխը ներսէն կ'բորբոքէր, կ'եռար և ընդհանուր ցնցում մը, պայթում մը կ'սպառնար: Դարձեալ Ֆրանսա եղեր էր այդ ցնցումը տուողը: Այս երկրին ժողովուրդն ազատութեան ոգիով կ'լինի միշտ, բայց դժբաղդաբար կէս ճամբան կ'մնայ, ստէպ ետ կ'դառնայ ու իր առաջադրած նպատակը կ'մոռնայ: Աւատական ամբարտակ, վնդան, Պասթիլը կ'կործանէ, պահ ու սեղան կ'խորտակէ, թագաւորի ու քահանայի դլուխներ կ'կարէ, ամեն տեսակ բռնութեան դատապան խորտակելով տեղն ազատութեան ծառն ու հաւասարութեան արձանը կ'կանդնէ իրաւ, բայց հէն պարերու այդ ամեն կուռց բեկորները վերջէն մէկ տեղ բերելով նորեր կ'վերակազմէ տարբեր դոյներով:

Արդէն Կարոլոս Ժ դահէն վար գլորեր էր և Լուի Փիլիպ, սահմանադրաւեր նոր թագաւոր մ'ընտրուեր էր, որ վերջերն իր Կիզոյի յամառ ու գձուձ քաղաքականութեան զոհ գնալով՝ գեղացիի պէս ծպտեալ Անկլիա պիտի խոյս տար, արդէն Ստորին-Նահանգաց մէջ պատերազմի փողը կ'հընչէր, Հոլանտայի դէմ Պելժիդացիք կ'ընդվզեցին և անկախ իշխանութիւն մը ձեռք ձգելու կ'նկրտէին, արդէն Յունաստան իր անկախութիւնը ստացեր էր և Փարոսխպրիա անոր գլուխն էր, Գերմանիա, Զուիցերի և գրեթէ բոլոր եւրոպական տէրութեանց մէջ ժողովուրդները յեղափոխութեամբ քաղաքական իրաւունքներ կ'ստանային՝ երբ Լեհաստան ալ Վարշաւ քաղքին մէջ ապստամբութեան դրօշակը կանգնեց: Լեհաստան՝ որ արդէն իր ներքին վարչային յատկ դրութեամբ և ժէզվիդներու ներշնչած կրօնամոլութեամբ անիշխանութեան որս ընկած և երեք կատր եղած էր երեք պղպակալ տէրութեանց մէջ գրեթէ ութսուն տարի առաջ, դեռ ազատութեան ոգին կ'պահէր: Թէև գանի մ'անգամ փորձ փորձեր էր Ռուսիոյ դէմ, թէև իր քաջութեամբ արիացեր գերատեան երիտասարդներ և ի վերջ Վարշաւի ձեռքը վիրաւոր գերի ընկեր էր, թէև ռուսական

արիւնկզակ ու հրձիգ զօրաց ձեռօք իր անհամար զաւակներն սրէ անցեր, որոց եղեր ու աքսոր գացեր էին, իր քաղաքներն ու գիւղերն այրեր աւերեր էին, սակայն դեռ յոյսը կտրած չէր ազատութենէ: Եւրոպա անտարբեր աչօք կ'իներ էր այն ազգասպան բաժանումն որ Ռուսիոյ, Բրուսիոյ և Աւստրիոյ ձեռօք առաջին անգամ կատարուեր էր —յանուն կաթոլիկոսականի և խաղաղասիրեան: Դիւանագիտական զաւեշտ: Ուստի երբոր բոլոր Եւրոպա ազատութեան համար ոտք կ'ելլնէր, Լեհաստան կարծէր էր հանդարտ նստիլ, մանաւանդ երբոր Նիկողայոս կայսրն Առաջին Աղեքսանդրի յաջորդելով՝ աւելի ևս սկսաւ ճնշել լեհ ժողովուրդն ու անոր տրուած սահմանադրութիւնը ջնջել:

Քլօբիւքի ապստամբութեան գլուխն էր՝ ի Վարշաւ. Կոստանդին դուքսն, որ իբրև փոխարքայ կ'իշխէր, հազիւ կրցեր էր պրծիլ ապստամբաց ձեռքէն: Ամեն կողմէ կամաւոր զինուորներ ու նպաստ կ'հասնէին Լեհաստան: Պատեհ առիթ սեպեցի անտանելի վիճակիս սփոփում մը և թշուառ ազգի մը համար արիւնս տալ: Գիտես արդէն, սիրելի վ.ուտ, թէ Լեհացիք ինչպէս ելան այս կռուէն: Ազատութեան կատարեալ յաղթանակը դեռ մօտալուտ չէ, քանի որ ազատութեան թշնամիներն իրենց ձեռքն ունին բուռն օյժ, վայրենութիւն: Նոյն միջոցին Ռատզիվիլ իշխանը լեհական բանակին կ'հրամայէր: Ուրիշ օտար վաշտեր ալ կազմուեր էին որոց մէջ բազմաթիւ հայեր կ'պատուէին: Ռատզիվիլ զիս պնդապետ կարգեց. իր վստահութեան անարժան չեղայ: Ցոյց տուի իմ անկիւլեան պաղարիւնութիւնս ու անվեհերութիւնս գնդակներու ու կրակի մէջ, որ զիս կ'շրջապատէին: Այս կռուին մէջ կանայք մեզմէ վար չէին մնար արիութեան կողմէ: Աւիւծի պէս կ'կռուէինք անտանի Տիէպիչի և Բասքեվիչի դէմ, այնպէս որ Թրքաց ու Պարսից այս ռուս յաղթողներն ահարեկ տեսան թէ ինչպէս, թէև թուով աւելի քիչ, ուազմագիտութեամբ նուազ Հարտար, կարող էինք

ինորտակել և ստէպ՝ ի փախուստ դարձընել իրենց հզօր ու քաջավարժ գունդերը: Ռուսաստան պահ մը նեղն ընկաւ. ինչպէս սովոր է, դրացի տէրութեանց դուռը զարկաւ ու աջակցութիւն խնդրեց: Արդէն իր զորակիցներէն մին, Բրուսիա՝ պատրաստ էր օգնելու: Այս օգնութիւնը հասաւ: Լեհաստան, որ կ'սարսռէր երկու զօրաւոր տէրութեանց Հիրանին ներքև, աչքը Ֆրանսայի ու Անկլիոյ դարձուց աղերսագին, բայց երկուքն ալ անտարբեր մնացին արիասիրտ ազգի մ'ողջակիզին առջև: Այս ազգասպանութիւնն ամբողջին մէջ իրենց սուղն պիտի նստէր և քաղաքական կնճիռներու տեղն պիտի տար: Եւրոպայի անզորրութեան համար այնքան էր պաշտպանել Լեհաստանն որ կրնար իբրև թումբ կանգնիլ Ռուսիոյ դէմ: Ամեն կողմէ անոյշ՝ Քրուքովիեքի զօրապետը յետին Հիգ մ'ըրաւ Վարշաւի մէջ, որու դէմ կ'քալէր Բասքեվիչ: Դիւցազնական եղաւ մեր դիմակալութիւնը, բայց անարդիւն: Ընկաւ Լեհաստան ընչասպառ, այլ չմեռաւ: Բնակիչներուն մէկ մասը Կովկաս ու Սիպերիոյ անապատները փոխագրուեցան, ամենք օտար երկիրներ զաղթեցին, իսկ մնացողներն սարկութեան գատապարտուեցան. Ռուսիա այս արիւնալի ղէնն, որ միշտ կ'շարժի, պիտի կարենայ մարսել:

Ահա այն տեղն ես ալ ստիպուեցայ հեռանալ այս թշուառ երկրէն, ուր՝ եթէ մահս գտնէի, այս տաժանելի կեանքէս պիտի ազատէի: Ի գարձիս Լոնտոն՝ մեծ անուն ունէի. Լեհաստանի քաջերէն մին կ'համարուէի և ընկերական ախումբներու մէջ կ'փնտռուէի: Այն տեղն էր որ յարաբերութիւն կապեցի լորտ Խսահէմի հետ, որու համար յանձնարարութիւն մ'ունէի Լեհաստանէն: Լորտը զիս սիրով հիւրընկալեց ու պատուեց, մինչև անգամ այլ և այլ պաշտօններ առաջարկեց: Ես մերժեցի. զինուորական էի, չէի ուզեր պարտաւոր մնալ լորտի մը: Իսկական համարեցի իր տունը ստէպ յաճախել: Արդէն գիտես թէ ինչ եղաւ այս յարաբերութեան արդիւնքը: Լիլին զբաղեց զիս և իմ քո-

լոր կեանքս փոխեց։ Լոնտոնի լեզուն էի, ամէն լրագիր, ամէն բերան իմ քաջութիւններս կ'պատմէր. աղջկունք իմ ակնարկս կ'փնտռէին։ Ոչ ոք կ'հարցընէր թէ ուստի՞ եկած եմ, ո՞վ եմ, և ես ալ պահ մը կարծեցի թէ բան մ'եմ և կրնամ իմ սէրս պսակել։ Բայց երբոր հոչակս մոխի պէս անցաւ, երբ Լէտի Իսահէմ ալ անարգեց, Լիլլին ալ մերժեց, նորէն իմ առաջին մթութեան մէջ ընկայ, յանդգնութեանս վրայ զարմացայ և շունչս Արեւելք առի։

Այս է կենացս համառօտ պատմութիւնը, սիրելի վուտ, կ'տեսնես որ տխուր է և մութ։ Անյայտ ծագում մը, դժբաղդ սէր մը, յուսակտուր ապագայ մ'ինձ բաժին ընկած են։ Ձեմ ուզեր բնաւ որ Լիլլին իմանայ իմ սրտիս վիճակը։ Կարելի է որ ջինի խնամակալս անոր ամէն բան յայտնեց. արդեօք Լիլլին կ'ճանչէր, արդեօք անպտանելի է այդ մարդն որ անտարակոյս այս հանելուկը պիտի կարենար մեկնել։ Ա'ղ ոչ սփոփում և ոչ գարման կ'փնտռեմ. քեզ ունիմ միայն երկրիս վրայ և երբ անկից բաժնուիմ դու միայն հառաչ մը պիտի տաս անքաղդ մահերիդ յիշատակին։

ՆԱՄԱԿ Ի

ՎՈՒՏ ԱՒ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, Մեր թղթակցութիւնն որ այնքան դադարէ ու երբեմն օգտաւէտ էր քիչ քիչ ոզբերդ մը կ'դառնայ ու իր նպատակէն կ'շեղի։ Նոր նոր բաներ կ'իմանամ, կ'ցաւակցիմ

քեզ, բայց՝ ձշմարիտը, քու յուսահատութիւնդ ու վարմունքդ աւելի անմխիթարելի հանելուկներ կ'երեւին ինձ քան թէ կենացդ ու սիրոյդ նկարագիրը։ Ցանկարծ ինչ եղար. ուր մնայ անկրկնական վէպութիւնդ որով ամէն կանացի ու թոյլ ղպացութիւններ կ'արհամարհէիր և մինչև անգամ միխիթարական խօսք մը նախատինք կ'սեպէիր։ Ես կարծէի թէ դեղ մը գտնել դիւրին էր այդ յուսահատ վիճակիդ ու այլ և այլ միջոցներ առաջարկեր էի։ Հիմակ կ'մերժես ամէն բան, ինչպէս որ մերժեր էիր և ատեն մը Լիլլին, իբրև անհատատրիմ, սակայն ահա անոր յիշատակին սորուելն եղեր ես։ Այլանդակ բան մ'է մարդու սիրտը. երբ սիրուի ծանրէն կը քաշէ, երբ արհամարհուի կամ անհատատրմութեան հանդիպի աւելի ևս կ'բորբոքի։ Շատ հաւանական է որ եթէ Լիլլին յաւիտեան քեզի կապուած ճնալու ուխտ ըներ և այդ ուխտը պահելու համար ամէն բան աչքն առնէր, դու զինք զոհէիր քու եսասիրութեանդ ու բնաւորդ մը դառնայիր անոր դէմ։

Բայց դիտողութիւն ու հպարտութիւն մէկդի թողունք, քեզ պաշարող բուն երկու կասկածները կան. առաջինն այս է թէ արդեօք Լիլլին պատրի՞ք քեզ. երկրորդն այս է թէ արդեօք դու անծնո՞ղք մարդ մ'ես։ Առաջին կէտին նկատմամբ՝ տեսայ որ տակաւին Լիլլին դու չես ճանչեր, բարեկամ։ Կան սիրտեր որ մէկ անգամ կ'սիրեն և իրենց առաջին սիրոյն կապուած կ'ձնան, թէև մարմնապէս ուրիշին կ'անցնին։ Այս տեսակ սիրտ մ'ունենալ կ'երեւի և Լիլլին, որ՝ թէև ուրիշի հետ նշանուած, դեռ քեզի հետ կապուած է։ Եթէ կարդուի իսկ, իր սիրտը քուկդ է։ Երկրի վրայ շատ Շարլզդներ կան որ մեր հասկցած պարտուց ու բնաւկան օրինաց մէջ կ'մաքառին և պատշաճութեան, հասարակաց կարծեաց ու նորելուկ պատուոյ համար կ'զոհուին։ Լիլլի ոչ միայն կ'սիրէ այլ և կ'դաւաճ, քու ծնունդդ, ստակդ, կերպարանքդ չքնաղ այլ բնութիւնդ, աղնուութիւնդ, դոր-

ծանէութիւնդ: Լորտի աղջիկ է, աղնուական արիւն ունի այլ բլեպէյեան սիրտ: Իրեն համար սիրելն ապրիլ է. քեզ կ'սիրե ուստի և գոռ կ'ապրի: Եթէ ապրելէն դադրի՝ դիտցիր որ սիրելէն դադրեր է: Անմեղութիւն, միամտութիւն համարէ, այս այսպէս է: Խօսքկաս, նշան, պատկ, արարողութիւն նշանակութիւն մը չունին Լիլիին համար երբոր սիրաերն անկապ են: Պատժոյ արժանի ոճիր մը կ'նկատե սիրողի մը խօսք տալ և այդ խօսքը դրժելը: Բարեկամ, ես կ'վախնամ այս տեսակ ծայրայեղ սէրէ որ սովորաբար աղէտից կ'յառնդի և որ քիչ կ'դոնուի աշխարհի վրայ, վասն զի շատ Լիլիներ չկան: Իսկ դու անդիտեր ես այդ խորունկ սէրն և կասկածներովդ վերաւորեր ես էակ մ'որ անմեղութեան ու անկեղծութեան կենդանի տիպար մ'է: Թերևս հիմակ երևակայես որ շատ կ'դժուեմ այդ պատկերը, բայց կ'սխալիս, ինչպէս որ ես ալ առեն մը սխալ գաղափար էի Լիլիին, ընդհանրապէս կանացի սեռին վրայ ունեցած կարծիքս հիմ բռնելով, մինչդեռ նա բացառութիւն մ'է եղեր: Ի՞նչպէս, իմ քննութեանց արդիւնքն ուրիշ անգամ պիտի յայտնեմ:

ՆԱՄԱՆ ԻՆ

ՎՈՒՏ ԱՄ ՆԵԼՍՕՆ

Լանդըն . . .

Բարեկամ, խոստումն պիտի կատարեմ: Հարկ էր նախ սիրոյ խնդիրը պարզել որպէս զի ձակատ պարզի ու հիւանդութիւնդ բուժի: Միջնորդի չդիմեցի այլ ուղղակի բա-

նակիս ուղեցի: Սիրոյ մէջ միջնորդութիւնը ստէպ մատնութեամբ կ'լուծուի. միջնորդը քիչ քիչ սիրահարի պաշտօն կ'վարե և անոր տեղը կ'անցնի: Եթէ ես նոր ամուսնացած չլինէի, պիտի մերժէի, իբրև բարեկամդ, այդ միջնորդութիւնը: Հիմակ ինքզինքէս վախ չունիմ, կրնամ մտնել այսպիսի հրատապ գործի մը մէջ, որու համար սուր աչք, նուրբ ճաշակ և առելի խոհականութիւն պէտք է քան թէ քաղաքական խնդրոյ մը լուծման համար:

Արդ՝ իմ առաջին փոյթս եղաւ մօտէն տեսնել Պարոն Տէնտին և անոր սիրային տրամադրութիւնները քննել: Տէնտին կ'ճանչէս. անունը վրան է: Թեթև, պճնասէր, պարծուկ ու զբօսասէր պատանի մ'է. բաւական ձևաւոր ու բարեդէմ, բայց այնքան կ'ծուռմկի, կ'պճնի, սիրուն, աղուոր, գրաւիչ երևելու համար որ յետին ծայր կ'տգեղնայ. մանաւանդ երբ ծիծաղի և խօսի բոլորովին գռեհիկ կերպարան մը կ'առնու: Հիմակ առելի վրայ դրեր է: Անդադար կ'ծիծաղի առանց պատճառի և այնքան բայ բերան է որ առջևն ելնողին կը պատմէ թէ սիրուհին ինչ անուշ կապոյտ աչքեր ունի, մարգարտի պէս ակռաները քանի հատ են, քիթն ո՛րչափ աղուոր է, ինչ ծաղիկներ կ'սիրէ, ինչպէս կ'նստի, կ'ելնէ, կ'քալէ, օրը քանի անգամ իրեն կ'ժպտի, ինչ ուշիմ խօսքեր ունի: Ուստի դժուար չպիտի լինէր ինձ բերուէն շատ բաներ քաղել: Միայն առիթ մը կ'փնտռէի սիրոյն վրայ խօսք բանալու, և երբոր օր մը մինակ էինք Քլէ-ը բնաւէս հարցուցի.

— Պարոն Տէնտի, երջանիկ ես:

— Ո՛հ, շատ, շա՛տ:

— կ'սիրե՞ս:

— Ո՛հ, խենդի պէս. բոլոր աշխարհ գիտէ որ տարիէ մը պիտի կարգուիմ անուշիկ օրիորդի մը հետ, որ դեղձանիկ, գանգուր մազեր ունի, մեր Քաաթը չնիկլին պէս, կարմրուն պզտիկ բերան, շիկահատ պէս, Ճերմակ վիզ, կարապի

պէս, նուրբ մէջք՝ աքիսի պէս, բարակ հասակ՝ սիրամարդի պէս: Ա՛ւ այժմ եփելու վրայ ենք: Քիչ մը դիւրաբեկ ու փափուկ է իմ բազկիս համար, քիչ մ՚ալ հպարտ, մաղձոտ, վեհերոտ ու լալկան կ՚երևի: Միշտ տամուկ են աչքերը. անշուշտ ինձի համար արտասուք կ՚թափէ: Բայց վերջէն պիտի խնդայ, Պարոն Վ.ուտ, վերջէն պիտի դիրնայ, պիտի զուարճանայ, երբոր իմ ապարանքս բնակի, պարահանդէսներ յաճախէ, արքունիքը ներկայի, ձիարշաւներու դանուի: Կ՚երևի թէ հիմակ շատ կ՚ամչնայ իրմէ, այնպէս որ երեսս նայելու տեղ շանս կ՚նայի, զոր սիրուհոյս չափ կ՚սիրեմ, վասն զի շատ խելացի է և անոր մօտ կ՚նստի: Ա՛յժմէն կ՚պահպանէ իմ ապրանքս:

— Բայց դեռ քուկդ չէ, Պարոն Տէնտի. կարելի է որ նա քեզ չսիրեր:

— Զի՛ս չսիրեր, հապա զո՞վ պիտի սիրէ. միթէ կարելի՛ է որ զիս տեսնող օրիորդը չսիրէ: Բոլոր Լոնտօնի օրիորդները վրաս կ՚խելնան. սիրագիրներ կ՚տեղան դլուխս. ո՛ր մէկուն հասնիմ: Կ՚ուզէի անհամար սիրտեր ունենալ որ ամէն մէկուն հատ մը տամ, թէև հիմակ սիրտ հարցընող չկայ, այլ ոսկի, ոսկի ու դարձեալ ոսկի: Է՛հ, փառք Աստուծոյ. յիսուն հազար լիբրայի եկամուտ ունի հայրս: Եթէ ուզեմ, թագուհին անգամ աղջիկը կ՚տայ ինձ:

— Ուրեմն փորձէ՛. ինչո՞ւ համար աչք նետեցիր աննշան լորտի մ՚աղջկան վրայ, որ քեզի աչք չունի, կ՚ըսեն ամէն տեղ:

— Զարմանք, աչք չունի՞, այդպէս կ՚ըսեն, բայց որո՞ւ փոյթ. աղջիկներն այդպէս նաղեր կ՚ընեն, դրսէն դժկամակ ներսէն դոհունակ են սիրողի առջև, այդ իրենց խաղն է. ես չեմ բռնուիր և դիտեմ զսպել անմարդ ու վայրենի մարուկ մը: Ասկէ զատ, պէտք է որ կատարեմ հօրս կամքը: Հայրս լորտ Սէնթ ֆօրտ՝ լորտ Խոտհէմի վաղեմի բարեկամն է, ատոր խօսքէն դուրս չելներ. ես ալ չեմ ուզեր անաստել

հօրս՝ որ յիսուն հազար լիբրայի եկամտի տէր է, կ՚իմանաս Պարոն Վ.ուտ:

— Այդ ծուռ հաշիւ է, Պարոն Տէնտի: Քու հօրդ մէկ հատիկ ժառանգորդն ես, կրնաս ուզածդ ընտրել և միանգամայն ժառանգել: Ես չէի առներ, եթէ քու տեղդ լինէի, զնս չսիրող օրիորդ մը . . . :

— Իրա՞ւ, ուրեմն զնս չսիրելուն համար պէտք է դրաւել անոր սիրտը. միթէ արիութիւն չէ՞ այս:

— Ինքնասիրութիւն է, եթէ կ՚ուզես, բայց վէհանձնութիւն չէ:

— Ոսկին ամէն բան է, բարեկամ: Մ՚ինչև կ՚փափաքէի դիտնալ որ ինչո՞ւ համար այդպէս իմ սիրոյս մէջ կ՚մտնես: Նպատակ մ՚ունի՞ս . . . :

— Ես իբրև բարեկամդ կ՚խօսիմ քու օգտիդ համար: Կարելի է որ սիրուհիդ ուրիշ սիրող մ՚ունի, որ կրնայ քեզ մենամարտի կոչել:

— Ա՛յն ատեն քեզ իբրև վկայ պիտի հրաւիրեմ: Օրիորդ Խոտհէմն իմն է. զանի ձեռքէս խլելու մարդը դեռ ծնած չէ: Պիտի միանամ հետը և վերջս ինչ կ՚ուզէ թող լինի, դժբաղդ կամ երջանիկ: Ես դրամ ունիմ և կարող եմ անկախ կեանք մը վարել, իմացար, Պարոն Վ.ուտ:»

Եւ այսպէս խօսելով Պ. Տէնտի ոտներն երկնցուց, գաբէջրի բաժակը ձեռքն առաւ ու ածոյ կենացն ըսելով սկսաւ քաղ քաղ խնդալ:

Ընթերցո՛ղ, ահա նշանաւոր ոսոխիդ հարեանցի նկարագիրը: Քիչ ըսի շատ հասկցիր: Սէրն այսպէս կ՚իմանայ, իբրև խաղալիկ, զբօսանք, և իրաւ ինքնասիրութիւն է իրեն համար: Անկարող եղայ իր մտքին մէջ կասկած մը պրդռել, նախանձ յուզել և առնելիք ծանր քայլին վրայ մտածել տալ: Սոսկալի է որ այսպէս կ՚լինին շատ անմտութիւններ. հարստութիւնը հարստութեան հետ, պատշաճութիւնը պատշաճութեան հետ, խենդը խելօքին հետ, ծուռիկը ուղղուս-

կէն, ծերը նորահասակին, սէրն առելութեան հետ կ'կարդէն և ապա կ'ելնեն կ'զարմանան, կ'դանդատին որ շարունակ ընտանեկան վէճեր, դատեր, կռիւներ կ'պատահին և թէ ամուսնական երջանկութիւնն հազուագիւտ բան մ'է:

Կ'մնար ինձ հասկընալ թէ Լիլին ինչ վիճակի մէջ էր: Թէև դիւրին էր Պ. Տէնտին տեսնելէն առաջ՝ երևակայել օրիորդ Խատհէմի ցաւալի կացութիւնը, բայց խնդիրն անձնապէս ստուգելու համար դժուարութիւններ կային: Այս մտօք՝ մի քանի անգամ՝ լորա Խատհէմի ապարանքը գացի և չկրցայ մինակ խօսիլ Լիլիին հետ, որ ինձ տեսնելուն ոդի կ'առնուր, աչքերուս ու բերնիս մէջ կ'նայէր և անշուշտ լուրի մը կ'սպասէր: Վերջապէս օր մ'երբ Րիճէնդ Բարք գացեր էի ման գալու, դիտեցի որ Լիլին անկիւն մը քաշուած՝ ծառի մը տակ նստեր կ'կարդար: Հեռուէն ինձ տեսնելուն ոտք ելաւ, գիրքը պահեց ու սկսաւ պարտիլ: Երբոր իրեն մօտեցայ, թեթև կարմրութիւն մ'իր երեսը գունատուեց, իր այլայլութիւնը զսպելու կ'ջանար որպէս թէ իր սիրտը լինէի: Շատ պարզ հագուեր էր Լիլի. բարակ կտաւէ շրջազգեստ մ'իր նազելի մարմինը կ'գրկէր. յարդէ գլխարկ մը ղըր կապոյտ ժապաւէնով մը բոլորեր և ծայրն եաին ձգեր էր, իր ոսկեփայլ մազերը հալիլ թէ կ'ծածկէին. սպիտակ վիզէն սև սամթէ ճեպսուկ մը կախեր էր, որու ծայրը խաչ մը կար որ Լիլիի կուրծքին վրայ կ'հանգչէր. նեղ ու դոզ տրիկ կօշիկ մ'իր մանր ոտքերը կ'ամիոփէր. իսկ դէմքը, շարժումները, քալուածքն անկարագրելի անուշութիւն ու ազնուութիւն մ'ունէին: Սիրոյդ մ'աչքը թերևս ճանչեր Լիլին՝ երկար բացակայութենէ մ'ետք, ես, ճիշդը խօսելով, չկրցայ իսկոյն ըսել որ տարի մ'առաջ տեսած օրիորդս էր: Ա՛յնքան մեծ փոփոխութիւն մը կրեր էր իր բոլոր մարմինն ու կերպարանը: Իր ծաւի աչքերն անգամ մթացած կ'երևին և անոնց բոլորտիքը թեթև սև ծիր մը նկարուեր էր: Այս ամենն իր նիհարութեան, տրամութեան, տկարութեան ու

գունատութեան հետ ցոյց կ'տային թէ մրչափ տառապեր, հսկեր, լացեր էր անբաղդ աղջիկն, և որու համար, աւելորդ է ըսել: Հետևապէս աւելորդ էր նաև հարց ու փորձ ընել իր վիճակին և վերստին ցաւերը զրգռել: Ուստի՝ քանի մ'օդային խօսքեր ընելէն ետև՝ իր քովէն հեռանալու կը պատրաստուէի երբ Լիլի մեղմիկ ձայնով մ'ըսաւ.

— Պարոն Վուտ, այսպէս շուտ:

— Կ'վախնամ որ անհանգիստ չընեմ քեզ, օրիորդ: Անշուշտ ուշագրաւ բան մը կ'կարդայիր և իմ պատճառաւս քնդհատեցիր ընթերցումդ: Սիթէ ինձ անբաղաքավար չե՞ս գտներ:

— Հիմակ չէ, այլ մեղի այցելութիւններդ դադրեցընելէդ ի վեր:

— Բայց ձեր տան նոր այցելուներն հիներուն տեղ չեն տար:»

Այս ակնարկութեանս վրայ՝ Լիլին գոյն առաւ տուաւ, շրթերը դողդողացին, աչքը վար իջեցուց և ապա հանդարտ պատասխանեց.

— Կ'սխալիս, Պարոն Վուտ: Քիչ շատ կարողութիւն ունիմ հինին ու նորին մէջ եղած տարբերութիւնը գտնել և կ'զարմանամ որ մեր տան հին բարեկամ մ'այսպէս անտարբեր, մոռացկոտ ու անիրաւ գտնուի:

— Քիչ մ'իրաւունք ունիս, օրիորդ, միայն պարապանները փոխուած են և ես լսածս կ'խօսիմ:

— Ի՞նչ են լսածներդ. ես ամեն լսածիս չեմ հաւատար:

— Այս է որ սիրտդ ուրիշի տուեր ես. Պարոն Տէնտին երջանիկ պիտի լինի, մինչդեռ տարակոյս բարեկամ մ'ապերջանիկ պիտի տառապի: Արդեօք չհաւատամ:»

Լիլիի գոյնը նետեց. քիչ մ'առեն արձանի պէս անշարժ կեցաւ. կենդանի միայն իր անուշ աչքերն էին որ իր սրտին յուզմունքը կ'յայտնէին և հազար լեզուէ աւելի ճարտասան էին. և ապա մրմնջեց.

— Մարդիկ ամեն բան երևոյթի վրայ կ'դատեն, նոյն իսկ անոնք որ սիզբունք, սիրտ ու սէր ինչ է գիտեն: Ձեմ կարդդ այսպիսիներու դատողութիւնն ուղղել խօսքով, վասն զի տեսայ արդէն որ խօսքս անզօր է, այլ կ'ըմդդում որ իրողութիւնները ջրեն անոնց սխալմունքը, թէև ուշ:

— Բայց մինչև հիմակ պատահած իրողութիւնները քեզի դէմ կ'խօսին, աղնիւ օրիորդ, ինչու համար փորձ մը չես ըներ ցրուելու կասկածները որ բոլորովին անհիմն չեն. քու մէկ խօսքդ, ժպիտդ, ակնարկդ բաւական էր առեն մ'ամեն մնայլ փարատել, այժմ ինչպէս պիտի ջրես ահագին իրողութիւն մը, նշանած մ'որ քեզի սահմանուած է:

— Պարոն Վուտ, իմ նշանառուքս դիպուած մ'է, իմ ստրկական վիճակիս արդիւնքն, որ նշանակութիւն մը չունի ինձ համար: Կարևոր կէտն այս է. անյուսալի էր անվստահութիւն, կասկած այնպիսի անձի մը կողմէ որ այս վիճակը քաջ գիտէր, աւելի ծանր վէրք մը բացաւ այդ կասկածոտ վարմունքն իմ սրտիս մէջ քան թէ ծնողացս բուռն կամքն որու առջև ծռելու ստիպուեցայ: Ա՛յս իմ հնազանդութիւնս անհաւատարմութեան նշան չէր: Բարեկամդ չըմբռնեց այս բանս և զիս արհամարհեց ու ամբաստանեց: Այդ ամբաստանութիւնը բաւական էր սպանանել իմ սէրս, եթէ այդ սէրս կեանքս չլինէր: Լռեցի, լացի, ինքզինքս արդարացնելու չկամեցայ, քաջ գիտնալով որ եթէ խօսէի անդամ անօգուտ պիտի լինէր: Վասն զի դուք մարդիկ եսասէր էք. խօսք, ուխտ, երդում բաւական չէք համարիր, աւելի իրական ապացոյցներ կ'ուզէք, ծանր զոհողութիւններ կ'պահանջէք: Կ'պահանջէք որ օրիորդ մը ձեր սարուկը լինի, մինչդեռ զան թագուհի կ'անուանէք, կ'ուզէք որ ամեն բան առէ և միայն ձեզմով ըզգաղի, ամեն ընտանեկան կապ անմիջապէս կտրէ, հայր, մայր, ազգական թողու, ուրանայ նոյն իսկ Աստուածն և ձեզ պաշտէ, իր սէրը բոլոր աշխարհի հռչակէ, հալի, մաշի և իր սիրողին նահատակ լինի, եթէ ընդդիմաբերիւն, արգելք մը տեսնէ, ամեն ընկերական պատշաճութիւն, ամեն ակնածութիւն առ ոտն կոխելով: Ես այդպէս չեմ իմանար սէրը, Պարոն Վուտ, փոխադարձ վստահութեան ու հաւասարութեան մէջ կ'գտնուի այն, և եթէ բարեկամդ չէ ճանչցած զիս, ոչ է յանցաւորը: Ես իրմէ աւելի արիութիւն, աւելի անձնուիրութիւն, աւելի վստահութիւն ու համբերութիւն կ'յուսայի. կ'ցաւիմ որ յոյսերս պարապ ելան: Թողուց զիս որ մինակս մաքառիմ անհնարին դժուարութեանց դէմ, բռնութեան դէմ և ինքն առաւ դլուխը գնաց: Սիրտ ունեցող մարդ այսպէս չվարուիր . . . :

— Բայց, աղնիւ օրիորդ, պարտաւոր չէիր իր վերջին դրոյն պատասխան մը տալ: Աւելի որոշ խօսիմ. նելսօն այնպիսի լուրեր կ'ընդունէր որ չէր կարող չկասկածիլ, ձեռքն այնպիսի գրեր ունէր որ քու սէրդ կ'արատէին, արդէն գիտես: Ի՞նչ ընէր, որո՞ւ դիմեր այդ արատը սրբելու համար:

— Թող իր սրտին, իր սիրոյն խորհուրդ հարցընէր: Իմ առաջին խօսքս վերջինն էր, ինչպէս որ վերջինը պիտի լինի իմ առաջին սէրս, որու վրայ դառնալ աւելորդ է:

— Չէ, աւելորդ չէ, պէտք է պարզել այս կենսական խնդիրն, որմէ կախում ունի իմ ձշտաւոր բարեկամիս բաղդը:

— Շատ ուշ է:

— Կ'տաղաչեմ, աղնիւ Լիլի, լաւ նկատէ այս կէտը. երբ որ լուսինդ իրեն անտարբերութիւն մինոյ Նելսօն, այն ատեն միայն՝ անյոյս ու վշտաբեկ, հեռացաւ այս կողմերէն մխիթարութիւն ու թերևս մահ փնտռելու համար: Բաւական չէր որ ոսկի շղթայով մը շղջապատած էին քեզ, սիրտդ ալ, թերևս կամացդ հակառակ, ուրիշ անձի մը պարգևել կ'ուզէին: Նելսօն տեսութենէդ հեռու, գէթ զիրդ առնէր, ձայնդ լսէր, կարելի է քիչ մը հանդարտէր. բայց ո՛չ, նշանառուդ կ'իմանար, կ'զայրանար, կ'փրփրէր, ստէպ Գ. Տէնաիի վրայ յարձակիլ ու զարնելու կ'ելնէր, բայց ես

կ՚արգիլէի. մանաւանդ կ՚վախնար միշտ քեզ վշտացընել։ Իր ոսոխն ու երջանկութեան թշնամին քու սիրոյդ համար կը յարգէր, բայց իր կարողութենէ վեր էր հարսանեացդ ալ ներկայ գտնուիլ ու անտարբեր հանդիստես լինիլ։ Լոնտոնի մթնոլորտը լեռի պէս կ՚ծանրանար իր սրտին վրայ։ Եթէ հոս մնար և մանաւանդ եթէ Պ. Տէնտին մօտէն ճանչէր, անշուշտ դժբաղդութիւն մը պիտի պատահէր և իր սրով առնոր սիրտը ծակելով թերևս քովդ ալ վիրաւորէր»։

Այս խօսքին Էլիի դառն ժպիտով մը պատասխանեց. բայց ես աւելի որոշ պատասխանի մը կ՚սպասէի. կ՚վարանէր նա, ձայն չհանեց։ Ես շարունակեցի.

— Ուրեմն նոր բան մը չպիտի ունենամ դրելու բարեկամիս որ միշտ յուսով կ՚ապրի։ Վիճակիդ ծանրութիւնը կ՚ըմբռնեմ. Պ. Տէնտին յայտնեց ինձ որ տարիէ մը պիտի պսակուի իր փափաքն որու կ՚համակերպիս։ Փոյթ չէ. պէտք է որ մարդ իր ճակատագիրը տանի, քանի որ դարման մը չկայ։ Կ՚ուզեմ որ երջանիկ լինիս, Էլիի, և Նելսօնը չդիշես։

— Բաւական է, պատասխանեց աղնիւ օրիորդը դեղնելով։ Օգուտ չունին այս խօսքերը։ Իմ վիճակս անդարմանելի կը դտնեմ, բայց փաթէ մը բաւական երկար պայմանաժամ է։ Տէնտի անուն անձ չկայ ինձի համար, թէև իմ նշանածս է կ՚ըսեն։ Բայց Նելսօնի համար ալ ես չկամ։ Իրարմէ շատ հեռացանք. մեր մէջ ոչ միայն լեռներ ու ծովեր կ՚գտնուին, այլ աւելի անանցանելի պատուար մը, անվստահութիւն որ սիրոյ դահլիճն է։ Կ՚ցաւիմ, Պարոն Վուտ, որ տուն պիտի դառնամ։

— Յուսամ որ կ՚ներես նորէն տեսնուելու։

— Ինչու չէ։»

Այսպէս իրարմէ բաժնուեցանք, սիրելի Նելսօն։ Երանի՛ թէ դու իմ տեղս լինէիր, այնպէս չէ՞։ Բաւ առ բաւ գրեցի այս խօսակցութիւնս որ դատես ու հետևութիւնը դուն

հանես։ Ես միայն թարգման եմ, բայց այսչափս միայն կարող եմ պնդել որ իմ լսածս ու տեսածս կ՚հաստատեն հաղորդումս։ Էլիին քեզ միշտ կ՚սիրէ. ամենէ առաջ ըսելիքը վերջն ըսաւ. այսպէս են կանայք, մինչև անգամ ամենէ պարզն ու անմեղը։

Իսկ միւս խնդրոյն գալով պէտք է խոստովանիլ որ իմ խուզարկութիւններս դեռ յաջող ելք մը չունեցան։ Պարոն Քինէ, քու խնամակալդ, խորհրդաւոր մարդ մը կ՚երևի։ Զանի գտնելու համար պիտի պարտաւորիմ ոստիկանութեան դիմել։ Քաջ գիտես որ լաւ որսորդ շուներու կ՚նմանին մեր ոստիկանները, թեթև ոտք, սուր հոտառութիւն ունին և ճագարն իր ծակէն հանելու ճամբան գիտեն. ուստի համբերութիւն։ Էլիին վրայ գրածներս խորհրդածութեան բաւական նիւթ պիտի տան քեզի, բայց մի՛ մոռնար նաև Հայերն ալ որոց վրայ շատ աւելի՛ վեր գրած չունիս։

ՆԱՄԱԿ ԻԲ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պալ. . . .

Բարեկամ, Սիրոյս վրայ լուռթիւն պատուիրեր էի քեզի. անպատեհ սեպեր ես պահել այս պատուէրս, և ինձ այնպիսի զարմանալի լուրեր կ՚հաղորդես որոց առջև շփոթեր ձեացեր եմ։ Կ՚պովեմ ջանքդ, բայց միեւնոյն ժամանակ չեմ ծածկեր իմ տարակուսանս վրայ։ Զինուոր մ՚այսչափ վաղ իջնէ։ Անհաւատալի կ՚թուի ինձ այս բանս երբոր պաղ աս-

բիւնով մտածեմ: Ստուգիւ՝ իբրև մարդ՝ ամօթապարտ եմ, իբրև սիրահար՝ ուրախ: Ինչո՞ւ համար աւելի շուտ սիրտս չբացի քեզի և պարապ տեղն այնպիսի վիշտեր հնարեցի ես բնականութեամբ որ հիմ չունէինն:

Ուրեմն Լիլի դեռ կ'սիրէ՞ զիս, ուրեմն երջանի՛կ եմ: Դու միայն կարող ես եղեր վեր հանել այս դաղտնիքը, դու շատ աւելի ճարպիկ և փորձառու ես այս տեսակ խնդիրներու մէջ քան զիս: Շնորհակալ եմ, բարեկա՛մ: Աւելի ա՛զատ կ'շնչեմ, բնութիւնն աւելի աղօր ու փայլուն կ'երևի աչքիս — ապրելու փափաքս կ'աւելնայ: Ինքզինքս դժբաղդ կարծելու պատճառ մը չունի՛մ ալ, քանի որ Լիլին դեռ յիշատակովս կ'ապրի և ոչ միայն խօսքով այլ դէմքովը ցոյց կ'տայ, կ'ըսես, որ իր սիրոյ ուխտը պահած է: Բայց ի՛նչ հպարտութիւն, ի՛նչ մեծասրտութիւն կ'երևի իր վարմունքին մէջ: Ուղղակի ինձ գրել և խոստումը կրկնել չէ ուզեր, վասն զի մի անգամ խօսք տուեր է եղեր . . . բայց պէտք չէ ծածկել, որ բոլորովին անխառն չէ իմ խնդութիւնս: Եւ իրօք ի՛նչպէս միաբանեմ առ իս սէրն իր նշանածին հետ որու անունը զիս գող կ'հանէ ու նախանձս կը գրգռէ: Ի՛նչ գործ ունի այդ ճիւաղը մեր սիրոյն մէջ, ի՛նչպէս կ'յանդգնի բունի սէր պահանջել անձէ մ'որ զինք կ'ատէ, և որու համար ինք անզոյ մարդ մ'է: Ի՛նչ նուաստ հոգի, ի՛նչ անարդ ընթացք: Ասոր մէջն ալ դաղտնիք մը կայ որ հարկաւ քիչ առնէն երևան պիտի գայ: Լիլին կը համբերե՛, կ'հեծծե՛, անտանելի լեզ մ'աղատելու չյոյս ունի, բայց ի՛նչպէս, բնաւ չգիտեր: Տրամադիր եմ հաւատալու որ անկեղծ է, բայց միթէ իր անկեղծութեան աւելի մեծ փորձ մը չըՀպիտի տար եթէ իր վիզն այդ լծին ներքև դնելու առջի օրէն մերժէր, անպատկառ հետամուտ մը վռնտէր, և իր ծնողացը, մանաւանդ մօրը չգիտեր բացէ՛ի բայ որ իր սիրտն ուրիշն տուած է . . . . Ա՛յս պարագան միտքս կ'պղտորէ, վստահութիւնս կ'վրդովէ: Ի՛հ, թէ

որ Լիլի իր պարզութեան ներքև նենգաւոր սիրտ մը կ'պահէ, թէ որ անմեղութեան դէմքով պչրասիրի դեր կ'խաղայ, թէ որ նահատակ մը ձևանալու համար ծնողացը բուռն կամքն իբրև պատճառ մէջ կ'բերէ, թէ որ վերջապէս իր անհաւատարմութիւնը աքօղելու համար այդ տրտում, անուշ ու հրապուրելի լեզուն կ'գործածէ, այն ատեն, վա՛ւտ, այն ատեն ի՛նչ ընելու է: Իաւական չպիտի լինի ինձ ատել, մանաւանդ չափ արհամարհել իգական սեռը, այլ ամեն բան, անմեղութիւն, սէր, առաքինութիւն, արդարութիւն պիտի ուրանամ, արդէն իմ սրտիս մէջ դիզուած լեղին պիտի թափեմ մարդկութեան վրայ և պիտի ապրիմ չէ թէ լալու ու ողբալու համար այլ վրէժ, արիւնալի վրէժ լուծելու համար:

Եթէ կամիս մեղադրէ զիս, սիրելի Վուտ, որ շատ կասկածոտ եմ, կ'յար եմ, ես չպիտի դատապարտեմ այդ կարծիքդ, վասն զի ոչ միայն չես կրած իմ սրտի տառապանքս այլ և չես կարող երևակայել: Հօրէ ու մօրէ զուրկ, ընտանեկան խնամոյ անհաղորդ, մարդկութեան մէջ որբ, անտէր, անտուն ու անծանօթ երբոր մահ փնտռելէն ետև մարդ անկեղծ կարծած սրտի մը կ'յարի իր պաղ կենաց կենդանութիւն տալու մտօք, և այդ սիրտը կ'լքէ, կ'մատնէ զինք, կրնա՞ երևակայել թէ ինչ ահռելի զղացումներով, ինչ տեսլութեամբ ու վրէժխնդրութեամբ կ'լեցուի այդ մարդուն սիրտը, որ միայն սիրուիլ կ'ուզէր, ա՛չ, չես կարող. ուստի մի՛ մեղադրեր զիս եթէ թերահաւատ եմ, ես որ երեմն այնքան դիւրահաւան էի: Իմ միակ փափաքս այն է որ նախազգացումներդ իրանան և սէրը զիս մարդ ընէ և չէ թէ հրէշ մը . . . :

ՆԱՄԱԿ ԻՓ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Ունիմ ժամանակ ուրիշ բանի վրայ խօսելու։ Օրէ օր Հայերն աւելի մօտէն կ'տեսնեմ և նոր նոր գիւտեր կ'ընեմ։ Այլ և այլ քաղաքական յեղափոխութեանց դրոշմ ներն այս Թշուառ ժողովրդեան կերպարանին վրայ կ'տեսնուին։ Արդէն ըսի, այս տեղ շատ դժուարին գործ է ազգայնութեանց տարբեր տարերքն որոշել, այնքան թագուն են։ Քաղաքական իշխանութիւնը Ցակոբ նահապետին կ'նմանի. իր ամէն մէկ զաւկին համար տարբեր գոյնով հագուստներ շինած է, բայց և այնպէս սովորութիւն, բարք, կլիմայ այնքան մեծ ներգործութիւն ունին ժողովրդոց վրայ որ արտաքին խտրութիւնները հարթած են։ Օսմանեան տէրութիւնն՝ իր պաշտօնական կրօնին բերմամբ՝ երբէք չէ մտածեր իր գաւազանին ներքև գտնուող այլազան ժողովուրդները ձուլել, ընդ հակառակն՝ ամէն որոշ ազգայնութեան՝ իր կրօնին նայելով՝ որոշ անուն, պաշտօնական կարևորութիւն ու արտօնութիւններ տուած է։ Մինչ այդ իրաւունքէն Հայերն օղուտ քաղած են, այդ ալ խնդիր մ'է։ Այս իրաւ է որ անցեալէն Հայն ներկայի հայուն հետ բաղդատելով այնքան մեծ տարբերութիւն կ'գտնեմ որչափ երկու հակոտնեայ ժողովուրդներու մէջ։ Շահիլ, ոսկի դիզել, տուն շինել, ձոխ, շռայլ կեանք վարել, ասոնք են Հայուն գլխաւոր հոգերն. ուստի առևտրական և մանաւանդ դրամական գործերու տիրանալու համար զանց չեն ըներ և վատ միջոցներ։ Հարուստ

ու սեղանաւոր փաշայի մ'ոտից ներքև կ'սողան, վաճառականը մեծատան մ'առջև, բանուորը գործատէրին առջև, իսկ աղքատն ամենուն առջև։ Ձկայ բուն ազնուապետական դասմը Հայոց մէջ, հին նախարարական գերդաստանները հատեր են, և դրամի ազնուականութիւն կայ որ անկայուն է։ Ինչպէս որ յետին տաճկի նաւավարն՝ բաղդին բերմամբ՝ կրնայ, մանաւանդ կ'յուսայ օրին մէկը վէզիր լինելու, նոյնպէս յետին հայ սպասաւորը փաշայի մը սեղանաւոր լինելու ձիգ կ'ընէ։ Միշտ գործունէութիւն, աշխատութիւն, արժանիք չեն յաջողութեան միջոցներ այլ գաւ, նենգութիւն, կաշառակերութիւն։ Դրսէն կէս հոլաթափով եկող պանդուխտն ամիրայ մը լինելու կ'փափաքի, վասն զի կ'տեսնէ որ իրեն հայրենակից տէրը այս վիճակին հասեր է, և երբեմն կ'յաջողի։ Առ հասարակ դրամական գործերն Հայոց ձեռքն են։ Կան մարդիկ որ այսօր ամիրայ են, այս ու այն փաշային պաշտպանութեամբ կ'ղօրանան, նոյն իսկ իրենց ազգակիցներուն վրայ կ'բռնանան, և վաղն յանկարծ կ'լինան, բեռնակիր ու մուրացկան կ'դառնան, առանց դանգատելու։ Ապահովութիւն, պատասխանատուութիւն, ուղղութիւն, վստահութիւն հաղուագիւտ բաներ են այս տեղ։ Ձիրար խաբել, իրարու ձեռքէ պաշտօն, գործ յափշտակել, տուն փլչէն մեծ ձարպիկութիւն կ'սեպուի։ Բայց մի կարծեր թէ Հայերն անձարակ մարդիկ են. ընդ հակառակն շատ ձարպիկ են այն գործոց մէջ որոց ծայրը վաստակ կայ։ Ո՛ւր որ դաղթեն կարևոր դիրք մը բռնելու կ'ջանան՝ թէ առևտուրի, թէ արուեստից մէջ։ Օտարանալու հակամէտ են. շուտ կ'յարմարին իրենց ընտրած հայրենիքին կլիմային, բարուց ու օրինաց և միայն իրենց կրօնական սկզբունքն ամուր կ'պահեն։ Հաւածանքէ երկչոտ, բռնութենէ սարսափ, հարկէ ձարտար գործեր են. մինչև անգամ քաղաքական պաշտօններու կ'հասնին և դիւանագիտական հնարագիտութենէ զուրկ չեն։ Երբ Հայն օտար երկիր գաղթէ իր առաջին գործը կը

լինի եկեղեցի մը կանգնել, քովը դպրատուն մը, թէև երբեմն եկեղեցի ու դպրոց թափուր և օտարներու ձեռքը կը մնան: Կ'պատմեն ինձ որ Հայք Եւրոպայի այլ և այլ երկիրներու մէջ դեռ ևս ունին այդպիսի հաստատութիւններ, որ ցոյց կ'տան իրենց անցքը: Ծողովրդեան մը բնութիւնն իր հիմնարկութիւններէն կ'երևի: Անկլիայի ու Ամերիկայի գաղթականներ առաջին անգամ դործարան, տպարան կը հիմնեն, Ֆրանսային թատրոն, Իտալային երաժշտարան, հայն որ երբեմն վանքեր, ճղնարաններ կ'շինէր Հայաստանի մէջ՝ հիմակ գաղթելով մատուռ կ'կանգնէ: Այդ մատուռն իր նոր հայրենիքն է, իր ամրոցն է արտաքին յարձակումներու դէմ, բայց շատ անգամ օտարակրօն թշնամիներ անոր մէջ կ'մտնեն և նոր տարրներ կ'բերեն: Ուստի իրենց հին եկեղեցւոյն մէջ այլ և այլ հերձուածներ մտած են: Հռոմէական, բողոքական, յունական Հայեր կ'դտնուին, որ բուն լուսաւորչական Հայոց աչքին օտարներ կ'համարուին, վասն զի Արևելքի մէջ ազգութիւնները կրօնով կ'զանազանին և Հայոց համար ալ եկեղեցի ազգութիւն կ'նշանակէ: Այս ըմբռնումն արդի տեսութեամբ սխալ է, սակայն իր պատճառն ունի. ուրիշ անգամ կ'բացատրեմ:

ՆԱՄԱՆ ԻՊ

ՎԱՌՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լանգսթ . . .

Բարեկամ, Նամակներդ կ'մատնեն սրտիդ ու մտքիդ առողջութիւնը: Դեղ ու դարման չընդունող հիւանդ մեծ

մանկիկ մ'ես: Միշտ սիրոյ վրայ կասկածներ, իսկ Հայոց վրայ հարևանցի տեսութիւններ: Ա'լ չեմ մեղադրեր քեզ, Նելսօն, վասն զի խորհուրդ մարդկ ընելու վիճակին մէջ չես դտնուիր: Սկսեր ես Հայերն աւելի մօտէն քննել և արձակ դծերով կ'նկարագրես անոնց մի քանի հանդամանքը:

Հայուն կրօնն ազգութենէ չզանազանիր կ'ըսես, և կ'խոստանաս բացատրել այդ սխալմունքը: Արդէն պատմութիւնը կ'մեկնէ զայն: Կրօնի վրայ իմ համոզումս դիտես: Հիմնարկութիւն մ'է այն ուրիշ հիմնարկութեանց պէս որ ժամանակի ու տեղոյ շրջմանց կ'համակերպի: Ցենակ մ'է այն մարդկային տկարամտութեան և գործիք մը կառավարութեան ձեռքը: Պարզմտութեան ու երկիւղի ծնունդ, աւանդութեամբ մարմին ու կերպարան ստացաւ և կեղծաւորութիւն ու շահամոլութիւնը զայն նուիրապետեցին: Կրօնի հին ու նոր պատմութիւնը մարդկային ենթակայութեան ու կրից պատկերն է և իր սոսկալի աղետից նկարագիրն ու յետադիմութեան դրդիռ: Քրիստոնէութեան երևումը ծանրացոց այս վիճակը. մի քանի լաւ բարոյական սկզբունքներ բերաւ մի շատ աւելորդապաշտութեանց հետ: Անմահութիւն քարոզեց և մարդիկը մահացուց, աղքատութիւն խոստացաւ և ազգիս անդին գժոխք դարձուց, Հաւատարմութիւն ու հաւատարմութիւն հռչակեց և սարկութեան շղթաներ դարբնեց, լոյս ու խաղաղութիւն աւետեց մեզ և խաւար ու խռովութիւն սփռեց: Բայց պատմութիւնն ու կարդա այն աստուածաբանական վէճերն ու կռիւները, որ բոլոր Եւրոպան արիւնլուայ ըրին և անթիւ մարդկային զոհեր Քրիստոսի խորանին առջև մատուցին:

Բայց ինչ հարկ կայ հեռուն երթալ. աչքէ անցուր մեր ազգային պատմութիւնը: Շարունակ մեր թագաւորներն ու մեծամեծներն հռոմէական եկեղեցւոյ տիրապետական միտումներուն դէմ կ'կռուին: Տակաւին Անկլիացիք անգամ, որոց մէջ ազատ կառավարութեան սկզբունքն ամենէ յառաջմատաւ,

որ կ'պարծին իրենց սահմանադրական իշխանութեամբ և որ ազատութեան ու ազգայ անկախութեան պաշտպան կ'երևին, դեռ ևս կրօնական հին նախապաշարմանց ծովու մէջ կ'լողան և հազիւ թէ ազգութիւնը կրօնէն կ'զատեն: Թովմաս Պայլէր, Լուտէր, Կալվին անոնց տարբեր ուղղութիւն տուին, և մինչև այսօր մեր ազգին մէկ մասն կրօնն եկեղեցիէն չեն կարող բաժնել: Բաժանումն ասոնց մէջ կործանում կ'համարուի և զանազան աղանդներ, որ այն եկեղեցիէն ելած են, ղիրար մահու չափ կ'հալածեն:

Թէև ազատ քննադատութեան ոգին՝ կրօնի խնդիրներու մասին, մտայ նոր մղում մ'ազդեց, բայց հազիւ փոխեց հին համոզումներ, հին նախապաշարումներ և շատ շատ զատնութեանց նոր անուններ ընծայեց: Տէրութիւնն իր պաշտօնական եկեղեցին ունի, և այդ եկեղեցիէն դուրս եղողն քաղաքական իրաւունքէ կ'զրկեր, իբրև սորուկ, օտար կ'ըմբռնէր: Քրիստոս աւատապետ դարձեր էր, որու սիւսի հպատակէին կրօնապես Իրլանտան, Սկովտիան և բոլոր աղանդական եկեղեցիները: Նոյն իսկ մեր երեսէի Պըրքն՝ որ Ամերիկայի ապստամբութեան ջատագով կեցաւ և ազգերու անկախութեան ջերմ պաշտպան էր, ինչ կ'ըսէր երբ կրօնի ու կառավարութեան խնդիր ծագէր, երբ ազգութիւն ու եկեղեցի զանազանել պէտք լինէր: Կ'ուզէր որ կրօնական խնդիրներու մէջ փոքրմասնութիւնը մեծամասնութեան հպատակի և ազգ ու եկեղեցի մէկ սեպուի, կ'յարէ իր մէկ ճառին մէջ*. —«Քրիստոնէական հասարակապետութեան մէջ եկեղեցի ու պետութիւն մի և նոյն բաներն են, նոյն ամբողջին լրացուցիչ մասերը լինելով: Վասն զի եկեղեցին միշտ երկու մաս բաժնուած է, կղերական ու աշխարհական դասը. երկուքն ալ անոր էական մասերն են և աշխարհականն ալ միսին պէս եկեղեցւոյ բարեկարգութեան ու վար-

*Ed. Burke. Speech on the petition of the Unitarians.

չութեան մէջ նոյն բաժինն ունի. կրօնն, ըստ իմ կարծեաց, քրիստոնեայ դատաւորի մը պաշտօնէ կամ պարտաւորութենէ օտար բան մը չէ, այս ոչ միայն իր հոգն այլ իր հոգատարութեան սկզբունքը պէտք է լինի, վասն զի ընդհանրական ընկերութեան մէկ մեծ կապն է կրօնն և իր նպատակն և նոյն իսկ մարդու պերազոյն վախճանական բարիքը... կառավարութեան մը շահն ու պարտաւորութիւնն, հետևապէս իր իրաւունքն է կարծեաց վրայ հսկել. որովհետև քիչ տեղէն կարծիքները կրից կ'միանան, գործոյ վրայ մեծ ներգործութիւն ունին: Կուսակցութիւններ կ'կազմուին կարծեաց վրայ, ասոնք իրօք տէրութեան մէջ նիզակակից մարմիններ կ'դառնան — նաև կուսակցութիւններն կարծիքներէ կ'սփոին որպէս զի միութեան կեդրոն մը լինին և ուղեցոյց:» Ուրեմն Պըրք կ'ուզէ որ կառավարութիւնը քիչ շատ կարծեաց վրայ հսկէ, կերպ մ'աստուածապետական իշխանութիւն հաստատէ, որմէ կ'կարծուէր թէ նոր աշխարհը պրծած է: Լաւ, քաջ գիտես որ կրօնն իշխանութեան և իշխանութիւնը կրօնին աջակից գալով աստն աստն ինչ աղէտից առիթ տուած են: Բայց ինչո՞ւ հեռուն երթանք. մի քանի տարի ետ դարձիր. Իրլանտայի ու Անկլիոյ մէջ ծագած կռիւները չիշէ. ինչ էին ասոնց պատճառը. սարսափելի կրօնի ու ազգութեան կռիւ էր: Նոյն իսկ մենք չէինք կարող ըմբռնել ազգութիւնն առանց կրօնի: Կաթոլիկ Իրլանտան բողոքական Անկլիոյ դէմ ահարկու պատերազմ մղեց: Իր պարագլուխն էր Օքոնէլ յանդուգն յեղափոխականն, որ իր հայրենեաց ծանր վէրքերը բոլոր աշխարհի առջև բանալով՝ ցոյց տուաւ՝ թէ Իրլանտացին՝ տասնիններորդ դարուն մէջ՝ Եփեսոսի դերևներէն, Սպարտայի էլոթներէն, Միջնի դարու սարուխներէն շատ աւելի ստորին, թշուառ, սովալլուկ կենդանի մ'է, անհոգ, անտուն, թէ ամն քաղաքային ու զինուորական պաշտօնէ զրկուած է, թէ անկլիացի ազնուականներ բոլոր հողերը գրաւած են, թէ իր անունդը ձարելու միջոց չունի

և իր սովորական կերակուրը, պետոխանձորն անգամ, կը պակսի, թէ Անգլիա կ'կեղեքէ, կ'հարստահարէ իր հայրենիքն, որու ազգային խորհրդարանը ջնջեր էր, և միայն իրեն կ'վերապահէր ամեն իրաւունք, պաշտօն, մեծութիւն, վասն զի անգլիական եկեղեցին աերութեան եկեղեցին է, մինչդեռ կաթոլիկութիւնը կ'հալածուէր: Օքօնէլի ահարկու ձայնը բոլոր ազատականները շարժեց, քարլմենդն յուզեց և թշուառ Իրլանտայի 'ի նպաստ բողոքները շատցան: Անգլոյ կառավարութիւնն անկարեկիր կ'մնար և յամառութեամբ կ'դիմադրէր այս յարձակումներուն: Բայց Օքօնէլ, որ աննկուն ոգի, ազգու և մերթ անպատկառ լեզու մ'ունէր, դժուարութեանց առջև ընկրկող մարդ չէր. իրեն նեցուկ ունէր խուժանն, որ մէկ մարդու պէս ոտք ելաւ ու արդարութիւն և հայց պահանջեց: Գիշեր ցերեկ հրապարակին վրայ, եկեղեցին կ'պոռար ու կ'գոռար Անգլոյ գերիշխանութեան դէմ, և վերջապէս Ռոպերտ Բիլ ու Վէբ լինկլըն ստիպուեցան ազատարել Իրլանտացիքն և անոնց ընտրողութեան իրաւունք շնորհել, այս պայմանաւ որ թաղտաւորին հաւատարիմ ծառայ մնալու երդում ընեն, Անգլոյ բարձր մէնդին մէջ աթոռ ստացող երեսփոխանները հաստատեալ եկեղեցւոյ դէմ չգոռային, աերութեան մէջ պապին աշխարհական ու քաղաքային իրաւասութիւնը չճանչցին: Այսպէս ամեն կաթոլիկ՝ աերութեան պաշտօններու մէջ մտնելու իրաւունք ստացաւ: Արդէն Օքօնէլ բարլմէնդի անդամ ընտրուեր էր և Իրլանտայի աղետալի վիճակը հոչակեր էր:

Կ'տեսնեմ, բարեկամ, որ մեզի պէս լուսաւորեալ ազգ մ'անգամ իր կրօնական նախապաշարումներն ունի. թող թէ Հային որ՝ 'ի հարկէ՝ ամեն քաղաքական ապահովութենէ, հայրենիքէ և աղատութենէ զուրկ՝ իր եկեղեցւոյն մէջ ապաւէն մը կ'փնտռէ և անկէ գուրս ազգութեան կործանում կ'տեսնէ: Գրեթէ ամեն ազգ իր կրօնին ծնունդն է: Ցեղական յատկութիւններն ալ մեծ ներգործութիւն ունին անոր վրայ:

Կայ ազգ որ մոլեռանդութեան հակամէտ է, ինչպէս Սպանիացին, և հաւատաքննութեան խարոյկներու առջև կ'բերկրի, կայ ազգ, ինչպէս Իտալացին, որ կրօնն երաժշտութիւն կ'կարծէ ու անոր առջև արձաններ, պատկերներ կը կանգնէ, տաղեր ու երգեհոններ կ'հնչեցնէ, կայ ազգ, ինչպէս Գրանսացին, որու համար պաշտամունքը թատր մ'է, ուր կ'երթան մարդիկ ու կանայք զիրար դիտելու, կայ ազգ, ինչպէս Ամերիկացին, որ ամեն մեքենայի պէս, կրօնական մեքենան ալ կատարելագործութեան ընդունակ կ'համարի և անդադար նոր փորձեր, նոր աղանդներ կ'հնարէ, կայ ազգ որու համար կրօնն առևտրական գործ մ'է, հաշիւ մ'է ուրով երկնային դանձը երկնային շնորհով գտնելու կ'նկրտի: Ահա դու ալ, Նէլսօն, այս ազգին մէկ անդամն ես: Անշուշտ կ'սիրես Լիլլին, ուստի կրօնասէր ու բանտհիւս ես, բայց լաւ դիտես որ քու Աստուածդ տեսակ մ'ոսկի հորթ է, որ կ'փայլի առանց տաքութեան, որ կ'խօսի առանց ձայնի, որ շնորհ կ'բաշխէ առանց հրաշքի, որ կ'կառավարէ առանց դեկի, որ ոչ արբանեակ ունի, ոչ միջնորդ, ոչ սուրբ, ոչ նկար, ոչ քահանայ, այլ ուղղակի սրտիդ կ'խօսի սէմով մը զոր ըստ հաճոյս կրնաս մեկնել: Իսկ դու, ինչպէս երբեմն սիրուհւդդ սենեակին, քու Աստուծոյ տաճարին մէջ չես մտներ յուսալից հոգւով, սիրափայլ աչքով, վառվռուն երևակայութեամբ, անդուլ անձնուիրութեամբ, մարտիրոսական եռանդով, այլ կ'ներկայիս պաղ, անշարժ դէմքով, սանտրուած մազերով, մաքուր հագուստով, քաղաքավար ձևերով, երբ յանկարծ ներշնչեալ մարդ մը՝ կոկիկ ու անզարդ տաճարին բեմն ելնելով՝ քարոզ մը կ'սկսի մաթեմատիկական ճշդութեամբ ու շնորհալի կերպերով, որ թերևս նեղքին շնորհաց յայտարար նշանները են: Եւ դու բոլոր ուշդ ամփոփած միտ կ'դնես, կ'ուզես վառիլ, համոզուիլ, վերանալ և ահա միտդ կ'թռի ուրիշ տեղ, Բէյն, Լիէլ, Տարվին, Օվէն աչքիդ կ'երևին և քիչ կ'ելևէջոր վար կե-

տինը կ'նետեն. մին քեզի Քրիստոսը կ'ցուցընէ իբրև մարդ, միւսն՝ մարդն իբրև կապիկ, այս նիւթն իբրև հոգի, այն՝ հոգին իբրև սովորութիւն: Որո՛ւ հաւատալ, որո՛ւ հետեւիլ: Կարելի՞ է վերացականը թողուլ ու դրականին մօտենալ, քանի որ անյայտ աշխարհի մէջ աւելի դիւրին է ծածկել մեր թերութիւնները, քանի որ անծանօթը մեզի աւելի ցանկալի է: Ըստ իս, ամենէ ընտիր պաշտամունքը «էրն» է, և դու որ կ'սիրես անշուշտ աւելի լաւ կարող ես պարզաբանել այս պաշտաման պահանջումները:

Բայց խնդրէն կ'շեղիմ: Ի հարկէ հայերն ալ բանաւոր պաճառներ պիտի ունենան կրօնն աղդութեան հետ լծորդելու, մանաւանդ եթէ մին միւսով կ'պաշտպանուի ու կ'տոկայ: Այս կէտը քեզի կ'թողում մեկնել, քանի որ աւելի լաւ գիտես հայուն հանդամանքը:

Անշուշտ, սիրելի Նելսօն, իմ ուրիշ լուրեր կ'սպասես. հիմակ քաղաքական ու փիլիսոփայական խնդիրներ ստակ մը չեն արժեր քեզի համար: Բոլոր մտադրութիւնդ ու հոգիդ ուրիշ տեղ կ'թռչին: Հետաքրքիր ես իմանալու, թէև անտարբեր դէմք մը կ'դասես, թէ արդեօք Լիլլին սեւսա՞յ, Պարոն Քինկը դա՞յ: Լէտի Խատհէմ իմացեր է տեսութիւնս Լիլլիին հետ և անոր վրայ աւելի կ'հոկէ: Պատճառը յայտնի է: Գիտէ որ բարեկամդ եմ և կ'վախնայ որ ձեր յարաբերութեանց միջնորդ չլինիմ: Աւելորդ է իր հսկողութիւնը: Լիլլի երբէք չէ սիրած Տէնահին, թէև դու կասկածոտ կ'դառնաս այս մասին և շատ վեր՝ի վերոյ կ'անդրիս անոնց հետ ունեցած խօսակցութեանս վրայ: Զգոյշ եմ, չեմ ուզեր ստէպ երևիլ լորտ Խատհէմի առանն որպէս զի կասկածներ չզրգռեմ և աւելի շատ ոտքս բոլորովին կարելու տուչ նէն: Լէտի Խատհէմ իրօք փառամոլ, նախանձոտ, պարծենկոտ տարօրէն կին մ'է. ինք աւելի յարած է Տէնահին, աւելի շատ կ'կարծէ անոր առջև քան թէ իր աղջիկն որ բոլորովին նեղչակ ընթացք մը կ'բռնէ: Տէնահ, թէև յիմար, վարուիլ գիտէ. զրքանչին գովեստներ կ'շռայլէ, առնոր փոքր ոտքը, սաւր քիմը կ'զրաւատէ, անոր առջև կտոր կտոր կ'լինի: Մայրերն աւ հասարակ բռնաւոր են, երբոր մեռցուին, կ'ձդնին իրենց սիրասուն զաւակներուն գոյներովը փայլիլ: Այս իրաւ է որ յաջողելու համար պէտք է որ պատանի մը նախ իր սիրելիք աղջկան մօրը սիրահարի և առով միւսին հասնի: Երբեմն մայրերն այնքան եսասէր են որ փեսացուին տեղն աւելի վայելելու համար հարսնացուն ու հարսնիքը կ'հեռացընեն. . . :

Իսկ Պարոն Քինկի մասին դեռ չեմ կարող որոշ բան մ'ըսել: Գործն ոսոխականութեան ձեռքն է. յոյս կայ որ խնամակալիդ հետքը գտնուի: Միայն կարևոր է որ անոր դէմքին նկարագիրն ընդիր և եթէ հինգտանոգիրն ունիս ինձ ղրկէիր:

ՆԱՄԱԿ ԻԹ

ԴԵԼՍՕՆ ԱՌ ՔՆԻՆ

Կ. Պալ. . . .

Բարեկամ, Հեմ ուզեր խօսիլ կրօնի վրայ. անօգուտ ու անշահ խօսակցութեան նիւթ մ'է որ կրնայ կիրք, աւերութիւն պրդռել առանց բանաւոր լուծում մը ստանալու: Կրօնը տեսակ մը յոռի շրջան մ'է անկայուն կեդրոնով և այս կեդրոնը մարդկային խիղճ ըսուածն է: Եթէ կարող ես ահմանել խիղճն որ՝ ըստ հլմայի և կրթութեան՝ այլ և այլ պտուղներ ու ձեռ տայ, հետևապէս այլ և այլ կրօնական

յօժարութիւնները : Ինչ խղճով որ մարդակերը կ'ուտէ ու կը լափէ իր զաւակին նոյն խղճմտի է որ ֆոֆէբը մը մրջունի վրայ կոխելու կ'վարանի : Ասկէ զատ՝ ես ոչ աստուածաբան, ոչ գերբնաբան, ոչ հոգեբան, ոչ նիւթաբան եմ, այլ պարզ մարդ մ'որ իրական կենաց մէջ մարդկութեան առաջնին քայլերը միայն կ'նշմարեմ, իր մանկային յիմարութեանց վրայ չղարմանալով : Հին ու մին փիլիսոփայական դրութիւններէն բան մը չեմ սորված, վասն զի սորվելու բան մը չգտայ : Ամեն դար նոր բառ մը հնարեր է նոյն բնազանցական դաղափարը մեկնելու, նոյն առարկութիւններն ու փաստերը կրկնելու և վէճի տակ եղած խնդիրներ լուծելու համար : Մարդիկ լուծուեցան և այդ խնդիրները կ'մնան անլոյծ ուր որ են : Թերևս ըսես որ մեծաբան եմ, բայց այս իրաւ է որ լուսաւորելու սահմանուած ղլուխներ աւելի մթութիւն բերին, շատ ուշ իմացան որ սկիզբ, վախճան, գոյութիւն, ճակատագիր, ժամանակ, յաւիտենականութիւն դատարկ բառեր են և ինչ որ վերն երկինքը կ'փնտռէին իրենց աւելի խելահաս յաջորդներն երկրի վրայ աւելի դիւրաւ դանելու յաջողեցան մեր օրերը : Նիւթական գործոցը պատուեց մոգական լապտեր մ'որու բոլորտիքը զմայլելով կ'դառնար մարդկութիւնը, բայց իր կանոնած նոր փարոսը միայն կասկածներով ալէկոծած և մօտէն իրողութիւններ շօշափելու փափաքող նաւաբեկեալներ կ'լուսաւորէ, անհանդարտ, հետաքրքրն հոգիները կ'հրապուրէ, մինչդեռ վարն ու հեռուն անդունդները խոր մթութեան մէջ կ'ձգէ : Պէտք է նոր հոգիներ, նոր ափունք փնտռել, պէտք է մտքով ալեկոծիլ ու նաւաբեկիլ այդ փարոսին լոյսը տեսնելու համար : Լոյսն անհրաժեշտ մնունդ մը չէ մտքին, ինչպէս է հացը ստամոքսին : Առանց անոր այս կ'ապրի : Միթէ մարդիկ այդ ալեկոծութիւնը, միթէ կառավարութիւններ այդ նաւաբեկութիւնը, միթէ կրօններն այդ փորձանքը կրել կ'ուզէին : Այն բնչի եղածին չափ անկէ կ'հեռանան և իրենց գարաւոր սո-

փորական մթութեան, անշարժութեան, անգործութեան և հանգստութեան մէջ երջանիկ կ'ապրին : Ի՞նչ հարկ կայ խրտիլ արդարութեան և ճշմարտութեան համար, որ լոկ բառեր կ'մնան : Ուստի ինչ որ լսեցիս, ինչ որ կրես, ինչ որ գործես հաստատեալ կրօնական օրինաց դէմ ընդունայն է : Չես կարող մարդկային ընկերութիւնը ձևել ինչպէս կ'ձևեն լաթ մը : Մեր գարուն աղատականները տաժելով այս բանիս փորձառին և համոզուեցան որ մարդկային ազգի այդ կրիայի շարժումը մեկնելու և գարման մը գտնելու համար նոր դիտութիւն մը պէտք է : Այդ նորահնար գիտութեան անունը չգիտեմ, թէև գլխաւոր հիմնադիրն անկիւացի մ'է, բայց այս գիտեմ որ, ինչպէս ֆիզիքական, նոյնպէս բարոյական կարգին մէջ կան օրէնքներ որոց համեմատ կ'ընթանայ մարդկութիւնն առանց շտապելու : Այդ օրէնքն իր ընկերական կենաց հետ կապուած է և անոր կարգէն է և կրօնն, որ ժողովրդեան մը ճակատագրին վրայ մեծ ներգործութիւն ունի : Ինչ որ կամիս ըսէ, Պարոն Վ...ուտ, անկլիական եկեղեցւոյ անհեթեթ սկզբանց վրայ . եթէ այսօր այդ երկիրն որով կը պարծինք Վատիկանու ճիրանին ներքև մնար Իրլանտացին ու Սպանիացին չպիտի զանազանէր : Բայց իր դիրքով, իր բնութեամբ չէր կրնար մնալ : Անկախ ժողովրդեան մ'անկախ եկեղեցի ու կրօն պէտք է : Մեր կղզեցւոց ցեղական վայրագ ոգին, նիւթական վտանգներու առջև անվեհերութիւնը, հոգեկան յուզմանց անզգայութիւնն և մանաւանդ մեզ շրջապատող ովկիանոսը, փոթորիկներն ու մրրկալի հովերն անդանելու և ինչպէս ցամաքի նոյնպէս ծովերու վրայ շրջելու սովորութիւնն ու սպառնալից տարերքը զսպելու բնածին աբիւթիւնը աւելն անոնց ինքնավարական ճարտարութիւն մ'որ պիտի գիմագրաւէր աւելի մեզմ զօրութեանց դէմ, արքունի գահու ու գաւազանի դէմ, և իր իշխանութիւնն աւելի հեռաւոր երկիրներ տարածելով՝ պիտի ծաւալէր նաև իր առատութիւնը, նաւատորմիղը, գաղթականներն ու ազգային դրօ-

չակը։ Արդ՝ երբէք չեմ կարծեր որ Անգլիա պիտի կարե-
նար հասնիլ այս մտաւորական ու ճարտարական զօրութեան
եթէ իր հին կրօնական դրութիւնը պահէր և օձիքը Ս. Պետ-
րոսի ձանկէն չազատէր։ Բոլորը քրիստոնէից հատատ հիմն
Աետարանն է, բայց բողոքականները միայն պիտեն զայն մեկ-
նել և ազատ դուռ մը բանալ համոզումներու։ Այս ազա-
տութեան մէջն է մեր կրօնին զօրութիւնն ու առաւելութիւ-
նը և չէ թէ կարճամիտ քրոջիչներու ներշնչութեան ու հո-
գեկան շնորհայ մէջ։ Իրաւ է որ մենք ալ ունինք կրօնա-
կան զեղծումներ, իրաւ է որ մեր կրօնաւորները սաեպ կը
մեղանչեն այդ ազատ քննադատութեան դէմ, երբոր կ'ելնեն
ուրիշ քրիստոնեայ ազգեր դարձի բերելու համար ահագին դու-
մարներ վատնելով կրօնն շահադիտական նպատակներու կը
գործածեն քան թէ հոգիներու փրկութեան համար, իրաւ
է որ ունինք նախապաշարումներ որ ծաղրելի են, վեհապետ
մ'որ միանգամայն քահանայապետ է, սակայն բոլոր այդ
հակասութիւնները հատատ մասունք չեն և չեն արգիլեր որ
մեր մէջ ծագին պիտուններ, մարդկութեան ընդհանուր բա-
րօրութիւնը մտածող մարդասէրներ։ Ժամանակին ու մտա-
տորական զարգացումը պիտի սրբէ տանի ամեն ձևասպաշտա-
կան կարգադրութիւններ, ծէսեր ու արարողութիւններ որ
միջին դարու մեղի ձգած կտակներն են և մարդկային ազա-
տութեան ու յառաջադիմութեան հակառակ։

Գիտեմ պիտի առարկես թէ անկլիական վէս, անվեհեր
և ազատական ոգին իր կրօնական անձուկ սկզբանց հետ միա-
բանել դժուարին է, թէ ինչպէս սահմանադրեայ իր կառա-
վարութիւնն նոյնպէս պէտք է որ սահմանադրէ իր եկեղեցին
և ամեն միապետական ցոյցեր, սարկական արարողութիւններ,
առատական դասակարգութիւնները, աղնուապետական խորու-
թիւնները ջնջէ, թէ կրօնն մեր մէջ անդամ դիմակ մ'է որ
մեր ընկերային ու ընտանեկան հաշմութիւններն ու մոլու-
թիւնները կ'ծածկէ, թէ հոգևոր ու քաղաքական կառավա-

րութեանդ ձեռքը գործիք մ'է որ մեր մտքի թռիչքը կ'զսպէ,
թէ քաղաքակրթութեան ու լուսաւորութեան ինքնին թշնամի
և հին բռնապետութենէ մնացած աւանգ մ'է զոր պէտք է
լիովին խորտակել իբրև անպէտ, ընդասակար հիմնարկու-
թիւն մը։

Դիւրին է, բարեկամ, իմանալ թէ որ զպրոցին աշա-
կերտն ես. Օվէն, Ֆուրիէ, Ս. Սիմոն քեզի պէս նորընծաներ
շատ ունին. բանականութեան, շահու, դիտութեան կրօնը կը
դաւանին պիտեմ, սակայն ուրիշին կարծիքն ալ կ'յարգեն։ Ձեռ
զարմանար ուրեմն եթէ այս մասին քեզմէ կ'տարբերիմ։ Ան-
կրօն ժողովուրդ մը չեմ կարող ըմբռնել, ոչ թէ ներկայ ըն-
կերական կազմակերպութեան մէջ, կրօնական դրութեանդ
ընտանները խոստովանելով։ Նախապաշարում համարէ կամ
սղիտութիւն՝ մարդիկ կրօնի մը պէտք ունին՝ իբրև կմկ
սանձ, քանի որ այն դրական պիտութիւնն որով նոր դրա-
րոցը կ'պարծի, դեռ անհպելի է ժողովրդեան, և ամեն ժա-
մանակ, մի քանի յառաջապէմ հաւատացած ժողովրդոց մէջ
հազիւ պզտիկ խմբակ մը կ'գտնուի որ, ինչպէս բարձր լեռի
մը վրայ կեցող ուղեւորը, դառն ու քաղահելի ժպիտով մը
կ'գիտէ իր բարձունքէն վարը լեռին ստորոտը պեպեղորդ
էակներն որ՝ միայն բնազդումի, կրից, բազդի ու երևակայու-
թեան խաղալիկ, անդադար կ'ծեծկուին ու կ'փետտուին, կը
տառապին ու կ'մեռնին շատ անդամ ստուերի մը համար։
Ի՞նչ օգուտ, այս եղեր է 'ի բնէ մարդուս ճակատագիրը։
Ձեմ հաւատար Ռուսօին պէս որ բնութեան մարդն երանելի
արարած մ'էր և ապականութիւն ու մոլութիւն քաղաքա-
կրթութեան հետևանքը։ Գիտութիւնը հիմակ հին ու վայ-
րենի, կոշտ ու անբան ցեղերու տիպարները կ'տեսնէ Աս-
տրալիա, Ամերիկա և Ափրիկէի խորերը, որոնք անաստանէ
չեն տարբերիր։ Առնք մեր նախնիքն են, որ քիչ քիչ սկան
խօսիլ, զրալ, մտածել, հիմնել, հնարել, գործել, միա-
նալ, աղօթել ու պաշտել մարդու պէս։ Անբանական ինչ

ւոսկալի ու երկարատև շրջումներէ անցեր են մարդիկ մարդկային արուի կերպարանը ստանալու համար թէ բարոյապէս և թէ մտապէս դիւրին չէ ստուգել, սակայն այս անուրանալի է որ՝ լաւ կամ վատ՝ զանազան հիմնարկութիւններ ունեցեր են իրենց կենսայ յարակից զոր կարելի չէ մէկ հարուածով ջնջել։

Ուստի արմատական բարենորոգում՝ արուի սկզբանց համամատ՝ պարզապէս ցնորք մ'է։ Պէտք է նախ մարդկային բնութիւնը կամ գարաւոր սովորութիւնները փոխել և ապա իր ընկերական շինուելի հաստատութիւններն, որոց վրայ կեցած է իր էութիւնը և որոցմէ արմատապէս բաժնելն ուրիշ բան չէ եթէ ոչ մարդու մը գլուխն իր բունէն բաժնել, ընդհանուր անիշխանութիւն, մահ պատճառել է։ Ֆրանսայի մեծ յեղափոխութիւնը մեզի օրինակ. կառավարութիւն, օրէնսդրութիւն, կրօն, երկրային բաժանում, ամեն բան յեղաշրջեց, բայց Ֆրանսացւոց բնութիւնը, բարքն ու միտքը չփոխեց և այնքան սարսափ, չարդ, կոտորած միայն բան մը արտադրեցին, այս է մարդոս իրաւանց ծանօթութիւնը, գազաղափար մը միայն որ պրեթէ տեսական վիճակի մէջ մնաց և՝ ի վերջ ահարկու աշխարհակալ մ'իր ծոցէն ելնելով զայն ևս ջնջեց։

Այս հետևանքն ունեցած են ամեն բուռն ու ծայրայեղ շարժումներ, մտաց ու սովորութեանց չհամապատասխանող արմատական բարենորոգման փորձեր։ Բիւրաւոր գարերու շինքն, որքան խարխուլ լինի, անհնարին է հիմն՝ի վեր ընդել մէկ ժամու մէջ։ Մարդիկ, եթէ կամիս, կույր բաղդէն մղուելով՝ ընկեր են փոս մ'ուսկից պիտի յաջողին ծանր ծանր վեր ելնելու երբոր ամեն ճշմարտութիւն աւելի պայծառ տեսնել, փորձել ու գտնել սորվին, երբոր բնականն արուեստականէն, իրաւունքն անիրաւութենէ ճշդիւ որոշել գիտցան, երբոր համոզուին թէ ինչ որ անհրաժեշտ պիտոյք մը համարուած էր երէկ՝ այսօր գատապարտելի հիմնարկ

մ'է, ինչ որ տարիներ առաջ ճշմարտութիւն մ'էր, վաղն իբրև ստութիւն պիտի երևի։ Կարևոր կէտն է քիչ քիչ նորոգել ընկերական շէնքը, ժողովրդոց պիտոյքն ու պահանջմունքն՝ի նկատի առնուլ և յարմար ընթացքներ ընել։ Այս պատմական ճշմարտութեան դեռ չեն համոզուած այն քաղաքագէտներն որ ազգերու ճակատագիրն ուղղելու պաշտօն ունին, այնպէս որ արիւնահեղ յեղափոխութեանց տեղի կ'տան։

Սիրելի վուտ, դու այնպէս կ'ենթադրես թէ դեռ Անգլիա աւելի կարուկ, հիմնական փոփոխութիւններ մտցուց իր օրէնսդրական քան թէ կրօնական գրութեան մէջ և չես ուզեր յիշել մեր հին քաղաքային կուիները Սահմանադրութիւն մը ձեռք ձգելու համար, կարծես Ա Թագաւորին արիւնալի դլուխը Քրոմվէլի մոլեռանդ ոտին, նոյնպէս մեր խորհրդարանական պայքարներն որով Թագաւոր, ազնուական ու ժողովուրդ, երկրային իրաւունք, յեղական իրաւունք, ընկերային իրաւունք իրարու դէմ զարնուեցան և այս ընդհարումն ծագած հիմնարկութիւնն եղաւ մեր արդի քաղաքական գրութիւնն, որ օտարներու սքանչացում կ'պատճառէ։ Եւ սակայն մենք դժգոհ ենք. աւելի արդար կառավարութիւն, աւելի կանոնաւոր երեսփոխանութիւն, աւելի մեծ հատասարութիւն կ'պահանջենք։ Մեր մէր հաստատութեան մէջ չեն տեսնուիր հին աշխարհակալութեան, յափշտակութեան, անիրաւութեանց վրայ հիմնուած իրաւունքներ։ Արդի ազնուականը հին ամուր դղեկին մէջ նստած՝ զրահապատ ասպետին որդին է որ լորտերու ժողովին մէջ ունի աթոռ մ'որ իր արժանաւորութեան արիւտուրը չէ, ունի ոսկելից դանձեր որ իր աշխատութեան պտուղը չէ, արդի գործաւորն միջին դարու սարուկն է որ՝ քաղաքակրթութեան անապատին մէջ տեսակ մը վայրենի՝ ոչ տուն, ոչ իրաւունք, ոչ գուժ, ոչ արև ունի, և երկրի վրայ թիզ մը տեղ չգտնելով կ'իջնէ անոր անդնդային յատակն ու շատ անգամ ածխահանքէն իր հայրը մուրալու ատեն կ'այրի, կ'խղդուի և դի-

ակին անդամ անհետ կ'լինի: Այս է մեր քաղաքակրթութեան սաեղծած մարդն, զոր Աստուածն անմահ կ'անուանէ, աստուածաբանն՝ հոգևոր ու բարոյական արարած, բնաբանն՝ կենդանեաց թագաւոր, բնութեան հրաշակերտ, փիլիսոփան՝ բանաւոր, քաղաքական կենդանի, դիտուն՝ կատարելագործելի շնչաւոր մարմին, օրէնսդիրն՝ վերհսկէտ կ'անուանէ, բայց իրօք այդ մարմնոյն վրայ ոչ հոգի, ոչ բան, ոչ շունչ, ոչ վերհսկողութիւն կ'գտնուի և թէ բնական, թէ ընկերային բոլոր զօրութեանց խաղալիկ մ'է:

Ձեռ մնայած անշուշտ, բարեկամ, մեր բարքերնիս մէջ ծագած փոթորիկն երբոր լորա Ճոհն Ռուսէլ իր ընտրական օրինաց նոր ծրագիրը ներկայացնելով այդ թշուառ մարմնոյն, ժողովրդեան ընտրողութեան իրաւունքն աւելի ընդարձակել առաջարկեց: Ւան պի, ինչպէս դիտես, մեր երեսփոխանութեան բաշխումն յետին ծայր անիրաւ ու անհեթեթ, աւատական դրութենէ մնացած վերջմունք մ'էր: Ազնուական դասը միայն ձայն ունէր ազգային ժողովին մէջ և ժողովրդեան ներկայացուցիչներն անդամ իրեն արբանեակներն էին: Քաղաք մ'որ հարիւր հազար բնակիչ ունի հաղիւ երկու երեսփոխան կ'ընտրէ, մինչդեռ ատան մ'որ լորտի մը կալուածքն է, մի քանի երեսփոխան կ'ղրկէ հասարակաց խորհրդարանն: Ահա այն ատեն դժբնեբը կրակ դարձան և իրենց բոլոր ոյժը թափեցին որ այդ ծրագիրը մերժուի, բայց ի զուր: Ամեն կողմէ բողոքներ լսուեցան, ժողովները շատացան, Իրլանտա, Սկովլանդ շարժեցան, հասարակաց կարծիքը լորտ Ռուսէլի ոյժ տուաւ, ազատամարտական շարժումներ տեսնուեցան, արիւն իսկ թափեցաւ, և ի վերջ մի քանի փոփոխութեամբ ընտրական ծրագիրն ընդունուեցաւ: Բայց ընկերային աղէտից նայելով՝ այդ գործոնն շատ թեթև էր: Ուրեմն կարծամիտ չպիտ շուտ չենք քալեր նաև քաղաքական բարենորոգումներու մասին ալ, սիրելի վերջ, և մի՛ զարմանար եթէ կրօնական խնդիրներ անլուծանելի կ'թուան մինչև այսօր:

Սիրելի վերջ, ձմեռիսը յիսուն եմ, իմ գաղն վիճակս չեմ նայիր և կրօնական ու քաղաքական խնդիրներու վրայ կ'դրեմ: Բայց միթէ այս ընկերային յոռի դրութեան հետևանքը չէ՞ իմ այս տարտամ, անստոյգ ու թշուառ վիճակս: Երկու էակ զիրար կ'սիրեն և չեն կարող միանալ: Ընկերութիւնն անոնց մէջ վիհ մը բացած է. ով պիտի լեցնէ այդ վիհը. կրթութիւնն ու դիտութիւնը կ'ըսեն. սահմանն այդ կրթութիւնն ու դիտութիւնն ալ աղնուապետական դոյն ունի. աղքատին, ժողովրդեան զաւակը դեռ ֆիզիքապէս ու բարոյապէս կ'տառապի, դիտութեան սեղանէն թափուած փշրանքը կ'ուտէ, մինչդեռ մեծատունն անոր խորտիկը կ'կլլէ, և ըստ որում դիտութիւնը այժ է կ'ըսեն, անոր տուած զինքերով կ'մարտնի մեզի գէմ և աւելի անզգամ, չարասէր ու բռնաւոր կ'գառնայ: Այո՛, կ'բռնաբարէ իրաւունք մը զոր չի բնէ ունիմ, սիրել, կ'բռնաբարէ սէրս, որ իմ կեանքս է, կ'զանայ ինձ անունդ մ'որմէ զրկուելով սիրտի կորսուիմ, որպէս փոյթ. ընկերութեան անիւն իր շրջանը կ'ընէ ձմեռլով մեզի պէս թշուառներն և մեր ձիչն ու աղաղակն անդամ չլսեր: Ձմեռիսը՝ կրօնական օրէնքն այնքան բռնական չէ այս պարագային մէջ որքան քաղաքայինը: Լորտը բացառիկ էակ մը կ'կարծէ ինքզինք ու կ'ձնշէ ամեն մարդկային բնական զգացում, արդարութիւն և աղաւութիւն որ իր սահմանէն զուրս են. Հարկաւ պիտի կործանի օրէնքն մեկին այդ ամբարտակն, բայց դեռ ինձի պէս քանի՛ քանի զոհեր պիտի ձգէ: Ես պիտի տեսնեմ այդ կործանումը, պիտի հասնիմ իմ նպատակիս. մուք խնդիր, որու վրայ աստեն ատեն դու մի քանի նշոյլներ կ'արձակես:

ՆԱՄԱՆ ԻԶ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն, . . .

Բարեկամ, Հշմարիտ է որ մարդիկ մի և նոյն իրողութիւնը, նոյն դէպքն այլ և այլ կերպով կ'դատեն և շատ անգամ իրարու ներհակ հետեւանքներ կ'հանեն: Այս զանազանութիւնը փիլիսոփայական ու մտաւորական տարբեր պայմաններէ կ'ծագի: Երբ խումբ մը մարդիկ մի և նոյն կերպով կրթուած, նոյն սկզբունքն ունենալին անտարակոյս որ և է երեւոյթի առջև մի և նոյն դատողութեան ու եզրակացութեան պիտի հասնէին: Նոյնը կարելի է ըսել ժողովրդեան մը, բոլոր մարդկութեան համար: Սակայն կլիմայի, կազմութեան, կրթութեան և նիւթական կացութեան տարբերութիւնները բոլորովին կ'զժուարացընեն զգայութիւններու ու գաղափարներու մէջ համաձայնութիւնը, Հշմարտութեան հասնելու միջոցները: Դու կ'յուզուիս առարկայի մ'առջև որ անտարբեր է ինձ, կ'ին մ'արիւն տեսնելուն կ'մարի, մինչդեռ ղինուորը կ'ժպտի, այս՝ համբերատար ոգւով կ'տանի վիշտը, այն՝ կ'ընդվզիլը և Նախախնամութեան դէմ կ'հայհոյէ, ուրիշ մ'անոր գարմանը գտնելու կ'ձգնի: Ստուգիւ շատ հետաքրքրական ու կրթիչ տեսարան մը պիտի ներկայանար մեր առջև, եթէ այլ և այլ դրութեանց կուսակից մարդիկ մէկ տեղ գալով եղնէին խնդիր մը լուծելու: Ի՞նչ այլանգակ կարծիքներ երևան պիտի գային:

Այս խորհրդածութիւնն ըրի, բարեկամ, երբոր գիրդ կարդացի: Տեսայ որ մի քանի ընկերական և կրօնական խնդիրներու մասին համամիտ ենք սկզբունքով, բայց միջոցներու դործադրութեան մասին անհամաձայն կ'գտնուինք: Զարմանալի բան. դու թէև սիրահար ու գժոխ, աւելի դիւանագիտի պէս կ'խորհիս քան զիս որ Պաբոնեան եմ: Բայց մեր Շայնթ բարեկամն որ երբեմն կերպ մը միսոգիքական էր, դրած է ինձ երկար գիր մ'իր կասկածները յայտնելու: Գիտես որ դեռ որոշ գիծ մ'ընտրած չէ. հիմակ նիւթական ու ոգեկանութեան մէջ կ'ծփայ միտքն ու նեցուկ մը կ'փնտռէ: Ըստ երևոյթին՝ կրօնական փիլիսոփայութեան մէջ կայան սիրտ առնու: Իր գաղափարներուն 'ի նպաստ փաստեր գտնել կարծեր է յօդուածի մը մէջ, նշանաւոր հանդէսէ մը քաղելով: Այդ յօդուածին իր վրայ ըրած տպաւորութիւնը յատուկ նամակաւ ինձ կ'հաղորդէ. ես ալ գիրը քեզի կ'ղրկեմ, կարդա. բաւական ամփոփ, կծու, և որոշ ու հմտալից նկարագիր մ'է քահանային նշանդրուան: Իրաւ է որ գրողն իր առաջադրած նպատակին հակառակ տպաւորութիւն մը կ'ազդէ: Ակամայ կ'հաստատէ այն բանը զոր ժխտելու մտաք կ'գրէ և սովորաբար այս փորձանքին կ'հանդիպին անոնք որ անդէտս կ'խոստովանին Հշմարտութիւն մը որու դէմ զինուած են:

ՆԱՄԱՆ ԻԷ

ՇԱՑՆՑ ԱՌ ՎՈՒՏ

Լոնտօն, . . .

Բարեկամ, Մեքենականութիւն, այս է մեր գարուն նշանաբանը, կ'պրէ անուանի հեղինակ մը, որու ըրած տպաւո-

րութիւնն իմ վրայ պիտի հաղորդեմ քեզ: Ընչքդ որ կտրմը դարձընես ուրիշ բան չես տեսներ հիմակ՝ այլ միայն Ճիճ-նայ: Հեռուները պատռտելու անվ մը չորս դին նայինք, մը ժամանակին պիտակն ու ձկտումները քննենք, Թևրևս դաս մը քաղենք: Ինչպես երբեմն ոսկէ դար, արծաթէ դար, երկաթէ դարեր եկեր անցեր են, հիմակ ալ մեքենական է դարս: Ձափ, կարկին, քանակ, հաշիւ, ասոնք են ամէն գործողութեան սաւերքը, Թէ ընկերական, Թէ դրական, Թէ մտաւոր գործողութեան: Ինչ անկում, թնասիրական աշխարհէն նիւթական աշխարհը: Ցեխ, ամենէ պարզ գործի մը համար հնար մը, գործիք մը, կարճ միջոց մը պատրաստ կայ: Մարդ կ'վերնայ գործիքը կ'աշխատի. ատուն բանուորին անատուն բանուորը կ'յաջորդէ: Սկսյը ջուլհակին ձեռքէն կ'սահի և արագաշարժ երկաթէ Թաթի մը մէջ կ'իյնայ: Նաւաստին առագաստը կ'ծալէ, Թիակը մկղի կ'դնէ և շրջելիք Թևեր ունեցող ուժեղ ու անձանձիր սպասաւորի մը կ'հրամայէ որ զինք տանի ծովերն ու անդունդները պտրտցընէ: Պիրմինկէմի հրեղէն Թաղաւորն առասպելական Աբևեզք կ'Թռի: Նորէն կ'վերդովի Բարեյուսոյ-Գլխուն ոգին, և եթէ քամօհնա մը պտռուէր, չէ Թէ Վասքօ Կամայի այլ տարօրինակ շանթեր պիտի երթէր: Սահման չունի մեքենագիտութիւնն, և ո՞ր դիտէ ապագային մէջ ինչ նոր նոր հրաշքներ պիտի բանայ մարդուս առջև: Ձին անգամ կ'Թողուէ իր Թամբն և կ'նայի որ իր տեղ հրային սրընթաց կենդանի մը լծեր են: Ոչ միայն երկրային այլ երկնային գործերու համար ալ մեքենաներ ունինք, բարեկամ. լեռները կ'շարժենք, ծովերը բանուկ արահետներ կ'ընենք, և շատ հաւանական է որ քիչ ատենէն միջոց մը գտնենք իրարու հետ խօսակցելու, Թէև մղոններով հեռուէն: Արքայութիւն, լոյս, քաւարան, աւրբեր մեքենաներու միջոցաւ կ'ընդհնշմանրենք: Ո՞վ կարող է դիմադրել այս մեր զօրութեան. կոշտ բնութիւնն մեր ստրուկն է, և մեր անկումն մեքենաներով

միշտ յաղթական կ'ելլենք և միշտ կողոպտուներով բեռնաւորուած կ'գառնանք:

Մարդ այս ֆիզիքական զօրութեամբ ինչ հրաշալի ասպարէզներ բացաւ ու դեռ պիտի բանայ. պայմանաւոր աշխատութեամբ մը՝ ոչնչափ աւելի լաւ անունդ, հագուստ, բնակարան ունի և կրնայ ունենալ քան Թէ առաջ, մտածութեան արժանի կէտ է. ընկերական զրութեան մէջ ինչ փոփոխութիւն կ'բերէ այս նոր զօրութիւնն, ինչպէս օրէ օր կ'աւելնայ հարստութիւնն և հետզհետէ այլ և այլ խումբերու մէջ կ'դիզուի, հին յարաբերութիւններ կ'խանգարէ, հարստութեան ու աղքատին մէջ ինչ մեծ վիհ մը կ'բանայ, անտեսապիտին ուշադրութեան արժանի խնդիր մ'է: Մտաւորական գործքներն ալ հին մեթոտներն անհետ ըրին. ամեն ինչ իր գործին ունի. ձեռքն անօգուտ է, մեքենայ կայ: Գաստիարակութեան համար մեքենաներ ունինք, Լենքաստրեան մեքենաներ, Համիլդանեան մեքենաներ — աշխարհացոյց տախտակ, Թուաբանական տախտակ, նշանակները: Կրթութիւնն ալ դժուարին գործ մը չէ, մանաւոր անհատական կարողութեան կարօտ չէ, նոյն վախճանին հասնելու համար զանազան միջոցներ պէտք չեն, այլ սոյդ, չիտակ և միահամուռ գործ մ'է կրթութիւնն զոր մեքենական արուեստով որ և է մարդ կարող է վարել: Ապա կ'դան կրօնական մեքենաները, որոց տեսակներն անհամար են — Աւետարանական ընկերութիւն, որ Թէև վսեմ, երկնային նպատակ մը կ'գաւանի բայց եթէ մօտէն քննենք իսկոյն պիտի տեսնենք որ երկրային շարժառիթ ունի, հանդամանաւորութեամբ կ'տարբերի, անափառութիւն կ'զրգռէ, կ'գաւէ, կ'խծբծէ — և սակայն լաւ մեքենայ մ'է հեթանոսները գարձի բերելու: Միւս գաւանութեանց համար ալ նոյնը կրնանք ըսել: Եթէ մարդ մը, կամ մարդկային խումբ մը Ճշմարտութիւն մը յայտնելու պէտքն զգայ, կամ հոգևոր մատեան մը գրելու, բնականն գործարանները բաւական չեն հասարիր, այլ ժողովներ

կ'դումարեն, մանակումբներ կ'կազմեն, յայտաբարութիւններ կ'հրատարակեն, հայկերոյթ կ'պատրաստեն, մէկ խօսքով մեքենայ մը կ'շինեն կամ փոխ կ'առնուն, որպէս զի յաջողին, թէ ոչ անոյշ, անօղնական կ'մնան: Իսկ ամէն մեքենայ պարտաւոր է ունենալ՝ ընկերութեան բարձրագիր մարդոյ մէջ, իր շարժիչ զօրութիւնը. մեր մէջ ամէն պզտիկ աղանդ, Միաւորական, Օգտակարական, Մկրտական, Գանկարանական պիտի ունենայ իր պարբերական թերթը, հովւաշարժ աղօրիի մը պէս, որպէս զի ժողովրդեան համար ցորեն աղայ:

Նոյնպէս անհատներ իրենց բնական զօրութեամբ չեն գործեր, ամենէ անշուք ձեռնարկութեան մինակ ձեռք չեն զարներ. իրենց մեքենայ մը պէտք է, ուստի ընկերակցութեան մը հետ կ'կապուին, որպէս զի անոնց եղներով իրենց դաշտը հերկեն: Հիմակ ապրիլ, կատակցութեան մը միանալ, կամ մէկ հատ կազմել ըսել է: Մեքենաներէ կախուած ունին, փիլիսոփայութիւն, դիտութիւն, արուեստ, դրականութիւն: Հիմակ նէվռօն մը լուին խորհրդածութեամբ աշխարհիս դրութիւնը չգտներ, այլ տարբեր անձ մ'իր թանդարանը, կամ դիտական գործանոցը կ'կենայ և զանազան քիմիական, կալվանական սիւնակներու եւ էլէն բնութեան հարցումներ կ'ուղղէ, թէև բնութիւնը պատասխան տալու չշտապիր: Ռաֆայէլներ*, Անկելօներ†, Մողարներ§ չկան հիմակ, այլ նկարչութեան, քանդակագործութեան, երաժշտութեան արքունի համալսարաններ: Գրականութիւնն ալ գրավաճառական մեքենաներ, խմբագրական ժողովներ և առար-

*Ռաֆայէլ, գործոց ամենէ նշանաւոր իթալացի պատկերհան (1483–1520):

†Մչէլանգէլ Անկելօ, իթալացի ոչխանագործ, պատկերհան և ճարտարապետ (1534–1541):

§Մոզար, անուանի երաժիշտ (1756–1791):

երկրեայ փքոցներ ունի, այնպէս որ ոչ միայն դիրքեր կ'տպուին այլ մեծ մասամբ մեքենաներով կ'գրուին ու կ'ծախուին: Նոյն վիճակի մէջ են և ազգային կրթութիւն, ամեն տեսակ հոգևոր հովանաւորութիւն: Հիմակ Ղուեաի թագուհի մը պէտք չունի իր Տեքարդն իր արքունիքը կոչելու և Գրետէրիկ մ'իր վէզիրերը, որպէս զի թոշակներով ու շողոքորթութեամբ մնուցանեն, այլ որ և է լուսամիտ թագաւոր մ'որ իր ժողովուրդը լուսաւորել կ'փափաքի, նոր տուրք մը կ'դնէ և անոր արդիւնքով այլ և այլ ձեռնարկներ կը բանայ. նոյնպէս եթէ մեր մէջ դիտենք որ կրօնն օրէ օր կ'քայքայի, բաւական է միայն կէս միլիօն աղիւսի ու շաղախի համար քուէարկել և նոր եկեղեցիներ կանգնել: Իրլանտայի մէջ աւելի յառաջ գացած են մարդիկ, քանի որ Քաթոլիկական ընկերութիւն մը կազմած են, շաբաթը մէկ քննէ բաժինով: Այսպէս մեքենան ամեն հոգևոր ու մարմնաւոր գործարութիւններ կ'բառնայ, և իր երկաթէ կռնակով մեր մեղքերն ու բեռները կ'շալկէ:

Ուրեմն մեքենան մեր կենայ բոլոր պայմանները կ'փոխէ, ոչ միայն մեր գործերու եղանակն այլ մեր միտքն ու դատաստումը: Մարդիկ գլխով ու սրտով մեքենային կ'պառնան, ինչպէս նաև ձեռքով: Անհատական ու ամեն բնական կարողութիւն արժէք մը չունին: Մի միայն արտաքին զարգացման համար կ'շինեն, կ'կազմեն, կ'սահմանադրեն, և մեքենական բնութիւն մը կ'սառնան:

Այս յեղափոխութիւնը կ'տեսնուի մեր ժամանակի ամեն արտայայտութեանց մէջ, թէ նիւթական և թէ մտաւորական գործոց մէջ: Այս միջոցիս քննէ Եւրոպայի դիտութեան վիճակը: Ամեն մարդ կ'խոստովանի որ գերբնական ու բարոյական դիտութիւնները կ'քայքային, մինչդեռ փիզիքական ուսումը կ'ծաւալի և աւելի յարգ ու ուշադրութիւն կ'գրաւէ: Եւրոպական շատ երկիրներ՝ հիմակ իմացական բուռած փիլիսոփայութիւն չկայ, այլ ընդհանրապէս նիւթական: Ա-

մինչ առաջ Ֆրանսայինք փախան գերբնականութեան դպրոցէն. Մալպրանշի, Բասքալի, Տեքարթի և Ֆենէլոնի հայրենիքը միայն Քարէններ ու Վիլմէններ ունի, մինչդեռ փիլիսոփայական ուսմանց մէջ՝ ուրիշ նշանաւոր անուններ ունի: Մեր մէջն ալ իմաստական փիլիսոփայութիւնը քիչ մը թոթովելէն եաև լռեց և իր վերջին մշակին՝ Սգրվարտի* հետ մեռաւ: Գերմանիա միայն ոգեբանական եռանդ մը ցոյց, առանց մեծ արդիւնք մը բերելու: Մէկ խօսքով դարուս դիտութիւնը միայն բնագիտական, բնալուծական, բարեգիտական է, և յատկապէս մեքենագիտական: Լոքին ժամանակէ՛ն՛ի վեր մեր բոլոր գերբնաբանութիւնը փիլիսոփական եղած է: Իր բոլոր վարդապետութիւնը մեքենական է, թէ՛ նպատակի և թէ՛ ծագման մասին, թէ՛ մեթոտի և թէ՛ արդիւնքի մասին: Միայն մեր դաղափարներուն ծագումն ու բնութիւնը ի՛սպասէ և մեկդի ի՛ձողու ամեն բնազանցական խնդիրներ: Մեր վերջին սկովտացի գերբնագէտները Լոքի դրածներուն մէջմէջ կէսեր գտան բայց չկրցան ուղղել: Ռեյտի† դպրոցն ալ մեքենական ընթացք մը բռներ էր, ուրիշ մը չտեսնելով: Հիւմ կենդանութիւն առաւ այս դպրոցին և կուսակիցները շատցուց: Իսկ գերմանական փիլիսոփաներն աւելի հեռու գացին. մին յայտնեց թէ՛ ինչպէս որ լեարդը մաղձ կ՛նկութէ նոյնպէս ըղեղը՝ մտածութիւն: Իսկ ուրդոր Քաղանիս§ վերջին առեղնեաս գիրք մը հանեց և ուղեց հաստատել որ նիւթը կ՛խորհի: Ասոր վրայ սմանք փայտէ մարդիկ և ուրիշներ սպեր շինեցին, յուսալով որ աստուածաբանի պէս պիտի սրամտբանեն:

Գիտութիւնը նեղքին մարդն՝ իրըև անպէտ, կ՛անպատիւ և արտաքինը կ՛քննէ ու կ՛մշակէ, և ասով անոր հասնիլ կ՛ու-

*Սկովտացի փիլիսոփայ (1753–1828):
†Թ. Ռեյտ՝ սկովտացի ոգեբան (1710–1796):
§Քաղանիս՝ ֆրանսացի բժիշկ ու փիլիսոփայ (1757–1808):

զէ: Իրապէս կամ մեքենապէս չհասկըցած բանն անհասկանալի կ՛հռչակէ: Իր աչքին ընտանեկան, ընկերային, կառավարական կազմութիւնը մեքենայ մ՛է: Անոնց կրօնական, հոգևոր վիճակն՝ի նկատի չառնուր այլ միայն փիզիքական, անտեսական վիճակն, զոր հասարակային օրինօք կ՛կանոնաւորէ: Անձնական շահը մարդուն առաջնորդն է, զուարճութիւնն իր նպատակը: Լաւ կառավարութիւնը մեքենայ մ՛է որու շարժիչ զօրութիւնը չէ թէ բարոյական օրէնք, կրօն, այլ սուինն է, բանտն է, թիարանն է: Հարկ գնող, կալուածք ապահովող, պաժժող գործի մը: Հապա կրօնն՝ նոյն վիճակն ունի և Անկլիոյ եկեղեցին, որ վառնպի մէջ է, կ՛ըսեն իրաւամբ, նոյնպէս մեքենայ մ՛է: Լրագիր ու խմբագիր անոր պաշտօնը կ՛վարեն, հոգևոր հովուութիւնը շահապետական ձեռնարկութեանց կեդրոն դարձեր է: Լրագրութիւնն ամեն օր, ամեն ժամ քարոզ կ՛կարդայ, կ՛խրատէ, կ՛յորդորէ ժողովուրդն, մինչև անգամ թագաւորը. իսկ կրօնաւորները դրսէն սուրբ եռանդով կ՛վառին, ներսէն փառասիրութեամբ կ՛առչորին և աշխարհային բաներու կ՛տենչան: Գրականութիւնն ալ նիւթական գոյներով կ՛ներկայէ. տեսանելին, շօշափելին երբեմն զազրալին ու ահարկուն անգամ կ՛պաշտէ. անտեսանելին, զեղեցիկն ու առաքինին իրեն համար նշանակութիւն մը չունին:

Աւելորդ է նամակս երկարել, միաքս խնայար: Մեքենական աշխարհը պիտի ձգվի մեզ, ամեն ալնիւ, վսեմ, առաքինական զգայում պիտի խզդէ: Ե՛ՀՀ, բարեկամ, չեմ կրնար հանդուրժել այս տեսարանին որ ինձ յուսահատութիւն կ՛պղդէ: Հոգիս ու միաքս ուրիշ աշխարհ կ՛ապրի: Ուրուականի պէս կ՛երևի ինձ ամեն բան: Կ՛փնտռեմ գիրքերու մէջ այն ժամանակներն երբ կրօնը, իմաստութիւնը, սէրը հրաշքներ գործէին: Աւաղ, մեր գարը մեքենայի պէս անզգայ ու անխիղճ է . . . :

ՆԱՄԱԿ ԻՔ

ՆԵԼՍՕՆ ԱՌ. ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Շայնոն դիրը ճարտար է և անշուշտ ճաշակիդ յարմար, բայց պաղ ջուր կ'թափէ վառ սրտի վրայ: Ո՛ւր էր թէ ես ալ մեքենայ մը լինէի անոդի ու անղոյղ և գառնայի այն բոլորակին շուրջն որու կեդրոնն է Լիլլին: Ի՛նչ օգուտ, կոյր դէպքերու կեդրոնախոյս այժը զիս դուրս վանեց այդ շրջանակէն և հիմակ մոլորուն աստղի պէս կը շարժիմ, միշտ լոյս սպասելով Արևմուտքէն, թէև Արևելք կ'գտնուիմ:

Ձկայ արդեօք գիւտ մը, մեքենայ մ'որ երևան հանէ իմ էութեանս գաղտնիքը. չկայ հին կամ նոր վէհուկ մ'որ քինկ խնամակալս իմ առջևս բերէ: Դու իմ դործս, բարեկամ, յանձներ ես ոստիկանութեան, որ իրօք կինձուտ մեքենայ մ'է, և կ'խնդրես որ, եթէ ունիմ, խնամակալիս կենդանագիրը քեզի ղրկեմ, կամ իր նկարագիրն ընեմ:

Որչափ որ կ'յիշեմ կարող եմ նկարագրել զինք: Դեռ աչքիս առջևն է իր երկար հասակը, լայն իրանն, բարակ սրունքը, նուրբ վիզը, քառակուսի կունտ գլուխը, որու գագաթը քանի մը սպիտակ թելեր կային, ցից ճակատը, թաւ սև ունքն, որ կ'պօղեն երկու հատ սև աչքեր, թէև փայլուն այլ անխօս, խոշոր ու պնդակազմ քիթ մ'որու ծայրը գրեթէ իր խիտ պեխերուն կ'դպի, դեղին մօրուքը՝ որու մէջ ճերմակ ընկած է և որ մինչև կուրծքը կ'իջնէ, մումի պէս դէմքն որ արդէն քիչ մը խորշոմելու սկսեր էր, ոսկրուտ

այտերն որոց վրայ տեղ տեղ մանր խորշեր կան, ծաղկի հետք: Այս է ահա քինկի արտաքին պատկերը. կէս մ'առևելցի և կէս մ'անկլիացի տիպար: Բնապէս ծանր կ'խօսի, կարծես թէ լեղուին տակ կայ բան մը զոր կուլ կ'տայ. սովորաբար ինքն իր մէջ կ'նայի քան թէ ուրիշին, իբր թէ իր աչքն հոդւոյն լրտեսը լինէր և չթողուր որ ասոր զղացմունքն անոր մէջ արտափայլի: Քինկ կ'նմանի մարդու մ'որ ծանր բեռ մը կ'կրէ, չէ թէ կռնակն, վասն զի միշտ ձիգ կ'կենայ, այլ գլխուն վրայ որ ստէպ վար կ'հակի: Անշուշտ հիմակ կ'երևակայեմ որ այդ բեռն իմ ծննդեան պատճառող գաղտնիքն է: Եթէ վեր հանես զայն, բարեկամ, պիտի ըսեմ որ շատ հնարագէտ մարդ ես: Միայն պէտք է դիտել թէ մարդիկ, մանաւանդ ինքզինքնին գաղտնի պահելու տրամադիր մարդիկ, այնպիսի դիմակներ կ'հագնին որոց բնատիպ պատկերը թափանցել դժուարին կ'լինի: Անկլիացի ոստիկաններդ քաջ որսորդներ են որ ճապարը թուփերէն դուրս հանելու հնարքը դիտեն, բայց շատ անգամ տուներու շուրջը կ'պտըտին և խոհանոցներու մէջ եփած նապաստակի կտորներ կ'որսան . . . :

ՆԱՄԱԿ ԻԹ

ՆԵԼՍՕՆ ԱՌ. ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, ճիշտ է. անթև թռչուն մ'եմ, թուփէ թուփ կ'ոստոստեմ առանց վեր, բարձր ելնելու: Նիւթ մը կ'առ-

նեմ և հազիւ շօշափելով կ'թողում և ուրիշ նիւթի կ'անցնեմ: Ի՞նչ ընեմ, այս շարժուն վիճակիս պատճառն իմ սեւ ձակատագիրս, իմ ապագայիս անստուգութիւնն է:

Սիրոս միտքիս պէս դող է, եթէ բաց լինէր մանաւանդ հոգիս՝ կարծեմ թէ նոր փորձանքի պիտի հանդիպէի: Աղէկ որ զինուած եմ. Լիլին է վահանս, որու վրայ կ'ցոլանան միայն ու կ'մարին հրապուրելի սէգ սէգ աչերու ձառագայթները: Լսեր էի որ անդիմադրելի է արևելեան գեղեցկութիւնը, բնական, անզարդ ու անշպար գեղեցկութիւն մը, և եթէ ոչ սիրոս աչքս կ'վկայէ որ լսածս անհիմն չէ: Կ'ըսեն թէ ստրկութիւնը կ'արատէ, կ'հաշմէ մարդիկը, ինչո՞ւն է որ այս գերութեան աշխարհիս մէջ կիները, մանաւանդ տաճիկ կիները, այնքան անարատ, թարմ ու կայտառ են: Արդեօք այս էակներուն ազգած վա՞հն է որ մարդիկը կ'ստիպէ զանոնք վանդակներու մէջ փակելու. ինչ վատութիւն: Ա՛յս ալ խնդիր մ'է որ ուրիշ նամակի նիւթ կրնայ լինիլ: Իմ նպատակս այսօր արևելեան գեղեցկութեան վրայ խօսիլ չէ, այլ քեզի տուած մէկ խոստումս պիտի կատարեմ, թէև ակամայ, Հայոց եկեղեցասիրութեան մասին . . . :

Իրաւ է որ այս տեղ ամեն բանէ աւելի ուշ գրաւող խնդիրը կրօնն է: Ամեն տուն, շուկայ՝ կրօնի, հաւատքի խօսք կայ, վէճ կայ. մեծ ու պզտիկ, ազէտ ու դիտուն խօսակցութեան ուրիշ նիւթ չունին: Կենաց անմիջական խնդիրները կ'թողուն, երկիրը կ'մոռնան երկինքը կ'ապրին, հաց, ջուր, գիր, ուսում առ ոչինչ կ'գրեն և Սաղմոս, Նարեկ, Աւետարան կ'կարդան, աստուածաբանական ծանր խնդիրներ լուծելու կ'ելլնեն: Միայն Հայը չէ այսպէս, այլ և Ցոյնն որ ծիսական խտրութիւն մը, Ոսկեբերանի մէկ կտորը կ'առնէ կ'մեկնէ, Հրէայն՝ Թալմուտի մէկ բառը, Տաճիկը՝ Քուրանի մէկ սուրատը ձեռք կ'առնուն և կ'սկսին՝ առանձին շրջաններու մէջ՝ վիճաբանիլ, բորբոքիլ, կռուիլ, առանց մազի չափ յառաջ գնալու: Միջին դարու մէջ ենք: Արիս-

տոտէլ ու Պլատոն դեռ կ'տիրեն այս տեղ: Պէքընի ու Նիւթընի անունն իսկ անծանօթ է այս աշխարհին: Այս տգիտութեան անմեղութեան ու անկեղծութեան վրայ մարդ կ'զմայլի կ'մնայ, մանաւանդ երբ կ'խորհի թէ ինչ յոսի հետեւանք ունեցած է և կ'ունենայ արևելեան ազգերու, որ քիչ շատ սեմական ցեղին հետ խառնուած են և որ տակաւին գերբնականութեան շրջանէն դուրս չեն ելած: Այս գրութիւնը կ'ներգործէ իրենց կենաց, իրենց ձակատագրին, դրականութեան, կրթութեան և ապագային վրայ, որ գրեթէ կրօնական է: Ամեն բան կրօնին չափովը կ'չափեն, երկինքն երկրի փորձաքարը կ'ընեն, ամեն իրողութեան մէջ, ամեն դործի ու վարմունքի մէջ կրօն կ'փնտռեն: Փոյթ չէ՝ եթէ քահանայն հայհոյէ, վաճառականը խաբէ, դործաւորը մարդ սպանանէ, աշակերտը սուտ խօսի, վարժապետը տղայքը բանտէ, ծեծէ ու բարոյապէս և մտապէս սպաննէ, ինչպէս որ իրօք կ'ընեն, բաւական է որ անոնք պահք պահեն, ամեն օր ժամ երթան, պատկերներու առջև ծունր դնեն, տարին մի քանի անգամ խոստովանին: Ամեն մեղք ներելի է այս տեղ, հերիք է որ մարդ կրօնասէր լինի, և եթէ կուզես կեղծաւոր:

Այս զանազան ժողովրդոց մէջ ամենէ մոլեռանդն ու նախապաշարեալը Ցոյնն է: Սուրբերու ու պատկերներու անհամար բազմութեան մէջ Աչմարիտ Աստուածը մոռցած է: Տարին վեց ամիս անոնց տօնը կ'պահէ. լուր օրերն ըրած վաստակին մեծ մասը ուխտատեղիներու և գինիի տակառներու կ'նուիրէ: Հայն աւելի պարզակրօն է. եթէ ոչ պատկերապաշտ՝ պատկերամարտ ալ չէ: Եկեղեցյան հին արարողութիւններու հետ խառնած է ծիսական նոր զեղծումներ՝ արևմտեան եկեղեցւոյ պարգև: Իրաւ է որ ժողովուրդն առ հասարակ՝ իր Ս. Լուսաւորիչն՝ եթէ ոչ նախապաս Քրիստոսի համազօր կ'դաւանի: Կրօնամոլ չէ, և կ'սարթի որ իր եկեղեցին ուրիշներու նկատմամբ շատ թոյլտու է: Սոյգ է որ այս ազգային եկեղեցին իր լաւ կողմերն ունի, զոր ար-

դի պաշտօնեաները կ'խանդարեն : — Մեր եկեղեցին սահմանադրական է , կ'ըսէր ինձ անցեալ օր գիտուն Հայ մը : Նուիրապետական իշխանութիւն չկայ մեր մէջ . աշխարհականն անդամ ձայն ունի կրօնական խնդիրներու մասին , և ամենէ յետին եկեղեցականն ժողովրդեան քուէովը կ'ընտրուի : — Ուրեմն ամեն ձեր պաշտօնեաներն ընտիր պիտի լինին , ըսի : Բայց ինչո՞ւ համար շատ տգէտ կրօնականներ ունիք : — Վասն զի ժողովուրդը տգէտ է : — Ուրեմն ինչ օգուտ կը ծագի սահմանադրական սկզբունքէ զոր չէք գործածեր : Այս բաւական չէ , Հայն ոչ միայն իրրև իր հարց գաւանանքը պինդ կ'պահէ կրօնն այլ և զայն իր ազգայնութեան մէկ էական տարրը կ'համարի : Իր քաղաքական կենաց ժամանակ եկեղեցին իր եկեղեցականներու ձեռօք բաւական մեծ դեր ունեցած է : Չորրորդ ու հինգերորդ դարուն՝ կառավարութիւնը գրեթէ աստուածապետական էր : Հայրապետը կ'իշխէր թագաւորին վրայ , և ժողովուրդն հայրապետին բերնէն կախուած էր : Ասկից ծագած են նախարարական ու կրօնական կուիւներ : Սովորաբար նախարարն , որ կուապաշտութեան աւելի հակամէտ կ'երևէր , որ հին աւանդական սովորութիւններն ու արտաքին յարաբերութիւնները պահպանել կ'ուզէր , իր իշխանական ու կալուածական իրաւունքն անվթար պահելու յոյսով , չէր կարող հանդուրժել եկեղեցականին , որ հոգին ազատելու համար հայրենիքը զոհելու տրամադիր կ'երևէր :

Երբ Հայաստան մէկ կողմէ շրջակայ բարբարոս ազգերու և մանաւանդ Պարսից ու Արաբացւոց հարուածներուն ներքև նիւթապէս կ'ճնշուէր , միւս կողմէ իր կրօնական գաստն ձեռօք բարոյապէս կ'տոկար ամեն զրկանքի , հալածանքի նոյն իսկ մահուան՝ եկեղեցւոյն սիրոյն համար : Ասոր համար արդի Հայք կ'կարծեն թէ Արևելից առաջին քրիստոնեայ նահատակ ժողովուրդն են : Թերևս աստիճան մ'իրաւունք ունենան , սակայն եթէ արդի պատմական գիտութեան լուսոյ

այդ բարոյական դրութեան հետևանքը քննենք , կարծեմ թէ Հայոց տգիտութեան և քաղաքական անկման դխաւոր պատճառներն անոր մէջ պիտի գտնենք : Հին դարերու Հայ ժողովուրդը կ'նմանի այն մարդուն , որ թէև սրտով բարի , բնութեամբ զգայուն , ընտանեսէր ու խաղաղասէր , այլ մարմնով ու մտքով տկար ու անզէն , կ'իյնայ յանկարծ վայրագ , արիւնկզակ , նենգաւոր աւազակներու մէջ , իր հոգեկան ձիրքով իր էութիւնը պաշտպանել կ'յուսայ : Քաղաքական մեծ սխալմունք , կրօնական դրութեան ցաւալի հետեւանք . թէև Հայք սկիզբները կրնային օրինակ առնուլ Յոյներէն , որ սուրը խաչին հետ քաղաքական նպատակներու համար կ'գործածէին , և երբ սուրը պատեանը դրին և սկսան խաչին ձևին , հաղորդութեան տեսակին , Քրիստոսի բնութեան վրայ վիճաբանիլ թագ ու աթոռ կորուսին :

Կ'տեսնեմ այս տեղ , բարեկամ , արևմտեան լուսաւորութեան քիչ շատ հաղորդ Հայեր որ կ'պնդեն թէ իրենց ազգային անկախ եկեղեցին ազատեց՝ եթէ ոչ Հայաստանը , գէթ հայութիւնը կատարեալ կործանումէ : Ես մէջ կ'բերեն մեր կրօնական ու քաղաքային կուիւները , Քրոմվէլի մոլեռանդ քաղաքականութիւնը , մաքրակրօններուն ապստամբական շարժումները , որոց պարտաւոր է , կ'ըսեն , Անկլիա իր ազատութիւնը : Ես ուրիշ կերպ կ'մտածեմ և բաղդատութիւնն անյարմար կ'գտնեմ : Մեր կրօնական կուիւներուն ու հալածանքի բնութիւնն ու նպատակը տարբեր էին : Հայոց նպատակը երկին , մերը երկիրն էր : Մենք պապական լուծը թօթուել , կրօնաւորներու իրաւասութիւնը սեղմել , վանքերը կործանել , քաղաքական կեանքն ընդարձակել կ'ուզէինք , ասոնք ամրապնդելու փոյթ ունէին եկեղեցական իշխանութեան դարերնած շղթաները և երկնից քաղաքացի դառնալու : Ես թէ հայութեան պատուարը Հայաստանի եկեղեցին էր , ինչո՞ւ համար արդեօք այդ եկեղեցին Իտալիա , Մաճառստան ու Լեհաստան դաղթող Հայոց ազգութիւնը չպահպանեց :

Թուրքիոյ Հայոց դժուարութիւնն ոչ այնքան դրական որքան բարոյական պատճառներու վրայ կ'կայանայ: Աւետաբանը չէ որ փրկեց Հայութիւնը կորուստէ այլ Քուրանը, որ անոր հակառակնեայն է. Հայը չէ որ պահպանեց իր եկեղեցին այլ Թուրքն, որու մկրտիչն անոր հակառակերն է. բարոյական կամ հոգեկան զօրութիւնը չէ որ պահպանեց Հայոց ընտանեկան կեանքն ու եկեղեցական պաշտամունքն այլ Թրքաց տգիտութիւնն ու անքաղաքակիրթութիւնն որ Հայոցը կ'հաւասարէին: Հայը էապէս քրիստոնեայ թուրք մ'է, ամեն մի ջաւալրի յարմարող և իր սիրապետներուն վարմունքն ու սովորութիւնները օրինակող սարիօրէն: Եթէ Օսմանցին լուսաւորութեան ուղիութեան բարեկամ լինէր, Հայը նոյն հոգեկանդ րութեան մէջ մնալով, անսարակոյս ինչ որ սրով ու կրօնիւ չկրցաւ ընել, Հայութիւնը կլլել, այդ գործիքներով պիտի կատարէր: Եւ մինչ արդէն չէրևիր որ Հայոց եկեղեցին անզօր է դարուս քննութեան և ազատութեան դէմ: Մինչ անոր ներգործութիւնը չընդունիր այնպէս որ կաթոլիկ ու բողոքական տարրն օրէ օր իր մէջ տարածուելու վրայ է: Ուրիշ ազգերու մէջ ալ կրօնական հերձուածները կ'պատահին և հիմակ գրեթէ անտես կ'անցնին. բայց արևելեան ազգերու, ինչպէս և Հայոց մէջ պատահածներն ուրիշ, նոր երևոյթ մը կ'ընծայեն: Քանի որ ազգութիւնը կրօնիւ նշանակուիլ կ'ուզուի, և ազգաւ նոյն այլ կրօնիւ տարբեր մարդիկ ոչ միայն նոյն եկեղեցիէն այլ ազգութենէ կ'մերժուին, հետևապէս հերձուածներն ալ ոչ միայն եկեղեցւոյն այլ ազգին թշնամի կ'դառնան: Ասոր անհեթեթ կ'երևի մեզի համար, բարեկամ, բայց ճշմարտութիւնն այս է: Հայասատանեայց եկեղեցին բողոքական ու կաթոլիկ հայն Հայ չճանչեր, որպէս թէ եկեղեցի չեղած Հայութիւն չկար, որպէս թէ իրենց առաքելական Հայկն ու Արամն Հայաստանի զաւակ չլինէին: Տես որ կ'սանի կրօնի մոլի եռանդն ու եկեղեցական կրթութեան ոգին: Ես այնպէս կարծեմ որ ժամանակը հասած է

որ Հայ ժողովուրդն իր հին դրութիւնը փոխէ և ազգութեան հզօր հիմունքը չէ թէ միայն խաչի այլ կարծեայ ազատութեան, լուսաւոր հայրենասիրութեան մէջ հաստատէ, ապա թէ ոչ շատ յարդի անդամներ պիտի կորուսէ, և բնականութեան չըրածը քաղաքակրթութիւնն ու գիտութիւնը պիտի կատարեն: Քանի որ կարելի չէ արգիլել որ միևնոյն ազգին անդամները տարբեր կրօններ պատանին, պէտք է այնպիսի ազգային շահերու և իրաւանց կեդրոն մը հիմնել որ ամեն Հայու միտք ու սիրտ գրաւէ և անոնց պաշտպանութիւնն անխտիր ամենուն պարտաւորութիւնը դառնայ: Երբէք եկեղեցականը չպիտի ընէ այս յեղաշրջումն, այլ իր սկզբունքին հակառակ՝ միշտ իր ծոցէն դուրս պտուղը պիտի հալածէ: Կ'նայիմ որ աշխարհականն ալ դեռ եկեղեցականին փիլոնին տակը կ'մտնէ, անոր աչքովը կ'տեսնէ, անոր մտքով կ'դատէ: Ուստի Հայոց ապագան դեռ շատ մութ է, և այս կողմի հայութիւնը պարզ բաւ մը:

ՆԱՄԱԿ Ա.

ԱՈՒՏ ՍՈՒ ՆԵԼՍՕՆ

Լանդըն . . .

Բարեկամ, Ձեմ մոլորիր քեզ եթէ ամեն խնդրի խորը չես մտներ: Գաղափարներ ունիս բանաւոր: Նախ՝ նամակիդ անձուկ շրջանը չներեր երկարաբանել, երկրորդ՝ սիրահարի գրիչն անհամբեր ու նեղսիրտ կ'լինի: Շատ բան որ այսքան ալ կ'յայտնես: Քննիչ նկարագիրը լաւ գծած ես: Հայոց

կրօնական դրութեան նկարագիրդ ալ՝ թէև մութ, փայլուն նշոյլներ ունի։ Մին քնադրին իսկական պատկերն է անշուշտ, միւսն իմ արդէն երևակայած ժողովրդեան մտաւոր պատկերը։ Եթէ քինկը Լոնտոնի մէկ փողոցին մէջ տեսնեմ՝ նկարագրիդ ձեռքս՝ պիտի համարձակիմ շիտակ անոր մօտենալ և օձիքէն բռնելով համար պահանջել։ Հայոց բարոյական մէկ քանի կարևոր հանգամանքը դիտնալով անոր նիւթական ու մտաւորական վիճակը կրնամ դնհատել և անոր ապագան դուշակել, թէև ինքն ինձ անծանօթ լինի։ Դու որ քաղաքագիտի պէս կ'խորհիս ու կրօնական դրութիւններն ժամանակի ու հարկի պատուղներ կ'համարիս, որ քիչ քիչ կ'հասունանան, ինչո՞ւ չես արդարացներ Հայոց ներկայ անհեթեթ դիրքն կրօնի ու ազգութեան մասին։ Կ'տեսնեմ որ ակամայ իմ դաղափարիս կ'մօտենաս։ Դու կ'մեղադրես այդ դիրքը և դարերու դործ կ'սեպես, ես քայլ մ'աւելի յառաջ կ'երթամ, կ'դատապարտեմ զայն իբրև կրօնականութեան դործ։

Ձեմ սիդեր թէ համաիտ ես ինձ թէ ոչ, վասն զի խընդիրն այդ չէ, այլ բնական կ'դտնեմ որ անկախ ըսուած Հայաստանի եկեղեցին յարդ բնութեամբ ու մտքով անկախ մարդիկ իր ծոցէն հանած չլինի, թէ կրօնական և թէ աշխարհական դասուն մէջ, որպէս զի ժողովրդեան կարծեաց վրայ ազդելով՝ կրօնական ու քաղաքական յեղաշրջում մ'արտադրէին, արդի կացութիւնը ժամանակիս ոգւոյն համակերպելով։ Եւ ինչո՞ւ համար, վասն զի աշխարհիս ամեն կրօնական դրութիւնները երբէք անկախ եղած չեն և չպիտի լինին, վասն զի ամենուն սկզբունքը սահմանափակ է և նոյն, վասն զի ամենքն վերացական աշխարհին կ'նային և ոչ իրականին, հաստատեալ օրինաց ու իշխանութեանց կոյր հնազանդութիւն և բնական ճշմարտութեանց անտարբերութիւն կ'քարոզեն, վասն զի ամեն բարոյական ճշմարտութեանց շրջանը միշտ նոյնն է, և յառաջադիմութեան անընդունակ։ Տէրը պաշտել, բարիք ընել, ճշնամոյն ներել և այլն, այս թէև ամենուն դրութեան նկարագիրդ ալ՝ թէև մութ, փայլուն նշոյլներ ունի։ Մին քնադրին իսկական պատկերն է անշուշտ, միւսն իմ արդէն երևակայած ժողովրդեան մտաւոր պատկերը։ Եթէ քինկը Լոնտոնի մէկ փողոցին մէջ տեսնեմ՝ նկարագրիդ ձեռքս՝ պիտի համարձակիմ շիտակ անոր մօտենալ և օձիքէն բռնելով համար պահանջել։ Հայոց բարոյական մէկ քանի կարևոր հանգամանքը դիտնալով անոր նիւթական ու մտաւորական վիճակը կրնամ դնհատել և անոր ապագան դուշակել, թէև ինքն ինձ անծանօթ լինի։ Դու որ քաղաքագիտի պէս կ'խորհիս ու կրօնական դրութիւններն ժամանակի ու հարկի պատուղներ կ'համարիս, որ քիչ քիչ կ'հասունանան, ինչո՞ւ չես արդարացներ Հայոց ներկայ անհեթեթ դիրքն կրօնի ու ազգութեան մասին։ Կ'տեսնեմ որ ակամայ իմ դաղափարիս կ'մօտենաս։ Դու կ'մեղադրես այդ դիրքը և դարերու դործ կ'սեպես, ես քայլ մ'աւելի յառաջ կ'երթամ, կ'դատապարտեմ զայն իբրև կրօնականութեան դործ։

Ձեմ սիդեր թէ համաիտ ես ինձ թէ ոչ, վասն զի խընդիրն այդ չէ, այլ բնական կ'դտնեմ որ անկախ ըսուած Հայաստանի եկեղեցին յարդ բնութեամբ ու մտքով անկախ մարդիկ իր ծոցէն հանած չլինի, թէ կրօնական և թէ աշխարհական դասուն մէջ, որպէս զի ժողովրդեան կարծեաց վրայ ազդելով՝ կրօնական ու քաղաքական յեղաշրջում մ'արտադրէին, արդի կացութիւնը ժամանակիս ոգւոյն համակերպելով։ Եւ ինչո՞ւ համար, վասն զի աշխարհիս ամեն կրօնական դրութիւնները երբէք անկախ եղած չեն և չպիտի լինին, վասն զի ամենուն սկզբունքը սահմանափակ է և նոյն, վասն զի ամենքն վերացական աշխարհին կ'նային և ոչ իրականին, հաստատեալ օրինաց ու իշխանութեանց կոյր հնազանդութիւն և բնական ճշմարտութեանց անտարբերութիւն կ'քարոզեն, վասն զի ամեն բարոյական ճշմարտութեանց շրջանը միշտ նոյնն է, և յառաջադիմութեան անընդունակ։ Տէրը պաշտել, բարիք ընել, ճշնամոյն ներել և այլն, այս թէև

թէև մեզ որ ամեն ժողովուրդ իր շինած խղճին համեմատ կը կատարէ այս պարտաւորութիւնները, և շատ անգամ մարդ զոհել, հանճար զոհել, հերետիկոսներ այրել, արիւն թափել աւաքինական գործերու կարգը կ'դասէ։ Այս մասին չեմ հատար որ Հայոց եկեղեցին բացառութիւն կազմէ։ Տարբերութիւնը ձևերու, դոյներու մէջ է և չէ թէ հիման մէջ։ Ցոյց տուր ինձ եկեղեցի մ'որ ինքնաբերաբար լուսոյ, ազատութեան կողմը հակած լինի, ցոյց տուր ինձ ժողովուրդ մ'որ կրօնաւորներու ձեռօք արև ու անկախութիւն տեսած լինի։ Եթէ ճշմարտութեան ու լուսոյ կողմն իսկ հակի, ատոյդ եղիր որ այդ բաներն իբրև դիմակ կ'գործածէ որ իր նպատակին, միապետութեան և տիրապետութեան, աւելի շուտ հասնի։

Անդնինք այս ծանր կէտերէն զոր պատմութիւնն աւելի ճրկար ու որոշ կ'բացատրէ, դոցենք ազդերու կենաց կրօնական կողմն, որու նկատմամբ իմ դաղափարներս դիտես և քիչ մը ծայրայեղ կ'դտնես. փոյթ չէ, կարծիքներն ազատ են, միայն հարցընենք թէ ինչ մեծ գործ ըրած է Հայն անցեալին մէջ, և ինչ, իր դարաւոր դերութեան ժամանակ։ Պատասխանն, ըստ իս յայտնի է, քանի որ իր պատկերն ունիմ աչքիս առջև, գրեթէ ոչ ինչ։ Պիտի առարկես թէ իր երկիրը, իր կլիման, իր դրացի ժողովուրդներն ըրին զինքն ինչ որ էր, դերազանցապէս ընտանեսէր ու կրօնասէր ժողովուրդ մը. բայց պիտի վրացիք, Աղուանք ալ կրօնասէր ժողովուրդներ չէի՞ն։ Առաջինն իր լեռներուն մէջ յարդ կը դիմադրէ բռնակալութեան, երկրորդն՝ Եւրոպա կ'արշաւէ և իր հետքն այն տեղ կ'թողու։ Մի՛թէ բանի տեղ չէս դներ ժողովրդեան ստացած կրթութիւնը, որ կրնայ՝ ըստ տեսակին, զայն կնամարդի ու սարուկ ընել, կամ արի ու ազատ։ Այս մեկդի։ Ձորս հինգ դարէ ի վեր ինչ ըրին Հայք իրենց ազատութեան համար։ Քննէ և դու այդ տեղու հարցուր. պիտի տեսնես ու իմանաս որ իրենց ժամանակին մեծ

ման եկեղեցի շինելով ու աղօթելով անցոյլին, մէկ մասն ետաւ շահելով։ Իրենց հայրենիքը տաճարն էր, որու պաշտպանութեան արժանիքն ալ իրենցը չէ, ինչպէս լաւ կ'գիտես, այլ արտաքին պարագաներու։ Անտարակոյս այսպիսի ժողովուրդ մը շարունակ ապտակներ կերած է, ոչ միայն տիրապետ ցեղէն, այլ և իր դրացիներուն կողմէ, որ չարաբաստութեան ու նենգաւորութեան արժանիքն ունէին, և ինչո՞ւ, Քրիստոսի պատուէրին հետևելու համար։ Թուրքը Հայուն պատիւն առած է, թոյլ տալով վերհանձնարար որ իր կրօնը գաւանի, իր լեզուն խօսի, իր եկեղեցին շինէ ու վարէ, Քիւրան իր հարսն ու աղջիկը դողցած է, խօսք տալով որ զինք պաշտպանէ ուրիշ վայրագ ցեղերու դէմ, Ավշարն՝ իր տավարն ու բերքը կորզած է, խոստանալով տավարին թրիքն ու արտը պաշտպանել, յափշտակութեան աղբիւրը չկորսուելու համար, Թաթարն իր տունը փլած է, տաբակը թող տալով, Յոյնն իր եկեղեցին նախատած է, զինք հերետիկոս անուանելով, Հրէային անգամ ետ չէ մնացած այս մասին, թէև Հայու երակներուն մէջ հրէական կամ սեմական արիւն շատ խառնուած է, և ինք Հայն այս ամեն արտաքին ճնշումներուն հանդուրժած է և դեռ կ'հանդուրժէ, քանի որ ի բնէ անտի կրօնաւորն անոր ըսած է և ցարդ կ'ըսէ. — Համբերէ. — Պաշտօնաւորը կամ դիւանագէտն անոր կ'ըսէ. — Ձայն մի՛ հաներ. — Աւետարանն անոր կ'ըսէ. — Երանի անոնց որ հլու ու աղքատ են. — Տգիտութիւնը կ'ըսէ. — Բաղդն այսպէս կ'ուզէ։ Ուստի հիմակ ալ Հայն իր հօրը զաւակն է. իր տգիտութիւնը, իր անկումը, իր թշուառութիւնն իր գտնուած միջավայրին ու ընդունած կրթութեան արդիւնքն են։ Արտաքին ու ներքին պարագայից ծնունդ, ինքն իրեն յատուկ աշխարհ մը ստեղծած է որու մէջ կ'ապրի քնապէս, առանց կասկածելու որ այդ աշխարհն այժմեան աշխարհը չէ։ Եւ ահա այս անկասկած վստահութիւնն է, կարծեմ, իր ամենէ մեծ սխալմունքն, որուվ ցարդ

շարժում մ'ըրած չէ գէպ ի լոյս ու յառաջադիմութիւն։

Հայն եթէ գիտնար տեսնել ու կշռել, հիմակ Եսիոյ առաջին ժողովուրդն ու տէրը պիտի լինէր։ Անուրանալի է որ լաւ յատկութիւններ ունի որ կ'քնանան, և ունեցածն այս է, բայց այդ չբաւեր. դեռ յատկութիւններ ալ պէտք են անօրէն ազդեցութեանց մէջ, մանաւանդ այնպիսի անիշխանական դրութեան մը մէջ, ուր ամենէ աւելի ոյժ ու դրամ, վառօդ ու հրացան ունեցողն ամենէ մեծը կ'լինի, և Հարցնող չկայ թէ ո՛սկից առած է այդ մեծութիւնը։ Ուրեմն ի՞նչ պէտք է ընէ, քեզի կ'ինայ մտածել, գու որ աւելի մտէն կ'տեսնես անոր կպմուածքն ու պիտոյքը, կարողութիւնն ու իղձերը։ Լսո՛ւ իս՝ Հայը միս մինակ չպիտի կարող լինի բան մ'ընել, արտաքին քաղաքական ու կրօնական նեցուկի մը կարօտ պիտի լինի որ քալէ։ Բայց առաջ պարտաւոր է իր կրօնական դրութիւնը, կրթութեան մեթոտը, կենցաղավարութեան կերպը փոխել, իր բոլորտիքը գտնուած հակառակ տարրներուն վրայ մտաւորապէս իշխել և օգուտ քաղելու չանալ այն կառավարական դիրքէն, որ թէև հիմակ անզօր, կրնայ փոխուիլ ու զինք ճնշել, եթէ ինք կանխաւ դիմադրութեան միջոցներ չպատրաստէ։

Բայց, բարեկամ, աւելորդ կ'սեպեմ այս մասին երկարապոյն խօսիլ։ Դու մտէն քննէ Հայանուն կենդանին ու դրէ, եթէ դրելու սիրտ ունիս։ Ես ալ այդ սրտիդ բուժակը լինելու հոգն ունիմ և ուրիշ կարևոր գրելիք։ Միայն այնքան աժան չպիտի ծախեմ և գալ թղթաբերով պիտի հաղորդեմ։ Երեսդ կախեցիր, տաս օրն տաս տարի պիտի երևի սիրահարիդ, որ սակայն սիրական էակին մօտ անդին ժամանակին արժէքը չդիտէր անշուշտ և օրերն իրրև ժամ կ'անցնէր։ Հիմակ ապաշխարէ, անգործութեանդ պատիժն և ունայն հառաչներուդ արդիւնքն ան՛ւ, առանց իմմէ առնուելու և արևելեան սեւակն էակները բոլորովին անգոսնելու։ Վասն զի սև ու կապոյտ, կանաչ ու խարտեշ աչքե-

րու կայծերը գոյնզգոյն չեն իրօք, սակայն գոյն ու կրակ մեր արտին բնութենէ ու Ճաշակէն կ'առնուն։

ՆԱՄԱԿ ԼԸ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պօլիս . . .

Բարեկամ, Բաւական չէ իմ քաշած ապաշխարանքս, կ'ուզես աւելի ևս պատժել զիս, լսելով այնպիսի խնդրոյ մը վրայ որմէ կախումն ունի իմ Ճակատագիրս։ Բաւական չէ իմ կրակս, անոր վրայ եղ կ'թափես և հեռուէն կ'ծիծաղիս ըսելով թէ պատեհ առիթներէ օգուտ քաղել չեմ գիտցեր։ Է՛հ, ինչ ընէի, քանի որ շահու ու ստակի համար չէի սիրեր, այլ սիրոյ ծարաւի հոգի մը գոհ ընելու։ Մարդ ազատ է, կ'ըսուի, և ես, ընդ հակառակն, ինչպէս կ'տեսնես, պարագաններու գերին էի։ Կրնամ ըսել լորտ Պայրընի հետ, «— Քու երկնից երեսը դեռ ևս շատ ծիածաններ կան, բայց իմիններս առերևոյթ եղան։ Տաք զգացումներով մարդ կ'սկսի իր կեանքը, փայլուն յոյսերով կ'օրօրի, բայց ժամանակը քիչ քիչ մեր յոյսերը կ'գունատէ, և, օձին պէս, ամեն տարի՝ նշանաւոր սխալմունքով մ'իր շղթան շապիկը կ'թողու։ Իրաւ է որ ուրիշ աւելի շողուն ու թարմ շապիկ մը կ'հագնի, բայց տարուան վերջն, այդ շապիկին ալ մեր մարմնոյն քաղցը կ'ունենայ և երբեմն միայն մէկ երկու շաբաթ կ'տևէ։ —

Ես ևս աչքս պիտի բանամ, պիտի համբերեմ և պիտի

սթափիմ, և երբէ սթափիչ իրեր կան աշխարհիս մէջ, իրօք իմ աչքիս առջև գտնուած բնական տեսարաններն են, որոց նմանը, կարծեմ, ուրիշ վայր մը չգտնուիր։ Խոր վիշտ, աղէտ, ձախորդութիւն, նոյն իսկ արքայական թագի կորուստը մոռնալու համար թշուառը, ընկեցիկն, պէտք է որ այս տեղս գտնուի։ Օդը, ջուրը, ծովը, կինն, ամեն ինչ կ'գաւազդրեն ամենէ ծանրապլուխ մարդը, ամենէ վշտաբեկ սիրտը սփոփելու։ Հարկ չկայ Տօն Ժուանին պէս ծպտիլ, պատրաստր մտնել, — « Ուր ամենէ իմաստունն իսկ մարդաբէին դրախտին նախաճաշակը կրնայ ստանալ » — ոչ, բաց երկնքի տակ, մարդապետնին վրայ, Պոսֆորի վրայ ծփացուղ նաւակին մէջ, նոյն իսկ տնակիդ մօտ՝ կարող ես գտնել զուարճութիւններ ու հրապուրելի էակներ, որոց շատեր կ'տեսնէ, և որ սակայն իմ երևակայութեանս կ'խօսին քան թէ սրտիս։ Խնդութիւն, ծիծաղ կ'տիրեն ամեն տեղ, ամեն այլազգեստ ու այլաբուն կերպարանի, ամեն այլազան տեսիլներու վրայ։ Ամենքը կ'վայելեն, ծովու ձուկն ու օդի թռչունը, մեծատուն հարուստն ու թշուառ աղքատը, այնքան այլազան է բնութիւնն և այնքան բարիք կ'հայթայթէ, ամեն մէկուն Ճաշակին համեմատ։ Միայն Թուրքերը տխուր կը մնան այս դեղածիծաղ ափերուն վրայ, թէ կ'վայելեն և թէ կ'տրտնջան, և կարծես թէ կ'զգան որ եկաւոր հիւրեր են, որոց օրերը համրուած են, մինչդեռ անդին՝ նենգամիտ Ցոյնը կ'խնդայ և Պիւզանդիոնի իրրև ապագայ տէրը կ'շարժի, կ'խօսի ու կ'գործէ, Եւրոպացին՝ անհուշտ ու նախանձոտ աչօք կ'նայի այս բնական հարստութեանց և իր առևտրական գործունէութեան հետ քաղաքական հնարքն ալ կ'աւելցընէ, յուսալով որ օրին մէկը բաժին մը կ'ստանայ կողպուտէն, Հայն՝ թէև ուրախ զբաղմի՝ աննպատակ կ'պտրտի Պօլսի ընդարձակ շուկաներուն մէջ՝ և ոչ Ասիոյ մօտաւոր եզերքն, ոչ Մարմարայի կղզիներն, ոչ Ոլիմպոսի տեսքն իր պատմական յիշատակներն ու քաղաքական միտումները չեն

դրդուեր, եթէ ոչ ժամանակաւոր հաճոյից խայթն ու շահու խայծն իր արծաթասէր ոգին կ'շարժեն, Հրէայն իսկ իր մէջին ողբը կորուսեր, իր արտում դէմքը պարզեր է, և Ռոչէլտներուն արկղին վրայէն և ընդհանուր յեղափոխութեան մը յուսով հեռուն Սիօնի պատերը կ'տեսնէ և կ'ուրախանայ: Զարքաշ Պուլղարն, Թեթեւաշարժ Ալպանիացին, շահադէտ Ռումէնն, խորամանկ Սերվիացին, կորովի Քարատաղցին առ այժմ կ'զուարճանան, թէև այս զուարճութեանց ժամանակ չեն մոռնար իրենց ազգային փափաքներն ու քաղաքական հաշիւները:

Կ'հարցընեմ թէ այս ընդհանուր ցնծութեան ժամանակ, այս բաբելոնեան քաղաքին յուզմանց միջոցին, կարելի՞ է անդգայ, արտում կամ անտարբեր մնալ: Պէտք չունիս արկածներ փնտռել՝ յուզուելու և կենաց տաղտկալի միօրինակութիւնն այլայլելու համար: Արկած ու դիպուած, վնասկան կամ սիրային պատահար քեզ կ'դիմաւորեն ու կամայ ակամայ իրենց ծուղակին մէջ կ'նետեն: Ո՛ր պիտի բերեմ խօսքս, անհամբեր ես իմանալու: Մարիկ ըրէ: Գիտեմ որ դոհ սրտով պիտի իմանաս ամեն դիպուած ու իրողութիւն մ'որ զիս այս տարտամ վիճակէն հանելու պիտի օգնէ: Բայց աւելի տես, բարեկամ, որ տարտամ կայութենէ մ'ուրիշ անստոյգ կայութեան մէջ ընկած եմ, և կ'երևի թէ իմ կեանքս մէջ միշտ խորհրդաւոր, միշտ անծանօթ իրերու ու անձերու խաղալիկ պիտի պատնամ. . . :

Ահա նորէն կ'երևի խորհրդաւոր անձն, ծալիկներով նշանները կ'ընէ, որոց լեզուն չեմ իմանար: Յուզուած եմ, չեմ կարող շարունակել: Կ'դոցեմ դիրս և տանս պատշգամը կ'ելնեմ:

ՆԱՄԱԿ ԼԲ

ՆԵԼՍՕՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Պատշգամիս վրայ եմ. . . : Մի կարծեր թէ Լոնտօնի տան մ'արևնակին կ'նմանի այն, հոյակապ տան մը ճակատը, փողոցը կամ քառաձև պարտիզի մը վրայ նայող, հորիզոն ունենալով ծխոտ կամ դունատուր շրջապատ մ'որու բոլորտիքը նոյնակերտ վայելուչ ապարաններ կ'երևին. ո՛չ. իմ արևնակս անկլիական սիւնաշէն պերճութիւն չունի, պարկեր ու քանպակներ, հոյակներ ու արձաններ չունի, փայտաշէն է: Իր չորս գին զուգաչափ ծառուղիներ, մկրատով կարուած խոտեր, աւազուտ շաւիղներ չկան, չեն տեսնուիր վտիտ ու անցօղ դալարիի վրայ նստած պաղտկ օրիորդներ կամ վազվզուն սիրուն մանկիկներ, և ոչ վերը կատր մը պղտոր ու մրոտ երկին, այլ անհուն հորիզոն մը, դարաւոր ծառեր, անկանոն ուղիներ ու արաշեաներ կ'երևին: Մէկ կողմէ դիմացս կ'պարզուի Ասիոյ դալարաւէտ բլուրները, միւս կողմէ Եւրոպայի անտառուտ լեռները. աջ դիէս կը գրկեմ Եէնի գեղի հրուանգանն որ դէպ ի Հիւնքեար կ'մղուի, ձախ դիէս Պէօյիւքտէրէի խորշն, մինչև Սև ծովուն ջրերը. Առջևս կ'տատանին Պոսֆորի փրփրագեղ կոհակները, որու յորձանքները կ'տարան դէպ ի Ոսկեղջիւրը, փետուրի նման թեթև ակատները քշելով. գլխուս վրայ ոսկեգոյն երկին մը կ'փայլի և նշուլագեղ արև մը: Ձեմ ծծեր Լոնտօնի ածխային օդն, այլ նուրբ ու թարմ քամի մ'որ լանջս կ'աւելկոծէ. չեմ կանդնիր պաղ վանդակապատ մարմարի վրայ,

այլ օդին մէջ կ'սաւառնիմ և կարծեմ թէ լեռ, հովիտ, ծով ու արև իմս են այս իմ արևնակիս վրայ։

Կ'հարցընես հիմակ՝ ուր պիտի յանգի այս իմ բանահիւսական ուռուցիկ նկարագիրս։ Համբերէ, բարեկամ։ Արևելքի մէջ, արդէն գիտես, մարդ ակամայ բանաստեղծ կ'լինի և ստէպ առանց նպատակի, բայց գիտցիր նաև որ եթէ իմ Բեգասոս կաղ է, իմ մուսայս անշահ, դէթ խելքս դլուխս է և սիրտս իր տեղն անշարժ։ Ոչ Պայրն, ոչ Լամարթին եմ, որ քեզի այս բնութեան սքանչելիքը ոսկի ու փետուր գրչով գծեմ, այլ մասնաւորապէս կ'փափաքիմ յայտնել որ այս ամեն բնական գեղեցկութեանց մէջ բան մը կ'պակսէր, կին, ազատութիւն։ Մինչև յայսօր ասոնց շունչ տուողն մոլորաթև ծիծեռնակն կամ ջրին երեսը խայտացող արծաթափայլ ձկներն էին, կամ հեղասահ նաւակներն և մերթ ընդ մերթ Մարմարա ու Սև ծով ուղևորող առագաստաւոր նաւերը։ Իսկ տուն, դուռ, պատուհան, փեղկ ու վանդակ դոց կ'տեսնէի, և կարծէի թէ Թրքական ապարանքներն՝ ծաղկալի պարտէզներու մէջ, ոսկեփայլ բանտեր են, որ գեակներ կ'պարունակեն կամ խորհրդաւոր էակներ, որ արևէն ու լոյսէն խոյս տալով՝ խաւարի ու ստուերի մէջ կ'ապրին ու կ'մեռնին։

Արդէն իմացեր էի թէ ինչ է կանանոցի մեռելական կեանքն, արդէն ըսեր էին թէ ինչպէս անոր մէջ վրացի գեղանի ծաղիկներ կ'թոշնին չծլած, ինչ եղերական արկածներ կ'պատահին այն պատերուն մէջ, ուր սևամորթ երկոտանիներ սանձարձակ կ'տիրապետեն, ուր անմեղութիւնը կը հեծէ, սերը կ'հալի ու կ'մաշի անձայն, մոլութիւնը կ'ճարակի և ազատութիւնը կ'հառաչէ։ Հազիւ թէ երբեմն կառքերու վարագոյրներուն և սև եաշմաքներու պատուարին ետևէն կ'ընդհնշմարէի տաճիկ կամ քրիստոնեայ կանոջ սև հրապոյտ ակունքն և ձևաւոր սպիտակ կերպարանքը, որ բաւական էին ուրիշ թագուն շնորհներ ու դանձեր դուշակել տալ։

Ուստի, բարեկամ, կարող ես երևակայել թէ քանի մեծ եղաւ զարմանքս՝ երբ օրին մէկն՝ իմ տանս դէմ դիտեցի տան մը վանդակն որ վար իջեր էր կիսովին, և դէմք մ'որ՝ թէև ծովազոյն քօղով ծածկուած՝ իմ կողմս կ'նայէր։ Եթէ ոչ սիրտս՝ հետաքրքրութիւնս շարժեցաւ։ Իմ աչքս չէր զօրեր հեռուէն այդ քօղը թափանցել և այն էակին կերպարանքը նշմարել։ Ուստի ակնոցներ ու դիտակներ առի՝ առանց ցոյց տալու իմ շտապս ու եռանդս, սկսայ զաղտնի ու մանր ընել և գծել մտքիս մէջ անոր նկարն ու շարժմունքը։ Ի սկզբան կարծեցի թէ առ աչօք երևոյթ մ'է այս, սիրավառ երևակայութեանս ծնունդն, որ Լիլիին գոյնն ու շնորհը կ'ստանար, սակայն քիչ քիչ նկատեցի որ զղայուն ու շարժուն էակ մ'է, թերևս սիրազուրկ ու անզոսնեալ ծաղիկ մ'որ՝ կանանոցի մշձուկ մթնոլորտին մէջ լիովին թռուածքու վտանգէն ազատելու համար, արև ու օդ կ'փնտռէր, ժամերով երկինքն ու ծովը և երբեմն իմ արևնակս կ'նայէր ակնապիշ ու ատեն ատեն կ'հառաչէր։ Սովորաբար առաւոտ՝ նորել արևուն հետ կ'երևէր պատուհանն այդ սիրուն, զոլտրիկ գլուխն, և իրկունն՝ երբ արևը մարը մտնէր և իր ոսկեգոյն նշոյլներով կ'բեկբեկէր այս հովաշարժ կապոյտ քօղն ու փրփրուն ալիքները։ Այգուն՝ իր Ճակատը յստակ, ականջը վառվռուն էին և շրթունքը կ'ժպտէին, այնպէս որ կարծես թէ անուշ հրաղներ տեսած կ'արթննար և կ'յուսար, մինչդեռ իրկունն՝ երբ արևն՝ Գաղբդեղի բլուրներէն վար կ'իջնէր, չքնաղ էակին քօղէն աւելի թանձր ստուեր մ'անոր երեսին վրայ կ'թողուր և այնպէս կ'երևէր որ իր յոյսերն ծիրանեզոյն Ճառագայթներուն հետ կ'մարէին, միս օր վերստին ծագելու համար։

Բարեկամ, դեռ չեմ կարող Ճշդիւ նկարագրել քեզ այս հեռանկարը։ Ոտփայէլի մը վրձինն կամ Տակէրի մը լոյսն անգամ չպիտի կարենար ըմբռնել ու արտայայտել այս օծ դանման երևոյթին գոյները։ Թէև ինք նսեմուկ՝ շարունակ կը

շարժի ու կայլայլի դէմքը։ Երբեմն աչքունքը կ'սևնան, երբեմն կ'խնդան, վարդի պէս այտերը մերթ կ'վառին, մերթ կ'գունատին։ Մէյն մեայլ մը կ'իջնէ իր շնորհալի ճակտին վրայ և ապա յանկարծ կ'ցրուի ու կ'պարզուի։ Ուստի կ'հաւատայիմ որ փոթորիկ մը կայ այս նորածին հոգւոյն մէջ, որ հետզհետե կ'յուզուի ու կ'խաղաղի, անշուշտ պատճառ մը կայ այս էութեան մէջ որ կ'երկի ու կ'մրկի։

Բայց ո՞վ է այս օրիորդը կամ կինը, ո՞ր ազգին զաւակն է։ Տաճիկ, Ցոյն, Հայ է թէ Վրացի, չգիտեմ, բարեկամ։ Իրօք թշուառ է թէ դերասանուհի մ'որ ինձ ծուղակ կ'լարէ, չգիտեմ, բարեկամ. այս միայն դիտեմ որ կ'համակրիմ անոր վիճակին, և՝ եթէ ոչ սիրոյ՝ երախտագիտութեան զգացում մը կ'տածեմ անոր համար։ Վասն զի կ'տեսնեմ որ ինձ բաղդակից է, ինձի պէս թշուառ է սրտով, և թերևս ինձի պէս կ'ողբայ սիրական մ'որմէ հեռի կ'դտնուի, որ իրմէ սէրը կ'ծածկէ, որ զինք կ'թողու կամ կ'մատնէ և հետևապէս ինքն իր մէջ կ'հիւծի։ Թշուառներն իրարու լեզու կ'հասկընան և իրարու վրայ կ'կռթնին որ չկ'ինան։ Զեմ ուրանար որ նա ևս ուշադիր է իմ համակիր ընթացքիս, աւելի շատ կ'նայի իմ արևնակիս կողմն, իր աչքունքն որմէ երբեմն արտասր կ'հոսի, նուագ կ'սրբէ, և երբ դիտակով պատմի զինք կ'դիտեմ, կ'զգայ որ վարագուրին ետևն եմ, և կ'սկսի ծաղիկներուն հետ, որով լի են իր պատուհանին թագարները, խօսիլ, ծիծաղիլ։ Ըստ երևոյթին՝ շուշանն (Լիլի) է իր սիրական ծաղիկն, վասն զի միշտ ծոցին վրայ կ'երևի ձիւնի պէս սպիտակ, և իր սպիտակ վզին հետ կը մրցի անարատութեան կողմէ։

Ձիշտ անցեալ իրիկուն՝ երբ քեզի կ'գրէի, բարեկամ, այդ անծանօթ էակն ելաւ վերստին պատուհանն և կարծես թէ զիս կ'փնտռէր։ Ծալլեցի գիրս ու ես ալ պատշգամն ելայ։ Ամէն ի վեր կ'շարունակուի այս հետաւոր ու անմեղ տեսակցութիւնը, որ իմ մէկ օրական հաճոյքս դարձեր է։ Առաւօտ կ'արթննամ և իմ առաջին քաղէ լոյս այդ իմ անծանօթ դրացուհւոյս կ'ուղղեմ, իրիկունը տուն դառնալուս՝ անոր քաղէ էրկոտն կ'մաղթեմ։ Ո՞ր պիտի հասնի այս անմեղուն յարաբերութիւնը, յայտնի չէ։ Ո՛չ անոր ոչ լինելն իմանալու հետաքրքիր եմ և ոչ աւելի մօտաւոր տեսնելու։ Դու չես հաւատար անշուշտ այս անտարբերութեանս, և կ'դուշակեմ թէ ինչ սլաքներ սիրտ տեղաս դլեաւս։ Ի՞նչ փոյթ։ Այս է իմ Ճակատագիրս կ'ըսեմ, Տաճկին պէս, ու կ'անցնիմ։ Անծանօթին ծնունդ, անծանօթին մէջ կ'լողամ։

Անհամբեր կ'սպասեմ որ դէթ կենացս մէկ հանելուկը դուգտնելու օգնէիր ինձ և իմ էութիւնս պատռող սև վարագուրին մէկը պատռէիր։

ՆԱՄԱԿ ԱՂ

ԱՂՈՒՑ ՍՈՒ ՆԵԼՍՈՆ

Լանդըն . . .

Հա՛, հա՛, բարեկամ, նո՛ր լուր, նո՛ր արկած։ Կ'շնորհաւորեմ այդ նոր ասպարէզդ։ Անհոգ եղիր, պիտի բուժէ սիրտդ, քանի որ արևելեան անծանօթ էակ մը, օդային գեղեցկութիւն մը յաջողեր է ուշադրութիւնդ գրաւելու։ Բարի՛ նշան։ Նոր սիրային վէպ մը կ'սկսիս, շատ պարզ, չըսեմ պաղ ու անտարբեր ոճով մը, կ'չանաս շատ մը բաներու մէջ խեղդել նորածին զգացումդ, սակայն սրտիդ ջերմութիւնը մեզ մի առնիր մէջ կ'փայլի, կ'բորբոքի։ Անշուշտ թշուառ ես, մեծաւոր ես, և կ'հաճախէիր թշուառութեան

դու զգայուն ես, և երբեմն կ'ամաս կարեկցիդ, և ուրիշ զգացում մը չունիս, դեռ այսօր, բայց վաղը նայինք։ Երախտագիտութենէ դէպ ի սէր՝ ճամբան կարճ է, միայն կ'փափաքիմ որ այդ ճամբան փշալից չլինի . . . ։

Ասպետական օրերն անցան, բարեկամ, միայն արևելեան կամ արաբական դիւցերները կան, և կ'վախնամ որ այդ քու անուշ էակդ, վհուկ մը, իժ մը չլինի որ ծոցդ սպրդելով վերստին չթունաւորէ կեանքդ։ Բայց հիմակ անփորձ տղայ չես և խրատի պէտք չունիս։ Կ'ճանչես Արևմուտք՝ սէրն հաշիւ, պայման, հարստութիւն է և դուն ուրեք, Լիլիին սիրոյն պէս՝ անկեղծութիւն, հաստատամտութիւն, հաւատ։ Կ'տեսնես Արևելք, և գիտեմ արդեօք որ այդ տեղ սէրը, գժգոհ սէրը մոլեգնութիւն, ողբ, կոծ ու գաշոյն է, կուշտ սէրն մեր գետնախնձորներուն պէս թոյլ է որ սահ ի մաղուկ կրակի մէջ եփուած կ'ուտուի։ Գիտեմ արդեօք որ արևելեան ամենէ ձոխ, շռայլ ու շուայտ քաղաքը կ'դանուիս, ուր Կուպիտոն թևեր չունի այլ շղթաներ, նետեր չունի՝ այլ խեղդուկներ։ Ուխտ, երդում, հաւատարմութիւն մի փնտռեր այդ տեղ, այլ հնարք, յանդգնութիւն։ Սէրն այնքան մոլեգին է որքան վաղանցուկ, և գառնուկի ու կարապի պէս երևցող արարածներ երբեմն վագրներ ու անգղներ կ'դառնան . . . ։

Զգոյշ եղիր, նէլսօն, կ'երևի լինձ որ այդ տատրակդ թևեր չունի որ թռչի, ուստի հանգարտ, համեստ է։ Թեթեւս կ'սպասէ որ բուանին, և առ այժմ՝ իր սիրուն ու անմեղ ժպիտներով քեզ հրապուրելու կ'ձգնի։ Հրապուրուէ այլ որս մի լինիր, դիտէ՛ այլ մի նայիր, գգուէ՛ այլ մի սիրեր։ Կարելի է որ կ'սխալիմ, կարելի է որ տեղացի որս մը գտնելու անոյս՝ այդ անծանօթդ, թուրք կամ հայ, վրաց կամ յոյն կին, օտարականիդ կ'փափաքի կապուիլ կամ քեզի օր ցոյց տալ։ Դու անտարբեր կ'ձևանաս, աչք ունիս այլ ոչ սիրտ շնորհալի քօղաւոր էակիդ համար, բայց ո՞

դիտէ, վաղը գուցէ սիրտդ ալ վառի և անոր վրայ նշմարես այն ամեն ձիրքն ու շնորհքն որով ի քնէ օժտուած է Լիլլին և որոց վրայ երբեմն կ'զմայլէիր . . . ։

Ուրեմն շարունակէ վէպդ իրապէս, բարեկամ։ Միայն չես դժարիր, յուսամ, եթէ այս կողմէն ևս լուրեր տամ քեզի. չէ թէ քաղաքական, չէ թէ ընկերական լուրեր, որ այս նամակիս մէջ տեղ չունին, թէև մեր բոլոր էութեան, նոյն իսկ ընտանեկան կենաց վրայ կ'ներգործեն, այլ քու Հպարտ Լիլիիդ վրայ, քու խորհրդաւոր ֆինկի վրայ, ինչպէս որ խոստացեր էի ։

Կ'հաւատաս, բարեկամ, մինչդեռ անյայտ անձ մը փնտռելու վրայ էինք, ուրիշ մը, աւելի սիրական ու ընտիր անձ մը կորուսինք։ Ջով. նոյն իսկ Լիլլին, որ ոչ Լոնտօն կը պտնուի և ոչ Ռիչմընտ ուր ընտանեօքն ամառանոցը դացեր էր։ Մի զարմանար, աչքերդ խոշոր խոշոր մի բանար, մի ըսեր թէ իր նշանածը ՏԷՆտին առած փախած պիտի լինի։ Իր մեղքը կ'մտնես ու բան մը գուշակած չես լինիր։ Միայն Արևելք չէ տարօրինակ արկածներու աշխարհը, այս ովկիանոս նման քաղքին մէջ՝ երբեմն այնպիսի անակնկալ եղերներ, այնպիսի զարմանալի դիպուածներ կ'պատահին որ մեր ընկերական յոռի վիճակին, մեր անբնական օրինաց բնական հետևանքն են, և որ մարդկային երևակայութենէ վեր կ'համարուին։ Մտիկ ըրէ. Լիլլին չկայ, բայց ողջ է, Լիլլին հօրենական յարկին տակը չէ, բայց անտարակոյս Անկլիոյ մէջ է։ Բաւական ատենէ ի վեր լորտ Խոտհէմի աղղականներու շրջանին մէջ ձայն մը կ'պտըտէր, թէ պայմանաժամէն առաջ, որ մէկ տարի պիտի տևէր, Լիլլին պիտի կարգէն իր նշանածին հետ։ Վասն զի Լիլի օրէ օր իր դժկամակութիւնն երևան կ'հանէր, միշտ նիհար և հիւանդ էր, և եթէ գործը երկարէր կրնար ոչ միայն աղնուական դասուն բերանն այլ և օրագիրներուն մէջ գայթակղութեան նիւթ տալ իր պիտադրութեամբը։ Նւ արդէն գիտես որ սրբապղծութեան

չափ մեծ յանցանք է աղնուական օրիորդի մը ժողովրդեան զաւկի մը հետ, քեզի հետ սիրահարիլը, Թող Թէ կարգուիլը: Ուստի կ'որոշուի ողջակէզը փութացընել, փոյթ չէր Թէ պա-նուհետեւ այդ ըղձն դժբաղդ պիտի լինէր կամ մեռնէր: Լէ-տի Իսահէմ, որ՝ արդէն գիտես՝ խորամանկ ու փառամոլ պառաւ մ'է, կ'համաձայնի Լէտի Տէնտիի, տղուն մօրը հետ եւ իր աղջիկն առնելով դիւղը կ'երթայ, Ռիչմընտ, ուր կը գտնուի եւ խնամին: Իրաւ է որ դիւղ գնալու ժամանակը տա-կաւին հասած չէ, եւ լէտի Իսահէմ այս պարապային մէջ աղնուապետական աւանդութեան հակառակ կ'վարուէր, ա-ւանդութիւն, որ՝ ուրիշներուն պէս՝ նուիրական է մեր չէ-նէրուն աչքն, բայց նա պատրաստ պատճառ մ'ունէր: Սէ-զըրըն՝ որ Հնդկաստանէն գալով՝ այժմ կ'ճարակի Եւրոպա եւ արդէն Անգլիոյ այլ եւ այլ տեղեր կ'արշաւէ, ահ ու մահ Թողլով՝ բանաւոր փաստ մ'էր: Լէտի Իսահէմ խոյս կ'տայ հիւանդութեան երկիւղէն, Թէեւ հաւաստի եմ որ Լիլին լաւ ևս ունէր քօլէրայէն բռնուիլ մեռնիլ քան Թէ Պ. Տէնտիի հետ միանալ ու ապրիլ: Անտարակոյս Լիլին այս շարժման մէջ իրեն դէմ մօրը դաւը պիտեց եւ զայն ի դերև հանելու համար ճար մը մտածեց: Մեր վերջին խօսակցութեան մէջ պօբէ մը քաւոլան էրկար պայմանաւոր մ'է, ըսած էր: կ'երևի Թէ այն առեն որոշուած էր, և տեսնելով որ՝ այդ պայ-մանաժամը չլրացած՝ գաղտնի պառակ պիտի ընեն, միակ ճար փախուստը գտած է: Բայց ի՞նչպէս և ո՞ր փախաւ: Բոլոր Լոնտոնի խօսակցութեան նիւթն այս էր ամիս մ'առաջ, իսկ Տէնտի ամենուն ծաղրն ու ծանակը: Մինչև այսօր ձայն չհա-նեցի: Այս դէպքին ու Լիլիին վրայ աւելի ճիշտ ու եր-կար տեղեկութիւններ առնլէն ետև՝ կ'ուզէի գրել: Փախուս-տին պարագաներն իմացայ՝ նոյն իսկ Տէնտիի բերնէն, որ արկածին քարոզն է և աւջևն եղնողին կ'պատմէ:

— Բայց, դու քաջ որսորդ, ի՞նչպէս փախուցիր տատրա-կը, հարցուցի այդ ոսկեզօծ պարոնին:

— Պարոն, տատրակի հրացան չեն քաշեր, ինքնին իր բոյնը կ'գայ նա: Ամչկոտ ու վայրենի նշանածի խաղ, միայն պէտք էր գիս կանչէր որ միասին խոյս տայինք անտառներն, ինչպէս հին ատեն աղջիկ ու աղայ կ'ընէին:

— Երբ փախաւ, քովը չէիր,

— Ի՞նչպէս չէ: Ամեն բան պատրաստ էր. Լիլի հարսու-տան լաթերն հագեր էր, և սրտին ուրախութենէ երեսը շատ գեղեր էր: Արդէն ձեռք ձեռքի տուեր էինք: Երբեցը պի-տի կարդար պսակի աղօթքն, երբ յանկարծ ըլո՜ւխ ա՜ պէրա՜ մրմնջեց Լիլին ու վար ընկաւ: Թշուառականն ոչ գլուխ, ոչ սիրտ ունի եղեր պսակի, Թէև մայրը կ'ըսեր Թէ իմ վըր-դայ կ'խեւնայ ու սէրէն կ'մաշի աղջիկը: Աւին զինք մօտա-կայ սենեակը տարին. հարմնցուն մարեր էր . . .

— Զարմանալի՛ բան:

— Շատ զարմանալի:

— Ապա՞:

— կ'հարցընե՞ս, ասկա զինք չտեսայ:

— Պատճառ:

— Ի՞նչ գիտնամ, բժշկին հրամանն այս էր: Երբ տան երեցը՝ քիմիը կախած՝ Աւետարանը գոյեց գնաց, տան բժիշ-կը, տոքթօր Բէյն, եկաւ ու այլ և այլ դեղեր ապսպրեց: Դեղերէն մին ալ այս էր որ ես աղջկան աչքին չտեսնուիմ: կ'երևի Թէ սիրտը սաստիկ սէրէն կ'խաղար՝ քանի գիս տես-նէր:

— Վերջը:

— Վերջը՝ լէտի Իսահէմ իմացուց ինձ որ Լիլին պար-տաւոր էր շաբաթ մ'անկողնին մեռալ որպէս զի կազդուրի: Մէկ շաբաթն երկու երեք շաբաթ եղաւ և օրին մէկն իմաց տուին ինձ դրսէն որ նշանածս ոչ միայն ողջ առողջ է այլ և ծրարն ըրեր ու տունէն առեր քալեր է: Այս լսուրն ինձ տուողը կ'ծիծաղէր, ես ալ սկսայ ծիծաղիլ և կատակ կար-ծեցի: Եաքէն լէտի Իսահէմ խնդիրը պարզեց ու յայտնեց

լինձ թէ՝ քժշկին խորհրդով աղջիկը Պրայթն տարուեր է՝ որպէս զի ծովու օդ ծծէ, և թէ մէկ երկու շաբաթէն պիտի դառնայ ու հարսնիքը կատարուի։

— Եւ կ'հաւատաս, Պարոն Տէնսի։ Արդեօք սատկեցիր գործը. արդեօք խաղ մը չես նշմարեր այս գարձուածքին մէջ և չես հասկընար աղջկան հիւանդութեան և փախուստին պատճառը։

— Հոգս էր հատեր որ այդպիսի բաներ պիտի մտածէի։ Աղջիկն ուր որ լինի, աշխարհիս ծայրն ալ երթայ գարձեալ իմն է։ Իր մատնին ունիմ և կէս մը պսակուած կը սեպուիմ։ Յայտնի է որ սիրոյ խենդութիւնն ու վայրենութիւն ունի։ Քիչ քիչ պիտի ընտելանայ և ջրի պիտի դայ անշուշտ։ Սիրոյ մէջ այսպիսի արկածներ կ'պատահին։ Ասպետական երևոյթ մը կ'առնու խնդիրն։ Թշուառական, եթէ փախչելու միտք ունէր, թող լինի ըսեր, հետը կ'փախչէի, ձիով, նաւով, օդապարիկով, ինչպէս որ կամէր...։

— Օգային սեր, հէ, Պարոն Տէնսի։

— Ճիշտ այդպէս։

Եւ Պ. Տէնսի սկսաւ քահ քահ խնդալ ու ձեռքի յուպը ուժգին շարժել մէկ ոսկին հետ։ Յետոյ յանկարծ ըսաւ.

— Աղէկ ըսիր. երթամ Պրայթն և նշանածս առնեմ փախչիմ։

— Կ'ղմայլիմ հնարագիտութեանդ վրայ, Պարոն Տէնսի, գնա, ժամանակ մի՛ անցըներ։ Երկար խօսելու ատեն չէ պողպին մէջ, շուտ գնա, երջանիկ մարդ։

— Անտարակոյս, ըսաւ, ձեռքս սեղմեց ու հեռացաւ։

Բայց, նէլսըն, այսչափ հարևանցի տեղեկութիւն բաւական չէր այս պաղտնիքը լուծելու։ Տեսայ որ Պ. Տէնսի ոչ միայն լինքլինքը խաբել կ'ուզէր այլ և խաբուած էր և լեռի խոհէմին խաղալիկը դարձեր էր։ Այս կնկան այցելել անպատեհ սեպեցի, և թերևս կասկածները ունի որ այս փախուստն իմ գործս էր, թէև ստոյգ է որ մէկ քանի անդամ մտքէս անցաւ և քեզի ևս դրեցի որ աղջիկն անոր ձանկէն ազատելու համար առնեմ փախչիմ ու քեզի ղրկեմ։ Իսկ լորտ Խոհէմը տեսնել աւելորդ էր, քանի որ իր կնկանը փողն է և անոր փչած ձայնը կ'հանէ, իրեն յատուկ կարծիք ու կշիռ չունենալով իր տան մէջ։ Այս վարանման մէջ էի՝ երբ միտքս կտրուկ միջոց մ'ընկաւ։ Այս էր բարեկամի մը յանձնարարութեամբ տոքթօր Բէյնը տեսնել, և եթէ հնար էր, անոր բերնէն իմանալ ձշմարտութիւնը։ Այս յոյսս պարապ չելաւ։

Յատուկ օր մը՝ յանձնարական գրով տոքթօր Բէյնի ներկայացայ։ Իմ կարծածիս կամ կասկածիս հակառակ ազնուացեալ, ծանրագլուխ ծերունի մը գտայ՝ գրեթէ վաթսուն տարեկան։ Անշուք և կոկիկ տուն մը կ'բնակէր ընդարձակ պարտէզի մը մէջ, Ռիչմընտի մօտ։ Կ'լսէին թէ իր արուեստին մանաւանդ մարդկային տկարութեանց հմուտ ու ներողամիտ մարդ մ'է, որ իր բարոյական ազդեցութեամբ և խնամօք աւելի կ'բուժէ իր հիւանդներն քան թէ դեղերով, որոց վրայ հաւատ չունի և զորս միայն իրեն ամաչիչ կ'գործածէ։

Իր տան պարտէզը կ'պտըտեր Պ. Բէյն, որ զիս սիրով բարևեց ու ժպտելով ըսաւ.

— Արդէն անունդ դիտէի. մտերիմ բարեկամի մը յանձնարարութիւնը նոր իրաւունք մը կ'տայ քեզ իմ սրտագին ընդունելութեան։ Ուրեմն բարի եկար։ Միայն պիտի գիտնաս որ պարտէզիս մէջ բժիշկ չեմ։ Կ'ուզես ներս մտնել, պարոն։

— Ո՛չ, հիւանդ չեմ, բարեկամ, այլ եկայ ուրիշ հիւանդի մը վրայ տեղեկութիւն առնելու, եթէ անխոհեմութիւն չես համարիր։

— Ո՞ր հիւանդին։ Ես աւելի թշուառներ ունիմ ձեռքս քան հիւանդներ։

— Իրաք խօսքս թշուառ օրիորդի մը վրայ է, որ հօրը առնէն խոյս տուեր է։

— Ըսես բանտէն, որպէս զի առողջութիւնը դտնէ։ Բայց, Պարոն Վռւտ, ինչ իրաւամբ կ'ընես այդ փափուկ հարցումը։ Գիտեմ որ օրիորդ Լիլլին ծանօթ է քեզ, սակայն մինչև որ ասանձան։ Անշուշտ իբրև աչխարհի մարդ՝ պիտի գիտնաս որ բժիշկը կերպ մը խոստովանահայր մ'է որ կ'պարտաւորի շատ գաղտնիքներ իր ծոցը պահել։»

Այնատեն յայտնեցի Պ. Բէյնի թէ ինչ յարաբերութիւն ունիմ օրիորդ Խոտհէմի հետ՝ իբրև իր տան և քու բարեկամդ, թէ ինչպէս ձեր սիրոյն մէջ մտած եմ՝ իբրև բարեխօս, և թէ որչափ հետաքրքիր եմ իմանալու անոր արդի վիճակն ու նպատակը։

Պ. Բէյն ուշադիր մտիկ ընելէն ետև՝ պահ մը մտածեց, և ապա յարեց.

— Կ'նայիմ որ դու դործին բաւական տեղեակ ես։ Այս պարագային մէջ աւելի լաւ բժիշկ մը կրնաս լինիլ օրիորդ Խոտհէմի մօտ քան զիս։ Թէև իբրև հայր կ'նկատէ նա զիս, թէև իր խորհրդակիցն եմ, քանի որ իր տան մէջ սիրտն հասկըցող չկայ, բայց մինչև ցայսօր չէ յայտնած ինձ այդ յարաբերութիւնդ, և այս ալ, չըսեմ իր հպարտութեան, իր ազնուասրտութեան մէկ նոր ապացոյցն է։ Միշտ բաղդէն կ'գանգատի, բայց չըսած է ինձ երբեք թէ ով է այդ բաղդին բնապատճառը և ինչ միջոց կար այդ պատճառը բառնալու։ Ահա հիմակ կ'նշմարեմ միջոցն ու դեղը։ Չեմ ըսեր որ դու առնես այդ օրիորդը . . .

— Կարգուած եմ. . .

— Այլ պէտք է որ դու ինձ օգնես որ դարման մը դըտնենք։ Իմ դիտութիւնս ստակ մը չարժեր այսպիսի բարոյական ցաւերու դէմ, որոց պատճառն անխոհեմ ու փառամոլ ծնողք լինելէն զատ՝ չեն ըմբռներ ծանրութիւնը։ Ուրեմն այժմ դեղ մը գտայ. հեռացընել Պ. Տէնհին, որ յիմար մ'է, և չարաշուք հարսնիքին օրն երկարաձգել տալ, օրիորդն՝ որ մօրը ձեռքը կ'տառապէր, ուրիշ տեղ փոխադրել

տալով գաղտնապէս։ Իմ մատս կայ այս դաւին մէջ։ Միթէ յանցանք է։ Բժիշկ մը՝ ձչմարիտ բժիշկ մը միայն մարմնոյ ցաւերը չբուժեր այլ սրտի և հոդւոյ վիշտերն, որ շատ անդամ անտես կ'առնուին կամ կրօնաւորներու ձեռօք աւելի կ'ծանրանան, թէև շատ անդամ ֆիզիքական չարեաց շարժառիթն են։ Բժիշկ մը՝ երբ մայրական սիրոյ, մարդասիրութեան ըրած կոչումն ու յորդորը չպզդեր, կ'պարտաւորի ընկերութեան ու սուտ պարկեշտութեան առջև ապօրինաւոր ու անվայել, այլ մարդկութեան ու բանականութեան առջև արդարանալի ընթացք մը բռնել և իր հիւանդն անխուսելի մահուանէ ազատել, քանի որ բոլորովին անտէր ու անօդնական մնացած էր, և ծոցն ընկած մարդու մը պէս՝ ինչպէս կ'ըսեն, օձին անդամ պիտի փաթթուէր՝ ազատում դտնելու համար։ Այս օձն ես եղայ, բայց Եւան չխաբեցի այլ Լէտի Խոտհէմի դէմքով սատանան, որ մոլորած է և աղջկան ողորմելի վիճակին անզդայ կ'մնայ։

«Սակայն, Պարոն Վռւտ, պէտք է խոստովանիլ որ քու բարեկամդ ալ, ով որ է, եթէ ոչ անզդամ, անխոհեմ ու գոռոզ մարդ մը կ'երևի։ Ինչպէս կ'թողու այդ հրեշտակի նման օրիորդն ու Արևելք կ'դիմէ, դեռ չհասկըցայ։ Եթէ մայրն է պատճառ, միթէ չունէր արիութիւն այդ պատճառը ջնջելու։

— Բայց, աղնիւ տոքթօր, այն ալ կ'տառապի օրիորդին սիրով, դժբաղդ է և աւելի պարզ ու յաչող օրերու կ'սպասէ որ վերադառնայ։

— Ըսես որ երկու անփորձ ու մանկային սիրտեր զիրար գտեր են և ստուերէ մը կ'դողան, երևակայութեան հնարած վիշտերու ճարակ կ'ծնան, և իբրև մարդ չեն աշխատիր նպատակի մը հասնիլ, որ յուսամ թէ անկեղծ է, քանի որ հիմն անկեղծ ու հաստատ կ'թուի։

— Այդպէս է, Պարոն Բէյն։ Բայց ձաքը։ Արդեօք չեմ կարող իմանալ թէ հիմակ ուր կ'գտնուի օրիորդ Խոտհէմ։

— Խնդրեմ, ներէ որ այդ դաղտնիքը ինձի պահեմ. դեռ յայտնելու ժամը հասած չէ։ Այսչափ միայն կրնամ ըսել ձեզի թէ օրիորդ Խտհէմ, ինչպէս որ կ'կարծուի, Պրայթն չէ, այլ. . . Ուայթ կղզին։

— Ուրեմն, ինչ կերպով պիտի օդնեմ քեզ, Պարոն Բէյն, քանի որ խնդիրը մութ կ'մնայ և իմ վրայ կատարեալ վստահութիւն չունիս։

— Ունիմ վստահութիւն. ընտանեկան պատիւը կ'ստիպէ զիս այսպէս վարուելու։ Բայց երկու բան կայ ընելիք. կամ քու բարեկամդ Նելսօնը յորդորել որ դայ իմ հսկողութեանս ներքև դտնուած աւանդն առնու և կամ Պ. Տէնտին բռնադատել որ օրիորդէն հրաժարի։ Առաջին դործը քեզի կը պատկանի, Պարոն Վուտ, եթէ յաջղիս, միւն ինքնին կ'լուծուի, ապա թէ ոչ ինձ կ'մնայ։ Ասկէ յայտնի է որ, եթէ ծնողքն անդամ դիջանին, օրիորդն անոնց մօտ չպիտի դառնայ. շատ հպարտ է։ Ծովը, կրակը կ'նետուի, մօրը դիրկը չնետուիր։ Ուստի դործէ, Պարոն Վուտ։ Վայել է որ բարեկամդ երկտող դիր մը դրէ օրիորդին ու առաջ սիրտն առնու։ Ուստի դործէ և բանակցութեանդ արդիւնքն ինձ իմացուր։»

Այսպէս իրարմէ բաժնուեցանք։ Բառ մը չեմ աւելցներ իմ կողմէ այս խօսակցութեան վրայ։ Կարդա դիրս, քննէ, կշռէ ու որոշումդ ըրէ։ Կ'տեսնես որ բոլոր դուշակածներս ելան։ Սովորական կարդի աղջիկ մը չէ Էլիզն։ Միշտ նոյնն է, հաւատարիմ իր սրտին, որու կ'ղօհէ հանդիստ, ընկերական վիճակ և կ'դիմագրաւէ հասարակաց կարծիք ու ամէն շինծու պատշաճութիւն և պատիւ։ Իրեն համար պատիւը մէկ անդամ սիրելն է, վասն զի մէկ սիրտ ունի։ Արդեօք դեռ կ'վարանի՞ս, դեռ կասկածներ ունի՞ս։ Պատասխանդ պիտի յայտնէ ամէն բան։

ՆԱՄԱԿ Ա'Դ

ՆԵԼՍՕՆ Ա.Ո. ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Զարմանալի բան մը կ'պատեմ այս տեղ։ Մէն մի հասարակութիւն իր յատուկ վարչային իշխանութիւնն ունի, որու պլտխը կրօնապետան է, կայսերական հրովարտակով հաստատուած, հրովարտակ որ բաւական ընդարձակ արտօնութիւններ կ'շնորհէ։ Կրօնապետան ոչ միայն հաւատոյ խնդիրներու մասին իրաւասութիւն ունի, այլ և քաղաքային, այնպէս որ թէ աղդային հաստատութիւնները, եկեղեցի, վանք, դպրոց, հիւանդանոց, ուղղակի և անուղղակի կերպով կ'մասակարարէ, թէ սերութեան և իր ժողովրդեան մէջ եղած յարաբերութեանց միջնորդն է ու պատասխանատու. հետևապէս երկու դէմք ունի, կրօնական ու քաղաքական, դրեթէ տեղւոյն տիրական կառավարութեան պատկերը։ Վասն զի Սուլթանը թէ մարգարէին փոխանորդն է և թէ Օսմանի սուրին ժառանգորդը։ Ասկէ կ'հետևի որ կրօնապետները սեսակ մը գեսպաններ են որ իրենց հօտին մարմինն ու հոգին խնամելու պաշտօն ունին։ Այսպիսի կազմակերպութեան երևոյթ մը չտեսնուիր մեր կողմերը, վասն զի հանդուրժելի չէ սերութեան մը մէջ ուրիշ իշխանութիւն մը քան այն որ մերթ երկնային իրաւամբ մերթ ժողովրդեան ընտրանօք կ'կառավարէ։ Այս երևոյթին բնապատճառը սիրող ազդին ոչ այնքան խղճի աղատութեան սկզբունքն է, որ աւելի լուսամիտ աղդերու մէջ անգամ մեր օրերն երևան ելաւ, ոչ ինքնավարութեան սէրն է որքան

Քուրանն, որ չէ կարող միջամտել ու վճիռ տալ օտար գաւանանքի վերաբերող խնդիրներու մասին, ինչպէս նաև այն քաղաքականութիւնն՝ որ հին սուլթաններու դավելի բաժինն էր, երկրին զարգացման համար՝ կարելի եղածին չափ ոչ մահմէտական տարրները շահիլ կրօնական թոյլտուութեամբ և զինուորական գործողութիւններն մահմէտականին վերապահել: Հետեւապէս պետական կրօն մը չկայ, այլ կրօններ որ ազատօրէն կ'շարժին իրենց շրջանին մէջ, բաւական է որ զիրար չնախատեն և անկարգութեան առիթ չլինին: Օսմանեան կառավարութեան կողմէ այս թոյլտուութիւնն, ինչ որ լինի շարժառիթը, կրնայ իբրև գաս ծառայել աւելի լուսաւորեալ տէրութեանց որ պաշտօնական կրօնը կ'պաշտպանեն, կ'կերակրեն, իրենց զօրավիգ կ'կոչեն, և շատ տեղ յայտնապէս և տեղ տեղ գաղտնի բոլոր միւս կրօններն ու աղանդները կ'հալածեն կամ կ'բռնաբարեն: Պօլիս մզկիթին մօտ եկեղեցին, ժողովարանին մօտ պիտակը կրնան կանգնել, և մինչդեռ իմամը պնաքին վրայ կ'աղօթէ, ժամկոչը կոչնակը կրնայ հնչեցընել, բողոքականն իր քարոզը շարունակել և ռաբբին սաղմոս երգել: Նոյն իսկ Անկլիոյ մէջ կրօնի աղատութիւնն այս ընդարձակ իմաստով գործնապէս չերեւիր: Մանաւանդ արդի Սուլթանը (Մահմուտ Բ) թէև դժգոհելու շատ իրաւունքներ ունի Յոյներէն, որ՝ անկախութիւն ձեռք ձգելով՝ Թուրքիոյ մէկ մասն առին, Ռուսներէն՝ որ մինչև Ադրիանուպոլիս ու Կարին հասան, այլ և այլ քրիստոնեայ հասարակութիւններէ՝ որ քաղաքական անձուկներ ունին, բոլոր եւրոպական տէրութիւններէ՝ որ իր երկրին մէջ ծագած ապստամբական շարժումները քաջալերեցին, սակայն կ'ուզէ որ ամեն կրօն ազատ դաւանուի, և՝ եթէ ոչ օրինաց կատարեալ հաւասարութիւն, կրօնական թոյլտուութիւն հաստատուի:

Հայք բացառութիւն մը չեն այս մասին: Իրենց Պատրիարքը տեսակ մը քաղաքական իշխան է որ վերհսկեցին առ-

ջև մեծ յարգ ու պատիւ ունի, որ ազգային ներքին գործերը բացարձակապէս, կամ մէկ քանի համակամ ամիրաներու խորհրդով կ'տնօրինէ, որ ամուսնական, առևտրական դատեր իսկ կ'տեսնէ, դաւառներն իրեն ստորակարգեալ առաջնորդներու ձեռօք կ'կառավարէ, և մինչև անգամ ոստիկանութեան գործ կ'տեսնէ, յանցաւոր դատած մարդիկ կ'բանտէ, աքսոր կ'ղրկէ, Բ. Դուռէն հրաման առնելով: Միայն գաւանական կենցաղ խնդիրներու համար իր մեծին կը դիմէ, որ է՝ քանի մը տարի առաջ Պարսից հիմակ Ռուսաց ներքև դանուող ԷջմիածնայԿաթողիկոսը: Ի հարկէ այսպիսի ինքնագլուխ իշխանութիւն մը զեղծումներ ունի, բայց իմ միտքս զանոնք քննել չէ այլ տաճկական իշխանութեան այս նորանշան դրութիւնը մեկնել: Այսպիսի մեծ արտօնութիւն մը վայելող ժողովուրդ մը կրնայ շուտով քնքնավարութեան հասնիլ, որու քիչ մը հակամէտ է Հայը, քանի որ կրօնական և ազգային գործերու, մանաւանդ կրթութեան ուղղութիւնն իր ձեռքն է և իր ներկայ ու ապագայ շահուց համեմատ կարող է ուսմանց ծրագիրներ յօրինել, որոց վերայ տէրութիւնն հետազնին ակնարկ մը նետելու ոչ ժամանակ ունի և ոչ տրամադրութիւն: Կարող ես կշռել այս անլուր արտօնութեան առաւելութիւնն՝ եթէ բաղդատես այլևայլ տէրութեանց մանրաքնին հսկողութիւնն գպրոցներու ուսումնական ու բարոյական վիճակին վերայ: Բայց չեմ տեսներ որ Հայն տպիտաբար իրեն արուած արտօնութենէն մեծ օգուտ քաղած լինի: Ընդ հակառակն՝ այս մասին ալ իր տիրապետներուն կ'հետևի: Գաստիարակութեան կենսական խնդիրն անտես կ'առնէ, կ'անկիսէ իր իրաւունքն ուսյառաջադիմութեան օրէնքն, նոյնպէս սահմանադրական եկեղեցին, որու սակայն մեծ արժէք կ'տայ՝ չէ թէ արդեամբ այլ խօսքով:

Եւ իրօք՝ կ'նայիմ որ՝ ինչպէս Թրքաց մէջ Հայոց մէջ ալ մեծին, Հարուստին (և Հարուստները բաւական շատուոր

են) զօրաւորին բանը գործը տիրապետել է, իսկ ստորին ժողովրդեան փափաքը անտրտունջ հպատակիլ: Դէթ այս հպատակութեան վարձքն սահնար, ամենևին: Որչափ դլուխ ծռէ այնչափ կ'ձգմուի այդ գլուխը: Քաղաքական ազատութեան նշոյլը չկայ այս տեղ և ոչ իսկ քաղաքային ու անհատական: «Մեծ ձուկը պզտիկը կ'կլլէ» առածն այս տեղ իր ամբողջ իմաստով կ'գործածուի: Պատրիարքն ամիրան կ'ձգմէ՝ եթէ սա հզօր փաշայի մը տուած չէ իր կռնակը, ամիրան՝ վարդապետը, վարդապետը՝ քահանայն, քահանայն՝ սիրացուն, սիրացուն՝ ժամկոչը, ամենքն ալ խեղճ ժողովուրդը կ'ճզմեն, որ այս բռնական դրութիւնը շատ բնական կ'դտնէ, և երբ պաշտօնական ու անպաշտօն հարստահարութեանց չտոկալով՝ թեթև ձիկ մը հանէ, իսկոյն անոր աչքին կ'դուրընեն դժոխքն ու Թուրքի լախտն ու լուութեան կ'դատապարտեն, այնպէս որ կարծես թէ այս տեղ ու գաւառները Հայք յետին ծայր խաղաղ, անդորր ու հանգիստ կեանք մը կ'վայելեն, թէև ներքուստ կ'տառապին, կ'մաշին, կ'լան և իրենց արտսուքը լռելեայն կուլ կ'տան:

Բնական է որ այսպիսի թշուառ ժողովուրդ մը՝ ընտանեկան յարկին տակ և եկեղեցւոյ դրան վրայ միաբերանութիւն փնտռէ, ամեն կրթութեան ու զարգացման դուռ գոց դտնելով: Հետևապէս Հայոց ընտանեկան պարզութիւնը կ'գովուի, և ի բնէ անոր այդ ընտանեկան ազատութեան շրջանէն դուրս չեն ելած: Իրենց անհատական բարեմասնութիւնները անոր մէջ կ'երևին, կ'ծաղկին իրօք, ծնողական սէր, պարկեշտութիւն, ամուսնական հաւատարմութիւն, աշխատասիրութիւն ու չարքաշութիւն: Սակայն քիչ քիչ այս գովելի յատկութիւններն ալ կ'պղտորին: Ըտարուտի սարրներ, պերճասիրութիւն, շռայլութիւն կ'մանեն անոնց մէջ, և սիտի պատահի, ինչ որ տգէտ ու անկիրթ ժողովրդեան մը միշտ կ'պատահի՝ երբ յանկարծ՝ պարագայից բերմամբ՝ ընտանեկան շրջանէն դուրս կ'նետուի, այսինքն ընկերական

կենաց փայլուն այլ վատ կողմերը, քաղաքակրթութեան մրուրը կ'ընդունի, անզիտելով անոր կենսատու հիմնական օդուտներն, որոց աղբիւրը մտաւոր մշակութիւնն է:

Ձեմ ուզեր, բարեկամ, աւելի խօսիլ այսօր: Պատշգամն ելնելու ժամը հասաւ: Կ'թողում քեզ այս պատկերն աւարտել մտօք, անոր էական գծերն աչքիդ առջև ունենալով: Այս է, եկեղեցի մ'որ՝ թէև հայութեան կապ կ'համարուի, իրօք իր նշանակութիւնը կորուսած է արդի պաշտօնէից տգիտութեան շնորհիւ, և օրէ օր արևմտեան եկեղեցւոյ սկըզբունքն ու զեղծումները կ'ընդունի, ժողովրդէն կ'բաժնուի, նուիրապետական դրութեան կ'հետևի, վճիռներ կ'արձակէ ու կ'բռնադատէ, կ'աբսորէ, կ'հալածէ և միայն սահմանադրական անունը կ'պահէ. ազգային իշխանութիւն մ'որ տիրող ցեղին ձկտումներն ունի, բռնանալ, և ոչ միայն ժողովրդեան մտաւոր ու բարոյական պիտոյքը չհոգալ՝ իր վայելած անկին արտօնութեամբն, այլ և օտարին հարստահարութեանց ձեռնտու և ինքնին հարստահարիչ կ'գտնուի. հարուստներ՝ որ լոկ ձոխ ասլարաններ, խնջոյքներ, պերճանք կ'սիրեն և փաշաներու առջև կ'սողան, սողալով խաբելու ու դրամ կորզելու համար. ուսումնականներ որ անտարբեր են ազգին կամ օտարացած. ժողովուրդ մ'որ շատ դոհ է եթէ ուտելու հոգ դտնէ, և չկասկածիր իսկ որ մտաւոր հացի ալ պէտք ունի որպէս զի դտնէ միսն ալ որ օր օրի կ'նուաղի:

ՆԱՄԱՆ ԼԻ

ՆԵԼՍՕՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Վէմ կ'յօրինես, բարեկամ, թէ ոչ ճշմարիտ իրողութիւն կ'պատմես: Ես քանի միամիտ, դժբաղդ և անհոգ եմ: Այդ տեղ տարօրինակ բաներ կ'պատահին և ես անդանօղիկ հետ կ'զբաղիմ կամ Հայերու վրայ փիլիսոփայելու կ'երթեմ: Նամակիդ մտքէս չանցած բաներ կ'իմանամ: Տրտմիր թէ հերճուիմ, չդիտեմ: Իմ կեանքս, իմ սէրս ասպետական ձև մը կ'առնու: Ի՞նչ կ'ըսես, սիրելի Վուտ: Իրաւ Լիլին աներևոյթ եղեր է, Լիլի վեհերոտ, տնասէր, հլու ու հպարտ աղջիկը, յանդգներ է տունէն խոյս տալ: Հաւատալի՞ է: Բայց ո՞ւր է: Ամեն բան մանր կ'պատմես և կարևորը մոթ կ'թողուս, դիտմամբ է: Արդեօք գոյժ մը վարագուրել կ'ուզես: Մէկ կողմէ կ'յորդորես զիս զբօսնուլ, սիրոս բուժել, անդանօղիկ հետ ատեն անցընել, միւս կողմէ՝ աչքդ լոյս, Լիլին քու սիրոյդ համար տոքթօր Բէյնի ձեռօք մօրը ձեռքէն փախեր է և քեզի կ'սպասէ կ'ըսես: Բայց ո՞վ է այդ տոքթօր Բէյն: Միթէ դու ալ դաւի մը խաղալիկ չես, թէ ոչ զիս կ'հեգնես ու կ'դաւես: Տխուր կ'հնչէ այդ բժշկին անունն իմ ականջիս, մութ ու շփոթ կ'երևի պատմութիւնդ աչքիս: Կամ քեզ կ'խաբեն կամ ուրիշներուն հետ խօսքը մէկ ըրած էք զիս խաբելու: Ի՞նչ որ կ'ուզես անուանէ զիս. կասկածոտ, անհեթեթ, չիմար . . . չեմ կարող համոզուիլ գրոյդ: Քանի զայն կարդամ երևակայութիւնս կ'բռնկի, աչքս կ'սևնայ. սուգ, քահանայ, մեռել, գագաղ կ'նշմարեմ չորս դիս, կամ դահիճներ որ սիրտս իմէմ կ'քաղեն կ'տանին որ գայն օսլանեն . . . կ'զառանցեմ թերևս: Բայց վ.ուտ՝ խելքս չառներ բնաւ որ այնպէս փափուկ օրիորդ մը, այնպէս խստութեամբ պահուած թուչուն մը կարող լինի թևերը բանալ ու թռիլ, և որու խորհրդով ու օգնութեամբ, օսար բժշ ի մը, անծանօթի մը, այն որ մարդու առջև կ'կարմրէր, բարեկամի առջև կ'թոթովէր, սիրողին առջև կ'դողդողար առօթահար: Նենգ, սատթիճն կայ այդ դէպքին մէջ. դժբաղդութիւն մը կայ անոր խորը: Չեմ կարող երևակայել որ Լիլի իմ սիրոյս համար այդպիսի յանդուգն քայլ ը՛առած լինի, այդ ինձի համար երջանկութիւն մ՛է, որու յուսալն անգամ մեծամտութիւն, մեղք կ'համարիմ ես ա՛ք բաղդս:

Հանէ զիս այս անտանելի խաւարէն, բարեկամ: Շարունակ անդունդէ անդունդ կ'գլորիմ և կ'զարմանամ որ տակաւին կ'շնչեմ, դեռ կ'ապրիմ. . . :

ՆԱՄԱՆ ԼԶ

ՎՈՒՏ ԱՒ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն . . .

Բարեկամ, կատակ կ'ընես թէ ոչ մոլորեր ես: Գիրդ անհասկանալի է ինձ: Այնպէս կ'երևի որ պիտի գոլամ սիրոյդ մէջ մտնելուս: Ի՞նչ դեր է իմս չգիտեմ: Ոամական խօսք մը կայ. «Էրիկ կնկան պործին մէջ մի՛ մտներ: — Ես ալ կ'ըսեմ. «Սիրող ու սիրուհի մէջ երրորդ անձ մը միուշ մ՛է:» Քիչ քիչ ես այդ փուշը կ'դառնամ, թէև բա-

ըեկամդ լինիմ: Իմ խօսքս հակասական, տուած լուրերս անհաւատալի, զիս ուրիշին խաղալիկ ու դիւրահաւան կը գտնես, շատ լաւ. բայց ներէ ինձ ըսել, որ ես ալ քեզ բոլորովին անհետեւեր կ'գտնեմ: Հիմակ կասկած, վաղը թերևս նախանձ զգաս իմ վրայ: Եթէ իրօք իմ կողմէ թեթեւութիւն մը կայ՝ ընկած փոսէդ քեզ հանելու ջանքս է: Խիստ կ'խօսիմ, Նելսօն, վասն զի շատ անիրաւ ես և իմ անկեղծութեանս վրայ կ'տարակուսիս: Ի՞նչ ըսել կ'ուզես: Մինէ իրաւ կարծես թէ վէպ կամ զաւէշտ կ'շինեմ, մինէ կ'երևակայես թէ ապուշ եմ: Իմ նկարագիրս շատ պարզ էր և իրողութիւնը ձշդիւ կ'ներկայէր: Եթէ դու գրածիդ կ'հաւատաս, կ'երաղես, Եթէ պատրուակ մը կ'փնտռես Լիլիէն քաշուելու, ազատ ես, միայն բացէ ի բաց խօսիր. Եթէ ինքնասիրութիւնդ ու պատուոյդ կ'ուզես այդ վարմունքիդ պատճառը, ինչպէս որ կ'տարակուսիս արդէն, կ'նշանակէ որ սէր չունիս: Լիլին քեզի կ'մտածեցայ. քեզի համար հայր ու մայր, աշխարհ կ'թողու, և դու կ'հեռանաս, Թերևս ուրիշ էակի մը մտածելու համար: Ուրեմն կեղծ էին լացդ ու ողբդ: Դառն վիճակիդ հաւատալով՝ կ'ուզէի ափոփել քեզ, և հիմակ կ'տեսնեմ որ ուրիշ ձշմարտապէս Թշուառ էակ մը միխիթարութեան արժանի է. կարծելով Թէ առանց բուռն միջոցի կարելի չպիտի լինի պահել սէրդ, միշտ սիրուհւոյդ հաստատ բնաւորութեան վրայ ղարմանքս յայտնելով, հիմակ կ'նայիմ որ դու սիրողներու մէջ առնէ վէպն ու անհաստատ ես: Առեն մը չէիր կարծեր որ նա քեզ կ'սիրէ և ապացոյց կ'պահանջէիր, հիմակ ղրալի ապացոյց մը կ'ընծայէ քեզ իր անձին հետ և դու կ'նեղնես ապացոյցն անհիմն կ'հրաժարակես և անձը կ'որոնես: Ուրեմն ի՞նչ բանի կ'հաւատաս, դու որ ոչ բարեկամութեան, ոչ սիրոյ, ոչ առաքինութեան վրայ վստահութիւն ունիս: Ես որ քեզմէ աւելի սկեպտիկեան ու Թերահաւատ էի կնոջին խոստումներու և նոյն իսկ առաքինութեան մասին, զոր պարա-

գաներու պատրաստ, և ոչ սրտագին նշաններու ինքնաճշմարտութեամբ կ'համարէի, հիմակ կ'սկսիմ հաւատալ, դու որ կնոջ միայն լաւ կողմերը գիտեիր ու գովելու արժանի էիր, կ'սկսես անոնց վրայ Թերահաւատիլ:

Այս բաւական չէ, տղթիօր Բէյնի դէմ անիրաւ ես, Թերևս չես հաւատար որ ծերունի մարդ մ'է, Թերևս կ'տարակուսես որ Լիլի ապահով տեղ մը լինի, Թերևս Լիլիին փախուստը պատուոյդ կ'դպի, պզտիկութիւն կ'սեպես, և կ'ուզէիր որ ծնողքը ձեռքէն բռնեն և զայն քեզի յանձնեն: Աշխարհ մէկ քով գար, այդպիսի բան մը չպիտի ընէր Լէսթի Խաչհէմ, և պատճառը քեզի գրած եմ արդէն:

Բայց ձիշդը կ'ուզէս, Նելսօն, ես միամիտ, Լիլի համբակ է: Ես պարտաւոր էի շարունակ հեգնել սէրդ, նա միշտ պէտք էր անտարբեր երևիլ, այն ատեն աւելի սիրէ բորբոքէիր սիրով: Ի՜նչ տիար ու լիմար արարածներ են սիրահարները: Երբ սիրուհին հազանք ընէ, կարաւտի, խռսի, սիրահարը կ'վառի, կ'մաշի ու կ'հալի: Երբ սիրուհին սառրքի պէս կ'ամփոփուի, պատկերի պէս անշարժ կ'կառնի, սիրահարն անոր առջև մոմի պէս կ'հալի: Եթէ Լիլին այս խաղը խաղալ գիտնար, այդ քու դատդ Թերևս խոնարհէր: Բայց պարզասէր օրիորդը սրտին ու մտքին շարժման կ'հետևի, կեղծել, ծռմրիել չգիտէ, և՝ ձարը հատնելով՝ տունէն խոյս կ'տայ: Այս է իր յանցանքը: Իսկ քու յանցանքներդ աւելի շատ են: Կ'զուշակեմ ինչը կը պատճառ սրտիդ մէջ, որ փոխատր է . . . : Եղբ՛ր, պաշտամէ եղբ՛ր ու քօղաղարդ անձանօթիդ հետ աչք ունք ըրէ . . . :

Նելսօն, ծանր ու կծու ոճով կ'խօսիմ, իմ սովորական ախծադիտ ու Թեթև ոճիս հակառակ, և Թերևս չես հաւատար որ ես ինքս, վստահ, կ'գրեմ այս տողերը. բայց այս ոճէս կրնաս երևակայել Թէ սրչափ բարկացած եմ քեզի վրայ: Ես ինչպէս չզարհամամ: Դու գիտես զգդ կ'փորձիր

յուսահատ, հիմակ որ քեզի յոյս կ'ուտեն և կեանք, հիմակ կ'ելլես կ'ըսես: — Ես պիտի մեռնիմ: Ուրեմն մեռիր: Դամբանականդ պատրաստեմ:

ՆԱՄԱՆԱԿ

ՆԵԼՍՕՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Գալէ . . .

Բարեկամ, ինչպէս երբեմն հալածանքի ու պատերազմի հարկէն ստիպեալ՝ Հայերը՝ կեթ անունք որ կարողութիւն ունէին, կ'գաղթէին, հիմակ ալ կ'գաղթեն և օտարանալու մեծ եռանդ ունին: Վաճառականը կ'գաղթէ, երկրագործը կ'գաղթէ, արուեստաւորը կ'գաղթէ, բանւորը կ'գաղթէ, մէկ խօսքով՝ ամենքը կ'գաղթեն, և Հայաստան կ'մնան շատ տեղ միայն ծերերը, կիներ, մանկունք: Աշխարհաշրջիկ մարդիկ Հրէից պէս, որ Աստուածաշունչը կ'շալկեն, ինչպէս Հայք իրենց Մաշտոցն ու Աւետարանն և աշխարհիս չորս կողմը կ'ցրուին, հեռուէն պաշտելով Սիօնն ու Հայաստանը, որ պարզապէս պատմական ստուեր մը կ'գառնան իրենց երեւակայութեան մէջ: Երբ Անկլիացին կ'գաղթէ, պիտես որ նոր Հայրենիք մը կ'կազմէ և հինին բոլոր յիշատակները, անունները, սովորութիւնները ու օրէնքը կ'հաստատէ, անկլիական լեզուն ու քաղաքակրթութիւնը կ'տարածէ, նոյն իսկ անապատներու ու վայրենիներու մէջ, մինչդեռ Հայերն իրենց գաղթած երկրին պայմաններուն կ'համակերպին և քիչ քիչ կ'այլայլին: Իրաւ, Հայաստան անունն ամեն բերան կը

յիշուելէ . քանահիւսն անոր հովիտներն ու ծաղիկները կ'երգէ, դրագէտն անոր Մասեաց գագաթն երեւակայութեամբ կ'ելլէ, ծնողք իրենց զաւակներն անոր պատմական անուններով կ'մկրտեն, այնպէս որ փոքրիկ Հայկեր, Արամիներ, Տիգրանիներ կ'տեսնես չորս կողմէ, սակայն Հայրենի Ճշմարիտ սէր, ազգութեան ընդհանուր գաղափար հազիւ մէկ քանի լուսամիտ սրտերու ու կլուխներու մէջ կ'փայլին:

Ի՞նչ են ուրեմն այս պաղթականութեան պատճառները. ոմն կ'սիպէ Հայը բնիկ երկրէն դուրս նետուելու: Շահուսէրը, որով իր միտքը կ'տոչորի, հարստահարութիւն և աւարառութիւն, որով երկիրը կ'բռնաբարուի ու կ'թալլուի, կ'ըսեն: Կ'ըմբռնեմ քիչ շատ շահախնդրութեան գրկիւն, որ դարձեալ չափ մը, հայրենի հողը զարգացընելու նպատակ մ'ունենալ պէտք է, սակայն չեմ կարող հասկընալ թէ ինչպէս, խաղող, կորովի, զբօսող մարդիկ դառնուկի սիրտ ունենան և դայլերու ու արջերու յարձակումներն ու աւազակութիւնները չկրնան վանել: Այս հաշուով՝ ծերերն ու կիները կ'պաշտպանեն Հայաստանը քանի որ զաւակայն մարդիկ, որոց ամեն տեսակներն այս տեղ կ'գտնուին, և սովորաբար սարսին պաշտօններ կ'վարեն, կ'թողուն աւազակներու ձեռքն արտ, տուն, կին ու զաւակ, կով ու ոչխար և այրուսոյի պատրուակաւ Թուրքիոյ այլ և այլ քաղաքները կ'թափառին, կ'մաշին ու կ'մոլորին, սակայ անխնամ ու անդրամ թողուով ընտանիքը: Այս պարզապէս վատութիւն է: Վասն զի՝ եթէ վատնդաւոր է մնալ Հայաստան, կին ու տղայ ինչու համար կ'թողուն անտէր ու անպաշտպան, եթէ այրուսոյի համար կ'գաղթեն, ինչու համար անօթի կ'թողուն ընտանիքը: Եւ սակայն Հայերն համբաւ ունին թէ ընտանեսէր ու բարոյական ժողովուրդ են: Այս է իրենց բարոյականութիւնն, այս է կրօնական դաստիարակութեան արդիւնքն որուն վրայ ծանրանալ չեմ ուզեր: Քիւրտ ու աստպատակ իրաւունք ունին հնդեկելու, կողոպ-

տելու այսպիսի վատեր, որ՝ Թող արիւթիւն, պատուոյ զգացում չունին: Եւ սակայն, բարեկամ, եթէ տեսնես վանեցիներ և Մշեցիներ, հաստանդամ, ուժեղ ու չարքաշ մարդիկ, որ մեր Սկովտացի լեռնականներէն վար չեն մնար մարմնոյ կողմէ, եթէ տեսնես անոնց ֆիզիքական տոկուն կազմուածքը, հաստ վիզը, ամուր թիկունքը, մեծ գլուխը, որ այնքան տոկուն ու պինդ ջիղեր ու ստուար ուղեղ կ'ենթադրեն, պիտի ըսես անշուշտ, որ եթէ այդ մարմինը, ջլուտ ոյժը, լեցուն ուղեղը մշակուին ու մարզուին, ինչ զինուորներ պիտի դառնան թէ պատերազմական և թէ մտաւորական դաշտին մէջ: Բայց ինչ օգուտ որ այդ լայն լանջայ մէջ տկար հոգի, այդ խոշոր գլուխներու մէջ տկար ըմբռնում մը կ'գտնուի, և հէրքիւլէսեան կռնակ մը միայն ծանր բեռներ ու դրաստի աշխատանք կրելու սահմանուած են: Եւ բնականէ յաղթանդամ լեռնականներ որ նապատակներէ կ'խորշին, փոխանակ վարպետներ որսալու՝ եղջերուներ նետահար սատակելու՝ իրենց նախնեաց պէս: Աչքիդ առջեւը բեր հսկաներ որ՝ իրենց ստուերէն վախնալով՝ կորակոր կը ծռին: Ասոնք են այն ազգին սերունդներն որ ստէպ կռիւ կասու վայրագ հրոսակներու դէմ կ'ձակատէին, մինչդեռ այժմ ափ մ'աւազակներու ու ելուզակներու առջեւ մուկի պէս ծակէ ծակ կ'փախչին կամ տուն տեղ կ'թողուն որ բեռնակիր, դռնապան, խոհարար, բաղնեպան, սպասաւոր լինին: Ի՛նչ անկում: Եւ ինչո՞ւ. հարցուր ամեն անկեալ ու կանգուն ժողովրդոյ պատմութեան. պատասխանը պրեթէ մի և նոյն է: Հայք դարերէ ի վեր կ'իրատուին Աստուծոյ դատաստանին թողուլ անօրէնին արարքը, որու Աստուածը սակայն աւելի կարուկ դատաստան ու զէնք ունի, վասն զի Թշուառութեան դպրոցին մէջ անգամ Հայերը դեռ չեն հասկցած, որ երկրի վրայ մարդու ամենէ նուիրական բաներն իր կեանքն, իր պատիւը, իր ստացուածքն են, և՝ եթէ երբէք օրէնք ու կառավարութիւն չեն զօրեր զանոնք պաշտպանելու, ամեն անհատի բնական իրաւունքն է օրինաց ու կառավարութեան գործն ընել, այս պայմանաւ անշուշտ որ իր ձեռքն ունենայ պաշտպանութեան կարևոր միջոցներ: Թուրքիոյ ամեն ժողովուրդները զինեալ են, բայց ի Հայէն, որ կ'յուսայ խաչահանգիստով ամեն թշնամիները հալածել: Բայց ամեն դար իր յատուկ զէնքն ունի, իրական ու մտաւորական, և այն որ անոնցմէ զուրկ է՝ կորսուած ազգ մ'է:

Ի՞նչ կ'հետևի այս գրածէս՝ յայտնի է: Եթէ դաւառական Հայուն վիճակը թշուառ է, ինչպէս կ'նկարագրեն ինձ, եթէ ապահովութիւն չունի, եթէ իր հողին ու արտին, պատուոյն ու ընտանիքին տէրը չէ, յանցանքն որո՞ւ է: Կառավարութեան չէ այլ իրը: Ասկէ զատ՝ եթէ Թուրքիոյ երկրէն դուրս ըրած կորուստները համեմատենք անոր մէջ ըրածներուն հետ՝ պիտի տեսնենք որ ասոնք անհամեմատ նուազ են: Երևակայէ թէ Հայն որչափ պիտի զօրանար եթէ գիտնար իր ոյժը կեդրոնել ցրուելու տեղ, և բոլոր Հայաստանն իր գործունէութեան ու ձարտարութեան ասպարէզ ընտրել, փոխանակ օտար աշխարհներ ծաղկեցնելու: Ուրեմն գործանքը մասամբ իր ձեռքն է, օրինակն իր առջևն է: Թրքական տիրապետութեան սկիզբներն ամենէ աւելի տառապող ազգն Յոյնն եղաւ: Կորոյս թագ ու գաւազան, կորոյս հող, երկիր, կորոյս իր եկեղեցիներն ու հարստութիւնը, կորոյս իր աղջիկները՝ մանաւանդ վերջին ապստամբութեան ատեն, կորոյս իր անպիծ արիւնն որ հեղեղի պէս հոսեցաւ, բայց չկորոյս իր հաւատքն ապագային վրայ և իր հայրենասիրական եռանդը, չկորոյս ամբարտաւանութեան մօտ յանդգնութիւնն որ իրեն ստէպ անկարելին ընել կ'տար, և եւրոպական դաշինքներն իր բողքներով կ'դղրդէր, եւրոպական լրագիրներն իր դրամով կ'շարժէր և իր գործն կ'ծառայեցնէր, եւրոպացի պետուններն իր հին պրակտութեան ոգին կ'վառէր, և վանդանդ իր գործունէութեամբն ու անդուլ ձգտելկութեամբը

հետզհետէ մտաւորական ու նիւթական այժ կ'ստանար, այնպէս որ հինգ տաս տարուան մէջ դարմանեց իր վէրքերը, շէնցուց կործանած գիւղերն ու քաղաքները, լեցուց իր ըրած կորուստներն, և այսօր՝ ոչ միայն բարեկիրթ աղգերու հաւակրութիւնն ու համարումը կ'վայելէ, այլ և պաշտպանութիւնն, և օր ըստ օրէ կ'տիրանայ իրապէս թէ Եւրոպիոյ և թէ Փոքր Ասիոյ մէջ այն հողերուն և կալուածներուն, որ ձեռքէն ելած էին, չէ թէ զէնքով՝ այլ աշխատութեամբը, տնտեսութեամբը, հեռատեսութեամբն, և օտար տարրներ, որոց մէջ է նաև հայկական տարրը, շատունակ կ'վանէ իր առջև՝ և անոնց առուտուրը, արուեստներն ու հողերը կ'դրաւէ, կ'գնէ և կ'զարգացընէ։

Կ'յուսամ որ մեր կառավարութիւնը Յունաստանի ջրերը նաւեր ուղարկէր, կ'յուսամ որ Քանինկ Իպրահիմ փաշայի ընթացքը կեցընէր, անկլիացի վաճառականներ իրենց արկղը բանային, Պայրն մ'իր կեանքը տար յունական դատին, Փրանսա ու Ռուսիա ձեռք կարկառէին, եթէ Յոյնն Հայուն պէս դանդաղ ու անգործ սպասէր, եթէ իր գարաւոր վէրքերն ինք քաջարար գարմանելու չձեռնարկէր։ Ես չեմ յուսար, թէև Յունաստանի պատմական Համբաւը, մեծ մարդիկն, իր կարևոր դիրքը, քաղաքակրթութեան մատուցած հին ծառայութիւններն անդամ իր գատին ի նպաստ խօսէին։ Այս ամեն առաւելութիւններն պարզապէս պաշտելի հին յիշատակներ պիտի մնային, ինչպէս որ մնացեր էին հրբոլոր ու կէս գարե ի վեր՝ եթէ նախաշարժումն արդի ժողովրգեան կողմը չլինէր։

Այսպիսի նախաշարժման տեղ, յետաշարժում կ'նշմարեմ Հայոց մէջ, վասն, և կ'ցաւիմ որ հին ու պատկառելի ազգն, որ խաւար գարերու մէջ աւելի մեծ կ'երևէր քան թէ նեկայ լուսաւոր գարուս մէջ՝ այնքան նուաստ ու սարսուկ դիրք մը բռնէ ազգերու շրջանին մէջ, և իրեն մնացած մէկ քանի լաւ յատկութիւններէ օգուտ քաղելով՝ Արևելքի մէջ

իր բարձր կոչումը չկարենայ զգալ և ըստ այնմ շարժիլ։

Կ'դոյեմ գիրս։ Կ'յուսամ որ նախորդ գրոյս պատասխանը ձամբան է և այսօր վաղը կ'ընդունիմ։ Գողի մէջ եմ։ Արդեօք դարձեալ ինչ անակնկալ լուրեր ունիմ լսելու կամ ծանր կշտամբանք։ Փոյթ չէ. քեզմէ եկածն՝ թոյն իսկ լինի, սիրով կ'ընդունիմ։

ՆԱՄԱԿ ԼԸ

ՆԱԼՍՈՆ ՍՈՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Ռումբի պէս ընկաւ նամակդ դլխուս և բոլոր էութիւնս սարսեց ու չլատեց։ Անցաւ մի քանի օր և սակայն դեռ չանցաւ կրած ցնցումս ու ցաւս։ Ձեր երազներ իսկ այդպիսի դառն ու կծու գիր մ'ընդունիլ։ Ուրմէն այդչափ յանդգնած եմ, ուրեմն այդչափ վիրաւորեր եմ սիրտդ, ուրեմն իմ բոլոր կասկածներս ու երկիւղս անհիմն են։ Գոհ եմ, բայց միշտ անգութ ժլի։ Կ'երևի Լէ դու երբէք սիրած չես, որ սիրոդի վիճակէն հասկրնաս, և նախանձու սլաքներն զգաս։ Ի'նչ օձեր կ'գալարէին սրտիս ու մտքիս մէջ երբ Լիլլին փախուստն իմացայ, չեմ կարող բացատրել։ Կարծեցի թէ թռաւ գնաց այդ թռչնիկն, և ձեռքէն երկտող գիր մ'անգամ չստացայ։ Կարելի է մոլորեր ես, և ինչ որ գրեցի կարծեցի գրել մտերմի մ'որ իմ բոլոր կենացս դառնութիւնները, կսկիծներն ու մանաւանդ անստուգութիւնը կ'ճանչէ։

Խնդրեմ, ներողամիտ եղեր, սիրելի Վուտ։ Եթէ կամիս այսու հետեւ աւելի խոհեմ և զգոյշ կ'լինիմ։ Իմ զղացմունքս ու մտածմունքս քեզմէ պիտի պահեմ, ամփոփեմ հոգւոյս մէջ և պատշաճաւոր ժամանց հակառակ չպիտի վարուիմ։ Սիրոս ի դող պիտի երթեմ առջեդ և ամեն բառ, ամեն կէտ սլիտի կշռեմ և ապա գրի առնեմ։ Սաստիկ սիրեցի յանցանք է, կասկածիլն մեղք է եղեր, և դիրդ իբրև պատիժ ու ապաշխարանք կ'ընդունիմ մեղքիս։ Բայց մէկ ուրիշ մեղքս ինչո՞ւ պահեմ։ Գիրդ՝ թէև կայծակի պէս հասաւ՝ միտքս չբուժեց, չցրուեց ոլորտս ամպերն, չմեղմց ծանր վիճակս, ընդ հակառակն հեգնութիւններդ ու ամբաստանութիւններդ աւելի ծանրացուցին զայն . . . ։

Սիրելի Վուտ, ամենէ աւելի սիրտս ծակողը սա ակնարկութիւնդ է, թէ անձանօթին տպաւորութիւնը կ'արդիլէ դիտձշմարտութիւնը տեսնել։ Բայց կ'հարցնեմ քեզ, միթէ դու ճշմարտութիւնը տեսար։ Տեսար Լիլին, խօսեցար իր հետը, կրկնեց իր խոստումը, բացատրեց իր փախուստին նպատակը . . . այս է խնդիրը։ Մոռթին կ'քաւենք, և երբ լոյս կ'պահանջեմ, դիս կ'ամբաստանես իբրև անհաւատարիմ, իբրև չիմար և գոռոզ։ Լիլին աւելի չերմ փաստաբան մը չէր կարող գտնել քան քեզ։ Չեմ ըսեր որ անմեղ չէ, չեմ պնդեր որ անզղայ է, այլ կ'խնդրեմ որ ուրիշին աչքով չտեսնես, ուրիշին խօսքով չշարժիս, ուրիշին հրամանին համեմատ դիս չհրաւիրես այդ տեղ և դլուխս նոր փորձանքներ չբանաս . . . ։

Տկար են ստուգիւ, սիրահարները, սիրելի Վուտ, և կ'փափաքին սակայն լսել սիրուհւոյն բերնէն՝ կ'անբիծ հեղինակութեան խօսքը։ Միթէ չմտա պահանջող եմ, ես որ Լիլին միշտ յարգեր ու պաշտեր եմ, և անոր մէկ ժպիտն, մէկ ակնարկն իմ երանութիւնս համարեր եմ, թէև ըստ քեզ պարապ ժամանակ անցուցեր եմ։ Երբև սիրոյն նշան, անոր փախուստը մէջ կ'բերես սակայն փախստականը չես տե-

սեր . . . իրաւունք չունիմ վարանելու և վրդովելու, բարեկամ։ Ինչ հարկ աւելի երկար խօսիլ, եթէ կամիս շարունակել թղթակցութիւնդ այս նիւթին վրայ, կարճ խօսք մը, առաջարկութիւն մ'ունիմ, որ դրական մարդ կ'յարմարի. եթէ կ'ուզես քաշուիլ տեսարանէն, կ'դադրեմ վարդդրն և ուրիշ անգամ չեմ խօսիր սիրոյ վրայ, միշտ պահելով իմ բարեկամական զգացմունքս առ քեզ, և աղաչելով որ ներես ինձ։

Ուրեմն, սիրելի Վուտ, պատասխանէդ կախում ունի իմ խնդիրս։

ՆԱՄԱԿ ԼՈ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՈՆ

Լոնդոն . . .

Բարեկամ, Առի ձերընթերց. բաւական ազդու է և սրտաշարժ։ Գլուխդ շատ տաքցեր և երեւակայութիւնդ բռնկեր է։ Դժգոհ ես իմ բանակցութենէ։ Այո՛ կամ ոչ պատասխան մը կ'ուզես, որ ըստ այնմ չարժիս։ Պատեհ ազմ կը հրատարակես, կ'ընդունիմ, չեմ ընդդիմիր։ Սակայն որու մտքէն կ'անցնէր որ սիրոյդ կնճիռն մեր հին բարեկամութեան կապը խզելու պիտի սպառնար։ Եթէ քեզ համար սիրոյ ինձի համար պատուոյ խնդիր մ'է այս հանելուկը, պէտք է լուծել զայն։ Իմ անկեղծութիւնս ու լրջմտութիւն վէճի ներքև կ'ձգես, և կարելի չէ ինձ հրաւէրդ մերժել։ Կամ դու իրաւունք ունիս կամ ես. ժամանակը պիտի երեան հա-

նէ, համբերութիւն։ Ա՛յս ժամանակը մօտ է իմ առջև, քու աչքդ՝ շատ հեռու ու մութ։ Կ՛երևի թէ անշահ թղթակից ու անճարակ բանակից մ՛եմ, բայց այս դիտեմ որ ամեն բան մանր գրեցի, ամեն պարագայ յայտնեցի, դու միայն կ՛ուզես անհամոզելի մնալ։ Կարծես թէ սիրոյ անվրիպելի երևոյթներու դէմ երևակայական ընդդիմութիւններ ստեղծելով կ՛հրճուիս։ Իրողութիւններ բաւական չեն, այդ իրողութիւնները շօշափել կ՛փափաքիս, մաթեմատիքական ճշդութեան հասնիլ կ՛ուզես, կ՛սիրես ու կ՛պատաքննես։ Նայինք ուրիշ ինչ պահանջումներ պիտի ընես, ինչ դժուարութիւններ պիտի հանես։ Իրապէս վերջնագիրդ ինձի դէմ չէ, այլ Լիլիի դէմ, և եթէ իմանայ այն առեն գործը աւելի պիտի պղտորի, կարծեմ։ Ինչ որ է, գրէ, առաջարկդ ընէ, պատրաստ եմ լսելու, և եթէ բանաւոր՝ ի գործ դնելու, վստահ լինելով որ ինչ այլանդակ բաներ ալ գրես, միշտ բարեկամդ պիտի մնամ, վասն զի վիճակդ կ՛ղդամ ու կ՛արգահատիմ։

ՆԱՄԱԿ Ժ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Շնորհակալ եմ։ Չես թողուր զիս անօգնական, և կ՛ընդունիս՝ չէ թէ վերջնագիր, ինչպէս որ կ՛անուանես հեգնօրէն, վասն զի վերջնագրի խնդիր չկայ մեր մէջ, այլ հրաւէրս։ Կ՛ուզեմ պարզ ու որոշ խօսիլ, որ թիւրիմացութիւն վերնայ։ Ահասիկ խնդիրս.

Պատճառներ ունիմ, սիրելի Վուտ, չէ թէ Լիլիի սիրոյն վրայ, չէ թէ քու անկեղծութեան և հաւատարմութեան վրայ, այլ անոր փախուստին, և՝ եթէ իրօք փախուստ կայ, պտնուած տեղոյն վրայ։ Հետևապէս՝ կ՛աղաչեմ քեզ, սիրելի Վուտ, ճամբայ մը գտնել և նախ լէտի Խոտհէմը տեսնել, և իրողութիւնն անոր բերնէն ալ ստուգել. ապա տոքթօր Բէյնը գտնել և յայտարարել որ անհրաժեշտ է քեզ տեսնել Լիլին։ Իրաւ, եթէ գաս, խարէութիւն կայ գործին մէջ՝ յանդուգն և անակնկալ քայլ մը պիտի լինի առնելիք քայլդ, բայց Լիլիի ազատութեան և իմ սրտի ու մտքի անդորրութեան համար այս միջոցը կարևոր, ատիպտղական է։

Այն առեն, բարեկամ, կ՛հաղորդես ինձ անշուշտ լէտի Խոտհէմի հետ ունեցած խօսակցութեանդ և տոքթօր Բէյնի հետ ունենալիք տեսակցութեանդ արդիւնքը։ Նայինք, եթէ առաջնոյն ըսելիքը կ՛համապատասխանէ մեր արդէն ունեցած տեղեկութեանց, եթէ տոքթօր Բէյն հաճի տանիլ քեզ Լիլիի մօտ որպէս զի պատշաճ օրութիւնդ կատարես, խըղիքը բաղդատվին կ՛պարզուի, և կամ ես քու առջևդ ամօթահար պիտի մնամ, ուղիղ պատմութեանդ առջև պիտի խոնարհիմ և հազար ներում պիտի խնդրեմ, եթէ չյաջողիս, և կամ դու պիտի ստիպուիս խոստովանելու որ իրաւունք ունիմ, եթէ գործն առաջարկիս հակառակ արդիւնք ունենայ։

Խստապահանջ չեմ, բարեկամ։ Թշուառութեան պարագը զիս կրթեց, դիւրահաւան ու պարզ միտքս ուղղեց, ազնուական գաստն ներքին կեանքն իմ վստահ հոգիս պղտորեց։ Նախ համոզուիլ և ապա հաւատալ կ՛ուզեմ, նոյն իսկ սիրոյ մէջ, և իբրև վերջաբան կ՛առաջարկեմ, որ՝ եթէ Լիլին տեսնես, աղաչես զինքն որ եկեղ դիր մ՛ուղղէ ինձ կամ պարզապէս գրէ և տառապգրէ.

«— Լիլին ողջ է, քեզ միշտ կ՛սիրէ. եկուր։ —

Ան ատեն թևերը պիտի առնում, անվրէպ պիտի իջնեմ ձեր մօտ, յաղթանակը պիտի տանիմ և բոլոր մեր երազները ու յոյսերը պիտի պսակուին։

ՆԱՄԱՆ ՆԱ

ՆՈՒՕՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Աւջի դիրս ձեռքդ չհասած՝ ահա նոր մը կը գրեմ, բայց ուրիշ նիւթի վրայ։ Ի՞նչ ընեմ, փնտակ եմ ու անգործ՝ այս ահագին ու շարժուն մայրաքաղքիս մէջ, թէև միտքս ու սիրտս շարունակ կ'գործեն։ Անարդիւն պարապմունք, երբ իսկական առարկայ ու նպատակ չունի։ Մին կը թափառի գնչուի պէս առանց կայանի, միւսը հրէ հներ կ'եւրևակայէ։ Ա՛յնքան տարբեր է մեր կեանքն իրարմէ որքան խորհուրդը գործէն, տեսականն իրականէն։ Դու ունիս քնտանիք ու ազգական, դու ունիս աղնիւ կին զոր կ'սիրես, սիրուն զաւակներ զոր կ'կրթես, դու գործունէութեամբ պաշտօն մ'ընտրած ես առևտրական շրջանի մէջ և պատուով ապրուստդ կ'ձարես, դու իրաւունք ու ձայն ունիս քաղաքական խնդիրներու մէջ, մէկ խօսքով դու իբրև ընտիր հայր, լաւ քաղաքացի և ազնիւ մարդ կ'կատարես ամեն ընտանեկան, քաղաքային պարտիքդ, այդ մեծ քաղաքն, ուր արժանիք, տաղանդ ու հնարագիտութիւն իրենց վայել վարձքը կ'գտնեն, դու կ'վառիս այն մեծ ընկերական խնդիրներու համար որ մարդկային բարօրութեան կ'վերաբերին, և հպարտա-

նալով կ'ըսես անշուշտ. «Ես մեծ ազգի մը պատուաւոր անդամն եմ, մեծ քաղքի մը ժիր քաղաքացին իմ և կ'ղամ որ կ'ապրիմ։»

Իսկ ես ի՞նչ ունիմ։ Կրնամ ըսել որ կ'ապրիմ քանի որ՝ թէև անկլեայցի, անկլեայցոյ իրաւունքը չունիմ, թէև մարդ՝ մարդկային ընկերութեան մէջ տեղ մը, պաշտօն մը չունիմ, թէև առոյգ ու կարող, իմ ապրուստս ինձ անծանօթ աղբիւրէ մը կ'ընդունիմ, իմ անյայտ ծագումիս բերմամբ։ Իբրև օտար ու անտարբեր եմ այն ամեն բարեաց որոց յարդը պիտեմ։ Եթէ չզղայի, եթէ չխորհէի, եթէ չդնհատէի այդ բարիքը, ամենևին հոգս չպիտի լինէր, և՝ կենաց պայմաններուն անդէտ վայրենիին պէս՝ իմ տգիտութեան և անբանութեան մէջ հանգիստ պիտի անցընէի իմ աննշան օրերս։ Բայց արի տես որ այդպէս չէ։ Իմ ապարդիւն վիճակս այնքան կ'կծէ ու կ'սրէ իմ զգացմունքս որքան որ իմ միտքս կ'շարժի, իմ խղձերս կ'սրին, իմ սիրտս կ'ճոմի դէպ ի այն վայելքն որմէ զուրկ եմ գլխովին։

Ու հիմակ ըսեմ որ կ'ապրիմ։ Ջունիմ աչք հարստութեան, որ առեալ արատաւոր կամ անկարող ափի մէջ կ'լեցուի, չեմ ուզեր ազնուական ծնունդ մ'որ անձնական արժանիքի նշան չէ, չեմ խնդրեր պաշտպանութիւն, որ միայն սարուկներու և ապիկարներու բաժինն է, այլ կ'ուզեմ անկախութիւն, այլ կ'ուզեմ վստահութիւն, զոր կ'զլանան ինձ ընկերութիւնն ու իրեն դրած անիրաւ օրէնքը։

Անշուշտ՝ իբրև բաղդախնդիր՝ կարող եմ վերստին նետուիլ աշխարհիս մէջ, կարող եմ իմ մուրթ անցեալս մոռնալով՝ ներկային մէջ իմ փառասիրութեանս ձարակ փնտռել, և թերևս ելնել բարձրանալ ընկերական աստիճանին վրայ և երևելի անձնականութիւն մը դառնալ, ինչպէս որ ատեն ատեն կ'դառնան բաղդին ծնունդները, սակայն աստանդականութեանս մէջ կրնայ դալ ժամ մ'ուր մարդիկ իզմէ անցագիր խնդրեն, անցեալս պատմութիւնը պահան-

ջեն: Ան ժամանակ արժանապատուութիւնն ալ պիտի պահանջէ սպաննել կամ սպաննուիլ, այսինքն ոճրագործ դառնալ. . . . ներելի՞ է այսքան անհեռատես լինիլ. . . :

Բարեկամ, վերջապէս կ'նամանցընեմ իմ վիճակս ժողովըրդեան մը վիճակին, որ աննպատակ կ'ապրի, կամ շատ շատ հին յիշատակներով կ'սնանի ու կ'պարծի: Այսպիսի ժողովուրդ մը կայ այս տեղ, և աւելորդ է անուանել Հայը: Գոնէ՝ ինձի պէս՝ իմանար այդ ծանր կացութիւնը, գոնէ իշէ, կամք ու դիտութիւն ունենար անկէ ազատելու, բնաւ: Կարծէ թէ բնական է այդ իր դրութիւնն, ինչ անուշ պարանք: Ջմռանները որ օրին մէկն իր վտարանդի ընթացքին մէջ՝ ազդերն իրմէ անցագիրը պիտի պահանջեն, պիտի հարցընեն թէ այնքան գարեր ինչ գործեր, ինչ շիներ է, թէ իրեն և թէ մագկութեան համար, և եթէ անցագիրը հին, ալտոտ, անվաւեր գտնեն, կարծեմ թէ չպիտի թողուն որ նա անցնի, այլ պիտի ըսեն. — Դու աշխարհի մէջ պաշտօն չունիս և դու մեր կալանաւորն ես, բանտի արժանի:»

ՆԱՄԱՆ ԱՔ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, Միտքդ իմացայ: Բաւական ծանր բեռ մը կը դնես կռնակս: Խօսք տուի, պէտք է որ կատարեմ: Միայն ժամանակի կարօտ եմ: Սիրոյ խնդիրներն այնքան կինճռոտ են որոշ լուծում տալու համար Ա՛ստուածաղէմ կեանքն ու

նիւզրնի հանճարն անզամ չէն բաւեր: Իրաւ է որ սէրն ալ կ'անհամի երբ կենաց միակ նպատակը կ'գառնայ: Ուստի լաւ է չշաղել մեր թղթակցութեան հայն այն խմորով որ կարծեմ թթուելու երես կ'առնու: Մինչև որ այս նոր կնճիռն, այդ է Լիլլի փախուստը, պարզուի, փափաքիդ համեմատ՝ խօսինք օդի ու ջրի վրայ, խօսինք Հայուն վրայ:

Սակայն մի մոռնար որ հայանկլխական դիրքի մէջ ենք, բարեկամ: Մեր շահերը, մեր հայրենիքը յուզուած խնդիրները, մեր առուտուրին ու ճարտարութեան վերաբերող ծանր հարցերն անտեսկ'առնենք, և մեր գրակցութեան նիւթ կ'ընտրենք առ հասարակ սէրն ու հայը: Երկու անհամաձայն տարրները, կրակ ու ջուր, շոգի ու սառ: Եւ իրօք, քանի որ Հայու սրտին մէջ չվառիր այդ սէրն, հայրենիքի սէր, արդարութեան սէր, աշխատութեան սէր, կրթութեան սէր, չեմ զարմանար եթէ շարունակ կ'գաղթեն, այսինքն կ'օտարանան: Բազմապիսի են այս օտարասիրութեան պատճառները. բայց դլխաւորն է ազգային ընդհանուր շահուց նկատմամբ ապիտութիւնն ու անտարբերութիւնը: Հայը կ'նկատէ Հայաստանն իբրև դամբարան, և ապիկարներ ու լալկաններ կ'թողու այն տեղ որ մեռելին վրայ ողբան, այն մարդուն նման որ ժամ առաջ խոյս կ'տայ տունէ մ'ուր իր սիրելին մեռած է և չուզեր տեսակ մ'արիութիւն ներշնչող տրտմութեան մէջ մնալ՝ անոր կենդանի յիշատակներն իր աչքին առջև ունենալով: Ի՜նչ եսասիրութիւն, ինչ կեղծիք սրտի մէջ անգամ՝ նոյն իսկ հայրենիքի նկատմամբ: Եթէ ծիծաղելի է այն մարդու վիշտն որու դրպիռը ջնջելու համար այլ և այլ հնարներ կ'նիթէ, աւելի ևս ծիծաղելի է այն հայրենասիրին վիշտն որ իր նախնեաց թափած արիւնն ու նահատակներու մասունքը չտեսնելու համար լեռէ լեռ, ծովէ ծով կ'փախչի և օտարին հողը կ'դալբենաթրէ:

Բայց, բարեկամ, Հայն ուր որ փախչի, իր առջևը պիտի դտնէ փոս մը, գերեզման մ'ուրու վրայ ծաղկեայ ծած-

կոց մը փուռաւած է, քանի որ ազատ հողի վրայ չդտնուիր։ Ցաւալին այս է, որ այդ փոսը չտեսներ, կամ կարծէ թէ ամէն փոս մի և նոյն խորութիւնն ունի։ Կ'յուսայ ամէն կլիմայէ, ամէն աստղի ներքև նոյն օդն ու ջուրը, նոյն օրէնքն ու բարքը, նոյն իշխանութիւնը դանել, քանի որ քաղաքական յաւուկ դիրք մը չունի։ Եւ ասոր մէջն է իր մեծ սխալմունքը։ Արդէն ֆիզիքապէս գաղթական՝ աշխարհիս չորս կողմն, եթէ ներելի է ըսել, մտապէս ու բարոյապէս ալ կ'գաղթէ, այսինքն անդադար օրէն կ'օտարանայ։ Եւ ակի թագի ու գահի տակ, եւ ակի թշուառ է իրաւ, բայց այս թշուառութիւնը կրնայ յանձնառել՝ եթէ իր բոլոր աշխատութեան ու ձարտարութեան կեդրոն ընտրէ այն վայրն որ իր պատմական աւանդութիւններն ու յիշատակները կ'պարունակէ, և ասոնք եթէ ոչ մտքին կրնան սրտին ու երևակայութեան թմբիրը ցրուել և ապա մտաց աշխոյժ և իսկական շահագործութիւնը բերել։ Եւ ո՞ր կրնայ լինիլ այդ վայրն եթէ ոչ հայրենիքն, որ թէև կերպ, դէմք բնիկ ոյժ մ'ունի, օտարոտի աղդեցութեան և բաժանումներու ենթակայ։ Բայց Հայր կ'փափաքի շահիլ ու սփոփիլ, և սովորաբար այն կողմերը կ'վազէ ուր եթէ ոչ աւելի մտաւոր մնունդ, ազատ շունչ, դէթ հանգիստ հաց և անշարժ ապահով կեանք կայ։ Ի՞նչ փոյթն է մտային լոյս և ազատութիւն՝ երբ իր աշխատութեան արդիւնքը չէ կարող հանդարտ և անկասկած վայելել։ Եւ ահա ասոր մէջն է իր երկրորդ սխալմունքը, վասն զի կ'կարծէ թէ լոյսն ու ազատութիւնն ինքնաձին բաներ են կամ Աստուծոյ երկնատուր մկ շնորհը. մինչդեռ իրօք մարդկային անհուն ջանից և բարոյական արիութեան արդիւնքն են։ Ուստի անդէտաս կ'պատրաստէ իր գլխուն նոր նոր փորձանքներ և իր ոտքին շղթաներ։ Երեք անհատաբար զօրութեամբ աերութեանց ներքև՝ ակարապոյնն ընտրել իրեն հովանի իմաստութիւն է, թէև այդ ակարապոյնը միանդամայն անկոր լինի հպատակը պահպանելու։ Անկարելին պա-

հօնն և ապա տեղը բռնել աւելի դիւրին է ժողովրդեան մ'որ մտապէս կ'զարգանայ և նիւթապէս կ'զօրանայ քան թէ զօրաւորինն, որ ամէն նուիրական ղդացում, ամէն զարգացման միջոց կ'ձնշէ, հայրենասիրութիւն, ազատասիրութիւն կը ջնջէ, լոյսը կ'սաստէ, և ժողովուրդներն իր օրինական կամ բռնական կաղապարին մէջ քիչ քիչ կ'ձուլէ։ Այս քաղաքականութիւնն բռնակալ աերութեանց յատուկ է, և Ռուսիա նշանաւոր տեղ մը կ'բռնէ անոնց մէջ։ Քանի տարբեր է մեր քաղաքականութենէ։ Ռուսիա կ'աշխարհակալէ որ ժողովուրդներ որսայ, Անկլիա կ'երկրակալէ որ անոնց ստակն որսայ, նա կ'սիրասիրէ որ աղդութիւններ կուլ տայ, սա կ'իշխէ որ իր ապրանքները կլեցընէ, և քիչ շատ հետաքրքրուած աղդերու կրօնն ու բարքը, և առաքման մ'իր քնօրինութիւնը կ'յարգէ, կարելի եղածին չափ քաղաքակրթութեան լոյսը տարածելով։

Թող Հայն այժմէն ընտրէ երեքէն մէկը. Ռուսին կնոջ, կամ Պարսկին խարազանն կամ Ցաճկին թակը։ Առաջինը կ'սպանէ, երկրորդը կ'անդամալուծէ, երրորդը կ'դրգռէ։ Եթէ Հայ լինելէ երրորդին կողմը կ'հակի առանց վարանելու, մտածելով որ եթէ բնտրութիւնս յաջողեմ, ընտրութեան ազատութիւնս ալ թերևս ձեռքէ հանեմ. . . :

Հայուն համար բաց դուռը Հայաստանի հարազատ և թանկահար կողմն է։ Արարատայ ու Վասպուրականի և Կիլիկիոյ դաւառներն են, որ եթէ աշխատութեամբ շինուին, կրթութեամբ ծաղկին, բնապէս պիտի վերականգնին և իրենց պիտի քաշեն՝ իրրև ազատ ասպարէզ և Հայութեան կեդրոն, այն ամէն հետաւոր զաւակներն, որ տարբեր իշխանութեանց ներքև կ'տառապին կամ կ'հիւծին և ազատումի ելք մը կ'փնտռեն։

Կ'ըմբռնեմ, բարեկամ, թէ ինչ դժուար կացութեան մէջ կ'գտնուի ժողովուրդ մը՝ երբ երկար տարիներ օրինօք ու բնութեամբ կառավարութեան ներքև կ'ինայ, և այս կացութիւնը

կ'ծանրանայ մանաւանդ երբ նոյն ժողովրդեան երեք մասերն իրենց ազգային յարաբերութիւնները հաստատելու պէտքն ղեկ առանց իշխողներուն կասկածները գրգռելու : Եթէ չեն ղեկ այս պէտքն՝ ի հարկէ աւելի հանդիստ կ'ապրին, բայց միանգամայն աւելի շուտով կ'մահանալին կորստեան. եթէ ղեկալով հանդերձ՝ ազգային ընդհանուր շահն իրենց քաղաքականութեան հիմ բռնելու տեղ՝ վաղանցուկ առաւելութիւններու յուսով այս կամ այն կողմը չդառնան. կամ եթէ բնաւին անտարբեր են, ոչ նուազ անխուսելի է իրենց կորուստը : Սակայն այս մասին չեմ կարող որոշ կարծիք յայտնել, և միայն այս դիտեմ որ նիւթական զօրութիւնն աւելի շատ հրապոյր, հետևապէս աւելի շատ կուսակիցներ կ'ունենայ, և ստորակ ժողովուրդներու համար այդ հրապոյրն ազգայնութեան թոյնն է . . . :

Եթէ աւելի դանես, մեկնէ ինձ այդ կէտը Հայոց նկատմամբ :

ԴԱՄԱՆ ՅՓ

ՆԱԼՍՓՆ ԱՄ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Իրաւացի է դիտողութիւնդ . Հայ ոչ միայն ֆիզիապէս այլև մտապէս ու բարոյապէս կ'փաղչելն, բայց բացատրութիւնդ թէ կ'ծագանան, ամեն մասամբ ստոյգ չէ : Ժողովուրդ մը լաւ դատելու համար բաւական չէ քննել իր արտաքին, այս է քաղաքական, այլև ներքին, այս է ազ-

գային հանգամանքը նկատել պէտք է, ապա թէ ոչ միակողմանի ու գահավէժ դատումներու մէջ կ'իյնանք, մանաւանդ Հայու մասին, որ իրեն յատուկ էութեան թագուն պայմաններ ունի, ինչպէս որ ուրիշ առթիւ ակնարկած եմ : Այս պայմաններէն մին է իր եկեղեցին, որու կարևորութեան ղեկացումը կ'տածէ, այլ՝ դժբաղդաբար՝ ոչ լուսաւոր համոզումը : Հետևապէս օտարական մ'որ անոր ներքին կեանքը կ'անդիտէ, սխալելու հակամէտ կ'պտնուի : Թերևս իմ նախորդ դատումներուս մէջ այս սխալմունքն ըրի, թէև այն՝ գիտութեան առջև՝ կրնայ արդարանալ, այլ ոչ այն պարագայից առջև, որոց մէջ կ'լորած է ժողովուրդ մը և որմէ աղատելու համար կամք ու փափաք չեն զօրեր այլ իմաստականութիւն :

Ուրեմն առնենք Հայն ինչ որ է, և չէ թէ ինչ որ պարտէր լինիլ և քննենք իր դիրքը : Իրաւի՝ եղական է աշխարհիս վրայ, և զարմանալի որ քիչ շատ դիրութիւն ունի աղերու մէջ, թէև այդ դիրութեան պայմաններն՝ ժամանակին հետ չփոխուելով՝ կրնան տկարանալ և իրենց պահպանողական յատկութիւնը կորուսնելով՝ չդիրութեան տանիլ : Ստուգիւ Հայը գաղմելով՝ Թուրքիոյ զանազան դատառներն, Եւրոպա ու Հնդկաստան՝ կ'փոխե տէր ու սովորութիւն, կը փոխե կեանքն ու լեզուն, կ'փոխե հագուստն ու զէնքը, կը փոխե միտք ու կարծիք, բայց եթէ բուռն պարագաներէ չբռնադատուի, պարագաներ որ կրնան պատահիլ թէ բարբարոս և թէ քաղաքակիրթ երկիրներու մէջ, չփոխեր իր դատանքը, չփոխեր իր կրօնն և ուր որ պաղթէ իր հետը կ'տանի եկեղեցին կամ անոր մասունքը, ուր որ հասնի աչքը կ'դարձընէ չէ թէ Հայաստան, այլ այն Հայրապետին կամ առաքելական կոչած Աթոռին՝ որ Էջմիածին կ'պտնուի : Կան Թուրք, անկլիացի, արաբացի, հնդիկ, պարսիկ, Ֆրանսացի Հայեր, որ՝ եթէ դլխովին ամուսնական կամ քաղաքական յարաբերութեանց ընտրիւ օտարացած չեն, կ'խանգավառին

կ՚ծանրանայ մանաւանդ երբ նոյն ժողովրդեան երկը մասերն իրենց ազգային յարաբերութիւնները հաստատելու պէտքն ղան առանց իշխողներուն կասկածները գրգռելու : Եթէ չեն ղար այս պէտքն՝ ի հարկէ աւելի հանգիստ կ՚ապրին, բայց միանգամայն աւելի շուտով կ՚մսանուին կորստեան . եթէ ղգալով հանդերձ՝ ազգային ընդհանուր շահն իրենց քաղաքականութեան հիմ բռնելու տեղ՝ վաղանցուկ առաւելութիւններու յուսով այս կամ այն կողմը չդառնան . կամ եթէ բնաւին անտարբեր են ; ոչ նուազ անխուսելի է իրենց կորուստը : Սակայն այս մասին չեմ կարող որոշ կարծիք յայտնել, և միայն այս դիտեմ որ նիւթական զօրութիւնն աւելի շատ հրապոյր, հեռաւորապէս աւելի շատ կուսակիցներ կ՚ունենայ, և ստրուկ ժողովուրդներու համար այդ հրապոյրն ազգայնութեան թոյնն է . . . :

Եթէ աւելի դանես, մենք ինձ այդ կէտը Հայոց նկատմամբ :

ՆԱՄԱԿ ԻԶ

ՆԵԼՍՈՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բաներեակ՝ Իրաւացի է դիտողութիւնդ . Հայ ոչ միայն ճշդախօսը այլ և տգաղախօս ու քաղցրալեզու կ՚ըսուին, բայց բացատրութիւնդ թէ կ՚օգտագործան, ամէն մասամբ ստոյգ չէ : Ժողովուրդ մը լաւ դատելու համար բաւական չէ քննել իր արտաքին, այս է քաղաքական, այլ և ներքին, այս է ազ-

գային հանգամանքը նկատել պէտք է, ապա թէ ոչ միակողմանի ու գահավէժ դատումներու մէջ կ՚իյնանք, մանաւանդ Հայու մասին, որ իրեն յատուկ էութեան թագուն պայմաններ ունի, ինչպէս որ ուրիշ առթիւ ակնարկած եմ : Ա՛յս պայմաններէն մին է իր եկեղեցին, որու կարևորութեան գգացումը կ՚տածէ, այլ՝ դժբաղդաբար՝ ոչ լուսաւոր համոզումը : Հետևապէս օտարական մ՚որ անոր ներքին կեանքը կ՚անգիտէ, սխալելու հակամէտ կ՚գտնուի : Թերևս իմ նախորդ դատումներուս մէջ այս սխալմունքն ըրի, թէև այն՝ գիտութեան առջև՝ կրնայ արդարանալ, այլ ոչ այն պարագայից առջև, որոյ մէջ գլորած է ժողովուրդ մը և որմէ ազատելու համար կամք ու փափաք չեն զօրեր այլ իմացականութիւն :

Ուրեմն առնենք Հայն ինչ որ է, և չէ թէ ինչ որ պարտ էր լինել և քննենք իր գիրքը : Իրաւի՝ եղական է աշխարհիս վրայ, և զարմանալի որ քիչ շատ գոյութիւն ունի ազգերու մէջ, թէև այդ գոյութեան պայմաններն՝ ժամանակին հետ չփոխուելով՝ կրնան տկարանալ և իրենց պահպանողական յատկութիւնը կորսնանելով՝ չգոյութեան տանիլ : Ստուգիւ Հայը դաղթելով՝ Թուրքիոյ զանազան դատաւորներն, Եւրոպա ու Հնդկաստան՝ կ՚փոխէ տէր ու սովորութիւն, կը փոխէ կեանքն ու լեզուն, կ՚փոխէ հագուստն ու դէմքը, կը փոխէ միտք ու կարծիք, բայց եթէ բուռն պարագաներէ չբռնադատուի, պարագաներ որ կրնան պատահիլ թէ բարբարոս և թէ քաղաքակիրթ երկիրներու մէջ, չփոխեր իր դատանաքը, չփոխեր իր կրօնն և ուր որ դաղթէ իր հետը կ՚տանի եկեղեցին կամ անոր մասունքը, ուր որ հասնի աչքը կ՚դարձնէ չէ թէ Հայաստան, այլ այն Հայրապետին կամ առաքելական կոչած Աթոռին՝ որ Էջմիածին կ՚գտնուի : Կան Թուրք, անկլեացի, արաբացի, հնդիկ, պարսիկ, ֆրանսացի Հայեր, որ՝ եթէ գլխովին ամուսնական կամ քաղաքական յարաբերութեանց շնորհիւ օտարացած չեն, կ՚խանգարուին

այն Էջմիածնին համար, որու շէնքը Տրդատ Թագաւորը շինած, Լուսաւորիչ օրհնած և Մխիթարն լուսաւորած է, կ'ըսեն: Իրենց բոլոր հին պարծանքներէն այս Հայրապետական Աթոռը ճնացեր է, որ ոչ միայն իբրև իր Հայաստանեայց եկեղեցւոյ կեդրոնն այլ ազգութեան առանցքը կ'նկատուի: Ահա այս է Հայոց բարոյական միութեան խարիսխն, որ թէև խարխուլ, ինչպէս որ պիտի բացատրեմ, ամեն Հայու սրտին խորը մխուած է: Էջմիածին ոչ միայն հոգևոր այլ քաղաքական փառաց ու տենչանաց նշանակն է, այնպէս որ անկից հեռացողն ազգութենէ հեռացած, ազգուրաց կ'համարուի:

Հիմակ հասկըցար, բարեկամ, թէ ինչո՞ւ համար Հայը չհամրեր իբրև բուն Հայ՝ կաթոլիկ, բողոքական, հոռոմ Հայը, որ բաժնուած են այս Աթոռէն: Մեզի համար, որ կրօնակցութիւնն ազգայնութեան երկրորդական պայման մը կը համարինք, անհեթեթ կ'թուի այս դրութիւնն, բայց Հայուն համար շատ տրամաբանական կ'երևի, վասն զի՝ քաղաքական կեանքէ զուրկ, ազգային շահուց գիտակցութենէ և բարուց միօրինակութենէ զուրկ, ապագային մէջ բան մը դառնալու համար անկէ աւելի զօրաւոր յենակ մը չտեսներ, և այս կարծեաց մէջ օր ըստ օրէ կ'հաստատուի երբ կ'տեսնէ որ կաթոլիկը լատին, բողոքականն անկլեացի կամ ամերիկացի, հոռոմն յոյն դառնալու կ'ձկտին, և ամեն ազգային աւանդութիւն ու արարողութիւն կ'անգոնեն, և շատ անգամ Հայ անունը կ'մերժեն: Ըստ իս՝ այս կրօնափոխ մարդիկ՝ որ քննութեան և կրօնից ազատութենէ օգուտ քաղել կ'երևին, աւելի տգէտ, աւելի յիմար են քան թէ իրենց հաւատարիմ հայրենակիցներն, և թող իրենց կրօնափոխութեան աշխարհային դրդիռներն, որոց վրայ ուրիշ անգամ պիտի խօսիմ և որ ձշմարտութեան կամ հաւատոյ հետ գործ չունին, ինքնին ցոյց կ'տան որ վատթարագոյն կարգի մոլեռանդներ են, իրենց նեղ, հալածիչ և ստապաշտ կեղծ

դաղափարներով: Արդ՝ կրօն փոխել՝ հայութիւնն ուրանալ է Էջմիածնայ ջերմ Հայոց համար, որ ուրիշ քաղաքական պատճառ ունի այդ Աթոռը պինդ բռնելու: Միջոց մ'է այն, կրօնական արդի թոյլտուութեան շնորհիւ, բոլոր Հայերն, որ տերութեան ներքև որ գտնուին, բարոյապէս հաւախմբելու և անոր շուքին ներքև զանազան արտօնութիւններ վայելելու: Կաթողիկոսն իրաւունք ունի իշխելու իր ցիր ու ցան հօտին վրայ և անոր հոգևոր հրահանգ ու մխիթարութիւն ուղղելու, իրաւունք ունի դատաստանքի կնճռոտ խնդիրներ լուծել ընդհանրական ժողովներով, ուր աշխարհականներ ևս կրնան բազմիլ, և այս՝ Հայաստանի եկեղեցւոյն հնութեան մէկ նշանաւոր ապացոյցն է, այնպէս որ ամեն խղճահար ու թոյլտու տերութիւն պարտաւոր է Հայոց հոգևոր բարձր իշխանութիւնը յարգել, մի քանի պայմաններով և անոր յարաբերութեանց չմիջամտել:

Բարոյական կամ հոգևոր իշխանութեան տեսական կողմն է այս, բայց գործադրութեան դալով՝ միթէ իրօք Էջմիածին կ'վարէ՞ այդ հեղինակութիւնը բոլոր Հայոց վրայ թէ ոչ լոկ անուանական է այն:

Ահա այս տեղն է խնդրոյն ամենէ փափուկ մասը, զոր եթէ կարենամ պարզել, հարցմունքիդ պատասխան տուած պիտի լինիմ:

Արդ՝ քանի որ Էջմիածին Հայոց կերպ մ'ազգային նշանաբանը, կամ լաւ ևս ըսեմ, ազգայնութեան դրօշակն է, այն տերութիւնն որ այդ դրօշակը ձեռք պիտի ձգէր, բոլոր Հայերն ալ՝ եթէ ոչ նիւթապէս՝ բարոյապէս ձեռք ձգած պիտի լինէր: Եւ արդարև՝ պատմութենէ կ'իմանանք որ ամեն օտար աշխարհակալի նպատակն եղած է այն, որ մերթ Պարսկին, մերթ Արաբացւոյն, մերթ Ցոյնին, վերջերս Տաճիկներուն և մեր օրերը Ռուսերուն որս ընկած է: Սակայն հին Հայերն՝ որ աւելի քաղաքագէտ մարդիկ կ'երևին քան թէ նորերն, ամեն անգամուն որ Էջմիածնայ և անով եկե-

ղեցւոյ վտանգը տեսեր են, զայն Թողեր և Կաթողիկոսն, իբրև կրօնի ներկայացուցիչ, փոխադրեր են տեղէ տեղ, և սովորաբար ընտրեր են այն կողմերն ուր գտեր են աւելի ազատութիւն: Այս ոչ միայն քաղաքագիտի այլ լուսամիտ հաւատաւորի գործ էր, վասն զի՝ հաւատն աւելի սրտի մէջ պէտք է փնտռել ու դրոշմել քան թէ քարի ու տաճարի մէջ: Կ'երևի թէ Հայոց այս կրօնական նախանձայուզութիւնն դադրեր է այն օրն որ Էջմիածին քրիստոնեայ աշխարհակալի դաւազանին տակն է ճնացեր: Մինչ կարելի էր որ քրիստոնեայ պետութիւն մը քրիստոնէութեան դէմ դարան լարէր: Այս բանս անհաւատալի կ'թուէր Հայուն, թէև Յոյնին օրինակն ունէր, և չէր կարող մտածել իր պարզմտութեամբն որ կրօնն և ամեն սուրբ բան պիղծ նպատակի մը հասնելու գործի կրնար դառնալ հնարագէտ քաղաքականութեան մը ձեռքը: Հետևապէս Ռուսիոյ կառավարութիւնն հետզհետէ կ'կապէ ու կ'կաշկանդէ այդ Էջմիածինն ու իր գահակալն և անոնց իրաւասութիւնն ու արտօնութիւնները կ'սեղմէ՝ այս բանաւոր փաստին վրայ յենլով՝ թէ իր տէրութեան օրէնքն ամեն քրիստոնեայ հասարակութիւն նոյն չափով կ'չափէ: Այսպէս Հայք ևս իրենց չափն առած կ'երևին, և Աթոռ ու Աթոռակալ նշանակութիւն չունին ոչ իսկ հոգևորական: Վասն զի այդ իշխանութիւնը լոկ անուանական է, և կ'գործածուի միայն քաղաքական նպատակի և Հայոց բարի տրամադրութիւններն դէպ ի Ռուսիա գարձընելու համար, մինչև որ Էջմիածին լիովին անշքանայ և ռուսական եպիսկոպոսութեան մը վերածուի՝ հայանուն Աթոռակալով մը և կրօնական միարարութեան գաղափարը՝ որ արդէն կ'ընդնշմարուի, բոլորովին իրագործի: Եւ այս միարարութեան գործն ի կատար հանելու համար ինչ հրապուրելի միջոցներ չունի հզօր տէրութիւն մ'իր բանակին, իր պաշտօնատանց, իր գպրոցներուն մէջ, ուր հայ զօրապետներ, հայ պաշտօնաւորներ ու դատաւորներ, հայ

ուսանողներ կ'փայլին իրենց շքանշաններով և տհայ գաղափարներով: Այս բաւական չէ, տար երկիրներ, մանաւանդ Թուրքիոյ մէջ դտնուող Հայոց վրայ՝ պաշտպան ձեռք մը կ'կարկառէ այն հզօր տէրութիւնն, և իբրև կրօնակից կամ Էջմիածնայ ազատ հաւատաւորներ իր հովանին անոնց վրայ կ'տարածէ, երբ հարստահարութեան ենթարկին, կամ իր դրդմամբ բռնաբարութիւններ գործուին: Ջերմ ախոյեան կ'կանգնի նա քրիստոնէից՝ մինչև որ ծուղակը նետէ զանոնք, մինչդեռ իր ընդարձակ պետութեան մէջ՝ իր ջափնին շնորհիւ՝ տարբեր դաւանութիւնները կ'հարուածէ:

Արդէն թակարդն ընկած են Հայք, այնպէս որ իրենց Կաթողիկոսն Ողորմած կայսեր կենաց ու գերդաստանին համար երկար մաղթանքներ ընելու ատեն, իր հոգևոր հօտն ալ անոր պաշտպանութեան կ'պիմէ ամեն անդամուն որ քիթն արիւնի կամ գլուխը ցաւի: Մեր գեսպանը չունի բնաւ ռուս պաշտօնակցին ազդեցութիւնը Բ. Դրան և քրիստոնեայ հասարակութեանց վրայ, և միայն երբեմն բողոքական դասուն դասը կ'պաշտպանէ: Թուրքիոյ մէջ գեսպանական պաշտօնը կերպ մը լրտեսութենէ զատ՝ կրօնական առաքելութիւն մը կ'գառնայ որ իր հօտն ու փծուն կուիներն ունի, քաղաքական վէճերով խառն, և որ մեծ, քաղաքակրթիչ գաղափարներու քաջալերը լինելու տեղ, դիւանագիտական և շահագիտական դաւերու մէջ կ'թաւալի, և բաւական տաղտուկ կ'պատճառէ նոյն իսկ արդի Սուլթանին, որ թէև նկուն վերջին պատերազմի դաշտին մէջ՝ միշտ իր բնաւորութեան աննկուն մեծութիւնը կ'պահէ և գեսպանական սպառնալիքէ վախցող մարդ չէ:

Այսպէս Ռուսիա կ'տիրէ Էջմիածնայ և անով Հայոց սրտին վրայ, մինչև որ մարմիններն ալ կաշկանդելու պատէհ ժամը գայ: Բայց թերևս հարցընես թէ — Ինչու համար Հայն այդ լուծը չքակեր, Էջմիածինն աւելի ազատ վայր մը փոխադրելով — վասն զի չզղար որ վիզը լուծ ունի. նախ ա-

նոր համար որ Ռուսն օտար երկրի մէջ յետին ծայր աղա-տասէր, մինչև իսկ ռամկավարական է, մինչդեռ իր բնիկ հողին վրայ առ հարկի յետին ծայր բռնասէր. երկրորդ ա-նոր համար որ Ռուսիոյ հայն այնպէս լաւ մը կաշկանդուած է ու լեզուն բռնուած՝ որ չէ կարող իր վիճակը բացէ ի բաց յայտնել, վէրքերը ցոյց տալ նոյն իսկ իր Թուրքիա-բնակ հայրենակցին, որ կ'կարծէ թէ լինք փուշերու վրայ կը պառկի իսկ Ռուսիոյ հայը վարդերու վրայ, և անոր վիճա-կին կ'տենչայ . . . :

Բայց մի կարծեր թէ Հայը լոկ ՃԿ կրօնական գլուխ ու-նի, այլ երեք: Կաթողիկոսական աթոռն ուրիշ տեղ փոխա-դրելու պէտք չունի: Արդէն երկու հատ կան, Աղթամա-րայ ու Սսոյ, Հալածանքի ու քաղաքական փոթորիկներու բե-կորներ: Ի՛նչ ազատ եկեղեցի, պիտի գոչես, նուիրապետա-կան գրութիւն, կրօնի այս պատուհասը չունի, այլ պար-զապէս հանրավարական հիմնարկութիւն մ'է: — Համբերէ, բարեկամ: Այդ միւս աթոռները հակառակ կ'սեպուին Հայոց առջև, այսինքն Արարատեանին իրաւասութեան ներհակ, թէև անոր չափ հոգևոր իշխանութիւն կ'վարեն սահմանա-փակ շրջանի մը մէջ: Ոչ այնքան քաղաքական որքան այս հոգևական երրորդութիւնն պատմական նշանաւոր և Հայոց արդի կացութեան շատ նպաստաւոր պարագայ մ'է, որմէ կարելի է շատ մեծ օգուտներ քաղել, քանի որ կրօնը մեծ դեր կ'խաղայ Արևելքի մէջ և՝ եթէ երկինքն արքայութեան՝ երկրի վրայ ազատութեան դուռը կրնայ բանալ: Բայց ինչ կ'ընեն Հայք: Աղթամար ու Սիս, որ իրենց քոջն են, կը թողուն ամայի ու անպաշտպան, և Էջմիածինն, որ շատ հեռու է, չերմեռանդութեամբ կ'խնկարկեն, եթէ կէս մը կրօնասիրական կէս մ'ալ քաղաքական նպատակաւ: Ըստ իս՝ բոլորովին այս ընթացքին հակադարձն է բանաւորը: Պէտք է տաքնալ Սսոյ հետ և Էջմիածնայ պաղ դէմքը մը ցոյց տալ: Այս դիրքով ղղալի հարուած մը կ'տրուի այն քաղաքակա-

նութեան որ Էջմիածնայ բարոյական իշխանութիւնը չնչելու կ'նկրտի: Այնատեն կամ Ռուսն Հայոց համակրութիւնը չկորսնցնելու համար Էջմիածնայ հին իրաւունքներն և մին-չև անգամ ազատութիւնը թերևս պիտի շնորհէ, կամ բո-լորովին զայն պիտի քանդէ: Եթէ շնորհէ, կ'շահի լիովին Թուրքիոյ Հայերը, եթէ քանդէ, ոչ միայն այս այլ և Կով-կասու կողմի Հայերը ձեռքէ պիտի հանէ: Երկու պարա-գային մէջ ալ շահաւոր պիտի ելնէ հայութիւնն, որու հի-մը կ'դաւանի իր եկեղեցին իրաւ, սակայն իր անգիտութեամբ այդ հիմն իր ձեռօքը կ'քակէ: Եւ այս այնչափ իրաւ է որ իրեն աջակից կ'գտնէ Ճիշդ այն տերութիւնն որ շահ ունի Սսոյ կործանման մէջ: Այս աջակցութիւնը բաւական զօ-րաւոր փաստ մ'է, եթէ ուրիշ ապացոյց իսկ չլինէր, Հա-յուն աչքը բանալու Ճշմարտութեան, նա մանաւանդ եթէ նկատուի որ՝ երբ իր ձեռօք Սսոյ դէմ փորձերն ապարդիւն կ'ելնեն, Թուրքիոյ կառավարութեան առջև իբրև ապստամ-բութեան վառարան կ'նկարագրեն զայն և այդ կառավարու-թիւնն ալ, առանց քննելու այդ թելադրութեան ներքին դրդիռը՝ կ'հաւտայ և կ'գործէ իր շահուց դէմ:

Արդեօք չկայ ուրիշ ապահով միջոց մը Հայոց եկեղեցին ամեն արտաքին ազդեցութիւններէ ղերծ և անկախ պահե-լու: Կայ անշուշտ, բայց զայն ի գործ դնելու համար կամ-ոյժ պէտք է և կամ տերութեանց հաւաքական պաշտպա-նութիւնը. քանի որ արդարութեան և կրօնից ազատութեան ձայնը դեռ ևս անլսելի կ'մնան . . . :

Այսպէս կ'դնեմ խնդիրը: Հայերն մի քանի քաղաքական Տիրապետներ ունին, բայց կաթողիկոս մ'որ իրենց հո-գևոր տէրն է: Արդ՝ այս տէրն հասարակաց Հայր է, ամեն քաղաքական նպատակի օտար, հետևապէս և ոչ մէկ տե-րութեան հպատակ այլ ամենուն հաւասարապէս: Թէև Էջ-միածին Ռուսիոյ հողին վրայ, անոր գահակալն ընտրողը միայն Ռուսի Հայը չեն, այլ և Թուրքիոյ, Պարսկաստանի

ու Հնդկաստանի Հայք, այնպէս որ այս ընտրութեամբ անբռնաբարելի կ'դառնայ իր անձն և իրաւունք ունի հովուելու իր ժողովրդն և անոր կրօնական բոլոր պիտոյքը հոգալու։ Ուստի իր անձն ալ չէ կարող կապել այս կամ այն վեհապետին կամայ այլ բոլոր այն վեհապետներուն որոց իշխանութեան ներքև կ'գտնուին Հայք։ Այսպիսի եղական հանգամանօք կրօնապետ մը, եղական դիրք մ'ունենալու կը պարտաւորի, այնպիսի դիրք որ ոչ մանաւանդ վեհապետէ մը կախումն ունենայ, այլ չէզոք միայ ամենուն առջև։ Այս բարոյական չէզոքութեան կլխաւոր մէկ պայմանն է չէզոք հողմ մ'ուր պէտք է նստի կաթողիկոսը, այն տէրութեանց համերաշխ հովանաւորութեան ներքև որոց կ'հպատակին Հայերը։

Այս չէզոքութիւնը կ'պահանջեն ոչ միայն Հայոց կրօնականն շահերն այլ և այդ տէրութեանց իրաւունքն, որ այժմ կ'բռնաբարուի, քանի որ այդ իրաւունքը միայն Ռուսիա կը գործածէ և վաղը կրնայ ահաւոր այժ մը դառնալ իր ձեռքն եւրոպական քաղաքականութեան վրայ ծանրանալու, այն իրաւամբ որ կաթողիկոսն իր հողին մէջն է և քրիստոնեայ հայութեան ներկայացուցիչն է։ Բայց հողը չէ կրօնապետին իրաւասութիւնը կազմողն այլ իր անձին յարակից հանգամանքն ու ժողովրդային ընդհանուր ընտրութիւնը, այնպէս որ աշխարհական իշխան չէ նա այլ հոգևոր հովիւ, որ այժմ՝ պատերազմի դիպուածին բերմամբ՝ ակամայ գործիք կ'դառնայ տէրութեան մը և կ'ստիպուի քաղաքական բռնութեան զոհել թէ իր ժողովրդեան և թէ քրիստոնէութեան հոգևոր շահերը։

Բայց կ'զարմանամ թէ այս կարևոր խնդիրն, որ թերևս Հայոց մտքէն անգամ չանցնիր կամ շատ քիչեր կ'մտածեն, ինչպէս չգրաւեր այն տէրութեանց ուշադրութիւնն որոնքբնոց հպատակները բարոյապէս կառավարելու իրաւունքն ունի կ'յանձնեն և չեն բողոքեր անիրաւութեան մը դէմ որ

երկին մէկն մեծագոյն անիրաւութիւններ կրնայ ծնիլ և եւրոպիոյ խաղաղութիւնը վրդովելու տեղի տալ։ Քրիստոնէութեան շահերը պաշտպանելու իրաւունքը չէ տրուած միայն Ռուսիոյ, որ այս պաշտպանութեամբ ընդհանուր համակրութիւն կ'գրաւէ, այլ բոլոր այն տէրութեանց որ թերևս իրմէ աւելի քրիստոնեայ են, թէև տարակրօն, բայց ոչ իրեն չափ հեւատես ու խորագէտ։ Անշուշտ Հայն իր տարաբնութեամբն ու դժգոհութեամբը չէ կարող ոչ այս խնդիրը լուծել և ոչ անոր կարևորութիւնն զգացընել, եւրոպական տէրութեանց կոչնամ ընելով, որոց հետ սակայն՝ իր ազգային եկեղեցիով՝ մանաւանդ կրօնական առնչութիւն մը չունի. բայց սոյն տէրութիւններն, որ անհաշտ խնդիրներու համար տարիներ կ'բանակցին և երբեմն բանակներ կ'շարժեն, յանցապարտ են և ազգային մէջ պիտի տուժեն՝ Հայուն պէս Ասիոյ մէջ նշանակութիւն ունեցող ժիր ու արթուն ժողովրդեան մը շահերն անտես առնելով։

Բայց պէտք է նաև ըսել որ Հայը պարտաւոր է առնուլ առաջին քայլը, և եթէ այսօր Սիսն Էջմիածին ընէ, շատ հաւանական է որ վերջէն տէրութիւններն Էջմիածինն իր տեղը բերեն անկախ ու չէզոք սահմանի մէջ, այսինքն կաթողիկոսական իշխանութիւնն իր նախկին պարզութեան և մեծութեան մէջ հաստատելու ջանան իրենց համախոհութիւն դրօշակին ներքև . . . ։

Այս կարծիքս, բարեկամ, թերևս անուրջ երևի քեզ, բայց քանի քանի անուրջներ ժամանակին հետ իրագործ են, մարգկային իմացականութեան զարգացմամբ։ Աւելորդ է աւելի խօսիլ այս կիսին վրայ, որ բաւական թուղթ պրաւեց։ Այս կ'տեսնեմ միայն որ Հայոց Էջմիածինը լոկ պատմական հին անուն, կաթողիկոսութիւնն պատկառելի անհատութիւն պիտի մնան եթէ ժամանակիս գաղափարներով չայլափոխին։ Եւ Հայը դէթ մտաւորապէս ու բարոյապէս հաղորդակից ու միանալ չպիտի կարենան, այնպէս որ աղգային

յառաջադիմութեան գործը յառաջ տանին իրենց այժերն ամ փոփելով, եթէ ներկայ անզգայ, դանդաղ ու վտանգաւոր դիրքը պահեն։

ՆԱՄԱՆ ԵՓ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնդոն . . .

Նորէն պառնանք, բարեկամ, սիրային խնդրոյն որ օր ըստ օրէ կ'կնճռոտի, և՝ քանի անոր խորը կ'մտնեմ, կ'ամ պռտի։ Մութ քարայր մ'է սէրն ուր կամ պէտք է աչքը կապած ներս մտնել կամ անոր բոլորտիքը շրջիլ։ Հիներն իրաւունք ունէին սէրը կոյր նկարել, մինչդեռ դու կ'սիրես, և կ'ուզես նաև տեսնել, քարայրը ճրագով մտնել։ Ուր որ պատրանք չկայ, սէր չկայ։ Զըսեմ որ այդ չունիս դու, այլ միայն հետաքրքրութիւն։ Իրաւ՝ հակասական դիրքի մէջ ես և գիս ալ բաւական փափուկ դիրքի մէջ կ'նետես։ Ախսոլիսի պահանջումներ կ'ընես, որ թէև ինքնին բանաւոր, սիրոյ սահմանէն դուրս ես։

Ճիշդը՝ ես ալ սկսայ շփոթիլ և անյայտ գարձածը չհասկընալ։ Տեսայ լէտի Իսահէմն, նոյնպէս տոքթօր Բէյնը, խնդրոյդ համեմատ, իսկ Լիլին ոչ։ Նոր լոյս չտաւ բանակցութենէս այլ կասկած ու ծանր խօսքեր, վասն զի դու կողմէդ քարայրը մտայ ճրագով։

Հիմակ պատմեմ քեզ, բարեկամ, բանակցութեանս արդիւնքն, որ շատ ախորժելի չէ։ Ամպոտ օր մ'իրեւ այցելու գացի լէտի Իսահէմին, որ գնաւ Ռիչմընտ կ'գանուի։

Դիտմամբ մութ օր ընտրեցի այդ կնոջ հաճելի և ընդունելի լինելու համար, վասն զի հասուն կիները չեն սիրեր լոյս օր, որ իրենց դէմքին անհարթութեանց մատնիչն է։ Երբ ներս մտայ՝ բազմեր էր նա ահագին ընկուզի աթոռի մը, կամ լաւ ևս ըսեմ՝ անկողնակի մը վրայ պառկեր էր. քովն ունէր կիսբաց գիրք մը, ոտքի տակն աթոռակ, և ինքն վերէն վար սևեր հագած՝ ոսկեզօծ պատուհաններու պերճ վարագոյրները քաշած՝ կարծես թէ լուսթիւն ու մթութիւն կ'փնտռէր, և անշուշտ նոր մեքենայութիւն մը կ'նիւթէր։ Երեսը կախ էր և շատ պաղ կերպով ընդունեց զիս, հաղիւ դլուխը ծռելով, և աթոռ մը ցոյց տուաւ լինձ որ նստիմ։ Նշմարեցի մօտէն իր ներքնի սուգն ու յուզմունքն և գուշակեցի փոթորիկ մը։ Քաղաքավարական քանի մ'աննշան ձևերէ եաև՝ քիչ քիչ խօսքը Լիլիին վրայ բերի և՝ բան մը չգիտցողի պէս՝ ըսի.

— Տիկին, պարտքս է, այս առթիւ, շնորհաւորել օրիորդ Լիլիի նոր կեանքն և լէտի Տէնտիին ազնուր օրեր մաղթել։ Ցուսամ որ երջանիկ է։

— Շատ» պատասխանեց լէտի Իսահէմ՝ շրթունքը թեթև մը խածնելով, որ ներքին սրտմտութեան և քինու նշան էր, և ապա յարեց — Եւ դու ալ շատ բարի ես, Պարոն Վուտ, որ իմ սիրելի աղջկան բաղդին կ'համակրիս. միայն կ'փափաքէի դիտնալ թէ սրտէդ թէ ոչ իրեւ քաբեկեղծ թարգմանը կ'խօսիս։

Այս քաբեկամ բառն այնպէս շեշտեց որով իր սրտին թոյնը մատնեց, ձշմարտութիւնը աքօղել ուզելով։ Զգացի այս քարն և պատրաստուեցայ պայքարին։

Այս առաջին սլաքն անարգիւն դտնելով՝ ուզեցի նոր մը, աւելի կծու մ'արձակել և անմիջապէս վրայ բերի.

— Տիկին, բնական է որ այս պարագային մէջ բարեկամիս թարգմանն իմ լեզուս լինի, քանի որ նա, իրեւ զինուորական՝ սուր ունի։

— Հա՛, հա՛, ըրաւ լէտի Խտհէմ, և այդ քաջն ինչո՞ւ համար չհաներ սուրն իր պատենէն որ տեսնենք։

— Կ՚երևի թէ բան մը կիտէ։

— Ի՞նչ գիտէ, հարցուց լէտի Խտհէմ աչխուժով մը։

— Ինչ որ դուք կիտէք։

— Իմ դիտցածս ըսի, պարոն, և կ՚զարմանամ որ թերևս կ՚տարակուսիս իմ խօսքիս վրայ . . . ։»

Այս յանդուգն ստախօսութեան չկրնալով համբերել, միտքս դրի քօղը պատռել և սրաքիթ զրքանչդ նեղը ձգել։ Ուստի ըսի.

— Տիկին, պ. Տէնտի ևս կ՚տարակուսի, իր նշանածը կը ճնշոտէ . . . ։»

Այս խօսքիս՝ լէտի Խտհէմի սրտին մէջ գտնուած դոյզն ինչ արիւնը կ՚լճանայ զարկաւ։ Իր դեղնորակ ճակատն, որու խորշոմներն ընդունայն հարթեր էր սպիտակ փոշիով, կարմիր գոյն առաւ, թեթև դող մը բոլոր մարմինը բռնեց այնպէս որ կարծեցի թէ պիտի մարի, ինչպէս որ դիտեն մարիլ շատ կամշոտ ու ջլուտ կիներ երբ բանաւոր պատասխան մը տալու անկարող կ՚գտնուին։ Բայց իմ կարծածիս հակառակ, լէտի Խտհէմ ոտք ելաւ փրփրած և իր մանր ապակի աչերն իմ վրայ սևեռելով,

— Պարոն, ըսաւ, շատ յանդուգն ես, պատշաճութեան դէմ կ՚վարուիս և զիս կ՚անպատուես իմ տանս մէջ. . . ։ Այս բաւական չէ, դու լրտեսի պէս կ՚ներկայիս և բան իմանալ կ՚ուզես, իմ անկեղծութիւնս փորձելով։ Պէտք չունիս այդչափ հետաքրքիր լինելու և իմ անային նեղքին դարձերուս խառնուելու։ Դու ամուսնոյս բարեկամն, անարժան ես իր վստահութեան, և քաջ կ՚դիտեմ որ ի վաղուց մեր առ անին անդորրութիւնը վրդովելու երդմներ ես, քաջեկաղդ սիրոյն համար։ Բայց գիտցիր, պարոն, որ իմ աղջիկս՝ ամուրի թէ ոչ, չպիտի լինի երբեք այդ մարդուն կինն, և եթէ իր զուրքն փորձէ ինքզինք թիարան պիտի զանէ։ Լիլլին կ՚սպասեմ և այդ դունհիկ մարդուն չեմ տար։ Կ՚իմանա՞մ, Պարոն Վ. . . .

— Բան մը տալու համար, տիկին, պէտք է այդ բանն ունենալ . . .» ըսի պազ արիւնով։

Լէտի Խտհէմ՝ այս ակնարկութեանս վրայ՝ ինքզինքը կորուս և աթոռին վրայ ընկաւ շնչասպառ։

Անօգուտ էր վիճիլ կնկան մը հետ, որու փաստը մարմրուքն էր, և անոր անհեթեթ այլաբանը խօսքերը հերքել։ Ուստի լռեցի և օգնեցի լէտի Խտհէմի որ սթափի։ Երբ աչքը կէս մը բացաւ, ձեռքն ուսիս վրայ դնելով հառաչեց.

— Դու անգութ մարդ ես. դժբաղդութիւնս կ՚հեգնես։ Կ՚երևի թէ ամեն բան գիտես, և թերևս մատ ունիս անոր մէջ, թէև ոտքէտ կ՚ձևանաս . . . դիտեմ արդեօք, սէրելի պարոն, ո՞ւր է իմ սիրական աղջիկս, զոր ընդունայն կը փնտռեմ. . . խօսիր, կ՚աղաչեմ. . . ։»

Լէտի Խտհէմի այս յանկարծական փոփոխութիւնն որով իր պարտութիւնը կ՚խոստովանէր, այնքան չզարմացուց զիս որքան իր հարցումն, որու պատասխանն իրմէ առնելու մտօք այս այցելութիւնն ըրեր էի։

— Ձեմ դիտեր, տիկին, ըսի, և կ՚սխալիս եթէ կարծես թէ ես կ՚գաղտեմ։

— Ուրեմն օդնէ ինձ զանի դանելու, և ես շնորհապարտ պիտի ճամ քեզի, և թերևս կարծիքս ալ շտկեմ բարեկամիդ նկատմամբ։»

Բարոյական խօսելու, անպիտան մայր մը խրատելու առեներ չէր։ Լէտի Խտհէմ պարզապէս զէնք կ՚փոխէր։ Տեսնելով որ կիզծիք ու սպառնալիք չէն զօրեր, զիս շահիլ կ՚ուզէր երևոյթական մանրմտութեամբ. կարծելով որ ճշմարտութիւնը կ՚ծածկեմ, բերնէս խօսք առնելու փորձեր կ՚ընէր։ Բայց այս մասին իրեն չափ տգէտ էի։ Պատմեց ինձ մեր արդէն գիտցածն և Լիլլին անհետանալեան վրայ լացաւ, ողբ-

քաց, սակայն տոքթօր Բէյնի վրայ կասկած չյայտնեց: Վշտակից ձևացուցի ինքզինքս, խօսք տուի օդնելու և երբեմն իրեն այցելութեան գալու: Ի վերջէ տեսայ որ անօգուտ է երկարել խօսակցութիւնս և մեկնեցայ:

Քանի մ՚օրն ետք՝ տոքթօր Բէյնը գտայ: Ա՛յս տեսակցութիւնս աւելի ծանրակշիռ էր: Առջևս ունէի լրջամիտ, անկեղծ, դիտուն մարդ մ՚որ կատակ չէր տաներ: Սակայն շատ տխուր ու խոհուն տեսայ զինք. իր սովորական զուարթ դէմքը չունէր: Կարծեցի որ իմ տեսութենէս դժգոհ էր: Վերջէն պատճառն իմացայ:

— Լուր չե՞ս հարցներ, տոքթօր, իմ բանակցութեան վրայ:

— Ի՞նչ հարցընեմ, կ՚սպասեմ որ խօսիս: Փշո՛ւտ, փշուտ խնդիր:

— Ստուգիւ եմ կարծածէս աւելի:

— Ի՞նչ կայ:

— Կարճ խօսիմ. բարեկամս, որու անունն է նեղսօն, անհամոզելի կ՚ձևայ: Ինչպէս ամեն սիրահար, կասկածոտ է և անվստահ ու գործին մէջ կարծէ գաւ տեսնել: Ինքն այն ատեն պիտի համոզուի որ օրիորդն իրեն համար խոյս տուեր է, և Անկլիա պիտի վերադառնայ անոր մօտ, երբ ես աչքովս տեսնեմ Լիլին և իր ձեռքն երկտող գիր մ՚առնում, սիրոյն յայտարար: Ազնիւ տոքթօր, խօսքդ ունենալէ ետև՝ այս պահանջումն աւելորդ է, իրաւ, բայց ո՞րտե՛ղ կ՚ըսես: Ա՛յս է խնդիրը:

— Շատ օրինաւոր կ՚գտնեմ, միայն կ՚ցաւիմ որ քեզ գոհ չպիտի կրնամ ընել, չէ թէ չեմ ուզեր այլ չեմ կրնար:

— Եւ ինչո՛ւ:

— Վասն զի, քանի մը շարաթ առաջ մերժեցս թէև այժմ յօժար եմ կատարելու, բայց ձեռքս բան չկայ:

— Ի՞նչ ըսել կ՚ուզես, տոքթօր, Լիլին . . .

— Ձկայ:

— Ի՞նչ եղաւ:

— Անհետացաւ:

— Ո՞ւր:

— Ո՞վ գիտէ:

— Զարմանք . . . :

— Մանիկ րոպէ, պարզ պիտի պատմեմ. ղրկացած եմ այս կնճռուտ գործին մէջ մտնելուս: Լիլին՝ իբրև անգին աւանդ՝ իմ եղբօր տունն, Ուայթ կղզին, կ՚պահէի: Անցեալ օր ինձ պիտի մ՚ասի որով կ՚յայտնէր թէ Լիլին անյայտ եղեր է: Խսկոյն փութացի կղզին գալ. գործը քննեցի, Լիլիին ձեռօք գրուած տոմսակ մը գտայ իր սենեկին մէջ, այս իմաստով.

«Սիրելի բարերարս Տոքթօր Բէյն,

«Ձու վրադ բեռ մ՚եմ: Պէտք է որ պատասխանատուութենէ քեզ ազատեմ: Երբէն չափահաս եմ, և անկլիական օրինօք իմ ձակատագրիս տէրը: Կ՚մեկնիմ ամերիկա եղբօրդ տունէն երախտագիտական ղրկացուցիներով. բայց վստահ և անհոգ եղիր, յուսահատական կամ յանդուգն քայլ մը չպիտի առնում: Պէ՛տք ապրիմ և պարտաւոր ապրիմ: Երևակս լսես օրին մէկն իմ վրայ լուրեր: Ընդունէ՛ իմ սիրալիր ողջոյնս:

«ԼԻԼԻ»

«Ուայթ 183. .

— Ա՛յս գիրն որ կարդացի, յարեց տոքթօր Բէյն, գոհ եղայ, բայց միաքս անհանգարտ էր, և ասոնց անդին ընկայ այս երկրորդ փախուստին պատճառն ու տեղն իմանալու համար: Պարապ ելաս ջանքս: Կղզւոյն մէջ՝ իմ ընտանիքէս զատ՝ ոչ ոք պիտէր եղելութիւնը և ցարդ կ՚մտածեմ թէ ոճրագայած կրնայ լինիլ այնպիսի փափկասուն, երկչոտ այլ հպարտ օրիորդ մը, վանատուն, հիւանդատուն, դործատուն

թէ ուրիշ երկիր : Իրաւ՝ ապրուստի բաւական միջոցներ ունի : Իր հօրը տունէն ելլելու օրն հետն առած իրեն յատուկ գոհարներն իր կենայ սլիտոյքը հաւթայթելու կ՚բաւեն , իրաւ , բայց չեմ հասկըմար , իմ բոլոր գիտութեամբս , թէ ինչ պատճառաւ իր սիրահարէն կ՚հեռանայ , ձիշտ այն միջոցին որ գործը կարգի դնելու կ՚խորհէինք : Երկեօք անոր մօտ գնայ , Արևելք :

— Անշուշտ Պ. Նելսօն կ՚դրէր ինձ , եթէ երբէք գացած լինէր : Գիտէր արդեօք մեր բանակցութիւնն իր սիրոյ մասին :

— Ո՛չ , և այդ տեղ սխալեցայ : Պէտք էր յայտնել և յուսագրել : Բայց նա այնքան գաղտնի կ՚պահէր իր սիրոյն առարկան որ չէի համարձակեր խօսելու : Ինչպէս հաստատ համոզման նոյնպէս անկեղծ ու անմեղ սիրոյ առջև մարդ կը պատկառի : Սակայն միւս կողմէ կ՚զարմանամ թէ ինչպէս այս գաղանապահ ու անփորձ օրիորդն յանկարծ այսպիսի յանդուգն քայլ մ՚առաւ : Այսպիսի օրիորդներ՝ որ մերթ ձնշում կրած և իրենց սրտին զգացումներն շարունակ զսպած են , երբ ազատութիւն դանեն՝ սաստիկ անդուսպ ու ազդու քնաւորութիւն մը կ՚ցուցընեն և յանդգնութեան տիպարներ կը դառնան : Պ. Նելսօնէն անյոյս և միանգամայն գոռոզ՝ Լիլի , քաջ գիտցիր , որ նոր ասպարէզ մ՚ընտրած է ընտանեկանին տեղ , և ինչպէս ինձ կ՚ըսէ , օր մ՚իր անունը պիտի լսուի , թերևս գիտական կամ գրական աշխարհին մէջ փայլուն նշոյլներով : Ուստի համբերութիւն : Գրէ՛ բարեկամիդ այս ըսածներս , որ ձշմարտութիւն են , և եթէ վերստին թեւթափահաւաճի , թող ինք ելնէ ու սիրտին փնտռէ : Ես ազատեցի զինքն իր ոսկեզօծ վանդակէն որ իրեն յանձնեմ՝ նա ուշացաւ , մինչև որ թռչնիկն թևերն երկնելով՝ թռաւ : Ի՞նչ ընենք : Այս է իրողութիւնը . սակայն եթէ երբէք լուր մը առնեմ Լիլիին վրայ քեզի կ՚հաղորդեմ , սիրելի Վուտ :»

Ահա այս է բանակցութեանս արդիւնքը : Լէոի խոտհեմ իմն տեղեկութիւն կ՚սպասէ . Պ. Բէյն խնդիրդ չէ կարող

կատարել , վասն զի օրիորդն անհետացեր է : Ես ալ ակսայ շուարիլ և քեզի սլէս վարանիլ չէ թէ Պ. Բէյնի անկեղծութեան վրայ , այլ խնդրոյն այլանդակութեան վրայ : Հիմակ մեզմէ մի իրաւունք ունի : Եթէ օրիորդն այս ձևն առաւ , որու է յանցանքը . . . քու կը : Սարդէ , մեր չորս դին խաւարն աւելի թանձրացաւ , բայց այս խաւարին մէջ կէտ մը կայ լուսաւոր . Լիլին ողջ է :

ԳԼՈՒԽ ԼԲ

ՆԵԼՍՕՆ ԱՒՐ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Սարդիկեան երկայնամտութեամբ կարդացի գիրդ , բարեկամ , դիր մ՚որ ստոյգ ու տխուր դոյներով կ՚պատկերէ իմ վիճակս և եթէ ոչ իմ սիրոյս մահավճիռն է : Թերևս իզմէ նուազ անփորձ ու դժբաղդ սիրահար մը լար ու ողբար անոր առջև և իմ մարած յոյսերուս վրայ ափսոսար , սակայն ես , եթէ ոչ անզգայ , անվրդով մնայի : Ո՛չ զարմացուց զիս այն և ոչ սիրոս յուզեց , վասն զի՝ իմ անընդհատ թշուառութեանս մէջ , չսպասեր ինձ անակնկալ լուր մը , ծանր աղէտ մ՚որու արդէն պատրաստուած չլինէի :

Լէվի անբաղդ եղեր է , բարեկամ , և միթէ առաջ երևելի՞ էր ինձ . Լէվի չէր , և միթէ առաջ կար ինձի համար : Նա միայն վայր փոխեր , տունէ մ՚ուրիշ տուն կամ քաղաք անցեր է , սակայն իմ դիրքս , իմ կասկածներս , իմ վիշտերս նոյնը կ՚մնան : Բայց ո՞ւր գացեր է : Միշտ այս կէտն

ինչպէս առաջ նոյնպէս հիմակ անստոյգ է, ուստի և անմեկնելի: Բոլոր ջանքը անօգուտ եղեր է Թահէր վարագոյրը պատռելու: Եթէ կայ կէտ մը միխթարական, այս է որ Լիլլին կենդանի է, այս տարբերութեամբ որ իր նոր առած քայլով պրեթէ անդոյ էակ մը կ'պատճառայ մեզի համար ու այնպիսի խորհրդաւոր վիճակ մը կ'ընարէ որ իր հետն հաղորդակցելու անհնարութեան մէջ կ'թողու զինս:

Այս ամէն ձախողութեանց մէջ է պատասխանատու, բայց եթէ ես, այսինքն իմ անբաղդութիւնն. և սկսայ բաղդին հաւասար: Իրօք՝ ինչպէս ուրիշ առթիւ ալ ակնարկած եմ, կոյր պատահարներ կ'մղեն մարդս ճամբայ մ'որու մէջ սակայն տրամադիր չէ մտնելու, ինչպէս որ կոյր բնազդ մը զինք կ'ներտէ աշխարհ մ'որու ծայրն ու վախճանն իմ սեւ ճակատագրիս պէս անմկնելի են: Եւ կամ աշխարհ, կամ իրաւունք, արդարութիւն անոր մէջ, քանի որ Լիլլին չկայ. կամ զեղեցկութիւն, առաքինութիւն, երջանկութիւն անոր մէջ, քանի որ Լիլլին չկայ . . . : Եթէ կայ, այն ալ անօրէն, յանդուգն ու անխիղճ մարդոց համար է, որ իրրև մրջուններ կը ճզմեն իրենց ոտից ներքև այն հոգիներն որ ճշմարիտ սիրոյ և արդարութեան զգացումն ունին: Ասոնք՝ իրենց պարզամտութեամբ աշխարհային անձուկ ու վատ կրից զոհ ու խաղալիկ պատճառ եւան՝ կ'հանդչին անհունութեան մէջ, հեռք չմոռցուիլ, նման այն մանուկներու որ անապատի մրրիկներու մէջ անյոյս ու անշունչ կ'մաշին, բոցակէզ արեւուն ներքև կ'տաքնան և աւազի լեռներու ներքև կ'անհետին:

Ես ալ, բարեկամ, պիտի թաղուիմ յաւիտենականութեան մէջ անյայտ, իրրև փոշի մը պահ մ'օդին մէջ սաւառնելէն ետև, և ոչ ոք պիտի հարցնէ, որ երբեմն Նելսօն մ'իրրև մեծագրա երևցեր է աշխարհիս հորիզոնին վրայ և ընկեր գացեր է . . . չառաւիղ մը չմոռցով:

Շեմ ուրանար որ մեղապարտ եմ, սակայն չեմ կարծեր որ Լիլլին ալ այնքան հպարտ լինի որ՝ առանց հրաժարական քա-

րեւ մը տալու, մեկնի, Թերևս ուրիշ ծովեր ու ափունք փնտռելու, Թերևս իր հայրենի տունը չդտած երջանկութիւնն ուրիշ շրջանի մէջ որոնելու, Թերևս իր աստանդական սիրահարին տեղ ուրիշ մ'երջանիկ ընելու . . . : Ա'հ, այս դաղափարը միայն իմ կեանքս կ'խորտակէ և այնքան զառն է ու անտանելի որքան իմ մահը ծագումս . . . :

Երբեմն, և այս օրերս սաստիկ կ'ըսեմ ինքզինքիս. — Անտարակոյս Լիլլի իմացած պիտի լինի իմ կեանքս գաղտնիքը, և արհամարհելով զիս, մեկնած պիտի լինի . . . հասանելիքն է: Սակայն՝ եթէ ապէսա լինելով այս մասին, իրարու հանդիպէինք, չեմ կարծեր, բարեկամ, որ օրին մէկին իր անմեղ ու վստահ դէմքով իմ առջևս երևելով հարցընէր. — Կ'սգաչեմ, Նելսօն, յայտնէ ինձ թէ ոմն է քու մայրդ ու հայրդ, չունիս ընտանիք ու ազգական, որ քեզմով ինձ սիրելի են — ինչ պատասխան պիտի տայի . . . կարելի էր սուտ խօսիլ, կարելի էր ճշմարիտը խօսիլ: Այսպիսի տագնապի մը մէջ նախատաս պիտի սեպէի մեռնիլ, զեռևին ատկն անցնիլ, քան թէ սեւ կամ ճշմարիտն ըսել: Բայց միթէ սիրոյ սիրտ մը այսպիսի հարցմունք մը կ'ընէ, միթէ նա ծննդեան վկայական և ազնուականութեան տիտղոս կ'հարցընէ, չեմ կարծեր: Բայց դարձեալ, սուելի ընարելի չէ, սիրելի վատ, որ իրարմէ հետ ենք, գոնէ զիս կ'յարգէ եթէ չսիրեր, և դէթ այս յարգանքն իմ Թշուառ սրտիս Թեթև մէկ սփոփանքն է . . . :

Ըսածս չ'իտեմ. . . կ'մոռնամ գրելիքս . . . նամակիդ վրայ կ'նայիմ անթարթ և բան մը չեմ տեսներ, բան մը չեմ զգար . . . աչքերս կ'սևնան . . . :

ՆԱՄԱԿ ԻԶ

ՎՈՒՏ ԱՒՐ ՆԵԼՍՕՆ

Լ. Նոթ . . .

Թարեկամ, քանի՛ այլանդակ կենդանի է մարդս և իրարու ներհակ կրից խազալիկ : Վիշտ ու երկիւղ, սէր ու անվստահութիւն, արիւթիւն ու տկարութիւն կ՚բաժնեն սիրտդ ու միտքդ : Բնաւ չեմ մեղադրեր քեզ : Կենացդ նաւը կ՚տատանի ծովու մը վրայ որու այէկոծութեան շարժառիթն, որու յորձանքն անծանօթ են քեզի : Կ՚ուզէիս նաւդ, կ՚բանաս առագաստներն, գիտես նպատակդ, և ահա հով մը, մրրիկ մը, ուրկան մը կ՚ելնէ և բոլոր հաշիւներդ ու ճարտարութիւնդ ի դերև կ՚հանէ, քեզ չուզած տեղդ կ՚տանի : Կայ այսպիսի ձախորդութեան մէջ կամաց ազատութեան նշոյլը. միթէ կոյր ճակատագիրը չընտրեր առ հասարակ մարդկային գործոց վրայ : Ինք կ՚խորհի, կ՚համոզուի, կ՚տրամադրէ, կ՚գործէ հիւսիս գնալու, և ահա ինքզինք հարաւ կ՚գտնէ : Եւ ինչո՞ւ, վասն զի ինք միայն կեանք մ՚ապրած է և այդ իր կեանքն նախորդ բազմաթիւ կեանքերէ բաղկացած է, որոց սէրն ինք չէր : Մանր ու գձուձ իրերու ու գործերու մէջ, խիստ նեղ շրջանի մէջ հետաւոր դիտան և զօն կ՚երևին մարդիկ ու ազգեր, դիտեն ուր կ՚կոխեն, դիտեն ուր կ՚դիմեն, կ՚հաշուեն, կ՚զուշակեն գարնէն, սակայն երբ իրենց ոտից տակ հողը կ՚ընդարձակի, կ՚խոտորի, կ՚լեռնանայ, երբ իրենց աչաց առջև՝ հորիզոնը կ՚ընդլայնի, կ՚հեռանայ, այն ատեն իրենց ոտքերը կ՚գայթին, իրենց աչքը կ՚պղտորի և հազիւ կ՚ընդունարեն այն նշոյլներն որ իրենց նպատակը պիտի արտափայլէին : Եւ ինչ է պատճառն, իր տգիտութիւնն ու կուրութիւնը : Դեռ ևս մարդ ստուգապէս չգիտէ այն օրէնքն որով աշխարհիս դէպքերը կ՚պատահին, և որոց երբեմն արկած ու դիպուած անունը կ՚տայ : Պատմական գիտութիւնը՝ որ դեռ նոր է՝ աղօտ լոյս մը կ՚սփռէ այս մթութեան վրայ, այս է բարոյական իրողութեանց վրայ, այնպէս որ կարելի չէ զանոնք ճշդել և՝ ֆիզիքական երևոյթներուն պէս՝ օրինաց տակ դնել : Աստղաբաշխն որ՝ ձեռքով դրածի պէս՝ կ՚գուշակէ ճշդիւ թէ երբ արևու և լուսնի խաւարումն պիտի պատահի, որ երկնային մարմիններու շարժումն ու շրջանն օրովն ու ժամով թուաբանական ստուգութեամբ կ՚հաշուէ, չէ կարող հաւանականութեան կանոնով իսկ յայտնել թէ իր ընտանեկան շրջանին մէջ ինչ պիտի պատահի գալ տարի, գալ ամիս, վաղը :

Ուստի, բարեկամ, մեր վրայ ծանրացող բարոյական աղէտից մենք պատասխանատու չենք, այլ այն մեղի անծանօթ պարագաներն որ մեր լոյս կամ խաւար տեսնելէն առաջ տեղի ունեցած են : Գիտութիւնը, գրական գիտութիւնը պիտի լուսաւորէ, կ՚ըսեն, այս բարոյական քաոսն, բայց մեղի ինչ օգուտ առ այժմ՝ քանի սոյն քաոսին մէջը կ՚ապրինք և չգիտենք թէ վաղն ինչ պիտի լինինք : Զեմ ուրանար որ տեսակ մ՚երջանկութիւն վայելող մարդիկ ու ժողովուրդներ կը գտնուին երկրագունտիս վրայ, բայց այդ երջանկութեան հեղինակն իրենք չեն այլ նախընթաց յաջող պարագաներ : Դու, Նելսօն, գժբաղդութեան զգալի և զգայուն օրինակ մ՚ես, բայց բոլորովին անմեղ : Ուստի իրաւունք չունիս ողբալու քու անճարակութեանդ վրայ, այլ այն գաղտնի զօրութեանց վրայ որ այս աշխարհս կ՚վարեն, և ոմանց ամեն տեսակ ուրախութիւն, այլոց ամեն տեսակ կսկիծ կ՚բաշխեն, այս տարբերութեամբ կամ արդարութեամբ որ թէ ուրախութիւն և թէ կսկիծ անհատներ են մեր բնութեան պէս : Եթէ դու այսօր ճակատագրիդ վրայ կ՚ողբաս, թերևս վաղն ես քու վիճակիդ տէնչամ, եթէ դու այսօր հոյր ու մայր կ՚փնտռես ու Էլիզեն

թերևս ես՝ ուրիշ անյայտ թշուառութեանց մօտ՝ անհայր ու անմայր ծնալն համեմատաբար թեթև վիշտ մը նկատեմ։

Ցխուր գիրդ կ'գրպռէ յիս այս մութ խորհրդածութիւննե-րը։ Աշխարհիս աղետալի տեսարանն կ'ներշնչէ ինս քան թէ եսականութիւնն և՝ ես որ սովորաբար Դեմոկրիտէսի գպրո-ցէն եմ, կ'զարմանամ թէ ինչո՞ւ կ'արտմիմ. . . ։ Մի կար-ծեր թէ քեզ մխիթարելու համար կ'գրեմ, ո՛չ, վասն զի այս ևս դիտեմ որ յատիտենական չէ վիշտն ուրախութեան հետ, վասն զի կ'գիտեմ որ արդէն Էլիզեին կորստեան վրայ սփո-փելու համար զանազան բարուրանք կ'հնարէ երևակայութիւնդ, այլ կ'գրեմ մի միայն գրելու համար։ Ամեն մարդ մի և նոյն կերպով չզգածուիր նոյն բնութիւնն ունեցող ցաւէ մը, վասն զի ամեն մարդ նոյն բնութիւնն, նոյն խառնուածքը, նոյն կրթութիւնն ու միտքը չունի, վասն զի ամեն մարդ մի և նոյն միջավայրը չապտուիր։ Օգ ու ջուր, արև ու խաւար, ու-տեստ ու արուեստ անպամ կ'ներգործեն սրտի զգայմունքի վրայ։ Եւ զարմանալին այս է որ ամեն վիշտ վշտակիրին բնու-թեան յարմար դարման կ'փնտռէ։ Ոմանք կրօնի, բարեպաշ-տութեան, ողորմասիրութեան մէջ սփոփանք կ'փնտռեն, ո-մանք նիւթական ու մտաւորական զուարճութեանց ու մոլու-թեան մէջ, և եթէ ամենուն միջոցները տարբեր, նպատակը նոյն է, կարելի եղածին չափ շուտով մխիթարուիլ. . . ։

Իսկ դու, սիրելի Նելսօն, դու որ կրօնքի, ընտանիքի, հայրենասիրութեան մէջ մխիթարանք չգտար, թէև բնապէս միտքդ ոգեկանութեան հակամէտ է, արևելեան ժողովուրդ մը, Հայերը քննելով ուզեցիր սփոփիլ, և անտարակոյս մին-չև հիմակ հին վէրք մը բուժեր էիր՝ եթէ անոր դրդիռ առողջ պարապանքը չպատահէր, եթէ թղթակցութիւնս զայն չար-ծարծէր։ Գոնե յաջող ելլք մ'ունենար իմ միջնորդութիւնս, գոնե դու, չըսեմ կասկածոտ, այդքան հպարտ չլինէիր։ Հիմակ խնդիրն այս է թէ արդեօք ես ալ ակամայ դործա-կից եղայ դժբաղդութեանդ, արդեօք աւելի խնամատարեամբ

վարուած չըմպիտի լինէի եթէ բոլորովին կտրէի թղթակցու-թեանս թելը սիրոյ վրայ։ Բայց կարելի՞ էր, քեզի կ'հար-ցընեմ. . . ։

Գոնե միւս խնդիրդ կարենայի լուծել։ Դեռ ևս լոյս մը չտաւ փինկ խնամակալիդ վրայ։ Քանի՛ անձարակ եմ։ Բայց մի կարծեր թէ կ'դանդաղիմ։ Մտադիր եմ այս պաղտնիքը Տոքթօր Բէյնի յայտնել և անոր հետ խորհրդակցիլ միջոց-ներուն վրայ։ Ձեմ ուզեր ապահովութիւն տալ յաջողու-թեան մասին, քանի որ միւս խնդրոյն վրայ իմ ակնկալու-թիւնս ու ձիգս դերև ելան։

Սակայն դու ինչ պիտի ընես, Նելսօն, շարունակ պիտի ողբաս սիրոյդ վրայ, այսուհետև գիրերդ դամբանական ձա-ռերը պիտի ընես։ Մտածէ միայն որ մարդ ես, անկրկնայի ես, և այդպիսի կանացի վայեր ու ողբեր գինուորի մ'անվա-յել են։ Մոռցիր պահ մը Էլիզեն, թո՛ղ որ նա իր ճակա-տագրին հետևի, քանի որ քեզի չուզեց հետևիլ, և սիրտդ բուժելու հնարը դտիր։ Գիտե՞ս ինչ է հնարը. Սէրը։ Այո՛, գտիր նոր սէր մ'որու խնդոյն յարի սիրատենչ սիրտդ, եթէ արդէն յարած չէ այն անձանձրոյթ որ քիչ մ'առաջ բաւական դրաւեր էր միտքդ։ Տաքցած երկաթը շուտով կ'փակչի. . . դրէ ինձ թէ ինչ աստիճանի հասած է յարաբերութիւնդ ա-նոր հետ, ճամբայ մը փնտռէ անոր մօտենալու, և մերթ ընդ մերթ շարունակէ նաև դրել Հայոց վրայ։

Իրա՛ւ՝ մեր գրականութեան պատահական մէկ գրգիռն եղաւ սէրդ, բայց անոր հաստատուն շարժառիթը մեր բարեկամու-թիւնն է, որու պարտաւոր ենք գոհել անցաւոր նկատումներ։ Էլիզեի պահ մը վատեց մեր գրիչն իր ընդոմիզ, սովորաբար մեր պաղ գիւրերուն թև ու ոտ տուաւ, բայց եթէ ինք թևեր տուաւ դնայ, մեզի թողուց այնպիսի յիշատակներ որ կրնան մեզ ներշնչել. . . ։ Ո՛վ գիտե, թերևս օրին մեկը վերստին երևի. . . առ այժմ համբերութիւն. . . ։

ՆԱՄԱԿ ԱՔ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բաբեկամ, Գատը գիտէ, այս է հին Քաղկեդոն՝ կ'պտուտէի՝ Մօտ պատանւոյ մօտ՝ հայրենակցի մը տունն՝ երբ նամակդ բերին ձեռքս տուին: Տաճկական անուն այլ եւրոպական դպրոց ունի այս գիւղն, որու մէկ կողմն Հայոտար Փաշա կ'տարածուի, միւս կողմն Փէնէբ—պահչէի հրուանդանն, որու ծայրը փարոս մը կ'տեսնուի, իսկ անդին՝ Մարմարա ծովուն մէջ՝ այլ և այլ կղզիներ, որոց գլխաւորներն են Բրինձիբօ, Քալէյ, Անթիկոն:

Տան արևնակը նստած՝ կ'դիտէի իմ առջև պտուտած սքանչելի տեսարանն: Գլուխս, սիրտս, բոլոր էութիւնս կ'այրէր, և միշտ՝ չէ թէ լոյս, այլ հով, այլ մրրիկ, այլ որոտում ու կայծակ կ'փնտռէի որ զովանամ, պաղչիմ: Երեկոյեան դէմ էր՝ երեսս դէպ ի Մարմարա դարձած՝ կ'ծծէի լիաբերան կծու ու զովագին քամի մ'որով բոլոր մարմինս կ'սրբսփար, հիւանդ էի: Բաբեկամ՝ ֆօքս, դիտեց այս վիճակս և յորդորեց գնս անկողին մտնել ու հանդիստ առնուլ, սակայն ես — Տար գնս տեղ մը, ըսի, որ այլայլիմ, ինքզինքս մոռնամ: — Շատ լաւ, ուրեմն, պատրաստուէ, պատասխանեց բարեկամս: Ձյս երեկոյ հանդէս կայ, կայսեր գահակալութեան տարեդարձի հանդէսն ի Պէպէք, ուր պիտի մնկնի ժամէ մը յառաջ չորսնաս մը:»

Խնդայն ոտք ելայ, և պատրաստ եմ, ըսի: Սակայն երբ նաւամատոյց հասանք, արդէն շոգենաւն՝ Թերնս մեր բաղդէն՝ հանդիսատեսներու խուռն բազմութիւն մ'առնլով՝ որոշեալ

ժամէն առաջ մեկներ էր: Ճշտութիւն մի փնտռեր Թուրքիա: Անճշտութիւնն ու անկարգութիւնն է կանոնը: Մի քոյ մը դժայ նամակդ կարդալու, որ բոլորովին հոգիս ձնշեց, մինչ դեռ բարեկամս մեծական նաւակ մը կ'բռնէր որպէս զի մեզ հանդիսին վայրը տանի, թէև հարիւր երեք ժամ պիտի կարենար ժամանել անդ: Պօլիս՝ ծովու վրայ չէի ըրած դիշերային ուղևորութիւն մ'որ հոգւոյս վիճակին կ'յարմարէր: Մտանք նաւակը. ժամն լինն ու կէս էր, լուսինը մերթ իր ազօտ երեսը կ'ցուցընէր, մերթ ամպերու ներքև սողսկելով կ'թագչէր և մեզ մութը կ'թողուր: Աւելորդ է ըսել որ բարեկամս իր հետն առած էր ուտելիք և ըմպելիք, որմէ բերանս չդրի:

Նաւակն սկսաւ կամաց կամաց սահիլ: Թիակներն՝ երկու ուժեղ հայ բազուկներու ընորհիւ՝ հանդարտ ջուրը կ'ճեղքեն և լուսաւոր հետք մը կ'թողուն, փալփլուն ձձիներ կ'վխտան: Թեթև մշուշ մը Պօլսի ափունքը կ'ծածկէ, այնպէս որ հազիւ թէ յամաքն ու նաւահանդստին նաւերը կ'տեսնուին: Միայն ծովեզերեայ կողմերը տեղ տեղ միաշար ճրագներ կ'վառին, իսկ ծովուն մէջ նաւաձև լոյսեր՝ երկնից վրայ աղբիւրին վրայ կ'նկարուին, և իրօք յօրինելով նաւերու լուսադիծ մ'որոց կայմերուն ծայրէն սկսեալ մինչև կողերն դոյնզդոյն ապակիէ կանթեղներ կախուած կ'երևին, որ երբեմն ահագին տառեր և անուններ կ'յօրինեն, և այնպէս կ'թուին աչքի որ ծովու վրայ անշարժ, խաչաձև, գեղանշոյլ ուրուականներ են: Նաւակը կ'սահի աւելի արագ, բայց դեռ Լէանդրի աշտարակը չհասանք, աշտարակ սպիտակագոյն, որ Մարմարայի ծովուն ու Պոսփորի սահմանը կ'դծէ ու կ'զատէ, և որ երբեմն բնակարանն էր չնաշխարհիկ էակի մ'որ ամեն իրկուն Լէանդրի ի լուզ գալուն կ'սպասէր, և երբ անգամ մը չերևցաւ՝ ինք գնաց գտնել իր սիրահարն այն անգունդին մէջ ուսկից ոչ ոք կ'գառնայ . . . սիրոյ անմահ մշատակ ու նահատակ: Եթէ ես Բիւզանդիոնի աերը լինէի՝

նոյն աշտարակին վրայ Էրօի, այդ քրմուհւոյն՝ մարմարէ արձանը կ'կանդնէի, մինչդեռ հիմակ կարմրադոյն փարոս մը կը շողայ, արձան մ'որ մշտատեւ յանդիմանութիւն մը պիտի լինէր այն արքունի կանանոցին դէմ ուր անզգայ սէրը կը թոռմի ու կ'մաշի . . . .

Նաւակը կ'քալէ միշտ . . . մինչդեռ ես կ'լողամ դրեթէ անզգայ՝ ջրին և օդին մէջ, բարեկամս ձայն կ'տայ նաւավարին որ Հաբէմի նաւամատոյցին մօտ կանուած ցիր ու ցան քարերէն զգոյշ լինի: Եւ ահա յանկարծ՝ աչք եզրէն օձի նման դալարելով կ'սլանայ դէպ ի երկին երփնագոյն փունջ մը՝ կ'բացուի, շաչիւն մը, սուր շաչիւն մը կ'արձակէ և ապա մանր մունր աստղիկներ կ'սկսին թափթփիլ ծովու վրայ: Այս լուսեղէն նշանին ոյսրուտ ու սրընթաց լոյսեր ասդին անդին կը հետեւին, հրային ցնցուղի պէս վէտ առ վէտ կ'վիժվժան, մերթ խոր մթութեան մէջին . . . և նոյն պահուն կարծես թէ լուսինն վեհանձնօրէն իր լոյսը կ'սքօղէր, որպէս զի մարդիկ արուեստական կրակով քիչ մը հրճուին և իրենց հնարագիտութեան վրայ փքանան: Խեղճ մարդիկ, ինչ ընեն. մերթ Պրօմեթէն յանցաւոր էր երկնից փայլակը կապտելուն, և մարդիկ ալ մեղք կ'դործեն եթէ բնութեան լոյսն ու զօրութիւնը կապտել կ'ուզեն . . . ոչ: Բայց ո՛վ կրնար արդելել զիս նոյն պահուն լուսինն ու անոր լուսնթաղը, շողուն ու կենդանի աստղիկը փնտռեմ: Նաւակին շարժումն այնպիսի դիրքի մը մէջ թողուց զիս որ լուսինն եաիս ճակատ: Ամեն շող, հրային օձ, կայծեր անտես առնելով՝ ստէպ կ'դառնայի լուսնին ու իր ընկերին՝ ակնարկ մը տալու, և այս ակնարկով կ'յիշէի, կ'գրկէի այն էակին նկարն որ միայն իր յիշատակը թողլով ինձ աներևոյթ եղեր էր: Բայց ահա կ'մօտենանք Էնդոբի աշտարակին. Պոսֆորի գիմացն, այսինքն եւրոպական եզերը՝ կ'սկսի վառվռուն լոյսեր արձակել, նաւերը կարգաւ կ'երևին. մերթ ընդ մերթ նաւերուն վրայ ու ծովափին այնպիսի սիրուն կարմիր, գեղին, կապոյտ, կանաչ և ծիրանի

բոցեր կ'վառին որ քանի մը վայրկեան աչքդ կ'շլացընեն և հիանալի նշոյլներ փրփրուն կոհակներու վրայ կ'սփռին ու յանկարծ կ'մարին: Ջրային աստղիկներ երկնային աստղերու հետ կ'մրցին: Աստ ու անդ հրախաղի մութ ու տխուր գործիներ բազմաձիւղ և անորոշ, նեղոսցին վրայ կ'տատանին և անոնց վրայ մարդիկ կ'շարժին սատանի պէս՝ ձաճանչներու և ստուերներու մէջ: Անկից պիտի ժայթքի հրացայտ փոթորիկը, և սակաւիկ մի ևս և գոռ ու գոչումը պիտի պայթին: Մեր շաւիղն Պոսֆորի ասիական ափանց մօտ է: Իսկիւտարի հրուանդանին ծայրէն կ'սահինք, ուժգին յորձանքին դէմ դնելով յառաջ կ'քշենք: Լուսատոր էր այս ծովափն, սակայն ոչ հակափին չափ: Բնակիչները ծովեզերը թափեր էին, խումբ խումբ, բոդչ կ'ըսեմ, շարք շարք ճերմակ սաւաններ օրոց ներքև ստէպ լուսնկայի պէս սպիտակ ու նսեմ երեսներ և վառօդի պէս աչկունք կ'երևէին — կղկտած նստած են, և այնքան մօտէն կ'սահինք որ ոմանց հեշտալի ձայնն, ոմանց հիացած կերպարանքն, որու վրայէ դիտմամբ սաւանն ընկած է, կ'դիտենք ու կ'լսենք, և ուր ուրեմն պատաւի մը ձայնն — Ա՛յ էֆէնտիմ, պիրազ ուզպտան աքչէ . . . մեր ականջին կ'զարնէ: Բայց մեր միտքը դեղնած մանիաներ տեսնել չէր, այլ յորձանքին ուժգնութենէ խոյս տալ, վասն զի՝ եթէ նաւակը ծովեզերը չքերեր և քիչ մը հեռանէն առնէր, անտարակոյս մինչև Մարմարա պիտի քշուէր, այնքան սաստիկ կ'վազէ՝ հիւսիսային հովով՝ Սև ծովէն հոսող ջուրը, և այնքան յորձանուտ է նեղոցին մէկ քանի տեղութիւնը . . . նեղոց՝ որ Քեահաթհանէյի հեղասահ ջերուն չնմանիր և մէկ կողմէ միւս կողմն գրեթէ կէս ժամու հեռաւորութիւն ունի:

Թիակներն աւելի ծանր կ'շարժին . . . հետզհետէ Իսկիւտար, Քուզկունճուղ, Ստավրոս, Պէյլէր—պէյ, Վանէ գեղ եաև կ'մնան, և կամաց կամաց եզրէն բաժնուելով՝ զիմացի կողմը կ'ուղղուի նաւակն, որպէս զի Արնաւուտ գեղը բունէ և անկից Պէսիկթի ջերը սահի, ուր Սատրաղամին ա-

պարանքը կ'դանուի և ուր՝ ի պատիւ կայսեր՝ այս երեկոյեան շքեղ հանդէսը կ'տրուի : Հոգին որ՝ քիչ մ'ուժգին էր՝ երբ Ճամբայ ելանք, կ'սկսի մեղմիլ : Խարակ քամի մը կ'բուրէ :

Ծամն՝ ըստ Ֆրանկաց՝ տասնումէկ է : Երկինքը պայծառ, յստակ, աստղերը փայլուն, լոհակները թեթեւակի կ'փրփրին : Պոսֆորի նեղուցին միջէն ենք. մեր աջ դին Ասիական դեղն, ձախ դին Վանի դեղը կ'դտնուի : Աչքդ դէպ ի հիւսիս ու հարաւ որ դարձնես, կարծես թէ մոգական աշխարհի մը մէջ կ'լողաս, կ'հիանաս, կ'ապշես, և ի զուր՝ բերանդ բայ՝ խօսք մը կ'փնտռես զգացումդ արտայայտելու, սքանչացումդ յայտնելու : Հեռուէն կարծես թէ ձրագներն ու կանթեղները ծովուն վրայ կ'ծփան և վարն ալ տեսակ մ'երերուն հոսանուտ երկինի մը՝ բոլ բոլ համաստեղութիւններ յօրինելով կ'ծածանի, թէև պատկերին խորն երևցած մթին ստուերներն՝ անոր հմայիչ շքեղութիւնն ու ահաւորութիւնը կ'աւելցնէին :

Ահա մեր նաւակին քովէն ուրիշ նաւակ մը կ'անցնի, իրը թէ ինքնաշարժ կ'սահի՝ նաղելի, իր մէջ կրելով տասնի չափ ուերժհարսներ, կամ լաւ ևս ըսեմ, պիչերհարսներ, երեսնին բոլորովին բաց, ուրախ ու զուարթ կ'մրմնջեն. սև ունքեր, սևաչուխ, ասկեթել հիւսուած մազեր ունին, ձիւնի պէս ե-րեսներ, կ'շնչեն, կ'պիտեն, կ'նային, թէև սևագէմ մարդ մ'իրենց վրայ կ'հսկէ, մինչև որ վերստին իրենց ոսկեզօծ վանդակը դառնան այս թևաղուրկ թռչունները . . . :

Ցանկարծ ծովուն վրայ սպիտակ ամպ մը կ'սուրայ, փայլակ մը կ'շողայ, շանթ մը կ'պայթի, որոտում մը կ'լսուի, ուրիշ մ'ևս կ'յաջորդէ, հեզհեզակ կայծակներ կ'առկայծին, կ'շաչեն արագ արագ ջրերուն վրայ, թռունդ կ'ելնէ օդը, և ստէպ երկինք կ'թռին վարէն սողոսկելով օձաձև կրակ, ռ-լորտա բոց ու հուր . . . բնութեան տարերք դեր փոխած են . . . ահաւոր փոթորիկը կ'բղդի, հրախաղը կ'սկսի . . . թէև տեսած եմ այսպիսի հրեղէն խաղեր Ընկլիա, ուր

ջուրը կրակ կ'վիժէր, ուր հուրը հոսանուտ ջրվէժներ կ'յօրինէր, աւազաններ բոց ու ցող կ'ցայտէին, և հնարագիտութեան ամեն դարաններն ի գործ կ'գրուէին հրախաղին դերբնական երևոյթ մ'ընծայելու համար, աչքն ու երևակայութիւնը բոլորքոլոր համար. սակայն այս անգ Պոսֆորի բնական դիրքն, վեմ ու ահեղ դիշերային տեսքն մարդս կ'առնեն նորանշան աշխարհ մը կ'տանին և աննման ապատուրութիւն մը կ'ներդործեն սրտի ու մտքի վրայ :

Ձերկարեմ, քառորդ մը կ'տևէ թնդանօթներու դատումն, երկու եզերէն արձակուած հրաշունչ եղէգներու թռիչքն, ո-րոնք քանի պայթին շառաչելով՝ լուսոյ վարսաձև նշոյլներ կ'թափին, որոց մէջէն երբեմն ծիրանի կամ կանաչ վառ գոյն մը գնդակի նման, պլպլուն, սուր հուր մը կ'զատուի, կ'սուրայ երկնից կամարը քանի մը րոպէ, կ'օրորի, ձիշտ երկնային մոլորակ մ'է կարծես, և ապա յանկարծ կ'անհետի . . . :

Ի վերջ՝ հասանք Պէպէքի մօտ՝ որու ծովեզրին անթիւ նաւակներ կ'ծփային : Հանդիսի կեդրոնն ծովուն վրայ նայող բլրակաձև պարտէզ մ'էր, ուսկից հանդիսականները կ'տեսնուէին : Ցեղ տեղ նուագախմբեր զմայլելի երգեր ու խաղեր կ'նուագեն, որոց արձագանքը կ'կրկնեն դիմացի արբանեակական էջէզն : Քէօշկ մ'որու վրայէն անընդհատ վեր կ'թռի հրային անձրև մ'երփնագոյն և բոլոր նաւակները կ'լուսաւորէ : Թէև մեր նաւակը զօրաւոր էր, սակայն դիտամամբ քիչ մը հեռուն կ'կենայ, որպէս զի ուրիշներուն չզարնուի : Հանդիսավայրին եռանի կողմը, Պէպէքի բլրակին ու ծառերը դղեակներուն լոյսերով կ'վառին, և երևակայէ թէ մթագոյն երկնի մը վրայ ինչ աքանչելի տեսիլ մը կ'նկարեն : Զմայլած չորս դին կ'նայինք : Ծովու վրայի տեսարանն գամաքի տեսարանին հետ կ'մրցէր : Նաւակներու և մանր շոգենաւերու մէջ բնական լոյսեր կ'փայլէին : Գոյնզգոյն հազուստներ, կերպ կերպ դէմքեր կ'ծածանէին ջրերու վրայ : Մեր նաւակի մօտէն երբեմն նետի պէս ակատները կ'սուրային՝ հազիւ ժամա-

նակ տալով մեզ ակնարկ մը ձգել այն փալփլուն և բոցա-
վառ սև աչքեր վրայ որ նորանշան կայծեր կ'արձակէին, ձիւ-
նի պէս սպիտակ ձեռքեր տաճկական բարև ու նշաններ կ'ը-
նէին և գողտրիկ բերանները տատրակի ձայներ կ'ելևէին։
Մինչդեռ պսպղէս այս երերուն ու շարժուն առարկաներու
մէջ՝ մեր աչքը հաղիւ դադարելու կէտ մը կ'փնտռէր, մերթ
ընդ մերթ ծանօթ կերպարանի մը կ'հանդիպէր և ես սիրա-
բոյր նշմայր մը, ժպիտ մը, ակնարկ մը կ'ուղղէի տրտում
տխուր . . . ։

Սակայն ժամանակը կ'սահէր, կ'անցնէր։ Կէս գիշեր ժամ
մ'անցած էր և մեկնելու ատենը հասած։ Լուսինն մեր աչ-
քէն աներևոյթ կ'լինէր, մինակ ծովափնեայ ճրագներն մերթ
ծովուն վրայ աղօտ լոյս մը կ'սփռեն. երաժշտութեան շուին-
դը կ'մեղմի, հեռագնետ ծովու ու ցամաքի հանդիսատեսները
կ'սկսին քաշուիլ։ Նաւերը մեզմէ հեռի են, վասն զի մեր նա-
ւակը շեղակի դարձած գետը դիտի ճամրան բռնելու կ'պատ-
րաստուի . . . ։ Մի քանի շոգենաւներ ալ կ'սուլեն որ ճամ-
բայ ելնեն։ Մարդու ձայները կ'լսուին խառն ու շփոթ, ամեն
բան շարժման մէջ է . . . ։ Նոյն պահուն մեզմէ քիչ մը
հեռու՝ ծովափին մօտ՝ շոգենաւի մ'անիւը կ'դառնայ, կ'քա-
լէ և յանկարծ կայ կ'առնու ու ետ ետ կ'գնէ . . . ո՜հ,
սարսափելի տեսարան . . . չեմ ուզեր երկար պատմել, սիր-
տելի Վուտ, որ սիրտդ չշարժի . . . բայց . . . ինչ օ-
գուտ, տեսայ, և ալէտալի դիպուածի մ'առթիւ անձ մ'ալ
տեսայ, թերևս երազ մը տեսայ զոր դեռ չեմ կարող մո-
նել . . . ։ Շոգենաւն ետ ետ գառնալուն՝ լեցուն նաւակի մը
կ'զարնէ, նաւակն իսկոյն անդունդը կ'սուզվի . . . աչքս գար-
ձընեմ ինչ տեսնեմ, շատ մը գլուխներ որ անձայն, ան-
մռունչ ծովուն երեսը կ'տատանին, վերստին կ'ընկղմին, պա-
հակէ մը նորէն կ'երևին . . . նոյն պահուն նաւակներն ի-
րար կ'անցնին, ամեն կողմէ աղաղակներ կ'բղխին . . . սա-
կայն մեր նաւակին մօտ՝ ահանջիս կ'զարնէ յստակ, որոշ ձիկ

մը, ոռկէ, (ֆէրֆէլ) . . . ։ Ծանօթ էր այս ձայնն ինձ,
Էլլինն ձայնին նման . . . աչքս իսկոյն այն կողմը կ'դառ-
նայ . . . ի՞նչ տեսնեմ . . . իմ անծանօթ ըրօֆեսէօրն էր,
որ մի և նոյն ծովագոյն քօղն երեսը ձգած և կէս մ'այտերն
ու բերանը բաց, մերթ ինձ կ'նայէր, մերթ ծովամոյն եղկե-
լիներուն, և կ'վայէր . . . ինչ նմանութիւն, պատահակա՞ն
էր թէ իրական։ Ճիշտ Էլլինն գողտրիկ բերանն, սիրուն
այտերն էին, և չնչելովը՞ որ անոր նաւակն, որու մէջ ու-
րիշ կին մ'ալ կար և մարդ մը տարօրէն, քանի մը կանգուն
հեռու է, ոտք ելայ և ուղեղի ցատկել անոր մէջ, մինչդեռ
փօքս բարեկամն կարծէր թէ միտքս ծովը թափողներուն օգ-
նութեան հասնիլ էր։ Բայց սիրական նաւակն կ'սկսի հեռա-
նալ, ամեն մարդ կ'փութայ օգնութեան, մարդասիրութեան
ոգւով, ես սիրոյս ստուերով թերևս պաշարուած՝ կ'շուարիմ
կ'մնամ . . . ինչ վատութիւն։ Սակայն ձայները կ'սաստկա-
նան, ծովածուփ գլուխներ հետզհետէ աներևոյթ կ'լինին,
մինակ մէկ քանին կ'մաքառին յորձանքին դէմ . . . ինչպէս
չօդնել այս թշուառներուն որ դեռ կ'տատանին . . . ծովը
նետուիլը՝ մահուան դիրկն ընկնիլ էր։ Աչքս սեւեռած այն նա-
ւակին վրայ ուր ծովագոյն քօղը կ'ծածանէր, ուրիշ նաւակ-
ներու հետ՝ մերինն ալ քշեցինք դէպ յառաջ և մենք ալ մի
քանի հոգի ծովէն քաշելով առինք և ապա ծովեզերը հանե-
ցինք . . . ։ Քսանի չափ անձեր անյայտ էին. մին իր զա-
ւակն, ուրիշ մ'իր կինն, այս իր եղբայրն, այն իր քոյրը կը
փնտռէր։ Ա՛խ, ո՛ր գացին . . . ձայն ձիւն չհանեցին եղ-
կելիները. անդամ մ'երևցան և ապա սուզան, ծովու զոհ
դացին։ Ոմանց գլխարկն, ոմանց ֆէսը ջրերուն վրայ կ'ծփա-
յին, իսկ ես ասկալէի մնատանջութեան և յուզման մէջ էի
. . . ։ Ի՞նչ է մարդս, սիրելի Վուտ. ահա ուրախ զուարթ
կ'խնդար որ մեռաւ, ահա հիմակ կենդանի էր կայտառ և
ապագայ խորհուրդներով ու երազներով վառ, և հիմա գիակը
կ'թաւալի ծովուն անդունդն, և ո՞ գիտէ, ո՛ր ամայի ծովափը

պիտի հասնի՝ բոլորովին անկերպարան, եթէ արդէն ծովի ձկերու վրան իր դերեզմանը չգտած: Ո՛վ պիտի լայ, ո՛վ պիտի փնտռէ այն թշուառը, ո՛վ պիտի հոգ ընէ . . . վայրկեանական վրդովմէ անցած . . . նաւապարանները չդադրեցան, զարդարուն մարդիկ ու կիներ իրենց սարէն չդադրեցան, մինչ դեռ ուրիշ մարդիկ ու կիներ ապրելէ կ'դադրէին նոյն պահուն . . . կեանք ու մահ իրարու շատ մօտ են, ցնծութիւն ու վիշտ անբաժան . . . և ես որ կարծէի թէ նոր աշխարհ մը պտայ, հին սիրական ձայն մը լսելով՝ սրտովին ուրախ այլ առ երեսս տրտում էի . . . : Երբ մարգասիրութեան պարտ մը կատարեցինք, հրամայեցի նաւավարին քշել դէպ յառաջ, դէպ ի վեր՝ ուր կ'գիմէր մեղմիկ անձաւնէնի ակատը: Փոքս բարեկամս թէև գիտեց որ մեր շաւղին ներհակ հողմը կ'գիմնք, բայց ես քիչ մ'ևս հով ձգենք ըսի և կ'թուէի հիւսիս: Կ'փափաքէի հետևիլ, տեսնել թէ ո՛ր ափունքը պիտի ելնէ անձաւնէնն: Անցանք Պալնա լիման, անցանք Սոֆնիա, Էնէնֆլոլ, Քալնոֆէբ, և քանի կ'սահէինք սիրտս ու հոգիս կ'թռթռային: Արդեօք նոյն իրկուն պիտի թափանցէի՞ դաղտնիքը, որ դեռ մութ էր ինձ՝ անլոյս գիշերուան պէս: Ի վերջէ մօտեցանք այն եղրն ուր բնակարանս կ'գտնուի, Թաքքէ հասանք, և, զարմանալի՛ բան, անձաւնէնն՝ որ մերթ ընդ մերթ ակնարկ մը կ'նետէր իր ստուերին պէս հետևող մեր նաւակին վրայ, ելաւ և զարկաւ այն տան դուռն, որ իմ դրացի դուռս էր, այն տունն՝ որու պատուհանը ստէպ տեսեր էի ծովափայն քոյր և այնքան գուշակութիւններ ըրեր էի:

Ակլայլութիւնս մեծ էր: Տունս դառնալ կ'փափաքէի և իմ դրացւոյս գրան առջև մինչև առաւօտ պահպանութիւն ընել, սակայն չէի համարձակեր Փոքս բարեկամիս իմ դաղտնիքս ու փափաքս յայտնել: Ի վերջէ խնդրեց նա որ դառնանք:

— Աւելի մօտ է մեր տունն, ըսի: Արի երթանք մեզ, և այս գիշեր անդ անցընենք: — Բայց նա անհամոզելի ճնաց:

Համբերեցի: Գիշերային լինչ կրնայի ընել: Միթէ կարող էի երթալ անձաւնէնէ դուռը զարնել և հարցընել անոր. — Դու ո՛վ ես: » Այսչափը բաւական էր. ի հարկէ այս զաղտնիքն ուրիշ օր մ'երևան պիտի ելնէր: Ուստի պէտք էր դառնալ Գատը գիւղ, թէև սիրտս Թարաբիա մնաց:

Նաւակը գաշտուց գլուխը դէպ ի վար: Լոյսերը մեծ մասամբ մարած են: Ափիս անդին ցիր ու ցան նշոյլներ միայն կ'երևին, և մշուշը կ'սկսի աւելի խտանալ: Ո՛ր են առջի ցնծութիւնն ու երաժշտութիւնը. քանի լուսինը կ'իջնէ մէծն աւելի կ'կոխէ: Տրտում ու անձայն նստած՝ ոչ այնքան հանդէսին, որքան անոր դրդիռ տուող դիպուածներու վրայ կը խորհինք: Կարծէի տեսնել այն մարմիններն որ ծովուն խորը, թերևս մեր նաւակին ներքև՝ կ'թաւալին յորձանքին հետ և մինչև Մարմարայի ծովը պիտի հասնին: Թշուառներ՝ չգիտի տեսնեն՝ մեղի պէս իրենց տունն, ուր թերևս ամուսին մը, մայր մը, զաւակ մը, սիրուհի մ'իրենց կ'սպասեն . . . Ա՛հ, թողունք այս տխուր մտմտուքը. մենք ալ աչէկոծ ծովու վրայ ենք. նայինք, պիտի գանե՞նք արդեօք մեր օթևանը. իսկ ես պիտի գտնե՞մ արդեօք Լիլին՝ ծովափայն քոյրին ներքև, թաւրքական հագուստի մը ներքև . . . ինչ այլանդակ յոյս . . . ցնորք է իմ թէ իրութիւն: Մոլար էակի պէս կ'խորհիմ ու կ'թափառիմ: Այս ամպոտ երկինքն, մայլաշատ օդն, աղօտ աստղունք, սգալի լուսինը յարմար են իմ սրտիս վիճակին: Այս նաւակին պէս թոյլ տատանի մարմինս ու գլուխս, թոյլ սահիմ երթամ այն ափն ուր ոչ վիշտ կայ ոչ խնդութիւն, այլ անէութիւն: Ի՞նչ է կեանքն առանց արևու, ինչ է հոգին առանց զգացումի ու սիրոյ, չորաբեկ տերև մ'որ ամեն հովէ կ'շարժի, անջրդի ապառաժ մ'որ ոչ բոյս ունի ոչ պտուղ: Ա՛հ, թէ որ գիտնամ որ չգիտի հանիմ այն աստղին զոր կ'փնտռեմ և որու աղօտ նշոյլն ընդնշմարեցի այս իրկուն, ա՛հ, թէ որ վերստին պատրանքը զիս պաշարէ, թէ որ աչքարհիս մէջ իմ կենացս

սահմանը լոկ նեղութիւն է և տանջանք, կ'թողում կ'անցնիմ այդ սահմանն, որ նաւակիս չափ բարակ է ու դիւրաբեկ, ստուգիւ քայլ մը կ'առնում խնդագին և կ'նետուիմ այս հեղուկ անդունդն որ ամեն բանի դադարն ու կատարածն է . . . :

Բայց, քանի՛ տակաւ է մարդ, դեռ թեթև յոյս մ'ունիմ: Աստղիկս պիտի տեսնեմ . . . և ահա վերստին Լէանդրի աշտարակին շրջանը կ'ընենք: Լուսինը՝ տմոյն, նեմ ու տխուր ամպերու մէջ ձեղք մը գտած կ'երևի՝ մեծ, վսեմ, ահարկու, թէև քիչ մը գունատ. իսկ իր մօտ կ'փայլիլի միշտ իր անբաժանելի ընկերը, միշտ զուարթուն, միշտ վառ, միշտ թափանցիկ . . . : Ա՛հ, կ'հառաչեմ, քիչ մ'ոգի կ'առնում և կ'ըսեմ. — «Ահա, անոր աչքը, իմ վրայ կ'հսկէ, պէտք է որ ապրիմ, մահը կ'հեռանայ, քանի անոր թևին տակն եմ. . . . :» Բայց մինչդեռ այսպէս Մարմարայի մէջ, հոյակապ ու մեծին Բիւզանդիոնի առջև՝ որու վրայ կենդանութեան նշոյլներու տեղ՝ այժմ մահու ստուերներ կ'սաւառնին, մինչդեռ այսպէս ծով, երկին, աշխարհ մոռցած կ'խորհէի՝ թիակներուն միօրինակ ձայնով, նաւակը հասաւ Գաղը դիւղ: Աչքս չէի կարող հեռացընել լուսնի վերջին նշոյլներէն որ՝ կոհակներուն վրայ սփռուած՝ կարծես թէ կ'արտասուէին, ինչպէս որ իմ աչքերս լցան արտասուօք՝ երբ յանկարծ ստուգ մը թռելով ընկաւ այն մեծին ամպերուն մէջ որ թաղաքիոյ վրայ կ'ծանրանային . . . :

Տուն մտայ մարդու մը պէս որ երազ կ'տեսնէ . . . :

ՆԱՄԱԿ ԼԸ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՈՆ

Լոնդոն . . .

Եթէ ոչ բնածին բանահիւս, սիրածին հոգի մ'ես դու, Նելսոն, և անդէտս կ'բանահիւսես: Վկայ է նամակդ. անզարդ այլ ճշդրիտ նկարագիր հանգէսի մ'որ կարծես թէ միայն քեզի համար կ'պատրաստուէր: Մինչդեռ շատ քերթողներ արևուն, լուսնին եռեւէն կ'վազեն և իրենց գրչէն ճաճանչեր կ'հանեն, Պողոն քեզ կ'դիմաւորե և կ'յորդորե քեզ, չէ թէ գրել, այլ նկարել, չէ թէ հնարել այլ բնութիւնը բայատրել: Ջարմանալի՛ հանդիպում. մինչդեռ մեծ մաղձոտ սիրտդ սփռփելու կ'ելնես Պոսֆորի վրայ, կ'դանես յանկարծ այն թռչունն, որու վանդակն Ալպիոնն է, և որու թևերուն առած ուղղութիւնը մաթեմատիքական հաշուով գտնելու համար տօքթոր Բէյնի հետ դլուխ կ'պատռէի: Երբ սիրոյ մէջ հաշիւ կ'մտնէ, ստոյգ է որ հաշուադէտը միշտ կ'խաբուի: Բնաղդն ու նախազգացումն աւելի հնարագէտ են այս մասին քան թէ խորագիտութիւնն ու դրահաշիւը:

Թէև նամակդ տխուր գոյն մ'ունի, կ'երևակայեմ սակայն թէ որքան երջանիկ ես, վասն զի կ'յուսաս, վասն զի այդ յուսով Բիւզանդիոնի դահակալէն, որ ոսկեթել բէհեղներու վրայ կ'ննջէ, աւելի բարձր կ'սաւառնիս: Այս առթիւ կը յիշեմ Շէքսպիրի գրածը յուսոյ զօրութեան վրայ. Արթնաշարժ է ճշմարիտ յոյսը, կ'ընթ նա ձիւնաթռիչ ընթերով. ընթաստընթերը կ'դաջեն աստուածներ, ստորին մարդիկը ընթաստրներ*:

*True hope is swift, and flies with swallow's wings; Kings it makes gods, and meaner creatures kings.

Բայց միթէ ճշմարիտ է յոյսդ, միթէ բուն Լիլլին է ձէ-ձոռանը, այս կէտը ի հարկէ պիտի պարզես քիչ ատենէն և պիտի յայտնես ինձ։

Արդէն ձովաքոյն էօղլին վրայ կասկածներ ունէի, սակայն երբէք չէի երևակայեր որ Լիլլին լինէր այն, և այնքան ա-րագ Պոսֆորի ափունքը հասնէր։ Արտաքին երևոյթներն այս ենթադրութիւնը հաստատելու կ'օգնեն, ենթադրելով միանդամայն որ Լիլլին, իր սիրով բոլորովին ուրիշ էակ մը, յանդուգն, աներկիւղ էակ մը դարձեր է։ Քեզ դրացի լինելն, պատուհանէն քեզ նշմարներով բանակցիլը, անկլխարէն լեզուով բացատրութիւնն՝ ծովամոյն թշուառներուն համար, նաւակիւղ հեռևիլն և ուրիշ մանր պարագաներ կ'վկայեն անշուշտ որ այդ ձովաքոյն էօղլին ներքև մեզի ծանօթ արարած մը կայ, որ եթէ նոյն ինք Լիլլին չէ, գէթ անոր պատգամաւորն է։ Բայց աւելորդ են այս դիտողութիւնները։ Ճուսամ խնայել ձշմարտութիւնն, և կ'փութամ հաղորդել նամակդ մեր բարեկամ Բէյնի, որ մինչև յայսօր մտատանջութեան մէջ կ'պտնուի Լիլլիի կորստեան վրայ։ Կ'երևակայեմ, Նելսօն, լեսի խստհեմի զայրոյթն, երբ լսէ որ իր սիրական գուստրը Պոսֆորի եզերքը կ'պեգերի և Սուլթաններու հանդէսին ներկայ կ'պտնուի։

What sudden anger's this? how have I reap'd it?
She parted frowning from me, as if ruin
Leap'd from her eyes: So looks the chafed lionness
Upon the daring huntsman thas has gall'd her;
Then makes him nothing.*

*Ի՞նչ յանկարծական զայրոյթ է այս. ի՞նչպէս գրգռեցի զայն, Նա հեռացաւ ինձմէ խոժոռադէմ, իբր թէ կրգանռոճի Կ'սպասնար իր ապուռնէը։ Այսպէս նայի ատէն զայրացկոտ Ճանդուռէն պրոյրէն վրայ որ զայն վիրաւորած է Ապա կ'ջնջեցնէ զայն։

Բայց ես պիտի զգուշանամ այդ պրոյրը լինելէ. չպիտի երևիմ այն էգ ոխերգին առջև, որ չէ թէ դորովին այլ փառասիրութենէ կ'ուտուի իր կորիւնը ձեռքէն հանելուն։ Հապա ինչ պիտի ընէ արդեօք Պարոն Տէնսի, որ անշուշտ իր ձին հեծած Տէ-լըՆին կ'փնտռէ և աղօրիները բանակներ կարծելով կ'մաքառի . . . հավին դէմ։

ՆԱՄԱԿ ԼԹ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն . . .

Բարեկամ, Ձայն չես հաներ։ Ուրախութեամն թէ տրտմութեան նշան է այդ։ Ո՞ւր ձայց Լիլլին։ Միթէ ձովաքոյն էօղլը վար առլը, թէ ոչ դեռ կ'խուզարկես։ Բայց ես չեմ կարող սպասել։ Թող որ խօսիմ ուրիշ խնդիրներու վրայ, մինչև որ խօսելու կարդդ գայ։

Հրէաներն ալ դլուխ կ'վերցընեն, չէ թէ Արևելքի այլ Անկլիոյ մէջ։ Կ'խլրտին քաղաքական ազատութեան համար։ Ազատ Անկլիա դեռ հատասար արկարութիւն չունի իր բոլոր հպատակներուն համար. դեռ կրօնն պատնէշներ կ'քաշէ այլ և այլ հատարակութեանց մէջ։ Օ' քօնէլ կոթողը տնկեց, դիտես արդէն, և Իրլանտացիք Բարլմէնդի մէջ մուտ դտնելէն ի վեր՝ գրկիս տուին միւս տարակրօն հպատակներուն որ նոյն մուտքը պահանջեն։ Ուշչիլա բաւական մեծ իշխանութիւն մ'է նոյն իսկ Մեծն Բրիտանիոյ մէջ, որ ստէպ անոր դանձուն կ'գիմէ։ Ինչպէս ազատութեամբ հարստութեան,

ազատ փոխանակութեան կ'պլմն մարդիկ ու ազգեր, նոյնպէս ոսկիով կրնան հասնիլ ազատութեան, եթէ ասոր յարդը ձանչնան: Եւ միթէ քաղաքականութեան օրեր, երբ ժողովուրդը վեհապետ կ'հռչակուի, ոսկին չընպահակալէր քաղաքականութիւն վրայ: Շատ անգամ՝ երբ կուսակցութեան ոգին կը ղայրանայ և խելագարութեան մօտ բան մը կ'դառնայ, մեր քաղաքականներն իրենց թռղթը կ'նետէն դարեջրի ու դինիի մէջ, և ամենէ Ճարպիկ ընտրելին՝ ինչ սկզբունքի տէր որ լինի, բեմէն ինչ ոսկեզօդն բարեկործութեան խոստումներ որ ընէ, փոթի չէ, միշտ յաղթանակը կ'տանի: Կաշառը քանի հնարագէտ է և ինչ դիմակներ կ'հագնի: Մերթ ընդ, քօքսէյլ, պրէնդէլ մէջ կ'պահուըտի, մերթ գործաւորին անակը կ'սպրդի, և կ'հրապուրէ, կ'որսայ ամենէ զգոյշ ու զգաստ միտքն ու սիրտը: Քանի քաղաքականութիւնն յայտնի է, երկիւղն, ակնառութիւնն, շահախրութիւնը մեծ դեր կ'խաղան ընտրական գործողութեանց ժէջ և կշիռը կ'դարձընեն սովորաբար աղնուականին, այսինքն կալուածատէրին կողմն: Տակաւին ընդհանուր, արդար քաղաքականութեան օրը չհնչեց մեզի համար, դեռ մէկ կողմն բարեմասնութիւն, կրեսոններ կ'սիպան, միւս կողմն ագքատութիւնն ու նօթութիւնը կ'սողան: Մեր օրէնքն աղնուապետական, մեր բարքն ու սովորութիւնները հանրավարական են, մեր ընկերական յարաբերութիւնները ամբարտաւան, մեր դրական գործերն ժողովրդային: Անտարակոյս օրին մէկն, և այս օրը մօտալուտ է, փոթորիկը պիտի բրդի և մեր սահմանադրական նաւը պիտի բեկանի, և նոր դաղափարներու, նոր պիտութեան համեմատ պիտի կազմաւորի կառավարական այն շէնքն որուվ առ այժմ կ'պարծի Մեծն Բրիտանիա, իբրև ընկերական այլ և այլ շահուց հաւասարակշիռ պատկերը հռչակելով զայն, սակայն այս քրաւ է որ, երբ այդ փոթորիկը բրդի, Անկլիա նիւթապէս կորուսածը մտաւորապէս ու բարոյապէս պիտի շահի: Ժողովուրդը պիտի կանդնի, և պիտի կանդնէ այն սարուկ ժողովուրդներն որ ի զուր այժմ իրենց աչքը կ'դարձընեն մեր կողմն, և միայն նուրբ շահասիրութեան հաշիւներ կ'տեսնեն:

Արդարև առ այժմ շահն է այն առանցքն որու վրայ կը դառնայ մեր քաղաքական ու ընկերական օրէնսդրութիւնը: Ընտրողութեան և ընտրելիութեան պայմաններն՝ դեռ արժանիք՝ մտաւոր ու բարոյական, չեն, այլ դրամական: Զեն հարցըներ քաղաքացիին թէ ի՞նչ արժէք ունիս, ի՞նչ դիտես, այլ կ'հարցընեն. ի՞նչ ունիս. թէև ունեցելիքն իրեն չեն թողուր, և անոր աշխատութեան ու դառն Ճգանց չնորհիւ մեծատուններն աւելի կ'Ճոխանան: Խանութին քրտինքն հարուստին, գրամատէրին արիւնն է, որով կ'կենդանանայ: Ես չեմ կարծեր որ Բրուհոն և Լ. Պլան, և ուրիշ ընկերհաշտասկան հեղինակներ, բոլորովին անիրաւ են, երբ գործաւորին ծանր վիճակին և կրած օրինական հարստահարութեան վրայ կ'Ճառեն: Նորաձև անտեսապիտութիւն մը, պայմանական օրէնքներ կ'տիրեն՝ իրայ քնական, արդար ընթացքը վրդովելու և թշուառութեանց դուռմարն աւելցընելու: Իրաւ, ժողովուրդը կ'շարժի մեր մէջ, իր գլխուն Ճարը նայելու կը Ճգնի, կրթութիւնը տարածելու, խնայողական պանքաներն աւելցընելու, հողն աւելի ևս բաժնելու և մէկ խօսքով գործաւորն բուռն պարագաներէ անկախ պիրք մը ստանալու համար՝ մարդասէրներ, օրէնսգիրներ կ'տքնին, ակումբներ կը կազմին, ընկերական խնդիրներու, հայի ու ղոյի վրայ ատենախօսութիւնները կ'որոտան, լրագիրներն անդադար տիրած զեղծումներու դէմ կ'պրեն, շարունակ վերանորոգում, սեպհականութեան աւելի արդար բաշխում, կտակարարութեան աւելի իրացի կարգադրութիւն, ազատ փոխանակութեան աւելի այժ, գործաւորին համար աւելի լաւ քնակարան, աւելի մաքուր օդ, աւելի աժան հաց կ'պահանջեն, սակայն այս ազատասիրական բողոքներու առջև կառավարական եսութիւնն ու աղնուապետական ոգին զօրաւոր թռմբ մը կ'կանգնեն, և շարունակ կ'զոչեն. Մեր սահմանադրու-

թիւնն դարերու մէջտեղ նուիրագործուած անսասան շէնք մ'է։ Եթէ այդ շէնքն հիմնովին փլի, կ'կործանի Անկլիոյ զօրութիւնը, դաղթականութիւններն, ազգեցութիւնն և մանաւանդ իր քաղաքակրթիչ իշխանութիւնը։

Բայց, բարեկամ, թուղ լոյսն ու կրթութիւնը տարածուին, թուղ, ինչպէս լսած պիտի ըլլաս, ժողովուրդը հային հետ ուտէ ու մարսէ այն դաղափարներն որ արդի քաղաքակրթութեան յաղթանակներն են, և այն ժամանակ ընկերութիւնն իր բնական ընթացքը կ'ստանայ։

Բայց բուն խնդրէն շատ հեռացայ, բարեկամ։ Հրէից վերայ խօսելու առեն ուր հասայ։ Ուշչիլա՝ որ դրամական դործերու վերայ կ'իշխէ, պիտի յաջողի անշուշտ աթոռ մը ստանալ Բարլմէնդին մէջ։ Նոյն իսկ Ցոյներն իրենց դործունէութեամբ, տնտեսութեամբ ու հարստութեամբ բաւական զօրաւոր դիրք մը բռնած են մեր շուկային մէջ և անշուշտ օրին մէկը Բարլմէնդին մէջ ալ պիտի բազմին։ Հայք ալ պակաս չեն այս տեղ, թէև տակաւ, թէև դուշ հեռուն կ'երթան փնտռելու։ Հայն ամեն տեղ է, բայց ի Հայաստանէն, և ամեն կառավարութեան պատակ։ Միւս ժողովուրդներն իրենց ազդայնութեան նշանները բարձր կ'ցուցակեն, Հայը կ'աշխատի կարելի եղածին պէս փորընալ, անշքանալ, կարծելով թէ միշտ իրեն դլխուն վերայ Եհովէական սուրը կախուած է։

Քանի՛ ապերախտ ենք, բարեկամ։ Եւ որո՛ւ պարտաւոր ենք Հնդկաստանի պետութիւնը։ Բոլորովին լորտ Քլայվի՛։ Արի ու յանդուդն է սա, բայց բաւական զօրաւոր նեցուկ դտաւ Հայոց մէջ, որ երբեմն Հնդկաստանի առաջին կարգի Հարուստ վաճառականներն էին, և հիմակ շատ ընկած են, մեր անկուշտ շահամոլութեան ընորհիւ։ Եւ միթէ կարող էին մրցիլ մեզի հետ, միթէ կարող էին չափուիլ Հնդկաստանի անկլիական Ընկերութեան հետ, որ ամեն շահու դռներն ինք գրաւած է և մինչև յայսօր կ'հալածէ բնիկ ու օտար վաճառականները և տղրուկի պէս կ'ծծէ երկրին հարստութիւնները։ Հին պատմութիւն չէ վարէն Էհստինքսի շահատակութիւններն, որոց դէմ կ'որոտար Պրրք Բարլմէնդի մէջ և որու վերայ այնքան Ճախ, կենդանի դոյներով կ'դրէ Մաքօլէյ։

Դեռ անցեալ օր՝ դիրք մ'ընկաւ ձեռքս՝ Պէնկալայի անկլիական Ընկերութեան վերայ 1772ին դրուած։ Դրողն է Պ. Վ. Պօլտս, որ երկար ժամանակ պաշտօն վարած է ի Պէնարէս։ Շատ տեղ կ'խօսի անկլիական վարչութեան հարստահարութեանց վերայ, և երբեմն հայ վաճառականներու վերայ։ «Հայք, կ'ըսէ, որ միշտ Հնդկաստանի մէջ վաճառականներու նշանաւոր մարմին մը կ'կազմեն, Պէնկալի և մանաւորապէս Սիտապատի մէջ առևտրական մեծ դռներ ունեցած են։ Մօկոլն յաւուրս հրովարտակով արտօնութիւններ տուած էր անոնց, և երկու դլխաւոր ապրանքի վերայ, բանբակէ կտաւի և մետաքսի վերայ հարիւրին երեքուկէս տուրք դրած էր։ Երբ նապատներն, այսինքն կուսակալները, տէրութիւնը դրաւեցին, կայսեր իշխանութեան դէմ ապստամբելով, Հայք ծանր ծանր հարկերու տակ ընկան, և այն բռնաւորներն անոնց առուտուրը բոլորովին խանդարեցին։ Թէև անկլիական Ընկերութիւնն երկրին տիրանալէն ետև՝ մեզի տուաւ ի սկզբան որ Հայք, հին արտօնութեանց համեմատ՝ շարունակեն իրենց տուրքատուութիւնն երկար չտևեց, և Պէնկալի ամեն դաւառի մէջ՝ այնպիսի ծանր հարկեր դրին անկլիացիք Հայոց ապրանքներուն, մանաւանդ կտաւեղէնի և մետաքսի վերայ, յանուն նապաստներու, որոց ստուերը կար միայն, որ մեծ վնասներ կրեցին։ Հաստատուած առևտրական կանոններն, որ՝ առհասարակ՝ փոփոխական ու հակասական են, նպատակ ունին օտարին ձեռքին առուտուրն առնուլ և բոլորովին Ընկերութեան ձեռքն անցընել։»

Ահա քեզ, բարեկամ, օրինակ մ'որ կ'ցոյցանէ թէ Ընկերութիւնն որչափ անիրաւ է Հայոց դէմ։ Եւ սակայն ազատ փոխանակութեան և տուրքատի ախոյեանները կ'հռչակեն,

թէև իրօք օտար աշխարհներու մէջ բաւական վայրենի բռնաւորներ ենք և մեր դերազանցութիւնը չարաչար ի գործ կը դնենք։

Անիրաւութիւններն այնքան կ'շատնան Պէնկալի Հայոց դէմ, որ նշանաւոր վաճառականներ՝ մինչև Անկլիոյ կառավարութեան առջև բողոք կ'բառնան Կալկաթայի անկլիացի կուսակալին դէմ, և արդարութիւն ու հատուցում կ'պահանջեն։ Ի՞նչ ելք կ'ունենայ հայ վաճառականներու բողոքն ուրիշանդամ կ'պրեմ քեզ, որպէս զի իմանաս թէ Հայն անպիտ կենդանի մը չէ, ինչպէս երբեմն դիրերուդ մէջ կ'ակնարկէիր, այլ մեր ծոցը կ'պտնուի, մեր տէրութեան հպատակ է, և մինչև ցայսօր Անկլիոյ հետ առևտրական յարաբերութիւն ունի, թէև քաղաքական նշանակութենէ զուրկ է։

ԳԼՈՒԽ Ը

ԳԱԼՍՕՆ ԱՒՏ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Հանդէսին սուգ յաջորդեց, լոյսին խաւար. կասկած ու վհատութիւն վերստին կ'պաշարեն միտքս։ Շուքի պէս անցան այն հանդիսաւոր դիշերուան փալփլուն յուսոյ կայծերն։ Ստուգիւ տեսիլք մ'էր այն թէ ոչ իրութիւն։ Լիլլին անուշ ձայնն դեռ ևս կ'հնչէ ականջիս, իր դողդրիկ նկարն իմ աչքիս առջևն է, իր արտասանած բառին, ֆ'րֆըլ՝ շեշտն ու արձագանքը կ'լսեմ, սակայն ինք ո՞ր է։ Նորէն աներևոյթի եղաւ, թէ ոչ հիանգ երևակայութեանս մէջ ծնունդ առաւ։ Իմ բոլոր ակնկալութիւնս ու խուզարկութիւններս պարապ ելան։

Հանդիսին հետևեալ օրն՝ արևը չելած՝ արդէն տունս էի, արևնակիս վրայ, և դիտակն աչքիս՝ կ'դիտէի անշունչ իմ դրացի անձանօթիս տունն, ուր այն իրկուն մաեր էր՝ իր քնկերուհւոյն և ընկերին հետ։ Քանի օրէ ի վեր՝ պատուհան, դուռ, ամեն ծակ ու ծուկ դոց կ'դտնեմ, և հեռուէն կ'մաշեմ որ դոնէ անոր ձայնը լսեմ, քօղը, վարագոյրը, ակնարկը նշմարեմ։ Ջո՛ւր ջանք։ Բայց ի՞նչ կ'նշանակէ այս լռութիւնն, այս անտարբերութիւնը. ինչո՞ւ համար անձանօթիս առաջին նազանքը, փարելի կերպերը, սիրալիր ակնարկները դադրեցան։ Քանի՛ բթամիտ եմ, և ահա իմ առաջին անտարբերութեանս պատիժը կ'ընդունիմ։

Իմ անընդհատ դժբաղդութեանս օրէ օր կ'սովորիմ, բարեկամ, և կ'դիտեմ որ դանդատ ու արտունջ, որո՞ւ դէմ, օգուտ չունին։ Պէտք է համբերել։ Դիպուածն զարմանալի խաղեր ունի, և վերստին դիպուածին պիտի ապաւինիմ . . . Եթէ Լիլլի կ'խաղայ իմ սիրոյս հետ, քանի՛ անգութ է, եթէ զիս փորձել կ'ուզէ, քանի՛ թերահաւատ է, եթէ այսուհետև ամեն կապէ անկախ ապրելու միտք ունի, քանի՛ յանդուգն է։ Աւելի հակամետ եմ հաւատալու որ վշտացած է ինձի դէմ, և զիս պատժել կ'ուզէ պահ մը հեռանալով այն տունէն զոր վարձած պիտի լինի յատկապէս ինձ դրացի լինելու համար։ Ի՞նչպէս առաջին օրէն չճանչցայ զինք, ի՞նչպէս չզգացի որ այն ձովփոյն ոտքն ներքև իմ սիրականիս դէմքը կ'փայլէր . . . . Սէրն ինչ ծպտումներ ունի։ Կարո՞ղ էի դուշակել Լիլլին այն թուրքական հագուստին ներքև . . . բայց, ո՞ դիտէ, թերևս նորէն կ'սխալիմ և բոլոր ենթադրութիւններս անհիմն են . . . համբերութի՛ւն . . . .

ՆԱՄԱՆ ՄԸ

ՎՕՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, Շարունակեմ Հնդկաստանի Անկլիական Ընկերութեան վրայ խօսիլ թէ ոչ այսպիսի բաներ մարիկ ընթերցուածոյ չունիս, այդ բանահիւսական տրամապրութեանդ մէջ: Բայց կարճ պիտի կապեմ. գոնէ խոստումն կատարած լինիմ:

Պօլդոի պատմութենէ քաղելով բաւական է միայն հետագայ դէպքը մէջ բերել.

«Մի քանի Հայ վաճառականներ, որոց արդարասիրութիւնն ու բարի համբաւն հանրածանօթ էին, Սուճահ-ալ-Տովլա նապաստին երկիրներուն մէջ, պէնկալի սահմանագլուխն՝ խազաղութեամբ առուտուր կ'ընէին: Բայց որովհետև կառավարչին մանաւանդ մենավաճառներուն և խորհրդոյ մի քանի անդամներուն կ'ձեռնտէին, կ'որոշուի խափանել անոնց առուտուրն: Ուստի՝ Ընկերութեան զօրքն այդ Հայ վաճառականները կ'բռնեն ու բանտ կ'դնեն, առանց որ և է ամբաստանութեան և դատաստանի . . . : Քանի մ'ամիս բանտ կ'մնան, այնպէս որ բոլոր իրենց առուտուրը կ'ջնջուի: Այս արդիւնքն ստանալէն ետև՝ կուսակալը կ'արձակէ բանտարկեալներն, որ բնաւ իրենց յանցանքն լինչ է չգիտեն: Պէնկալի մէջ արդար դատաստան մը ստանալէ յուսահատ՝ Հայ վաճառականներէն երկու հոգի Անկլիա կ'երթան որ արդարութիւն պահանջեն: Այս մասին բողոքագիր մը կ'մատուցանեն Արեւելեան Հընդկաստանի Տեսուչներուն առեանին, և թէպէտ այս թուղթը փոքր ինչ երկար է՝ հետաքրքրական լինելուն՝ յառաջ կ'բերեմ.

«Ի
Պատուական Վերատեսուչը Ընկերութեան
Արեւելեան Հնդկաստանի.

«Բողոքարկուք՝ Պարսկաստանի Խոպահան քաղքի բնիկ են, «շատ տարիներ Հնդկաստան բնակեցան, և մանաւանդ պէն«կալի իշխանութեան ներքև գտնուող գաւառներուն մէջ: «Նոյն տեղերուն իշխանաց հաւանութեամբ ընդարձակ վա«ճառականութեամբ կ'զբաղէին: Ճշդիւ վճարած են ամեն «տուրք, և երկրին օրինաց յօժարակամ հպատակած: Ան«յիշատակելի ժամանակէ մ'ի վեր՝ Ցորք, Թուրք, Պարսիկք, «Թաթարք, Քաշմիրցիք և Հայք առուտուր կ'ընեն Հնդկաս«տանի մէջ: Երկրին նպաստները քաջ գիտնալով թէ ա«մենուն ձեռօք մեծ օգուտներ կ'քաղեն, միշտ քաջալերած են «այն օտարականներն որ առուտուրով կ'զբաղին: Ոչ միայն «մանաւանդ առուտուր ունէին բողոքարկուներն այլ և Անկ«լիա գտնուղ շատ Անկլիացւոց յանձնարարական գործերը «կ'կատարէին:

«Բողոքարկուք միշտ իրենց գործերն ուղղութեամբ կա«տարած են, միշտ հեռու մնալով այն խնդիրներէն որ ի«րենց վաճառականութենան հետ յարաբերութիւն չունէին, «և Ընկերութեան շահերը յարգելով:

«Բողոքարկուք՝ որ Սուճա-ալ-Տովլա նպաստին և Պուլ«վանտ Սինկ բաճային երկիրները կ'թնակէին, սաստիկ զար«մացան իմանալով որ Կալկաթա նստող Ձեր նախագահն «հրամայեր է այս իշխանութեան որ մեզ իր երկիրներէն ար«տաքսէ:

«Բայց որովհետև այս իշխաններն իրենց բարեկամութեամբ «կ'պատուէին մեզ՝ ուղեցին մեզ ամեն գիւրութիւն տալ որ«պէս զի բռնութենէ վերծ մնանք: Այս իրողութիւնն հաս«տատող վաւերական թղթեր ունին բողոքարկուներն իրենց «ձեռքը և կարող են ի հարկին Ձեր տանեաց ներկայացը«նել:

«Այս տեղւոյն իշխանները Կալկաթայի նախագահին հրա-
«մանը կատարելու առեն մը յապաղիկան, բարեսրտութենէ,
«բուռն հրաման, որու պատճառն անյայտ էր. ուստի Պ.
«Վէրէլսդ, Ձեր նախագահն, վճռապէս հրամայեց անոնց
«որ բողոքարկուները բռնէ և իրրև կալանաւոր Բատնա և
«Մուրշիտապատ ուղարկէ, Ընկերութեան հողերը: Այս ևս
«բաւական չհամարելով՝ Պ. Վէրէլսդ իր կողմէ յաւելուած
«գործակալներ ղրկեց որպէս զի հրամանն ի գործ գնեն,
«ինչպէս որ կարող ենք ապացուցանել:

«Հետևապէս՝ բողոքարկուները ձերբակալ լինելով յան-
«կարծ, ոտիպուեցան անմիջապէս թողուլ իրենց բոլոր ինչքն,
«որ անբաւ էր, և չկրցան կարգի դնել իրենց տումարները,
«ընդունելու մի շատ արժէքաւոր որոց աւանդապահն էին:

«Երբ բողոքարկուք բանտն էին, իրենց ազգականներն ու
«բարեկամներն Պ. Վէրէլսդ նախագահին ներկայացուցին այլ
«և այլ խնդրագիրներ, որ անշուշտ Կալկաթայի գիւանա-
«տունն արձանագրուած պիտի լինին. կ'խնդրէին որ մեզ ա-
«զատ թողուն, թէ գրաւականի և թէ անձնական երաշխա-
«ւորութիւն տալու պայմանաւ . . . :

«Այս խնդրագիրներն բարձիթողի եղան և բողոքարկուք
«բանտը մնացին, իրրև ոճրագործներ, և սիրայներու (տեղա-
«կան վնասուց) հսկողութեան ներքև . . . :

«Վերջապէս՝ երբ արձակուեցան՝ բողոքարկուք՝ իրենց մի
«քանի բարեկամներով նախագահին առջևն եկան՝ իրենց
«բանտարկութեան պատճառն իմանալու համար, և միանգա-
«մայն հրաման խնդրելին որ իրենց երկիրը դառնան, որպէս
«զի ինչք ու կալուած կարգի դնեն և կործանումէ ազատեն:
«Պարոն նախագահն և ոչ իսկ մտիկ րրաւ: Հետևապէս բո-
«ղոքարկուք չկրցան իրենց խնդրածն ստանալ և իրենց բանտ-
«արկութեան ու արձակման պատճառն իմանալ:

«Երբ բողոքարկուք Կալկաթա հասան՝ զարմանօք իմացան
«Ձեր ճուտակալէն կողմէ 1768 մայիս 18 թուականաւ հրա-

«տարակուած հրովարտակն, որ կ'արգիլէր ամեն Հայոց և Բոր-
«ղոքալցիէ, կամ անոնց սերունդէն, պէնկալէ, պիհարէ և Օրէ-
«սայէ քաղաքներէն դուրս գոնուած էլչիներուն ժէջ քնակիլ կամ
«առուտուր ընել, կամ նոյն քաղաքներէն անդին վաճառ պահել,
«և ապահանջով այս հրովարտակին դէմ գոնձողներն ձանրագին պատ-
«ժել և անոնց ինչքը գրաւել:

«Հետևապէս բողոքարկուք՝ ինչպէս նաև ուրիշ շատ մար-
«դիկ, ղրկուեցան միջազգային օրինօք որ և է մարդու շնոր-
«հուած իրաւունք, ինչպէս նաև վաճառականութեան ազա-
«տութենէ, զոր վայելած են նոյն իսկ ամենէ անզգամ քնիկ
«իշխաններու ներքև, և մանաւանդ բոլորովին անյայտ են
«ձեռք ձգել իրենց կալուածքն որմէ կոլոպտուեցան բանտա-
«արկութեան ժամանակ:

«Բողոքարկուք մեծ ծախքով Անգլիա գալու ստիպուեցան
«ոտպէս զի Հնդկաստանի Ընկերութեան բարձր ատեանէն ար-
«դարութիւն խնդրեն: Ի վերջէ կ'պահանջեն որ իրենց կրած
«վնասուց փոխարէնը հատուցուի և թէ Պ. Վէրէլսդ և ա-
«մեն անոնք որ այս բռնութեանց մէջ մեղսակից կ'գտուին
«Անգլիա գան, որպէս զի իրենց դէմ բացուած դատին ներ-
«կայ գտնուին և՝ եթէ կարող են, ինքզինքնին պաշտպանեն:

«Սպորջը. ԳՐԻԳՈՐ ԿՈՒԱՄՈՒ և
«Լոնդոն 12 սեպտ. 1769 ԾՈՎՀԱՆՆԷՍ—ՊԵՏՐՈՍ ՌՈՓԵՑԵԼ

Եւ Պ. Պօլդս կ'յարէ. «Այս Հայ վաճառականներն լաւ
«չէին ճանչեր Հնդկաստանի Ընկերութեան վիճակը, նոյնպէս
«ոտր վերաբերութիւններուն խորհուրդները. ուստի կ'երևակա-
«յէին թնապէս որ Ընկերութեան բարձր ատեանը՝ գէթ առ
«երեսս՝ պիտի փութար իրենց արդար բողոքը մտիկ ընելու:
«Սակայն այդ բողոքագիրը փճացաւ, և ոչ իսկ պատասխան
«մը արուեցաւ այս օտարականներուն, որ ստիպուեցան կոր-
«ծանիչ գատ մը վարել: Չորս տարիէ ի վեր՝ Ընկերութիւնը
«կ'հալածէ այդ վաճառականներն Անգլիոյ մէջ. ոտ տարի

կայ որ իրենց առաւտուրը դադրած է, և այնքան մեծ վնասներ կրած են որ իրենց հարստութիւնն ըստ մասին կորսուած է: Իրենց մէջ բերած իրողութիւնները ստուգել տալու համար հարկադրեցան յատուկ պաշտօնակալներ ուղարկել Հնդկաստան, և ապասել որ հարստահարիչներն Անգլիա դառնան: Այս նշանաւոր դատին ելքը դեռ անյայտ է . . . »

Կ'նայիս, Նեղսօն, ինչպէս վարուեր ենք երբեմն Հայոց հետ Հնդկաստան, որու առուտուրն և շատ տեղ վաճառքին պաշտօնները իրենց ձեռքն էին: Բայց Հայը՝ երբ ինդիւրի իր քսակին կ'նայի, շուտով վհատող մարդ չէ, և վերի նկատողութեան տեսար թէ ինչ յամառութեամբ վարեր է իր դատն ահարկու Ընկերութեան մը դէմ, որու վատ ու անիրաւ արարքն արդէն մեր քաղաքագէտներն ու առեւտրականները հարուածեր են խորհրդարանին մէջ:

Ո՞ւր կ'յանգի դատը: Պ. Ռափայէլ իր ընկերին հետ զայն կ'շահի: Պէնկալի բռնասէր կուսակալը, Պ. Վէրէլսդ, ինն հազար ոսկի կ'տուժէ՝ իբրև շահ ու վնաս, Հայ վաճառականներուն տալով, բայց ի դատաստանի ծախքն որ սոյն դուժարէն կ'անցնի: Ազգասէր արդարութիւնը տեղը կ'դայ, թէև անկլիական անունը կ'արատի:

Քանի որ Հայը մեր Թղթակցութեան նիւթն է ստէպ, այս դէպքն՝ իբրև հետաքրքրական՝ պատմեցի: Բայց՝ այս առթիւ՝ աւելի կարևոր խորհրդածութիւն մ'ըրի:

Հայն իր կրօնին ու եկեղեցւոյն համար տաք՝ երբ այդ իր տաճարին պատն աչքին առջևն է, երբ վարդապետին վեղարն ու նշխարքը կ'տեսնէ, գլխովին պաղ է իր հայրենիքին համար: Զոնի հայրենասիրութեան զպացում և այն քաղաքական ազատութեան աղօտ նշոյլն անգամ, որու համար այնքան զոհեր ըրած ենք: Հարուստը մանաւանդ գլխովին անտարբեր է, և այն գանձն զոր կ'կուտակէ՝ ստէպ օտարին ծոցը կը թափէ և չէ թէ Հայաստանի: Ա՛յս ցաւալի իրողութիւն մ'է: Քանի քանի Հայեր, Ռափայէլներու պէս, փճացած են արտասահմանի մէջ, իրենց մարմնով ու դանձով այս եւրոպական աշխարհին մէջ, իրենց կենդանութեան ժամանակ վայելելով միայն նիւթական պերճանք, մարմնական հանգիստ, այլ զուրկ այն աղնիւ ու վսեմ տենչանքէն որով մեծ հոգիներ կ'բարեխնդ: Հարուստ Հայ վաճառականն՝ օտարութեան մէջ, այսօր՝ երբ ամուրի՝ բնիկ հողին համար հառաչ մը հաներ է, վաղը մսքին մէջ աղօտ յիշատակ մը մնացեր, և հեռաւոր օրն՝ երբ օտար կնոջ, օտար լեզուի, օտար շահերու ծոցն է ընկեր, մոռցեր է ոչ միայն հայրենիք, այլ և եկեղեցի, այլ և լեզու և ազգակից և ազգերու ովկիանու մէջ անհետ եղեր գացեր է . . . :

ՆԱՄԱՆ ԾՔ.

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Ի՞նչ բան ունիս Հնդկաստան, բարեկամ: Մինչ Անկլիան նեղ կ'գտնես: Կարող եմ ականջ տալ հիմակ անտարբեր բաներու: Հին պատմութիւն կ'քերթես և նորը կ'մոռնաս: Այդ բանը քու գրական մտքիդ չտուի: Ես ինչի կ'սպասեմ, դու ինչ կ'գրես: Ի՞նչ ընեմ ես մի քանի Հայ վաճառականներու պատն և ինչ յարաբերութիւն ունի այն իմ կեանքիս հետ, մանաւանդ հիմակ որ միաքս բոլորովին՝ միակ, անշարժ նպատակ մ'ունի, այս է դանել Լիլին:

Բայց ինչպէս, այս է խնդիրը: Իսկ դու ինչ ըրիր խնամակալս, Քինկին, որու վրայ պիտի գրէի ինձ: Ո՞ւր մնաց

խորհուրդ տալթօր Բէյնի հետ: Ի՞նչ այլանդակ կենդանի է մարդս: Իր սրտին ու մտքին կից, իր էութեան յարակից բաները գանց կ'ընէ, թերևս տեղական ու բնական աղեցութեանց հնորհիւ, և ինքզինքէն դուրս կ'ելլէ, կ'փնտռէ, կը փափաքի, կ'խօսի այն բանին որ երազէն անդամ չէր անցներ: Իբրև յանդիմանութիւն մի առներ ըսածս: Ես ալ նոյն հակասութեան մէջն եմ: Փնտռածս չեմ գտներ ու չփնտռածս առջևս կ'ելլէ: Թերևս՝ ինչպէս ոմանք կ'կարծեն, հակասութիւններէ Հշմարտութիւն մը ծագի . . . :

Քիչ մը Հայոց խօսքը կ'սիրէր վիս, սակայն անցած պիշերուան գէպքէն ի վեր, այդ ալ Համ Հոտ չունի . . . : Բայց բան մը պրելու է: Այս անշարժութեանս մէջ գոնէ դրիչս թող շարժի:

Ճիշտ է պիտղութիւնդ, բարեկամ, Հայ Հարուստն իր այլանդակ սերմնաթեամբ, Հայ աղքատն իր զրալի տգիտութեամբ պիտի սպաննեն Հայաստանը: Ինչու՞ Հեռուն կ'երթաս: Այս տեղ, Մասիսի տուներին ներքև անդամ՝ կ'պատահի պատմածդ: Պօլսեցի, Պրուսացի, Իզմիրցի Հայեր, որ եթէ ձայն մը ձգեն, արձագանքը կրնայ լսուիլ Հայաստան, կարծես թէ Ամերիկա ու Ամերիկա կ'բնակին, այնքան անտարբեր են իրենց բնիկ գաւառին նկատմամբ, արդէն այս Հայրանի է: Բայց այս բանս շատերը չդիտեն թէ՝ Պօլսի մեծատուններէն, որ ամբոյ կ'կոչուին, Տաճկի փաշաներու Հետ, որոց սեղանաւորներն են, Հայաստանը կ'կեղեքեն, իրենց շահուն Համար: Ինչ որ է Անկլիական Ընկերութիւնն Հընդկաստանի Համար, նոյն են ապագային ակռաները Հայաստանի Համար: Առանք ազդեցութեամբ կամ դրամով այս կամ այն փաշային կ'օգնեն որ փաշայութիւն մը ձեռք ձգէ, և երբ փաշան գահուն մը մէջ պաշտօնի կ'Հասնի, Հայ ժողովուրդը կ'կեղեքէ որ Հայ սեղանաւորներու պարտքը վճարէ: Տեղն է ըսել, ոամկական առածը փոփոխելով. Հայը Հայն ծուռ ցաւ, Աստուած վերն զբօսցաւ . . . : Հայ դրամատէրին դանձուն աղբիւրը Հայաստանցիին Համբարանոցն է, որու վրայ տասանորդի և այլ տուրքէ զատ՝ կ'դրամի նաև փաշաներու ըրած փոխառութեան տոկոսի քարդ է քարդ տուբէը, եթէ այսպէս ներելի է խօսիլ:

Հայ դիւղացին կ'Հարստահարի ներքէն ու դրսէն, կ'Հեծեծէ, կ'լայ, բայց որմէ՞ խնդրէ արդարութիւն: Իր գատաւորն է Հարստահարիչն, որու փաստաբան կ'կանգնի իր ապաշնորհ Հայրենակիցն, որպէս զի փոխ տուած դրամին տոկոսը չկորսուի: Իսկ Պօլսի ժողովուրդն՝ որ գոռ ևս կէս վայրենի և կէս նահապետ է, ներգործութիւն չունի ազգային գործերու վրայ, որոց գլուխն է ֆեթֆէչն անուն ժողով մը, որ Պատրիարքի կամ ազգապետին արբանեակն կամ գահիճն է ըստ պարագայից, այնպէս որ Պատրիարքարանի վաչելած իրաւասութիւնն, անիրաւ ամիրաներու կրից Հարակ կ'դառնայ կ'ըսեմ, երբ կ'տեսնեմ որ երկու Հզօր ամիրայ իրենց արբանեակներով բանակներ կ'կազմեն և իրարու դէմ կ'մաքառին, մին այս միւսն այն փաշային վրայ կ'կռթնի և անխղճօրէն ազգը տակն ու վրայ կ'ընեն, մէն մին իր խօսքն յաւաղ քշելու կամ նոր Պատրիարք մը կարպելու Համար: Հետևապէս պաշտօնէութեան փոփոխութեամբ կ'փոփոխուի նաև ամիրայական ազդեցութիւնն, և Տէրութիւնն Հեռուէն կ'քաջալերէ այս երկպառակ վիճակն, քանի դիտնալով որ՝ իր Հպատակներուն մէջ միութիւնն վտանգաւոր երևոյթ մ'է: Իսկ Հայ ժողովուրդն, որ ոչ օրինաւոր մամուլ ունի, ոչ ընկերութիւն, ոչ ազգային օրէնք, ոչ լսարան, ոչ թատրոն, որ ձայնը լսելի ընել տայ, և ոչ բնական Հայրենասիրութիւն ու լուսաւորութիւն որ գործոց գլուխն իր Հաւնած մարդիկը դնէ, չտեսներ վարպետին հոսին անցած գարձածը, այլ միայն եկեղեցի, հիւանդանոց կ'մտածէ. հիմնարկութիւններ, զոր յանկարծ ամիրան՝ ազգէն կորզած ստակովը կ'կանգնէ, անոր բարեգործութեան անունը տալու Համար: Ցետոյ՝ ինչպէս Ս. Պաղը շատ անդամ մարգկային ազգի

թշնամի և պատուհաս եղող մարդիկը սրբոց դասը կ'անցընէ, նոյնպէս Հայ ժողովուրդն իր բարերարներուն Բանիմէոնը կը դասէ ամիրաները, որ ազգին պէբէպէյներն են, ինչպէս են փաշաները զաւառներուն։

Այս է՝ առ հասարակ՝ Հայ աշխուաական դասն, որու բնաւպէս աջակից, զաւակից ու մեղսակից է եկեղեցականն։ Դաս մ'որ իր նախնեաց չնորհը չունի և ոչ պարզութիւնը, վասն զի աստուածաբանութեան և կամոլիկութեան կ'միտի, ժողովըրդեան իրաւունքը կ'անգիտէ, և թէև անոր ծոյլն եւած, անոր հացովը մեծած է, աշխուականներու սուրը կ'քաշէ։ Իր բեմէն ոչ ճշմարիտ, ոչ հայրենասիրական և ոչ իսկ աւետարանական խօսք մը կ'լսուի, այլ միայն՝ փոռէ, փոռէ, թէև փոխարէնն՝ հոգւոյ հաց, մաքի սնունդ տուած չունին, և երբէք տալիք չունին, քանի որ տգիտութեան, փառասիրութեան ու պաշտօնասիրութեան սահմանները դեղերին։ Հայ կղերն օրէ օր իր վարիքը կ'կորսուէ և աշխիւ ու մեծ պաշտօն մը կ'նուաստացընէ, այնպէս որ ազգին մէջ անճարակ, դատարկասուն, անհոգ մարդիկ կ'եղենեն կրօնաւոր կ'գտնան և հացի համար ամեն նուաստ միջոցներ ի գործ կ'գնեն։ Այս մասին ժողովուրդը բոլորովին անպարտ չէ, և մինչդեռ մեր մէջ սովորաբար բարձրագիր և արժանի մարդիկ՝ ծննդով և ուսմամբ՝ կրօնական դասը կ'մտնեն, այս տեղ՝ ընդ հակառակն՝ այդ պաշտօնին կ'կոչուին աննշան մարդիկ։ Իսկ եթէ երբեմն ոմանք՝ կարծելով որ վեղարն անվտանգ պատսպարան մ'է, կրօնական բեմն ճշմարտութեան ապաստանարան մը, և հայրենասիրութենէ շարժեալ՝ կ'եղենեն կրօնական ուխտը կ'ընդունին, զոհելով ամեն աշխարհային վայելք ու ազատութիւն, քանիօն կ'զղջան, երբ չորս կողմէն կաշկանդուած կ'մնան, անաւես կ'անցնին կամ կ'հալածուին, միայն անոր համար որ արժանիք ունին և ազգին ծառայելու եղանակը գիտեն, ճշմարտութեան և ազգային անկախութեան ակոյեան կանգնելով։

Անտարակոյս պիտի գայ օր մ'որ Հայ եկեղեցին մտած դեղծութիւնները պիտի սրբուին լուսով, բայց այս գործը յաւտնի չէ կղերէն այլ աշխարհական դասէն, որու մէջ փոքրիկ մասը մը կ'աշխատի և մեկ կողմէ կղերին վատ ներգործութիւնը կ'նշաւակէ, թերևս քիչ մը յանդիմանի ամեն չարեաց շարժառիթ համարելով, միւս կողմէ եւրոպական ազատ գաղափարներու թարգման կ'կանգնի և աշխուական ու կղերական դասուն աւրոյը՝ կրօնքը՝ կ'խրամատէ։ Այս է անշուշտ ամեն ազգի մէջ յառաջդիմութեան աենչն, որով փորձ կ'փորձուի քանդել կամ հարթել այն խոչնդոտները որ սոյն յառաջդիմութեան դէմ կ'կանգնին, սակայն պէտք չէ մոռնալ որ չափէն աւելի եռանդ ու խանդ շինելու տեղ կրնան այրել, և կ'նշմարեմ որ գլխաւորապէս Բարիզ ուսում առած Հայ պատանիներ, իրենց ազգին հանդամանաց ու գոնուած միջավայրին անգէտ, շատ արմատական են կամ կոպիտական, և կ'օրինակեն ինչ որ տեսեր են կամ ուսեր, սովորութիւն, օրէնք ու հիմնարկութիւններ, նոյն իսկ եւրոպական մոլորանքն, որ բոլորովին անյարմար են արեւելեան ժողովրդեան մը կացութեան ու բարուց։

Եւ իրօք՝ Բարիզէն հառնող Հայը՝ բարիզցի, Անգլիայէն եկողն, անգլիացի, Իտալիայէն եկոլն՝ իտալացի կ'ուզէ ընել Հայը, իսկ ամենէ առաջ Հայը բուն Հայ ընելու մտածող քիչ կայ։ Ազգ մ'իր յատուկ տարրներով կրնայ զարգանալ, եթէ անոնց լաւ ու լուսաւոր ուղղութիւն մը տրուի։ Յառաջդիմութեան օրէնքը բռնադատել որ որոշեալ արգիւնք մ'արտադրէ, բարեշրջութեան օրէնքն անպիտէ է. ամեն զարգացում իր յատուկ տեղն ու ժամանակն ունի։ Փոխադրել Հայոց մէջ եւրոպական քաղաքակրթութեան ամեն հանգամանքն և իսկոյն հայութիւնը կ'ջնջուի. պահէ Հայը միշտ իր անշեղելն կամ ճայուն վիճակի մէջ և հայութիւնը հաստատուն կ'հիւծի։ Կարևորն է նկատել անոր իսկական պիտոյքը։ Արմատական նորոգութիւն՝ ըստ իս՝ իր կրթութեան եղանակին նո-

բոգուած է, որ գեռ մինչ նախարեան կ'համարուի: Գեռ կ'տիրեն իր գպրոցներուն մէջ քրիստոսեփին ասացն ու դասագիրը, գեռ կրթութեան հաղորդ դառնալու դարձի չունի, գեռ լեզու չունի կանոնաւոր, գեռ նոր գրականութիւն չունի և դասագիրք, և սակայն կ'երևին ոմանք կ'պահանջեն որ առանձնաշնորհութիւն և քաղաքականութիւն ունենայ: Այս պարզապես անմտութիւն է: Իսկ անոնք որ այս չքաւորութեան շարժառիթէ եկեղեցին ու կղերը կ'սեպեն, չեն մտածեր որ այս երկու հիմնարկութիւններն կ'նորոգուին, երբ նորոգուին հոգին ու միտք, երբ ազգին մանկանին նոր լուսով վերածնի:

Մինչեւ դեռեւս, Պարոն Վ..., որ ամեն դատաստան, քաղաքն ու գիւղ իր յաւտակ սովորութիւնը, կրթութիւնն ու կեանքն ունի մեծ ազգային և մեծ ընկերական գործերու մէջ, այնպէս որ գեռ այլ և այլ քաղքի ու գիւղի Հայերը իրարու միտք ու լեզու չեն իմանար, և մէն մին, իրրև տարտեղեղ՝ կ'աշխատի իր շրջանին մէջ, ենթագրելով որ կ'աշխատի, զարդանալու: Այս զարգացման համար անբաւ այժ կ'ըսպառէ, որու արգիւնքը չնչին է, ըստ որում նպատակ և ուղղութիւն տարբեր բաներ են: Պարզ օրինակով մը բացատրեմ միտքս: Հայ ժողովուրդը կ'նմանի տան մ'որու անդամներն զատ զատ պաշտօններ կատարելու տեղ, միահամուռ նոյն աշխատութեամբ կ'պարապին: Ամեն մէկն աւելը ձեռքն սենեակ մը կ'աւլէ, առանց մտածելու որ նոյն տան մէջ կերակուր եփող, հաց շաղող ալ պէտք է, և՝ այս ընթացքով՝ աշխատութեան բաժանման հակազարձը, ժամանակի կորուստ, խնայողութեան անգիտութիւն, ազգային գրամագլխի պակասութիւն և, հետևապէս՝ չքաւորութիւն կ'տեսնես:

Թիֆլիզ, Պօլիս, Իզմիր՝ օրինակի համար՝ գոսագրքի մը պէտքը կ'զգացուի: Ամենը նոյն դասագրքին կ'աշխատին, տարբեր ոճով, տարբեր սկզբունքով գործ մը կ'հանեն: Սակայն եթէ նպատակի միութիւն, կրթութեան միօրինակութիւն,

քարոյական հաղորդակցութիւն և համաձայն սկզբունք, գէթ գրական նոյն լեզուն, ունենային, անշուշտ աշխատութեան բաժանման շնորհիւ, գիտի կարենային կատարել միամեայ միջոցի մէջ յառաջդիմութիւն մը զոր այժմ հազիւ թէ քսան տարուան մէջ կարող են ձեռք ձգել: Ի՞նչ անպարմանելի կորուստ ազգի մը համար:

Ջեմ ուզեր խօսիլ Հայոց ընկերական ու գրական կեանքի վրայ, որ անդրադարձութեամբը կ'փայլի: Անոնց մէջ շատ բան հին գրութեան մէջ, մէկ քանին վէմի տակ, և հազիւ թէ մի քանի խնդիրներ լուծման վիճակի մէջ կ'գտնուին: Մինչդեռ այլ ազգեր շտիով, եռանդով կ'շարժին, մինչդեռ իրենց ճարտարութեամբ ու գիտութեամբ կ'սահիպեն բնութեան ոյժերն ինչ որ կարող են արտադրել, Հայերը տակաւին Հոգին Սրբոյ, Դաստարակի, գրաբառի և ուրիշ սքօլաստիքական վէճերով կ'յուզուին: Մասին մշակութեան ու յարաբերութեան առաջին պայմանը, լեզուն՝ կ'պակսի իրենց, և կ'յուսան հրաշքով մը կենդանութիւն տալ լեզուի մ'որ արդէն մեռած է ընդ միշտ: Տգէտ ժողովուրդներ միշտ ծայրայեղ են, բանաւոր միջին ճամրան բռնել չգիտեն, բնութեան օրէնքը կ'անգիտեն: Ոմանք գրաբառով ազգը վերաշինել կ'յուսան, այլք նոր լեզու մը ստեղծելով. . . :

Եթէ այսօր Վօլգը Սքօթ և Թէքերէյ Զօսրի լեզուն թոթովելու կամ մրմռալու փորձ փորձէին ինչպիսի բսէինք — խելագարեր են. և սակայն այս տեսակ խելագարներ չեն պակսիր այս արևելեան ժողովուրդ մէջ որ չգիտեն թէ ամեն մարդկային հիմնարկութեան պէս լեզուն ալ իր յաջորդական այլափոխութեան օրէնքն ունի, և գրադէտ մ'ինչ հանճարեղ ալ լինի, չէ կարող զայն բռնազբօսել:

ՆԱՄԱԿ ԾՓ

ՎՈՒՏ ՍՈ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Քաբեհամ, կ'ըսուէր որ Հայն իր հինուէն լաթերը կարկատէ և ատելի նոր ու կարևոր բանի կ'պատնամ: Լաւ միտք էր: Երկիւղս անհիմն չէր: Լէտի Իսահէմի զայրոյթն օրէ օր կ'սաստկանայ: Միտքը դրեր է գտնել անվրէպ իր աղջիկը Լիլլին և հինգ հազար ոսկի խոստացած է զայն գտնող բերողին: Ղազմանլի կին, կարծէ թէ ոսկիով կարող է անպատանելին գտնել. միամիտ կին, կարծէ թէ Լիլլին Անկլիա է, մինչդեռ Պոսֆորի ափունքը կ'պեղերի և թերևս յարդքու ձեռքիդ տակն է, եթէ իրացան տեսլէդ կամ երազդ . . . կարծես թէ վրէժը կ'գրկէ զիս երթալ յայտնել այդ պատառ կնկան որ գիտեմ Լիլլին բռնն, և պահանջել խոստացած դումարն, որ ի հարկէ քեզի ատելի կ'պատկանի, քանի որ դու գաղտ ես այդ էակը . . . :

Ա'նայնն, սիրելի Նելսօն, ինչպէս կ'մոլորեն, մանաւանդ հինգան մը սիրան ու միտքը, վիրաւոր ինքնասիրութիւնն ու փառամոլութիւնը: Ուրիշ պարագայի մէջ շատ ախտական կիներ անտարբեր աչօք կ'նային, կամ լաւ ևս ըսեմ, կ'ուրանան իրենց աղջիկունքն՝ երբ ատոնք՝ որ և է զգացումէ շարժած՝ ամնատպետական լուծը թօթափելով՝ կ'ընկնին Լոնտոնի հրապարակն. ուր քանի քանի տոհմիկ օրիորդներ, ընտանեկան ոսկի շրջանակը կոտրելով, կ'թափառին՝ թերևս աղատ օդ ու սէր շնչելու և աշխարհային զուարճութեանց գառնութեան հետ անկախութիւն վայելելու: Իսկ լէտի Իսահէմ, որու աղջիկը մի միայն ազնիւ ու անմեղ սիրոյ մը ներշնչութեանց հետևելու յանցանքն ունի, կ'հալածէ զանի, կ'փնտռէ և գտնողին մեծագումար պարգև մը կ'խոստանայ. ինչ հակաստութիւն . . . :

Ա՛յս բաւական չէ. լէտի Իսահէմ՝ փաստաբաններէ շրջապատուած՝ մտադիր է տրքթօր Բէյնի գէմ գատ բանալ, իբրև աջակից Լիլլի փախստեան: Մեր օրէնքը խիստ է, պիտես, այս մասին, եթէ մանաւանդ հաստատուի որ պօրծին մէջ բուռն առևանգ ու բռնազբօսում կայ: Ըստ երևոյթին՝ այդ ցանցին մէջ աղնիւ տիկինը զիս ալ պիտի նետէ և դէթ իբրև վկայ պիտի կոչել տայ: Արդ՝ նա, ինչպէս որ կ'իմանամ, կասկած ունի թէ՝ պ. Բէյնի՝ իր շահուն համար, Լիլլին յորդորած կամ ստիպած է խոյս տալու, և այս կասկածն փաստերով հաստատելու պատրաստ են անշուշտ իր իրաւապետները, որչափ փաստ այնքան հարիւր ոսկի ստանալու պայմանաւ:

Ա՛յս լուրերն տատգելու և միանգամայն դիշերային հանդիսին նկարագիրդ անոր կարգալու համար մտադիր էի գնալ պ. Բէյնը տեսնել, երբ անդնեալ օր՝ այդ ծերունի բժիշկն՝ որ սովորաբար պաղարիւն է ծանր պարագաներու մէջ, տունս եկաւ և արձանի պէս ներս մտաւ: Սակայն իր սառ կերպարանին ներքև կ'ընդնշմարէի այլայլութիւն մը, մոխրի տակ կրակ մը, որու կայծերն իր մանր շարժուն աչերէն կ'ցայտէին:

— Ձես հարցրներ, ըսաւ նա, բաւական մեծ ատգնապի մէջ եմ: Լիլլին փախստան դլխիս փորձանք պիտի լլկի, իմ պատիւս պիտի արատէ, և իմ պատիւս, Ճէքսբիրի հետ կ'ըսեմ, իմ կեանքս է:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'անդնի:

— Քսան հինդ տարի կայ, լորտ Իսահէմի տան բժիշկն եմ, և դեռ նոր կ'ճանչեմ լէտի Իսահէմի բնութիւնն: Քսան հինդ տարի պիմամ հադնիլ, ահռելի կին: Փառամոլութիւնն իր սիրտը կ'կրծէ. այդ չըրցած վիսին մէջ սև ու չար արիւն մը կայ միայն, վըհ՛ժ:

— Որմէ՞:

— Իրմէ, քեզի անպարտ եմ: Իր յատուկ փաստաբանէն հրաւէր ստացայ ընթրիքոյն պատրաստուելու, և դիտես որ գաղի ելնել, երբ դատախազն ազնուական տունէ է, Անկլիոյ մէջ, ժամանակ, հարստութիւն, անուն ու պատիւ վրայ առալ է:

— Երկիւղդ անպատճառ կ'գանեմ, բարեկամ, ըսի Տոքթօր Բէյնի: Անարատ համբաւդ պիտի պաշտպանէ քեզ ամէն տուտ ամբաստանութեանդ դէմ:

— Բայց ներքին զօրաւոր ազդեցութիւնները վճիռն ինձի դէմ դարձընելու պիտի նկրտին:

— Այս նամակը, պատասխանելի դիրդ ցոյց տալով, բաւական է քեզ բոլորովին անբասիր հանելու:

— Ի՞նչ նամակ . . . : — Եւ տոքթօր Բէյնի աչքը շողաց. սեւեռեց նայուածքը նամակին վրայ և կարծես թէ ամէն բան դուշակեց.

— Լիլին ընչո՞ Պօլիս է, յարեց նա իր հանդարտութիւնը դտնելով:

— Այնպէս կ'երևի . . . — և ձեռքը տուի նամակդ զոր լափեց և յետոյ շարայարեց.

— Այս նամակն անկին ղէնք մ'է: Թող աշխարհիս ամէն փաստաբանները վկնին մեզի դէմ, փոյթ չէ, վկնաթաթի պիտի ձնան ատոր առջև: Պահէ զայն, Պարոն Վուտ, քիչ օրէն պէտք պիտի կնի: Միայն զրէ բարեկամիդ որ հապ տանի Լիլին շուտով երևան հանելու և անոր հետ մնանալու:»

Եւ տոքթօր Բէյն փեղոյրը կ'առնէր որ մեկնի, ինձ շնորհակալ կնելով, երբ անոր ըսի.

— Բարեկամ, դիտես, ամէն ծառայութիւն փոխադարձ է: Ես ալ դաղտնիք մ'ունիմ երևան հանելու, և քու աջակցութեանդ կ'կարօտիմ: Վաղուց կ'փափաքէի խորհրդ հարցընել քեզ ինդրոյ մը վրայ, և ահա խօսելու յարմար ժամը հասաւ:

— Խօսէ, բարեկամ, քեզ մտիկ կ'ընեմ:»

Այն ատեն համառօտ պատմեցի անոր կենացդ մութ պատգանները: Տոքթօր Բէյն՝ թէև փորձ և շատ բան տեսնող ու լսող մարդ է, իմ պատմութեան վրայ յաճին ծայր զարմանք ցոյց և ըսաւ.

— Բայց ինչո՞ւ համար ցարդ ծածուկ պահեր ես իրմէ այդ կարևոր իմաը: Ես Պ. Քինկը կ'ճանչնամ . . .

— Ի՞նչ, կ'ճանչնաս Պ. Քինկը:

— Անշո՛ւշտ, էմի Խատհէմի բարեկամն է:

— Էմի Խատհէմի՞. այդ իրը միշտ մեր առջևը պիտի ելնէ: Ի՞նչ այլանդակ ու նոր կասկածներ կ'խուժեն միտքս: Արդեօք դաւ մը կայ այս գործին մէջ, և անմեղ Նելսօն դատապարտութեան զո՞հ ընկած է:

— Ամէն չարիք յուսալի է այդ ազնուական կնիկէն, ըսաւ տոքթօր Բէյն հեգնօրէն և շուրթը խածաւ:

— Գոնէ հնարք չկայ հանելուկը պարզել, քանի որ Պ. Քինկ ծանօթ է քեզի:

— Հաւանական է: Սակայն մի քանի տարիէ ի վեր այդ մարդը տեսած չունիմ, և չդիտեմ թէ ուր է: Արդեօք զայն իրրև գործիք գործածելէն ետև՝ էմի Խատհէմ կոտրեց, երբ անպէտ կամ վտանգաւոր դտաւ զանի: Ես ալ՝ քեզի պէս՝ այս մութ ու կնճռոտ խնդրոյն մէջ, Պ. Նելսօնի ընտանեկան յարաբերութեանդ մէջ էմի Խատհէմի աղջատ մատը կը նշմարեմ. . .

— Ի՞նչ կ'ըսես, բարեկամ:

— Ահա դլացածս: Իրրև տան բժիշկ՝ տվրը էր ամէն դնալ ըլլա Խատհէմին. այս մտօք ու մարմնով յաւադար մարդը, որ ընկերութենէ խոյս կ'տար, մանաւանդ իր կնկան երեսէն: Այն աեղ կ'տեսնէի Պ. Քինկն, դաղտնապահ ու խորհրդաւոր անձ մ'որ շատ կ'սեակցէր էմի Խատհէմի հետ և՝ ըստ երևոյթին՝ անոր խորհրդակիցն էր: Ի սկզբան՝ բնական հակակրութիւն մ'ունէի այդ մարդուն դէմ, թէև ան-

ՁԱՆ ու հանդարտ մարդ մը կ'երևէր, վասն զի միշտ լռմէ հեռու կ'կենար և գողի պէս տունը կ'մտնէր կ'ելլէր: Այնպէս կ'թուէր ինձ, որ ինչպէս գրեթէ ամեն լրագրի կին մտերիմ մ'ունի, լէտի Խատհէմն ալ պ. Քինկն ընտրած էր իրեն սրտակից: Այս ենթադրութիւնս ճիշտ չէր. չարաչէր կիներ երբէք սէր չեն զգար, և եթէ անձնատուր իսկ լինին, չար նպատակի մը համար է . . . . Լէտի Խատհէմի սրտակցութիւնն ալ պ. Քինկի հետ անշուշտ նպատակ մը պիտի ունենար, որու հետաքրքիր չէի, վասն զի անկեղծ բժշկի մը պաշտօնէն դուրս է աւտնին գաղտնեաց հետամուտ լինիլ: Արդէն Լիլլին սաստիկ կ'ատէր Քինկն, ինչպէս որ իր պաղ ընթացքէն կ'դուշակէի, և ես պատճառ մը չունէի գանի սիրելու: Սակայն՝ պ. Քինկ իմ առջևս կ'պատկառէր, կ'շփոթէր, ծանր բեռ մը կար, կարծես, սրտին վրայ, և այդ բեռը թեթևցընելու միջոց մը կ'փնտռէր: Քանի քանի անգամ պատահական խօսակցութեան մէջ այս խօսքը կամ փսփսուքը լսեցի բերնէն. — «Պարոն Բէյն, ողջառոյգ մարդ ըեմ, բայց սրտով հիւանդ ու մտքով տկար: Պիտի յայտնեմ ցաւս քեզի, երբ առիթ դտնեմ.» Այս առիթը չդտաւ ամենևին պ. Քինկ: Օրէ օր տրտմութիւնը կ'տիրէր իր վրայ. կ'նմանէր մարդու մ'որ օձիքը ձեռք տալու կ'վախնայ և միշտ ետին կ'նայի, իր շուքն իր թշնամին, իր շունչն՝ իր մատնտուն կ'կարծէ: Մի քանի տարի եաք՝ պ. Քինկ բոլորովին այլայլեր էր, հալեր մաշեր, կմախք մը դարձեր էր: Հասաւ ժամանակ մ'ուր ինք լրատ Խատհէմի տունէն ոտքը կտրեց. այս ճիշտ այն ժամանակն էր՝ երբ պ. Նելսօն սկսաւ յաճախել իմ ծուխիս տունն և Լիլլիի հետ յարաբերութիւն հաստատել: Այն տարին նշանակութիւն չտուի այս տարաձայութեան, բայց հիմակ քեզմէ իմացածիս վրայ՝ կ'հետևցընեմ որ պիտակած գործ չէր այն: Երբ պ. Նելսօն ներս կը մտնէր, պ. Քինկ դուրս կ'ելնէր, թերևս հետը տանելով այն գաղտնիքն որու աւանդապահն էր ինք: Դիպուած չէայ,

պարոն Վուտ, մարդկային գործերու ընթացքին մէջ, սմին քան իր բնազատճառն ունի, որ սակայ մեր աչքէն ու հաշուէն դուրս մնալով՝ դիպուածի երևոյթ կ'ընդունի: Երբեմն հիւանդութեան մը բնութիւնն իմանալու համար կ'ստիպուիմ հիւանդին պապերուն խառնուածքը կրկտել: և՝ ըստ իս՝ շատ մը ցաւեր որոց գեղը դիտութիւնը չդտներ, այն ժամանակ պիտի բուժին՝ երբ դիտութիւնն հիւանդութեան ծագումն եբնեան հանէ: Մեզի դեղեր չեն պակաս, այլ այդ դեղերը գործածելու եղանակն՝ ցաւին բնութեան համեմատ, որ ոսկ գաղտնիք մը կ'մնայ . . . :

— Այս պարագային մէջ դարմանն ի՞նչ է, ուրեմն, լէտի Խատհէմ անհպելի, Լիլլի դեռ անգիւտ, պ. Քինկ անյայտ, ո՛վ պիտի ցրուէ այս մթութիւնն, ո՛վ պիտի բուժէ մեր բարեկամ, Նելսօնին հիւանդութիւնը:

— Թէև՜ յաւէտ անյայտ ենք, պարոն Վուտ, այդ դաղտնիքը, եթէ պ. Քինկ անյայտ ենք և լէտի Խատհէմ միշտ թունաւոր իժ մը: Իսկ՝ եթէ արդարութիւն, խիղճ կայ աշխարհիս երեսն, ինչպէս որ ոմանք կ'պնդեն, ընէ՜ն ամեն բան յայտնուի: Միայն այս դիտցիր որ զիս միշտ պատրաստ պիտի դտնես օդնելու՝ թշուառութեան և հիւանդութեան: Այս կերպով մարդկային պարտք մը կ'կատարեմ և փոխարէն սրտի հանգստութիւն և լաւ անուն կ'փնտռեմ: Բայց ահա դատ մը կայ մեր առջև, որ իմ միտքս կ'վրդովէ: Ո՞ դիտէ, կարելի է այս գատէն նոր լոյս մը ծագի և զայն վաւորէն այրէ . . . :

— Հնար մը չկայ պ. Քինկը դանելու:

— Ամեն գործնական միջոց ի գործ դրեր ես, բարեկամ: Ես բարոյական միջոցներ պիտի գործածեմ: Սակայն խորհելու ժամանակ կ'ուզեմ: Բժիշկ մը շուտով չծնիր խորհուրդ մը, ինչպէս կ'ծնին անոնք որոց կեանքը մի քանի գաղափարներու շրջանին մէջ կ'դառնայ: Ծոմն օրըան մեծ այնքան խորհ է անդունդն . . . :»

Այս ըսելով՝ պ. Բէյն ձեռքս սեղմեց և խօսք առաւ զիս վերստին տեսնելու։

Սիրելի Նելսօն, այս դիրս մենութեան կարօտ չէ, և ցայց կ'ասէ՝ որ եթէ դու սրտով կ'չարժիս, ես մարմնով դանդաղ չեմ, և անշուշտ գործ մը պիտի տեսնեմ։

ՉԱՓԱՀ ՍԴ

ՆԵԼՍՕՆ ԱՒ ՎՈՒՑ

Կ. Պալէ . . .

Բարեկամ, Դուռ քաշելիք ունիմ։ Կին մը մեղ իր ուռկանին մէջ կ'ամփոփէ, և հիմակ սկսեր է փաստաբանի ու պիւանագէտի դիմել որ մեզ հալածէ։ Գիրդ զարմանալի լուրեր կ'բերէ ինձ և իմ աչքս կ'բանայ, կ'նայիմ որ կ'չարժիս, և միշտ առջևդ լեռն Խահէմ, այս տգեղ ու նենգամիտ կինը կ'եղնէ։ Արևելք փախայ և նորէն հանդիստ չունիմ առաջ երեսէն։ Սէրս քաղաքական խնդիր մը կ'դարձնայ։ Տէր Աստուած, ինչ օրերու հասեր ենք։ Անողոքելի է ընկերութիւնն այն անձին դէմ որ հասատատալ անիրաւ օրէնքներ չ'յարգեր . . .։

Առաջին անգամ կենացս մէջ պիւանագիտի մը հետ կ'տեսնուիմ, և ինչու համար, իմ անցպրիս, իմ հպատակութեանս համար, ուչ, սիրոյս առթիւ։ Կ'նայիս, դեսպան մը որու պաշտօնը պիտի լինի քաղաքական յարաբերութեանց միջնորդ կանոնիլ, ոչ միայն կրօնական, ընտանեկան, անհատականն գործերու մէջ կ'մտնէ այլ և ազգագրական, և այս դեսպանն է, լորտ Քէնինկ, Թուրքիոյ երկրորդ սուլթանն, որ մեծ հռչակ ունի իր վէս, անյողդողդ, արդարասէր բնաւորութեան կողմէ։ Երևակայէ թէ ուրիշ դեսպաններ ինչքեր չեն գործեր երբ Քէնինկ մը կ'խոնարհի լեռի Խոտհէմի թարգման կանոնիլ և սիրային յարաբերութեանս միջամտել։ Այս անհատատալի կ'թուի քեզ, բայց փորձն իմ վրայ ըրի։ Պատմեմ եղելութիւնը։

Նամակդ հասիս առեր կարդացեր էի, բարեկամ, զարմանալով տոքթօր Բէյնի հետ ունեցած խօսակցութեանդ մասին, որ նոր լոյս մը կ'սփռէ իմ ընտանի կենացս վրայ, երբ Անկլիոյ դեսպանին կողմէ հրաւէր ստացայ իրեն ներկայանալու։ Թէև դիւանագէտ ու քաղաքագէտ մարդիկը չեմ սիրեր, թէև դիտեմ որ շատերը սպաշտօն ունին ընկերային զեղծմունքը պաշտպանել և ժողովրդային իղձերն ու տենչը դէպ ի ազատութիւն զսպել, թէև դիտեմ որ մեծ ու մարդասէր հանճարներն անդամ քաղաքականութեան բովին մէջ կ'սեղմուին ու կ'հալին, սակայն Քէնինկի մը հրաւէրը մերժելի չէր։ Ուստի կ'ներկայիմ դեսպանատունն և սիրալիր ընդունելութիւն մը կ'գտնեմ, ոչ միայն դեսպանին կողմէ, որ բարձր հասակ, ոսկրուտ դէմք, արծուի քիթ, հաստատ ձայն, անկեղծ հերպարան մ'ունի, այլ և դեսպանուհւոյն կողմէ, որ կարծես թէ իմ պատմութեանս տեղեակ էր։

Պահ մ'եաք՝ դեսպանը զիս իր առանձին գաւիթը կ'տանի և կ'ըսէ.

— Պարոն Նելսօն, դիտեմ որ դու, զինուորական մարդ, դիւանական մարդերէ կ'խորշիս, բայց ես իբրև դիւանագէտ չպիտի խօսիմ քեզի հետ, այլ իբրև քաղաքացիդ։

— Ես, ըսի, իբր այն կ'նկատեմ ձեզ, թէև արևելեան վեհապետ մ'էք, և սուլթաններու գահը ձեր աղուս խօսքով կ'սարսեք։

— Այո, այն գահն որ երբեմն բոլոր Եւրոպա կ'սարսէր, դեսպանները կ'փակէր Եօին աշտարակները, Ֆրանսայի պ. Սանկ

և Հէյ դիւանագէտները կ'քանակոծէը, այսօր տարբեր կացութեան մէջ է . . . բայց մեր խնդիրը քաղաքականութեան վրայ չէ։

— Եւ ինչ յարաբերութիւն կայ ձեր և իմ մէջ։ Ես կամաւոր տարապիր մ'եմ։ Սև բաղդս զիս այս կողմերը նետեց, և թերևս այս տեղ անցընեմ իմ տխուր կեանքս։

— Ի հարկէ նպատակ մ'ունիս։ Անկլիացի լինիլ և նպատակ չունենալ, անըմբռնելի է ինձ։ Աննպատակ մարդ և տէրութիւն, ասոր պէս, կ'քայքային։

— Քաղաքական չէ իմ նպատակս, այլ ընտանեկան։ Անկլիոյ արևը շատ ամպոտ դասյ, յոյս, սէր, փափաքներ թաղեցի այդ երկիրն, ուսկից Պարոն մը հալածական կ'ընդէր, և եկայ Արևելք որ իր պայծառ արևուն ներքև պաղ կեանքս քիչ մը տաքնայ . . .

— Սիրող սիրտ մը չպաղիր երբէք, և դու Պարոն Նելսոն, կ'սիրես։

— Ուստի՞ գիտէք, չեմ պահեր սէրս, որ սակայն դեսպանական գործ չէ։

— Կ'սիրեմ ազատախօսութիւնդ, Պարոն Նելսոն, ու միայն կ'կարեկցիմ վիճակիդ։ Սէրդ հանրական խնդիր մը դարձած է և մինչև դիւանական թղթակցութեանց մէջ մտած։ Բարձր տեղէ կ'խնդրուի իզմէ որ փնտռել տամ լորտ Իսահէմի դստերն որ կ'կարծուի թէ Պօլիս է, և ի պաշտօնէ տեղեկութիւն հաղորդեմ։ Իմ յատուկ զգայմունքիս հակառակ է միջամտել սրտի գործերու մէջ, միայն պաշտօնիս բերմանքը կ'տեսնել զիս հարցընել քեզ թէ վերջապէս հասա՞ր փափաքիդ, օրիորդ Լիլին դասո՞ր . . . ։

— Միթէ դէմքս չըմնաներ որ դեռ գժբաղդ եմ . . .

— Գոնե ուր գտնելը գիտես անշուշտ։ Հաւատաի եղիր որ իմ միտքս ձեր յարաբերութիւնն արգիլել չէ։

— Ձեր բոլոր գործութեամբն, աղնիւ դեսպան, արգիլել անգամ ուզէք, չե՛ կրնաք։ Ա՛յսքիմ միայն որ ես ալ չեմ՝ կարող ատոր տեղեկութիւն տալ ձեզի այս մասին։

— Գիտեմ և չես կարող, թէ ոչ կարող ես և չես կամիր։

— Ձգիտեմ. բայց այնպէս կ'երևի ինձ որ օրիորդ Լիլին մայրաքաղաքս է, և զայն գտնող ու մորը գարձընողն հինգ հազար ոսկի պիտի ընդունի . . . այս գիտէք, տէր իմ։»

Այս խօսքիս վրայ լորտ Քէնինկ աչքերը խոշոր բացաւ և քայլ մը ետ գնաց, որպէս թէ օձ մը խայթեց իր ներբանը։

— Այդպիսի պաշտօն մը չունիմ, գոչեց լորտը վէրօրէն, և կ'զարմանամ որ մտքէդ կ'անցընես։

— Իրողութիւն մը կ'յայտնեմ, և ակնարկութիւնս Ձեր Վսեմութեան չվերաբերիր . . . ։

— Կնային գործ, յարեց արհամարհ դէմքով մ'աղնիւ դեսպանն։ Արդեօք երբ պիտի գադրին կանայք մեր քաղաքագէտներու վրայ իշխելէ։ Մինչդեռ պետական ծանր գործեր կան մէջ տեղ, մեզի հետ այդ տեսակ աւտնին խնդիրներու վրայ կ'բանակցին . . . գիտեմ գրելիքս լորտ Ապերտինի, ես կանացի դաւերու մէջ մտնող մարդ չեմ, և կը թողում քեզ ազատ ձակատագրիդ հետևելու։»

Սիրելի Վուտ, ալնիւ լորտին այս խօսքերը զիս յուզեցին և աւելի ևս համոզեցին որ արդարև իր մեծ հարբաւին արժանի անձ մ'է։ Ծամ էր մնալ, բայց սիրտ առի և խընդիր մ'առաջարկեցի։

— Ազնիւ լորտ, ներեցէք ինձ հարցընել թէ արդեօք ձեր ձեռքը գտնուած զօրաւոր միջոցներով կարելի չէ գտնել այն անձն, որու նկարը պահ մ'աչքիս երևեցաւ եւս՝ անբևոյթ եղաւ . . . ։

— Պարոն Նելսոն, իմ դիրքս չներեր խրախուսել սէրդ, իմ մարդասիրութիւնս չներեր արգիլել զայն . . . կարծեմ հասկըցար միտքս։ Պաշտօնական միջոցներ կրնան գլխուրել ձեր սէրը, որ բաւական ներքին ցաւ ունի՝ աւանդ արտաքին օգնութեան, ձեզ իրարու մօտեցընելու . . . ։»

Դեսպանին այս խօսքը մերժում մ'էր, շնորհալի մերժում։ Ուստի շնորհակալ լինելով հրաժեշտ առի։ Քերմանդին ձեռքս սեղմեց և յարեց.

— Եթէ ուրիշ խնդիր մ՚ունենաս, կարող ես ինձ դիմել։»

Ահա քեզ, բարեկամ, ուրիշ միջադէպ մը։ Մտածեցի որ եթէ մեր դեսպանն Քէնինկ մը չլինէր, արդեօք ի՞նչ փորձանք պիտի հասնէր գլուխս։ Մուցայ ըսելու որ ի սկզբան առաջարկեց ինձ օսմանեան բանակը մտնել՝ հազարապետի պաշտօնով, և երբ դիտեց որ զինք կոյր գործիք մը կ՚ուզեն ընել այս գործին մէջ՝ ինկոյն սթափեցաւ ու լեզուն փոխեց։

Բայց իմ կենացս խնդիրն այդ տեղ պիտի լուծուի, ուստի այդ կողմէն կ՚սպասեմ լուրեր։ Տարակոյս չունիմ որ Պ. Քինկի հետքը պիտի գտնէք, Քինկ՝ որ լէտի Խատէմի գաղտնի գործակատարը լինելէ կ՚երևի։ Արդեօք ի՞նչ մութ դարան լարած են ինձի դէմ։ . . . իսկ ես կ՚շարունակեմ իմ խուզարկութիւնս և յուսամ որ դուք Պ. Քինկը և ես Լիլլին գտնելով երևան պիտի հանենք գարանն, որ անշուշտ լէտի Խատէմի գերեզմանը պիտի դառնայ . . . ։

ՆԱՄԱԿ ԺԵ

ՎԱՒՏ ԱՒ. ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, Արդարև՝ սէրդ՝ որ գաղտնիք մ՚էր, մեծ աղմուկ կ՚հանէ և դիւանագիտական խնդիր մը կ՚դառնայ։ Խաբեպետ ու քաղաքագէտ անով կ՚զբաղին, իսկ վաճառական ու քաղաքային կ՚քմծիծաղին և մեր կողմը կ՚բունեն գատապարտելով լէտի Խատէմի ծիծաղելի վարմունքը։ Մեծ իրարանցում կայ աղնուական պատուն մէջ՝ որու կ՚վերաբերի լուրս

Խատէմի դերդաստանն, անհամաձայնութիւն կ՚գտնուի, այնպէս որ ոմանք կ՚պաշտպանեն, շատեր կ՚դարձվին դատ մ՚որու ելքն՝ եթէ իր բնական ընթացքը բռնէ, մեզի չյաջողէ։ Ձէ այժմ մեր աղնուականութիւնն, պիտես, ինչ որ էր երբեմն։ Իր անբաւ հարստութեամբ, իր կալուածական ու քաղաքական զօրութեամբ, իր հին արտօնութեամբ մեծ կշիռ ունէր ազգին մէջ, և նա կ՚վարէր անոր բաղդը։ Ազատութեան ոգին, բլէպէյեան արիւնը, պիտութեան սէրը վաղուց մնած են անոր մէջ, և մեր առևտրական ձարտարութիւնն ու ժողովրդային ներգործութիւնը կ՚հակակշռեն անոր վաղեմի ազդեցութիւնը։

Իրօք կոմսեր ու դքսեր մեր հին ազատութեանց հիմնադիրն ու պատուարն եղած են՝ երբ ժողովրդեան միանալով արքունի բռնութեան, յափշտակութեան և արտօնութեանց չափ ու սահման դրին։ Օրէ օր կ՚քայքային նորմանեան հին տուներն և սաքսօնեան տարրը կ՚մտնէ մեր արդի օրէնսգրութեան և սովորութեանց մէջ։ Հիմակ հին ծնունդն ու ծագումը չէ ազնուականութեան անյապիրն, այլ պիտական, ձարտարական ու առևտրական արժանիքը։ Ազնուապետական նուիրապետութեան կարգը կ՚խանգարի. հինին կ՚յաջորդէ նորը։ Թագուհին լորտերու դասը կ՚կոչէ ինչ որ արդէն բարոյական, մտաւորական և նիւթական հանգամանօք ազնուացած է։ Այս բաւական չէ, նոյն իսկ ազնուականներ, մէկ կողմէ ժողովրդային և ընտանեկան յարաբերութեամբ, միւս կողմէ ուսմանց և պիտութեանց հաղորդակցութեամբ՝ կ՚քանդեն հինաւրեայ շէնքի մը հիմունքը. ասոնք ազատութեան տարափոխիկ ոգւոյն չկրնալով դիմադրել՝ ժողովրդային խաւերուն մէջ կ՚կորսուին, անոնք իրենց դիրքը նոր զէնքերով պահելու կ՚ջանան։ Ուստի ազնուական տարրն այս կողմէն կ՚ծաղկեցնայ, այն կողմէ՝ ազնուականութեան նոր սիաղոսներ արդի քաղաքակրթութեան միջոցներէն կ՚ընդունի։ Ո՞վ եղած է քան լորտ Ուրսէլն աւելի ժողովրդային. ով քան Բամբուղըն աւելի ազնուական . . . ։

Բայց հին պատմութիւն կարդալու ժամանակ չէ։ Մեր գործին գառնամ, գործ՝ որու առթիւ ծագած տարաձայն կարծիք ու տրամադրութիւն մեկնելու համար այս խորհրդածութիւնն ըրի և նամակիս նիւթէն հեռացայ։

Անցեալ օր սկսաւ դատը։ Տոքթօր Բէյն կ'ներկայի իր փաստաբանին հետ դատարանն, ուր, ինչպէս ստէպ կ'տեսնուի այսպիսի պարագայից մէջ, ունկնդիրներու բազմութիւնը մեծ էր։ Հետաքրքրութիւնն, մանաւանդ աղնուական դասուն նուաստութիւնն ու պարտութիւնը տեսնելու փափաքը կ'դուռմարեն այդ ամբոխն, որ չէ կարող ըմբռնել այս անհեթեթ դատին նպատակը։ Տոքթօր Բէյն կ'ամբաստանուի՝ իբրև խանդարիչ ընտանեկան անդորրութեան և առևանգի մը գործակից։ Այս ամբաստանութեան հիմը միայն բաւական ծխծաղ կ'շարժէ։ Ամբաստանելոյն տարիքը, անունն ու սպիտակ մազերն իրեն համար կ'խօսին, սակայն իր փաստաբանն աւելի համոզակեր լեզուաւ կ'բացատրէ խնդիրն և կ'պաշտպանէ սիրային յարաբերութեանց աղաւտութեան սկզբունքը։ «Ձեմ կամիր, ըսաւ նա, ներքին փաստերու դիմել և անհերքելի գրաւոր ապացոյցներ մէջ բերել, այս կապակցութեան ազատ բնութիւնը հաստատող, վասն զի կ'յարգեմ ընտանեկան պատշաճութիւններ։ Բայց եթէ ստիպէք զիս որ խօսիմ, այն ատեն ծանր ձշմարտութիւններ երևան պիտի հանեմ, մեր աղնուականներու կենաց յոռի կողմերը պիտի ցոյց տամ, և մինչդեռ այժմ իբրև ամբաստանեալ, այն ժամանակ պիտի խօսիմ իբրև ամբաստան և բարձրագիր անձնականութիւններ ի դատ պիտի կոչեմ. . . .»

Այս կտրուկ բնաբանին վրայ դատաւորները կ'յուզուին, ունկնդիրները կ'վրդովին և հետաքրքրութիւնը յետին ծայր կ'հասնի։ Պահ մը լռութիւնը կ'տիրէ, և երբ դատարանի նախագահը կ'հրաւիրէ տոքթօր Բէյնի փաստաբանն, պ. Հէվլօք, որ խօսի, սա կ'շարունակէ գրեթէ այսպէս.

«— Պարոններ, տասնամեայ սէր մը թերևս վիպական և

բևի ձեզ, և մանաւանդ այն բարձր դասուն, որ ամեն նոր լուսնոյ՝ նոր սիրով կ'ծնի, սակայն իրողութիւն մ'է այս որ դեռ ևս կ'շարունակուի։ Այս յարատև սիրոյն տնունդն ոչ աղնուապետական փայլ, ոչ փառասիրութիւն, ոչ նիւթական ձոխութիւն, ոչ պերճ տիտղոններ են, այլ միայն անձնական արժանիք, բնածին համակրութիւն որ երկու հոգիներ իրարու կապած է, և այս կապն այնքան ամուր է օրքան որ կարելի չլիտի լինի աւելի սեղմել օրինական պայմանագրով կամ քահանային պսակով։ Այս երկու սիրայօդ անձերն մանկիկներ չեն, այլ օրինաց առջև չափահաս և պատասխանատու իրենց ձակատագրին։ Սէր մ'որ ամեն ընկերային նախապաշարմանց, ամեն բուռն միջոցներու, ամեն աղնուապետական պատուարներու հակառակ՝ ծներ ու աճեր է, սէր մ'որու դէմ օրիորդին մայրն առաջին օրէն զինուեր և մարելու համար ամեն ձիգ թափեր է, սէր մ'որ ծածուկ այլ անդուլ յարաբերութեամբ ներ է, ո'ր մարդկային իշխանութիւն կարող է զսպել կամ արգիլել։ Եւ սակայն երբ այս անբնական իշխանութիւնը վարելու յանդգնելով մայր մը կ'եղնէ որ իր դուստրը քանէ պօռնէ զզուելի նշանածի մը, երբ ամեն բարեպաշտական դաւերով իր նպատակին հասնելու կ'ձգնի, սէրը թևեր կ'առնու և հայրենի տունէն խոյս կ'տայ։ Կայ այս ազատ և ինքնայորդոր գործողութեան մէջ որևէ նշոյլ մը, կայ բնութեան օրինաց դէմ շարժում մը։ Եթէ կայ ոչ միայն բնական այլ քաղաքային օրինաց բռնաբարութիւն մը, այդ ալ Լետի Խատհէմի կողմէ է, որ այն աստիճան կ'մոռնայ իր պարտաւորութիւնն որ անմեղ ու անկեղծ էակ մ'իր քմածին հաճոյից և աշխարհային փառամոլութեան զոհ ընելու կ'ելնէ. . . . Պարոններ, այս է ձշմարտութիւնն, բայց բոլորը չէ։ Այն օրիորդն որու փախստեան համար այսօր կ'մբաստանուի՝ բժշկութեան արուեստին պատիւ բերող ծերունի մ'իր գիտութեամբ և աւելի ևս իր բնաւորութեամբ, ոչ Անգլիա, ոչ Ամերիկա և ոչ Ասիա փնտռել պէտք է, այլ այն

վայրն ուր կ'պտնուի իր սիրականն, երիտասարդ մ'որ թէև աղնուական դասէ չէ, բայց աղնուութեան տիպար մ'է իր բարոյական ձիրքով և արիական գործերով։ Եւ կ'ուզէք ա՛պայոյց, ահա ձեզ իր մէկ ձեռագիրն, որու մէջ ակներև կ'երևի իր անսուտ զգացումն և օրիորդ Լիլիին գ. Պօլիս ներ-կայութիւնը . . . »

Եւ Պ. Հէվլօք կարդայ, բարեկամ, գրած նամակիդ այն մասն որ Լիլիի կ'վերաբերի։ Եւ ապա յարեց.

«— Աղնուական դասուն այս անաղնիւ գործերը նոր բաներ չեն, պարոններ, այլ սովորական իրողութիւններ։ Նորմանեան արիւնը զուտ ու անխառն պահելու անափառութեամբ՝ ընկերական վիճակը կ'վրդովին ու կ'իանդարեն այնպիսի ապօրինի ու բռնադատ ամուսնութիւններով, որոց մէջ սէրը նշանակութիւն չունի։ Այս վիճակը չկրնար յարատևել, և եթէ այսօր անձ մը կ'ապստամբի բացէ ի բաց անոր դէմ, քանիներ կ'հեծեն բանտի մէջ և աւելի մը կ'սպասեն որ ընդհանուր բողոք մը բռնադատ ամուսնական քննութեան մը դէմ, որու յարակից են անհաւատարմութիւն, բաժանում, մոլութիւն, մեր դատաստանական պատեհանները մեծ մասամբ զբաղեցնող խնդիրներ։»

Պ. Հէվլօքի այս խօսքերը՝ թէև կարճ՝ մեծ ապաւորութիւն ըրին դատաւորներուն վրայ և բոլոր ունկնդիրներուն հաւանութիւնը գրաւեցին։

Դատաւորները խորհրդածելու քաշուեցան, սակայն առայժմ չյայտնեցին իրենց վճիռն, որ անտարակոյս մեզի նպաստաւոր պիտի լինի։

Ալեսպէս լռեցաւ, Պարոն Նէլսօն, դատարանին առաջին ներստ։ Զարմանալի՛ բան. ինչ որ միշտ պաղտնի կ'պահէիր, այսօր հրապարակային խնդիր մը կ'դառնայ։ Սրբասիրտ ձեռքեր կ'մտնեն սիրոյդ մէջ, և մեր ընկերութիւնն ամենէ նուիրական բաներն, սրտի խորհրդաւոր և աղնիւ զգացմունքն անդամ դատաստանի ներքարկելով՝ կ'արատէ անոնց անմեղու-

թիւնն, կ'ծանաւորէ մարդուս կեանքն, և ընտանի սրբավայրն իսկ կ'պղտորէ։

ՆԱՄԱԿ ԺԶ

ՆԷԼՍՕՆ Ս.Ո. Վ.ՈՒՑ

Գ. Պօլիս . . .

Բարեկամ, Անշուշտ յաղթանակը մերն է. բայց ինչ տխուր տպաւորութիւն ըրաւ իմ վրայ այդ դատաստանի նկարագիրը, և ինչ այլանդակ գարձուած կ'առնու իմ սէրս։ Արդէն համոզուած եմ որ ոչ միայն զգայուն սիրտեր այլ և անաչառ օրէնքը պիտի պատապարտեն լէտի Խտհէմի բռնած անհեթեթ վարմունքը, և թէ ինքն իր պատիժը պիտի գանէ, քայց գարձեալ ուրիշ տեսակ վիշտ ու կասկած սկսեր էին պաշարել հոգիս ու միտքս։ Գիտէի թէ ամեն խնդիր, ամեն վէճ պիտի գադրին եթէ մի անգամ Լիլի իր երեսը ցոյց տայ ինձ, գիտէի թէ իր անուշ ժպիտը պիտի ցրուէ մեզ պատող ամպը, սակայն միւս կողմէ ահռելի տագնապ մը կը վրդովէի։ Կ'ըսէի ինքնիրմէ. «Արդեօք Լիլի գիտէ՞ այս գարձուածները, արդեօք լրագիրներէ իմացած է որ մեր սէրն Անգլիոյ դատարաններն եկած է, գիւանագիտական խնդիր գարձած է, եթէ տեղեկացած է անշուշտ աւօթահար ինքզինքը կ'պահէ, և թերևս բոլորովին իր սէրէն հրաժարելով՝ ոչ յայտ վայր մ'ապաւէն փնտռէ, մարդկային բանսարկու լեզուէ, անիրաւ օրէնքէ, և նոյն իսկ իր սիրահանէն հեռու։ Իսկ եթէ չգիտէ, և երանի թէ անգէտ լինէր, ինչո՞ւ հա-

մար այսպէս կ'ծածկուի, ինչո՞ւ չերևիր քանի որ նա զիս, բնակարանս և կամաւոր տարապրութեանս պատճառը դիտէ . . . :»

Այս մտածմամբ կասկածներով կ'տառապէի երբ անցեալ օր նորէն իմ յոյսերս սկսան արծարծիլ: Պատահմամբ բարեկամս, պ. Փօքսը, տեսայ: Սրճարան մը մտանք: Ցանդիմանեց զիս և մարդատեաց ու արևելյի կոչեց, իր հայրենակիցներուն տեսութեան անկարօտ: Ապա իմ ուղևորութեանս պատճառը հարցուց: Համառօտ պատմեցի սիրոյս պատմութիւնն ու նպատակս: Կարեկցութիւն ցոյց ինձ և խոստացաւ ինձ օգնել: Ապա յանկարծ ձակատը շփեց, վայրկեան մը մտածեց և յետոյ ըսաւ.

— Բարեկամ, քանի՛ թեթև է բժշկի մը յիշողութիւնն, որքան կ'ծանրանայ իր բեռն այնքան կ'թեթևնայ իր միտքը: Մտիկ ըրէ: Անցածն օր անկլիացի ընտանիքի մը տունն՝ իբրև բժիշկ այցելութեան գացի: Առաջին անգամն է որ կ'տեսնեմ այդ ընտանիքն ի Գատը գիւղ, ուր տուն մը բռնած են վարձու՝ օդափոխութեան համար: Տարւօք մարդ մը զիս ընդունեց և յայտնեց որ իր եղբօրը դուստրը հիւանդ է: Սենեակը գացի տեսնելու. ձիշտը խօսիմ, չկրցայ ձշդել իր հիւանդութիւնը: Ինքն ալ ճիշտ չգիտէ ինչ ունի: «Գլխի ցաւ, սրտի ցաւ ունի՛մ, ախորժակ, քուն չունի՛մ» ըսաւ: Անորոշ հիւանդութիւն մ'ու անորոշ խօսքեր: Այս միայն նկատեցի որ նիհար և տկար անձ մ'է:

— Գէթ լաւ դիտեցիր իր դէմքը, հարցուցի եռանդագին. ի՞նչ կերպարան ունի:

— Վա՛խ, նուրբ այլ ալիւրի դէմք. փոքր ինչ ժոդոն, այլ սրատաշարժ: Դեղձան ւաղեր, կապոյտ մեղմ աչքեր, քնքուշ բերան, բարակ անդոյն շրթներ, որ տէպ կ'դողդողան, բերան մ'որ կ'ժպտի քան կ'խօսի, սակայն ժպիտ որ խօսքէ աւելի ազդեցիկ ու դաշնակէ աւելի դառն ու թափանցիկ է . . . :

— Այդն ինքն է, ըսի ոտք ելնելով: Հապա հասցէն:

— Իրաւի, չդիտեմ, կամ լաւ ևս ըսեմ, չկրցայ աչքով չափել, վասն զի նստած էր. սակայն իր նստուածքին մէջ ալ կ'երևէր ազնուութիւն մ'որ պարզ ու ջինջ ձակատէն կ'արտափայլէր:

— Ի՞նչ հպատ էր:

— Եւրոպական հպատ:

— Գո՞յնը:

— Սև:

— Կուրծքը սև խաչ ունէր:

— Զդիտեցի: Բժիշկ մը խաչն չնայիր, այլ խաչ կրողին. և ստուգիւ վշտահիր անձ մ'երևցաւ ինձ:

— Արդեօք նորէն պիտի տեսնե՞ս այդ հիւանդդ:

— Եթէ հրաւիրուիմ:

— կարելի չէ՞ ինձ արդեօք զինք տեսնել:

— Անշուշտ. միայն պէտք է պատրուակ մը դտնել ներկայանալու:»

Վերստին տեսնուինք, ըսաւ բարեկամս Փօքս, և իրարմէ բաժնուեցանք, քանի մ'օրէն իր տունը դտնուելու ժամագիր լինելով:

Դեռ ժամադրութեան օրը չհասած քեզի կ'գրեմ, սիրելի վ...ուտ: Ճշմարիտը՝ կարող չեմ ըմբռնել օրհրդ Լիլլիի այս տարօրինակ ընթացքը: Տարակոյս չկայ որ Գատը—պիւղի հիւանդը նոյն ինքն է: Միայն կ'զարմանամ որ իր արևելեան հպատուտն ու կապուտաչ ձգեր և եւրոպականն հպատեր է: Ի՞նչ է նպատակը: Շատը գնաց քիչը մնաց: Անշուշտ մի քանի օրէն ամեն բան կ'պարզուի, եթէ յաջողիմ ընդունուիլ իր տունն: Ես կ'մնամ հիմակ, նա կ'հեռանայ: Բայց չպիտի թողում որ այս անգամ աներևոյթ լինի, և իմ ըրած փորձիս արդիւնքը քեզի պիտի գրեմ:

Կ'խնդրեմ միայն որ դու ալ հաղորդես ինձ ձեր դատին վախճանն, և մանաւանդ պ. Քլինկի մասին ձեր ընելիք տնօրէնութիւնն առթիւ Բէյնի հետ:

ՆԱՄԱԿ ՄԸ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, Ինչո՞ւ համար կասկածելի կ'թուի քեզի ինչ որ սիրոյդ շրջանէն դուրս է: Զարմանալի՛ հակասութեանց տիպար մ'ե սիրահար մը: Սէրը զուտ պահել կարծէ, սիրոյ առարկային վրայ բիծեր գտնելով: Այս սէր չէ այլ ցնորք: Ուստի՝ չեմ կամիր կարծիք յայտնել նամակիդ վրայ: Կ'դուշակեմ որ այսօր քեզի կասկածելի երևցող Լիլլին վաղն հաւատարիմ պիտի երևի: Ապացոյցներ անթիւ այլ անտեսանելի են սիրահարի մ'երևակայութեան, որու յատուկ է կասկածներ ստեղծել և ապա մի առ մի ջրել: Թերևս Լիլլին՝ այնքան զոհողութիւններ ընելէն ետև՝ հիմակ ծանրէն կը քաշէ, և կերպով մ'իրաւունք ունի: Երբեմն նա քեզի կը մտաբեր դու կ'հեռանայիր, հիմակ դու անոր կ'մօտիս նա կը հեռանայ կամ կ'փափաքի որ զինք փնտռես: Սիրոյ անմեղ խաղեր, որ պաղարիւն փիլիսոփային աչքին թերևս աննշան երևին, բայց ինքնին բնական են: Թոյլ, դիւրին, ինքնատուր սէր մը հրապոյր ու համ չունի, շուտով կ'մարի, լեկած պտուղ մ'է. միչդեռ անհպելի, նաղելի սէրն հրապուրելի, առձգական կ'դառնայ: Բնութեան մէկ օրէնքն է այս, որ սակայն երբեմն քաղաքակիրթական կերպարան կ'առնու, կ'շփոթայ, փաստասիրական նպատակի կ'ծառայեցնէ և այն ատեն իր բնութիւնը կ'եղծէ և կ'լինի խարէական սէր: Ուստի, մի՛ դանդաղիր, բարեկամ, փնտռէ՛ Լիլլին, քիչ մը ևս տանջուէ՛ և տարբեր միանգամայն թէ ինչ վախճան ունենայ տարբեր Բէյնի դէմ բացուած դատը:

կ'հաւատամ, Նէլսօն, դատաստանական առեանին առաջին նիստը վերջինն եղաւ: Տակաւին դատաւորները վճիռ պիտի տան: Գործը թաղուած է, և պիտ'ոչ ոք է պատճառ. նոյն ինք քու դեսպանդ, լորտ Քանինկ: Նա խօսք չտուաւ քեզ աջակցելու, բայց խնդիրդ կատարեց: Ցանկարծ հրաման հասաւ պաշտօնապէս որ վերջ տրուի գործին, թէև նոր սկսած էր: Տարակոյս չկայ որ լէտի Խատհէմի ազդ եղած է բարձրադիր տեղէ մ'որ իրաւունք չունի և թէ պայթակղութիւնը պիտի աւելնայ՝ եթէ շարունակէ: Այս բանը ստոյգ աղբիւրէ իմացած եմ: Կրնաս երևակայել թէ ծիծաղողներն որո՞ւ կողմն են: Տօքթօր Բէյն պատուով ելաւ գործէ: Ամէն կողմէ խնդակցութեան նշաններ կ'ընդունէր, թէև հետաքրքիրներն ուրիշ բանի կ'սպասէին, բայց ինք բոլորովին գոհ չէր: Հաւատցում խնդրել դժուարին էր: Իր վրէժը լուծելու միջոց մը կար և զայն գործածեց:

— Կարգը մերն է, ըսաւ ինձ անցածն օր, լէտի Խատհէմի դէմ դատ բանալու: Պ. Քինկի խնդիրը մեծ կարևորութիւն ունի իմ աչքիս: Ինչպէս որ խօսք տուեր էի քեզի, մտածեցի գործին վրայ և այս որոշումն ըրի: Պէտք է պիր մը գրել այդ աղնուական կնկան, խնդրել որ Պ. Քինկի վրայ տեղեկութիւն տայ, ակնարկել որ շատ կասկածներ կ'ծանրանան անոր վրայ և սպառնալ որ եթէ ինք մեզ գոհ ընելու չափ պատասխան զլանայ, խնդիրը դատարանը պիտի հանուի:

— Լաւ խորհուրդ. շուտ գրէնք գիրը:

— Աւասիկ» յարեց բարեկամս, ցոյց տալով նամակ մը զոր արդէն պատրաստեր էր և կարդաց.

«Տիկին,

«Կարևոր խնդիր մը կ'ստիպէ մեզ գրել ձեզ այս երկտող գիրը: Ձեզի սիրելի մէկ հին բարեկամ, և ձեզի ատելի Պ. Նէլսօնի խնամակալ՝ Պ. Քինկ, ծանր ամբաստանութեան մը

ներքև կ'գտնուի ու կ'փնտռուի։ Աննշմարելի է իր հետքը։ Անտարակոյս, տիկին, ձեզի յայտնի պիտի լինին անոր տունն ու տեղը։ Ուստի չնորհ ըրէք մեզի իմացընել թէ ո՞ր կը գտնուի Պ. Քինկ, ո՞ղջ է թէ մեռած։ Ձեր կողմէ մեր ժամ մը պիտի հարկադրէ մեզ դիմել օրինական միջոցներու, որոնք ձեզի պէս բարձրագիր կնկան մ'անունն կամ ներկայութիւնն գատարանը՝ կրնայ անախորժ հետևութիւն ունենալ։

«Ընդունեցէք, տիկին, մեր յարգական ողջոյնը։»

— Ի՞նչպէս կ'գտնես, հարցուց լինձ տոքթօր Բէյն։

— Վարպետ գրուած։

— Գիտողութիւն մ'ունիս։

— Մի՛մէ քիչ մը ծանր չէ՞, և չեմ կարծեր որ այն գոռոզ կինն անպատասխան թողու այդպիսի դիր մը։

— Ընդ հակառակն. պիտի փութայ պատասխան տալ։ Ինչպէս որ կ'կասկածիմ, դաւ մը կայ ընտանեկան Պ. Նելսօնի դէմ. կամ լէտի Իսահէմ առ ահի իր բարեկամը պիտի մատնէ, ինչպէս կ'մատնեն անոնք որ այլ ևս գործիքէ պէտք չունին, կամ հաշտութեան միջոց մը պիտի առաջարկէ, և ասով ինքզինք պիտի մատնէ։

— Ճիշտ է։

— Ուրեմն, ստորագրէ իբրև փոխանորդ Պ. Նելսօնի, որու հետ բարեկամութիւնդ իրեն քաջայայտ է։

— Դու չըսպիտի ստորագրես։

— Իմ կողմէ պիտի ստորագրէ Պ. Հէվլօք, իմ փաստաբանս։

— Ընտի՛ր է. դատարանին սև անկիւնն, կամ վկային բեմը կ'ուզես ցոյց տալ լէտի Իսահէմ, ինչպէս նաև վրէժխնդրութեան նշոյլ մը . . . ։

— Ընշա՛յտ. անոզոքելի պէտք է լինիլ չարին դէմ, որ սովորաբար երես կ'առնու, կ'քաջալերուի երբ իր առջևը բարի մարդ մը տեսնէ։ Անզգամին մէկ զէնքը ստէպ իր հա-

կառակորդին վեհանձնութիւնն է, և այս պարագային մէջ վեհանձնութիւնը տկարութիւն է։ Ես տարակոյս չունիմ որ լէտի Իսահէմ այս նամակը կարդալուն պիտի դող երևի, փրփրի, և կամ պիտի մատնէ, ինչպէս որ բան, եղծէ իր ղգուշութիւններն արդէն առած է դատակային դէմ, և կամ պիտի մատնուի, հաշտարար միջոցներ բռնելով։

— Առարկութիւն մը չունիմ», ըսի բարեկամիս, և՝ տոպրակը լեցնելով Պ. Հէվլօքի հետ՝ կիրը լէտի Իսահէմի ուղղեցի։

Սակայն, սիրելի Նելսօն, տակաւին պատասխան չառի։ Իսկ քու բժիշկդ Պ. Ֆօքս ինչ ճամբայ բռնեց Լիլին քեզ ցոյց տալու համար։ Մեր մէնաւորները հիմակ բժիշկներն են, սովորաբար մարդկային բնութեան և տկարութեանց հմուտ. նայինք որն աւելի ճարպիկ պիտի գրպի և ոմն առաջ երևան պիտի գայ, Լիլի՞ն թէ Քինկ։

ՆԱՄԱԿ ԾԸ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պալ . . .

Թարևկամ, Գասյ, վերջապէս գտայ Լիլին, իմ կեանքս գտայ . . . բայց ինչ վիճակի մէջ, տէր Աստուած, ծանր հիւանդութենէ մը նոր ելած, վատոյժ, նիհար, գունատ, այլ միշտ համակիր, միշտ անուշ ու սիրալիր . . . ։

Ա՛ինքան յուզուած եմ, որ չեմ կարող մանր պատմել քեզ մեր առաջին տեսութեան բոլոր պարագաները։ Չեմ կրնար նկարագրել թէ ինչ այլայլութիւն, ինչ խռովութիւն ու սարսուռ համակեցին մեր բոլորը էութիւնն երբ իրարու դիմաց ե-

լանք, վասն զի կ'զգայի քան կ'մտածէի, կ'երազէի քան կ'ապրէի, այնպէս որ բաւական ժամանակ ոչ կ'տեսնէի, ոչ կը լսէի և ոչ կ'խօսէի, նման այն կալանաւորին որ երկար տարիներ մնալի զնգանի մէջ մնալէն ետև՝ յանկարծ ի լոյս կ'ելնէ և աչխարհ իր աչքին բոլորովին կ'մթանայ: Լիլիին սրտին մշտավառ արևն իմ հոգւոյս զգացումներն այնքան ուժգին ծափանցեց որ ինքզինքս բոլորովին կորուսի . . . :

Բայց հիմակ իր մտան եմ, իր ծծած օդը կ'շնչեմ, իր փայլուն աչերուն կայծերով կ'վերածնիմ, իր յստակ ու պայծառ ճակտին վրայ կ'կարդամ իմ երջանկութիւնս . . . :

Ձեռքս պրիչ չպիտի առնէի եթէ նա չյորդորէր զիս գրել քեզ և մեր խնդակցութեան հաղորդ ընել: Միշտ կ'սիրէ զիս, բարեկամ, միշտ նոյն սիրասուն, աղնուասիրտ, անմման էակն է, արժանի իմ կրած բոլոր զոհողութեանց: Եւ տակայն նա աւելի նեղութիւն, աւելի չարչարանք քաշեց քան զիս, և այս ամեն տառապանքն առ ոչինչ կ'գրէ, անցելոյս բոլոր դառն յիշատակները, մանաւանդ իմ անհեթեթ, դառոզ վարմունքս կ'մոռնայ, և միայն ներկան, միայն զիս կը մտածէ, իմ էութեանս, իմ հոգւոյս իրրև անբաժանելի մի մասն ապրիլ ու մռնիլ կ'ցանկայ: Կ'սիրէ զիս այն նոյն ազնիական սիրով որ դիմապրաւել տուաւ իրեն ամեն արգելք, ամեն նախատաշարում, ամեն վտանգ: Այս բաւ է ինձ, և երջանկութիւն մ'որու բնաւ չէի յուսար, որու բնաւ արժանի չէի . . . : Զարմանալի՛ էակ, փափկութեան, ներողամտութեան ու ազնուութեան տիպար մը . . . չգտներ նա ազրատ մը, բիծ մ'իմ վրայ, և կ'ըսէ. «—Ցանցառուն ես եմ, նեղսօն, որ քեզ փորձել ուզեցի:» Ի՛նչ, ես ալ նոյն մեղքը գործեցի, ես ալ անհիմն կասկածներու որս ընկած՝ չէի կարող հաւատալ որ Լիլին պիտի հեռանէր իր աղնիւ սիրոյն, և յաւէտ պիտի սիրէր անձ մ'անծանօթ, բաղդին մեկ զաւակն, որ ինքն իրմէ դժգոհ էր . . . :

Եւ ինչ մեծ կախաղան է մարդու մ'երջանկութիւնն,

ինչպէս շատ անգամ մեր երևակայութիւնն, մեր կիրքը կը հեռացընեն զինք նպատակէ մ'որու սրտագին դիմելու կ'փափաքի: Ինչքա՜ն այսքան վիշտ, նեղութիւն ու տանջանք կրէինք, քանի որ մեր սիրտերն միշտ իրարու հաղորդ, միշտ իրարմէ անբաժան էին . . . : Անգին օրեր, անդարմանելի ժամեր ահռելով, և երբեմն վէճով անցուցինք, մինչդեռ մեզի համար անպատում երանութեան վայրկեաններ կրնային դառնալ . . . : Ի՛նչ յիմարութիւն էր մերը, սիրելի Վատ, և ո՛րքան իրաւունք ունէիր երբ երբեմն կ'յորդորէիր զիս աւելի վստահ լինիլ: Իրարու համար հալիլ ու մաշիլ և իրարմէ խորշիլ, անտարբեր ձևանալ, մանաւանդ այս վերջին ժամանակներս, բնական էր: Քանի մ'օր ևս և Լիլին ի սպառ կորսուէր, և մեր սև ճակատագիրն թերևս կնքուէր . . . :

Ա՛յլ ևս բաժանում չկայ, սիրելի Վատ, եթէ ոչ գերեզմանին մէջ, այլ ևս հոգ, ցաւ, վիշտ ու կասկած չկան. բոլորն ալ ցրուեցան Լիլիին շնչով ու ժպիտով, և կրնաս երևակայել թէ ինչպէս ամուր բռնած եմ դանձ մ'որ այնքան գժուարութեամբ ձեռք բերի: Կ'փարիմ իր անձին, իր նկարին, իր տառերին, ինչպէս կ'փարի թիթեռնիկը լոյսին, որով այրիլն իր երջանկութիւնն է: Պուֆֆոի գեղածիծաղ ափունքը, հայելապ աթոռին վրայ բազմող պահակալն չէ այնքան բարերաստիկ որքան այն բարեկամը որ երբեմն չէ թէ լուսոյ այլ խաւարի մէջ մահ կ'փնտռէր:

Այս պիտոը թեթևցուց և քեզ, բարեկամ, մեծ նեղութենէ և տագնապէ մը: Ա՛յլ ևս հարկ չկայ պիմել լեփ խոհեմի, փառասիրանի, բժշկի, մինչև իսկ Թագուհւոյն և Աստուծոյ, դաւ, պաղանիք, քինկ երևան հանելու համար, անիրաւութեան և ընկերութեան դէմ յայտնաբանակ տանելու համար: Արդէն ամեն բան երևան եկաւ, քանի որ Լիլին երևցաւ, քանի որ ամեն ամբաստանիներ ընկան մեր սիրոյն անդիմադրելի զօրութեան առջև: Հոչակէ այս յաղթութիւնը. խօսէ պ. Բէյնի, Խաչհմի, բոլոր աշխարհն որ Լիլին

իմն է, Լիլին իմ վահանիս տակն է, և մարդկային, երկնային զօրութիւն մը չէ կարող կորզել զանի իմ ձեռքէս։

Իմ միակ փափաքս ու աեղիչս է տեսնել Լիլին բոլորովին քոյժ և ոյժ գտած, կենդանի, կայտառ, զուարթ՝ ինչպէս որ էր երբեմն, երբ աշխարհիս դառնութիւններն չէին վրդովէր իր միաքն ու հոգին։

ՆԱՄԱՆ ԾՓ

ՎՕՒՏ ԱՒ ՆԱԼՍՕՆ

Լոնտօն . . .

Բաղդը յաջող է, բարեկամ, ոչ միայն քեզի այլ և մեզի։ Երբեմն յաջողութիւնն ետևէ ետև կ'գայ, ինչպէս նաև դժբաղդութիւնը։ Դու ծովափին քոյը բայիր, ես ահ քոյը բանալու վրայ եմ. մին սրտիդ հոգն էր, միսը մտքինդ է։ Հիմակ սիրտդ ուրախութեան ծովու մը մէջ կ'լողայ, սակայն կ'կարծեմ, ինչպէս որ կ'երևի, վերստին միաբդ տարակուսանաց կոհակներու վրայ պիտի ծփայ, ծագումիդ մասին՝ երբոր այդ ծայրագոյն խնդութեանդ ժամն անցնի։

Քանի՛ ինքնասէր ես, բարեկամ, և որ սիրահարը չէ այդպէս։ Լիլին գտար, շատ շատ ուրախ եմ, բայց բոլոր աշխարհը մոռցար։ Ըստ քեզ՝ ամեն բան կատարեալ է, պէտք է դադրել այդ կենացդ պիրկն ու միայն վայելել։ Սակայն կը մոռնաս որ պարզուելիք մութ կէտեր կան և մեզի պաշտօն մը յանձնած ես։ Մեզ ձամբայ հանեցիր, դու երջանիկ ես, կ'ուզես քաշուիլ, կամ ետ դառնալ, վասն զի ձամբուն վրայ վիճառատդ գտար, բայց ես՝ մանաւանդ տոքթօր Բէյն՝ պարտաւոր ենք մինչև ծայրը հասնիլ։ Բարեկամութիւն, համակրութիւն, ինչ որ կ'ուզես անուանէ, նետիլ մեզ այս քուարկածիդ մէջ, պատիւը կ'պարտաւորէ մեզ շարունակել, արդարութիւնը կ'ըսէ մեզ յարատևել և գործի վախճանը զըտնել։ Ի հարկէ՝ Լիլին գտնելով՝ այդ քու վէպիդ սիրային մասը լմնցար, բայց կենսական մասը դեռ ևս թերի է։ Այս պարագայիս մէջ՝ քու բժիշկդ՝ Պ. Ֆօքս՝ աւելի ճարպիկ բրդաքան թէ իմ՝ տոքթօր Բէյն, որու պաշտօնը սակայն աւելի դժուարին, աւելի կնճռոտ է, վասն զի իր առջևն ունի նենդամիտ, վարպետ, հարուստ կին մը, լէտի Խատհէմ, որու դաս տալ մը կարևոր է, եթէ ոչ կենացդ մութ կէտը երևան հանելու, դէթ արդարութեան գործ մը կատարելու համար . . . ։

Բայց դու ինչպէս շուտ մ'ամեն բան կ'կարես կ'թափես, ինչպէս՝ սիրահարի վստահութեամբ՝ ամեն բան վարդագոյն, ամեն բան դեղածիծաղ ու սքանչելի կ'գտնես, վասն զի Լիլին մօտն ես, վասն զի անոր շնչովն, անոր շուքին ներքև կ'ապրիս, մինչդեռ քիչ մ'առաջ՝ սիրահարի կասկածոտութեամբ՝ ամեն աշխարհ մութ, անիրաւ, անտանելի կ'երևէր աչքիդ, և անդորրութիւնն ու փրկութիւնը դերեզմանիդ մէջ կ'փնտռէիր։

Կ'մոռնաս, բարեկամ, որ դեռ ուրիշ պարտաւորութիւններ ունիս. սէրն՝ ինչպէս կ'կարծես, առաջին զբաղմունքը չէ կենաց, մանաւանդ անկլիացի մարդու մը, և կ'յուսայի որ դու՝ այնքան դառնութիւն, այնքան զրկանք կրելէն ետև՝ երիտասարդական ախնով չես դատեր ամեն բան, և աւելի ծանր ու փորձ մտքով կ'նկատես այն նոր աստղարէզն որու մէջ կ'մտնես։ Կ'ըմբռնեմ որ մարդկային կենաց մէջ կան վայրկեաններ՝ ուր հոգին՝ սխորժելի բուռն զգացումներով լի՝ կ'դեղու, կ'թափի ուրիշի սրտին մէջ և եթէ սիրտ չգըտնէ, բանահիւսին պէս՝ հովին, ծաղկին, թռչունին, աերևին,

կենդանիին հետ կ'խօսի, երկրային ամէն ցաւ, ամէն անիրաւութիւն ու աղէտ, Պաքոնի ամէն խոթոյբներէը կ'մոռնայ, և չտեսներ հովին հանած փոթորիկը, ծաղիկին փուշը, արծուին մազիլներէը, չլսեր առիւծին մռնչիւնն ու բուին ողբը, չզգար ընկերային ցնցումներն, որ երկրի ցնցումներուն պէս, անոր հիմունքը կ'սասկեն, չտեսներ այն բնական ու մարդկային աղէտն ու պատուհասներն որ բոլոր մարդկութիւնը կ'տագնապեն և յուսահատութեան ալիոզրմ աղաղակներ արձակել կ'տան, այլ երկրային ամէն ցաւ, ամէն անիրաւութիւն և տառապանք կ'մոռնայ, կ'մոռնայ իր դժբաղդութեան դրդիռներն, և մինչև անգամ իր թշնամիները դրկելու, հաշտութեան առաջադիր կ'գտնուի, թերևս ապացոյց մ'որ՝ Յուսոյ ըսածին պէս, մարդս ի բնէ լաւ կ'ծնի, և վերջէն մարդկային օրէնք ու հիմնարկութիւնք՝ զանազան չոռի կիրքերը և աստոյ չարաչիյ մոլութիւններ ու անկարգութիւններ չատաչ կ'բերեն, ապացոյց մ'որ սէրն երբ մեր էութեան կ'կցորդի, մեր բոլոր գործոց շարժառիթը կ'պառնայ՝ արդարութեան ու երջանկութեան կ'առաջնորդէ՝ ամէն կասկած, ամէն վատ խորհուրդներ ցրուելով, և երկիրս «երջանիկ Ներքաշնակութիւն» մը դարձընելով, սակայն դժբաղդաբար այս վայրկեաններն խիստ կարճատև են, բարեկամ, և հոգ ու պատրանք չեն ոչնչանար վըրայ հասնելու . . . :

Այս ախուր ու թերևս անպատեհ խորհրդածութեամբ բնաւ միտքս զգայուն ու վաւելուն սրտիդ վրայ պաղ ջուր թափել չէ, հարսանիքի մէջ դամբանական ձառ կարդալ չէ. զի՛տեմ որ՝ մեզ շրջապատող թշուառութեանց մէջ՝ մեր երկար ալեւոտութեանց ժամանակ՝ եթէ մարդ ժամ մը, վայրկեան մը պտնէ բարեբաստիկ, բաւական ապրած է, այլ կ'փափաքիմ որ կեանք իրական, դրական կողմն ալ անտես չառնես, և բարեբաստիկ ժամերն աւելցնելու միջոցները մտածես . . . :

Պարելի է որ կ'ծիծաղիս, կարելի է որ Լիլիին հետ այս պիրս կարդալով՝ միաբերան ըսէք.

— Ի՞նչ քարող կ'կարդայ մեր բարեկամը, դիտէ՞ արդեօք մեր երանութեան աստիճանն, դիտէ՞ արդեօք որ մեզի համար աշխարհ դրախտ մ'է հիմակ, և՝ այնքան աղէտալի ցնցումներէ եաև՝ միթէ ներելի չէ՞ մեզի վայելել երջանկութիւնն յարատև . . . :»

Եւ անտարակոյս՝ այս ձեր մրմունջը կ'ընդհատի և ձեր շուրթերն անոր ճշմարտութիւնը կ'հաստատեն, ողորմելի կերպարան մը տալով բարեկամիդ, բայց չես ուրանար, սիրելի Նէլսօն, որ ես աւելի փորձառու եմ, աւելի տարօրէն եմ քան քեզ, և աւելի կ'ճանչնամ աշխարհը: Պատերազմի դաշտին մէջ վատօդի մուխն, և սիրոյ դաշտին մէջ՝ սրտի ներշնչմունքն՝ սակայ կ'քօղարկեն մեր աչքին՝ հեռուն, աշխարհի մութ հորիզոնն ու մարդկային պիակները, և եթէ դու ճարտար ու յաղթական եղար թէ պատերազմի և թէ սիրոյ մէջ, մի՛ կարծեր թէ պաշտօնդ լրացար, ընդ հակառակն՝ կենաց պատերազմը նոր պիտի սկսիս, և այդ կռիւը մղելու համար ոչ միայն անձդ, պատիւդ պաշտպանելու հոգը պիտի ունենաս այժմ, այլ և այն սիրական էակն, որ քու հոգիդ, որ քու կեանքդ է կ'ըսես . . . :

Արդ՝ այդ էակը միայն սիրով չպաշտպանուիր, միայն սիրոդ անոր վահանը չկրնար լինիլ, պէտք է որ պարզ խօսիմ, կռուի ձշմարտութիւնը խօսիմ, իբրև սրտակից բարեկամդ, այլ կարևոր են նիւթական միջոցներ, որոց վրայ անտարակոյս պիտի մտածես, երբ քիչ մը դագրի աւիւնդ:

Մինչև ցայսօր վենուորականի ու թափառիկ սիրահարի կեանք վարեցիր. քաղաքացիի, մարդու, և թերևս քիչ առնես, հօր մը կեանքը վարելու պիտի պարտաւորիս, սակայն այդ ընելու համար ինչ խորհուրդներ ունիս, ինչ գործի, ինչ պաշտօնի պիտի ձեռնարկես: Ու այժմ ունիս տաքեկան եկամուտ մ'որ անծանօթ աղբիւրէ մը կրպանդ կ'թափի, բայց հաստատի՞ես որ այդ աղբիւրն օր մը չպիտի ցամքի, վասնզ ես որ այդ դումարն հետզհետէ աւելնալիք պիտոյիդ

պիտի բաւէ։ Ես չեմ կարծեր։ Այս բաւական չէ, միթէ միշտ հեռու, Արեւելք պիտի ճեաս, միթէ պիտի ուրանաս հայրենիք, բարեկամ, միթէ մտածիր չես Անկլիա գառնալ Լիլլին հետ, և կամ զինուորական կամ քաղաքային ասպարէզին մէջ մտնել, և ապրիլ ու մարդկութեան օգտակար մէկ անդամը գառնալ, մինչդեռ մինչև յարդ, մի նեղանար, կարեւոր գործ մը չըրիր։ Մեծ գործդ ու նպատակդ Լիլլին էր։ Այդ նպատակիդ հասար. բայց եթէ այդ տեղ կայ առնես, պիտի ըսեմ որ աւելի մեծ նպատակ մը պիտի վրիպիս, անկլիական ծագումդ, բնութիւնդ, սկզբունքդ ուրանալ, ու արեւելեան դանդաղ ու աննշան կենաց անէութեան մէջ պիտի թաղուիս անյարիր։

Իմ կարծեօք՝ պէտք է որ առնես Լիլլիդ և գառնաս հայրենիքդ, ուր քեզի համար պատուաւոր ասպարէզ չպակսիր։ Նկատի ունիս, բարեկամ, և յաղթանակդ ցոյց տուր Լէսի Խոտհէմի, որ կարծեմ թէ այս միջոցիս նեղն ընկած է և անշուշտ ուրիշ գաւ մը կ'մտածէ մեզի դէմ։ Այս օրերս կ'լսեսամ լրմէ պատասխան մը ստանալ և այն մուրհակեան ալ պարգելու կարող կ'ինիմ։ Սակայն միևչև որ գու չպատմես թէ ինչպէս ձուկերդ չոքը ընկաւ, ինչպէս Լիլլին Ուայթ կղզեկէն ելաւ, ինչ միջոցաւ անոր ներկայացար, ես ալ քեզի բան մը չպիտի գրեմ։ Բայց միթէ փոյթդ է։ Արդէն կ'լսեսուարաես որ մեր ծառայութենէ, չըսեմ բարեկամութենէ, պէտք չունիս, վասն զի Լիլլին ունիս։ Ես ալ իրաւունք չտեսնեմ ըսելու որ յեսին ծայր եսասէր ես . . . . ։ Տոքթօր Բէյն կ'լսեսայ ստանալ գիր մը Լիլլին կողմէ, որու հիւանդութեան լուրը զինք սրտմտցուց, ինչպէս նաև զիս։ Թէև նա կ'փափաքի որ Լիլլին մօտ լինէր որպէս զի իր խնամքն անոր տնօրէն, բայց ես կարծեմ թէ տոքթօր Բէյն անոր մօտ պաչտօն չունի, քու սէրդ է անոր ախտահանութեան միակ սպեղանին։

ԳԱՄԱՍԻՆ Ը

ԳԵՐՄՈՆ ՍԱՌ ՎՕՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Ա՛յս անգամ դիրդ միևնոյն չհարդացի։ Լիլլին հետ՝ անոր մէն մի բառը, մէն մի իմացածը քննեցի, և եթէ նա քիչ մը յաւ զգայ, ես մտածեցի։ Բաւական լեզու կը թափես. կ'ուզես համոզել զիս որ սիրոյս գոյնով չնկատեմ աշխատիդ, որու մէջ գեռ ես պատուաւորութիւններ ունիմ կատարելու, և կ'յորդորես զիս, որ գառնամ յԱնկլիա և նոր ասպարէզ մ'ընտրեմ, ի վերջ իբրև երջանիկ մարդ ու քաղաքացի ապրիմ։ Թէև փոքր ինչ անպատեհ՝ չատ բանաւոր կ'գտնեմ յորդորներդ։

Փութամ ըսելու որ սիրոս բարեկամական զգայութիւններու գոյ չէ, թէ իմ գառն յիշատակներուս մէջ քու անունդ ու համակրութիւնդ միշտ իրենց յատուկ տեղն ունին, միայն կը զարմանամ որ տակաւին կ'անդիտաես իմ բնութիւնս, և սկզբունքս. բայց չեմ մեղադրեր քեզ եթէ ծուռ կ'գատես իմ ընթացքս, քանի որ իմ ազգակից խորհուրդներուս անտեղեակ ես։

Չէ, բարեկամ, սիրով մոլորած չեմ, պատանեկան աւիւն չունիմ, և բաղդախնդիր կեանք մը վարելու տրամադիր չեմ։ Իմ սէրս այնպիսի բովէ մ'անցաւ որ այժմ զուտ, մեղմ, հանդարտ, այլ ոչ նուազ խորունկ և ծանր է։ Իմ նախորդ պրոյս վրայ մի գատեր զիս։ Հոգով ու մարմնով յափշտակուած էի՝ երբ զայն գրեցի։ Լիլլին նոր գատեր էի, և կարծեմ թէ նեղելի էր քեզի պէս մտերիմ մը բանալ իմ հոգիս, թափել բոլոր մէջ իմ եռանդուն զգայմունքս։ Այս-

պիսի յուզմանց Թափն երկար չտևեր, և պէտք չէ որ տեւէ։ Աշխարհս՝ իր կոշտ, դրական պահանջումներով, իր անատնելի իրականութեամբ շուտով կ՚կանգնի՝ ամենէ հրաւառ եւ բևեռայուզեան առջև, ամենէ խանդավառ հոգւոյ առջև, իբրև կոթող մը՝ պատն, արհնաւոր կենաց յիշատակներով։ Գիտեմ, փորձով գիտեմ, ապնիւ բարեկամ, որ չկայ լիուլի, անարատ երջանկութիւն, և սիրահարին պէս՝ արդի բանաստիւնն իր քնարին թելերը կ՚հնչեցընէ առէպ մարդկային թշուառութեանց նկարագրով և մութ հորիզոնի մը վրայ կ՚ընդնշմարէ միայն երանութեան սահման նշոյլներ։ Եւ իմ կենացս մութ հորիզոնին վրայ՝ ինչ այդ նշոյլն է և Լիլի, անուշ փայլուն նշոյլ, և իմ միակ հոգս ու ապնոյս է որ չսահի, չանցնի, միշտ տեսնեմ ու վայելեմ զայն։ Սակայն այս անուրանալի է որ՝ այսքան պատնութիւններէ ետև՝ իմ ճակատագիրս այդ նշոյլին կապած եմ, այնպէս որ եթէ մարի, ես չեմ։ Այսուհետև իմ ծնողքս, զոր չեմ ճանչեր, իմ հայրենիքս, որ զիս տարագրեց, իմ ազատասիրութիւնս, որ Լեհաստանի պատերազմն վրայ մեզ, իմ աշխարհս, որ զիս հալածեց, այն է, Լիլին է, անոր ծոցը պիտի փնտռեմ այն ամեն պողարիկ զգացմունքն, այն ամեն ընտանեկան, հոգեկան, ընկերային, լմնցական տարերքն որով մարդկային կեանքը կ՚գիւրանայ և որմէ մանկութենէ ի վեր զուրկ մնացած եմ։ Ամեն բանէ որը, նա պիտի լեցընէ իմ սիրտս ու միտքս, և պիտի ըսէ ինչ որ կամի։ Նոր պիտի սկսիմ վարել կեանք մ՚որ պրեթէ վիժած էր, նոր պիտի ստեղծեմ ինձ ընկերային կացութիւն մը, դիրք մը, անուն մը, յարաբերութիւն զոր կ՚զլանային ինձ։ Բայց ուր և ինչպէս, տակաւին որոշած չեմ, և քաջ կ՚զգամ որ եթէ բաղդն ինչպէս ոմանց՝ ինձ ժպտէր, եթէ վաղուց այլ և այլ վիճակներ զիս չպաշարէին, եթէ ճակատս բայ երեւի այն աշխարհին մէջ, ուր շատեր միայն նենգութեամբ, անիրաւութեան ճամբաներով կ՚հասնին պատուոյ, ախնաճութեան ու

փառաց, այսօր թերևս իմ անուամբ լեցընել աշխարհ, այսօր թերևս ընկերական բարձրութեանց վրայ սատանել։ բայց անօգուտ է խօսիլ անցեալին վրայ. կարևորն է ներկան ի նկատի առնուլ և կորսուած անդին ժամանակ ու շուխիլ մը վերաշահիլ։

Այս մասին իմ խորհուրդներս քեզի պիտի հաղորդեմ, ինչպէս առաջ նոյնպէս հիմակ քեզ խորհրդակիցս պիտի ընեմ։

Սակայն, սիրելի վլատ, հիմակ գլխաւոր հոգս Լիլիին առողջութեան վիճակն է։ Շատ ծանր կ՚կազդուրի. դեռ ևս սենեակէն դուրս չելներ. նիհար է, և զպացած վերջին այլայլութիւնները սաստիկ յուզած են եղկելիին սիրտն։ Ես եմ իր բժիշկն, բայց զգաստ ու զգոյշ բժիշկ, որ դիտէ զսհել ներկան ապագային համար։ Կ՚գիտեմ որ իր կենաց վերջին պարագաներն, իր մօրն ընթացքն, իր փախուստն, իր ուղևորութեան դժուարութիւնները, իր անտարբերութիւնս, ծանր, վշտալի տպաւորութիւն մ՚ըրած են իր մտքին վրայ, թէև միշտ կ՚ուզէ ծածկել, միշտ իր սրտի երջանկութեան վրայ կ՚խօսի, և իրեն հետ մեր նոր կենաց յատակագիծը կը պատրաստանք ու կ՚տրինք։ Դեռ նոր պատմեց ինձ թէ ինչպէս Արևելք ընկաւ, ինչ նեղութիւններ կրած է։ Բատեան հետաքրքրական է այդ նկարագիրն, և ի հարկէ ուրիշ անգամ սիրտի պատմեմ քեզի ձոլածոյն։ Ջնա յիմ, բարեկամ, որ Լիլի մերթ ընդ մերթ հայրենիք, ընտանիք, ծնողք կ՚յիշէ. անշուշտ անոնց կարօտը կ՚քաշէ. բայց հայրենեաց հողին վրայ, ընտանեաց ծոցն այնքան տանջանք քաշած է որ չհամարձակիր այս մասին որոշ փափաք մը յայտնել։

Անցեալ իրկուն՝ նորել լուսինն իր արծաթի նշոյլները կը սփռէր Մարմարայի ծովուն հանդարտ կոհակներուն վրայ, օդը մաքուր էր, հով չկար։ Հրաւիրեցի Լիլին քիչ մը պատշգամն երթալ։ Նա ալ իր մօտ նստայ, բաւ սովորականին՝

լուռ ու մունջ սկսայ իր երկար ոսկեփայլ գլխակին հետ խաղալ, երբ յանկարծ մեր խորհրդատար լուսթիւնն ընդմիջեց, թեթև հառաչ մը հանելով, և մրմնջեց իր դողարիկ, մեղմ ձայնով.

— Շնորհակալ եմ, Նելսօն, ատելի հիշատ ունէ կ'առնեմ: Ի՞նչ նուրբ, ողջախոհ է այս երկնից օդն, ի՛նչպէս կ'թափանցեն հոգիս՝ քու աչդդ կայծերուն պէս: Երջանիկ և ուրախ եմ. յատակ որ մի քանի օրէն քեզի հետ սա աւազուտ, սիրուն ծովափին վրայ շրջելու յաջողիմ. . . սա ծովէն անդին է մեր հայրենիքը, Նելսօն, այնպէս չէ . . . բայց ինչու՞ համար անոր երկինքն ասոր պէս պայծառ չէ, ինչու՞ համար անոր օդն ասոր պէս յատակ չէ, ինչու՞ համար այն տեղ այսչափ բարերաստիկ չենք. արդեօք հիմակ իր օդն, իր երկինքն, իր օբէնքը փոխուա՞ծ են . . . կարծես թէ մի քանի դար կայ որ բաժնուեր եմ հայրենիքէ, ուրիշ հայրենիք, ուրիշ հոգի, ուրիշ աշխարհ, քեզ գտնելու համար . . .»

Եւ Ելիւ չկրցաւ շարունակել. այլայլութիւնը կ'նշմարէր դունատ դէմքին վրայ:

— Ճշմարիտ է, Ելիւ, ըսի ձեղմիկ. սա հօրիզոնէն անդին ունիս սիրականներ որոց կարօտը կ'քաշես անդուլա . . . :

— Եւ միթե դու չունիս . . .

— Ես միայն քեզ ունիմ, և քեզմով կ'փափաքէի սիրել քու սիրականներդ, բայց . . .

— Ես ալ կ'փափաքիմ իմ միւս մօրս թևին տակ ապրիլ:

— Ես մայր չունիմ:

— Հապա հայր:

— Որբ եմ լիովին . . . և կարող ես ղրկել թէ մանկան հասակէ մեր ու հօր սերը չվայելուշ հոգի մ'ինչպէս կ'փարի հոգւոյ մ'որ անբաւ սիրոյ աղբիւր մ'է . . .

— Փոյթ չէ. իմ ծնողքս նաև քու ծնողքդ են. չես ընդունիր:

— Ինչո՞ւ չէ. միայն զիս մերժեցին, և իմ պատճառաւ մինչև անդամ քեզ:

— Միթե կարելի չէ՞ հաշտուիլ. մայր մը կրնայ քէն մնալ իր աղջկան հետ:

— Ի՞նչ իրաւունք ունիմ անունդ սիրոյն:

— Իմ սիրոյս իրաւունքը:

— Բայց դժ չունի այդ, քանի որ ես հին ու աղնուական անուն մը, տիտղոս մը չունիմ. . .

— Եւ միթե կարելի չէ՞, Նելսօն, դառնալ, միթե Անգլիա բաւական ընդարձակ չէ՞:

— Կ'իմանամ միտքդ, Ելիւ, և պատրաստ եմ կատարել փափաքդ:

— Անշուշտ այս պայմանաւ, Նելսօն, որ հայրենիքը նուրբն վիհ մը չբանայ քու և իմ մէջ:

— Եթէ հարկ է կ'նետուիմ այդ վիհն, բաւական է որ դու երջանիկ լինիս: Գիտեմ որ ամեն բան, հանդիստ, ճոխութիւն, կենաց ամեն դիւրութիւն զոհ տուիր ինձի համար, կ'զգամ որ տարագրութիւն, աստանդական վիճակ և ապագայ անստուգութիւն քու փափկասուն մարմնոյդ տաժանելի են, և թերևս . . .

— Մի այդպէս խօսիր, Նելսօն, սիրտս կ'ծակես: Ես երջանիկ եմ, միայն իմ երջանկութեանս վրայ բիծ մը կայ, այդ բիծն իմ ծնողաց դժկամակութիւնը, ժուռթիւնն է՝ իմ ընտրութեանս, և մանաւանդ փախուստիս համար: Միթե հնարը չկայ սրբել այդ բիծը. միթե կարելի չէ՞ փորձ մ'ընել, դէթ ստիպել զանոնք որ մեր սիրտերու միութիւնը ճանչեն, և մեղ չ'անիծեն . . .

— Կ'ըմբռնեմ այդ փափուկ ղգայումդ, և խնդիրդ դիւրին է . . .

— Քանի որ մեր հոգիները մէկ են, ամէ կրնայ քակել այդ միութիւնը:

— Մանաւանդ՝ երբ այդ միութեան կապն եկեղեցին ալ նուիրագործէ . . . :»

Ա յս խօսքիս՝ Լիլին անզոյն շրթերուն վրայ թեթեւ ժպիտ մը թռաւ, և իր կապոյտ խոր աչքն իմինիս վրայ սեւեռելով՝ մրմնջեց.

— Իրա՛ւ, քու քովդ եմ, Նելսօն, թէ ոչ կ'երազեմ։»

Եւ Լիլի՝ իր գլուխն ուսիս վրայ ձգեց։ Ուստ կ'այրէր. իր սիրտը սաստիկ կ'զարնէր, դէմքն, որ քիչ մ'առաջ անփայլ էր, սկսաւ վառիլ, կարմրիլ։ Դող եղայ, կարծեցի թէ հիւանդ է. բնական թէ սիրոյ տենդ ունէր, չէի կարող հասկընալ։

Նոյն պահուն օդն սկսեր էր ցրտիլ, ուղեցի ներս մտնել, բայց նա աչքը բացաւ ու ըսաւ, ինձ նայելով.

— Թո՛ղ, Նելսօն, թող որ վայելեմ՝ սիրոյդ լուսով այս լուսնին լոյսը, որ երբեմն քանի աղօտ ու ախուր կ'երեւէր ինձ։»

Բայց մտիկ չըրի. ներս տարի ղինք, և աղաչեցի որ հանդըստանայ, հրաման խնդրելով որ քաշուիմ։ Խնդիրս ընդունեց, բայց յարեց.

— Ես քուն չունիմ, պիտի նստիմ դրեմ տոքթօր Բէյնի, որ իմ հօրս տեղն է, և նա անշուշտ հնար մը պիտի գտնէ մեզ ծնողացս մօտեցընելու . . . ։»

Եւ իրօք՝ հետեւեալ օրն՝ երբ ղինք տեսնելու գացի, Լիլի գիր մը տուաւ ձեռքս, խնդրելով որ կարգամ և քեզի բացղրկեմ, որպէս զի մեր բարեկամ Բէյնի յանձնես։

Կարդացի գիրն, որ է այս.

«Ազնուասիրտ տոքթօր Բէյն,

«Երախտապիտութեան պարտիք մ'ունիմ կատարել, խոստում մը զոր ձեզի ըրած եմ։ Կ. Պոլիս կ'գտնուիմ, Նելսօնի մօտ, այն անձին մօտ՝ որու վրայ արդէն Պ. Վուտ ձեզի տեղեկութիւններ տուած է։ Իմ փափաքիս հասայ, թէեւ պիտեմ որ ձեզի՝ եթէ ոչ երկիւղ, բաւական հոգ պատճառեցի։ Իմ ծնողքս պահ մ'իրենց պարտքը մոռցան, դուք անոնց տեղը բռնեցիք։ Ցուսամ որ ծնողական իշխանութեան այդ չարաշուք ժամն անցաւ և աւելի պիտի և ներողամիտ դատաւորներու ընդունակ է հօրս և մօրս սիրտը։ Այժմ մեկ հոգ ունիմ, մօտենալ, ներողութիւն և օրհնանք հայցել, միթէ կ'մերժեն։ Ես չեմ իշխեր գրել. դուք, աղնիւ Բէյն, պիտի ներկայէք իմ աղերսս, այս է իմ աղաչանքս ձեզի։ Գիտեմ, կ'ընդունիմ որ իմ յանցանքս լուկ սէրն է, սէր մը սակայն որ իմ պատիւս անարատ, իմ անունս անբիծ պահելու օգնեց, թէև զրկուեց վիս ծնողական իշխանութեան դէմ ելլել և յանդուգն ուղեւորութեան մը ձեռնարկել։ Ծանր, անտանելի դերութենէ մ'ազատելու համար ուրիշ միջոց մը չգտայ։ Դուք, սիրելի Բէյն, առնել տուիք ինձ առաջին քայլը ձեր մարդասէր ոգւով, իսկ երկրորդ քայլն ինչպէս առի առանց ձեր դիտութեան, ահա համառօտ պիտի բացատրեմ։

«Ուսյլ կղզին՝ ձեր շնորհիւ՝ ապաւէն դաեր էի ձեր եղբօր բարեսիրտ ընտանեաց ծոցը, իրաւ, բայց ապահով, վստահ չէի որ անյայտ պիտի մնամ նոյն տան մէջ, քանի որ մօրս անհանդարտ բնաւորութիւնը կ'ճանչէի։ Անկէ զատ՝ կը փափաքէի միանգամ ընդ միշտ փորձել անձամբ այն սիրտն որ իմս առեր իր հետը տարեր էր, և եթէ սխալեր էի, եթէ մոլորեր էի, վերադառնալ հայրենիք և աշխարհէ ի սպառ հեռանալ։ Ուստի առի հետս ծերունի Սիմէոնը, ձեր տան վաղեմի անտեսը, որ ճամբորդելու փափաք ունէր, և հասայ Բիւզանդիոն։ Հարց ու փորձ ընելով՝ կարող եղայ իմանալ Նելսօնի բնակած վայրն՝ ի Թարաբիա։ Իմ նպատակս ու արժանապատուութիւնս չէին ներեր անմիջապէս ներկայանալ անոր և ըսել.

«— Ահա եկայ որ քեզ գտնեմ։»

«Ուստի իր տան դիմացը յատուկ տուն մը բռնեցի, ինչպէս նաև տեղացի խոհեմ հայ կին մ'որ առանին գործերը հոգայ, և որպէս զի իմ փորձս անվրդով կատարեմ Թուր-

քական հագուստ հագայ, կապոյտ քօղ մ'երեսս ծածկեցի, և սկսայ դեր մը խաղալ, որ լիովին իմ ղգայմանց ու բնաւորութեանս հակառակ էր: Դրացիս հետաքրքիր կ'դիտէր իր նոր դրացուհին պատշգամէն, ստէպ գաղտնի և երբեմն յայտնի, և այնպէս կ'երևէր որ, զիս թեթև, դիւրաշահ արարածի մը տեղ դնելով միայն ժամանակ անցընելու համար լսմով կ'զաղէր, մինչև որ երևակայած որսը ձեռք ձգէ: Այս շարժուձեռներն իմ վրայ անասորժ տպաւորութիւն մ'ըրին: Մտածեցի որ իր Էլիզին, որու համար միայն սիրտ ու աչք ունէր, ինչպէս կ'ըսէր երբեմն, դլխովին մոռցած է, և լոկ արևելցի զբօսասէր, գանդաղ և թեթևամիտ մարդ մը դարձած է: Այս հնչհնուքս զիս դրեթէ անկողին ձգեց: Սաստիկ կ'տառապէի, և խիղճս կ'տադնապէր զիս, որ անհատտարիմ անձի մը համար այնքան դէշ հոգի եղած էի . . . : Պոսֆորի կապոյտ ջուրն աներևոյթ եղաւ, ուրիշ տեղ օդ ու զովութիւն փնտռեց որպէս զի սիրտի, ու քիչ մ'իր առողջութիւնը գտնելէն ետև՝ վերստին հայրենիքը, Լոնտօն՝ գառնայ և իր սև բաղդը լայ:

«Ահա այս տեղն՝ դիւղի անկլիացի բժշկին, Պ. Փօքսի՝ միջոցաւ, օր մը յանկարծ երևցաւ իմ առջև Նելսօն: Զէի կարող հաւատալ աչքիս, թէև հոգիս կ'վկայէր որ նոյն ինքն է, իր ձայնն ու խօսքը հաստատեցին որ բոլոր ենթադրութիւններս իր մասին անհիմն էին: Աւելորդ է երկարաբանել այս նիւթիս վրայ, սիրելի Բէյն: Գոյ Նելսօնն այնպէս ինչպես որ էր Լոնտոնէն մեկնած օրը: Միշտ նոյն անկեղծ, արի, սիրաւառ երիտասարդն, պատրաստ իր կեանքը տալու իմ երջանկութեանս համար . . . : Ուրիշ բան չէի խնդրեր: Հիմակ ամեն օր կ'տեսնուինք: Նա մտադիր չէ դառնալու հայրենիք, և կամովին տարագիր մնալ կ'փափաքի . . . : Բայց ես, թէև տկար եմ մարմնով և կ'տառապիմ, թէև այլ և այլ պատահարներ իմ բոլոր էութիւնս սարսեցին, գոհ եմ և սրտով ուրախ, միայն այս գոհութիւնս կատա-

բեալ պիտի լինի, եթէ կարենամ՝ իմ ծնողացս ներողութեան ու հաւանութեան արժանի լինիլ: Եւ միթէ անարժանի եմ, սիրելի Բէյն . . . գուք ըսէք, գուք որ մեր տան վարդեմի բժիշկն էք, գուք որ դրեթէ իմ խնամակալս եղած էք:

«Հպարտ ու վէս է Նելսօն, և կ'սիրեմ այդ հպարտութիւնը, չմոնարհիր շահու համար, և յուսալի է որ աշխատութեամբ ու տաղանդով՝ եթէ ոչ բարձր ու փայլուն, դէթ պարզ ու հանդիստ կայութիւն մը պատրաստէ, միշտ գոհ լինելով իմ սրտով: Սակայն ես, սիրելի Բէյն, ես աւելի հեռուն, ապագան կ'նկատեմ, և կ'փափաքիմ որ գոնէ ծնողացս պաշտպանութեամբ շահաւէտ ասպարէզ մը գտնէր և բոլորովին չզրկուէր այն բաժնէն զոր կրնայ նուիրել դերդաստանն իմ ընտրած և սիրած երիտասարդիս համար . . . . : Զպիտի զարմանաք այս համարձակութեանս վրայ՝ եթէ մտածէք, սիրելի Բէյն, որ գառն պարագաներ և մանաւանդ իրաւունքն ու օրինաւոր սէր մը լեզուական կ'ընեն նոյն իսկ անխոս օրիորդ մ'որ երբեմն իր դլխի ցաւն անգամ յայտնելու համար ձեր առջև կ'թոթովէր . . . :

«Ի վերջ՝ ձեղի կ'թողում անօրինել ինչ որ բանաւոր կը գտնիք ձեր փորձառութեամբ, և կ'աղաչեմ որ շուտով հաղորդէք լինձ ձեր հաշտարար պաշտօնին ունենալիք արդիւնքը:

«Կ. Պօլիս 184... «ԼԻԼԻ»

Սիրելի Վուտ, այս դիրն իր հրամանին համեմատ բաց կ'ղրկուի քեղ որ, ինչպէս ըսի, կարդաս, իմանաս Ջովաքոյն ֆօլլն պատմութիւնը, և ապա տեղն յանձնես:

Սակայն այս գրոյն մէջ կան կէտեր որոց համաձայն չէի, և աղաչեցի Էլիզին, ի զուր, որ զանոց ընէ: Կ'գոլեմ իր հաստատ ու ազնիւ սրտին խորը պահած ընտանեկան սէրն որ դեռ կ'վառի, և չեմ նախանձիր, կ'ըմբռնեմ որ հայրենիքը բնակելու իղձը բնական է, սակայն պաշտօն, հարստութիւն, տիտղոս չեմ մտաբար, և լաւ ևս կ'համարիմ իմ ձակտիս

քրտինքով իր կեանքը պահել քան թէ իր ծնողաց ընարհիւ սարկաւագական այլ բարձր դիրք մը շահիլ . . . : Լիլի անհամեղելի ծնայ , աղաչեմ որ տառ մ'անգամ չփոխեմ իր գրոյն մէջ , և ինչպէս որ է քեզի ուղղեմ :

Սակայն անմեղ օրիորդը չգիտէ մեր տագնապը , չգիտէ թէ լէսթի Խտհէմի ու քու մէջ ինչ վէճ ու կնճիռ կայ՝ իմ պատճառաւ : Իսկ իմ ծննդեան պարագաներու բոլորովին անտեղեակ է : Քանի քանի անգամ միտքս դրի ոտքն ընկնիլ և անոր ամեն գաղանիք յայտնել , բայց համբերեցի . խոհեմութիւնն սեպեցի նոր այլայլութեանց առիթ չտալ և սպասել որ ձեր և լէսթի Խտհէմի մէջ եղած բանակցութեան արդիւնքն երեւան գայ :

Ուստի , սիրելի վ.ուտ , վերստին ընկանք երկինքէն աշխարհ , սև սգալի աշխարհը : Թէպէտ խնդրեր էի որ ամեն բանէ հրաժարիս , այն պայմանաւ որ ես հանգարտ , անբաժան մնամ Լիլիին հետ , բայց կ'տեսնեմ որ մարդու սրտէ կարելի չէ կարել ընտանի յարաբերութեան թաղուն այլ սերտ թելերն , և Լիլի որ անչափ կ'սիրէ զիս , չմոռնար իր ծնողքն որ այնքան աղէտից հեղինակ են :

Ուստի՝ կ'սպասեմ որ վերջ տայիք ամեն վէճի և հաշտութեան ձամբով մը Լիլին իր մօր ներողութեան և դէմ համակրութեան արժանի ընելու , եակ մ'որ իրօք չէ թէ համակրութեան այլ պաշտաման արժանի է . . . . : Որքան որ գժուարին կ'թուի ինձ այս հաշտութիւնն , պէտք է փորձել , որքան որ փափաքելի չէ ինձ այն , պէտք է փորձել , և քանի որ Լիլին կ'պահանջէ , ինչ կ'մնայ ընել . . . եթէ՞ ոչ հնազանդիլ :

ԴԱՄԱՍԿՈՍ

ԱՂՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ , կ'հատամ , Լիլին աւելի գրասէս կ'խորհի քան թէ դու . իր փափուկ վիճակն , կենաց դժուարութիւնները աւելի կ'կշռէ քան թէ դու : Մի բարկանար , ազատ կ'խօսիմ . դու ստէպ կ'երազես աշխարհ մը զոր նա իրացընելու միջոցը կ'փնտռէ , իր սիրոյն մէջ ամփոփելու կ'տեսնէ , որպէս զի միշտ սիրէ , հեռացընելով այն մտայղութիւնները որ կրնան իր պարզ երկինքն ամպոտել :

Թող որ քիչ մը շեղիմ մեր խնդրէն , թէև ըսելիքս անուղղակի յարաբերութիւն ունի անոր հետ : Քիչ մը կ'հատկընամ սէրը . . . Լիլիին պէս են սովորաբար այն կիներն որ՝ թէև սիրող ու զգայուն հոգի , եռանդուն ու մոլորուն միտք ունին , բայց իրական աշխարհէն վեր շատ չեն ելներ , և ծիրանեզոյն հորիզոնէն անդին սև ամպեր կ'ընդնշմարեն՝ ընազդումով մը , և յեղակարծ պատահարներու առաջը կ'ուզեն առնուլ : Զեմ ըսեր որ այս պարագային մէջ միայն ապագան ապահովել ու վայելելու ոգւով կ'շարժի Լիլի , անշուշտ որդիական սէրն թեթև շարժառիթ մը չէ իր գրոյն , սակայն ապագային երկիւղն , կեանքն ամեն նիւթական հոգերէ զերծ պահելու մտմտուքը , ոչ նուազ կշիռ ունին իր շարժուձեւերուն վրայ :

Մեծահոգի օրիորդ մ'որքան հոգեկան նոյնքան մարմնական կորով , որքան վսեմ սիգուհի , ազատաշունչ միտումներ ու խորհուրդներ , այնքան կ'փնտռէ առնական կաղմ , ազդու նայուածք , հրապուրիչ ձևեր իր սիրահարին վրայ : Ինչպէս չգա-

տեր՝ իր ամենէ խանդավառ ժամուն՝ նիւթոյ դեղեցկութիւնն իմացականութեան դեղեցկութենէ, այնպէս որ մին միւսին ցոլացումը կ'համարի, նոյնպէս չըմբռներ կատարեալ երանութիւնն առանց իրական ապահովութեան: Երբ կ'ըսէ նա սիրաշունչ, դողդոջուն շրթերով իր սիրահարին. —

«— Թէև դու անշուք վիճակ մ'ունիս, թէև դու սիրտ մը միայն ունիս ինձ նուիրելու, բայց այդ սիրտդ հարուստ է և վեհանձն —

Իր հոգւոյն խորէն կ'մրմնջէ —

«— Իմ սիրահարս սակայն ինչո՞ւ չունի հարստութիւն, բարձ ու դահ, որոյ արժանի է —

Եւ երանի կ'կարդայ այն սիրողներուն որ ոչ միայն կ'սիրուին այլ և հանդիստ կ'ապրին:

Ուստի՝ չեմ հատար բոլորովին, բարեկամ, այն սիրանուշ բերնին որ կ'ըսէ —

«— Մի՛ հոգ ըներ վիճակիդ. ես ո՛չ զարդ, ո՛չ պչրանք, ո՛չ կահ կարասի ու ապարան, ոչ ձոխ սեղան կ'ուզեմ. այլ բաւ է մեզի տնակ մը, հիւղ մը՝ հովտի մը խորը կամ բլրի մը ստորոտն, ուր կարող լինինք պատսպարուիլ և զայն մեր անշէջ սիրով զարդարել —

Վասն զի՝ նոյն իսկ սէրը դիւրասէր է, և եթէ ոչ իր նախկին քնութեան մէջ մշտատև, դէթ անվրդով ու խաղաղ պահելու համար ոչ միայն մտաւոր ու բարոյական այլ և նիւթական մտունդ պէտք է, որով նաև դեղանին աւելի դեղ, և աւելի ղղացում կ'ընդունի ղղայունն: Այս մտունդն արտադրողը դրամն է, հարստութիւնն է, իբրև գործի: Ձեմ ուրանար որ ամուսնական երջանկութեան առաջին պայմանը ձշմարիտ սէրն է որ տարիներու յաջորդութեամբ դոյն կ'փոխէ այլ ոչ հիմ ու նպատակ, սէրը՝ փոխադարձ քնաւորութեան, մտքի, վիճակի, փափաքներու համաձայնութեան վրայ հիմնուած, քանի որ ստէպ սէրն հարուստ այլ կեղծ ու պատիր շրջանէ կ'խուսի, սակայն պէտք է նաև ընդունիլ որ ա-

պահով վիճակ մ'անոր համմէ է, և աւտնին անախորժ պարագաներու դարմանն: Հետևապէս, բարեկամ, երբ, չէ թէ փառասիրութենէ, այլ պարզապէս անպղտոր ու յարատև սիրոյ վայելումի համար, ընտանեկան անդորրութեան համար, սիրուհի մը նիւթը չ'անդոսներ, ըստ իս՝ մեղադրելի չէ: Եւ այս պարագային մէջ, մի վիրաւորիր, անկեղծ է Լիլին, վասն զի ինչ որ շատեր կ'խորհին ու կ'երազեն, և երբ ապագային մէջ այդ երազը չիրանայ, իրապէս փառաւէրն՝ անպտութ, հեգնաբան, և մինչև անդամ անհատարիմ կ'դառնայ, և ամուսնական կենայ թշնամի, իսկ պարզասէրը, ընտանեսէրը, համեստ ու զգայուն արարած մը՝ սիրոյ առաջին աւիւնն ու տենչը ցրուելով, լռելեայն կ'հառաչէ, կ'հալի, ու միշտ տրտում, նեղսիրտ կ'դառնայ, մանաւանդ երբ իր կենակցին ժրութեան ու գործունէութեան արդիւնքն չտեսներ, Լիլին կ'ըսեմ բարձր կ'խօսի, կանխաւ վստահ լինելով որ դուռ իր այս անկեղծութեան վրայ չպիտի դժկամակիս. ի հարկէ մեծ համարում ունի քու տաղանդիդ, քու աշխատասիրութեանդ վրայ, սակայն քանի դիտէ նաև որ աղատաբան, ըմբռնող, վէս հոգիներ իրենց արժանիքով իսկ չեն յաջողիր, և թշուառութեան առջև կ'վհատին ու կ'տառապին: Բոլորովին համամիտ եմ Լիլիին, մանաւանդ անոր համար, որ աշխարհիս ներկայ դրութեան մէջ՝ անկախութեան և իրաւունքի հիմն, ամէն աստիճանի ու կարգի մարդու համար՝ նիւթական ոյժն է, դրամն է: Եւ դու, Ներսէս, որ անկախ ու ազատ կ'փափաքիս ապրիլ առանց դրամի, երազ մը կը տեսնես որու կատարումն թերևս ուրիշ աշխարհի մը մէջ տեսնուի այլ ոչ ներկային մէջ: Երբ գործունէութեան, իմացականութեան, դիտութեան կ'միանայ դրամն՝ անդիմադրելի զօրութիւն մը կ'դառնայ, անխօս մարդուն լեզու, վեհ-րոտ պրչին ոյժ, նկուն ու հակուն ճակտին փայլ, սարսուռ ոգւոյն ու մարմնոյն աղատութիւն, և մինչև անդամ տգեղին գեղ կ'ընծայէ . . . : Եւ ինչո՞ւ չտիրանայիր, Ներսէս, ինչ-

պես կ'փափաքի Էլիլին, այն հարստութեան ու բաղդին որ անդորձ, անարդիւն կ'մնայ արդէն այն ջլատ կենայ մէջ, հարստութիւն, որու մէկ մասն քու սիրուհւդդ բաժինն է. մթեթ աչք կ'հանէ, ինչպէս կ'ըսեն ոսկիօրէն. ինչու՞ պիտի մերժէիր այն պարգեւն, զոր Էլիլ, եթէ յաջողի, կրնայ իրեն օրինաւոր օժիտ ի իրեն բնական իրաւունք շնորհել քեզ:

Է՛հ, բարեկամ, այս տեղ դատողութիւն պէտք չէ. իրաւունք մը պահանջել նուաստութիւն չէ, այլ մանաւանդ արիութիւն: Ըստ իս՝ պէտք է հաստատել օրէնք մը, և թեւս օրին մէկը հաստատուի, երբ արդարութեան ու հաւասարութեան դաշափարն աւելի ևս ծաւալի ու արմատ բռնէ մտայ մէջ, օրէնք մ'որու ուժով անշարժ, ապարդիւն դրամագլուխներ, որոյ հեղինակը չեն արդի կալուածատէրներն այլ միայն ժառանգորդներ, ժիր ու գործունի, հնարագէտ ու պարկեշտ, այլ չունևոր բանուորներու մէջ բաժնուէր, ինչպէս այժմ կ'բաժնեն ու կ'դրաւեն երկար ատեն անհնակ կեցած հողերը: Այն ատեն պիտի տեսնէիր որ ինչ ահագին գանձեր անարժան, շլայլ ու անձարակ ձեռքերէ պիտի անցնէին արժանաւորներու ձեռքը, ինչպէս աղդային հարստութիւնը պիտի բազմապատկէր, բազմապատկելով մարդկային գործունէութեան, ազատութեան ու դիտութեան սահմանները:

Նոյն երևոյթը պիտի տեսնեմ անշուշտ՝ թէև աւելի անձուկ սահմանի մէջ, եթէ այսօր լորտ Խստհէմի բարեսիրտ հարստութեան դէթ մի մասը ձեռքդ անցնէր: Եւ ինչու՞ չանցնի, քանի որ նոյն ինք Էլիլն կ'պահանջէ, և իրաւունք ունի: Ուստի ես իմ կողմէ պիտի չանամ ոչ միայն ողջքալի, սրտառուչ ձայնէ մը, այլ արդարութեան բողոքէն շարժած՝ դիմել այդ նպատակին, ձեր և լէտի Խստհէմի մէջ հաշտութիւն մը բերել: Բերդը ներսէն առնուած է, լէտի Խստհէմ ի հարկէ անձնատուր պիտի լինի . . . :

Տօթմօր Բէյն մտադիր կարդաց Էլիլիդ դիրը: Երբեմն կը պատահէր ունքն, երբեմն կ'ժպտէին շրթունքը: Ի վերջէ լսաւ ինձ.

— Բարեկամ, չըսի՞ քեզի որ Էլիլ իր խոր սիրոյն քօղին ներքև կ'պահէր սուր իմացականութիւն մը: Ահա նամակ մ'որ կ'հաստատէ իմ գուշակութիւնս: Լաւ կ'զգայ և, որ մեծն է, լաւագոյն կ'խորհի այդ աղջիկը: Դժպոհ չեմ որ գործերն այս դարձուածքն առին, մանաւանդ անոր համար որ իմ պաշտպանութիւնս արժանի էակի մը շնորհեր եմ: Սև երես չհանեց վրս: Ոչ միայն հոգի մը այլ և հարստութիւն մ'աղատած պիտի լինինք: Ուստի պէտք է կրկնապատկել մեր ճիգը և լէտի Խստհէմի հետ մեր ունեցած բանակցութեան յաջող վախճան մը տալ: Այս կիրն անպատասխան չպիտի թողում:»

Նէլսօն, կ'նայիս, տոքթօր Բէյն իմ կարծիքս ունի: Դու որքան կ'ուզես ծանրէն քաշէ, անօգուտ է. իրողութիւններն իրենց բնական ընթացքը պիտի ստանան . . . :

Անհամբեր կ'սպասենք լէտի Խստհէմի պատասխանին:

ՆԱՄԱԿ ԺԲ

ՏՕԿԹՕՐ ՐԷՅՆ ԱՌ ԼԻԼԻ

Լոնտոն . . .

Ազնիւ Էլիլ, Գիրդ ատի: Արդէն զայն չկարդացած սիրտդ կարդացեր էի, իրրև ձեր տան բժիշկը, բայց չէի նշմարած անոր մէջ այն հրաշալ տաւերն ու բանաւոր նշոյլները, հոգւոյ և իմացականութեան կայծեր, որով կ'փայլի ինձ գրած դիրդ: Կ'ճանչեմ քեզ. դու ազնիւ հոգի մ'ես ու համեստ, միայն անիրաւութեան դէմ ըմբոստ. սակայն չէի կարծեր

որ այնքան ձարպիկ լինիս որ խաբես ծերունի բժիշկ մ'որ՝ սակայն՝ ըստ կարգի՝ ինք ծնողդ խաբեր էր։ Խաբողը միշտ կ'խաբուի, դիտես։ Դու՝ յանդուգն օրիորդ, ինչպէս պայիր ձեռօքդ պտար սիրահարդ։ Հիմակ երջանիկ ես, կ'հաւատամ, ուրախ եմ, միայն չափէն աւելի մի վըղովիր։ Այնչափ այլ այլութիւն քու փափուկ հոգւոյդ համար ծանր է։ Ձես մոռնար այդ երջանկութեանդ մէջ, չըսեմ ապստամբութեանդ մէջ, որ տեսակ մ'երանութիւն է, ծնողդ և դու։ Գիտեմ խղճի խայթ չէ այդ, այլ բնութեան ձայնն, որու կ'հնազանդիս, իրրև բնաւեր աղջիկ, և կ'ուզես հաշտուիլ։ Լաւ, անհոգ, հանդարտ եղիր, խնդիրդ պիտի կատարուի։ Ապրիս. քիչ մ'ետս համբերէ, մի քանի օրէն յուսամ լաւ լուրեր տալ քեզի։

Բժշկական մի քանի խրատ անպատեհ չեն. կ'կրկնեմ զոյշ եղիր բուռն այլայլութենէ. մի յոգնիր, շատ մի սիրեր, քանի որ այժմ սէրդ քուկդ է, մի պաղիր, թէ ոչ քիչ մը սէրդ։ Երբեմն շրջապայէ, ի հարկէ նեղսօնի հետ, որ անշուշտ երջանիկ մահկանացու մ'է հիմակ, թէև բաւական գոռոզ։

Իմ օրհնանքս կ'տամ քեզի։ —

ՆԱՄԱՆ ՆՈ

ԱՂՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լ.ՆԴՈՆ . . .

Բարեկամ, Աչքդ լայս. լմտի Խտհէմ վերջապէս գրեց, վհատկը ձայն հանեց, և ինչ երկիմի, տղաբալի ձայն։ Մեր դուշակածին պէս՝ շաբար ու մեղր կ'հոսին իր նամակէն։ Պատրաստ կ'ցուցընէ նա ինքզինքը հաշտութեան, ամեն գատէ կը հրաժարի, կերպով մ'իր անխոհեմ ընթացքը կ'խոստովանի ու կ'զատապարտէ, և կ'առաջարկէ մեզ միջնորդ կանգնիլ իր և քու մէջ, և Լիլլին իր ընտանեաց ծոցը գարձընել։ Խակ քինկ խնամակալիդ վրայ բառ մը, ակնարկութիւն մ'անգամ չկայ իր գրոյն մէջ, այնպէս որ տոքթօր Բէյնի ու իմ կասկածն կ'հաստատուի թէ լէտի Խատհէմի և քինկի մէջ գաղտնի բան մը կայ անցած, գաւ մը, ո՞վիտէ, որո՞ւ դէմ։ Բայց ինչ հարկ կայ մեկնել այս վարպետ կնոջ պիրն, երբ կարող եմ եղածին պէս ընդօրինակելով հաղորդել քեզ։

Աւասիկ.

«Պարոնայք Վուտ ու Հէվլօք,

«Պէտք չկար գրել ինձ, քանի որ ազատ էիք գալ ինձ անձամբ տեսութեան։ Կ'ցաւիմ անցեալոյն վրայ, բայց անցուկը մոռցուկ է, և կ'փափաքիմ վարագոյր մը քաշել անախորժ դէպքերու վրայ. այդ վարագոյրը պիտի լինի հաշտութիւն, որ ձեզմէ կախումն ունի, և ես՝ իբրև մայր, պատրաստ եմ պիրկս բանալ Լիլլին և ընդունիլ զինք Նեղսօնի հետ, որ իմ զաւակս պիտի լինի, և որու վրայ ինձ ծոռ տեղեկութիւններ տուած էին։

«Հիմակ աւելի յստակ կ'տեսնեմ, ու կ'զղջամ։ Խակ եթէ դուստրս ու փեսացուս ինձի չափ անյիշաչար չեն, փոյթ չէ, ես իմ դիտաւորութեանս մէջ հաստատ եմ, և պիտի ցոյց տամ իմ վերջին կամքովս թէ անունդ ապագայ բարօրութեան համար ինչպէս ամեն բան նախատեսած ու հոգացած եմ։

«Ընդունեցէք իմ յարգանքս։

«ԼՆՏԻ ԻՍՏՀԷՄ»

Կ'նայիս, Նեղսօն, ինչ խայծ կ'ձգէ մեր բերանն, որպէս զի մեզ որսայ։ Կ'ուզէ անշուշտ քինկի խնդիրը թօղարկել, և այս փոխարէնն անցընել, սակայն դիւրաւ չպիտի յաջողի։

Արդէն տաքթոր Բէյնի հետ մեր որոշումն ըրած ենք։ Երկրորդ մը հասուցի ձեռքը խնդրելով որ ուղղակի իմ հարցմանս պատասխանէ, հարցում որ միշտ քինկի կ'վերաբերի . . . դեռ պատասխան չառի . . . ի հարկէ պիտի փութամ քեզի հաղորդել, երբոր առնում։

ՆԱՄԱՆ ՊՊ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒԾ

Կ. Պօլիս . . .

Բարեկամ, ճշմարիտը ընորհապարտ եմ ձեզ։ Ի՛նչ դրական մարդիկ էք, և նիւթականին ուրքան սիրահար։ Լափեցի ձեր գիրերը Լիլլիին հետ, իրաւունք առինք ձեզ, բայց տարբեր եղրակացութեան հասանք . . . ։ Դուք աւելի կ'բանաւիւսէք քան թէ ես, դուք աւելի անձանօթին սահմանները կ'դեգերիք քան թէ ես, երբոր կարծէք թէ մարդկային երջանկութիւնն նիւթական միջոցներով կարելի է ապահովել . . . ։ Եւ ի՛նչ կայ կայուն այս անկայուն կենաց մէջ, եթէ ոչ հոգի, սէր, ազատութիւն։ Առանց այս երրորդութեան ի՛նչ ընեմ ես գանձն, ի՛նչ, հարստութիւնն։ Գտայ հոգիս, բայց դեռ իմ ազատութիւնս, իմ էութեանս գաղտնիքը չգտայ։ Այս ևս, քու ընորհիւդ երևան պիտի գայ անշուշտ, և քիչ առենէն իմ ընելիքս պիտի որոշուի։

Ձեմ դժամակիը, բարեկամ, Լոնտօն գալու, եթէ այս է Լիլլիին փափաքն ու հոգն, որոյ՝ իր մտքէն չանցած կերպով մեկնութիւն կ'տաս, բայց մտածէ անգամ մը թէ ի՛նչ

ողորմելի, չքսեմ նուաստ, կերպարան մը պիտի ցոյց տամ, երբոր իմ ծննդեան վկայագիրս՝ ամուսնութեանս առթիւ՝ պահանջուի, ինչպէս որ օրէն է։ Ի՞նչպէս պիտի ներկայեմ այդ վկայագիրն, որ արձանագրութենէ, որ կողմէն պիտի հանեմ, կարո՞ղ ես այս կէտը բացատրել ինձ, մինչդեռ՝ ընդ հակառակն՝ երկարօրէն կ'խօսիս նիւթական միջոցներուն օգտին և մարդկային երջանկութեան վրայ ունեցած ներդործութեան վրայ։ Անշուշտ՝ ինչ որ կ'ըսէք տաքթոր Բէյն և դուն՝ դիտեմ որ մեր բարօրութիւնն ի նկատի առնելով կ'ըսէք, սակայն կարևոր կէտ մը կ'մոռնաք երբոր զիս կ'հրաւիրէք այն աշխուժ պետական ընկերութեան մէջ մտնել, որ տակաւին յետին ասպետին երակներուն մէջ նորմանեան արիւն փնտռելու մոլութիւնն ունի, որ աղգաբանական տումարներու համբար և տիտղոսներու նախասլաշարմունքն ունի։ Իսկ ես ի՛նչ ունիմ . . . և ոչ իսկ անուն մը։ Կ'նայիս, բարեկամ, ի՛նչ բանի մէջ կ'կայանայ ոմանց համար երջանկութիւնն ու մեծութիւնն, և ի՛նչպէս կ'մոռնաս ստէպ ծանր վիճակ մ'որու պիտի ենթարկուիմ, եթէ այդ կողմը դիմեմ Լիլլիին հետ, որու մայրն՝ լէտի Խտհէմ, անտարակոյս այս փափուկ կացութենէս, որ իրեն ծանօթ պիտի լինի, օգուտ քաղելով՝ նոր նոր խաղեր պիտի խաղայ, և թերևս այն ժամանակ Լիլլին բոլորովին ձեռքէս կորզէ։

Ձէ, չէ, բարեկամ, մինչև որ այս մութ կէտը չպարզուի՝ չպիտի շարժիմ իմ տեղէս։ Սակայն ուրիշ մութ կէտ մը կ'պղտորէ իմ պայծառ երկինքս, այս է Լիլլին առողջութիւնն որ զգալի տարբերութիւն մը դէպ ի լաւ չցուցներ։ Քնքուշ ծաղկի մը կ'նմանի որ մերթ կ'բացուի ու մերթ կ'գոցուի, մերթ փայլուն գոյներ, անուշաբոյր հոտեր ունի, մերթ գունատ ու վհատ՝ իր սիրուն գլուխը կ'կախէ և ուրիշ աշխարհ կ'շրջի։ Անկարող եմ թափանցել այս տրամութեան շարժառիթն, թէև կ'պարծիմ որ իր սրտին ներքնագոյն խորշը կ'կարդամ, անհատան աչօք կ'դիտեմ իր անսովոր զուար-

թուրքիան, որով կ'սպառնային բոլոր Եւրոպան . . . : Եւ
րանի թէ տոքթօր Բէյն այս անգ գանուէր, թերևս նա գար-
ման մը գտնէր, նա որ քաջ կ'ճանչէ Լիլիին քնութիւնն ու
հոգւոյ հանգամանքը . . . իր խրատը կ'պահէ Լիլին, կը
շրջի, մաքուր օդ կ'ծծէ, այլայլութեան առիթներէ կ'հե-
ռանայ, սակայն միայն կիտի մը վրայ՝ կ'անսասան իր բժշկին,
այս է սիրոյ կէտը: Իր սէրն այն ատեն պիտի պաղի, կ'ը-
սէ, երբ արիւնն իր երակներուն մէջ սառի . . . :

Զարմանալի բան. թերևս տենդի նշաններ իր վրայ կ'ե-
բևին, թէև ախորժակը տակն է, և զգօնութիւն մեծ փափաք
ունի: Ես ալ երբեմն շրջադայելու կ'երթնեմ հետ, երբեմն
ալ ընկերութիւններ կ'յաճախեմ, թէև առանձնութիւնն աւե-
լի կ'սիրէ: Արդէն բաթեկառուհիներ ունի, մանաւանդ հայ
կանանց մէջ, որ զինք կ'սլաշտեն, վրան կ'զմայլին՝ երբ կ'տես-
նեն որ իրենցմէ լաւ հայերէն կ'խօսի: Անցեալ իրիկուն երե-
կոյթի մը հրաւիրած էինք, ուր հայ օրիորդներ կ'շողային
իրենց դէմքով, պերճ հագուստով, և մանաւանդ գոհարնե-
րով: Լիլի միայն իր ոսկի խաչն ունէր վիզն՝ բարակ օղակէ
մը կախուած, և ինչ նաղալի, ինչ հրապուրելի էր իր պար-
զութեամբն: Արմենուհի սքճնաէրներն չէին կարող հաւասար
որ անկլեայի օրիորդ մ'այսպէս միշտ անզարդ երևի ընկերու-
թեան մէջ, ոնանք կարծէին թէ ծպտեալ հայուհի մ'է, այլք
կ'պնդէին թէ հայու նկարն ունի: Եւ Լիլի ժպտելով կ'պա-
տասխանէր. — Արմենուհի չլինելուս մէկ ապացոյցն այս է
որ ձեզի պէս չեմ հագուած — և ամենքն այս խօսքին՝ իրենց
սև աչքը վար կ'առնէին ամօթապարտ:

Բայց բոլոր հայ կիներն նոյն ձև տարազն ու կապուտը
չունէին, այլ քաթեդրալցիներն՝ որ քիչ շատ ֆրանսերէն կ'ը-
թուէին և դաշնակի վրայ սպիտակ մատեր շարժել գիտէին,
բարիզեան նորաձևութեան հետամուտ էին, արձակ ձևեր,
պչրալի կերպիր ունէին: Ասոնք բուն հայկական ընտանեայ
առջև հեգնոտներ են: Մի վարմանար բանիս վրայ՝ և կրօ-

նական իմաստով մի առնուր, վասն զի ես շատ յարմար կը
գտնեմ: Եւ իրօք հերձուածող են: Խոյսարեմ խնդիրը:
Այս տեղ, մայրաքաղաքս օրինաւոր պլրոյ չկայ տղոյ հա-
մար, թող թէ աղջկանց: Հին դրութեամբ, հին լեզուն կը
կարդան, կ'գրեն, կ'հաշուեն: Ծողովրդեան տղայք եկեղե-
ցւոյ կից դպրոցներ, կամ լաւ ևս ըսեմ, բանաւոր կ'յաճա-
խեն, ուր կ'սիրէ գաւազան, և կ'պահակալէ միջնադարեան
իմաստակութիւն Պաթօ-Էլչիի մը կերպարանքով: Հարուստներն,
որ տեղւոյս աղնուականները կ'սեպուին, թէև ստէպ անազնիւ
հոգի ու աղտոտ ձեռքեր ունին, իրենց զաւակաց համար
տան վարժապետներ կ'բռնեն և անոնց այս պատուէրը կ'տան.
«կարելի եղածին չափ շուտով մոռցուր զաւկիս հայերէնն,
որ անշահ է, անօգուտ է մեզի համար, և սորվեցուր ֆրան-
սերէն խօսիլ, գրել, պարել, հագուիլ շքուիլ ու երգել:»
Այս պատուէրին կ'հետևին երբեմն օտարներ յօժարակամ
և հաւատարմութեամբ կ'կատարեն հայրական հրահանգն,
մանաւանդ օրիորդներու մօտ, որ տեսակ մը պէպէյներ կ'դառ-
նան, ամեն կերպ քամածին հաճոյքով և չիմարական տափա-
ռութեամբ: Վասն զի իրենց համար մարդ է այն միայն որ
գլուխը գլխարկ կ'դնէ, ֆրանսերէն մի քանի բառ կ'թո-
թովէ, և շատ կ'ծռմրկի: Հայերէնն բարբարոս, խորթ, վայ-
րենի լեզու մ'է անյարմար քնքուշ քմայ և միայն ոամիկ ժո-
ղովրդեան յատուկ: Այս ալ իր վրէժը կ'լուծէ այսպիսի
ծանծաղամիտները հեգնոտաբար անուանելով:

Ուստի չես կարող երևակայել, բարեկամ, թէ ինչ հիա-
ցում պատճառեց Լիլի՝ երբ այն երեկոյթին մէջ իր բնա-
տուր անուշութեամբ սկսաւ հայերէն մաքուր խօսիլ և ցոյց
տալ որ բարեկիրթ անուն ունեցող աղջկունք, քանի որ աղ-
գային դաստիարակութենէ զուրկ են, անկիրթ կ'ըսուին Ան-
կլիա, և չեն կրնար յարգ ու պատիւ վայելել: Ամենքն ափ
ի բերան մնիկ կ'ընէին, կ'ժպտէին, կ'կարմրէին և իրենց
հագուստին աւելորդ զարդերը պարտկելու կ'ջանային:

«— Ի՛նչ զարհուրելի բան, կ'ըսէր Լիլի, հայ լինիլ, և հայութիւնն ատել, հայ լինիլ և հայ պատմութիւն, լեզու, դրականութիւն և Հայաստան ուրանալ: Իմ կարծեօք՝ Հայաստանի դեղացի աղջիկ մ'իր բնական դեղով, հագուստով, լեզուով աւելի կ'սիրեմ քան թէ շինծու, անհարազատ արմնուհի մը, թէև աշխարհիս դեղեցիկն ու դիտունը լինի. . . . :»

Այս ոճով բաւական խօսեցէն ետև՝ Լիլի սկսաւ յորդորել արմնուհիները պարզութեան, հայրենասիրութեան օրինակ տալ իրենց զաւակներուն ու եղբայրներուն: Կ'պիտէի որ շատ հայ օրիորդներ կ'քաշուէին այդ ընկերական շրջանէն, և Լիլիի բոլորտիքը կ'առնէին աւելի պարզասէր ու միամիտ աղջիկներ, որ՝ թէև տգէտ, ուշիմ էին ու արթուն և բաւական հպարտ, տեսնելով որ Լիլի զերծնք աւելի կը պատուէ ու կ'սիրէ քան թէ հերձուածողները:

Կ'հաւտամ, սիրելի Վուտ, Լիլիին ըսած մի քանի խօսքերն շատ աւելի ներգործութիւն ունեցան անշուշտ քան թէ երկար քարոզներ, և կարծեմ թէ ունայնամիտ ու պարծուկ ժողովուրդներ՝ իրենց բնական սահմանն ու չափը սորվելով կ'ուղղուին, եթէ օտարներ՝ առանց շողոմարարութեան, առանց շահու կամ ուրիշ բանի ակնկալութեան, Լիլիին պէս վարուէին և ցոյց տային որ ազգութեան կեանքով ապրող օրիորդներ շատ աւելի կ'նպաստեն մարդկային մտաւոր ու բարոյական զարգացման, քան թէ անոնք որ միայն պճնիլ, քծնիլ ու շնթել կ'սիրեն, օտարներու մօտ, և իրենց անշուք ազգին անունն անպատուութիւն կ'համարին . . . :

Մեր այս տաղնապալի ժամերուն մէջ՝ անպատեհ համարիս թերևս այսպիսի աննշան խնդիրներու վրայ թուղթ մրոտել, սակայն, բարեկամ, ինձի համար աննշան չէ բնաւ ինչ որ Լիլիին կ'վերաբերի . . . : Արդ՝ ձեղի կ'ձնայ աւելի կարևոր խնդրոյ մը վրայ գրել ինձ, և յուսամ որ ձեր դիրն պիտի դայ սփոփել զիս ծանր բեռէ և լուծել իմ կենցաղ դաղտնիքը:

ՆԱՄԱԿ ԿԵ

ՎՈՒՏ ԱՒ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն . . .

Խնդիրը նոր կերպարան մը կ'առնու, բարեկամ. լէտի Իսահէմ՝ թէև առ երեսս պատրաստ և տրամադիր ցոյց կը տայ ինքզինքն ձեր ամուսնութեան հաւանութիւն տալու, բայց ձեռքի տակէ նոր, և այժմ օրինական կնճիռներ կ'հանէ, իսկ Պ. Քինկի խնդիրը թաղելու կ'ջանայ: Դիտողութիւններդ իրաւացի են. զէնք կ'փոխէ նա ինչպէս նաև դերն, միշտ իր նպատակէն չվրիպելով: Փոն ընկած ընձու մը կ'նմանի որ իր ճիրանները կ'կրծէ և անկից դուրս ելնելու հնար մը կը փնտռէ: Զօրութեամբ կատարել չկրցածն աղուէսութեամբ գլուխ հանել կ'ուզէ: Ի՛նչ հրէշ է, արդարև, այդ կինն, ամեն մայրական ու մարդկային զգացմունքէ զուրկ: Կ'փափաքէի որ չխմանար Լիլի մօրն այս նոր խաղն, որպէս զի իր փափուկ սիրտը զգածուի, իր առողջութիւնն չվնասուի: Ուստի այս և ուրիշ գրելիք կէտերս մի՛ հաղորդեր անոր, որ կ'դողայ իր մօրն անէծքն ընդունելու: Եւ միթէ այսպիսի մօր մ'անէծքը կրնայ ազդեցութիւն ունենալ այն հրեշտակային էակին վրայ որ կ'կարծէ իրաւամբ թէ անկեղծ ու ճշմարիտ սէրն ամեն յանցանք կ'սրբէ, մինչև անգամ որդիական անհնազանդութիւնն . . . :

Ա՛ռ այժմ մի՛ շարժիր տեղէդ, բարեկամ. կ'տեսնեմ որ դու աւելի հեռուն կ'տեսնես, դու աւելի լաւ կ'գատես այս կողմի գործերն ու անձերը քան թէ մենք. իսկ լէտի Իսահէմի սրտին խորը թափանցեր ես, սիրտ մ'որ պղտոր ջրով հոր մ'է:

Այդ անօրէն, նենգաւոր կինն հիմակ օրինաւորութիւն ձա-
խելու երեր է մեզ, ինչ նպատակաւ, յայտնի է քեզի: Կը
հաւանի որ Լիլիին միանաս, բայց օրէնքով, կ'հաւանի որ
իր փեսան, իր զաւակը լինիս, բայց օրէնքով, կ'ընդունի որ
Լորա Խոհէմի ժառանգութեան իր միւս որդւոց հետ մաս-
նակից լինիս, բայց օրէնքով. և քանչ դիտես որ օրէնքը շատ
պարագաներու մէջ՝ ինչպէս մեր Սուլիվդ կ'ըսէ, սարսի ոստայն
մ'է զոր աղուտակները կ'պատուեն, և որու մէջ սակայն
ժողովրդեան զաւակները ձանձ պէս կ'բռնուին: Լէտի Խոս-
հէմ ալ կ'ուզէ քէթէդ բռնել օրէնքով, կանխաւ տեղեակ
լինելով, ինչպէս որ քանչ կ'գիտես, որ դու ձակատդ բաց
չպիտի կարենաս երեխլ օրէնքի աչքէն, երբոր ամուսնութեան
պայմանագիրը յօրինելու ժամը պայ:

Կ'ուզես, բնաբերամ, իմանալ իր պատասխանն մեր երկրորդ
դրոյն, կ'պրէ, ոչ թէ ինք ուղղակի, այլ տան իրաւագիտին
բերնով, թէ՝ — Սրտովին կ'հաւանի որ Լիլի միանայ Նել-
սոնի հետ, և արդէն հրաման տուած է իր իրաւագիտին որ
օրէնքին պահանջած բոլոր արարողութիւնները ի դործ դնէ —
իսկ պ. Քինկի վրայ վերստին ակնարկ մ'անդամ չնետեր:

Այս պատասխանն պարզապէս հեղնութիւն մ'էր, մեզի
դէմ սուր նետ մ'էր, և բաւական սրտի ու մտքի լրբութիւն
ունենալ պէտք էր արտաբուստ ապուշականութիւն դասող կին
մ'որ այսպիսի ծանր քայլ մ'առնու: Սակայն՝ ըստ երևոյթին՝
Լէտի Խոհէմ՝ այս քայլին ծանր հետևանքը չէր կշռած
թեթևամտութեամբ մ'որ կանանց յատուկ է, կ'ըսուի, որ-
քան հնարպետ միտք ու նենգաժէտ սիրտ ունենան:

Պ. Բէյնի ու իմ զայրոյթս այնքան մեծ եղաւ՝ այս երկրորդ
լրբենի պատասխանին վրայ, որքան որ առաջինն իր մեղմ
ու հաշտարար ոճով մեզի սնոտի յոյսերով օրօրեր էր: Հարկ
էր կարուկ ձամբայ մը բռնել և այդ անզգամ կինն իր յե-
տին տպաւորին մէջ շանթահարել: Այս անգամ օրէնքը մե-
զի կ'յաջողեր իրրև վահան, ես ալ անոր դէմ օրինաց վա-

հանը պիտի հանէի, և անոր ամենէ տկար կողմը պիտի խոց-
տահէի . . . :

Մի վրդովիր, և մտիկ ըրէ, բարեկամ: Իր նախորդ նա-
մակին հրատէրն օգուտ քաղելով՝ անձամբ ներկայացայ լէ-
տի Խոհէմին: Ձեր սպասեր այս այցելութեան, և հետևա-
պէս պատրաստ չէր, իմ ուզածս ալ այս էր . . . : Պահ
մը շփոթեցաւ և ապա ժպտելով հրաւիրեց որ նստիմ:

— Աւելի փափաք ունիմ խօսելու քան թէ նստելու, սի-
կինն» ըսի խոժոռ դիմօք:

Լէտի Խոհէմ այս բնաբանս լաւ նշան չսեպեց, երեսը
ծռմռկեց և ապա վէս ձայնով մը,

— Բայց, Պարոն Վուտ, ըսաւ, եթէ այդչափ կ'շտա-
պիր, կրնայիր գրել. միթէ փաստաբանիս կիրը չհասաւ
ձեռքդ . . .

— Հասաւ, այլ ոչ իմ հարցմանս պատասխանն: Առ այժմ
գործս ուղղակի ձեզի հետ է, տիկին. օրէնքը միշտ պատ-
բաստ է վճռելու, երբ մեր մէջ պատն անլուծելի ծայ:

— Եւ ինչ գաս կայ մեր մէջ, Պարոն Վուտ. միթէ ա-
մուսնական խնդրոյ մէջ նօտար կամ փաստաբան չըմտներ:
Ես պիտի գրկի պայմանագիրն. յանգաւոր եմ՝ եթէ Լիլիիս
ամուսնութեան հրապարակային շքեղութիւն տալ կ'ուզեմ.
. . ուր են Լիլի ու Նելսոն, թող պան, թող իմ ապա-
բանս, որ իրենցն է, պան հանդիսա ու պատուով քնակին,
փոխանակ օտարութեան մէջ տառապելու . . . :

— Տիկին, իմ այցելութեանս նպատակն ամուսնութեան
խնդիրը չէ, այլ ուրիշ բան. և գուք որ ամեն բան անդի-
տակ կ'կեղծէք, քանչ գիտէք որ պ. Նելսոն քաղաքային պայ-
մանագրով այն ժամանակ միայն կրնայ միանալ օրիորդ Լի-
լիին երբ պ. Քինկ երեսն պայ, երբ այդ խորհրդաւոր անձը
խօսի . . . գուք միայն գիտէք թէ ուր է այդ անձն, և
ինչպէս գրով, այժմ բերնով կ'պնդեմ իմանալ այդ անձին
բնակութեան վայրն . . .

— Պարոն, կ'մոռնաս որ իմ տանս մէջ ես, և իրաւունք չունիս այդպիսի բուռն ոճով խօսիլ անդէն ու տկար կնոջ մը . . . : Եւ ինչ կայ, խնդրեմ, իմ և պ. Քինկի մէջ, որ երբեմն տանս մատակարարն էր, իրաւ, բայց իր անհաւատարմութեան համար արտաքսեցի . . . : Տարիներ կան որ այդ մարդուն ոչ անունը լսած և ոչ անձը տեսնել ուզած եմ. . . կարևոր խնդիրը մեզի համար ամուսնութեան խնդիրն է . . . :

— Բայց, տիկին, պ. Նելսօն չէ կարող ձեռնհաս վկայութիւն ներկայել. . .

— Ա'հ, միթէ հայր մայր չունի՞, սոսկալի՛ բան . . . : Եղո՛ւկ Էլիսիս. դուշակած էի որ դուեհիլ, անբուն ու անտուն անձ մ'է այդ բազդախնդիրը : Կ'հարցընեմ քեզ, պարոն Վուտ, իբրև պատուաւոր մարդու, կարո՞ղ եմ իմ ազնուական գերդաստանիս մէջ ընդունիլ այդպիսի պիտակ մարդ մը . . . :»

Թարեկամ, այսքան յանդգնութիւն ու ստութիւն չէի կարող երևակայել : Ձայրոյթս չափ չունէր. հարկ էր պատուել քօղն ու ամեն բան, մինչև անդամ սուտ խօսիլ : Իմ աչքս սևեռելով էֆի Խատհէմի անլոյս և անորոշ աչաց մէջ,

— Տիկին, ըսի, ստութիւնն անդամ չափ մ'ունի՝ ձեզի պէս ազնուականներու մէջ և նենգութիւնն սահման մը . . . պ. Քինկի քոյրն է պ. Նելսօնի ծնողեան վկայագիրն, և պէտք է, անհրաժեշտ է որ պ. Քինկը գտնուի . . . :

— պ. Քինկ հօրն է Նելսօնի . . .

— Ոչ, խնամակալը . . . անշուշտ ձեր կողմէ սահմանուած . . .

— Իմ կողմէ՞ . . .

— Մինչև յայսօր ձեր կողմէ կ'ընդունի երիք հարիւր ոսկի անկլիական պանքայէն, ձեր կողմէ ֆէմպրիճի ուսումնարանն մտած է, ձեր կողմէ զրկուած է . . .

— Զրպարտութի՛ւն» մրմնաց լէտի Խատհէմ և աթոռին վրայ կէս մը մարած ընկաւ . . . :

Սակայն մարմրուքն ալ կեղծ էր այս կնկան, վասն զի դիտեցի որ աչքերը կ'դողդէր ձեռքով : Ես իրեև անողոքելի դահիճ մը կանգնած ու անշարժ կեցայ դիմացն, առանց այլ ևայլելու, և սպասեցի որ ինքն իրեն սթափի : Ձայն չհանեց, մարդ չկանչեց և պահ մ'ետքն աչքն ինձ դարձուց ու ըսաւ,

— Մխիթ սպասնել է ինձ, Պարոն Վուտ : Գիտե՞ս որ ծանր յանցանք կ'գործես, և կարող եմ անմիջապէս օրինաց խստութիւնն քու վրադ հրաւիրել. . .

— Ձեր յանցանքն աւելի ծանր, անները՛լի է, տիկին, և բոլոր աշնուականութեամբդ չպիտի կարենաս աղատիլ այն պատժէն զոր կ'ընդունի նենգութեամբ ուրիշին իրաւունքը, ֆոռճըրը՛նը, պատիւն ու կեանքը յափշտակող անձն . . .

— ֆոռճըրը՛նը» մրմնջեց լէտի Խատհէմ և օձի պէս գլուխը տնկեց : Կարծես թէ այս բառը՝ զոր դիտմամբ արտասանեցի, բոլոր էութիւնն սարսեց . . . : Ապշած ինձ կը նայէր և այնպէս կարծէր թէ ամեն բան, ամեն գաղտնիք գիտեմ, թէև իրօք մեծ բան չգիտէի և միայն մութին հրացան կ'պարպէի : Դիտեցի որ դնդակս նշանին զարկեր էր : Լէտի Խատհէմ՝ իր գրեթէ անզգայ ու ահաբեկ դէմքով ինքզինք կ'մատնէր, բայց բաւ մը բերնէն չէր հաներ . . . : Քանի մը վայրկեան լուռ ու մունջ իրարու նայեցանք ետև՝ խօսքս կարեցի այսպէս.

— Տիկին, դուք կ'յամառիք միշտ խնդիրս չկատարելու. անզօր են ձեզի դէմ փաստ, իրաւունք, արդարութիւն և իմ խօսքս. լա՛ւ, օրէնքը պիտի խօսիլ տայ ձեզ, և ահա կ'յայտարարեմ որ օրինաց կոչում պիտի ընեմ ձեզի դէմ. . . :»

Լէտի Խատհէմ բերանը բացաւ, այլ դուրս գալիք բառը կլլեց : Նոյն միջոցին յանկարծ աչքերն ապակիի փայլութիւն առին. չէր խօսեր նա այլ կ'խորհէր, թերևս ահռելի խորհուրդ մը . . . : Սենեկի մը դուռը բացաւ և ներեցոյթ եղաւ : Ես ձեռքի պահ մ'առանձին, և յետին փորձ մ'ըրի. թղթի մը վրայ գրեցի այս խօսքն.

— Տիկին, եթէ քան և չորս ժամու մէջ Պ. Քինկի վըրայ ինձ պրովէ տեղեկութիւն չհաղորդէք, բոլոր աշխարհին առջև ձեր անունն պիտի արատի . . . »

Այս սպառնական ազդն իր դրասեղանին վրայ դնելէն ետև՝ դուրս ելայ մոայոյղ և գայլի Պ. Բէյնի առն բան պատմելի։ Պաղ արիւնով մտիկ ըրաւ, ինչպէս որ կ'յորդորեմ քեզ անվրդով կարդալ այս նկարագիրս, և ասպա յարեց.

— Բարեկամ, մեր հնարքին չափէն աւելի արժէք տուեր ենք, բայց փոյթ չէ։ Լէտի Իսահէմ ծուղակն ընկած է, և կամ աւելի ծանր չանցանքով մ'առաջինը ծածկելու ջանալով յիմարաբար անչնչելի արատ մը պիտի բերէ իր անուան կամ պիտի հատանի վերջին ժամուն դիմումը ընել։ Իսկ մենք անգործ պէտք չէ որ մնանք և մեր ամեն օրինական պատրաստութիւնները տեսնենք։»

Ուստի, սիրելի Նելսօն, անմիջապէս խորհրդի նստանք մեր փաստաբան Հէվլօքի հետ։ Լէտի Իսահէմի դէմ մեր բողոքը պատրաստ է, և վաղը գատարանը ներկայանալու հրաւէրը կ'ընդունի։ Ուստի հարցերութիւն ու լուծութիւն . . . Թող Լիլի գործին վախճանն իմանայ։

ՆԱՄԱՆ ՉՈՐ

ՎԱՌՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Ահա կ'շարունակեմ, բարեկամ, ուսն զի խօսելու կարդն իմն է։ Ի՛նչ տխնդալին հետաքրքրութեամբ որ կ'սպասես իմանալ խնդրոյն ելքն, պիտի գայ ժամն որ նոյն հետաքրքրութեամբ քուկդ ալ բերնէդ՝ ըստ երևոյթին՝ անակնկալելի բաներ ունինք լսելու։ Այժմ միայ գիր։

Սիրելի Նելսօն, Պ. Քինկը գայ . . . գրեթէ կիսամեռ վիճակի մէջ . . . Մէկ երկու ժամ ևս, և ամեն բան բուսած էր, անկենդան դիակի մ'առջև պիտի դտնուէի, որ յաւիտենականութեան անթափանցելի անդունդը պիտի տանէր այն գաղանիքն որ բոլոր կենացդ տագնապն, բոլոր կեանքդ գարձած է մութ ու անիմանալի . . . Լէտի Իսահէմ հրեշ մ'է . . . նոր, ահաւելի ապացոյց մը. Պ. Քինկի մահը կը հաստատէ այս . . . Ի՛նչ սոսկալի ոճիրներ կ'գործուին ոսկեհուռ վարագոյրներու ետին, և անտես կ'մնան։ Այս է մեր քաղաքակիրթ պանծալի աշխարհն, որու եթէ ամեն նոզկալի կողմերն երևան հանուին տարակոյս չունիմ որ ընդերկար չդիմանար, և այն խուժանն, որ այսօր կ'ամբաստանուի ու կ'զպարատուի իբրև ընկերութեան թշնամի, օրինաց ըմբոստ և թիրա, թերևս աւելի մաքուր սիրտ, աւելի մաքուր ձեռներ ունի շատ անգամ քան թէ այն փառամոլ ու մոլի էակներն որ իրենց հոգւոյն թոյնն ու աղտն բեհէղներու տակ կը ծածկեն . . . բայց խորհրդածելու ժամ չէ, և հեռուէն կ'դիտեմ յուզմունքդ, անհամբեր շարժմունքդ, և այս բոլորանիս դէմ կատղութիւնդ . . . :

Բայց մինչ ես հանդարտ եմ. Պ. Քինկի դիակին մօտ կը գրեմ, կ'գրեմ դողդոջուն ձեռքով և շատ հաճառօտ պիտի անցնիմ։

Բարեկամ, իմ տեսակցութենէս օր մ'ետք՝ լէտի Իսահէմի փաստաբանին կողմէ գիր մը հասաւ ձեռքս։ Այս գիրը կ'յայտնէր թէ մեր փնտռած անձը ծանր հիւանդ կ'պառկի Օ. Հիւանդանոցն . . . :

Այս գիրն որ առի, իսկոյն այդ հիւանդանոցը վազեցի։ Ի սկզբան հիւանդանոցին տեսչութիւնն առարկելով որ հիւանդին վիճակը չներեր որ այցելու ընդունի՝ մերժեց խնդիրս։

Սակայն, այնքան թախանձեցի որ մուտ դտայ։ Քինկի նկարագրած պատկերդ ունէի մտքիս մէջ։ Նոյն ինքն էր պատկած անկողնոյ մը մէջ, պատկառելի, նիհար ծերունի մ'որու ձակտին վրայ արդէն մահուան ստուերը կ'երևէր, և աչայը մէջ փայլ մ'անսովոր, մթին և մոլար։ Իր մօտ կը գտնուէր սպասաւոր մ'որ ինձ ծուռ ծուռ նայելէն ետև՝ տեսչին հրամանաւ դուրս ելաւ, երբոր յայտնեցի թէ հիւանդին հետ կարևոր խօսելիք ունիմ։ Նոյն ինք տեսուչն՝ այս դիտաւորութեանս վրայ՝ մարդավարութեամբ դուրս ելաւ։ Սակայն այն ինչ մինակ մնացի պ. Քինկի հետ, որ սա իր անկողնին մէջ յետին ձիգ մ'ընելով ելաւ կէս մը նստաւ և հետաքրքիր աչօք ինձ նայելէն ետև՝

— Ո՞վ ես դու, պարոն, ըսաւ, տկար ձայնով մը։

— Քեզի շատ ծանօթ անձի մը մտերիմ բարեկամն . . .

— Մամլենց Նելսօնի՞ արդեօք։

— Ճիշտ այդպէս։

— Արդեօք գիս սպաննելո՞ւ եկար. մի՛, մի՛ սպաններ գիս. արդէն մահուան դիրկն եմ և թողլ որ մեռնիմ. . . .

— Ես բարեկամդ եմ, ծերունի, և հինգ տաս տարիէ ի վեր քեզ փնտռելէն ետև հազիւ կ'գտնեմ. . . մի վախնար, սիրտդ բաց ինձ։

— Իրա՛ւ, յարեց ծերունին, և ակնապիշ ինձ նայելով սկսաւ լալ. . . .

— Եւ ինչո՞ւ կ'լաս, Պարո՛ն Քինկ . . .

— Վասն զի մեղաւոր եմ. . . .»

Դիտեցի, բարեկամ, որ պ. Քինկ կ'զառանցէր, կամ իմ վրայ վստահութիւն չունէր։ Ուստի վերստին յորդորեցի որ հանդարտի, մի քանի խօսքով բացատրեցի քու վիճակդ, ըսի որ եթէ կամք մը, յանձնառարութիւն մ'ունի պատրաստ եմ կատարելու և ի վերջէ վստահեցուցի որ ամէն բան պիտի. . . .

— Եւ ո՞ր է պ. Նելսօն, պ. Նելսօն, պոչէց նա։ Կ'ա-

ղաչեմ դնա կանչէ, աւանդ մը, նուիրական աւանդ մ'ուզիմ անոր յանձնելու։

— պ. Նելսօն կ. Պօլիս է։

— Ինչո՞ւ։

— Լէտի Իսահէլի երեսէն փախաւ . . .։»

Այս անունն իբրև շանթ ցնցեց պ. Քինկի բոլոր մարմինն, սպիտակ ցանցառ մազերը գլխուն վրայ անկուցան, աչերը գարձան և իր դէմքին՝ որ մեռելադոյն գեղնութիւն մ'ունէր, յանկարծ սկսաւ վառիլ. . . ցնորած էր . . . պահ մ'իր սենեկին չորս դին դիտեցէն ետև՝ մոլորագին մրմռաց.

— Ո՛հ, զարհուրելի կին . . . մթեր Նելսօնի գլուխն ալ պիտի ուտէիր, ինչպէս որ կերար . . .»

Բայց խօսքը չկրցաւ շարունակել. գլուխը բարձին վրայ ընկաւ և բոլոր մարմինն սկսաւ ցնցուիլ . . . . Հոգեվարքի նշաններ . . . . Ահ ու դողի մէջ էի. դեռ այդ մարդուն սրտին խորը պահուած գաղտնիքը վեր չէր ելած, և չգիտէի թէ այս դժբաղդութեանն վրայ պէտք էր ցաւիլ թէ ոչ ողորմելի ծերունիի մը վրայ որ մահուան ճիրանին ներքև ընկած կ'տրզար . . . ընդունայն կ'աղերսէի որ սթափի, ի զուր կ'խնդրէի որ խօսի, մինչդեռ սեղանին վրայ կեցած շիշեր կ'փորձէի, և այլ և այլ աղեր անոր քթին տանելով բոլոր ճիգս կ'թափէի որ պ. Քինկը բուժեմ. . . . . Ցուսահատ՝ մտադիր էի հիւանդանոցի տեսչին դիմել, և՝ եթէ հնար էր՝ պ. Բէյնի ձայն տալ, երբ յանկարծ սենեկին դուռը մեղմիկ դարկին։ Անձամբ բացի. տոքթօր Բէյն ներս մտաւ։ Հրեշտակ մը տեսածի պէս շունչ առի և մի քանի խօսքով տեսածս ու լսածս պատմելէն ետև,

— Ի՛նչպէս դէպ ժամուն եկար, բարեկամ, յարեցի. ով ղրկեց քեզ. . . .

— Նախազգայնումս. տունդ դայի, չգտայ քեզ, հոս վազեցի . . .

— Մեր մարդը մահուան տադնապի մէջ կ'երևի. դեռ

բերնէն որոշ բան մը չառի։ Վախնամ որ մեր բոլոր ճգունքն ապարդիւն պիտի մնան, և իժապլուս կինն, լէտի Խատհէմ, պիտի յաղթահակէ։ Մեր խնդիրն, առ ահի, չկրցաւ մերժել, իրաւ, սակայն սոսկալի կերպով վրէժ կ'լուծէ. ահա մեր առջև դրեթէ դիակ մը կ'նետէ, որմէ ըլլայ մ'աւնուլ կարելի չերեւիր ինձ։ Ժամ է բոլոր բժշկական ճարտարութիւնդ թափել և այս մարդը մահուան դրկէն դուռէ մի քանի ժամու համար ազատել, եթէ հնարաւոր չէ անոր բոլորովին կենդանութիւն տալ։

— Փորձ մ'ընենք» պատասխանեց Պ. Բէյն։

Եւ հիւանդին մօտեցաւ, դէմքը, մարմինը զննել սկսաւ արտասուներ տեսաւ անոր վրայ, դիտեց որ բերնէն շղունք կ'հոսէին, տեսաւ որ աչերը խոշոր խոշոր կ'բանար հիւանդն ու փսխելու ձիգ մը կ'ընէր, և ապա դարձաւ ու ականջիս փըսփսաց.

— Այս մարդը թունաւորուած է . . . ։

— Ի՞նչպէս, ըսի սոսկումով մը։

— Այո, զառիկը բուսական գործ տեսակ է» յարեց Պ. Բէյն և անմիջապէս մի քանի դեղեր փորձէց։

Երբ Պ. Քինկ քիչ մ'ինքզինքը գտաւ, իր աչքը դարձուց մեր վրայ և ըսաւ.

— Ո՞վ է այս պարոնն, պիտի Հանչամ իր դէմքը։

— Տոքթօր Բէյն, ըսի, քու վաղեմի բարեկամդ, որ կարող է ցաւերդ դարմանել. . .

— Անգարմանելի են իմ ցաւերս, վրայ բերաւ Պ. Քինկ յուսահատ, և կարող էք ըսել լէտի Խատհէմի, որ իր հրամանները Ճշդիւ կատարուեցան, և վստահ լինի որ պիտի մնամ. . . ։»

Այս խօսքերէն կ'յայտնուէր, սիրելի Նելսօն, որ Պ. Քինկ կասկածներ ունէր մեր վրայ. Թերևս կարծեր թէ լէտի Խատհէմի գործակատարներն ենք։ Բայց այդ կասկածները փարատելու համար՝ Պ. Բէյնի հետ՝ այնպիսի բաներ ըսի, այնպիսի իրական փաստեր մէջ բերի՝ ցոյց տալով անոր մեզի ուղղած գիրերդ, որ Պ. Քինկ սկսաւ աւելի վստահութեամբ նայիլ մեր վրայ։

— Ա'հ, ես ալ կ'փնտռէի ձեզի պէս բարեկամներ, ըսաւ նա վերջապէս, որ դլխէս անցածները, մանաւանգ իմ մտքիս ու խղճիս վրայ ծանրացած հոդերն ու բեռը թեթևցընեմ, բայց պաշարուած էր կեանքս անողոքելի սատանի մը ցանցին մէջ, բայց ընկած էի որոգայթի մը մէջ որ զիս մինչև գերեզմանը պիտի տանէր . . . ։ Արդէն այդ գերեզմանը բացուած կ'տեսնեմ իմ առջևս, և ինչպէս իմ փիլիքական նոյնպէս իմ բարոյական տառապանքս անոր մէջ պիտի գտրին։ Ո՛չ ժամանակ, ոչ կարողութիւն ունիմ խօսիլ ձեզի անցեալէն վրայ, Պ. Նելսօնի վրայ, որու թշուառութեանց գլխաւոր պատճառն եմ, և որ կ'անիծէ զիս անշուշտ ամեն վայրկեան, սակայն խոստովանութիւն մ'ունիմ ընելու չէ թէ հիմակ ձեզի, չէ թէ քահանայի, չէ թէ Աստուծոյ, այլ Պ. Նելսօնի, իմ մահուտնէս եռք . . . ։»

Այս խօսքին Պ. Բէյն և ես իրարու երես նայեցանք։ Կարծեցինք թէ Պ. Քինկ նորէն կ'բանգագուշէ և նոր և թերևս վերջին ճգնաժամի նշաններ կ'յայտնէ, սակայն սխալեր էինք։ Պ. Քինկ հանդարտ էր. կամացուկ մ'ելաւ նստաւ իր անկողնին մէջ և ձեռքը բարձին տակ տանելով՝ քաշեց հանեց տուփ մ'ելեկտոսէ, և պահ մը լուռ կենալէն ետև՝ թերևս իր ցրուած գաղափարներն ամփոփելու համար, ծանր ու հանդիսաւոր ձայնով մը շարունակեց.

— Ձկայ գաղանիք որ երևան չելնէ, բարեկամներս, և ես որ երդմեր էի դերեզմանիս հետ տանիլ գաղանիք մ'որ իմ սրտիս խորը պահած էի, այսօր կ'ստիպուիմ՝ խղճէս տանջուելով երևան հանել, վասն զի պիղծ, անիրաւ էր երդումն։ Այդ գաղանիքը սոյն տուփին մէջ է, այս տուփը ձեզի կ'յանձնեմ, իրրև պատուաւոր, Նելսօնի անկեղծ բարեկամներուն, և յանուն Աստուծոյ, որու սաւանը պիտի

եղեմ քիչ ժամանակէն, կ'աղաչեմ, կ'պաղատիմ ձեզի որ անկորուստ պ. Նելսոնի ձեռքը հասցընէք: Մինչև ձեռքն հասնիլն, ես այս աշխարհէն մեկնած պիտի լինիմ, և աղատ է բանալ տուփն ու պարունակութեան լիովին տեղեկանալ. . . :»

Պ. Քինկ սաստիկ այլայլած և յուզուած կ'խօսէր. վերստին իր ալեզարդ գլուխը բարձին վրայ դրաւ, և սկսաւ պաղ պաղ չորս դին նայիլ. . . : Պահ մ'ետք՝ յարեց.

— Ա՛յս է ահա իմ վերջին կամքս, այս իմ նուիրական կտակս, և յուսով եմ որ անթերի պիտի կատարուի. . . ուրիշ խօսելիք չունիմ, բարեկամներ, և դոնէ ուրախ զուարթ պիտի մեռնիմ արդարութեան դործ մը կատարելուս. . . : Իսկ դուք, չէք կարող աւելի ևս յապաղել այս տեղ: Ձեր վրայ կ'հսկեն, ձեզ կ'լրտեսեն անշուշտ, վասն զի այս տեղ ամեն բան, ամեն անձ անոր, այն հրեշ կնկան ընչովը կ'շարժի. . . : Երթաք բարեաւ. . . Հանգիստ պիտի մեռնիմ, վասն զի Թոյն առած եմ, գիտեմ, և այս պատժին արժանի եմ. . . :»

Այս վերջին խօսքերն մեր հետաքրքրութիւնն աւելի ևս շարժեցին քանի մը բացատրութիւններ խնդրելու պ. Քինկէն, մեկնելէն առաջ: Ուստի ըսի.

— Շատ խորհրդաւոր կերպով կ'խօսիք, արդահատելի ծերունի: Մեր վրայ ահա սուրբ պարտաւորութիւն մը կ'դնէք. կատարել ձեր կտակն անթերի, և վստահ եղիք, որ՝ ի հարկին՝ մեր կեանց վտանգով իսկ, պիտի կատարենք: Սակայն ներեցէք մեզ հարցընել թէ ո՞վ բերաւ ձեզ այս հիւանդանոցն, ինչպէս գիտէք որ Թոյն առած էք, ինչո՞ւ համար այսքան ժամանակ լուռ կ'մնաք և պ. Նելսոնի հետ հաղորդակցելու հնարը չէք փնտռած, ձեր վերջին նամակէն ի վեր՝ զոր Քէմպրիճէն հասալսարանէն եղնելէն ետև ստացած է: Ասոնք այնպիսի կէտեր են, որ ձեր գաղտնեաց հետ, այս տուփին մէջ գտնուած Թղթերուն հետ անշուշտ

վերաբերութիւն չունին, և զորս կրնաք մեղի բացատրել:»

Այն ինչ խօսքս աւարտեր էի որ Հիւանդանոցի տեսչութեան կողմէ փայտի պէս ձիգ, պաղ, տղեղ սպասաւոր մը դուռը բացաւ և մեղի ազդարարեց թէ այցելութեան համար, ըստ կանոնի, պայմանեալ ժամն լրացած է, և հրաւիրեց մեզ մեկնիլ:

Տօքթօր Բէյն անվիջապէս թուղթ մը հանեց գրպանէն և մատիտագրով խմացուց վերատեսչին որ ինքն՝ իբրև բժիշկ՝ արտօնութիւն ունէր մնալու հիւանդի, մանաւանդ այսպէսի հիւանդէ մը մօտ՝ կանոնագրին որոմագրած ժամանակէն աւելի, և ապա պ. Քինկին դառնալով,

— Ձեր պատասխանին կ'սպասենք անհամբեր» ըսաւ նա:

Սպասաւորը խոժոռ դիմօք նայելով մեզ դուրս ելաւ՝ պ. Բէյնի գրած Թուղթն ի ձեռին: Իսկ պ. Քինկ՝ որ գլուխը դէպ ի պատը դարձուցեր էր, երբոր սպասաւորը ներս մտաւ, վերստին իր բնական դիրքն առաւ և շարունակեց այսպէս:

— Տեսաք այդ օձաձև սպասաւորն, իր արժանի տիրուհւոյն՝ լէտի Խատհէմի՝ գաղտնի դործակատարն է, մարդասպան մ'է. . . : Ձեր հարցումներուն լիուլի պատասխանը կարող պիտի լինի ասել ձեզի պ. Նելսոն, երբոր ձեզի յանձնած տուփը ընդունի և անոր մէջ գտնուած զանազան Թղթերը կարդայ. այս միջոցիս՝ միայն այսքան կ'ըսեմ որ ծանր, անհեթեթ դատաճանութեան մը մէջ լէտի Խատհէմի գործակից պտուելէս ետև՝ երբոր տեսաւ նա որ կրնայ մատնուիլ իմ կողմէ, զիս իր ազարանէն վռնտեց, պատուիրելով որ զգոյշ լինիմ, եթէ իմ կեանքս կ'սիրեմ: Ժամանակ մ'ազատ մնայի, թէև գիտէի որ լրտեսներու խումբ մը զիս շրջապատած էին, լէտի Խատհէմի հրամանատ, և անոր մէկ ակնարկին կ'սպասէին որ զիս ի կորուստ մատնեն: Նոյն իսկ ոստիկանութեան մի քանի պաղտ պաշտօնատարներ համակամ կ'շարժէին անոր հետ, այնպէս որ չէի կարող շարժում մ'ընել, գիր մը գրել, մարդ մը տեսնել առանց վտանգի ենթարկե-

լու թէ կեանքն և թէ իմ տեսակիցներս։ Ի վերջ՝ տաղտկացայ այս կեանքէն և միտքս դրի տարագրիլ, երբ օր մը զիս բնակած տունէս կիշերայն առին և այս հիւանդանոցը բերին իբրև խելագար։ Բժիշկներ գտնուեցան՝ որ իրր խելագարութիւնս հաստատող վկայագիր տուին, առարկելով որ մերթ ընդ մերթ կ'զառանցեմ, անիմաստ խօսքեր կ'արտասանեմ։ Եւ այս իրաւ էր. գործած յանցանքէս ցնորածի պէս էի և առանձին կ'խօսէի։ Սոյն հիւանդանոցն իմ բանտս եղած է երկու տարիէ ի վեր, և հիմակ դերեզմանս պիտի գառնայ։ Լէսլի Խատհէմի յանձնարարութեամբ ինձ ծառայող կարգեցին այն սպասաւորն զոր քիչ մ'առաջ տեսաք և որ հրաման ունէր ամեն ըրածներս դիտել և թղթակցութիւններս աչքէ անցընել։ Ի վերջէ՝ մի քանի ամիս առաջ՝ այս տեղ աւելի մեծ խստութեամբ սկսան վարուիլ իմ հետ, հիմակ կ'գուշակեմ պատճառն, և, ես որ ողջ առողջ էի մարմնապէս, թէև բարոյական վշտով կ'տանջուէի, չանկարծ անկողին ընկայ՝ անցեալ օր։ Այս տկարութիւնն թանս առնէր եւս ունեցայ և այդ թանն թոյն կ'պարունակէր։ Հոդ չըրի. կեանքս արդէն անտանելի էր և մահն ոչ միայն անզգամութեան մը պատիժ, այլ և աղէտից դարման մը։ Միայն հաւատարիմ մարդ մը, բարեկամ մը կ'ուզէի տեսնել որ այս պատրաստած ատանս Պ. Նելսոնի հասցընեմ։ Աստուած զրկեց ձեզ, ատանդը ձեր և իմ կեանքս Աստուծոյ ձեռքն է այժմ. գոհ պիտի մեկնիմ. . . ։

— Մոլորեալ ծերունի, ըսաւ տոքթօր Բէյն, ակամայ քու մահուանդ պատճառը մենք եղած ենք։ Եթէ չպնդէինք լէսլի Խատհէմի մօտ սպասուելուդ, որ բնակութեանդ վայրը մեզի յայտնէ՝ Թերևս տակաւին ապրէիր։ Միայն կ'փափաքեի իմանալ թէ հիւանդանոցի վերատեսուչը մատ ունի՞ այս գաւաճանութեան մէջ, եթէ ունի, իր օրը լմնցած է . . . ։

— Չեմ կարծեր, պատասխանեց ծերունին. ինք աւելի մեծ մարդերու դործիքն է, ուրիշներուն պէս՝ որ կ'շարժին լէսլի Խատհէմի ոսկիներուն չնորհիվը, ոսկիներ, սակայն, որ իրենը չեն . . . ։

— Այդ հաշիւը վերջը պիտի տեսանենք, ըսաւ Պ. Բէյն, միայն կ'ինդրեմ յայտնել ինձ որ ուրիշ խնդիր մը, յանձնարարութիւն մ'ունի՞ս։ Վիճակդ ծանր է, ծերունի, թոյնն արդէն սիրտդ կ'կրծէ. մահն քու ապաշխարանքդ պիտի լինի։ Սակայն անոնք որ ապաշուդ չնայելով՝ քեղ կ'ձամբեն այս աշխարհէս, իրենց պատիժը պիտի գտնեն, և աստոյ մէջ առաջինը պիտի լինի լէսլի Խատհէմ. . . ։

— Շնորհակալ եմ, Պարոն Բէյն. երանի՛ թէ՝ ինչպէս քնազդումս երբեմն կ'յորդորէր զիս, տարիներ առաջ սիրտս բանայի քեզ, թերևս պատահած և պատահելիք ծանր թշուառութիւններ տեղի չէին ունենար. այս թշուառութեանդ մէջ իմ մահս երջանկութիւն մ'է . . . ։»

Այս անդամ Պ. Քինկի սենեկին մէջ զանդակ մը հնչեց։ Ճաշի ժամն էր, միանգամայն ազդարարութիւն մը հիւրերուն որ քաշուին։ Ուստի Պ. Քինկ ոսկրուտ ձեռքն երկնցուց երկու բարեկամներուն, սեղմեց և ըսաւ.

— Իմ յետին հրաժարական ողջոյնս կ'տամ ձեղի . . . Թերևս յաւիտենականութեան մէջ աւելի հանգիստ օր տեսնեմ, միայն կ'աղաչեմ ձեզ դրել Պ. Նելսոնի՝ աւանդն անկորուստ աւանդելով իրեն, կամ եթէ դինք տեսնէք, ըսել իրեն թէ ինչպէս ողորմելի մեռայ, վասն զի արդարութեան դէմ գործեցի, և թէ ինչպէս ապաշաւեցի, վասն զի զգացի, թէև ուշ, որ արդարութիւն է Աստուած, և յուսացի որ ինձ կ'ներէ իմ սիրական սանս, Պ. Նելսոնն, որպէս իմ աշխուժական տիրոջ Մաքիկոնեանց . . . ։»

Շիրցաւ աւարտել ծերունին . . . սաստիկ ցնդում մ'զգաց, ձիկ մը հանեց . . . և վերջին շունչը փչեց . . . վերջին անդամ անուղղ արտասանեց, Նելսոն, և մարեցաւ . . . ։

Ինչ տխուր ու փափուկ վիճակ էր մերը։ Պահ մ'արձանի պէս մնալէն ետև՝ այս դիակին առջև, անշարժ ու վշտաբեկ, Պ. Բէյն լուռ լինի.

— Պարոն Վուտ, ահա մարդ մ՛որ իր կենացը մեծ մասն՝ մարդկային կրից հոյր զոհ, վերջին ժամուն միայն, վայրկեան մը միայն, ճշմարտութեան բացաւ աչքն, բայց այս վայրկեանն շատ կարճատև եղաւ, ինչպէս որ միշտ կ՛լինի անոնց որ արդարութեան ճամբէն դուրս երջանկութիւն կ՛փնտռեն։ Թող երթայ բարեաւ այն անդունդն ուսկից ոչ ոք կ՛դառնայ, թէև ամեն ուղևոր հետք մը կ՛թողու երկրիս վրայ լուսաւոր կամ մթին, բոլորովին չմեռնիր, եթէ ոչ իր սերունդին, իր գործերուն մէջ կ՛ապրի։ Արդէն բաւական աղէտաբեր դործերու գրդիռ կամ մասնակից եղաւ այս մարդն երբ կենդանի էր, թէև տղէտ, ո՞ գիտէ նոյն մարդն որ այժմ դիակ մ՛է ինչ նոր աղէտից սերմեր ցանեց ու գնաց, և արդեօք ինչ փոթորիկներ կ՛պարունակէ այդ քեզի ձգած ժուպին, զոր անկորուստ հարկ է ուղարկել մեր բարեկամ Նելսօնին։ Բայց բարոյական խօսելու ժամ չէ, և Պ. Քինկի լաւագոյն դամբանական մը չեմ կարող լինել, եթէ ոչ իր հիւանդութեան բոլոր երևոյթները տեղեկագրել և ներկայել առ որ անկ է։»

Եւ Պ. Բէյն սեղանին մէկ ծայրն, ես միւս ծայրը նստած՝ սկսանք արտօրնօք գրել, նա իր բժշկական տեղեկագիրն, ես այս նամակս, ահռելի ու սրտաշարժ տպաւորութեան մը ներքև։

Պարոն Նելսօն, չեմ ուզեր աւելի երկար դրել և յուզմունքդ աւելի ևս գրգռել, պատմելով Պ. Բէյնի բոլոր ըրածները. այսչափ բաւ է ըսել որ նա՝ իր տեղեկագիրն աւարտելէն ետև՝ խնդրեց որ զայն իրրև վկայ ստորագրեմ. ապա ժողովը մը և մի քանի ծանօթ բժիշկներ կանչել տուաւ որ գալով գիակը քննեցին և Պ. Բէյնի տեղեկագիրն հաստատեցին ետև, Օ. Հիւանդանոցի վերատեսուչն հայցեցաքննութեան ներքև աւին։ Ծանր կասկածներ կան թէ անոր և թէ իր սպասաւորին վրայ, և ըստ երևոյթին՝ լէսի Խտհէմ պիտի ամբաստանուի։ Վրէժխնդրութեան, կամ լաւ ևս ըսեմ արդարութեան ժամը մօտալուտ է։ Սակայն կարևորը նայինք։

Պ. Քինկի լինձ յանձնած աւանդն ապահովապէս ձամբայ կ՛հանեմ այսօր սոյն գրովս։ Այժմ դերերը կ՛փոխուին։ Մենք կ՛սպասենք անհամբեր իմանալ տուիլին գաղտնիքն, և յատկապէս կ՛յորդորեմ քեզ որ բոլոր անկլիական արիութեամբ զինուիս և այս նոր ու անակնկալի արկածներու առջև անվհներ ճնաս, միշտ Լիլլին վճռակն աչքի առջև ունենալով։

ՆԱՄԱԿ ԿԱ

ՆԵԼՍՕՆ ԱՒ ՎՈՒՏ

Ի. Պօլթ . . .

Բարեկամ, Հասան ձեռքս նամակդ ու Պ. Քինկի աւանդը . . . ինչ նոր յայտնութիւններ, ինչ նոր ահռելի, աղետալի լուրեր ու դէպքեր, ինչ անակնկալ ու ծանրակշիռ գաղտնիքներ կ՛բերեն այդ նամակդ ու աւանդդ . . . կարողութիւն չունիմ երկրորդ անգամ մ՛ևս աչքէ անցրնելու. վհատած, շուարած եմ, և ինչ խորհելիքս ու ընելիքս չգիտեմ, վասն զի ինչ եմ չգիտեմ. . . . Այո՛, սիրելի Վուտ, նոր դժոխք կամ դրախտ մը կ՛բացուի իմ առջև, նոր աղետից կամ երանութեան թռուական մը պիտի սկսի ինձի համար . . . բայց ո՞րն, այս թէ այն չգիտեմ. . . . Ինչ որ դուշակեր, ինչ որ մեր երևակայութեան ուժովն հնարեր է ինք իմ ծագումիս ու էութեանս վրայ համեմատաբար բան մը չեն իրողութեան ու ստուգութեան մօտ, աննման իրողութիւն ու ստուգութիւն, որ իմ բոլոր խորհուրդներս, իմ բոլոր մտածմունքս, իմ կեանքս վեր ի վայր կ՛դարձընեն, իմ սէրս,

իմ Լիլիս, բոլոր աշխարհն իմ աչքիս առջև կ'փոխեն . . . : Ա՛հ, բարեկամ, չեմ ես ինչ որ կարծէի լինիլ, նվէր աօն, անկլեացի մը, չէ Լիլին ինչ որ գիտեի լինիլ, անկլեացի օտար օրիորդ մը, չէ Պարոն Խատհեմ, ինչ որ ցարդ Ճանչցեր էի, օտարական մը, լորտ մը, չէ լէտի Խատհեմ, ինչ որ կ'երևէր ինձ, անծանօթ կին մը, ցարդ անյայտ ու պաղտնի կապ մը կ'կապէ եղեր բոլոր այս անձերն ինձի հետ, նոյն գերդաստանի, նոյն ազգի զաւակներ ենք եղեր . . . : Եւ ինչո՞ւ կ'փափաքէի, ինչո՞ւ այնքան բուռն եռանդով կը պնդէի որ երևան հանուի այդ դաղանիքն, որ բոլոր կենացս ընթացքը պիտի այլայլէ, գիս պիտի խլէ այն ընկերութենէ, այն սովորութենէ, այն շրջանէ որու մէջ ապրած եմ. . . : Արդեօք առաջ երջանիկ չէի՞, և ուրիշ ի՞նչ կ'պահանջէի, ինչ ստուերի մը, անուան մ'եռանէ ընկած էի . . . :

Բարեկամ, չգիտեմ, լամ թէ ուրախանամ. . . կ'երեւիմ ու կ'տատանիմ ներկայ Ճշմարտութեան և ապագայ անստուգութեան մէջ. . . այնքան յուզուած ու այլայլած եմ որ չեմ կարող իմ սիրտս ու միտքս պաշարող զգացմունքն ու խորհուրդները պարզել, որոշ բացատրել այս անդամ. . . : Անդորրութեան, հանդարտութեան պէտք ունիմ, այս աչէկոծ կենացս մէկ նոր, ահարկու ժայռին առջև, որու դէմ թևերս կ'փշրուիմ, և վերջապէս մարդկային կրից այս ամենամոլ խորը ստղիմ կորսուիմ, երկար ժամանակ անստուդութեան ու խաբէութեան խաղալիկ գառնալէետև . . . : Ճշմարտութեան և լուսոյ մէջ եմ, իրաւ, բայց արդեօք թիթեռնիկին պէս պիտի պրլեմ այդ Ճրագին բոլորտիքը . . . չգիտեմ. . . :

Որբ էի, հայրը մը և մայր մը կ'փնտռէի, և ահա գտայ միայն անոնց անունն, գտայ ազգ մ'որու իրօք կ'պատկանիմ . . . : Պիտի հաւատա՞ս, սիրելի վ.ուա, դու իմ բոլոր աղէտներս վշտակից սրտակիցս, պիտի հաւատա՞ս եթէ ըսեմ որ անկլեացի չեմ, այլ հայաշէն . . . և այս ըսողը ես չեմ, այլ

Պ. Ֆինկ, այլ այն տուփն, որու մէջ աղգաբանական թղթերս կ'պտնուին . . . : Կ'երևակայե՞ս երբեք, որ Լիլին, իմ սիրուհիս, իմ հոգիս, անկլեացի ազնուականի մ'աղջիկը չէ եղեր, այլ իմ արենակիցս, այլ իմ հօրեղբօրս, Մաքկոնահայց Դանիէլի դուստրը. կ'ընդունի՞ս որ իմ քնիկ, ծնկեան վայրս Անկլիա չէ եղեր, այլ Հնդկաստանի կալկաթա քաղաքն, ուր գաղթեր են Նոր Զուղայէն՝ դրեթէ եօթանասուն տարի առաջ՝ իմ հայրս Յովսէփ Մաքկոնահայց . . . որոնմանքէն կ'անցնէր որ լէտի Խատհեմ հօրեղբօրս կինն է և լորտ Խատհեմ իմ բուն հօրեղբայրս . . . ահռելի Ճշմարտութիւն որ բոլորովին կ'շփոթէ միտքս, կ'խորտակէ հոգիս . . . . Մինէ կայ աւելի անակնկալելի յայտնութիւն մը քան այս. ի՞նչ պիտի լինէիր եթէ պային ըսէին քեզի յանկարծ. — Դու չես ինչ որ ես, դու չես սիրեր ինչ որ կ'սիրես, դու չես տեսներ ինչ որ կ'տեսնես, դու չես հաւատար ինչ որ կը հաւատաս . . . դու երևակայական աշխարհ մը կ'ապրիս, և պատրանաց մէջ կ'ըղաս. աչքդ, սիրտդ, միտքդ քեզ կ'խաբեն, ինչպէս որ մարդիկ կ'խաբեն քեզ. . . : Եւ սակայն, աղնիւ բարեկամ, երբ ակնարկ մը կ'նետեմ իմ նախորդ կեանացս վրայ, երբ իմ յիշատակներս ու զգացմունքս կ'զբօսնեմ, երբ իմ բնազդս կ'քննեմ, կ'ըսեմ իւրովի. բնութեան ձայնն արդէն էութեանս գաղտնիքը յայտներ էր ինձ, բայց սովորութիւն, կրթութիւն խանդարեր էին իմ բնական ձկտումնքս. Ու արդարև՝ այն աշխարհն, այն ընկերութիւնն, այն ազգն որու մէջ մանուկ հասակէս ընկած էի, որու լեզուն, կրօնն ընդունած էի, որու գաղթօդներու մէջ կրթութիւն առած էի, մէկ խօսքով, որու կեանքով ապրած էի, աւանդ ընտանեկան և արենական յարաբերութեան, այնքան զօրաւոր գրգռուներ ունէին, Պարո՛ն վ.ուա, որ բնութեան ներշնչումի, հայրենին բնազդի, արեան նախազգացումի և չգիտեմ ներքին ինչ հակումներու դիմադրէին, քանի որ անկլեացի էի, և սակայն հայերէն կ'ուսանէի Փէմպրիճի համալսարանն մեծ եռանդով,

նորատեսիլ բան յԱնկլիա, անկլիացի էի, սակայն արևնա-
կցութեան ձայնն կ'մղէր զիս Լիլիի մօտ, գորովալի հոգւոյ
մը մօտ, անկլիացի էի, և Լեհաստան կ'վազէի, ուր աղա-
տութեան պայքարին մէջ՝ հայ դաղթական կտրիճներու հետ
արիւնս կ'թափէի, անկլիացի էի, և Արևելք կ'ուղևորէի,
Հայոց վիճակն ու պատմութիւնը հետազօտելու, անկլիացի
էի, և սակայն յետին ծայր համակրութիւն կ'տածէի այդ ըն-
կեցիկ հայ ժողովրդեան համար, որու ընկերական, ազգա-
յին, կրօնական խնդիրներն իմ այս թղթակցութենանս մէջ
կարևոր տեղ մը կ'բռնէին, համակրութիւն, որ զլսովին օ-
տար է բուն անկլիական ինքնասէր բնաւորութեան, անկլիա-
ցի էի, և հայերէն ոճով քեզի հետ, Լիլիին հետ կ'դրա-
կցէի, և Լիլի, որ մօրը շնորհիւ էապէս անկլիական դաս-
տիարակութիւն ստացած էր, հայկական համակրութեան ու
պարզասիրութեան հետ հայասէր բնաւորութեան մը նշան-
ները ստէպ կ'ցուցընէր, և այս ամեն ներքին ազդումները բա-
ւական զգալի ապացոյցներ չէին՞ն, որ՝ ինչպէս Լիլի, նոյն-
պէս ես, հայկական դրոշմն ունէինք մեր հոգւոյն խորը, մեր
էութեան յարակից, որ բնութիւնն ու արիւնն աւելի ուժ-
գին կ'խօսէր մեր սրտին մէջ քան թէ օտար, ստացական
սովորութիւն ու կրթութիւն, և ահա այս ամեն նշանները
հաստատելու համար, մեզի կ'հանդիպ, քու ձեռագրդ, Պ. Քինե-
կի, այս թշուառ ըղձին, այն թղթերն որոց վրայ այսօր
աւելի երկար խօսելու ոչ ժամանակ ունիմ և ոչ զօրութիւն
. . . : Ուստի կ'կնքեմ դիրս, խոստանալով քեզ քիչ ա-
տենէն Պ. Քինեկի աւանդած ազգաբանական թղթերն ամբող-
ջապէս հաղորդել քեզի, վասն զի պէտք ունիմ ամփոփուիլ
ու խորհիլ այս սարսռալի ճակատագրիս վրայ, Լիլիին վը-
րայ, որու դերևս չնմանցուցի գաղտնիքին, Լիլին, որ միշտ
կ'տառապի տենդով և իմ բոլոր հոգիս կ'վրդովէ . . . :

ՆԱՄԱԿ ԺԸ

ՎՕՒՏ ԱՌ ՆԱԼՑՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, Մարդ շատ անդամ չվիտուածը կ'դանէ քան
թէ փնտուածը . . . : Ա՛խ, Բանտարի տո՛ւփն էր ղևկածս.
ինչո՞ւ այդչափ կ'այլայլիս. իրաւի զարմանալի գաղանիք մը
կ'աւանդէ քեզ Պ. Քինկ, սև մելենայութեան մը զոհ ըն-
կած էիր այսքան ժամանակ . . . բայց՝ ըստ իս՝ քու երիւնքն
աւելի կ'պարզի հիմակ քան թէ կ'պղտորի, և տարակու-
սանքդ ու ողբերդ տեղի չունին: Արդէն կ'մնինես գաղանիքը,
տրամաբանական կ'գտնես այս հետևանքը, կ'զարմանաս թէ
ինչպէս մինչև յայսօր ղգացմունքդ ու ներքին ձգտմունքդ դէպ
ի հայութիւն զննելով, չես զգացեր որ հայ ես . . . սա-
կայն այդ երկրորդական պարագայ մ'է ինձի համար. հայ և
անկլիացի՝ նոյն մարդկութեան զաւակներն են, միայն պէտք
չէ մոռնալ որ, ոչ այնքան ծագմամբ որքան կրթութեամբ
և սովորութեամբ, կ'դառնայ մարդ ինչ որ է: Դու, աղնիւ
Ներսէս, Անկլիա սնած ու դաստիարակուած, իսկապէս անկ-
լիացի ես քան թէ հայազգի, ըստ իս, և երբ ամեն մարդ
իր ազգաբանական ծառը փնտուելու ելնէ, չեմ ըսեր Տարվի-
նի պէս թէ կապիկ մը կ'գտնէ իրրև նախահայր, այլ թերևս
մարմր մը, թմթար մը, ձենացի մը, հնդիկ մը . . . ինչ-
պէս, ոմ կ'երաշխաւորէ որ ես ալ Բագրատունի մը, հրեայ
մը չունէի իրրև նախահայր: Հետևապէս, թոշ մկրտի ազ-
գաբանական, հայութեան աննշան կէտն և ուրիշ կարևորա-
գոյն խնդիր մը նկատէ: Ահա ունիս արդէն ընտիր հոգի մը,
Լիլին, քու սիրուհիդ, ունիս անուն մը, Մամիկոնեան, բա-

ւսկան հնչող և անլլիական ականջի անուշ հնչող անուն մը, այդ անուան շնորհիւ ունիս մեծ փափաքս մը, պատանեաց ընկեր, և մեծագոյն ժառանգութիւն մը, Խոհեմի հողն, զոր պիտի ընդունիս, եթէ ոչ ըստ մասին իրրև իրաւունք, գէթ իբրև օժիտ անզաւակ լորտ Խահէմի ձեռքէն, Լիլլին հօրը կողմէ։ Ուստի կ'ընայ քեզ բաղդին քեզի շնորհած այդ պարգևներէն օգուտ քաղել և երջանիկ ապրիլ, որչափ որ ներելի է մեզի պէս հողակերաններու երջանիկ լինելու։

Լիլլին անյայտ էր, գտար, անունդ ու ծագումդ անյայտ էր, գտար, ահագին ժառանգութիւն մ'անյայտ էր, գտար, ուրիշ ի՞նչ ունիս փնտռելու, ուրիշ ի՞նչ կ'պահանջես։ Ասոնք են ահա նկատողութեան արժանի խնդիրներ։ Բեր միայն այդ ամենն այս տեղ, և ընտիր, պատուաւոր կացութեան տէր անձ մը կ'դառնաս, սիրուն լոբի մը, ամենուն չարդանաց և պաշտամանց առարկայ՝ ամենուկան մը պիտի դառնաս։

Եւ ես, Պարոն Նէլսօն, որ երբեմն բարեկամդ էի, և հիմակ որ դու լորտ եղար կամ պիտի լինիս, չգիտեմ ինչ գիրք պիտի ունենամ քու առջեդ, պիտի խնդակից դանուիմ քեզի, գիտեմ որ այսքան նեղութիւն ու մտատանջութիւն կրեցեր եռա՝ վերջապէս բոլոր փափաքներուդ կ'հասնիս...

Տօքթօր Բէյնի ուրախութիւնն ոչ ոք ունի լսելով որ իր աներուհին, Լիլլի, գտաւ իր ուզած երանութիւնն, մինչդեռ մայրը լէտի Խահէմ պիտի դանէր իր պատուհաս, օրինայ ուժով։ Արդէն Օ. Հիւանդանոցին վերատեսուչն բանտի մէջ է, և լէտի Խահէմ այս օրերս պիտի կոչուէր դատարանն, որ Պ. Քինկի մասին իրմէ վկայութիւն խնդրուի, սակայն Պ. Բէյն, գրոյդ վրայ, ետ պիտի կենայ դատէն, նկատելով որ քու մեծաւլատ ներկայութիւնդ ի Լոնտօն, ամուսնութիւնդ Լիլլիին հետ, և ասկից հետևելիք պարտագանները բաւական ծանր պատիժներ են այդ սևսիրտ ու դաժոտ կնկան համար, որ իր փորած հորն ինքն ընկաւ։

Ուստի, փութա՛ դառնալու, սիրելի Նէլսօն, և ինչ որ

պրովՀաղորդելու կ'խոստանաս, քու ազգականութեանդ վրայ, եկուր բերնով խմացուր, միշտ խոհեմութիւն համարելով Լիլլէն ժամանակ մ'ևս ծածուկ պահելու դաղանիքը, քանի որ տակաւ է կ'ըսես, և թերևս այդ տակաւութեան պատճառն հայրենի տենչն ու մորմոքն է. դարձիր...։

ՆԱՄԱԿ ԺԹ

ՆԷԼՍՕՆ Ա.Ց ՎԱՒՏՏ

Կ. Պոլիս...

Ի՜նչպէս աղուոր ու հանդիստ կ'խօսիս, սիրելի Վաւտ, և ի՜նչպէս յարգարուն կ'գտնես իմ երջանկութեան շաւիղը։ Հրեշտակ մ'որ զիս կ'սիրէ, և որ այժմ ազգականութեան նոր զօդով մ'ինձի հետ պիտի կապուի, անուն մ'որ աղնուականութեան փայլն ունի, ժառանգութիւն մ'որու շատեր կը բաղձան և քիչեր կ'հասնին, ուրիշ ի՞նչ պայմաններ պէտք են, կ'հարցընես, երանութեան կատարն եչնելու։ Իրաւ է. սակայն ես անհանդիստ եմ, սակայն հոգիս ու միտքս անդադար կ'խռովին, երբ մէկ կողմէ կ'տեսնեմ որ Լիլլի միշտ տիար է, և այս օրերս թեթև այլ ջոր հազ մը զինք կ'նեղէ, կ'նշմարեմ հեռուէն ժառանգութիւն մը՝ որու աչք չունիմ բնաւ, լեռի պէս իմ վրայ կ'ծանրանայ, նա մանաւանդ վէՀի ներքև ժառանգութիւն մը զոր ձեռք ձգելու համար դատ բանալ պէտք է իմ հօրեղբօրս դէմ և իրաւազանեբու լծին ներքև մաշիլ, անուն մ'որ ինձ կ'յիշեցընէ անգութ իմ թշուառ աղջս, իմ հայրենիքս, որ Լիլլիէն եառ՝ ամեն բանէ վեր կ'գտնեմ...։

Չէ, բարեկամ, հայութիւնն երկրորդական բան մը չէ ինձի համար, ազգութիւնն աննշան զգացմունք մը չէ, անտարբեր հիմնարկութիւն մը չէ մարդկութեան մէջ, և պատճառներ ունիմ այսպէս հաւատալու։ Եթէ ես, որ անդիտաբար բաժնուած էի ազգէս, ուրանամ այժմ իմ ծագումն ու նախինքս, միթէ դու պիտի ներե՞ս, միթէ նոյն յարդն ու պատիւն ինձ պիտի ընծայե՞ս, այն բարեկամական սիրոյ հետ, որ պէտք է միշտ փոխադարձ ակնածութեան վրայ հիմնուի յարատեւ ճնալու համար. ես չեմ կարծեր։ Եւ հիմակ՝ եթէ յանկարծ աննշան ժողովրդեան մ՚անդամը կ՚դառնամ, պիտի զանա՞ս ինձ քու սէրդ ու համարումդ, որ իմ կենսոյս մխիթարանքն ու թշուառութեանցս սփոփանքն եղած են, չէ, ես չեմ կարծեր։ Վասն զի ամեն անհատ, ինչ ազգութեան որ վերաբերի, նոյն ազգութեան մէջ միայն կարող է՝ իր կարողութեան ներածին չափ՝ օգտակար լինիլ և անոր զարգացման նպաստել, ինչպէս ամեն ազդ առանձինն գործելով՝ մարդկային ազգի շրջանին մէջ, նոյն մարդկութեան տեսլի կ՚օգնէ իր յատուկ միջոցներով, և այսպէս անհատական ուրոյն յաժեր, իրենց ուրոյն պաշտօնը կատարելով՝ թերևս կը պատրաստեն այն ասպարէզն, ուր ամեն ժողովուրդներ իրարու պիտի հանդիպին, միութեան ու եղբայրսիրութեան ոգւով իրարու ձեռք պիտի կարկառեն։ Սակայն այդ ասպարէզը շատ հեռու է, վասն զի շատ հեռու են տակաւին իրարմէ ժողովուրդներ ու ազգեր իրենց կրօնական, քաղաքական ու հայրենական տարբեր հիմնարկութիւններով, մտաւորական ու բարոյական տարբեր զգացմունքով։ Այս խորհրդութիւններն ո՞վ պիտի հարթէ, ո՞վ պիտի բերէ այն օրն ուր անկլեացի, ֆրանսացի, գերման, իտալացի, ռուս, յոյն, հայ, թուրք և այլն ամեն նախապաշարմունքէ աղատ, մէկ Աստուծոյ տեղանի, մէկ հայրենի խորանի, մէկ ազատութեան ու նպատակի արձանին առջև ծունր դնեն և զիրար համբուրեն, եթէ ոչ այն հոգիներն որ դեռ մարդկութեան մէջ

փոքրամասնութիւն մը կ՚կազմեն, և՝ եթէ ոչ փիլիքապէս, հոգեպէս զիրար կ՚գրկեն, իրարու խօսք ու միտք կ՚իմանան, շնորհիւ դիտութեան ու ճշմարիտ լուսոյ որու հաղորդ կը դառնուին։ Արդ՝ քանի որ այդ հոգին ու միտքը կ՚զգամ յիս, ինչո՞ւ հեռանամ այն ժողովուրդէն որու զաւակն եմ, և որ՝ իբրև այն, իմ աջակցութեանս կարօտ, մինչդեռ՝ եթէ անկլեական ազգին մէջ ճամ անպտուղութենէ շարժելով, ոչ միայն իմ խղճիս առջև ազգուրաց պիտի համարուիմ այլ և պարտաւորութեանս անհատարիմ, և ահագին ովկիանոս մէջ կաթիլ մը ջուր անգամ չպիտի լինիմ։

Ուսած հայ եմ, սիրելի վուտ, բայց և այնպէս միշտ քու բարեկամդ եմ։ Հայութիւնս մեր վաղեմի սրտակցութեան ամենէ թեթև բիծն անգամ չբերելէ զատ, աւելի ևս զայն կ՚ամրապնդէ, քանի որ իմ անունս ու ազգութիւնս գոյ դլխաւորապէս քու շնորհիդ, հետևապէս քեզի պարտաւոր եմ ինչ որ ունիմ այժմ անուն մը, քեզի պարտաւոր եմ, ինչ որ եմ, հայ, և թէև՝ անկլեականին պէս՝ մեծ, զօրաւոր և վեհանձն ազգութեան մը ծոցէն ելնելով, ուր երբեմն ստուեր մ՚էի անյայտ, գրեթէ բարձր աթոռէ մ՚իջնելով այժմ որ անձս գտայ, կ՚մտնեմ թշուառ, համեստ, գրեթէ աննշան ազգի մը ծոցն, սակայն այդ ծոցն շատ աւելի տաք ու բնական կ՚գտնեմ, թէև կ՚նստիմ հողի ու մեխրի վրայ, Հայաստանի աւերակներու ու փուշերի վրայ, բայց այդ գերեզմանն ու փուշին իմ նախահարցս շիրիմն ու մասունքն են, զոր պարտաւոր եմ սիրել ու պաշտել, իբրև հայ։

Եւ միթէ դու կ՚ուսովին հայ չե՞ս, դու ևս բարեկամութեան զօրութեամբ իմ և հայութեան ձակատագրին համակիր չե՞ս, և այսուհետև ալ մասնակից չըլլալու պատուիս այն աղէտից կամ ուրախութեանց, զոր վերապահած է անշուշտ ինձի համար ապագան . . . ։

Չեմ ուզեր պատասխանել այն կէս մը հեգնական ակնարկութեանդ, որ իմ նոր նիւթական վիճակիս կ՚պատկանի, վի-

չակ՝ որու աչերը չեզայ տակաւին։ Զեմ այնքան ինքնասէր ու ապաշնորհ որ բարօրութեան ժամուն մոռնամ այն իմ աղնիւ բարեկամներս որ թշուառութեան ժամուն ինձ աջակից պտուեցան։ Եթէ օրին մէկը սիրանամ իրօք այն կալուածոյ որոյ ժառանգորդը կ՚համարուիմ ձեռքս անցած թղթերուն զօրութեամբ, կ՚փափաքիմ իմ սրտակիցներուս հետ վայելել զանոնք, մանաւանդ այն աղքատ Հայ ազգին հետ ուրու աղէտից կ՚կարեկցէի երբ անկլեայի էի և չունեւոր, ուր ինձ Հիմակ որ հայ եմ և ունեւոր պիտի լինիմ։

Սակայն, բարեկամ, ամենէ կարեւորն ետ ձգեցի, այն է պ. Քինկի աւանդած թղթերն, որ, թէև համառօտ, ամփոփ պատմութիւն մը կ՚պարունակեն, և թերևս մի շատ ատենամբ օտար, ինձի պէս, այլ ծննդով Հայ տարապերներու պատկերը կ՚ներկայեն։

Ահա կրոյս կ՚կցեմ յատուկ պատճէններն, կարգա և դասէ։

«Ես ստորագրեալս, Ռափայէլ Մամիկոնեանց, բնիկ Զու-
«ղայի, 1780ին իմ հարազատ եղբօրս աղա Դանիէլի հետ,
«քաղաքական պարագաներէ ստիպեալ՝ ելայ Հայրենիքէս և
«գացի Հնդկաստանի Կալկադա քաղաքը բնակելոյ, իմ բո-
«լոր կալուածս ու հողերս իրացընելով, որոց դումարն 5
«հազար ոսկիի կ՚հասնէր, և առուտուրի սկսայ։ Մեր գոր-
«ծունէութեամբ և Աստուծոյ օգնութեամբ յաջողցանք մեր
«ունեցած գրամագլուխն ահռելապատկել, սակայն Հնդկաս-
«տանի Անգլիական ընկերութեան գործակալաց երեսէն մեծ
«վնաս ու անիրաւութիւն կրելով՝ ստիպուեցանք ես ու եղ-
«բայրս Անգլիոյ Լոնտոն քաղաքն ուղևորիլ մեր յատուկ շա-
«պենաւով և անիրաւողաց դէմ գատ վարել կառավարու-
«թեան առեանը։ Մեր գատը շահեցանք և մեզ դէմ եղած
«գրկանաց փոխարէն 60 հազար անգլիական ոսկի տանա-
«լէն ետև՝ մտադիր էինք վերադառնալ, երբ իմ կրտսեր եղ-
«բայրս Դանիէլ, որ ամուրի էր, անգլիացի հարուստ օրի-
«որդի մը հետ ամուսնանալով՝ յորդորեց և զիս ինձ և Լոն-
«տոն տուն հաստատել։ Հաւանեցայ. ուստի և ես իմ ընտա-
«նիքս, այս է կինս և միակ արու զաւակս Ներսէսն կալ-
«կադայէն բերել տալով՝ Ութեմբերի մօտ՝ Խտհէմ գիւղին
«մէկ անկիւնն տուն մը գնեցի, որ իր յատուկ պարտէզն ու
«արան ունէր, բնակութիւն հաստատեցի։ Երկու ընտանիք
«մի քանի տարի սիրով ապրեցանք միասին, սակայն այս մի-
«ութիւնն երկար չտևեց։

«Եղբայրս Դանիէլ՝ իր կնկան դրդմամբ՝ բաժնուելու խղճ-
«տութենով և առուտուրով, և գնաց Լոնտոն քաղաքը բնակե-
«լու։ Ես իմ գործերս առանձին շարունակեցի, իմ առև-
«արական առնս տեսուչ պ. Քինկի օգնութեամբ, որ ար-
«գարասէր և ուղիղ մարդ մ՚է։ Սակայն մահն իմ կինս
«կորզեց և ես ցաւագար լինելով՝ տունը ծախի՝ անգործ և
«անզգաստ, բժիշկներու խորհրդով։ Տկարութիւնս օրէ օր կ՚ա-
«ւելնայ, կ՚զգամ որ մօտալուտ է մահս և այս կտակս կը
«գրեմ մինչդեռ իմացական կարողութիւնս վրաս է, և ահա
«իմ վերջին կամքս այս է.

«Ես Հայաստանեայց եկեղեցւոյ մէկ զաւակն եմ, և անոր
«միշտ հաւատարիմ։ Ունիմ պատրաստ 80 հազար ոսկի՝ անգ-
«լիական Պանքան և 50 հազարի արժողութեամբ անշարժ
«կալուածք, տուն, հող, Իտհէմի շրջակայքն՝ օրինաւոր յետ-
«կարով։ Իմ այս բոլոր ստացուածքիս ժառանգորդ կ՚նո-
«ւզում միակ որդիս Ներսէս Մամիկոնեանց, միայն խնդրե-
«լով որ անշարժ կալուածքիս մէկ մասը, 20 հազար ոսկի,
«Զուղայի ազգային պարոցին նուիրէ, և 2 հազար ոսկի պ.
«Քինկի հաւատարիմ ծառայութենուն փոխարէն պարգևէ։
«Նոյնպէս կ՚պահանջեմ որ յատուկ վարժապետ մը կամ քա-
«հանայ մը Կ. Պոլսէն բերել տալով՝ իր հայրենի պատմու-
«թեան և եկեղեցւոյ վարդապետութենուն մէջ վարժի, և հայ
«օրիորդի մը հետ կարգուի, միշտ ազգային աւանդութենուն
«հաւատարիմ մնալով։

«Ըստ որում՝ դեռ ևս որդիս անչափահաս է, անոր վրայ «խնամակալ կ'կարգեմ՝ պ. Քինկ՝ իմ գործակալս, նոյնպէս «այս կտակիս ջինք կատակատար կ'անուանեմ, խնդրելով «որ կէտ առ կէտ և խղճի մտօք գործադրէ զայն, և եթէ «ներբէք իմ այս նուիրական կամաց հակառակ շարժի պատաս- «խանատու մնայ մարդկան և Աստուծոյ պատասխանին։

«Ա՛յս է իմ կամքս ու հրիտակս, զոր մտքի ու սրտի յո- «ժարութեամբ կ'ստորագրեմ ես Աստուծոյ ծառայ

«ՌԱՓԱԷԼ Ս. ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ
Ջ--ՂԱԵՑԻ։»

«Նոթար
Հ. ՈՒՕԼՓ»

Ահա, սիրելի Վուա, իմ սիրական հօրս հրիտակն, որ ոչ միայն իր նօտարին ստորագրութիւնը կ'կրէ, այլ և քա- ղաքապետական գրասենի կնիքն, այնպէս որ բոլորովին վաւե- րական ու անժխտելի է։

Սակայն ինչպէս այսպիսի կտակ մ'անյայտ ու անգործա- դրելի մնայեր է, մասամբ իմ կենաց նախորդ պատմութենէ կ'բացատրուի, և մասամբ պ. Քինկի չատուկ ինքնապիր նա- մակէն, զոր կցած է հօրս հրիտակին և զոր տուփին մէջ գտայ՝ հօրենական մատնիով մը։ Ա՛յս մատնին իմ աչքիս աւելի մեծ արժէք ունի քան թէ պատմութիւն մը և կոմ- սութիւն մը . . . ։

Հրիտակին նախաբանէն արդէն կ'գուշակուի որ երկու եղ- բարց մէջ դժտութիւն կամ անհամաձայնութիւն մը ծագեր է, այնպէս որ երկու սիրականներ իրարմէ բաժնուեր են և հայրս գիս օտարի մը խնամոյ յանձներ է։ Ձեռ տեսներ այս բաժանման մէջ այն յիմին շունչն որ իմ կեանքս թունաւո- րեց, չեմ տեսներ լէտի Խտհէմ, որ՝ եթէ իրօք ազնիւ և մեծ դերդաստանէ մը լինէր՝ այսպիսի անարգ ու վատ վար- մունք մը չէր ունենար, և հօրս սիրտը չէր խորտակեր, թե- րևս մօրս յանկարծական մահուան պատճառը չէր լիներ, և ամբողջ ընտանիք մը կործանելու չէր գաւապրեր, և ինչո՞,

մի միայն Մամիկոնեանոյ բոլորը ժառանգութեան տիրանալու համար։ Արդէն հօրեղբօրս կրած Խտհէմ անունն իմ հօր կալուածական անունն է, զոր հնարքով մը՝ իրրև ազնուա- կանութեան տիտղոս, ի պաշտօնէ ստացած պիտի լինի։

Թէ ինչպէս լէտի Խտհէմ՝ մօրս մահուանէ ետև՝ ժամա- նակ մը բռնի զիս իր տան մէջ պահեր, պ. Քինկի ձեռքէն հօրս հրիտակը կորզեր է, ինչպէս այս բարեմիտ մարդն իր որդոյմերը ձգեր է, նոյն լինք պ. Քինկ կ'պատմէ իր առ իս ուղղած գրոյն մէջ, որ իրաւի սիրտս շարժեց։

Պ. Քինկի գիրն ուրիշ առթիւ կ'արտագրեմ և քեզի կ'ու- ղարկեմ, վասն զի Լիլի զիս կ'կոչէ։ Եւ Լիլի, լէտի Խտ- հէմի դուստրն է, ոմ կրնայ հատուած։ Մինչեւ սատանը կա- րող է հրեշտակ ձևիլ, ինչպէս պաշտել դուստրն ու ատել մայրը . . . ։ Եւ մինչեւ որդիք պատասխանատու են ծնողաց յանցանաց համար . . . ։ Ա՛խ, թէ որ լէտի Խտհէմ Լի- լիին մայրը չլինէր իմ ձեռօքս կ'սպանէի զանի . . . բայց Լիլիի մայրը սպանանել սրբապղծութիւն չէ . . . ։ Անոր սի- րածն իմ սիրածս է, և եթէ հրամայէ լինձ նոյն իսկ բեհեղ- ղերուղը սիրել, պիտի սիրեմ . . . ։ Բայց մինչեւ կ'հրամայէ նա անիրաւ բան մը, մինչեւ դիտէ նա իր մօրը սև սրտին խո- րը . . . եթէ իմանայ մեր դիտացածն թեթև մէկ մտան, անմեղ էակն, անտարակոյս վշտէն կ'մեռնի . . . ։ Եւ ես յետին ծայր ղղոյշ եմ իր առջև որ կասկած մը չ'ազդեմ, մանաւանդ որ պարապուր եմ, քանի որ բժիշկը պատուիրած է լինձ ալեայլութեան առիթ տուող պարագաներէ ղգուշա- նալ։ Ուստի՝ միշտ ուրախ դուարթ կ'երևիմ անոր առջև, և կ'խոստանամ անվրջապես ձմրան երթալ՝ երբ առողջութիւնը ղլխովին կազդուրի։

Դեռ անցեալ օր կ'ըսէր լինձ.

— Մինչեւ մտցած քեզ, Նէլսօն, այն ազնիւ ու անկեղծ բարեկամդ, որու աչքով կ'տեսնէիր զիս երբեմն, և որ այն- քան պեղանի կին և սիրուն ու կայտառ զուարճներ ունի։ Եւ

մենք պիտի ունենա՞նք զաւակներ, նեղսո՛ն, մենք՞ալ տուն տեղ պիտի լինի՞նք՝ մեր հայրենեաց մէջ. . . .»

Եւ ես կ՚փութայի պատասխանել.

— Ընշո՛ւշտ, սիրական Լիլիս,» և խօսքն ուրիշ նիւթի վրայ կ՚գարձընէի. . . . Այսպիսի անմեղ ու միանգամայն կակաձալի խօսակցութիւններ ստէպ կ՚պատահէին մեր մէջ: Ի՛նչ ընեմ չգիտեմ, սիրելի՛ վատ. մէկ կողմէ կ՚գոլամ որ Լիլի ամեն բան չմանայ, մրսո՞ կողմէ՞ կարծեմ լմենկ՚օտարաստամ անորմէ դաղանիք պահելով, այնքան մեր սիրտերն՝ քիչ մ՚առաջ՝ իրարու համար բոլորովին բայ էին, և առանց խօսելու իրարու միտք ու փափաքն կ՚գուշակէինք. . . . Սակայն այս վիճակս անտանելի կ՚գառնայ. . . պիտի պայ ժամ մ՚որ ամեն բան պիտի յայտնուի, գիտեմ, բայց ի՞նչպէս, և ի՞նչ պիտի պատահի, երբ ըսեմ իրեն որ հայ ենք, հայու զաւակներ ենք, երկու եղբօր զաւակներ ենք. . . պիտի հրճուի՞ թէ տրտմի, պիտի՞ սիրէ՞ թէ ատե՞ղնա. . . . ինչ սլանդակ խորհուրդներ կ՚անցնին և կ՚ընդհատին այս դլխուս մէջ, որ իմս չէ. . . . Եթէ հրճուի, և յանձն առնու Հայաստան բնակիլ ինձի հետ, Լիլի իմ կենացս պսակն ու հայրենեացս թագը պիտի լինի, եթէ տրտմի, եթէ հօր ու մօրը մօտ գտնուիլ ուզէ, ես ի՞նչ պիտի ընեմ այն ատեն, պիտի ուրանամ հայրենիքս, պիտի չկատարեմ հօրս կամքն, որ է հայութեան մէջ ապրիլ, հայ օրիորդի միանալ, հայութիւնը պիրել. . . . Լիլի հայ է, և թերևս ջերմ հայուհի մը, ո՞ գիտէ. . . .

Կ՚ազաչեմ, բարեկամ, ձամբայ մը ցոյց տուր որ այս անդունդէն դուրս ելնեմ, վերստին հասնիր ինձ օդնութեան քու փորձառութեան լուսով՝ որ այս խաւարէն ազատիմ. . . . Քիչ քիչ խորհելու կարողութիւնս կ՚կորսնուի և միայն սիրելու կարողութիւնս կ՚մնայ, որ կրնայ պիս խելագարութեան տանիլ. . . Նեղսո՛ն խելագարը, էհ, ի՞նչ ձիաս. . . .

ՆԱՄԱԿ Ը

ՎՕՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն . . .

Բարեկամ, Հետաքրքրութեամբ կարդայի հօրդ հրիտակն, որ լեափ Խատհէմի մահավճիռը կրնայ դառնալ, եթէ երբէք միտդ դնես վրէժ լուծել, այդ անզդամ կնիկէն, որ իրօք աղնուականութեան նշոյլն անգամ չունի, և որ, այժմ Պ. Քինկի մեռած լինելով, կարծէ թէ ամեն սպառնալից վտանգ ու երկիւղ գադրած են, և թէ կարող է՝ ապահովութեան մէջ նիրհել: Այսպէս կ՚նիրհեն սակայն ամեն անօրէն ու չարագործ անձինք որ արդարութեան չեն հաւատար և անսահման վստահութիւն ունին իրենց չարահնար մեքենայութեանդ վրայ. . . . Անհամբեր կ՚սպասեմ տեսնելու նաև Պ. Քինկի դիրն, որ անտարակոյս ոչ միայն լոյս կ՚սփռէ հրիտակին վրայ այլ և լեափ Խատհէմի հին դաւերն ու պատանեկան հասակիդ դէպքերը կ՚բացատրէ: Սակայն դու՝ դանդաղութենէ ըսեմ թէ դժկամակութենէ՝ մաս առ մաս կ՚ուզես հաղորդել մեզի դաղանիքն, թէև իրաւունք ունիմ պահանջելու որ շուտով ամեն բան գրես ինձ և կէտ մ՚անդամ ծածուկ չպահես. . . .

Զունիմ խօսք մ՚ըսելու հայկական ափիոնիդ վրայ. զայն կը յարգեմ և գիտես որ ամեն անհատի կարծիքն ու համոզումն բռնաբարել չեմ սիրեր, ուր մնայ քու հիդ, որու հետևելու ազատութիւնդ կ՚գնահատեմ: Միայն, բարեկամ, քու բոլոր դեղերդիդ խորհրդածութիւններդ, հայրենասիրական նոր զդացմունքդ չեն արդիլեր որ պինդ տարտամ և երերուն վիճակի մէջ մնաս և իմ խորհուրդներուս դիմես: Պատճառը յայտնի

Է. Լիլլին, որու համար դէթ պիտի պարտաւորիս զոհել հանգըստիդ և անոր ներշնչութեան հետևիլ. . . : Ձեմ ուրանար որ փափուկ է վճռակիդ, դիտեմ որ դժուարին է, և թերևս անհաւատալի թուի զաղտնիքը Լիլլին երբոր իրեն յայտնուի, սակայն ով պիտի յայտնէ իրեն և ինչպէս, ահա խնդիրը մ'որ ծանր է. ինչ հետևանք պիտի ունենայ, ահա ուրիշ մտածութեան արժանի կէտ մ'որ աւելի ծանրակշիռ է քան քեզ. . . :

Ըստ իս, բարեկամ, ամենէ բնական թարգմանն դու կարող ես լինիլ, դու պարտաւոր ես՝ այդ ծուռ և կեղծ դիրքդ ուղղելու համար, յարմար առիթ մը գտնել և խնդիրը Լիլլին առջև պարզել: Եթէ կայ դատապարտութիւն մ'այդ յայտնութեան մէջ, պիտի մեղմի այն, չէ թէ ուրիշի բերնով այլ քու յատուկ բերնով, եթէ Լիլլի սաստիկ վիշտ ու կսկիծ զգայ, դու միայն կարող պիտի լինիս վիշտն ու կսկիծն ուրախութեան դարձնել և անցեալն անոր մոռցընել տալ:

Դարձեալ՝ անկլիայի, սիրեց քեզ Լիլլի, հայ, պիտի սիրէ քեզ միշտ, վասն զի սէրն ազգութիւն չունի: Կին մը՝ ոչ իտալացի է, ոչ ֆրանսացի, ոչ անկլիացի է, ոչ հայ, կինն՝ ամենէ առաջ՝ կին է, և որ կլիմայի ներքև ապրի, ունի այնպիսի յատկութիւններ որ ամեն կլիմայի կանանց յատուկ են: Սիրել ու սիրուիլ ի'փափաքի, և այն օրիորդն որ իր հայրենիքը թողլով քեզ վստահելու եկաւ, ի հարկէ՝ եթէ հնդկաստան անգամ գտնուէիր, պիտի գար քեզ գտնէր: Դա անուղղ չափերը, այլ հոգիդ: Ուստի այդ կէտն ալ ինձի համար պարզ է, և բնաւ անախորժ հետևանք մը չկրնար ունենալ:

Սակայն ի'ուզես աւելի ապահով լինիլ և վերջ տալ այդ կասկածի փափուկ նկատումներուդ և երկմտիդ, կատարէ պրոպոզիդ: Ա'ռ օր մը Լիլլին, գնա եկեղեցին, կամ քահանան կանչէ, մի քանի բարեկամներու շրջանին մէջ՝ հարսնիքը կատարէ և ապա՝ եթէ կամիս, յայտնէ Լիլլին որ հայ ես

և հայ պիտի ապրիք: Ուրիշ նկատմամբ ամուսնութեան խընդիրը լուծել այնքան կարևոր է որքան որ դու ի'պարտաւորիս զոնէ անգամ մ'ևս Անկլիա գալ, եթէ ոչ մեզ տեսնելու նպատակաւ, պէթ ժառանգական գործերդ կարգի դնելու և բարեյիշատակ հօրդ կտակը գործադրելու համար: Անպատճառելի գումար մը չէ ժառանգութիւնդ, նէլսօն, և ահա՝ ինչ որ երբեմն ի'ստացաքիկէի քեզ ընել, լէմի Խոտհէմին Լիլլին ժառանգական մասն իրրև օժիտ խնդրել, հիմակ իրրև քու իրաւունքդ պիտի պահանջես: Ի'նայիս, երբեմն ևրացը ի'կատարուի, և անկարելին կարելի ի'դառնայ . . . :

Ա՛յս է ահա քեզի տալիք խորհուրդս, զոր խնդրեր էիր: Պարզ է հետևելիք շաւիղդ, թէ սիրոյ և թէ ժառանգական խնդրոյ մասին, և հաւատամ եմ որ երկուքն ալ յաջողութեամբ պիտի պսակուի, եթէ քիչ մ'աւելի շարժիս քան խորհիս, քիչ մ'աւելի արիութիւն ցոյց տաս և նուաղ լաշխարութիւն:

Մեր բարեկամ պ. Բէյն ևս այս կարծիքն ունի, և անցեալ օր խնդալով ի'ըսեր, — եթէ նէլսօն գեռ ևս դանդաղի, դատս պիտի շարունակեմ լէմի Խոտհէմի դեմ, և ժառանգութիւնը պիտի կորզեմ: — Խե'ղճ կին, մտքէն անգամ չանցնիր թէ ինչ սոսկալի վիճակի մէջ ի'գտնուի, այլ կարծէ թէ՝ գինի մտնելով իր հետը տարաձայնութիւնը և գինը ահագին հարստութեան միակ աէրն ըրաւ: Իր ամուսինն, քու հօրեղբայրդ, նէլսօն, արդէն զրած եմ քեզի, անմիտ, ողորմելի մարդ մ'է և իր կնկան ձեռքը խաղալիկ մը: Իսկ լէմի Խոտհէմ՝ և ոչ իսկ ի'փնտռէ ու ի'հարցնէ ձեր վիճակն, և գիս չձանձնալու ի'զարնէ՝ երբոր ընկերութեանց մէջ ի'տեսնէ: Զգիտէ չարամիտ կինն որ կայծակներ պիտի թափին իր գլուխն, և գինք իր բարձունքէն վար պիտի գլորեն, երբ դու վաւերական թղթերովդ գինուած Լոնտոն երևիս:

Ձես մտածեր անշուշտ, նէլսօն, պ. Բինկի նամակին պատ-

Ձէնն ինձ հաղորդել, որպէս զի լեռվին տեղեկանամ կենացդ զարմանալի պատմութեան։ Նոյնպէս պիտի յիշես զիս ազնիւ Լիլլին։ Իմ ընտանեկան կենացս մասին ըսած խօսքերն որչափ զգուելի են ինձ, նոյնչափ քեզի փափաքներ կ'յայտնեն, և դու որ ասեն մը կրակի պէս կ'բորբոքեիր, կ'զարմանամ թէ ինչպէս այժմ գրեթէ անզգայ, չըսեմ պաղ, կը վարուիս, և Լիլլին իղձերը չհասկընալու կ'զարնես։ Թէ՛ւևս իր տարաւթիւնն ալ՝ գանգատ ու տարտամ վարմունքիդ հետևութիւնն է . . . . Ուրեմն ըրէ՛ որոշումդ. կատարէ՛ պսակն, որով թէ՛ սիրտդ հանգիստ պիտի գտնէ, թէ Լիլլին պիտի նոր կեանք ստանայ և թէ ժառանգական իշխանդիրդ պիտի լուծուի։ Վերստին պիտի վարանի՞ս։

ՆԱՄԱԿ ՀԱ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Իրաւի ձարտար ու կարուկ մարդ ես, և իրաւունք ունիմ, երբ նեղը մտնեմ, քու խորհուրդիդ դիմելու։ Շատ իրաւացի գտայ փաստերդ, և սիրական Լիլլիս վիճակն աւելի դյժ տուաւ անոնց, աւելի համոզեց զիս։ Քանի մ'օրէ ի վեր շատ աղէկ է, իր գոյնն եկաւ ախորժակին հետ, իր շրթերուն վրայ անուշ, բնական ժպիտն ու վառվռուն աչերուն մէջ խնդութեան նշոյլները կ'նշմարեմ, ու երջանիկ եմ։ Լիլլի իմ կենսաշէն է, իմ սրտիս ու գլխուս զսպանակն է, այնպէս որ՝ երբ շարժի, ծիծաղի, խօսի ու խաղայ, իմ հոգիս կ'շարժի և ուրախութեամբ կ'լեցուի. կ'փարատին մութ, յուսահատական խորհուրդները, և կ'զգամ որ կ'ապրիմ. սակայն երբ՝ իր կայտառ և պայծառ ճակտին վրայ մրոայլ մը տեսնեմ, երբ գոյնը փոխուի ու ծիծաղը դադրի, մանաւանգ երբ թեթև տենդով մը մարմինը սարսռի, ապա պաղ քրտի մը ճակտէն կ'հոսի, կ'հիւանդանամ և ինքզինքս կ'կորուսեմ. . . . Չեմ համարձակիր ստէպ գրել քեզ, սիրելի Վուտ, իմ հոգւոյս վիճակն, իմ հնհնութիւն ու դողդողյուն այսպիսի պարագաներու մէջ, որպէս զի նորէն տաղտուկ չտամ քեզ, ինչպէս որ ստէպ տուած եմ, այլ կ'խոստում քեզ ևրեւակայել թէ մտքիս ու սրտիս այս փոփոխական տրամադրութիւնն ինչպէս կ'ներգործեն իմ թղթակցութեանս վրայ, և զիս երբեմն հակասութեան մէջ կ'նետեն և թեթևամիտ, անհաստատ մարդ մը կ'ընեն։

Բայց որքան խօսքդ նոյնքան, և աւելի, Լիլլին խնդալից աչնարին ինձ նոր ոգի կ'ազդէ և կ'յորդորէ վախճան տալ այս անստոյգ վիճակիս։ Ուստի այս օրերս պիտի դիմեմ Հայոց Պատրիարքարանն, իմ թղթերս պիտի ներկայեմ և անունս, իբրև հայ, պիտի արձանագրել տամ քաղաքային տոմարին մէջ, նշանտուքի ու ամուսնութեան հրաման խընդրելով։ Արդեօք ինչ զարմանք ու աղմուկ պիտի պատճառէ այս ընթացքս, թէև շատ բնական է, արդեօք Հայք ինչպէս պիտի մեկնեն այս վերապարձս . . . ։ Ոմանք պիտի ըսեն — Անկլիացի լորտ մը հայ եղեր է — այլք այդ լորտին օրիորդներ պիտի առաջարկեն ամուսնութեան — շատեր անոր բոլորտիքը պիտի թռչռին որ փիչ մ'ոսկիներովը խաղան։ Սակայն ես պիտի ջանամ, առանց ձայնի ու շշուկի, կատարել գործս, և այնուհետև կ'խորհինք մեր ընելիքն ժառանգական դատի մասին,

Առ այժմ կ'ուղարկեմ քեզի, սիրելի Վուտ, Գ. Քինկի նամակին պատճէնն որու, կիտեմ, անհամբեր կ'սպասես։

«Աղնիւ սանս Ներսէս,

«Ահա երեննեայ տուփին մէջ պիտի դանես կաթողիկոս մը, «ինքնապէս, Յովհաննէս Պ. Ռափայէլի Սերովբէ Մամիկոնեան, նոյնպէս մատանի մը՝ զմրուխտէ, որ իր հօրը Սեր«ովբէի յիշատակն է, և զոր ձեռօքս քեզի յանձնելու «պատուիրած էր ինձ իր մահուան ժամանակ: Կաթողիկոսն «բացաւ աչքդ, տեսար ծագումդ, երևան հանեց այն գաղտ«նիքն որ քու կենացդ առաջին մասը՝ իբրև սեւ վարագոյր «մը ծածկած էր, սակայն չյայտնեց այն քեզի թէ ինչպէս «այդ կտակն ցարդ անյայտ կ'մնար, ով եղաւ քու բոլոր ա«ղէտիդ հեղինակն, ով էր այն խորհրդաւոր, ըսեմ յան«ցեալարտ անձն՝ որ վայրկեան մը, քէմպրիճի ուսումնարանն «պտնուած առենդ՝ կարճ գրով մը քեզի երևեցէն եաև՝ ան«երևոյթ եղաւ, խնայելով որ քեզի տարին 2—3 հարիւր «ոսկի սահմանուած է ապրուստիդ համար . . .»

«Կ'աղաչեմ, հանգարտ մտիկ ըրէ պատմելիքս, և ապա «տուր վճիռդ. համառօտ պիտի խօսիմ, բայց ամեն բան «պիտի խոստովանիմ, ես որ այս պահուս մահուան անկող«նոյս մէջ կ'պտնուիմ, և պահէ մ'Աստուծոյ առեանը պի«տի երևիմ:

«Ո՛չ մարդկային օրէնք ու բռնութիւն, ոչ մահուան ար«հաւիրք կ'զրգռեն զիս այս ծանր խոստովանութիւնն ընե«լու, այլ խիղճս, այլ արդարութիւնն, որու ձամբուն մէջ «քալած էի իմ բոլոր կենացս մէջ, ինչպէս որ հոգևլոյս, «ամենասիրտ հայրդ կ'վկայէ, սակայն պահ մը մոլորելով «սատանայի մ'առջև, ընկայ սոսկալի փոս մը, պատճառ ե«ղայ գառն աղետից և անօրէնութեան, և արդէն պատիժս «կ'կրեմ: Այս պատիժս այնքան յօժարամիտ կ'կրեմ որքան «որ ըրած յանցանացս համեմատութեամբ թեթև է, որչափ «որ սիրական էին ինձ այն անձինքը, զոր ակամայ մատնեցի:

«Շատ տարիներ առաջ՝ հօրդ՝ Ռափայէլի Մամիկոնեանցդ «առևտրական գործակատարն էի ի Լոնտոն: Երբ ինքն իր

«եղբօր՝ Դանիէլի հետ՝ Կալկադայէն քաղաքս եկաւ՝ զիս իր «գործոյ ընդհանուր վերատեսուչ կարգեց: Իր ձեռքէն վկա«յագիրներ ունիմ որ կ'հաստատեն իմ հաւատարիմ ծառա«յութիւնս: Զանազան ընտանեկան վէճեր սոսկացին զինքզ «նաև քակել առևտրական ընկերութիւնն իր եղբօրը հետ, «որ՝ անշնան, այլ հրապուրելի և չարանենգ օրիորդի մը սի«րահարելով՝ հետն ամուսնացաւ: Այս ամուսնութենէ կ'ըս«կսի քու դերդաստանիդ տարաբաղդութիւնն: Առաքինի ու «համեստ մօրդ՝ Վարդենիին մահն ահագին հարուած մ'ե«ղաւ հօրդ, որ քիչ ատենէն դրեթէ անդամալոյծ դարձաւ, «և բոլորովին իր գործոյ ղեկավը դրաւ ղիս: Զսիտի մոռա«նամ երբէք իր սա խօսքը. — Պարոն Քինկ, անբաւ ոսկի «ունիմ, բայց հոգիս կ'տառապի, մարմինս անկար է: Ե«րանի թէ Հայաստանի մէկ ատենին մէջ երկրագործ ապրէի «առողջ ու կորովի, քան թէ հիւանդ ու մեծատուն այս օ«տարութեանս մէջ, ուր չեմ կարող իմ ազգային, կրօ«նական ու ծնողական սպարտաւորութիւններս կատարել: Որ«գիս ներսէան հայկական դաստիարակութիւն չընդունիր, «ես չեմ ընդունիր հայ երէցի մ'օրհնութիւն, և եղբայրս, որ «արդէն մոլորած ու կորած է ազգիս համար, պատճառ ե«ղաւ իմ այս պանդխտութեանս և դերդաստանիս կորստեան:

«Սակայն մեծ է յոյսս յԱստուած և իմ միակ փափաքս է «գոնէ որդիս ազատել այս կորուստէն, և յուսամ որ դու «զիտի օգնես ինձ:»

«Եւ իրօք ամեն գժուարին պարագայի մէջ իր խորհրդա«տուն և աջակիցն էի: Դու, Ներսէս, իմ աչքիս տակը «մեծցար, քեզ զատկէս չէի զատեր: Հայրդ վերջին ժամուն «իմ խնամոցս յանձնեց քեզ, և տեսպրեց որ կտակիդ «մի դործ դնեմ եաև՝ քեզ առնեմ Հայաստան հայրենիքդ «տանիմ:

«Ափսո՛ս, ինչպէս այս բանաւոր, նոյնպէս դրաւոր կամքը «չկրցայ կատարել, և կրկին մեղապարտ եմ: Աչքը գոյեց

«Հայրդ ընդ միշտ՝ իր վերջին օրհնութիւնը տալով քեզի,
«և իր գերեզմանը կ'դնուի Խոտհէմ գիւղի մատրան բակին։
«Անկէ կ'երևէր որ եղբայրն, մանաւանդ իր կինն, քա-
«րօլին, հօրդ մահուան կ'սպասէին որպէս զի քեզի հետ
«հաշտուին։ Եւ իրօք՝ շարաթ հազիւ անցած էր որ հօրեղ-
«բօրդ կինն մեղի եկաւ, սև սուգի մէջ մտած, իր փոքրիկ
«Ելիւի աղջկան հետ, որ այն ատեն հազիւ հինգ տարեկան
«էր, և խնդրեց՝ յանուն ազգականութեան, որ քեզ իր տու-
«ընը տանի, հոգայ, խնամէ, քանի որ օրը էիր, և կրթու-
«թեանդ փոյթ տանի։ Ես դէմ դրի, յայտնեցի իմ խնամա-
«կալութեան պաշտօնս և հօրդ վերջին կամքն, բայց քարօ-
«լին այնքան պնդեց, այնքան անուշ և գորովալի խօսքեր
«ըսաւ, յայտնելով որ հօրդ կամքն միշտ սիւսի աղաս լի-
«նիլ կատարել, եթէ դու իր տան մէջ խնամ մնաս, որ հաւա-
«նութիւն տուի և հետևապէս առաւ քեզ իր տունը՝ Լոն-
«ճոն տարաւ։ Նոյն միջոցին ես ստէպ քեզ տեսնելու կ'դայի
«և հօրդ գործերը կարգի դնելու կ'ջանայի։

«Քարօլին այնքան անուշութեամբ կ'վարուէր քեզի հետ,
«այնքան կ'սիրէր ու կ'գգուէր և քեզ իր յատուկ զաւկէն
«չէր զատեր, որ ես միամիտս սկսայ կարծիքս փոխել անոր
«վրայ և քիչ քիչ հաւատալ, որ արդարև բարի ու անկեղծ
«կին մ'է և կամ՝ որպէս սիրելով գորովալին կ'փափաքէր
հօրը դէմ գործած յանցանքը քաւել։ Միւս կողմէ դու ալ
«շատ գոհ և ուրախ էիր. Ելիւին՝ քու սիրական ընկերուհիդ
«դարձած էր. անոր հետ դաս կ'առնէիր տունը, կ'խաղա-
«կիր, և Քարօլինն իրեն մայրդ կ'սիրէիր։ Ես ալ ներքուստ
«կ'ուրախանայի, իրաւ, սակայն կ'նայէի որ օր ըստ օրէ անկ-
«ճիայի կ'դառնաս, հայերէն լեզուդ, զոր հօրդ ու մօրդ քո-
«վը սորված էիր, կ'մոռնաս։ Մանաւանդ շատ յաւ զգացի երբ
«օր մը Քարօլին քեզ հայկական անուամբդ Ներսէս կոչե-
«լու տեղ, Նէլսօն կ'անուանէր։ Պատճառն հարցուցի, ը-
«սաւ թէ աւելի դիւրին է անկլիացւոյ Նէլսօն հնչել քան

«թէ Ներսէս, և թէ այս անուան տարբերութիւնը նշանա-
«կութիւն չունի, նոյնպէս Մամիկոնեանց մականունդ՝ Մա-
«կինոյի փոխեր էր, նոյն պատճառաւ։ Սակայն զարմանքս ա-
«ւելցաւ երբ տեսայ որ տան երէցն քեզ դասատու կարգած
«էր, որպէս զի մեր դաստիանքը քեզի սորվեցընէ . . .։

«Քարօլինի այս ընթացքը կրօնական նախապաշարման հե-
«տևութիւն սեպելով և անոր մեծ կարևորութիւն չտուի։ Նա
«շատ քաղցրութեամբ կ'վարուէր ինձի հետ, և մերթ ընդ
«մերթ իր ընտանեկան գործոց վրայ խորհուրդ կ'հարցընէր,
«գիս իր մտերիմ բարեկամը կ'կոչէր և շարունակ իր զաւակ-
«ներուն ապագայ երջանկութիւնն իրեն իր միակ մտածմունքն
«ու փափաքը կ'յայտնէր ինձ։

«Այսպէս տարիներ անցան, ազնիւ Նէլսօն, բայց աւելի
«քաղցր է ինձ կոչել, ինչպէս որ կ'կոչէր քեզ հայրդ,
«Ներսէս, տիկին Խոտհէմի հովանաւորութեան ներքև, և
«օրիորդ Ելիւիի մտերմութեան և ընտանութեան մէջ կ'մեծ-
«նայիր։ Արդէն վեց եօթը տարեկան էիր, երբ օր մը լե-
«ռի Խոտհէմ՝ իր ամենէ սիրուն ժպիտն ու անմեղուկ երեսը
«ցոյց տալով՝ առանձին կանչեց զիս և ըսաւ. — Պարոն
«Քինկ, մեր զաւակները կ'մեծնան, կ'սիրուին, երկու ան-
«բաժանելի ծաղիկներու պէս նոյն պարտիզին մէջ կ'ծաղկին։
«Ահա երկու դողտրիկ սիրտերն իրարմէ զատել, մեղք է.
«թող անմեղութեան և սիրոյ մէջ իրեն երկու տատրակները
«զուրգուրան, յարին իրարու, մէկ հոգի, մէկ սիրտ լի-
«նին։ Կարծես թէ իրարու համար ստեղծուած են և միայն
«իրարմով պիտի կարենան աշխարհիս մէջ ապրիլ և երջա-
«նիկ լինիլ։ Ես միայն գանձ մ'ունիմ երկրիս վրայ, այս է
«Ելիւին, իմ հոգւոյս կեանքն, աչքիս լոյսն, որով միայն
«կ'շնչեմ։ Ուրիշ իղձ, ուրիշ փառասիրութիւն չունիմ այլ
«միայն անոր բարեբաստութիւնը տեսնել, իրեն յարմար հո-
«գւոյ մը հետ զինք կապուած տեսնել։ Եւ որո՞ւ պիտի տայի
«այդ քնքուշ ծաղիկը, լորի՞ մը, իշխանի՞ մը, անծանօթ

«մարդու մը: Ա՛հ, կ՚տեսնեմ և կ՚զատեմ արդի ամուսնու-
«թիւնները, զրեթէ բոլորն ալ հարստութեան, մեծութեան,
«փառասիրութեան հրապոյրն ունին իրենց գրգիռ. սէրն եր-
«կրորդական, երրորդական տեղ մը կ՚բռնէ արդի խնամու-
«թեանց մէջ: Չէ, չէ, ես չեմ կամիր կրակը, զեհէնը
«նետել իմ աղջիկս, ես կ՚ուզեմ փեսացու մ՚որու բնաւո-
«րութիւնը, վարքն ու բարքն ոչ միայն ինձ ծանօթ այլ և
«իմ սիրական Լիլիկս յարմար լինին: Շեմ փնտռեր ձախու-
«թիւն ու փառք, այլ պարզութիւն, համեստութիւն, դոր-
«ծունէութիւն և պատիւ: Լաւ ես ունիմ աղջիկս տալ ան-
«նշան այլ պարկեշտ և պատուաւոր մարդու մը քան թէ մե-
«ծի, շուայտ, ամբարտաւան լորդի մ՚որ անտարակոյս իմ
«զաւկիս հոգին պիտի խորտակէ, անոր գերեզմանը պիտի
«պատրաստէ, իմ զաւակս որ, ինչպէս կ՚դիտես, այնքան
«փափկասուն, զգայուն այլ հպարտ բնաւորութիւն մ՚ունի,
«և թեթեւ անհրաւութեան մը, անհրաւ ակնարկութեան մը
«առջեւ՝ կ՚ամփոփի ու կ՚դոյուի զգայնիկի մը պէս՝ երեկոյեան
«քամիէն: Ուստի, սիրելի Քինկ, թող այս երկու ընտիր սիր-
«տերն իրարու փարին, և թերևս օրին մէկն անոնց թագն
«ու պսակը տեսնենք: Կարելի է մեղադրես զիս որ այսպիսի
«փափուկ խնդրոյ մը վրայ կ՚մտածեմ, երբ տակաւին մեր
«զաւակները զրեթէ երեխաներ են, սակայն ես քիչ մը հե-
«ռուն կ՚տեսնեմ, աշխարհիս անշահ բաները գիտեմ և այժ-
«մէն անոր դառնութիւններէն իմ սիրասուն զաւակներս ա-
«զատելու կ՚փափաքիմ: Այս միութիւնն ուրիշ օգուտներ
«ալ պիտի ունենայ: Իմ ամուսնոյս և եղբօրը զերդաստանն
«անբաժանելի պիտի մնան, պիտի շարունակեն իրենց տոհ-
«մային յիշատակն ու յաջորդութիւնն և իրենց ունեցած նիւ-
«թական հարստութիւնն ու կալուածները՝ օտարներու ձեռակ
«տալու տեղ, իրենց մէջ պիտի պահեն ու զարգացընեն:
«Մաքենոյ զերդաստանի երկու ճիւղերուն մէջ խոիր չկայ,
«ինչպէս երկու եղբարք սիրով էին, նոյն սիրով պարտին

«մնալ և անոնց զաւակունքը: Իրաւ, ամուսինս այնքան հա-
«րուստ չէ, բայց Նելսօն իր անբաւ կալուածքն, որու տըն-
«տեսն ես, որոնք կրնայ արժանապէս նուիրել եթէ ոչ Լի-
«լիին:»

«Եւ լէտի Խստհէմ սկսաւ հարց ու փորձ ընել իր աղու-
«ձայնով թէ ինչ կերպ տնօրինած է հայրդ իր հարստու-
«թիւնը, ունի՞ կտակ, ո՞րչափ է կտակած գումարն, ո՞ր գրա-
«մատունը շահու գրուած է, ո՞ւր են իր անշարժ կալուա-
«ծոց յետկարներն: Եւ ես պարզմտօրէն իր անկեղծութեան
«հաւատ տալով՝ մի առ մի պատմեցի ամեն բան: Ցետոյ նա
«յարեց. — Պարո՛ն Քինկ, ես և դու գրեթէ օտար ենք
«Մաքենցի զերդաստանին մէջ. բաղդն այնպէս բերաւ որ
«պ. Ռափայէլի եղբօրը, Հայազգիի մը կինը լինիմ: Անոր
«քոյն ժառանգորդներն այս երկու մանկիկներն են, որ ահա
«վարը ծաղիկներու մէջ կ՚խաղան կ՚վազվզեն: Մենք անոնց
«սպասաւորներն ենք: Բայց մահը մեզի համար է. աւելի
«լաւ է առաջուց ամեն բան պատրաստել, անոնց ապագան
«ապահովել: Հետևապէս խոհեմութեան գործ մ՚ըրած կ՚լի-
«նինք՝ եթէ այժմէն Նելսօնի և Լիլլիին վրայ գրենք Մաքենց
«և Խստհէմի բոլոր ունեցուածներն, և օրինաւոր թղթերով
«այդ ժառանգական իրաւունքն անոնց անուան գարձընենք:»

«Շուարած մնացի այս կնկան առաջարկութեան վրայ: Եր-
«բէք մտքէս չէր անցներ որ երկու անմեղ էակներու ապա-
«գան իր փառամոլութեան խաղալիկ կ՚ընէր: Ի՛նչ սև սիրտ:
«Աղուէսի պէս կ՚քծնէր, կ՚շոյէր զիս, իմ առջեւս կ՚պար-
«զէր մէկ կողմէ քու, Ներսէս և Լիլլիին երջանկութեան տե-
«սիլն, միւս կողմէ ինձ հրապուրելի խոստումներ կ՚ընէր:
«Թէև առարկեցի որ ես՝ իբրև քու խնամակալդ կ՚ձանչցուիմ
«օրինաց առջև, թէև յայտնեցի որ Նելսօնի ու Լիլլիի տա-
«րիքը չեն ներեր որ ծնողական կալուածոց տէրը դառնան,
«թէև պնդեցի որ մինչև քու չափահաս լինելդ պարտաւոր էի՝
«իբրև կտակատար՝ հաւատարիմ մնալ ինձ յանձնուած

«աւանդին, և ապա՝ ըստ օրինի՝ հօրենական ժառանգութեան
«բուն տէրը հրատարակել քեզ, սակայն լէտի Խոտհէմ՝ որ
«շարունակ իրրև անձնուիրութեան և հոգասիրութեան ար-
«գիւնք կ'ներկայէր ինձ այդ առաջարկութիւնն, ամեն առ-
«թիւ զայն կ'կրկնէր, և կ'աղաչէր զիս որ հաւանիմ: Ձ'եր-
«կարեմ խօսքս, սիրելի Ներսէս, իր նպատակին դրեթէ հա-
«սաւ այդ անզգամ կինն, երբ անգամ մը հիւանդ լինելովս՝
«որպէս թէ զիս խնամելու համար օրերով իմ տունս մնաց
«և սկսաւ կինս յորդորել որ զիս համոզէ: Նոյն միջոցին
«այնքան հոգ, սէր ցոյց կ'ինձ, այնպիսի արտասուալի հա-
«ռաչներ կ'արձակէր իմ մնարիս մօտ, և իմ բժշկութեանս
«համար կ'աղօթէր, և բժիշկ բժշկի վրայ բերել կ'տար որ
«զիս նային և դարման մը գտնեն, որ ի վերջէ բոլորովին
«կասկածներս փարատեցան լէտի Խոտհէմի վրայ և այս հա-
«մոզումն ունեցայ որ նա արդարև գարձի եկած է և սրտա-
«վին Լիլիի և քու երջանկութեանդ ջերմ պաշտպան և հո-
«գատար է: Ուստի՝ առանց բարեյիշատակ հօրդ բնաւիր կտակն
«անոր տալու, միայն մեր նօտարին միջոցաւ թէ' դրամատունը
«գտնուած ժառանգական ահագին դումարդ և թէ ուրիշ կա-
«լուածագրեր անոր անուան գարձուցի, այս պայմանաւ որ
«երբ չափահաս լինիս բոլորը քեզի յանձնէ: Ա՛յս որոշումս
«ոչ միայն լէտի Խոտհէմի թախանձագին աղաչանաց հետևանքն
«այլ և իմ վտանգաւոր հիւանդութեանս բերմունքն էր: Կար-
«ծէի թէ պիտի մեռնիմ, և չէի ուզեր անկանոն վիճակի
«մէջ թողուլ գործերդ: Եւ որո՞ւ կրնայի աւելի վստահիլ,
«եթէ ոչ այն անձին որ՝ թէև ինձ բաւական ժամանակ կաս-
«կածելի, վերջէն իր կեղծուպատիր վարմունքով, վստա-
«հութիւնս յափշտակեր էր: Բայց ես իմ բոյս դատ, յու-
«սահատ վիճակի մէջ ըրածիս վրայ մտածելի, և քիչ
«քիչ սթափեցայ, մանաւանդ երբ դիտեցի որ Քարօլին,
«այդ անարժան կինն՝ սկսաւ իզմէ պաղիլ, իր առջի մտերմա-
«կան կերպերը փոխել, և ամէն իմ ներկայութենէս խոյս

«տալ: Ո՛հ, դղջացի ըրածիս վրայ, ողբացի իմ միամտու-
«թեանս վրայ բայց շատ ուշ, և խոր կսկիծ մը, մելամաղ-
«ձութիւն մը պաշարեց զիս: Շատ անգամ մտապընդի սիրտս,
«վերքս բանալ ցոյց տալ տոքթօր Բէյնի, որ լէտի Խոտ-
«հէմի տան հին և պատուաւոր բժիշկն էր, բայց չէի հա-
«մարձակեր յուսալով որ անուշութեամբ պիտի կարենամ
«յորդորել լէտի Խոտհէմն որ նուիրական պահէ լուսահոգի
«հօրդ ժառանգութիւնն, զոր սկսեր էր իր զբօսասէր և փա-
«ռասիրական համբոյից համար վատնել: Ա՛յնուհետև իր տունն
«ապարան մը, իր սեղանը շռայլութեան շեմարան մ'եղաւ,
«իր յարաբերութիւններն աղնուապետական կերպարան մ'ա-
«ռին, այնպէս որ իր հին ծանօթներն ու բարեկամներն,
«ինչպէս և զիս դրեթէ վէսօրէն կ'ընդունէր: Համբերութիւնս
«հատաւ և օր մը բացէ ի բաց ըսի լէտի Խոտհէմի որ իր
«ընթացքն անմեկնելի է ինձ, և թէ պիտի ստիպէ զիս ամեն
«բան յայտնել և պ. Ռափայէլի ժառանգութիւնն օրինաց
«ուժով ետ պահանջել, քանի որ ես էի օրինաւոր աւանդա-
«պահը: Լէտի Խոտհէմ քեզի տակէն խնդաց և սպառնաց
«ամեն յարաբերութիւն կարել իմ հետ եթէ այսպիսի յան-
«դուգն խօսքեր վերստին ընդէ: Կ'մնաչէի, կ'ուտուէի այս
«չարաճճիդ կնկան պաղ և անզգուշելի գուռզութեան ու
«լրբութեան վրայ, սակայն կ'համբերէի:

«Բայց ի զուր. թակարդն ընկած էի, և իմ յիմարու-
«թեանս մեծութիւնն ու հետևանքն աւելի ևս զղջայի երբ օր
«ա՛յնձ ըսաւ թէ՝ քեզ առնեմ և տունս տանիմ: Չէի կա-
«րող հատաւ լսածիս. կարծէի թէ կատակ կ'ընէ լէտի
«Խոտհէմ, և սակայն գլխէս պաղ պաղ ջրեր թափեցան,
«երբ օր մը քեզ տեսայ մեր տունն, ուր Լէտի Խոտհէմի
«կողմէ ղրկուած էիր, տոմսակով մը, որ պաշտպի պէս հո-
«գիս ծակեց: Ա՛յդ տոմսակը կ'յայտներ թէ՝ լէտի Խոտհէմ
«չէ կարող այլ ևս իր տունը պահել օտար պատանի մ'ա-
«ռանց իր աղջկան անուան աթոռ բերելու: Ինչոյն ըրա Խոս-

«Հէմի ապարանը գայի բացատրութիւն խնդրելու, և մեզ
«բոլոն թէ տիկինն անտեսանելի է։ Տուն դարձայ հիւանդ և
«անկողնոյն ընկայ։ Իսկ դու ներսէս՝ թէև գլխուս վրայ տեղ
«ունէիր, բայց խղճիս վրայ ահագին բեռ մ'էիր։ Դու դեռ
«ևս մանուկ մը չէիր կարող իմանալ այս դժոխային դար-
«ձուածներն, և միայն կ'լայիր, որ քու սիրական ընկերու-
«հի, Ալիլիէդ բաժնուեցար։ Տասն օր անկողնին պառկեցայ,
«սակայն տաս տարուան կեանքս կորուսի։ Մաղերս լիովին
«ձերմկցան երկու օրուան մէջ՝ և ես՝ գրեթէ ծերացած վեր-
«ջին փորձ մ'ըրի և յաջողեցայ ներկայիլ լէտի Իստհէմի,
«որ գիս գրեթէ չճանչեց այն հիւանդոտ վիճակիս մէջ։ Կար-
«ծեցի որ պիտի դուրը շարժի, և ինչ որ արդարութիւնը
«չկրցաւ ընել կարեկցութիւնը պիտի կատարէ, բայց կ'սխա-
«լէի։ Նա իմ աղաչանքիս ի պատասխան ըսաւ. — Եթէ
«չես կամիր Նելսոնը տունդ պահել, ղրկէ Քէմպրիճի հա-
«մալսարանը, Թող այն տեղ ուսմունք սորվի, ապա ար-
«հեստի մը հետևի։ Ես ալ շատ շատ 240 լիբա սահմանի
«կրնամ կապել անոր իբրև թոշակ, զոր Պանքայէն մշտա-
«պէս կ'ստանայ։ Ուրիշ խօսելիք չունիմ։» Իմ լեզուս ալ
«կապուեցաւ բերնիս մէջ, ներսէս, չկրցայ բառ մ'արտա-
«սանել, այնքան զայրացած էի, և սպառնական ակնարկ մը
«նետելով լէտի Իստհէմի վրայ՝ հեռացայ։ Տարի քեզ գի-
«շերօթիկ դպրոց մը, ուր երբեմն կ'դայի քեզ տեսնելու։
«Այն ատեն լինն տարեկան էիր։ Պատուիրեցի վերատեսչին
«որ բոլոր պիտոյքդ լիուլի հոգան և բան մը չզլանան քեզ։
«Ձորս հինդ տարի անցնելէն ետև՝ քեզ Քէմպրիճի համա-
«լսարանը փոխադրեցի, ուր բաւական ժամանակ մնացիր։
«Նոյն պահուն լէտի Իստհէմը հաւատքի բերելու կ'ջանայի,
«մինչդեռ նա ստակով զիս որսալ կ'ուզէր, և անդամ մը հա-
«զար ոսկիի չէք մը առնես ղրկեր էր։ Այդ դումարը քու
«համալսարանի ծախուցդ յատկացուցի՝ որ իբրև լրացի որ-
«դի նային քեզ, և միանգամայն խնդրելի որ քեզի հայերէն

«ուսցընեն։ Դու սիրով հետևեցար այդ լեզուին և դասատու-
«ներդ կ'զարմանային ընդունակութեանդ վրայ։ Բայց ես ձա-
«կատ չունէի քեզ երևելու, և երբ համալսարանէն եկնե-
«լու ժամանակդ հասաւ, լէտի Իստհէմ խօսք տուաւ ինձ
«վերջապէս քեզ արժանի պատուով ընդունիլ՝ եթէ քեզի
«չյայտնեմ ծագումդ։ Թշուառութիւն և չքաւորութիւն պա-
«շարած էին զիս, և իմ մէկ մեծ տկարութիւնս այս եղաւ
«որ լէտի Իստհէմի ապարանին մէջ պաշտօն, մատակարա-
«րութեան պաշտօն մը ստացայ, այնպէս որ ակամայ անոր
«ծախուեցայ, միշտ երեսս քեզմէ պահելով։ Վերջին անգամ
«գրեցի քեզ՝ երբ Հարկ եղաւ Քէմպրիճի համալսարանէն
«քեզ հանել։ Սրտագող դրեցի այդ դիրն զոր անշուշտ պա-
«հած ես, և որ կոչում մ'էր բոլոր առնացի զգայմունքիդ,
«անվեհեր նետուելու աշխարհ և՝ կենացդ պայքարն սկսե-
«լով՝ ապագադ յարդարելու։ Չէի կարող աւելի պարզ խօ-
«սիլ, չէի կամեր այն ժամանակ ամեն դաղտնիք յայտնելով՝
«սրտիդ վրայ խոց մը բանալ և պատանեկան աւիւնդ մարել։
«Գիտէի որ վէս ու աղնիւ բնաւորութիւն մ'ունէիր, դու-
«շակած էի որ օրին մէկը հօրդ արժանի զաւակը պիտի լի-
«նէիր։ Եւ չէի սխալած։ Թէև անյայտ՝ քեզ կ'դիտեի հե-
«ռուէն և կ'ուրախանայի դոնէ որ դառն ու աղէտալի պա-
«տահարներու անտեղեակ ես։ Եւ ինչպէս կարող էի երևիլ
«քեզի, քանի որ իմ՝ թոյլութեամբս, իմ տկարամտու-
«թեամբս կերպով մը մեղսակից էի լէտի Իստհէմին։ Կ'խոս-
«տովանիմ ահա յանցանքս, և Աստուծոյ դատաստանին չեն-
«թարկած՝ կ'կրեմ արդէն իմ ծանր պատիժս։ Նոյն միջո-
«գին՝ թէև լէտի Իստհէմի իշխանութեան ներքև, թէև ա-
«նոր սատարութեամբը կ'ապրէի, բայց քեզ չէի մոռցած,
«ներսէս, և ամեն պատեհ առթիւ քու իրաւունքդ ձեռք
«ձգելու և դոնէ ստացուածքիդ մէկ մասն ազատելու համար
«ամեն ճիգս կ'թափէի։ Այս իմ թախանձանքս զայրացուց
«լէտի Իստհէմը, երեսէ ընկայ։ Գլխովին հեռացուց զիս իր

«տունէն և պաշտօնէ, և բանադատեց զիս հեռաւոր անշուք
«գիւղ մը բնակելու, իմ բոլորտիքս լրտեսներ դնելով։ Չէի
«կարող քայլ մ'առնուլ, խօսք մ'ըսել, շարժում մ'ընել ի
«նպաստ քեզ, առանց մատնուելու։ Փաստաբանները դի-
«մեպի, խորհուրդ հարցուցի, բայց անօրէն կինը քան զիս
«զօրաւոր էր, և զիս միշտ կ'Ճզմէր, օրէնք և արդարութիւն
«ծախու կ'առնէր։ Ես պրեթէ մոլորած մարդ մը դարձայ,
«նա մանաւանդ՝ չգիտեմ ինչ պատճառաւ՝ խստութիւնն ու
«հալածանքն այնքան աւելցուց ինձի դէմ՝ որ վրաս ցնորք
«եկաւ։ Այս վիճակս իրեն նպաստաւոր էր, և աւելի գաւ՝
«զիս իրրև իրեն հին գործակատարն և մատակարարը նկա-
«տելով՝ բժիշկները ղրկել ինձ որ խնամեն։ Սակայն բժիշկ-
«ներն իր մարդիկն էին, և անոնց տուած դեղերը կ'մերժէի։
«Բայց անողոքելի էր այդ չարաճիտ կինն, և՝ թէև յուսա-
«հատութեան տպնապն էր որ զիս կ'նեղէր, բժիշկները տե-
«ղեկագիր տուին որ խելագար եմ, և բոնի զիս հիւանդա-
«նոց մը փոխադրեցին, նոյն իսկ կինս համոզելով՝ որ վտան-
«գաւոր էր իմ բնակութիւնս իմ յատուկ տանս մէջ։ Խելա-
«գլխի մարդն անգամ կրնայ ցնորիլ այս սոսկալի անօրէնու-
«թեանց մէջ, թող թէ ես, ես որ արդէն սկսած էի տան-
«ջուիլ խղճի խայթով և մահն իմ վշտաց սփոփանքը կը
«համարէի։

«Սակայն անպատիժ չպիտի թողուի այդ կինը, և արդէն
«պաղտնի մարդ մը, հոգի մը կ'փնտռէի որպէս զի վերջա-
«պէս ամեն բան քեզի յայտնեմ և լուսահոգի հօրդ կատա-
«կին հետ, որու բնակիլը դոնէ պահած էի մասունքի պէս,
«իմ աղէտից նկարագիրը քեզի հաղորդեմ շունչս չ'տան-
«գած։ Ուստի նոյն պրեցի այս գիրս, որ կասկ է, և՝ ե-
«թէ ոչ կենդանութեանս, մահուանէս ետքն անգամ քեզի
«պիտի հասնի՝ եթէ ողջ ես, այն տուփին հետ որու մէջ
«կ'գտնուի նաև սիրական հօրդ կտակագիրը։ Գիւղիս տան
«երէցն պ. Պէյ, իմ խոստովանահայրս և տանդաստան,

«որ Աստուծոյ վրայ երդում ըրաւ՝ ամեն կարելի միջոց ի
«գործ դնել և ի հարկին կառավարութեան իսկ դիմել, այս
«թուղթս ու կտակը պարունակող տուփը ձեռքդ հասցընել
«. . . : Ես մեղաւոր եմ, սիրելի Ներսէս, այս տխուր հի-
«անդանոցին մէջ՝ ուր Ճիւաղներ պաշարած են զիս. կեանքս
«կ'մաշի և մահս մօտալուտ է, ուստի կ'աղաչեմ և քեզ, Աս-
«տուծոյ առեանը չելած՝ ներել ինձ և իմ երեսէս կրած տա-
«ռապանացդ համար զիս չանիծել։ Մեծ է Աստուծոյ ողոր-
«մութիւնը, մանաւանդ անհասանելի՝ անոր արդարութիւնն,
«և լի յուսով կ'հաւատամ որ օրին մէկն անզգամները պիտի
«պատժուին, եթէ արդէն չեն տանջուիր իրենց խղճի խայ-
«թով, և դու անմեղ, աչնուասիրտ պատանի, պիտի յաղ-
«թանակես և քու հօրենական իրաւանց պիտի տիրանաս . .
«. : Ուստի ներէ կ'աղաչեմ. . . :»

184... Վ. ՔԻՆԿ

Ահա, բարեկամ, պ. Քինկի նամակն, որ կարծես թէ դամբանական աղիողորմ մրմունջ մ'է։ Խեղճ ու թշուառ մարդ, իր անկեղծութեան և դիւրահաւանութեան զոհ ընկեր է։ կ'ներեմ իրեն, վասն զի անգիտութեամբ գործեր և ընկեր է նենգաժէտ կնկան մը ծուղակն, որմէ ես ինքս անգամ քաշուեցայ։

Պ. Քինկ՝ ինչո՞ւ համար յիշատակած երէցին չկրցաւ յանձնել տուփն, յայտնի է։ Քու դիրերդ, պարոն Վ.ուտ, կը բացատրեն այս կէտն, և պ. Քինկի նամակին վէրջին յաւելուած մը կ'կազմեն։ Թշուառ ծերունին եթէ կարողութիւն ունենար պիտի լրացընէր անշուշտ իր վիրն իր յեսին ժամուն։ պ. Բէյնի և քեզի հետ ունեցած տեսակցութիւնը գրելով, նոյնպէս լէտի Իսահէմի գաւերը։ Աստուած ողորմի հոգուն։ Կարևորն ինձ համար հօրս կտակն է, որու համար շնորհակալ եմ պ. Քինկի։

Կարող ես երևակայել, սիրելի Վ.ուտ, որ եթէ հօրս կը-

տակը ծածուկ պահեցի Լիլիէն, ևս առաւել պարտաւոր էի պահել Պ. Քինկի գիրն, որ անտարակոյս սաստիկ այլայլութիւն և աղէտալի տպաւորութիւն մը պիտի ընէր սիրական Լիլիս վրայ: Թող նա անմեղ տգիտութեան մը մէջ ապրի և միայն զուարթուն ու խնդալի իրերով և տեսիլներով հրճուի, մինչև մեր միութեան օրը: Վերջէն ամեն բան կրնայ իմանալ, առանց վտանգի, վասն զի իմ հոգիս անոր սնունդ և թևս անոր վահանը պիտի լինի:

ՆԱՄԱՆ ՀԹ

ՆԵԼՍՕՆ ՍՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Մի, մի գրեր ինձ, սիրելի Վուտ, թող որ ես խօսիմ, թող որ շունչ առնում, սիրոս բանալով, վասն զի վերստին բոցերու և մխերու մէջն եմ, կ'երիմ, կ'խղդուիմ: Է՛հ, բաւական չեղան քաշածներս: Ի՛նչ նոր թումբեր, ինչ նոր ամբարտակներ կ'ելլեն իմ առջևս, և իմ երջանկութեան ճամբաս կ'գոցեն. չէ, չես կարող երևակայել: Կրնայի երազել որ վաղն յանկարծ մեռնիմ, որ Պոսֆորի կոհակներուն մէջ թաղուիմ, կրնայի հաւատալ որ երկիրս արևուն մէջ գլորի ու անհետի, որ Թուրքիա Անգլիա դառնայ և Հայաստան հին աւանդական դրախտը, սակայն բնաւ երբէք չէի կրնար երազել իսկ ինչ որ այժմ կ'պատահի . . .:

Դեռ երեկ կ'մտածէի որ վերջապես երանութեան պսակը գլուխս պիտի դնեմ, ինչպէս սիրոյ կապով, նոյնպէս կրօնի

խորհրդով պիտի կապուիմ Լիլիին հետ, և ցմահ անլուծանելի պիտի միանան մեր երկուքին հոգին ու կեանքն, այսօր ահա անդունդ մը կ'պահավիժիմ յուսահատ և կ'ըսեմ իւրովի. — Չէ, չկայ, չպիտի լինի ինձի համար յարատև հանգիստ, երջանկութիւն: Գրեթէ ընկեցիկ էի, երբ դեռ ևս մանուկ, թշուառ էի՝ երբ պատանեակ, թափառիկ՝ երբ երիտասարդ, և հիմակ որ արբուն հասակս մտայ, հիմակ որ ապրելու, կեանքը վայելելու անհուն իղձ ու փափաք ունիմ, հիմակ որ բոլոր տառապանացս փոխարէնը կ'յուսայի ընդունել, ընդգրկելով Լիլին, հոգիս անոր հոգւոյն լծորդելով ընդ միշտ, և ահա անակնունելի, աներևակայելի, անիմանալի վէիս մը, երկնային պատգամ մ'աւելի անողոքելի, կ'ըսէ ինձ. — Չէ, դու չես կարող միանալ Լիլիին հետ, չէ, Լիլին չէ կարող կինդ լինիլ. . . .» Հաւատալի է այս . . . : Եւ ո՛վ կ'արձակէ այս վճիռն, ո՛ր մարդը կ'յանդգնի, ո՛ր իշխանութիւնը կ'ժպրհի սիրոյ բովին մէջ հալած, աղէտից մէջ սրբացած երկու հոգիներ իրարմէ բաժնել: Ո՛ր օրէնքը կրնայ բաժնել նիւթապէս, ինչ որ արդէն անբաժան է բարոյապէս . . . . : Է՛հ, բարեկամ, կրօնական օրէնքը, կրօնն, որու աղբիւրը պիտի լինի հոգի, սէր, կրօնը կ'հալածէ, քակել կ'հրամայէ այդ հոգին ու սէրը, և ինչո՞ւ, վասն զի Հայաստանեաց եկեղեցին, որու այժմ կ'պատկանիմ, որու էութեան, մեծութեան սիրահար և իրաւանցը պաշտպան էի, Հայաստանեայց եկեղեցին աղգականներու մէջ ամուսնութիւնը կ'արգիլէ և Լիլին, արգէն յայտնի է, իմ հօրեղբօրս Դանիէլի դուստրն է, իմ արեւնակիցս է . . . : Այս ինչ շանթ է որ գլուխս ընկաւ, և ինչո՞ւ ես Հայ եմ. . . : Եւ միթէ Հրէից եկեղեցին, Անգլիականն, Հռոմէականն ունի այդպիսի արգելք մը, միթէ բնութեան օրէնքն, որ գերի վեր է քան ամեն մարդկային եկեղեցի, չը՞ներեր այդ միութեան . . . ա՜հ, կ'մոլորիմ, կ'զայրանամ, և չեմ կարող իմանալ թէ արդեօք Հայոց եկեղեցին աւելի մեծ, աւելի

բարձր հեղինակութիւն ունի, միթէ բնութեան գաղտնիքն ու ազգականութեան յարակցութեանց անպատեհութիւնները ա-ւելի՛ լաւ քննած է, միթէ ունի՛ իրաւունք իմ հոգիս մարմինս կորզել և զիս մեռելութեան դատապարտել, միթէ նոյն իսկ մեր սէրը զբաւոր ապացոյց մը չէ՞ Եկեղեցւոյ դրած անբնական օրինաց դէմ, որ պատ մը կ'ուզէ քաշել իմ և Լիլիի մէջ, քանի որ՝ իբրև օտար՝ զիրար սիրելէ ետև, այսօր՝ իբրև ազգակից՝ զիրար սիրելէ չենք դադրիր: Կրակը ջրի մէջ կ'մարի, հրաւառ հոգիս պէտք է մարեր պաղէր ազգականութեան յայտնութեամբ, որպէս զի բնութեան օրէնք մը գանէի անոր մէջ: Այլ՝ ընդ հակառակն, այս նոր կրնայլն հրամանն աւելի ևս կ'մոլորէ զիս, աւելի կ'հրահրէ հոգիս, և ինչ որ անարատ ու սուրբ էր ինձի համար, այսօր թերևս պղտորէ, և օրինաց բռնութիւնն իմ պատուասէր ու առաքինական ընթացքս խոտորէ . . . :

Բարեկամ, ենթադրելով անպամ որ բնախօսական և առողջապահական ինչպէս նաև աստնին և ընկերական պատճառներ կան որով Հայաստանեայց եկեղեցին ազգակցական միութիւնը կ'մերժէ, իբրև վնասաբեր, վտանգաւոր և անբարոյական, սակայն միթէ ամեն օրէնք իր բացառութիւնը չունի՛, թող թէ այս պարագային մէջ բնութեան ձայնն ու ձկտումն աւելի հզօր է քան թէ մարդկային հիմնարկութիւն, թող թէ մեր սէրն անմեղութեան և փոխադարձ վստահութեան սահմանը չէ անցած և աւելի պաշտելի ու նուիրական է քան թէ այդ Պատրիարքարանի վճիռը, թող թէ մարդկային և շահապատական նկատումներու, մեծութեան և փառաւորութեան միտումներու արգիլունք չէ այս սէրն, այլ պարզապէս երկու համակիր և բնակից սիրտերու, որ իրարու կ'հակին, ինչպէս կ'հակի արևածաղիկը լոյսին . . . :

Հիմակ, ազնիւ բարեկամ, պատէ, երևակայէ թէ ինչ անբերելի վիճակ մ'է իմն, նկատէ թէ ինչ զայրոյթ, սոսկում կ'զգայ մարդ՝ երբ անհամար գժուարութեանց յաղթելէն ետև՝ գրաւոր օրէնքի մ'առջև կայ կ'առնու, ճշդիւ այն միջոցին որ իր նպատակին պիտի հասնէր, մտածէ թէ ինչպէս այդ օրէնքը կարող է երկու հոգի մահու գատապարտել անդէտս, վասն զի՝ Լիլիի մոքին մէջ կասկածի ստուեր մ'անգամ՝ թէ իր սիրտը պիտի բաժնեն իմ սրտէս, կարող է անմիջապէս մահ պատճառել: Մարդկային ընկերական օրէնսդրութեան բացած վէրքերը մեր հոգւոյն մէջ բաւական չէին, հիմակ կրօնականն ևս, որ այդ վէրքերը գարմանելու, սիրայօժ բնաւորութիւններ իրարու հետ յօժարամիտ կապելու, մարդկային աղէտ ու տառապանք սփոփելու և անդորրութիւնը յուզեալ ու թշուառ էակներու մէջ պաշտօն ունի, այսօր կ'եկնէ և այդ նուիրական պաշտօնին հակառակ կ'վարուի և կ'ըսէ . — Ես կ'լուծեմ այդ սիրայօգ կապը, կ'սպաննեմ այդ կապով միացած մարմինները . — ինչ անագորոյն վճիռ, ինչ դաժան վճիռ: Կարող եմ այդպիսի վճիռ մ'անգոնանել, կարող եմ արաքուր կոխել և անդին անցնիլ, սակայն ուշ է, ուրիշ զգացմունք, ուրիշ նկատումնք, անձնական պատուոյ և հայութեան պատուոյ զգացումն կ'արգիլեն զիս այդ յանդուգն քայլն առնլու, սակայն դեռ ևս յոյս ունիմ, առանց սէրս և պատիւս վերաւորելու, առանց Եկեղեցւոյ կանոնին դէմ բայե ի բաց ընդվիզելու, ելք մը գանել:

Սիրելի Վ . . . ա, սիրտ չունիմ երկար պատմել Հայոց Պատրիարքարանի հետ ունեցած բանակցութիւնս: Արդէն գրած գանգատներս և վիշտերս անոր արդիւնքը գուշակել տուած են քեզ: Երկու խօսքով ամփոփեմ: Քու խորհուրդդ բռնեցի. Հայոց Պատրիարքին գացի. ցոյց տուի իմ Թղթերս զոր իբրև վաւերական ընդունեց և մեծ ուրախութիւն զգաց որ իր մէկ կորսուած ոչխարը կ'գտնէ:

Պատկառելի ծերունի մ'է Պատրիարքը, շատ յարգ ունի, իբրև անբիծ ու սուրբ մարդ, թէև ամիրաները զինք չեն սիրեր, վասն զի՝ ժողովրդեան զաւակ, քիչ շատ ժողովրդեան իրաւունքը պաշտպանելու հակամէտ է: Իրաւ է որ

իր բոլորտիքը գտնուղ խորհրդականները շատ ուղիղ մարդիկ չեն, և՝ լսածիս նայելով՝ հռոմէական դաղափարներով ներկուած կ'երեւին։ Թէև ազատամիտ՝ Պատրիարքը եկեղեցական օրինաց ջերմ պաշտպան է, թէև այդ օրէնքը թէ կրօնական և թէ աշխարհական սաէպ կ'դրժեն, բայց նա կարծէ որ՝ իբրև Պատրիարք՝ պարտաւոր է անոնց դասին և ոգւոյն դէմ չգործել։ Իրաւի՝ Հայք իրենց չունեցած առաքինութիւնները կ'պահանջեն որ իրենց հովիւներն ունենան, այս է արգարասիրութիւն, վարուց անարատութիւն, կանոնապահութիւն, և երբ հովիւ մը, և մանաւանդ Պատրիարք մ'անոնց դէմ թեթեւ յանցանք մը գործէ, իսկոյն ոտք կ'ելլեն և զանի կ'քարկոծեն, որպէս թէ երբ Պատրիարք մ'առաքինի է, բոլոր ժողովուրդն առաքինի կ'լինի, որպէս թէ երբ Պատրիարքը կ'գործէ բոլոր ազգը կ'գործէ, որպէս թէ ազգին Ճակատագիրն, յառաջադիմութեան կեդրոնն և նոյն իսկ ազգութիւնն անոր վեզարին ու պատանին վրայ է։ Այսպէս կ'վարուին՝ սովորաբար՝ այն ժողովուրդներն որ անկեղծութենէ, ազատասիրութենէ զուրկ են, և իրենց հաշմութիւնները փիլոնին ներքև վարագուրելու տրամադիր։

Հայոց Պատրիարքի այս դիրքն և Հայ ժողովրդեան այս յոռի տրամադրութիւնն ի հարկէ նպաստաւոր չպիտի լինէին իմ նպատակիս։ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնագիրը կամ ինչպէս կ'ըսեն, Մաշտոցը, պատառ պատառ ըրած էին Հայք, և միայն անոր ոսկեզօծ պատեանը Պատրիարքին ձեռքը տուած էին որ պահէ ու պաշտէ։ Ուստի երբ՝ իմ ազդարանական թղթերս և հօրս կտակագիրը Հայոց Գահակալին ցոյց տալէն ետև՝ յայտնեցի նաև իմ հաստատ իղձս ու նպատակս՝ Լիլիին հետ նշանուիլ և կարգուելու, իր աչքերը խոշոր խոշոր բացաւ իմ վրաս, և սրտապին խնդութենէ՝ կերպ մը սրբազին դայթակղութեան և տրտմութեան մէջ ընկնելով, գոչեց.

— Ո՛րդեակ, այդ կարելի բան չէ. մեր եկեղեցին բացէ

ի բաց կ'արգիլէ այդ սրբապղծութիւնը, այդ շնութիւնը։»

Այս բառը ծանր էր. քստմնեցայ դողացի և ըսի վէսօրէն.

— Սրբազան Հայր, կշռեցէք, կ'աղաչեմ, ձեր խօսքերը, և մի պղծէք ձեր բերնով սէր մ'որ սուրբ է, անգին է։

— Ես, ես չեմ ըսողն այդ, յարեց շուտ մը Պատրիարքն, այլ օրէնքին ոճով կ'խօսիմ։

— Անհեթեթ է այդ օրէնքն և մեր սէրն անմեղ . . . ։

— Մեր օրէնքն ևս անմեղ է, ըսաւ Պատրիարքը շեշտելով, եթէ Հայ ես, պարտաւոր ես ընտանեկան սրբութիւնը պաշտել, եթէ միայն անուամբ Հայ կ'զտնես ու սրտով անկրեցայն կ'մնաս, թող այդ անունն ալ պակսի մեր մէջ՝ ինչպէս պակսած են մի շատ անհարազատ և օտարասէր Հայոց անուններ, բայց մեր եկեղեցին և անոր կանոններն անսասան են, և ճշմարիտ Հայք անոնց հաւատարիմ, ինչպէս որ էր քու լուսահոգի Հայրդ Ռափայէլ, նա որ իր կատիվ կը պատուիրէ քեզ Հայութեան մէջ ապրիլ և Հայ օրիորդի հետ ամուսնանալ. կայ քեզի համար ասկից աւելի նուիրական պատգամ մ'որ դերեզմանին մէջէն կ'խօսի . . . ։»

Սիրելի վ.ուտ, Պատրիարքին այս վերջին խօսքը բոլորովին ուժաթափ ըրաւ վիս. ամօթապարտ մնացի։ Աշխարհիս բոլոր օրէնքներն այնքան ներգործութիւն չունին իմ վրայ, որքան հօրս հրէտակն, և այդ հրէտակը կ'հրամայէր ինձ — Մէյր աչքային առանց երկնչելու հետապնդել ծալ։ Գլուխս ծռած՝ անմռունչ կ'սպասէի և թաշկինակովս ճակատս ու այտիս վրայ ընկած արտօսր մը կ'սրբէի՝ երբ Հայոց Պատրիարքը՝ ձեռս իմ վիճակիս կարեկցելով՝ մեր լռութիւնն ընդմիջեց ըսելով.

— Միթէ աղջիկ պակաս է քեզի համար, Պարոն Ներսէս, ամիրայի, պէյի, փաշայի օրիորդներ կան. ես քեզի դտնեմ մէկ հատ և կարգեմ։

— Սրբազան, աշխարհիս մէջ մէկ աղջիկ կայ ինձի համար, և այս է Լիլին։

— Բայց Լիլին հօրեղբօրդ դուստրն է, քոյրդ է . . .

— Իմ հոգիս, էութիւնս է . . . :

— Ուրեմն Հայու հոգի չէ . . . :

— Բնութեան գերազնիւ մէկ հոգին է, որ ի բնէ ներշնչեց իմս, թէև չգիտէ տակաւին որ Հայու աղջիկ է :

— Եթէ գիտնայ կ'հրաժարի այդ սէրէն :

— Կ'հրաժարի կեանքէն, Սրբազան :

— Ես չեմ կարծեր :

— Աւելի հաւանական է որ դուք ձեր կարգէն հրաժարիք քան թէ նա իր սրտէն, և այդ սիրտն իմս է :

— Ուրեմն ուրացիր Հայութիւնդ, և փափաքդ կատարէ :

— Իմ փափաքս է Հայ մնալ և Լիլին առնուլ : Մին պատիւս կ'պահանջէ, միւսը սէրս :

— Ուրեմն զոհէ պատիւդ սիրոյդ, վասն զի մեր եկեղեցին կ'մերժէ այդ միութիւնը . . . :

— Եթէ գիտնայիք իմ բոլոր պատմութիւնս, այդչափ խստութիւն չպիտի բանեցնէիք, Սրբազան տէր :

— Ինչ որ լինի պատմութիւնդ, չեմ կարող ոտնահար ընել օրէնքը . . . :»

Անկարելի էր, սիրելի Վուտ, իմ կեանքս պատմել և վիճաբանիլ կամակոր և օրինապաշտ ծերունիի մը հետ, որ մարդկային սիրտ, սէր ինչ է չգիտէր, և կարծէ առաքինական գործ մ'ընել երկու հոգի սպաննելով : Ուստի յարգանօք բարևեցի Պատրիարքն և սրտմտութեամբ դուրս ելայ : Եթէ կանխաւ գիտնայի որ այսպիսի դժուարութիւն մը պիտի ելնէր իմ առջևս, բնաւ չէի յայտներ որ Հօրեղբօրս Դանիէլի դուստրն էր Լիլի, և միթէ օրէնքն այն ժամանակ ինքնին պիտի չէ՞ր որ ապօրինաւոր ամուսնութիւն մը կ'սրբագործէ, միթէ պսակը պիտի կրնար մեր գլխէն, միթէ քահանային ձայնը պիտի կորէր, միթէ իմ երջանկութիւնս նուազ կատարեալ պիտի լինէր . բայց ինչ օգուտ, կենացս մէջ առաքինի և նենգութին միշտ ատած եմ, և մանաւանդ

այսպէս բանաւէր պարագայիս մէջ ուր ընդ միշտ և անկեղծօրէն երկու սիրտ և ձեռք զերար պիտի սեղմէին, ամենաթեթեւ կեղծիքն իմ պատուոյս և անուանս արատ մը պիտի համարէի : Եւ օրո՞ւ մտքէ կ'անցնէր որ այսպիսի անբիծ սէր մը՝ սիրոյ վարդապետին մէկ պաշտօնեային պիտի արատաւոր և անվաւեր սեպէր :

Բոլոր այս պարագաներն անյայտ են Լիլիին, սիրելի բարեկամ. չգիտէ ինչ կ'անցնի իմ և Պատրիարքարանի մէջ, չգիտէ անմեղ օրիորդն թէ վիհ մը կ'ուզեն վերստին բանալ մեր մէջ, և ամեն զգուշութիւն կ'գործածեմ որ իմ սրտայոյզ և ծանր վիճակս չգուշակէ :

Արդ՝ քեզի կ'թողում, սիրելի Վուտ, խորհիլ և հնար մը գտնել : Կրօնական է խնդիրը, և չկայ աշխարհիս մէջ աւելի կնճռոտ, աւելի տաղտկալի, աւելի անլուծելի խնդիրներ քան կրօնականներն որ միայն աւելութիւն, խաւովութիւն և ստէպ պատերազմներ գրգռած են ազգերու մէջ, առանց մարդկութեան մեծ օգուտ մը բերելու : Այս իմ նոր վիճակիս մէջ մոռցայ ամեն բան, մոռցայ իմ ժառանգական հաշիւս Լէտի Խատէմի հետ, մոռցայ Լիլիին իղձը վերստին Լանտօն գառնալու, թէև իր բուն հայրենիքը Հայաստան է, և ո՞ գիտէ ինչ պիտի զգայ, երբ իմանայ որ Հայու աղջիկ է . . . : Այս բաւական չէ . ուրիշ տանջանք մ'ունիմ, վիշտս աքօղելու, զուարթերես երևելու տանջանքը Լիլիին առջև, որ միշտ աչքիս մէջ կ'նայի, և երբ անոնց մէջ թեթև ցօղ մը, ձակտիս վրայ անձկան մեայլ մ'անգամ սեսնէ, կ'այլայլի, կ'վրդովի, և՝ վիզս կախուելով՝ պատճառը կ'հարցընէ : Եթէ պահ մը վարանիմ, եթէ հաւանական պատճառ մը չգտայնեմ, իսկոյն իր երկնագոյն աչքերը կ'ամպոտին, գեղաձիթաղ շրթունքը կ'դողդողայ և տատրակի պէս կ'մրմնջէ . — Նելսօն, շիտակ չես խօսիր և սիրտս կ'ծակես :» Հապա եթէ ամեն բան իմանայ, եթէ իմանայ որ մեզի համար կենացդ և մահու խնդիր մը կ'յուզուի,

արդեօք ի՞նչ պիտի լինի անոր զգայուն և փափուկ սիրտը, քեզի կ'թողում երևակայել:

Ուստի, կ'աղաչեմ, սիրելի վուտ, դրէ ինձ կարծիքդ, հնար մը գտիր և ազատէ զիս այս նոր փորձանքէն, զոր այժմ կրօնական իշխանութիւն մ'իմ առջեւս կ'հանէ:

ՆԱՄԱԿ ՀԳ

ՎՈՒԾ ՍՊ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Դեռ տղայ ես, Նելսօն, և ծերունի կրօնապետի մ'անիմաստ հրամանին վրայ ընդունայն կ'տագնապիս: Ի՞նչ կայ քու և անոր մէջ. ինչո՞ւ կ'խառնուին քու սիրոյդ, և ի՞նչ պէտք ունէր յայտարարել որ Լիլլին լծակիցդ պիտի ընես, բաւական էր միայն արձանագրել տալ անունդ Պատրիարքարանի տումարներուն մէջ: Հիմակ ի՞նչ կ'ուզես որ ըսեմ: Տգիտաբար ծուղակն ես ընկած, և Թերևս ազատիս մեծկակ դումար մը տալով: Հայոց Պատրիարքարանը դիւրաւ օձիքդ չպիտի թողու, եթէ դու անոր հրամանին հպատակելու միտում ցուցընես: Լորտի մ'անունը մեծ է, և անսպառելի դանձեր ունի Արևելքին աչքին, ուստի բնական է որ քեզ քիչ մը փետել ուզեն, թէև չգիտեն որ ժառանգազուրկ լորտ մ'ես, և հօրդ կտակն ի գործ դնելու անփոյթ:

Բայց կատակը մէկդի ձնայ և լրջաբար մտածենք: Ես ոչ կանոնական և ոչ աստուածաբանական խնդիրներու տեղեակ եմ, և չեմ կամիր լինիլ: Քու դատիդ ի նպաստ ուրիշ ազ-

դերու ամուսնական կանոններէն օրինակ բերելու հարկ չեմ տեսներ, այլ պարզապէս պիտի ըսեմ: Ամեն դժուարութիւն կ'վերնայ՝ երբոր կամիս և ուր որ կամիս, և Լիլլին քուկդ կ'լինի: Բացառիկ ու տարօրէն պարագաներ մարդկային որ և է օրէնք կ'ջնջեն: Սիրոյդ բոլոր պարագաները ոչ պիտի իմանայ և ոչ իմանալ պիտի ուզէ կրօնային իշխանութիւն մը, ուստի ի զուր մի՛ ճգնիր համոզելու և հոսանքին դէմ թիակ քաշելու, մանաւանդ նկատէ որ դու այժմ անոր ձեռքն որս մ'ես:

Մի՛ լար, Նելսօն, և մտածին դժուարութիւնները մի՛ հնարեր: Դու՝ աղգաւ ինչ որ լինիս, մտածէ որ ազատ մարդ ես, մտածէ որ մարդկային օրինաց արդիւնքն եղան տառապանացդ մեծ մասն, և վերստին վիզդ յօժարակամ այդպիսի օրինաց լուծին ներքև մի՛ դներ: Ոչ միայն անկլիական, այլ և շատ երկիրներու օրէնքը քեզի իրաւունք կ'տայ քաղաքային ամուսնութեամբ միանալու անձի մը հետ որ իր ազատ կամօք քեզի հետ իր կեանքը լծորդելու կ'փափաքի: Եթէ այս բաւ չէ, եթէ կ'ուզես որ քահանայ մ'անպատճառ գլխուդ վրայ կարդայ, դեղեցիկ օր մը, առ Լիլլին թևդ, իջիր՝ բայց ի Հայէ, առջևդ ելած մատուռ մը, ցոյց տուր ծննդեանդ վկայագիրը կամ հօրդ կտակագիրը, և կատարել տուր պսակդ: Հոգևոր հովիւն ուրիշ գործ չունի ընելու այլ միայն օրհնել ձեր սիրայօդ կապն և ձեզի երջանիկ կեանք մաղթելէն ետև՝ ոսկեղէն պարգևն ընդունիլ:

Աղգութեան, հայութեան խնդիր չկայ այդ միութեան մէջ, և ականջս չեն մտներ քու մի շատ մանրակրկիտ խղճահարական նկատումդ: Դու քէմպրիճի համալսարանի ուսանող, դու ազատութեան զինուոր, դու փորձառու մարդ, դու՝ մանաւանդ՝ Լիլլիի սիրահար, դու ինչպէս կ'տատամսիս, և իբրև մոլեռանդ կ'վարուիս այս փափուկ պարագային մէջ, ուր, ինչպէս կ'վկայէ սիրտդ, անխորհուրդ, կասկածոտ քայլ մ'անդամ կարող է շնաշխարհիկ էակ մը գերեզման իջեցը-

նել, և Մաքիկոնեանց դերդաստանը ջնջել։ Միթէ գու այդ-պիսի աղէտի մ'իրրև հեղինակ ինքզինքդ համարելէն ետև՝ պիտի կարենաս ապրիլ. ես չեմ կարծեր։ Քունդ սովորական, դեհիկ, պայմանագրական, շահադիտական սէր չէ, այլ բացառիկ պարագայից մէջ ծնած անջնջելի ու բնական համակրութիւն մ'որու ոչ միայն հայոց կրօնային իշխանութիւնն՝ իրազեկ լինելէն ետև՝ պարտաւոր էր պաշտպան կանգնել, այլ և նոյն իսկ լուսահոգի հայրդ պիտի քաջալերը լինէր, եթէ տակաւին ապրէր։ Եւ ի՞նչ կ'պատուիրէ քեզ հայրդ իր կտակին մէջ, Հայ օրիորդի մը հետ միանալ։ Բարեբաղդութիւն մը չէ՞ որ Լիլի Հայ օրիորդ մ'է, եթէ Հայ չլինէր ի՞նչ պիտի ընէիր։

Բայց Հայոց եկեղեցին չներեր եղեր, այս տեսակ ազգակցական խնամութիւններ։ Բարեկամ, ապրելու փափաքող եկեղեցի մը պարտաւոր է համակերպիլ տեղւոյն ու ժամանակին հանգամանաց, և եթէ քրիստոնէական եկեղեցին ու կրօնը դեռ ևս կ'շարունակուին, այս կեանքը կ'պարտաւորի մեծ մասամբ գտնուած միջավայրին յարմարելու ընդունակութեանը։ Հիմակ չեմ զարմանար ուրեմն եթէ Հայոց եկեղեցւոյ կանոններն ուրիշ բան կ'պատուիրեն, Հայերն ուրիշ կերպ կ'գործեն, եթէ Պատրիարքը պատուած կանոնագրի մը անզօր պաշտպանը կ'կանգնի և ժողովուրդն իր նոր սովորութեանց կ'հետևի։ Հետաքրքրութեան համար հարցուի թէ դար մը, կէս դար, քսան տարի առաջ խնամութիւնն ազգականութեան որ աստիճանին ներելի էր և հիմակ ի՞նչ աստիճան կ'փնտռուի, և պիտի իմանաս թէ ինչպէս նոյն ինք եկեղեցական իշխանութիւնն իր կանոնագրին դէմ կ'գործէ, մոռցած այն պաղտնի ապօրինաւոր համարուած ամուսնութիւնները, մոռցած այն զեղծմունքն ու թագուն մեղութիւնները որ կրնան պատահիլ և անշուշտ կ'պատահին օրինաց խստութեան և պաղտնուգողի յարաբերութեանց շնորհիւ։

Ուստի եթէ Հայոց Պատրիարքարանը դեռ ևս կ'յամառի,

ի գործ դիր առաջարկս։ Մարդ մը կին մ'առնէով, տարբեր արարողութեամբ պսակ ընելով, չփոխեր իր աղգութիւնը, և դու ալ ուրացած չես լինիր քու հայութիւնդ, երիցական քարոզչի մը կամ ֆոնէբրի մը խաչը համբուրելով։ Քաջ գիտես որ մեր անկլիական ազգութիւնը, մանաւանդ այս վերջին տարիներս, ինչ այլազան ցեղերու խառնուրդ մ'է, ինչ համաշխարհային խնամութեան պատուաստ մ'է, այլ սակայն Բրիտանիա՝ այս խառն ամուսնութիւններով իսկ՝ կ'մնայ ինչ որ է, Մեծն Բրիտանիա, այնպէս որ ցեղական ու կրօնական, դոյնի ու տարազի զանազանութիւններն անոր շքեղ դրօշակին բնաւ արատ մը չեն բերեր։

Ահա, նեղսոն, համառօտ բացատրեցի այս մասին իմ կարծիքս, տուի խորհուրդս, որ դաւ ու հնար չէ, այլ բանաւոր հրահանգ մը։ Ոչ միայն բարեկամիդ այլ որ և է օտար ու անտարբեր անձի մը դլխուն մէջ բնապէս կրնայ ծընիլ այս խորհուրդս, որ կարող է թէ արդի տագնապդ փարատել և թէ առիթ տալ քեզ Լոնտօն վերադառնալ Լիլլիին հետ և ժառանգական գործերդ ևս կարգի դնել։

Ի լրոյ կ'իմանամ, վասն զի լէտի Իսահէմ բաւական ժամանակէ ի վեր անտեսանելի է, որ նա անհանգիստ է, և շարունակ իր աղջիկը, Լիլին, կ'խնդրէ։

Ժամ է վերադառնալ. յապաղումը կրնայ բարդապէս և նիւթապէս վնասաբեր լինիլ քեզ։

ՆԱՄԱԿ ՀԴ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎԱՒՑ

Կ. Պոլիս . . .

Շատ պաղ է գիրդ, սիրելի վաստ. այն ո՛չ սիրտս սփոփեց, ոչ միտքս հրահանգեց: Կ'մոռնաս որ հայ եմ, և անկլիական ոգւով կ'դատես զիս և իմ վիճակս:

Ա՛հ, շատ դիւրին է, բարեկամ, նօտարի մը ներկայիլ, կամ երիցական, կամ պապական մատրան մը դուռը զարնել, և՝ պայմանագիր մը ստորագրելով կամ պսակը կատարելով՝ առնել քալել: Բայց խնդիրն այդ չէ, այդ ընելովս ո՛չ իմ խիղճս պիտի հանդարտի և ոչ Լիլիին երջանկութիւնը պիտի ապահովի, քանի որ մէկ կողմէ իմ պարտաւորութեանս դէմ գործած, միւս կողմէ Լիլին պատրած պիտի լինիմ: Ա՛յս է իմ ցաւս, և ոչ մըլի եզանդ մը:

Իրաւի՝ իմ փափաքս, լուսահոգի հօրս պատուէրն է հայութեան սահմանին մէջ ապրիլ, այլ ոչ մինակ, ոչ իբրև յուսահատ, անկենդան էակ մը, այլ Լիլիին հետ, այլ այն անձին հետ որ էութեանս յարակից, անբաժանելի, կենսատու մի մասն է:

Մէկ կողմէ կ'պնդեն թէ՝ Հայկական ազգութեան յատկանիշն իր եկեղեցին է, և եկեղեցւոյն դէմ շարժողն հայութեան դէմ աչիր կ'գործէ, միւս կողմէ կ'մտածեմ թէ արդեօք Լիլի ինչպէս պիտի ընդունի այս մեր նոր կացութիւնն, որու դեռ ևս անտեղեակ է, և որ սակայն Հայ ժողովրդեան մէջ արդէն խոսակցութեան էական նիւթ դարձած լինելով՝ եթէ ոչ ուղղակի իմ, ուրիշի բերնով անոր ականջին պիտի հասնի . . . :

Թերևս, սիրելի վաստ, երկու անկարելի բան կ'պահանջեմ և չարաչար կ'սխալիմ, այսինքն հաւատարիմ մնալ Հայութեան և Լիլիին: Երկուքն ալ սիրելի, երկուքն ալ նուիրական են ինձ, և եթէ երբէք ընտրութիւն մ'ընելու բռնադատուիմ, եթէ օրին մէկն, և անշուշտ այն օրն ալ մօտալուտ է, Լիլիին հետ մեր ներկայ անակնունելի վիճակին վրայ խորհրդակցելու նստիմ, կ'գուշակեմ որ միոյն կամ միւսին պիտի զոհուիմ, միայն թէ նոր կարգադրութեամբ մը թէ՛ հայութեան և թէ՛ սիրոյ զղացումն զոհ ընելու միջոց մը գտնեմ. . . :

Եւ արդէն երէկ նոր յոյս մ'առի, յաջողութեան նշոյլ մը տեսայ, և Թերևս պիտոդութիւնդ թէ խնդիրն ոսկիի զօրութեամբ պիտի լուծուի, ստուգութիւն կ'գանէ:

Աւասիկ պատահածը: Իմ վերադարձիս և ամուսնութեանս լուրը կ'տարածուի մեծամեծներու մէջ: Հայ լորտին դատը պաշտպանողներ կ'գտնուին, մանաւանդ Պատրիարքի խորհրդական ամիրայից մէջ, և անոր կ'առաջարկեն աչք գոցել ամուսնութեանս վրայ՝ եթէ զաղտնի ի գործ դրուի, կամ մեծ դումար մը պահանջել ի նպաստ ազգային հաստատութեանց, այս է մեզաց կերպ մ'ապաշխարութեան գին: Պատրիարքը չհաւանիր: Ուստի վէճ կ'ծագի ժողովի մէջ, և ի վերջ կ'որոշուի Արարատեան Ամիրայ դահակալին դիմել և անորմէ սպասել ամուսնութեանս վճիռը կամ արձանագրութիւնը: Պատրիարքարանն իր բոլոր ձարտասանական տաղանդն ի գործ կը դնէ, նոյնպէս չմոռնար իմ սէրս արդարացընող և ամուսնութիւնս հարկ ընող փաստեր յիշել իր նամակին մէջ, որպէս զի նպաստաւոր պատասխան կամ կռնգակ մը ստանայ, նոյնպէս ցոյց կ'տայ որ հայ լորտի մը ոչ միայն հոգին այլ բոլոր գանձը պիտի շահի Հայ ազգն, եթէ հայութեան ծոցը ձայ ամուսնութեամբ մ'որ, թէև ապօրինաւոր, կրնայ ապագային մէջ մեծամեծ օգուտներ արտադրել:

Ա՛յս լուրը գաղտնի հաղորդեց ինձ ծերուկ հայ քահանայ

մը, որ սակայն ուրիշ բան ալ առաջարկեց։ Ինք կերպով մը հասկրցուց ինձ որ պատրաստ է ղիս պսակել Լիլիի հետ պայմանեալ գումարի մը համար, և յարեց. — Ազգիս ամուսնութիւնները ստէպ կ'պատահին մեր մէջ։ Պատրիարքը պարտաղանց քահանայն մի քանի ամիս պաշտօնէ կ'արգիլէ, ըրած պսակն անվաւեր կ'հրատարակէ, սակայն այս պատիժն ու վճիռը չեն արգիլեր որ քահանայն իր ստացած գումարն և նոր հարսն ու փեսայն իրենց մեղրի ամիսը հանգիստ վայելեն։ Ուստի քու ձեռքդ է, իմ լորտս, պսակել և քու փափաքդ . . . ։»

Ազգս առաջարկն ընդդ քահանային երեսը նայեցայ անկլիական վեհութեամբ մը, և ըսի՝ իբրև անարժան իմ սիրոյս՝ մերժելէն եաև՝ հարցուցի թէ ի պաշտօնէ կ'խօսի։

— Ի պաշտօնէ քեզի ուրիշ բան ըսելու եկած էի, պատասխանեց յանդուգն քահանայն, բայց, սիրելի լորտ, քաջ կ'հասկընաս, իբրև անկլիացի, որ ամեն մարդ իր շահուն կ'նայի։ Ես ալ մեծ ընտանիքի տէր մարդ եմ, ապրուստս ողորմութենէ յառաջ եկած չնչին հասոյթ մ'է, որ չբաւեր։ Ուստի այսպիսի պարագաներէ օգուտ քաղելը մեղք չէ կարծեմ, մանաւանդ երբ կ'տեսնեմ որ պատուասէր և բարձր մարդիկ ալ, նոյն իսկ ժողով մը կ'զիջանի գրամի համար օրէնք, միևչև անգամ արդարութիւն ծախել։

— Խնդրեմ, բուն պաշտօնդ ի՞նչ էր իմ մօտ, հարցուցի անհամբեր։

— Շատ սարդ բան մը։ Մեր Պատրիարքարանի ժողովը իր մէկ անդամակցին միջոցաւ ղիս ղրկեց լորտիդ, առանց Պատրիարքի գիտութեան, յայտնել գաղտնի, որ եթէ կը հաճիս հինգ հազար անգլիական ոսկի շնորհել ազգային դանձուն, ամուսնութեանդ հրամանը պիտի կարենայ հանել։ Կը նայիս, ազնիւ լորտ, որ ես այնքան պահանջող չեմ, և եթէ հաղար շէլին ալ պարգևես ինձ՝ չեմ նեղանար, մանաւանդ որ պսակը միշտ պսակ է, թէ՛ ինձի պէս խեղճ քահանայ մ'ընէ, թէ եպիսկոպոս մը, այս տարբերութեամբ որ ինձ գալիք գումարը կարօտ ընտանիք մը պիտի մխիթարէ, մինչդեռ Պատրիարքարանի տուրեւելքը տարակոյս չունի որ մեծ մասամբ ունևոր ժողովականներու մէջ պիտի բաշխուի։ Միթէ իմ հաշիւս աւելի բանաւոր չէ, ազնիւ լորտ։»

— Շատ դրական և բաւական աղուոր,» պատասխանեցի այդ անշահ քահանային, որ այսպէս իր եկեղեցւոյն կանոնը շահու համար ոտքի տակ կ'առնուր — և իմ գործս Պատրիարքին հետ է — յարեցի՝ կռնակս անոր դարձնելով։

Ողորմելի քահանայն ստուերի պէս սահեցաւ գնաց քովէս և ես վերստին մնացի նոյն անստոյգ խորհրդածութեանցս մէջ։ Միայն այս երկդիմի բանակցին խօսակցութենէ այս հասկրցայ որ իմ ամուսնութեան խնդիրը կաթողիկոսի անօրէնութեան յանձնուեր է, կաթողիկոս մ'որ, ինչպէս ի լոյ կ'իմանամ, արտօնութիւն ունի եղեր, Հռոմի Պապին պէս, հաստատել օրինաց հակառակ՝ վճիռ տալ։ Սակայն նպաստաւոր պիտի լինի՞ այդ վճիռն, որ հազիւ ամսէ մը կրնայ հասնիլ, այս է ինձի համար կարևոր կէտը։

Ինչ որ լինի այն, պարտաւոր եմ սպասել, սիրելի Վուտ, և ապա իմ վերջին որոշումս տալ, որոշում որ պիտի հաստատէ պատուոյս, հայութեան և սիրոյս։

ՆԱՄԱԿ ՀԵ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լանտօն . . .

Քանի՛ երկայնամիտ ես, բարեկամ, և ի՛նչպէս անդին ժամանակդ ու սերդ կրօնական խնդիրներու մէջ կ՚սպառես: Ըստ երևոյթին՝ աւելի պատիւ ունիս քան սէր, աւելի օրինաւորութիւն կ՚պահանջես քան թէ արդարութիւն: Եւ ինչո՞ւ համար, խնդրեմ, իմմէ խորհուրդ, հնար կ՚հարցընես ամուսնական այդ նոր կնճիռդ պարզելու, քանի որ միայն քու գիտցածդ կ՚ընես, և անել ձամբու մը մէջ կ՚դեգերիս կասմովին: Մի՞թէ բարեկամդ փորձել չէ՞, երբ իբրև ճարահատ անոր կ՚դիմես, և ապա զրածներն առ ոչինչ կ՚զրես: Բայց գիտցիր, սիրելի Նելսօն, որ եղբ չունի այդ շահիդ, և զուտակաին չես ճանչեր կրօնական իշխանութեան մը յամառութիւնն, երբ իր առջև հլու, իրաւասէր անձ մը կ՚ելնէ. չես ճանչեր նաև Արարատայ մօտ բնակող ծերունի Կաթողիկոսն, որու բնաւորութեան և գործերուն մէկ նկարագիրն անցեալ օր կ՚կարդայի հանդիսի մը մէջ, թէև զուտ անոր աւելի մօտ, Արևելք կ՚գտնուիս:

Դու, Նելսօն, կ՚սպասես հիմակ կաթողիկոսական կոնդակին. լա՛ւ, շատ պիտի սպասես, և ահա այժմէն կ՚զուշակեմ որ գալիք պատասխանը մերժում մ՚է: Պատճառ. վասն զի արդի Հայոց Հայրապետը պարսկի կամակորութիւն, անկլիացւոյ հեռատեսութիւն, գերմանացւի տոկունութիւն և իտալացւի ներքամուածքիւնն ունի: Այս ամէն ձիրքը կ՚պակէ նա այնպիսի հայրենասիրութեամբ մ՚որ՝ թէև լուսաւորութեան հակամէտ, եւրոպական քաղաքակրթութեան սիրահար, բայց

ամեն օտարամուտ և նոր սովորութեանց թշնամի է և նախնեաց կանոնաց ջերմ աւանդապահ: Առանց կրօնամոլութեան՝ կ՚պաշտպանէ Եկեղեցին իբրև Հայ ազգութեան փրկաւէտ կայան և արտաքին բռնապետութեան դէմ միակ պատուար, առանց հնամոլութեան՝ կ՚պահպանէ ամեն հին հիմնարկութիւն և սահմանադրական օրէնք և անոնց դէմ վարուողը կը քարկոծէ: Եթէ ձեռքէն գայ կ՚կղզիացընէ Էջմիածին և ազգութիւն, որպէս զի անարատ մնան այն նախնի պարզութեան և անկախութեան հիմանց վրայ, որոց դէմ քաջ գիտէ թէ գինուած են՝ մէկ կողմէ օսար խորամանկ քաղաքագէտներ, միւս կողմէ փառամոլ և ողէտ Հայ եկեղեցականներ, զոր բոլոր սրտաւը կ՚ատէ, և եթէ ինք իշխանութիւն ունենար, անտարակոյս բոլորն ալ սրէ կ՚անցընէր: Ո՛չ քաղաքական պատշաճութեանց, ո՛չ շքանշանի, ոչ ոսկիի առջև ծռիլ գիտէ, նոճիի պէս ձիղ կ՚քալէ և իր նպատակին կ՚գիմէ, և այս նպատակն է փրկել առ այժմ ազգութիւնն իր եկեղեցիով և այս փրկութիւնը տալէն ետև՝ իրենց ճակատագրին թողուլ եկեղեցի ու ազգ, որպէս զի ապագային մէջ իրենց հաշիւը տեսնեն . . . : Թէ՛ քաղաքական և թէ ռազմական պարագայից մէջ բռնած գուռդ, անբնկճելի վարմունքը կը հաստատեն ըսածներս, և այսօր Ռուսիոյ կառավարութիւնն ոչ միայն յարգանօք այլ գաղանի երկիւղով կ՚նկատէ ծերունի մ՚որ գեռ ևս իր մտքի առոյգութիւնն ու բնաւորութեան անաչառութիւնը պահած է, և՝ թէպէտև նկուն այն պայքարին մէջ զոր մղեց նոյն իսկ վեհապետի մը դէմ հայրութեան իրաւանց պաշտպանութեան համար, սակայն տակաւին ինքզինքը կ՚կարծէ պատերազմի դաշտին մէջ, և՝ եթէ ոչ սրով՝ գրչով կ՚մաքառի անդադար:

Հիմակ, բարեկամ, կ՚յուսամ որ այդպիսի անձ մ՚իր ձեռքը կարէ կանոն մը, զոր՝ նմանօրինակ պարագայի մէջ՝ անդոնդող աղնուական Հայեր՝ եթէ ոչ բանազրանօք՝ այլ որ մեծն է, իր անհանդուրժելի արհամարհանօք նախատեց, և

գրեթէ հայութեան ցանկէն անոնց անուննեերը սրբեց, և այսպէս անոնք, թէև ուրիշ շրջանի մէջ փառք, պատիւ և իշխանութիւն կ'վայելէին, հայութեան առջև արատաւոր էին։ Միթէ կ'յուսաս որ նպաստաւոր կոնդակ մը հասնի քեզ այն անձէն՝ որ ընտանեկան պարզութիւն և սրբութիւնն եկեղեցւոյ հետ միացած կ'ըմբռնէ Հայուն համար, և միօրինակ կը դատապարտէ այն Հայն որ օտարին հետ խնամութիւն կ'ընէ և այն որ՝ իր բնիկ եկեղեցւոյն կանոնաց հակառակ՝ ազգականի հետ կ'պսակուի։

Այսպիսի Հայրապետի մը հետ է գործդ, սիրելի Նելսօն, և դիւրին է գուշակել որ ակնկալութիւնդ, եթէ ունիս, այն կողմէն ի դերև պիտի ելնէ։ Ստույգն ըսելով՝ ես չեմ մեղադրեր և չպիտի մեղադրեմ այն ժողովուրդներն՝ որ ամեն բանէ զուրկ, քաղաքական կացութենէ, լուսաւորութենէ, ազատական հիմնարկութիւններէ զուրկ՝ ժամանակ մը կ'յարձին այն տարրներուն որ իրենց ազգայնութեան փրկութեան խարիսխը կ'համարին, այլ կ'զարմանամ որ դու քաջ գիտնալով՝ արդի իմայական վիճակիդ մէջ՝ ազգութեան և կրօնի զանազանութիւնը, համոզուած լինելով որ եթէ կամիս՝ քան զՀայաստանցին աւելի ջերմ Հայ պիտի մնաս, կ'յամառիս երկարաձգել և օրինաւորութեան սահմանին մէջ կատարել ամուսնութիւն մ'որ այսօր Լիլլին համար կեանք է, քեզի համար փրկութիւն և հայութեան համար մեծ դանձ մը։

ՆԱՄԱՆ ՀԶ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՌԻՏ

Կ. Պոլիս. . .

Այո՛, բարեկամ, մարդիկ, օրէնք, ամեն բան անողոքելի են ինձի դէմ, և կարծես թէ իմ երջանկութեանս դէմ կ'դաւադրեն։ Շատ ու շատ կծու և ծանր պատժ էի նաև բարեկամիդ դիտողութիւններն ու տեղեկութիւնները, և հիմակ իրաւացի և ճիշտ կ'գտնեմ. . . : Ափսո՛ս, գուշակութիւնդ կ'կատարուի։ Եկաւ հասաւ կաթողիկոսական հրամանը. անպայման մերժում մ'է . . . : Դառնացած հոգւոյս մէջ ատելութեան նոր կայծ մ'ևս աւելցաւ։ Ի՛նչ անպուտ, ի՛նչ անքաղաքակիտական վճիռ . . . Ա՛հ, ես հայութեան ամեն պարտաւորութիւնս կատարելու տրամադիր, կ'փափաքէի միայն որ սիրոյս մասին բացատրութիւն մը լինի, միտքս դնելով տանձապատիկը հատուցանել՝ այդ ակամայ պարտազանցութիւնը ծածկելու համար, բայց իմ առջևս կ'ելնէ իշխանութիւն մը, կրօնական իշխանութիւն մը՝ թէև ստէպ անզօր, ինձի դէմ սպառազէն։ Շատ լաւ, այս պիտի լինի իմ վերջին փորձս։ Այսուհետև ընելիքս գիտեմ։ Պիտի գրչեմ կաթողիկոսն, որ կծեց այդ հրամանն, և Պատրիարքն, որ զայն ինձ հաղորդեց, բայց շատ ուշ. . . : Անհնար է ինձ զատել հոգիս մարմնէս առանց մահու, և ես չեմ կամիր մեռնիլ, քանի որ կենդանի է Լիլլի . . . :

ՆԱՄԱԿ ՀԸ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Քանի դիմացկուն է դժբաղդ սիրահարներուն հոգին, Նելսօն: Միշտ մահուան դուռը կ'հասնին, իսկ անոր սեմին անդին չեն անցնիր երբեք: Մի բարկանար. դու ևս ստէպ կը մեռնիս յուսահատ, և շարունակ կ'շնչես յուսով: Երեմիաներ ողբերդ վերջ չունին և եթէ խոստանդ հաւատարիմ մնայիր, վաղուց գերեզման իջած էիր: Բայց կեանքն անուշ է և գերեզմանը մութ ու ահռելի, մանաւանդ այն սիրահարին համար որու էութիւնը յոյս է: Կ'յուսայ յուսոյ դէմ, կ'յուսայ երբ սիրուհին երես դարձընէ, կ'յուսայ երբ նա իր սիրտը ծակէ, կ'յուսայ երբ անոր սէրը կասկածելի դառնայ, կ'յուսայ իակ երբ «Ես քեզ չեմ սիրեր» ըսէ: Փառք Աստուծոյ քեզի այդպիսի բան մ'ըսող չկայ, և սակայն կ'յուսահատիս, որ անբաղդ սիրահարի կերպարան առնուս, որ գութ շարժես, կ'վարանիս, որ սիրոյդ վիպական ձև մը տաս, կ'յուսահատիս, որ գուեհիկ ամուսնութեամբ փափաքդ պսակելու հարկին մէջ չգտնուիս: Ի'նչ անհեթեթ ընթացք: «Անհնար է ինձ զատել Հոգիս մարմնէս» կ'ըսես, և երբ հնարը քեզի կ'ցուցընեն կ'տատամսիս: Է'հ, բաւական են վարանումնք և սին նկատումնք. ահա օրեր ու ամիսներ կ'անցնին ստուերի պէս, երջանկութեան օրեր և ժամեր ստէպ չեն վերադառնար: Նա մանաւանդ նոր նոր դէպքեր կրնան ծագիլ յանկարծ և այդ անորոշ ու տարտամ ընթացքդ քեզի սուղի բերել: Արդէն մեծ շահեր, սէրդ զատ՝ առ կախ կը մնան և դու դեռ Կաթողիկոսի ու Պատրիարքի հետ կ'բանակցիս:

Ահա այդ կողմէն ևս յոյսդ պարապ ելաւ: Նորէն նոր փորձ մը պիտի փորձեմ. ո՛չ, կ'ըսես, և սակայն այնպէս կ'թուի որ նոր դժուարութիւն կ'ակնկալես: Բարեկամ, տուր վերջ այդ տարտամ վիճակիդ, որու վրայ անշուշտ կ'զարմանայ Լիլի, և չէ կարող զայն մկնել, և ըսէ ինձ որուշումդ նայիմ, որ սէրդ բոլորովին չանհամի: Ապրէ եթէ ապրիլ կ'ուզես. մվ կ'արգիլէ քեզ, եթէ ոչ դու ինքդ: Ա'ռ Լիլին, դարձիր Լոնտօն. ուրիշ ձար չկայ. այս է իմ վերջին խօսքս . . . :

Այս պահուս տոմսակ մը կ'ստանամ. Լէտի Իստհէմին է. զարմանք: Կ'հրաւիրէ զիս իր տունը կարևոր բանի մը համար. ի՞նչ բան. Թերևս յորդորէ զիս որ Օ. Հիւանդանոցի վերատեսչին դէմ դատ վարելէ հրաժարիմ Տոքթօր Բէյնի հետ: Կ'գոյեմ գիրս և կ'վազեմ Լէտի Իստհէմի մօտ: Ի հարկէ պիտի իմանաս տեսակցութեանս արդիւնքը:

ՆԱՄԱԿ ՀԸ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Ի՛նչպէս ծուռ կ'դատես սէրս ու վարմունքս, բարեկամ, թէև քեզի երկար բարակ մեկնած եմ ամեն բան: Շատ կը սխալիս եթէ կարծես թէ գիտամբ երջանկութեան ժամն կ'երկարաձգեմ: Սիրելի Վուտ, սրտիս խորը մտիր, իմ փափուկ վիճակս լաւ մը կշռէ, երևակայէ սիրոյ և պարտաւորութեան մէջ մղած պայքարս, և ապա վճիռ տուր:

Իմ դէմս ելած խոչնդոտներն մանկական խաղեր չեն պատուաւոր մարդու մը համար, և ի հարկէ անոնք աւելի կ'վառեն կ'բորբոքեն հոգիս, աղղականութեան խնդիրն աւելի կ'յուզէ ու կ'տանջէ զիս . . . : Երբ Լիլին դատայ, դատայ և իմ հոգւոյս անդորրութիւնը. իր գանձուն ազատ տէր եղող, զայն վայելելու ամեն դիւրութիւն ունեցող անձի մը պէս անվըրդով և հանդարտ կ'նայէի անոր վրայ, կ'զգայի որ դրեթէ ստանալ էր ինչ որ գլխովին և ուզած ժամանակս վայելելու ազատութիւնն ունէի, և չէի շտապեր, չէի խեւնար որ ժամ առաջ պսակեմ փափաքս, սակայն հիմակ վերնակս բոլորովին տարբեր է, հիմակ՝ իր գանձուն վրայ սրտաթոնոտ նայող ագահին պէս՝ չորս կողմն դողեր ու աւազակներ կարծեմ տեսնել և անհանգիստ, անհամբեր եմ տիրանալու այն էակին որու համար այնքան տառապեր եմ:

Իսկ Լիլին չունի իմ յուզմունքս, չզգար իմ վրդովմս, իր ընտանի ու գողտրիկ ձևերով աւելի կ'հրահրէ հոգիս, և չգիտեր թէ տակաւին որ անպորոյն մարդիկ, մարդիկ որ սէր չունին, որովհետև սիրտ չունին, կ'ուզեն իրարմէ բաժնել մեզ, այլ անմեղ և անգիտակ տատրակի մը պէս կ'ըսպասէ որ որոշումն ընեմ, թէև, կ'խոստովանիմ, մերթ ընդ մերթ այնպիսի խօսքեր ու ակնարկութիւններ կ'ընէ, որ ցոյց կ'տայ թէ քիչ մը կ'զարմանայ երևոյթական համբերութեանս վրայ:

Դեռ անցեալ օր, ճիշտ այն օրն որ կաթողիկոսական հրամանն ինձ հաղորդած էին և սաստիկ յուզուած էի, թեթևաշարժ գիմաւորեց զիս և իր անուշիկ ձայնով ըսաւ.

— Նելսօն, տխուր ես, ինչ ունիս. չես տեսներ որ ես աղէկ եմ և կրնամ ճամբորդել:

— Պօյսն կ'գամ. ծովն աղէկոծ էր և քիչ մը զիս բըռնեց, ըսի, մինչդեռ իրօք սիրտս կ'մրմռկեր և քիչ մնաց որ պիտի լայի:

— Չես կարծեր, Նելսօն, որ վտանգաւոր է այդ ծովն,

որու վրայ քանի ճամբորդես, սիրտս կ'խաղայ և աչքս ճամբան կ'ձգայ . . . : Այս գիւղէն երթանք . . . :

— Ո՞ր երթանք, Լիլի. պիւղիս օդը քեզի օգտեց. դեռ հանգստի պէտք ունիս:

— Գարունը մօտ է, Նելսօն, հիմակ մեր հայրենի երկինքը կ'պարզի . . . վստահ եղիր որ բաւական ոյժ ունիմ ճամբորդելու . . . այնպէս չէ:

— Պէտք է անդամ մը խորհուրդ հարցնեմ մեր փօքս բարեկամին, և եթէ հրաման տայ, կ'մտածենք . . . :»

Եւ սակայն, բարեկամ, մտածելու նիւթ չունայ, փորձենք միջոց չունայ: Երկու կրակի մէջ եմ այս տեղ, և պիտի հալիմ մնշիմ: Պէտք է վերջապէս որ քիչ մ'ազատ օդ շընչեմ, հով ու մնունդ առնեմ և այս մղձուկ մթնոլորտէն հեռանամ: Այս է իմ դիտաւորութիւնս, և կ'յուսամ կատարել, որով խորհուրդդ ալ կատարած պիտի լինիմ:

ՆԱՄԱՆ ՉՔ

ՎՕՒՏ ՍՒ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Բարեկամ, նոր լուր, աղէտալի՛ ըսեմ թէ ուրախալի, չգիտեմ: Լէտի Խատհէմ ծանր վիճակի մէջ է, և բժիշկներն անոյս . . . : Շո՛ւտ, շուտ ի գործ դիր դիտաւորութիւնդ: Ոչ միայն ներկայ փափուկ վիճակդ, իմ խորհուրդս, Լիլիին փափաքը կ'յորդորեն քեզ վերադառնալ քաղաքս, այլ և այս ծանրակշիռ պարագան, Լէտի Խատհէմի հիւան-

դուքինը, հրամանը։ Այո՛, Նելսօն, այս կինը կ'փափաքի քեզ և իր դուստրը տեսնել, կ'փափաքի իր կտակն ընել, թէև՝ ըստ օրինի՝ իր էրկան կ'ինայ այս պարտքը, քանի որ ողջ է։ Բայց արի տես որ Պ. Դանիէլ գրեթէ ապիկար, խելաթափ և անդամալոյծ եղած է, մի քանի տարիէ ի վեր, և միայն կ'շնչէ։ Կտակ ընելու կարողութիւն չունի և ոչ մտքի տրամադրութիւն։ Կ'գուշակես արդէն լէտի Խտհէմի ինձ ուղղած հրաւիրագրին նպատակը։ Համառօտ պատմեմ։

Գայի գայ զինքն. առանձին էր, մութ սենեկի մը մէջ, և կէս մ'առկոզինը պառկած։ Ի սկզբան չճանչցայ զինքն, այնքան փոխուած էր։ Սիրտս յուզուեցաւ։ Այդ կինն՝ որու չարահնար գաւերն այնքան զրդուած էին մեր ատելութիւնն իրեն գէմ, այդ կինն՝ որու սրտէն ու մտքէն Թոյն կ'թափէր և անկին կեանքեր այդ Թոյնով կ'սպաննէր, կ'հատամն, Նելսօն, իմ գութս շարժեց, իր արգահատելի վիճակին մէջ։ Մահուան երկիւղն ու ստուերը զինք պլխովին պլպլած էին։ Թերևս՝ ինչպէս որ սովոր են այսպիսի չարանենգ կանայք, լէտի Խտհէմ կ'ուզէր քաւել իր ամեն մեղքերը վերջին ժամուն կատարեալ զղջումի և արդարութեան ղպայմանց գառնալով։ Ու հասարակ՝ չարասիրտ կանանց յետին ապաւէնը կրօնն է, իրենց նեցուկը տան երէցն։ Իր կերպարանին պէս, որ կապոյտ գոյն մ'առած էր, փոխած է և իր լեզուն, և՝ յուսամ նաև, սիրտը։ Ձեմ կարծեր որ՝ գերեզման իջնելու միջոցին անգամ՝ գաւեր նիւթել ուզէ քեզի գէմ, իր աղջկան գէմ. և ինչ նպատակ կրնայ ունենալ այսուհետև, այն կինն որ իր փառամոլութեան զոհեց իր սիրականներն և և որու փափաքն այս պահուս ինչ կրնայ լինիլ եթէ ոչ գեհէնի տանջանքէն ազատիլ և արքայութեան արժանանալ, իր բոլորտիքը գժոխք դարձնելէն եաև, բայց և այնպէս այնքան աչքս վախցած է այս կնիկէն որ վարանելով անոր մօտ գացի և կասկածանօք անոր մոտիկ ըրի։

Եւ ինչ ըսաւ ինձ լէտի Խտհէմ. երկար է իր խոստո-

վանութիւնն որու դլխաւոր կէտերուն արդէն տեղեակ ենք։ Միայն կարևորն ըսեմ։ Մի շատ խօսքերէ եաև՝ ծանր ու նուաղուն ձայնով մ'ըսաւ ինձ.

— Իբրև խոստովանահայր մ'ամեն բան իմացար, Պարոն վ.ուտ, և յուսամ որ կ'ներես ինձ, նոյնպէս Պ. Բէյն...

— Տիկին, ըսի, ի վերուստ ներելու պաշտօն մը չունիմ, ես մեղաւոր մը, և ներելը կ'ենթադրէ վերստին մեղանչելու արտօնել...։

— Եւ միթէ մահը կ'ներէ մեղանչել վերստին, պատասխանեց լէտի Խտհէմ վշտագին։ Մի ներեր, բայց գոնէ մտիկ ըրէ վերջին խօսքս, աղաչանքս...։

— Խօսէ, տիկին։

— Նախ՝ մի գատ վարէք Օ. Հիւանգանոցի վերատեսչին դէմ. նա իմ գործակատարս էր. նա անմեղ է և ես մեղաւոր ու պատասխանատու Պ. Քինկի մահուան...։ Ապա դու, Ազնիւ Վ.ուտ, գրէ, գրէ կ'աղաչեմ յանուն Աստուծոյ, որու ահեղատեանին առջև պիտի երեւիմ թերևս մօտ օրերս, գրէ Պ. Նելսօնին, որ Լիլիս առնէ ու գառնայ քովս, չէ թէ իմ վերջին օրհնանքս, վասն զի ես պարտիմ անոնց օրհնանքն ու ներողութիւնը հայցել, այլ իմ վերջին ապաշաւս, իմ վերջին կամքս իմանալու և աչքս գոցելու համար։ Խղճս կ'տանջէ զիս, կ'ուզեմ հաշտուիլ, այդ միխթարութիւնը թող չզլանան ինձ։ Եթէ արդէն պսակուած չեն, թող գան և ողորմելի ու մոլորած մօր մ'աչքին առջև կատարեն պսակը, և ապա գնեն թաղեն...։ Յուսամ դեռ ես ժամանակ մ'ապրիլ, և այդ տեսութեան յոյսն իմ վշտաբեկ հոգւոյս քիչ մ'ոյժ պիտի տայ.... այս շնորհը կ'խնդրեմ քեզմէ։ Եթէ ես գրելու կարողութիւն ունենայի կ'գրէի, բայց կ'հատաւն ինձ... ես որ այնքան պատրաստ եմ այդ աշխարհ հոգիներն, ես որ այնքան...։»

Եւ լէտի Խտհէմ չկրցաւ շարունակել... սկսաւ լալ, կարծեմ առաջին անգամն էր որ այս կնկան աչերէն արտասուք

կ'հոսէր, առաջին անդամն էր որ մայրական սէրը կ'խօսէր, վասն զի իր շեշտին ու արտասուքին մէջ ձշմարտութեան և անկեղծութեան նշանները կ'տեսնէի։ Ես անշարժ և ակնկոր կ'կենայի։ Իր աղերսալի աչքն ինձ դարձուց և իր վտիտ ձեռքը նշմայր մ'ըլաւ ինձ որ խնդիրը կատարեմ։ Հեռացայ իր քովէն խօսք տալով դրել քեզ և իր վիճակը յայտնել։

Ահա, սիրելի Նելսօն, իր աղաչանքը կատարեցի. կ'մնայ քեզ մեկնիլ կ. Պօլսէն։ կ'կարծես թէ սուտ հիւանդ է այդ կինն, և նոր դաւ մը կ'նիւթէ։ Ես չեմ կարծեր։ Եւ ինչո՞ւ համար դաւէ։ Նպատակ մ'ունէր, Էլիզին աղնուական լորտի մը հետ կարգել և փառաւորուիլ։ Անյաջող եղաւ։ Ուրիշ ժառանգորդ չունի։ Հիմակ որո՞ւ պիտի ձգէ իր մեծագումար ստացուածքն, եթէ ոչ բուն ժառանգորդին ու տիրոջ, քեզի։ Ուստի հասիր, և գալով ոչ միայն գթութեան գործ մը ըրած պիտի լինիս հօդեվար կնոջ մը, Էլիզին մօրը փափաքը կատարելով, այլ և քու ապագայ երջանկութիւնդ պիտի ապահովես։ Մի՛ դանդաղիր, փափուկ է խնդիրը . . .։

ՆԱՄԱԿ Ջ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պօլիս . . .

Նամակդ առնելի զարմանքս շարժեց, բարեկամ, քան թէ դուխս։ Լէտի Իսահէմի հիւանդութիւնը բնական և ակնուշնելի իրողութիւն մ'էր, այլ ոչ իր ապաշաւն ու հաշտութեան առաջարկը։ Մինն ինս գրեթէ անտարբեր դատ, միւսը բո-

լոր հին ու նոր յիշատակներս զրգռեց։ Ինչ որ իմ ապագայ երջանկութեան յոյսն, իրաւունքն, արդարութիւնն ու սէրը կարող չեղան ընել, այդ կինն ողղել, սիրան ամրքել, հաշտութիւն բերել, մահն ի կատար կ'հանէ, այլ շատ ուշ։ Ամեն աղէտից բաժակը մինչև մրուրն ինձ ըմպել տալէն ետև, ամեն սև խորհուրդներն անհաշտ առնչութեամբ Էլիզիի և ինձի դէմ ի գործ դնելէն ետև, այժմ, իր մահուան անկողնին մէջ, ողբալնօք հաշտութիւն ու ներողութիւն խընդրող կինն առաքինական գործ մ'ըրած չլինիր։ Գերեզմանին առջև ամեն քէն, վրէժ ու կիրք պէտք է որ պադրին, իրաւ, բայց, բարեկամ, ինչպէս սրտովին հաշտուիմ այն էակին հետ որ իմ բոլոր էութեանս վրայ մահատիպ ստուեր մը թողուց, որ ողջ ողջ ինս դերեզման իջեցուց։ Մահուան ահարկու տեսիլը, դժոխքի բոցերը, հողին փրկելու տենչը, հանդերձեալ երկնային շահն առելի կ'դրգռեն զինք այդ քայլն առնլու, քան թէ ձշմարիտ զղջումն։ Անտարակոյս եթէ լէտի Իսահէմ տակաւին ապրելու յոյս ունենար, այդ հաշտարար գիրքը չպիտի բռնէր և մեզ պիտի արտաքսէր իր սրտէն ու յիշողութենէ, ինչպէս որ կ'ընէ շատ տարիներէ ի վեր։ Ուստի արժէք մը չունի իմ աչքիս իր շատ ուշ զղացած վիշտն ու դորովն, և եթէ առարկես, որ դէթ նիւթական ծանր շահերու նկատմամբ պարտաւոր եմ հատանել այդ հաշտութեան, որ մեզ երկար ու մեծագին դատերէ պիտի ազատէ, մեր ժառանգական իրաւունքը բնապէս մեզի պիտի պարձրնէ, այս մասին, սիրելի Վ.ուտ, խօսք մը չունիմ, վասն զի իմ կարծիքս պիտես, լաւ պիտես որ առելի կ'ընտրեմ դատով իմ իրաւանցս տիրանալ քան թէ իրրև ողորմութիւն զայն ընդունիլ ուշաթափ ու ցաւագար կնոջ մը դողդոջուն և արատաւոր ձեռքէն, կամ անկից ի սպառ զրկուիլ։

Սիրելի Վ.ուտ, թերևս ծիծաղիս իմ վրայ, բայց քաջ գիտցիր որ արդարութիւնը չկորսուիր, չէ թէ մարգկային ար-

դարուԹիւնն, որ ստէպ մարդախաբուԹեան և փառամոլուԹեան արդիւնք է, այլ բնական օրինաց, այլ դէպ ի երու տրամաբանական կարգին մէջ վերջապէս երևան եկնող արդարուԹիւնը: Լէտի Իսահէմին պէս ապաշաւող շատ անձեր սուրբերու կարգն անցած են երբեմն, բայց այդ սուրբերն այսօր պատմուԹեան մէջ սև անուն ու սև հետք մ'ունին:

Հիմակ կ'ուզես որ պաշտեմ անոր անունը, գամ համբուրեմ անոր արիւնալի ձեռքն և օրհնուԹիւնը խնդրեմ: Ես կ'վարանիմ. մանաւանդ աւելի ծանր պարագայ մը ղիս կ'շփոԹէ: Շուարած եմ և չգիտեմ ինչպէս յայտնեմ այդ գոյժը Էլիզին, որ հիւանդուԹենէ նոր ելած է, ինչպէս հաղորդեմ լուր մ'որ կրնայ իր հոգին խորտակել և զինք վերստին անկողին ձգել: Ես կ'վարանիմ նաև այդ գուժկանը լինելու, վասն զի ասոր մէջ վտանգ կ'տեսնեմ: Եւ դու կ'նայիս, սիրելի վաւ, որ էտի Իսահէմ իր ներկայ հոգեվար վիճակին մէջ անգամ երկիւղալի, վտանգաւոր անձ մ'է: Ես կը փափաքի որ դեռ ևս ապրէր և թող մեզ հալածէր, ապրէր, և աւելի երկար իր խղճի խայթովը տանջուէր: Այժմ մահը սպեղանի մը պիտի լինի անշուշտ այդ կնկան համար, որ բարոյական ծանր վէրքով կ'տառապի, եթէ երբէք խղճի խայթ ունի:

Ահա նոր հոգ մ'ևս, բարեկամ: Բաւական չէիր ունեցածնոսը: Կ'դողամ մանաւանդ Էլիզին համար, որու մտքէ շատ բան, և այդ մտքուԹեան մէջ թէև հանդարտ ու խաղաղ է, սակայն ինչ պիտի լինի եթէ երբէք հեռզհետէ իմանայ ամեն դաղանիք, ամեն իրողուԹիւն, և ի վերջէ մօրը հիւանդուԹիւնը: Իմ ծագումիս պատմուԹիւնը, մեր ազգականուԹեան խնդիրը, մօրը ծանր վիճակն այնպիսի վշտալի բաներ են որ եթէ իրմէ աւելի կորովի միտք, աւելի տոկուն մարմին, աւելի համբերատար սրտի մը վրայ անգամ ընկնին, ասոնք աւելի յուզմունք և այլայլուԹիւն կրնան պատճառել:

Բայց և այնպէս Էլիզի կ'պատրաստուի: Մտադիր եմ՝ թէև ակամայ, ձամբայ ելնել: Իմ բոլոր փիլիսոփայական մտածմունքս ծրարելով՝ կ'հաւանիմ սրտիս, Էլիզին կամքին համեմատ շարժիլ և անոր փափաքը կատարել: Ուստի կ'յուսամ ամէն մը մեկնիլ այս ծովափունքէն և Լոնտոն դիմել:

ԳԱՄԱՆ ՁԱ

ՎԱՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Ամիսը շատ է, բարեկամ: Էտի Իսահէմի վիճակն օրէ օր կ'ծանրանայ: Վերստին տեսայ զինք. վերստին կրկնեց իր աղաչանքը:

— Կ'ապրիմ միայն իմ սիրականներս տեսնելու համար» կ'հառաչէ:

Ուստի փութացինք, բարեկամ: Խմաստասիրական նուրբ խորհրդածուԹիւններդ առ այժմ անպատեհ են: Հարկ չկայ Էլիզին յայտնել ուղևորուԹեանդ նպատակը: Դիւրին միջոցներ կան ամեն բան, առանց վտանգի, հաղորդելու անոր: Առ այժմ ամենէ կարևորն է քու ներկայուԹիւնդ: Տօքթօր Բէյն չկարծեր որ էտի Իսահէմ ամիս մ'ևս ապրի: Ուստի շուտ հասիր . . . : Երկար դրելու ժամանակ չկայ:

Էտի Իսահէմի կողմէ նորէն կ'կոչուիմ, Նելսօն, և այս անգամ խնդրած է որ նոտար մ'ալ հետս տանիմ: Յուսամ որ այս վերջին դիրս կ'լինի քեզի. . . . . .

. . . . . .

ՆԱՄԱԿ ՁԲ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պալէ . . .

Բարեկամ, պատրաստ եմ. . . : Երեք օրէն կ'մեկնիմ : Շոգենաւ մը պատ. նաւապետը կ'խոստանայ տասօրէն հասնիլ Լոնտօն : Փափաքելի կ'լինի որ մինչև գալս ամեն օրինական կարգադրութիւններն աւարտած լինէին : Ըստ երևոյթին՝ Լէտի Խատհէմ իր կսկիծը սիտի դրէ, քանի որ նօտար խընդրեր է . . . : Հևարանութիւններն ինձ տաղտկալի են . . . : Լիլի ուրախութենէ կ'թռի. չգիտէ այդ թուչունն որ անձանօթին կ'պիմնիք . . . Թերևս դպաղի մ'առջև գըտնուինք գալով. . . : Միթէ շոգենաւն ևս դպաղ մը չէ և անգունդը պերեզման . . . . : Քանի՛ ահարկու կ'երևի ինձ ծովը, հիմակ որ Լիլին հետս սիտի ուղևորի . . . :

ՆԱՄԱԿ ՁԳ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն . . .

Բարեկամ, Լէտի Խատհէմ անցաւ . . . յաւիտենական աշխարհը : Անօգուտ եղան պիտութեան ամեն հնարքն անոր կեանքն դէթ մի քանի շաբաթ ևս երկարելու : Գնաց նա. իր յետին հառաչը Լիլին էր, դու էիր . . . : Ներկայ էի Ճգնաժամին . . . : Աղէկ՛ տեսարան . . . . ատելորդ է նկարագրել. . . : Իմ բոլոր ստոյիկեան արիութեամբս այդ կնկան բոլոր անցեալը պիանալովս իսկ, լացի . . . լացի, վասն զի խղձէն տանջուող անձի մը մահն էր. ահռելի՛ մահ . . . երկու օր շարունակ կառուցաւ անոր դէմ, երկու օր անդադար ձեղ կ'կանչէր աղէխարշ ձայնով. կարծէր տեսնել ձեղ, կարծէր թէ իր գլխուն վրայ կայծակներ կ'թափէք, իր աչքին սուրեր կ'շողայցընէք, և կ'դոչէր, գթութի՛ւն, մեղայ, մեղայ, և իր անիրաւութիւնները ձեղի դէմ կիսկտար, անորոշ ձայնով կ'կրկնէր, և կ'հայցէր ներողութիւն . . . և երբ իր ձայնին արձագանքը միայն կ'լսէր՝ բոլոր մարմինն անտանելի սարսուռներ կ'զգար . . . : Ինքնին բարութեան հակամէտ՝ այս կինը փառամոլութեան զոհ ընկաւ : Աշխարհային փառքը քան ընտանեկան երջանկութիւն յափշտակեց, մոլորեց իր միտքն ու դառնացուց հոգին : Ուրիշ բանի չեմ կարող տալ իր սխալանքն, իր չարահնար գործերը . . . : Չարասիրութիւնը բնական յատկութիւնը չէր, ապա թէ ոչ մինչև վերջը նոյնը կ'մնար, մինչդեռ նա իր բոլոր պարտաւորութիւններն առ ձեղ հատոյց . . . : Փառաւոր եղաւ իր թաղման հանդէսը . . . իր ամուսինը, լորտ Խատհէմ բոլորովին անզգայ վիճակի մէջ է : Ցուսալի չէ որ երկար ապրի . . . :

Կարող էի, սիրելի Նելսօն, վերադարձիդ յայտնել այս ողբալի լուրը, բայց դիտմամբ գրեցի, որպէս զի պատրաստես Լիլին այս դժբաղդութեան : Նախորդ գիրս Ճամրայ հանելէն երկու օր եաք կ'գրեմ այս, և ուրիշ շատ գրելիք ունիմ թէև, բայց ատելորդ կ'համարիմ, մանաւանդ սրամտութիւն չունիմ, քանի որ բերանացի սիտի հաղորդեմ քեղ ամեն տեղեկութիւն, երբոր հայրենիք հասնիս :

ՆԱՄԱԿ ՁԴ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պօլէա . . .

Բարեկամ, Սպալէն նամակդ կ'ստանամ ճիշտ այն ժամուն՝ երբ աւելի սպալէ տեսարանի մը ներկայ կ'դտնուիմ։ Ա՛հ, սուգ սուգի վրայ, աղէտ աղէտի վրայ. ինչ ճակատագիր է իմն . . . ։ Պէտք չէ որ շունչ առնում. . . Էլիզէ, իմ հոգիս, իմ կեանքս երկու օրէ ի վեր կորուսի, ոչ կ'ժպտի, ոչ կ'խօսի, ոչ կ'լայ. անզգայ ու անշարժ կ'տառապի անկողնին մէջ. . . սոսկալի այլայլութեան մ'արդիւնքն է այս վիճակն . . . կարող չեմ գրել. . . ձեռքս կ'դողայ, աչքերս կ'սևնան . . . ։ Հիւանդին մօտ կեցած՝ հոգիս, կեանքս անոր տալու պատրաստ, ես անհոգի և զրեթէ կիսամեռ, չգիտեմ ուր եմ. . . ։ Ա՛հ, Էլիզէ գիտէ ամեն գաղանիք . . . Էլիզէ գիտէ որ ինչ եմ, և այս գիտակցութիւնը, դիպուածի մը հետևանք, զինք շանթահարեց . . . ։ Եթէ ապրի, կ'գրեմ քեզի, բարեկամ, եթէ ոչ ընդունէ իմ վերջին բարևս, յաւիտենական հրաժեշտս . . . . . ։

ՆԱՄԱԿ ՁԵ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնդօն . . .

Բարեկամ, Աներևմիտ էի մի քանի շաբաթէն քեզ տեսնել և չէ թէ գրել. . . ։ Ահա քու տեղդ նամակդ հասաւ ինձ, և ինչ նամակ . . . ։ Նո՛ր պատահար մը . . . դժբաղդութիւնը ստուերի պէս պիտի հետևի միշտ քեզի։ Ամիս չանցնիր որ սև լուր մը չհաղորդես ինձ, իսկ այս վերջինը հանելուկ մ'է, ուստի աւելի կսկծալի։ Շատ կ'վշտանամ, Նելսօն, այլ շատ բան չեմ իմանար նամակէդ։ Ի՞նչ անցաւ Էլիզէի գլխէն, ինչո՞ւ այդքան տառապի . . . ։ Ցեծտին ծայր տխուր գոյներով կ'նկարագրես վիճակն։ Ի՞նչպէս ուրախութենէ յանկարծ այդ տրտմութեան մէջ կրնայ ընկնիլ. . . ։ Կ'զուշակեմ որ սաստիկ այլայլութեան մը հետևանքն է, և՝ ըստ իս, վտանգաւոր բան մը չունի . . . ։ Սևամաղձութիւն մը, որ թերևս մինչև հիմակ անցած է, և Էլիզէ կ'ծիծաղի երկիւղիդ վրայ . . . ։ Վաւաշուն երևակայութեանդ ուժով հրէշներ կ'ստեղծես։ Սթափիր, բարեկամ, սթափիր։

Եթէ ոչ գրելիք, ուրիշ շատ խօսելիք ունէի քեզի ի դարձիդ, և ահա այնպիսի վշտալի լուր մը, այնպիսի գառն ու սպառնական բաներ կ'գրես, որ բոլորովին ուժաթափ կ'ընեմ։ Քանի մ'անգամ թուղթը ու գրիչ մէկդի նետեցի և ելայ որ շիտակ գնամ, քովդ գամ, բայց մտածեցի որ թերևս՝ Էլիզէն բժշկուելով՝ դու նաև մնած ես գալու մեզի։ Եթէ ձամբայ չես ելած, շուտ ելիր։ Օգափոխութիւնը, հայրենիքի տեսքը կրնայ օգտակար լինիլ Էլիզէին, որու, ներէ ինձ ը-

սել, արդի վիճակը քիչ մը քու գործդ է։ Այնքան ծանր կ'շարժիս, այնքան մանրակրկիտ ես, այնքան բաներ իրմէ գաղանի պահելիր, որ ահա արդիւնքը. ուրիշ մը, կամ դիպուածն, ինչ է չգիտեմ, անոր յայտնած է յանկարծ ամէն բան միասին և անոր փափուկ հոգին շանթահարած է . . . : Ես այսպէս կ'մեկնեմ դիրդ, սակայն աւելի ստոյգ լինելու համար, սրամիտ և Լիլլին բնաւորութեան տեղեակ անձին դիմեցի։ Տոքտօր Բէյնը տեսայ, կարգացի դիրդ անոր, պահ մը մտածեց, և ապա ըսաւ ինձ.

— Իրաւունք ունիս, Պարոն Վուտա. բայց Լիլլին վիճակն այնքան թեթեւ մի դատեր։

— Ես միթէ վտանգ կայ։

— Եթէ իր անզգայ վիճակը դադրի . . . :

— Ի՞նչ կ'ըսես, Տոքտօր։

— Գիտութեան վճիռն, և Լիլլիի բնաւորութեան ճանաչումն։

— Ես՝ ընդ հակառակն, կ'փափաքէի որ շուտով սթափի նա։

— Կ'սխալիս։ Երբ զգալու և խորհելու կարողութիւնը վրան գայ, կ'վախնամ որ իր վիճակին զգայողութիւնը չներդործէ ներքին կազմութեան վրայ, մինչդեռ այժմ ունեցածը ջղային անվնաս թոյլութիւն մ'է։

— Ուրեմն պէտք է դրել, հրահանգ տալ Նելսօնին որ ըստ այնմ շարժի։

— Գրելը չյաւեր։

— Հապա՞։

— Լիլլիին այցելել։

— Ես ի՞նչպէս։

— Վազը կ'մեկնիմ։ Իմ պարտքս է խնամել Լիլլին։»

Ես իրօք, սիրելի Նելսօն, Պ. Բէյն հետեւեալ օրն ինձ նկատ և հարցուց թէ քեզի համար յանձնարարութիւն մ'ունէի։ Դու դիտես ամէն բան, ըսի անոր, և ազաչեցի որ իր

բոլոր ձիգը թափէ ձեղ միասին բերելու։ Երանի թէ ես ալ կարող լինէի անոր ընկերանալ։ Նա երջանիկ է, թէև տխուր պաշտօն մը վարելու համար, իր ծերութեան հասակին մէջ, այս երկար ձամբորդութիւնը յանձն կ'առնու։

Անշուշտ չէք մոռնար զիս, Տոքտօր Բէյնի գալուն, և միշտ կ'գրէք, վասն զի անհանգիստ եմ և կ'ուզեմ ամէն բան իմանալ։

ՆԱՄԱՆ ՁԶ

ՆԵԼՍՕՆ Ս.Ո. ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . . .

Ահա կ'գրեմ, բարեկամ, իմացիր որ Լիլլին կ'ապրի ու պիտի ապրի . . . : Մի քանի օր կայ որ կ'շարժի, մերթ ընդ մերթ կ'խօսի մեղմիկ . . . . սակայն ծրքան տխուր է : Ցաւ չունի նա, բայց ծրքան դունատ ու վախտ է . . . սպիտակ վարդի մը պէս, որ արև, լոյս կ'փնտռէ. սակայ կը նայի ինձ, բայց իր կապոյտ աչքերն իրենց առջի փայլն ու զգայումը չունին, կարծես թէ չեն տեսներ . . . դեռ բժիշկները չեն կարող լաւ ճշդել իր հիւանդութեան բնութիւնը, միայն կ'հաւատան թէ վտանգ չկայ : Ո՛ւր էր թէ Տոքտօր Բէյն, մեր բարեկամը, քովս գտնուէր և Լիլլին խնամէր ու դարմանէր :

Շատ կ'ցաւիմ, սիրելի Վուտ, որ իմ մէկ յուսահատ ժամուս գրեցի այն կարճ այլ դառնակսկիծ գիրս և քեզ անտարակոյս մեծ վիշտ պատճառեցի : Իրաւ՝ քիչ մը չափն ա-

ւելի վրդովեր եմ և Լիլիի յանկարծական թմրութիւնն իբրև մահու գուշակ նկատեր եմ, բայց ի՞նչ ընեմ, ձեռքս չէ։ Շարունակ դժբաղդութիւն կրող մարդը՝ իր վայրկենական բարեբաստութեան մէջ անգամ, ղողի մէջ կ՚լինի որ այդ վայրկեանը չթուի . . . ։

Թերևս կ՚փափաքիս, բարեկամ, լիովին իմանալ թէ ի՞նչ է Լիլիի յեղակարծ անհանգստութեան պրկիլը, որու միայն ակնարկեր էի իմ նախորդ գրոյս մէջ։ Աւասիկ պարզ նկարագիրը։

Գիտես որ արդէն որոշած էի մեկնիլ, ուստի պատրաստութիւն կ՚տեսնէի։ Իմ գրեանցս և թղթակցութեանս մէկ մասը Լիլիի տունը Գասը դիւղ կ՚պահուէր, և նա օր մ՚առաջ՝ բոլոր տնային գործերը կարգադրելէն ետև՝ ինձ հաճելի գործ մը ընելու նպատակաւ՝ տան Հայ նաժիշտին հետ սենեակս կ՚մտնէ և կ՚սկսի հաւաքել ամեն բան, ծրարել գիրքերս և թղթերս։ Յանկարծ աչքին կ՚զարնէ եփենոսէ տուփ մ՚որ բաց էր գրժբաղդաբար և որու մէջ կ՚պահուէին հօրս կտակագիրը, Պ. Քինկի նամակն և ամեն պաշտօնական թղթակցութիւնս, որ Հայոց Պատրիարքարանի հետ, ամուսնութեան առաջարկիս մասին, ունեցած բանակցութեանս կ՚վերաբերէին։ Բնական հետաքրքրութենէ շարժած՝ Լիլի կ՚կարդայ այն գիրերն, որ իրմէ ծածուկ պահուած էին, և նոյն պահուն Հայ նաժիշտը կ՚ձամբէ։ Սակայն հազիւ թէ սա դուրս կ՚ելնէ՝ որ սենեկէն ահռելի աղաղակ մը կ՚լսէ. իսկոյն կ՚վերադառնայ և կ՚տեսնէ իր տիրուհին՝ գլուխը թղթերուն մէջ թաղուած, մէկ ձեռքը եփենոսէ տուփին և միւսը կուրծքին վրայ դրած՝ կ՚հառաչէ.

— Ա՛հ, սիրտս . . . սիրտս կ՚քաղուի . . . ։»

Հայ նաժիշտը կ՚մտենայ և դարման մը կ՚փնտռէ, սակայն ի զուր. Լիլի՝ նոր յայտնութենէ գրեթէ չանթահար՝ չէ կարող շարժիլ. և նոյն խօսքը պահ մ՚ևս մրմնջելէն ետև՝ մոլորեալին գեհինը կ՚թաւալի և շնչասպառ կ՚մնայ . . . ։

Այս վիճակին մէջ էր Լիլի՝ երբ երեկոյին տուն դարձայ։ Նաժիշտը լալով զիս դիմաւորեց ու իրողութիւնը պատմեց։ Ի՛նչպէս վեր սենեակն ելայ չգիտեմ. կարծեցի թէ Լիլին կաթուածահար եղեր է. սակայն երբ տեսայ զինք այն նըկուն և անզգայ դիրքին մէջ, երբ տեսայ թղթերս ցիր ու ցան և եփենոսէ տուփը միշտ Լիլիի ձեռքը՝ ամեն բան գուշակեցի և վշտագին դողեցի.

— Ա՛հ, անիտա, թշուառ Նելսօն . . . ։»

Այս ձայնիս՝ Լիլիի մարմինը ցնցում ղգայ, կարծես թէ զսպանակէ մը շարժած ոտք ելաւ, և եփենոսէ տուփը ցոյց տալով ինձ,

— Նելսօ՛ն, հառաչեց, այս տուփին պէս սևցան հոգիս ու աչքս . . . չգիտեմ ուր եմ. . . աշխարհ կ՚փլի գլխուս վրայ . . . արիւնս կ՚սառի . . . չկայ ազատում. . . ։

— Ի՞նչ, Լիլի, և ինչո՞ւ, միթէ Անկլիա, հայրենիք, չըմպիտի երթանք» ըսի սրտաբեկ և թևովս սեղմեցի իր սիրտն և նաղելի հասակն որ կ՚հակէր սգալի ծաղկի մը պէս։

— Ա՛հ, ձայնեց Լիլի, Անկլիա մեր բուն հայրենիքը չէ եղեր, Նելսօն, և դու ակամայ կ՚մեկնիս, դու, անկեղծ Նելսօն, իրմէ գաղտնիք կ՚պահես եղեր . . . դու զիս կ՚խաբես։

— Ի՛նչ կ՚ըսես, Լիլի . . . զիս սպաննել կ՚ուզես։

— Ա՛հ, Նելսօն, գերեզմանին խորէն հօրդ ձայնը լսեցի, սրտաշարժ ու միանգամայն ահարկու ձայն, որ արդէն հոգիս սպաննեց . . . և մարմինս չսիտի սպրի . . . ։

— Եւ ի՞նչ կայ այդ ձայնին և մեր սիրոյն մէջ, Լիլի . . .

— Այդ ձայնը կ՚յայտնէ քեզ որ հայ ես . . . հայ ես և պարտիս հայ օրիորդի մը հետ կարգուիլ . . . ։»

Եւ Լիլի այս հայ բառն այնքան դառն շեշտով մ՚արտասանեց, այնքան արտասուք և յուսահատութիւն կային այդ խօսքին մէջ որ, մինչդեռ ես սերևի պէս կ՚դողայի և գլխովին շուարած էի, նա ձեռքէս սահեցաւ գետինն ընկաւ և այս խօսքը մրմնջելով,

— Ներսօն հայ, վայ ինձ»

Շունչը կարեց։

Ահա այս տեսարանին առջև մոլորած մնացի, սիրելի Վուտ։ Խելապարի պէս ապլին անդին ընկայ որ դարման մը փնտռեմ։ Իմ նախորդ պիրս, որ նոյն պահուն դրեցի, բաւական բացատրեց քեզի իմ աղէտալի վիճակս։ Լիլեի անզգայութիւնը մի քանի օր տևեց։ Հիմակ աւելի ազէկ է։ Շաբաթնակ կ'յաճախեն բժիշկները տունը, բայց դեղ տուած չունին և կ'ըսեն թէ ժամանակն է դեղը, պէտք է համբերել։

Ահա, սիրելի Վուտ, այս նոր դժբաղդութեանս ստուերագիրը։ Անստուեր չէ նաև բոլորովին ներկայս և իմ ապագաս ամպերու մէջ վերստին ծրարուած կ'ընդունշմարեմ, մանաւանդ քանի կ'խորհիմ թէ արդեօք՝ Լիլին բոյժ դանելուն, ես ինչ և նա ինչ դիրք պիտի բռնենք իրարու առջև, երբ իր նոր կացութիւնը քննէ . . . ։

Այսպէս, բարեկամ, մեր ուղևորութիւնն առ Հարկի ետ կ'մնայ, ինչպէս լէպի Խոհէմի մահն, որու անտեղեակ է Լիլի, անտես անցաւ։ Սակայն ամենէ կարևոր խնդիրը, կեանց ու մահու խնդիրն ինձի համար, Լիլիի վիճակն է։ Թող նա բժշկուի, թող սկսի խօսիլ և իր վիշտը դուրս թափել, այն ժամանակ ես ևս պիտի վերածնիմ և անոր փափաքն ինչ որ է պիտի կատարեմ։

ՆԱՄԱՆ ՁԻ

ՆԻԼՍՕՆ Ա.Ո ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Մի քանի շաբաթէ ի վեր՝ անդունդ մը կ'երևէր ինձ այս ահագին ու ալմաստի քաղաքը։ Երբէք այսքան վիշտ ու տրտմութիւն չէին պաշարած իմ սիրտս։ Լիլիին հիւանդութիւնն ու անոր առիթ տուող դիպուածը բոլորովին խորտակած էին իմ հոգիս։ Մինակ էի, և թերևս աւելի հիւանդ քան Լիլի։ Իմ քովս մտերիմ մը չունէի որ գոնէ սիրտս բանամ, ցաւերս պատմեմ և քիչ մը սփոփիմ։ Պ. Փօքս, մեր տան բժիշկը պաղարիւն մարդ մ'է և սրտակցութեան՝ մանաւանդ սիրոյ գաւն կսկիծներու անտարբեր։ Գիտութեան պէս ձիգ, ճշմարտութեան պէս անագորոյն է, և իմ բարոյական ցաւերուս իբր դեղ արիւն առնել կ'սպատուիրէ, իմ սիրոյս իբր դարման՝ Էդէնի ջուր և ծովու բաղնիք կ'նրամայէ. ինչ սոսկալի մարդ։ Թէև դու, սիրելի Վուտ, իմ վիճակիս համակիր և առատալանջս վշտակից, բայց հեռու կ'գտնուիս, և ի հարկէ թուղթերդ այնքան չեն ներգործեր իմ վրայ, որչափ պիտի ներգործէր կենդանի խօսքդ . . . ։ Ուստի երևակայէ թէ որքան մեծ եղաւ խնդութիւնս երբ՝ այս միջնութեանս մէջ, Տոքթօր Բէյն անցեալ օր կ. Պոլիս հասաւ։ Կարծեցի տեսնել ազատարար հրեշտակ մը։ Անակնկալէ դալուստ, որու լուրը միայն երկու օր առաջ քու կողմէ ստացած նամակէս իմացած էի։

Այս շնորհը մասամբ քեզի պարտաւոր եմ, սիրելի Վուտ, և յետին ծայր երախտագէտ։ Հիմակ քիչ մ'աւելի հանդիսա պիտի լինիմ, քանի որ մեր բարեկամը Տոքթօր Բէյն

անտարակոյս իր փորձառութեամբն ու դէմոտ դիտութեամբը պիտի յաջողի վերահաստատել Լիլիիս առողջութիւնը։ Քանի՛ վեհանձն, մարդասէր ու անձնուէր հոգի, ճշմարիտ բժիշկ, որ՝ իր հասակին չնայելով՝ երկար ուղեւորութեան մը ամեն դժուարութիւններն առ ոչինչ կ'դրէ, և կ'գայ իր վաղեմի բարեկամին մէկ աղջիկը խնամել, թերևս մեծ վտանգէ մ'ազատել։ Տոքթօր Բէյնի պէս մարդիկ միայն բժիշկ չեն այլ մարդկային աղէտից արգահատող հոգիներ, որ երկրի վրայ նախախնամութեան պաշտօն կ'վարեն . . . ։

Սակայն, բարեկամ, պ. Բէյնի ներկայութիւնն այլազան տպաւորութիւն մ'ըրաւ Լիլիին վրայ։ Լիլի՝ իր հին բարեկամին և բարերարին առջև՝ նախ այլայլութիւն մ'զգաց և սկսաւ լալ. ապա ծիծաղը բռնեց, և ասոր յաջորդեց դող մը։ Ցետոյ յանկարծ պոռաց.

— Ա՛հ, դո՞ւ ես, Տոքթօր Բէյն։

— Ես եմ, աղջիկս։

— Ես հիւանդ չեմ։

— Գիտեմ, աղջիկս։

— Եկար որ զի՞ս առնես։

— Չէ՛, Լոնտոնէն փախայ . . .

— Անշուշտ ինձի պէս, ըսաւ Լիլի. յանցաւոր եմ քու առջևդ, այնպէս չէ՞, Պարոն Բէյն։

— Ինչո՞ւ համար։

— Վասն զի քեզ խաբեցի . . . ։

— Արդէն ներած եմ, դիտես։

— Բայց պատիժս զոյ . . .

— Եւ ինչո՞ւ համար։

— Հալածանքէ փախայ ու աքսոր գոյ . . . .» յարեց Լիլի ողբակին ձայնով մը և երեսը բարձին վրայ դարձուց։

Թշուառ օրիորդը կ'արտասուէր . . . ։

Նոյն միջոցին Տոքթօր Բէյն նշմայր ըրաւ ինձ որ դուրս ելնեմ։ Իմացայ միտքն ու հրամանը կատարեցի։

Բայց ո՛րքան սիրտս ծակեց Լիլիին խօսքը։ Ն'գիտէի որ բաւական ժամանակէ ի վեր լինձի հետ պաղ կ'վարուէր . . . Է՛հ, ի՞նչ ընեմ. գիտեմ որ ես յանցաւոր եմ իր առջևն, գիտեմ որ կ'դատապարտէ զիս որ իրմէ պահեցի մի քանի գաղտնիքներ, բայց իմ ձեռքս էր յայտնել. . . Է՛հ, թո՛ղ նա առողջանայ, թո՛ղ իր առաջին կենդանութիւնն ու առոյգութիւնը գտնէ, թո՛ղ՝ եթէ կամի՝ զիս չսիրէ։ Անտարակոյս օրին մէկն ամեն բան պիտի յայտնուի, անմեղութիւնս երևան պիտի գայ։ Տոքթօր Բէյն պիտի համոզէ զինք որ եթէ ես այսչափ ժամանակ իմ ծագումս, իմ հայութիւնս, իմ արենակցութիւնս ծածուկ պահեցի, նպատակս միայն իր սրտի անդորրութիւնը չվրդովել և պատեհ առթի սպասել էր, որ ամեն բան յայտնեմ. . . դիպուածը բոլոր այս հանգամանքներս խանգարեց և զիս մեղապարտ հանեց . . . ։

Անտարակոյս Տոքթօր Բէյն պիտի գրէ քեզ, բարեկամ, բայց կ'աղաչեմ, դու ալ զիս անգիր մի՛ թողուր։ Քիչ ժամանակէն ամեն բան պիտի պարզուի. Լիլիի առողջութենէ և պ. Բէյնի տալիք հրահանգէն կախում ունի շատ բան։ Նա պիտի լինի այժմ իմ Մէնտօրս, քանի որ ես իմ վրայ վստահ չեմ և այնքան հակամարտ զգացումներով համակուած եմ որ գրեթէ կտրիճ չունիմ. . . ։

ՆԱՄԱԿ ՁԷ

ՎՕՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լ—նտո՛ն . . .

Շատ ուրախ եմ, բարեկամ, որ Տոքթօր Բէյնի ներկա-

յուԹիւնը շատ ցաւեր բուժելու յոյս կ'տայ քեզ: Այդ չքնաղ ծերունին, որ կ'վազէ միշտ ուր որ հիւանդութիւն, աղէտ ու Թշուառութիւն զինք օգնութեան կ'կոչեն, առանց շահախնդրութեան, այս պարագային մէջ խիստ բնական պաշտօն մը վարել կ'կարծէ: Միթէ գովածիս չափ չկայ: Իր ալեզարդ երկար մազերն, իր հայրապետական մօրուսը, իր խոր, սուր ու Թափանցիկ այլ դիմոտ աչքերը, մանաւանդ իր համակրելի, անգորը ու կայտառ դէմքն՝ անտարակոյս արդէն վստահութիւնդ ու համարումդ գրաւած են: Բայց քիչ մ'ևս տեսնուէ իր հետ, անոր հետ գլուխ գլխի տուր և սիրտդ բայ, Թող իր ընտանի և համոզակեր լեզուաւ խօսի, Թող ցոյց տայ որ գիտութեան հետ կ'կցորդէ անհուն մարդասիրութիւն և մարդկային աղէտից արդահատութիւն, և պիտի իմանաս որ անդին գանձ մ'է այդ խոհուն, զգայուն և ժիր ծերունին: Եւ քանի՛ քանի ծառայութիւններ մատուցած է մեր դատին, փափուկ պարագայից մէջ, և քանի՛ իրաւունքներ ունի քու երախտապիտութեանդ, արդէն գիտես և կ'ըզգաս:

Այսպիսի ընտիր ընկերի մը մօտ՝ ոչ իզմէ և ոչ ուրիշէ պէաք պիտի ունենաս, և իմ դրակցութիւնս անհամ պիտի երևի քեզ, մանաւանդ հիմակ որ Ճակատագրիդ վերաբերող ամեն փափուկ խնդիրներու առանցքը, չէ Թէ Լոնտօն, այլ Պ. Պօլիս կ'գտնուի: Այդ տեղ, Պ. Բէյնի հետ պիտի լուծես այդ խնդիրներն . . . :

Սակայն չմոռնամ. ունիմ կարևոր պարտ մը կատարել: Թէև ի պաշտօնէ խնայ պիտի արուի քեզ ժամանակի պարծերտդ վիճակը, սակայն աւելորդ չեմ համարիր այս մասին մի քանի խօսք գրել:

Գիտեմ, գլուխ չունիս, արդի գառն կացութեանդ մէջ, նիւթական շահերու վրայ խօսք մտիկ ընել, բայց օրէնքը չսպասեր, բարեկամ, և կտակի մը գործադրութիւնը մարդկային քմահճին կամ սիրային հաճոյքէ կախում չունի . . . :

Աւասիկ եղելութիւնը համառօտ: Էմի Խտհէմ իր կտակը շինեց, ըստ օրինի: Սոյն կտակագրին մէկ օրինակը Ներքին Գործոց Պաշտօնէութեան դիւանն է, միւսը՝ ձեր տան իրաւաբան Սիմնէյի մօտ: Պ. Սիմնէյ այս օրերս յայտարարեց ինձ որ կառավարութիւնն ի պաշտօնէ պիտի հաղորդէ Կոստանդնուպօլսոյ անկլիացի դեսպանին Էմի Խտհէմի կտակագրին տրամադրութիւններն, որպէս զի քեզի հաղորդուին:

Էմի Խտհէմ ընդհանուր հսկող կարգած է Տօքթօր Բէյնն և զնս կտակի գործադրութեան, և կարող եմ այժմէն անոր էական կէտերը քեզի հաղորդել:

Ըստ կտակի՝ այսօր, սիրելի Ներսոն, դու և Լիլի 5500 անկլիական ոսկի տարեկան եկամուտ ունիք, անշարժ և շարժական կալուածներու հասոյթ: Շարժական ընչից մէկ մեծ մասն անկլիական Պանքան է, որ իր Մայր Տումարին մէջ 400,000 անկլիական ոսկւոյ գումար մը քու և Լիլիի անուամբ արձանագրած է և տակոսը կ'բանի. իսկ մնացած մասը զանազան ընկերութեանց բաժնետոմսներ են, որ համեմատաբար աւելի տոկոս կ'բերեն, և որ ի պահեստի կ'մնան Պ. Սիմնէյի մօտ, քու տրամադրութեանդ Ներքև: Էմի Խտհէմ նուիրած է նաև գումար մը բարեպաշտական հաստատութեանց:

Այսպէս, բարեկամ, դու այսօր նիւթապէս ընկերական փայլուն դիրք մը կ'բռնես, և կարող ես մեծ դեր ունենալ մեր քաղաքական շրջանին մէջ, սակայն ափսոս որ բարոյապէս Թշուառ ես, և ի հարկէ աչքիդ չեն երևիր աշխարհի հարստութիւնները:

Չեմ կամիր երկարել խօսքս՝ որ Թերևս քեզի տաղտկալի Թուի, և կ'Թողում որ պատեհ առիթ Տօքթօր Բէյն մանր պատմէ քեզ ամեն բան: Ես ևս Պ. Բէյնէն և քեզմէ կ'ըսպասեմ լաւ լուրեր, Լիլիի բուժութեան, նոյնպէս հաշտութեան, միութեան, վերադարձի ուրախալի լուրեր:

ՆԱՄԱՆ ՁԻ

ՏՕՔԹՕՐ ՐԷՅՇՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, ժամանակին հասեր եմ։ Հին բարեկամութեան և դէմուդէմ ղգայմունքը յորդորեց զիս այս ուղևորութեան։ Նպատակս Էլիլին աղատել էր ծանր տագնապէ մը, և յուսամ յաջողիլ։ Իմ պաշտօնակիցս, Տոքթօր Փօքս, որու խնամոյն յանձնուած էր Էլիլ, դիւցազնական դեղերու կուսակից է, և, քիչ մ'ևս, իր այս ընթացքով, թերևս Էլիլին անդարմանելի հիւանդութեան պիտի ենթարկէր։ Բուռն դեղերով կ'ջանար բուժել ցաւ մ'որ ինքնին երևակայութեան և բարոյական յուզմանց արդիւնք է, և որ միայն բարոյական դարման կ'պահանջէ։ Ուստի ենթադրութիւնս կ'հաստատուի։ Պէտք է որ Էլիլ ժամանակ մ'անզգայ, անդէտ մնայ իր վիճակին, չիմանայ բոլորովին անոր ծանրութիւնն, թէև՝ ինքնին ծանր բան մը չկայ։ Երբ՝ մէկ կողմէ՝ քիչ քիչ իր կրած հոգեկան այլայլութիւնն, որ այնքան բուռն կերպով ներգործած է իր ջղային դրութեան վրայ, բնապէս թեթևնայ, և մյուս կողմէ՝ իր միտքը պատրաստուի՝ գործածելի փափուկ և դորովալի միջոցներով, իմանալ թէ Նէլսօնի հետ սիրային յարաբերութիւնը միշտ անվթար կ'մնայ, և թէ անոր հօրը կտակը չկրնար ապագային վրայ ազդել, այն ժամանակ մեծ բարւոքում մը պիտի տեսնուի իր առողջութեան մէջ։

Հասած օրս իսկ՝ Էլիլի հետ առանձին տեսակցութիւն մը ունեցայ։ Պ. Նէլսօն գրած է քեզ թէ ինչպէս ընդունեց զիս։ Թէև առաջադրած եմ բնաւ սիրոյ վրայ չխօսիլ, և միշտ սնոտիբերը նիւթերու վրա Էլիլի ուշադրութիւնը դարձնել, բայց նա, որ ստէպ արթուն և մինչև ի քուն եղած ժամանակ՝ կ'մրմնջէ, Հոպ, հայ, Նէլսօն, կ'ջանայ յիշել, իբրև երազ, իր հիւանդութեան շարժառիթն, որով սիրոյ վրայ կ'դառնայ։

Մանաւանդ իր հանդարտ և լուսաբեր ժամերուն՝ կ'ժպտի, անբնական ժպիտ, կ'արտասուէ, դառն արտօսր, և երբեմն՝ իբրև քահանայի, ինձ կ'ջանայ խօսիլ, խոստովանիլ։ Թէև նուաղուն, կիսկատար, և ստէպ անիմանալի լեզուաւ ու ոճով կ'խօսի, սակայն իր բոլոր խօսքերէն դիւրին է հանել այս եզրակացութիւնը թէ՝ Նէլսօն այլ Նա չէրեք ջինէ . . . ։ Սիրահարներու յաւիտենական դանդաղը, գժդոհ ղգայուններու մրմունջն, որ գժբաղդաբար կ'նուազի, երբ սէրն իրականութեան շրջանը մտնէ, երբ ղգայումն յագուրդ գտնէ։ Սիրոյ մէջ զարմանալի երևոյթ մ'են, բարեկամ, այս երկու սիրահարները։ Ոմանք սիրոյ խանդն իր նորութեան մէջ կը փնտռեն, բայց ահա օրինակ մը. հին, տարևոր է այս երկու արարածներու սէրն, իրաւ, այլ իր առաջին շրջանին մէջն է։ Ճնշումը զայն սեղմեց, բռնութիւնը կեգրոնացուց, և, հետևապէս, որչափ որ մարդկային բնութիւնն նորութեան հակամէտ է, այս հին սէրը Նէլսօնի ու Էլիլի համար միշտ նոր, միշտ հրապուրելի, միշտ ցանկալի կ'երևի։ Թերևս առեղծուածութեան և ազգականութեան ներքին խորհրդաւոր կապն նոր յոյժ մը կ'տայ այս ղգայումին, թերևս միայնութեան և հալածանքի երկիւղն այս հոգիներն իրարու փարելու կ'դրդէ, սակայն ինչ որ լինի այս սերտ յարակցութեան գրգիռն, ըստ իս՝ վտանգաւոր է այսպէս ձկտեալ վիճակի մէջ թողուլ այս թշուառները։

Իրաւ՝ կ'զարմանամ, սիրելի վուտ, թէ ինչպէս Նէլսօն և Էլիլ զիրար գտնելէն անմիջապէս ետք՝ չեն միացած։ Այս համբերութիւնն անբնական և անմեկնելի կ'թուի, բայց պատճառներ ունի, ոչ միայն հոգեբանական այլ ընկերական։ Երկար ժամանակ իրարմէ բաժնուած հոգիներու համար ծայ-

բազդն երանութիւնն է աւետարկութիւնը, սիրարկութեան պիտակութիւնը: Ակնարկ մը, ժպիտ մը, անուշ խօսք մը բաւական են՝ մէկ կողմէ հպարտ ու պատուասէր, միւս կողմէ վեհերոտ ու ամբիծած էակ մը պոհ ընելու: Նելսօն կ'վարանէր իր սէրը պսակելու, Լիլի կ'դողար անշուշտ, վասն զի մին բազդին հարուածներուն ներքև կ'ձնշուէր, միւսին վրայ երկիւղն ու պարտաւանութեան զգացում մը կ'ներդործէին և եթէ այս ներքին յուզմանց միացընես արտաքին պատճառներն ու քարոյներն որ շարունակ այս սիրահարներն իրարմէ հեռու պահելու կ'սպասէին, այն ժամանակ պիտի ըմբռնես այս երկայնամտութեան բնապատճառն: Սակայն վերջին դէպքը, կտակի գիւտը, Լիլիի արդէն ձնշուած հոգին պիտի խորտակէր . . . :

Բայց Թողունք այս պիտողութիւններն և գարման փընտռենք: Հիմակ ես, բարեկամ, հիւանդապահի, բժշկի և հօր պաշտօնները կ'վարեմ Լիլիին մօտ: Ձեմ Թողուր որ ուրիշ մէկը մտնէ սենեակը: Ամեն բան իմ ձեռքէս պիտի առնու: Նոյն իսկ Նելսօն չժպիր առանց իմ հրամանիս ներկայանալ: Կ'դիտեմ որ Լիլի շատ կ'յուզուի անոր առջև, ղինք տեսնել կ'փափաքի, բայց անոր տեսքէն սաստիկ կ'զգածուի և իր ջղային գրութիւնը կ'վրդովի . . . . կ'յանիմ նաև Նելսօնի վրայ, կ'տեսնեմ Թէ ուրքան կ'տառապի, բայց ինչ օգուտ, պարտաւոր է համբերել, մանաւանդ հիմակ, որ Թեթև անխոհեմութիւն մը, սիրոյ բուռն այլայլութիւն մը կրնայ ամեն բան վտանգել:

Իրաւ, սիրելի Նելսօնը: Իր նկարագիրը քեզ ընելու հարկ չկայ: Ճշմարիտ մարդ է: Տոկուն, վէս և անկեղծ հոգի, որ այնքան աղէտից Ճակատ տուաւ, կորովի իմացականութիւն, որ այնքան գաւերու դիմագրեց, առնացի և վայելուչ կերպարան, որ քիչ մը զինուորականի ձգտութիւնն ունի, և որ պատկառանք կ'ազդէ մինչև անգամ բարեկամիդ: Կ'տեսնեմ որ Նելսօն հաճատակ մ'է իր պարտաւորութեանց, և այս

Հանգամանքն, Թէև մասամբ իր աղէտից պատճառ, աւելի փայլ կ'տայ իր բարոյական արիութեան և իր արժանիքը կ'աւելցընէ:

ՆԱՄԱԿ Գ

ՆԵԼՍՕՆ ԱՒՍ ՎՕՒՏ

Կ. Պոլիս . . .

Շնորհակալ եմ, բարեկամ: Լէտի Խստհէմի կտակին տրամադրութիւնները կ'հաղորդես ինձ, ինչպէս որ ի պաշտօնէ ևս Անկլիոյ դեսպանատունը նոյնը կ'կրկնէ: Ահա հիմակ հաբուստ մեծատուն լորտ մ'եմ. բայց ինչ օգուտ, Թշուառ եմ: Եթէ այդ հարստութիւնն, այդ գանձը, Լիլիին կատարեալ առողջութիւն պարգևելու կարողութիւնն ունենար՝ իբրև երկնային շնորհ, պիտի ընդունէի խնդագին: բայց քանի որ չէ Թէ ոսկին, չէ Թէ ղօրութիւնն, այլ բնութիւնն ու գիտութիւնը միայն, եթէ կարող են, պիտի օգնեն ինձ, քանի որ այդ օգնութիւնն ևս անվրիպելի չէ, ինչ ընեմ ես հարստութիւնն, ինչ, ճոխութիւնը:

Բայց միթէ ես միայն իրաւունք ունիմ այդ հարստութեան: Լիլիին հետ բաժնելով միայն պիտի կարող լինիմ զայն վայելել, և Լիլի հիւանդ է, և Լիլի խղճ հեռու է, և Լիլի՝ ըստ երևոյթին՝ չտանիր իմ ներկայութիւնս . . . : Ե՛րբ պիտի վերջանայ այս իմ տանջանքս . . . :

Սիրելի վոտ, չեմ կարող առ այժմ բան մը գրել ժառանգական կալուածոյ վրայ: Թող ձեան ուր որ են. դու

հսկէ անոնց վրայ, Թերևս օրին մէկը մեր երջանկութեան ծառայեն: Անտարակոյս այս անտանելի վիճակս վախճան մը պիտի ունենայ, երջանկութիւն կամ մահ:

ՆԱՄԱԿ ՉԱ

ՏՈՒԳՈՒՐ ՐԻՉՆ ԱՒ ՊՈՒՏ

Կ. Պոլէ . . .

Իրաւի, բարեկամ, շատ ախորժելի բան չէ, նոյն իսկ բժշկի մը, թէզարդ մարդու մը համար, երկու սիրահարներու մէջ մնալ: Լիլի և Նելսօն ի սկզբան խնդութեամբ ողջունեցին իմ գալուստս, սակայն այժմ կ'դիտեմ որ, եթէ ոչ բոլորովին Լիլի, Նելսօն ցուրտ կ'վարուի հետս: Քարոսն մ'եմ երկու սիրահարներու մէջ, վասն զի ստէպ կ'արգիլեմ իրենց տեսակցութիւնը: Ըստ երևոյթին՝ փուշ մը կը գտնամ երկուքին մէջ, բայց ես պաշտօն մ'ունիմ, և այդ պաշտօնը ցվերջ պիտի կատարեմ, այս է Լիլին բուժել լիովին և Նելսօնին յանձնել: Ցետոյ կրնամ մեկնիլ, թողլով որ ինչպէս որ կամին այնպէս վճռեն իրենց ճակատագիրը: Բայց միթէ հաւանական է որ Լիլիի բուժութեամբ լրանայ իմ պաշտօնս, չէմ աւելի ծանր պարապայ մ'որ Լիլիին վերակենդանութեամբն երևան պիտի գայ և հասուն խորհրդածութեանց ու հսկողութեան պիտի կարօտի . . . :

Ինչ որ է, բարեկամ, մէկ հիւանդ չունիմ, այլ երկու հատ: Ոչ նուազ կ'տառապի սրտով ու մտքով մեր Նելսօնն, թէև առ երեսս կ'ջանայ անվրդով ու պաղարիւն երևիլ: Իր

վիշտերը բաղմապատիկ են: Հիմակ հազիւ օրը մի անգամ կը տեսնէ Լիլին առանց խօսակցելու, և իր զայրոյթը, թերևս կ'սխալիմ, կարծեմ թէ սասաիկ է: Բայց աւելի մեծ է և հպարտ իր հոգին, այնպէս որ անտարբերութիւն կ'կեղծէ: Լիլին ստէպ տեսնելով դէթ կ'մոռնար իր դիմամարտ խորհուրդներն, որ միայնութեան մէջ աւելի կ'պաշարեն իր միտքն և իր ապագայն աւելի կ'նեմնի իր աչքին: Ուստի չեմ սիրեր իր շարժումները. տենդային բան մ'ունի իր վրայ և իր յուզմունքը աջողելու համար շարունակ դուրս կ'ելնէ, գիւղիս դաշտերն ու բլուրները կ'թափառի, կ'որսայ, կ'յոգնի կ'դադրի և այնպէս տուն կ'դառնայ: Ես չտեսնելու կ'զարնեմ այս ամէնն, և մերթ ընդ մերթ Լիլիի վրայ անոր կ'խօսիմ: Ստէպ կ'կրկնէ.

— Ե՞րբ պիտի մեկնինք:

Նելսօն որ ժամանակ մը կ'վարանէր Լոնտօն դալու, կ'նայիմ որ անհամբեր է ուղևորիլ այդ կողմն, այն յուսով թերևս որ նախ՝ Լիլիին աւելի մօտենալու առիթ պիտի ունենայ, երկրորդ՝ հրատապ խնդրոյ մը լուծումը պիտի չերկարձգի . . . :

Չեմ ուրանար, բարեկամ, որ Նելսօնի արդի վիճակը շատ փափուկ է, և վախ ունիմ որ աւելի ծանր պատահարներ տեղի չունենան: Ինչ որ երբեմն դիւրին էր սասնալ կ'մերժէր կամ կ'վարանէր վայելելու, հիմակ գժուարութեան առջև կ'հետեւ: Սակայն եթէ դայ վճռական որոշում մ'ընելու վայրկեանը, ամուսնութեան խնդրոյ մասին, կ'տարակուսիմ որ թէ մին և թէ միսը կարուկ ձամբայ մը բռնեն:

Այսպէս են սիրոյ մէջ անփորձ հոգիները. իսկ Նելսօնի համար խնդիրն աւելի կ'ինճուռճի, քանի որ պարտաւորութեան, կտակի սրբութեան, ծնողասիրութեան զգայմունքը շատ խոր արմատ բռնած են իր սրտին մէջ, Եւ միթէ կարծես թէ Լիլի տարբեր տրամադրութիւններ ունի. նա կ'սիրէ, բայց պատրաստ է իր սէրը զոհելու, եթէ երբէք կաս-

կածի իսկ որ Նելսոն իր սիրուհւոյն անդին կեանքը պահպանելու համար միայն կ'հաճի անոր հետ միանալ, մոռնալով իր հօրը կտակն, իր հայութիւնն, իր եկեղեցւոյ վճիռը։

Ես կարծեմ, բարեկամ, որ երբ Լիլի բժշկուի, պիտի ունայ ինձ կատարել ուրիշ պաշտօն մը, աւելի ծանր ու կրնձառոտ պաշտօն մը, այս է պարտաւորութեան և սիրոյ, պատուոյ և կրօնի մէջ ծագելիք պայքարը խաղաղել։

ՆԱՄԱՆ ՉՔ

ՏՈՒԴՕՐ ԲԼԻԶՆ Ա.Ն ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Վտանգն անցաւ, բարեկամ, Լիլի օրէ օր իր առողջութիւնը կ'գտնէ. իր սենեկին մէջ կ'քալէ, աւելի մնունդ, աւելի օդ, աւելի արև ու լոյս կ'ընդունի։ Աւելորդ է մանր նկարագրել քեզ իր հիւանդութեան բոլոր երևոյթները։ Բաւէ ըսել որ դադրեցան իր ջղային սարսուռներն ու ցնդումները, այլ ևս չտեսներ ուշ երազին և ոչ երևակայութեան մէջ ահարկու սատերներ ու ճիւաղներ, և իր դէմքին գոյնն, իր աչքերուն փայլը հետզհետէ կ'ստանայ։ Քանի քանի անքուն գիշերներ, սրտամաշ օրեր անցուցի իր քովը, քանի քանի վշտալի ողբեր և տրտունջներ լսեցի. բոլորն ալ թէ՛ ինք և թէ՛ ես մոռցանք, մոռցայ իմ բոլոր նեղութիւնս, և այս բուժութիւնը պարտաւոր եմ ոչ այնքան իմ դիտութեան և դեղերուն, որքան իմ բարոյական աղեցութեան և հայրական խնամոյ։ Ես դոհ եմ։

Ուստի կրնաս երևակայել թէ որքան աւելի դոհ է Նելսոն, ինչ ուրախութեան ծովու մէջ կ'լողայ։ Հիմակ ազատ է ամեն ժամ տեսնել Լիլին, անոր հետ խօսիլ, խնդալ, կարդալ, անցելոյն յիշատակները դրդռել, ապագային համար խորհուրդներ երկնել։ Բայց բոլոր այս սրտակցութեան մէջ զարմանալի երևոյթ մը կ'նշմարեմ։ Լիլիի մարմնոյն հետ սիրան ևս բոյժ դառած կ'երևի. խորհրդաւոր և անմեկնելի բոյժ, դոնես դու թերևս, բարեկամ, բայց անտարակոյս իր ներքին պատճառն ունի։ Լիլի չէ այժմ ինչ որ էր Նելսոնի նկատմամբ՝ բուռն, եռանդագին, անզուսպ սիրով վառ։ Ո՛սիրէ նա, բայց աւելի հանդարտ, աւելի գորովալի, աւելի դողտրիկ սիրով կ'սիրէ Նելսոնը, ինչպէս կ'սիրէ քոյր մ'իր եղբայրը։ Ի՞նչ է այս սրտի յեղաշրջումի զրդիռը։ Անշուշտ Պ. Նելսոն քեզի պիտի յայտնէ։

Սակայն Նելսոն չիմանար այս երևոյթը, թերևս անոր համար որ իր սիրան ալ նոյն անզգալի այլափոխութեան ենթակայ է, և իր տագնապն, ինչպէս դիտեցի, ոչ այնքան կասկածներու, որքան անստուգութեան մը վիճակի արդիւնք է։ Եւ իրաւունք ունի։ Անտարակոյս կ'փափաքի դնել իր բռնելիք ընթացքը, որոշել իր ապագան։ Առանձին տեսնուելու առիթներ կ'փնտռեն, իրարու սիրտ բանալու համար և այս առիթները չեն պակսիր . . .։

Իմ դործս աւարտեցաւ, բարեկամ։ Պարտիմ ձգնիլ, առանձինն թէ Նելսոնի և Լիլիի հետ, իմ յաջորդ նամակիս կ'իմանաս . . .։

ՆԱՄԱՆ ՊԳ

ՆԵՒՍՕՆ Ս.Ո. ՎՈՒՏ

Կ. Պոլիս. . . .

Վերստին կ'գրեմ, բարեկամ, վասն զի իմ ամպոտ երկինքս, Լիլիի աչքերն, սկսան վերստին փայլիլ, Տոքթօր Բէյնի շնորհիւ: Անցան այն փոթորկալի օրերն ուր կեանքը ծանր քեռ մ'էր և աշխարհ տանջարան մը: Լիլի կ'ժպտի, և կը ժպտին բոլոր շնչաւոր և անշունչ արարածները, և կարծես թէ անոր վերակենդանութիւնը կ'ողջունեն, ինչպէս կ'ողջունեն՝ խոր մթութենէ մ'ետք, պայծառ արեւ մը Ճառագայթներն՝ որ բնութեան վրայ ջերմութիւն, լոյս և կենդանութիւն կ'սփռեն: Լիլի կ'երգէ, և կ'երգեն գիւղիս թռչուններն, որ անոր հիւանդութեան ժամանակ սուգի մէջ էին, մանաւանդ սոխակ մ'որ մեր տան պարտէզին մէկ ծառին վրայ՝ այգուն՝ իր գայլայլիկը կեղգեղել վերստին սկսաւ: Լիլի կ'շնչէ ու կ'ապրի, կ'շնչեն նաև ծաղիկներն անուշ բուրմունք, և ես կ'ապրիմ և կ'ատեմ մահը . . . ո՛հ, քանի երջանիկ եմ, շատ երջանիկ սակայն . . . : Կարծես թէ ամէն կասկած ու մռայլ ցրուեցան, երազի պէս . . . իբրև հով անցան այն ստուերներն, այն պատահարներն որ մեր հոգին ու միւքն այնքան տառապեցուցին, մեր էութիւնը վտանգի մէջ դրին . . . . Լիլի հիւանդութենէ ելած՝ աւելի վառվռուն, աւելի աշխոյժ և աւելի ընտանի է ինձի համար քան ինչ որ էր առաջ: Հին վիշտերու տխուր յիշատակը չեն մթագներ բնաւ իր պայծառ և անմեղ ճակատը, և ինձի հետ կ'վարուի այնպէս որպէս թէ բնաւ բան մը պատահած չլինէր . . . :

Իրաւ՝ շատ ու շատ է այսքան երանութիւն հոգւոյս համար, շատ են Լիլիի դղուանքն ու մտերմութիւնն ինձի համար, և դողդ մէջ եմ որ այս բարեբաստիկ ու գեղեցիկ ժամերուն նորէն չյաջորդեն չարաշուք օրեր ու ամիսներ . . . Ի բնէ անբաղդ մարդն ինձի պէս կարող է միթէ հաւատալ բարեբաղդութեան, ողորմելի աղքատը կրնա՞յ յուսալ ճոխութեան, մեղաւորը կրնա՞յ արժանանալ արքայութեան . . . : Ես որ Լիլիի առաջին վարմունքին վրայ դատելով կ'սպասէի ծանր խօսքեր, կծու սաստեր և դառն դանդատներ իր կողմէ, կ'ընդունիմ միայն վստահութիւն, յարգանք ու սէր: Իսկ աւելի զարմանալին այս է, որ Լիլի և ոչ անգամ մը ակնարկեց մեր միութեան, մեր ապագայ խորհուրդներուն, թէև իր խնամքն, իր հոգսախրութիւնը չափ չունին: Սիրելի Վուտ, աւելորդ կ'սեպեմ նկարագրել քեզ թէ՝ ինչպէս կ'սարսռիմ, կ'դողամ ու կ'այրիմ երբ ինձ կ'մօտենայ, երբ իր վճիտ ու փայլուն աչքերն իմ վրայ կ'յառէ, երբ ընտանի լեզուով ու կերպերով կատակներ ու խաղեր կ'ընէ . . . :

Խնդրեմ, դու որ աւելի փորձ ես, բարեկամ, և աւելի դրական սիրոյ խնդիրներու մասին, մեկնէ ինձ Լիլիին այս տարօրինակ ընթացքը . . . : Միթէ ներքին սրտմտութեան, յուսահատութեան, յանդիմանութեան նշաններ են իր շարժուձեները, միթէ չըհաւատար այլ ևս հաւատարմութեան և առաքինութեան, միթէ մահուան դուռը հասնելէն ետև՝ աւելի անո՛ւշ կ'գտնէ կեանքն զոր վայելել կ'փափաքի, միթէ կ'ափսոսայ այն օրերուն վրայ որ այնքան զոհողութեամբ անցան և փոխարէն անհուն խղճեր թողուցին իր վշտաբեկ սրտին մէջ: Սակայն եթէ նպատակն է վայելել, ինչո՞ւ համար ո՛չ սիրոյ, ոչ միութեան վրայ խօսք չբանար . . . : Բայց, բարեկամ, այսպիսի եղելութիւն մ'անհիմն, Լիլի բնաւորութեան հակառակ կ'երևին ինձ: Միթէ աւելի հաւանական չէ՞ որ Լիլի կամովին այսպէս կ'վարուի որ զիս պատժէ, որ իմ անորոշ, տարտամ, երկդիմի ընթացքս դատապարտէ լռելեայն . . . միթէ չըմեեռներ այսուհետև իր ա-

ռաջին իտէականն իմ հայկական ձակտիս վրայ . . . ո՞ գիտէ, թերևս այս այլափոխութեան պատճառն իմ հօրս կտակն է, մեր ազգականութեան յայտնութիւնն է, իմ խղճահարութիւնս ու վարանմունքս է . . . : Դարձեալ, կարելի է բնական կ'գտնէ որ երկու եղբօր զաւակներ միայն իրրև ազգականներ, միայն իրրև քոյր ու եղբայր տեսնուին ու ապրին և ոչ իրրև սիրահարներ, կարելի է տոհմական յարաբերութեանց մէջ աւելի անմեղութիւն, աւելի պարզութիւն, աւելի անուշութիւն կ'գտնէ քան թէ տենդոտ, վերերօտ, մեղապարտ և մանաւանդ արգիլեալ սիրոյ մը մէջ, որ այնքան ծանր աղէտիյ առիթ եղաւ :

Ա յս հիմնաւոր կամ անհիմն տարակուսանաց մէջ կ'ծփամ, բարեկամ, և բացատրութեան մը կ'կարօտիմ որ հանգիստ դտնեմ : Անշուշտ պիտի դայ ինքնին ժամ մ'որ ծոյն բացատրութիւնը Լիլիէն պահանջեմ : Բայց պէտք է որ Տոքդօր Բէյն ևս ներկայ դտնուի, Տոքդօր Բէյն որ թերևս իրրև բժիշկ դիտէ ամեն բան և իրմէ ծածուկ կ'պահէ : Ա'հ, թէ որ Լիլիի հիւանդութեան հետ բուժեց նաև անոր սիրտը, թէ ցրուեց սէրը, ծանրագոյն աղէտիյ առաջն առնելու նպատակութեամբ, Պ. Բէյն կեա՞նք թէ մահ տուաւ ինձ, իմ ապագաս չնկնէ թէ ոչ կործանեց, անշուշտ քիչ ժամանակէն երևան պիտի դայ :

ՆԱՄԱԿ ՉԳ

ԿՈՒՏ ԱՌ ՏՈՔԹՕՐ ԲԷՅՆ

Լոնտօն . . .

Մի՛, մի՛ մեկնիր, բարեկամ, քաղքէդ մինչև որ այդ երկու սիրահարներու դատը չտեսնես : Անմեղ ու անփորձ սիրահարներ, որոց ընթացքը պիտի հեգնէի, եթէ հեգնութիւն ու կատակ ներելի լինէին այս փափուկ ու տխուր պարագային մէջ : Իրօք՝ ի՞նչ անմեկնելի սիրային երևոյթ, ամեն արգելք ու վտանգ դիմագրաւել, երթալ, մրկիլ, զերար պաշտել, իրարու հոգի տալ, և ապա անհամ ընտանութեան, չըսեմ պաղ մտերմութեան մէջ դլորիլ : Այս սէր է թէ խաղ, ինքնասիրութիւն ու դոռոզութիւն է թէ տափանք, նաղանք ու աղմագիտութիւն է թէ համեստութիւն ու անմեղութիւն, դեռ չկրցայ որոշել : Ճշմարիտ սէրը, բուն սէրը դատել, հաշուել չգիտէ, և կ'զարմանամ այդ սիրտերուն վրայ որ աւելի ընդունակ են արտաքին կամ թագուն ազդեցութեանց քան թէ սիրոյ ներշնչութեանց : Թերևս կ'սխալիմ, և այդ երևոյթական համբերութիւնն ու հանդարտութիւնը ներքին սրտմտութեան, զայրոյթի նշաններ են, որոց պիտի յաջորդէ փոթորիկը . . . : Դու, բարեկամ, որ բնախօս, սրտաբէտ բժիշկ մ'ես, դու կարող ես մեկնել այս երևոյթը :

Նեղսոնի դրած դիրն ինձ բաւական կ'մեկնէ իր վիճակն, որ փափուկ է, և կ'մտածեմ թէ արդեօք ի՞նչ ծանր և թերևս աղէտալի վերջ պիտի ունենար այդ սէրն եթէ դու անձամբ ներկայ չլինէիր, եթէ դու խորհրդով ու գործով օգնութեան չհասնէիր այս համբակ կամ թշուառ էակներուն :

Ուստի մի՛ գառնար մինակ, յորդորէ Համոզէ որ Լիլի և Նելսօն ազգեկից լինին քեզ մինչև Լոնտօն, և մի անգամ այս ազատ հողիս վրայ՝ ամեն դժուարութիւն ու խղճահարութիւն կ'յարգարին, ամեն անպէտ ու մտոտի նկատմունք կ'դադրին։ Եթէ պէտք լինէ, դիւրին է լորտ Խատհէմի, այս է Պ. Դանիէլը, Հաւանութիւնն ևս ստանալ, միութեան մը համար որ այնքան ուշացաւ Պ. Նելսօնի մանրակրկիտ քնաւորութեամբը, թէև լորտ Խատհէմ ապիկար է և աղօտ գաղափար մ'ունի անցած դարձածին վրայ։

Մահուան վարագոյրն ընկնելով այս տեղ՝ մի շատ աղէտալի դիպուածներու վրայ, կ'յուսայի որ այդ կողմէն մեր բարեկամին կենաց արևը պիտի ծագի, և երբէք մտքէս չէր անցներ որ այդպէս աւելի սև ամպեր պիտի դիզուէին արևելեան հորիզոնին վրայ, Նելսօնի ճակատագրին վրայ։ Պիտի ցրուին այս ամպերը, բարեկամ, եթէ յաջողիս բուժել և հաշտել երկու սիրտեր որ թէև ապրելու փափաք ունին, բայց կենդանութեան նշոյլ չեն ցուցըներ։

Ցուսով եմ որ պատասխանդ պիտի աւետէ ինձ ձեր ուղղորութիւնը։

ՆԱՄԱԿ ԶԲ

ՏՈՓԹՕՐ ՐԷՑՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Պէյ... ...

Սիրելի վուտ, Ամեն խորհուրդ և գաղտնիք պարզուեցան։ Այլ ևս գործ չունիմ այս տեղ և կ'վերադառնամ... աւ-

անձին։ Նելսօն և Լիլի երջանիկ են... առանց միանալու. կ'վայելեն այն երջանկութիւնն զոր պատուոյ զգացումն, պարտաւորութեան լրումն, խղճի անդորրութիւնն և ազգականութեան զուտ ու անարատ սէրը կ'հայթայթեն։ Նելսօն ու Լիլի չպիտի ամուսնանան... ինչ մեծ զոհողութիւն, ինչ մեծ ողջակէզ, պիտի պոչես, բայց այդ զոհն, իրենց հին, աննկուն սէրը, կ'նուիրեն՝ իրեւ խունկ՝ սիրական և պարկեշտ հօր մը յիշատակին, կ'խոնարհին նուիրական կտակի մը և Հայրապետի մը կոնդակին առջև, որ հայութեան և անոր եկեղեցւոյն քաջ ներկայիչն ու պաշտպանն է...։ Մեզի տարօրինակ կ'երևի այս հլութիւնը, մեր անկլիական բարուց անսովոր կ'թուին այս անձնուիրութիւնն ու օրինապահութիւնը, սակայն, Ճշմարիտը, մարդ որ զգացմունք և պատիւ ունի, մարդ որ իր ազգային օրէնքն ու աւանդութիւնները կ'յարգէ, մարդ որ մէն մի երկրի սովորութեանց և ազդերու յարաբերական կացութիւնը կ'նկատէ, չկրնար չսքանչանալ այսչափ մեծ և ծանր զոհողութեան վրայ, որով երկու ազնիւ խանդավառ հոգիներ, ինքնակամ կ'մերժեն ամուսնութեան ծաղկալից պսակն և կ'դնեն իրենց գլուխն եղբայրութեան համեստ թաղը...։

Սակայն ինչպէս, ի սկզբան անհաւատալի կ'երևի, որ մահու չափ զիրար սիրող էակներ այսպէս յանկարծ հեզ գառնուկներ գառնան։ Ես ևս չպիտի հաւատայի այս փոփոխութեան եթէ ականատես չլինէի, եթէ անոր անկեղծութիւնը չփորձէի և եթէ՝ ներքին գաղտնիքն իմանալով, դիտապէս չմկնէի։

Շատ դժուարին պարագաներու, շատ աղէտալի և սրտաշարժ տեսարաններու ներկայ գտնուած եմ։ Իմ արհեստիս բերմամբ՝ կսկծալի գործողութիւններ ըրած եմ, ձեռք, ոտք կտրած, մահուան ձեռքէն հիւանդներ ազատած եմ և երբեմն դերեզմանի ղրկած, բայց երբէք ականատես չեմ եղած տեսարանի մը, զոր համառօտ պիտի գծեմ, եթէ արդէն նե-

ասն չէ նկարագրած քեզի։ Բայց այժմ շատ յուզուած եմ, թէև ծեր, և յաջորդ գրովս կ'կատարեմ այս պաշտօնն որ սիրագ հանդարտի, և թերևս միաքդ համոզուի։

ՆԱՄԱՆ ՊՋ

ՆԵԼՍՕՆ ՍՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բոլոր կասկածներս կ'հաստատուին, բարեկամ. . . սիրուհիս կորուսի և քոյր մը, հօրեղբօր աղջիկ մը զատյ . . . ինչ անակնկալելի փոփոխութիւն, որու մանր պարագաները գրած պիտի լինի քեզ Տօքթօր Բէյն . . . . Լիլի կ'մերժէ պսակիլ և պատճառներ ունի . . . պատճառներ՝ որ արդէն գիս ևս անհնարին տարակուսանաց մէջ ձգած էին . . . ։ Զղիտեմ ուր եմ. . . նոր աշխարհ մը կ'բացուի իմ աչքիս. չեմ ինչ որ էի, անկլեայի մը, չէ սիրտս ինչ որ էր, սիրոյ վառարան մը . . . հայութեան զգացումն կնքեց հոգիս նոր լուսով, մկրտեց սիրտս նոր կրակով։ Նոր մարդ եմ։ Ա յս այլափոխութիւնը Լիլին գործեց, Լիլին վճռեց իմ ճակատագիրս . . . յուզմունքս սաստիկ է, չեմ կարող երկար գրել . . . ։ Նոր կեանք մը կ'սկսի ինձի համար, նոր էակ մը կ'տեսնեմ իմ առջև . . . Լիլի նոյնը չէ . . . այլ անկեղծութեան, գորովոյ, անձնուրացութեան կենդանի տիպար մը . . . ։ Շատ աւելի մեծ, շատ աւելի վեհանձն է քան գիս, շատ աւելի կ'սիրէ ու կ'յարգէ հօրենական կտակ, ազգային օրէնք, հայութեան սովորոյթը քան գիս . . . ինչ

վեհ հոգի, այդ քնքուշ, գողտրիկ ու չնորհալի մարմնոյն մէջ. . . ։ Ես իր մօտ շատ փոքր եմ և մերթ ընդ մերթ հոգւոյս խորը մրմունջներ, տրտունջներ կ'լսեմ. . . չեմ ըսեր որ ապերջանիկ եմ, ոչ. . . Լիլին իմ քովս է միշտ, Լիլին միշտ իմն է, Լիլին միշտ կ'սիրէ, կ'դգուէ զիս, կարող եմ ամեն օր, ամեն ժամ իր անուշ տեսքը վայելել, իր հրապուրելի ձայնը լսել, իր ընտանեկան գորովը ընդունիլ, սակայն իր դէմքին, իր աչքերուն, իր ձայնին մէջ չկան այն հուրն ու կայծերն, այն հրատապ բաղատրութիւնն որ երբեմն կ'սարսռէին բոլոր մարմինս և զմայլելի սպասորութիւն մը կ'ազդէին հոգւոյս։ Այս նոր, հանդարտ, անուշ և ազնիւ կերպարանին առջև չունիմ, իրաւ, այն բուռն խանդն, այն դառն կասկածներն, այն սուր կսկիծներն, այն անհուն տենչանքն զոր կ'ազդէին ինձ սէրը, պարտաւորութեան զգացմունքը, հօրս կտակին յիշատակն, և իմ կեանքս անտանելի պայքար մը կ'դարձընէին, սակայն կարող եմ վստահ լինիլ որ երջանիկ պիտի լինիմ, կարող եմ ըսել որ Լիլիի այս հանդարտութիւնն ու հոգւոյ անդորրութիւնը խիստ մեծ զոհողութեան արդիւնքը չէ, ներքին դառն կռիւներու առժամեայ դադար մը չէ . . . կարող եմ ըսել որ նա չնահատակուիր . . . երբ հրավառ սէր մը կ'գադրի յանկարծ ու եղերական սէր կ'գառնայ . . . ։

Սիրելի Վռւտ, փոթորկին յաջորդեց անդորրութիւնը, և երանի թէ այս անդորրութիւնն անվրդով շարունակէր։ Անշուշտ, ինչ զովութիւն որ կ'զգամ ծովափին վրայ՝ երբ յոգնած ու քրտնած՝ Մարմարայի ջրփիւռը կ'ծծեմ, նոյնը կ'ըզգամ, երկարատև տանջանքէ մ'ետք՝ Լիլիի մաքուր ու անուշաւէտ շունչն ընդունելով, սակայն սիրտս երբեմն կ'արիւնի, անցելոյն վրայ ակնարկ մը ձգելով կ'հառաչեմ. . . այս գառնութիւնն ու հառաչն ինչ կ'նշանակեն . . . ոմ է մեղաւոր, ես, Լիլի՞, բաղդը . . . . ոմ, եթէ՝ թևերս բաց՝ չքնաղ էակ մը գրկելու միջոցիս, նա կ'թռի, և կ'գրկեմ

հայութիւնը, կ'դրկեմ քոյր մը, կ'դրկեմ Հայաստանի հո-
գին . . . : Ո՛ր պիտի անցնի մեր կեանքն, ո՛ւր պիտի տա-
նի մեզ բաղդը կամ Լիլին, դեռ ևս չգիտեմ. . . : Լիլին
միայն գիտէ, և անոր նշմայրին կ'սպասեմ որ լինիմ ինչ
որ կամի, ընեմ ինչ որ հրամայէ . . . :

ՆԱՄԱՆ ՊԷ

ՎՈՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտօն . . .

Բարեկամ, Դու ես մեղաւորը, և պէտք է որ կրես հետ
ընթացքիդ հետևանքը : Ինչո՞ւ կ'դանդաղիս, կ'ողբաս բաղդիդ
վրայ, քանի որ ցանածդ կ'քաղես : Լիլի կ'մերժէ ձեռքդ,
և Լիլի իրաւունք ունի . . . դնա, եթէ բան դործ չունիս,
Հայոց Պատրիարքին, կաթողիկոսին խորհուրդ հարցուր, դնա
օրինաւորութիւն փնտռէ, բայց մի՛ զարմանար եթէ Լիլի այդ
ամեն խղճահար շարժումներդ ուրիշ կերպ կ'մեկնէ, և միայն
իբրև քոյր քեզ սիրել կ'ուզէ . . . իբրև քոյր, կ'իմանաս :
Սիրտն աղատ է, երկնից Թռչունին պէս թևեր ունի այսօր,
և վաղը կրնայ ուրիշին գիրկը Թռիլ, միշտ քեզի քոյր մնալով.
կ'հիանամ խելքիդ վրայ, և շատ բնական կ'գտնեմ Լիլիին
մերժումը . . . նա չսիրեր յեղյեղուկ, անկայուն, Թեթև
անձ մ'որ օդին հետ, ազգութեան հետ, կլիմայի հետ զգայ-
մունք կ'փոխէ . . . : Այժմ կրէ պատիժդ, և մի՛ վշտա-
նար, մի՛ փրփրիր . . . դու տուիր սիրոյդ այդ ելքը . . .
ինչ այլանդակ ելք . . . :

Ուրեմն ինչ նպատակ ունեցան այնքան հոգ, նեղութիւն,
տաղնապ եթէ սերդ՝ այդ անտարբերութեան, դու ըսէ ազ-
դականութեան, պիտի յանդէր, լաւ ևս էր բնաւ չսիրել, և
Լիլին իր բաղդին Թողուլ : Թշուառ օրիորդ, ես բնաւ չեմ
կարծեր որ կամովին կ'հրաժարի սէրէն, չեմ կարող ըմբռնել
որ կենացը հետ սկսած սէր մը, սէր մ'որ իր հոգին էր,
յանկարծ դադրի, և դադրելով ինք ապրի . . . միայն Թէ,
ինչպէս հաւանական է, քեզմէ վրէժ լուծելու համար ընէ
ինչ որ իր բնութեան հակառակ է, ուրիշին տայ իր անձը,
սիրտը Թաղելով այն դերեզմանին մէջ, որ իրեն համար քու
սիրդդ պիտի լինի այսուհետև, մինչդեռ նա կարծէր ան-
շուշտ երբեմն Թէ իր արբայութիւնն է այն, սիրոյ բովմ'էր
այն ուր երկու անձ կ'հալին և մէկ հոգի կ'դառնան . . . :

Թերևս ծանր դտնես, Նելսօն, դիտողութիւններս, բայց
իրաւունք ունիմ իմ կարծիքս աղատ յայտնել, նա մանա-
ւանդ երբ կ'տեսնեմ որ մէկ կողմէ անմեղ էակ մը Թշուա-
ռութեան կ'դատապարտես, և միւս կողմէ կ'գանդատիս որ
քեզ կ'մերժէ . . . : Ստուգիւ զոհ մը, նահատակ մ'է Լի-
լի, չէ Թէ քու երևակայած կերպովդ, պատուոյ և առաքի-
նութեան զոհ, այլ անիրաւութեան . . . :

Գէթ այսպէս կ'իմանամ ես խնդիրն, այս եզրակացութիւ-
նը կ'հանեմ քու և Տոքթօր Բէյնի նամակներէն, որ տար-
բեր ոճով նոյն իմաստը կ'պարունակեն :

Մի՛ Թողուր, Նելսօն, որ Տոքթօր Բէյն միակ դառնայ :
Դարձիր անոր հետ. այս ուղևորութեան մէջ միայն կ'տես-
նեմ բոլոր այդ աղետալի դարձուածներու դարմանը, և կը
յորդորեմ քեզ խոնարհիլ Լիլիի առջև, ղղջալ և անկեղ-
ծօրէն խոստովանիլ, որ մեղաւորը դու ես, և Թէ՝ անոր հետ
հայրենիք դառնալու պատրաստ . . . կարո՞ղ ես, քաջու-
Թիւն ունիս այդ խոստովանութիւնն ընելու . . . ես չեմ կար-
ծեր. վասն զի դու հայութիւնն աւելի կ'սիրես քան Թէ Լի-
լին, Թէև այս սիրելով միւսն ատած չես լինիր . . . ուրեմն
ինչո՞ւ կ'դանդատիս . . . :

ՆԱՄԱԿ ՂԸ

ՆԵԼՍՕՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Ո՛րքան անիրաւ ես . . . սակայն ես չպիտի խօսիմ. խօսքս կշիռ չունի քու աչքիդ, այլ մեր բարեկամը, Տոքթօր Բէյն, որու հաղորդեցի դրածդ որ սիրտս ամբի, և որ քեզի համար կասկածելի անձ մը չէ . . . լսէ և դաս առ . . . ես քեզմէ սպեղանի կ՛խնդրէի վէրքիս համար, դու դաշունի նման գրչով մը կ՛քերքերես զայն . . . ադոր չեմ նեբեր, բայց քեզ միշտ կ՛յարգեմ ու կ՛սիրեմ. . . :

ՆԱՄԱԿ ՂԹ

ՏՈՔԹՕՐ ԲԷՅՆ ԱՌ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Շատ անհամբեր ես. դեռ ամեն բան չիմացար և կ՛դատապարտես Նելսօնն, որու գրած նամակդ շատ դառն ու կծու գտայ: Եթէ բոլոր պատմութիւնն իմանաս, ինչպէս որ խօսք տուած էի քեզի գրել, կարծեմ թէ վէրադ պիտի քակես և աւելի պիտի գարմանաս քան դատապարտես:

Կան այնպիսի երևոյթներ սիրոյ մէջ զոր մեկնելու համար

քաջ դիտնալ պէտք է մարդկային բնութիւնն և այն պարագաներն որոյ մէջ ծնունդ առած է այդ սէրը: Շեմ ուզեր երկար խօսիլ այդ մասին որ տաղտուկ չպատճառեմ: Բոլոր խնդիրը սա կիտին մէջն է: Երբեմն՝ իբրև անկլիացի՝ զիրար սիրող էակներ, այսօր՝ իբրև Հայ՝ և մանաւանդ իբրև աղգականներ, զիրար միայն կ՛յարգեն: Քանի՛ քանի օրինակներ կրնամ մէջ բերել ցոյց տալու համար քեղի որ սիրահարի կամ սիրուհոյ վրայ նոյն իսկ կերպարանի թեթև փոփոխութիւն մը յանկարծ փոխած է միոյն կամ միւսին սիրոյ բնութիւնը կամ գլխովին սէրը դադրեցուցած: Իսկ Նելսօնի և Էլիլի նկատմամբ՝ խնդիրն աւելի բացառիկ պարագաներով կ՛ներկայի, և բոլորովին անակնկալ լուծում մը կ՛ստանայ: Ցեղակարծ յայտնութիւն մը կ՛այլայլէ միտքն ու ջիղերն, այլ կ՛բուժէ սէրը: Իր հիւանդութեան ժամանակ սէրը կ՛զտի, զղացմունքը կ՛պարզուին և աւելի որոշ կ՛տեսնէ իր վիճակը: Կ՛տեսնէ ու կ՛զգայ որ իր բոլոր էութիւնը կ՛այլափոխի և ուրիշ անձ մը կ՛դառնայ: Իր սիրոյն բոյժն հիւանդութեան մէջ կ՛գտնէ: Այս ներքին յեղափոխութիւնը դիւրին է մեկնել անոր որ Էլիլին նուրբ, փափուկ զգայնութիւնը դիտէ ու կ՛գնհատէ, որ անոր պատոյ և պարտուց զգացմունքը կ՛ճանչէ. ահա գաղտնիքը: Սակայն՝ որչափ որ Էլիլի հոգւոյն մէջ անցած այլայլութիւնները կ՛ընդնշմարէի՝ իր հիւանդութեան ժամանակ, թէև կ՛դիտէի որ իր եռանդն ու խանդը կ՛մեղմին, նոր գոյն ու ձև կ՛առնուն, բայց կ՛փափաքէի ստուգել: Նոյն ինք Էլիլն կանխեց այս փափաքս երբ անկողնէն ելնելէն մի քանի օր ետք՝ յանկարծ ինձ առանձին ըսաւ.

— Սիրելի Բէյն, այս իմ հիւանդութիւնս սպեղանի մ՛եղաւ սրտիս . . . հանդարտ եմ, չունիմ իմ առաջին յուզմունքս, երկիւղներս, սարսուռներս: Շեմ այլայլիր, հոգիս չվրդովիր առաջուան պէս երբոր Նելսոնի առջև կ՛դտնուիմ, Նելսօն՝ որու տեսքը միայն երբեմն արիւնս կ՛յուզէր, և զմայ-

լելի տպաւորութիւն մը կ'ընէր իմ վրայ։ Միթէ ես թէ նա փոխուած ենք, չգիտեմ։ Այս գիտեմ միայն որ կ'սիրեմ Նելսօնն, բայց այս սէրս այն սէրս չէ, այն սէրս որ կ'ձըմ լէր սիրտս, Ուայթ կղզիէն զիս դուրս նետելով Պոսֆորի ափունքը կ'քշէր, որ ամեն հալածանքի դիմակալելու կ'յորդորէր, որ աշխարհս իրեւ դրախտ մը և Նելսօն անոր ամենէ ընտիր արարածը կ'ներկայէր ինձ, որ աղէտից մէջ անդամ երանութեան հեռանկար մը կ'ցուցընէր ինձ . . . կ'աղաչեմ, սիրելի Բէյն, գոնէ արդեօք փոխեցիր սիրտս, գուն ինչ գեղ տուիր ինձ . . . »

Բարեկամ, ինչ կրնայի պատասխանել այս անմեղ ու պարզ յայտարարութեան, որու գրկիէն արդէն դուրս էի, եթէ ոչ,

— Աղջիկս, դեռ տակաւ ես. մի խօսիր հին ու նոր սիրոյ վրայ. միայն սիրէ, և մի փնտռեր թէ ինչ է անոր աղբիւրը . . . սիրէ միշտ ինչ որ դեղեցիկ, անկեղծ ու ազնիւ է . . . »

— Եւ միթէ Նելսօն դեղեցիկ, անկեղծ ու ազնիւ չէ՞ . . . »

— Անշուշտ . . . »

Եւ Լիլի այնուհետև խորունկ մտածութեանց մէջ կ'ընկղմէր. անտարակոյս իր յիշատակներն, իր հիւանդութեան պատճառն, իր բոլոր կենաց պարագաներն ազօտ գոյներով կ'երևակային իր երևակայութեան. լաւ չէր ըմբռներ իր հոգւոյն մէջ տեղի ունեցած յեղաշրջումն, յստակ չէր յիշեր այն վերջին հարուածն որ իր բոլոր էութիւնը սարսռեց և զինք պրեթէ անշունչ ու անկենդան գետինը տապալեց . . . » Իրաւ, կը տեսնէր որ երբեմն ինքն իրեն կ'խօսէր, իր աչքին սուերներ կ'երևէին, մերթ կ'արտմէր, մերթ կ'ծիծաղէր և Նելսօնի հետ այնպիսի ազատութեամբ կ'խօսէր որ իրեն բնական չէր, և այս նոր տեսակ տկարութեան մը նշանները դիտելով կ'դողայի որ մտային աղէտալի հետևանք մը չըննէայ, ուղեղային խանգարում մը չպատահի, սակայն կ'յուսայի որ

քիչ ժամանակէն իր ջղային սարսուռները պիտի դադրին, իր անուրջները պիտի ցրուին, և ինք պիտի գտնէ այն բացատրութիւնն զոր իմէ կ'պահանջէր . . . » Սակայն ես անհոգ չէի Լիլիի այս տարօրէն վիճակին առջև։ Բնաւ զինք մինակ չէի թողուր, մերթ առանձին, մերթ րնկերներով, մերթ Նելսօնին հետ պտոյտներ կ'ընէինք. անոր միտքը զբաղեցնելէ, ախորժելի իրերով և տեսարաններով կ'զբաղեցնէի։ Պարտէզներ, ձորեր, բլուրներ, Մարմարայի ծովին էին մեր ամենօրեայ արշաւանքի վայրերը։

Ձեմ մոռնար երբէք մեր մէկ ծովային պտոյտն, որ սրտաշարժ տեսարանի մ'առիթ տուաւ։ Քանի մ'օր առաջ զմայլելի երեկոյ մը՝ նաւակի մէջ էինք և ֆէնէրի ափունքը կը քերէինք։ Լուսինն՝ իր արծաթի նշոյլները կ'բեկբեկէր հանդարտիկ և կապոյտ ծովու մը վրայ . . . » Եթէ բանահիւս լինէի՝ քեզի կ'նկարագրէի օգային ոճով այս տեսարանը, բայց բժիշկ եմ, և պիտես, սիրելի Վուտ, որ նշարակն ու կտրոյը ներշնչող գործիներ չեն։ Իմ միտքս միայն Լիլիին հոգւոյն վիճակը պարզօրէն յայտնել է քեզի . . . Նոյն իրիկուն Լիլի շատ տխուր էր. ստէպ իր աչքը կ'յառէր մթագոյն հորիզոնին վրայ, ուր երկին ցամաքի հետ կ'խառնուի, ամպերը ջրերու հետ, մարդիկ հոգիներու հետ։ Ցանկարծ իր աչքին զարկաւ Իշխանաց կղզւոյն մօտ՝ առագի կղզեակ մը (նէֆանտօզ) որու շուրջը ձրագներ՝ մանր աստղերու պէս՝ կը շարժէին, կամ ծովու վրայ կ'տատանէին . . . »

— Ի՛նչ սիրուն տեսիլ, հառաչեց Լիլի, Նելսօնի վրայ ակնարկ մը ձգելով։ Արդեօք քանի երջանիկ են այն կղզեկին բնիկներն, որ կ'լողան անհոգութեան և լուսոյ մէջ։ Միթէ կարելի չէ՞, սիրելի Բէյն, յարեց նա ինձ դառնալով, գնալ բնակիլ այդ կղզեակն, ուր մարդ՝ մարդկային ծանր օրէնսդրութեանց չլծէն հեռի, կրնայ գտնել իր հոգին և իր Աստուածը, արդարութեան և ազատութեան հետ . . . »

— Շատ կարելի է, սիրելի աղջիկս. միայն այդ օդին ու

ջրին մէջ փալփլող կղզեակն անբնակ ու ամայի է, ազատութեան և սիրոյ ապաւէն մը չկրնար լինիլ . . . . : Տեսած ըլլալէդ՝ որ ձկնորսներու նաւակներէ կ'արձակուին, առաւօտուն կ'մարին, և ըլլաս աչքով միայն կարիճներ ու օձեր կը տեսնուին այդ թափուր կղզեակը . . . :»

Լիլի՝ գլուխը ծռելով հառաչեց. այս հառաչը թերևս վերջին բարև մ'էր զոր կ'ուղղէր իր ազատութեան յոյսերուն, որով կ'խորհէր իր սիրաբեկ կեանքն անցընել ազատութեան ու միայնութեան մէջ, մարդիկներէ հեռի, և Նէլսօնի հետ կորսուիլ սիրոյ յաւիտենական երանութեան մէջ . . . :

Այս գիշերուան տեսարանն ու Լիլիի մի քանի խօսքը խորտակուրախութիւն ըրին իմ մտքիս վրայ: Յայտնի կ'պիտէի որ նորաբոյժ օրիորդն իր հիւանդութեան պատճառը, կատկին իր վրայ ըրած ներգործութիւնը կ'զգար և իր ներքին յուզմանց դէմ կ'մաքառէր . . . :

Այս վիճակին մէջ անցուց մի քանի շաբաթ ևս, իմ հիւղութեանս ներքև: Երբեմն չափէն աւելի ընտանութեամբ կը տեսնուէր Նէլսօնի հետ, երբեմն պաղութեամբ կ'վարուէր և անորմէ կ'խորշէր, ինչպէս կ'խորշի մանկիկ մը կրակէն, որ րու մէջ իր մատն այրած է: Այսպիսի պարադաներու մէջ Լիլի կ'ծիծաղէր կամ կ'արտասուէր, և երբ մեր մօտ դառնար՝ իր աչքերուն մէջ կ'տեսնէի մարգրիտի փայլուն կայլակներ, և շրթերուն վրայ արտասուալի ժպիտներ . . . :

Նոյն միջոցին Պ. Նէլսօն կ'հալէր ու կ'մաշէր. չէր կարող լեռվին մնկնել Լիլիին այս անորոշ ընթացքն և ոչ կը ժամէր խօսք մը բանալ ապագայի վրայ: Սակայն պէտք էր այս տարտամ կացութեան վերջ տալ, և Լիլիին առողջութեան վիճակը կ'ներէր խօսիլ փափուկ խնդրոյ մը վրայ, որ րու լուծումն կախումն ունէր այս երկու անձերուն ապագայ կեանքը:

Ուստի օր մը Լիլին առի և մինակ գացի գիւղիս արևմտեան ծայրն, որ Մոտայի հրուանդանը կ'կոչուի: Շատ սիրուն և

անուշ էր օդը: Մեր առջև կ'երևէին Գէնէր, և անդին կղզիներն, որոց կ'նայէր Լիլի:

— Սիրելի աղջիկս, ըսի, միթէ ձանչցար կղզիդ, այն կղզեակն՝ ուր անցեալ իրիկուն փափաք յայտնեցիր բնակելու . . . :

— Այո՛, պատասխանեց Լիլի ժպտելով. ինչ յիմարութիւն. չոր ու խոպան վայր մ'է, թէև այն գիշեր ուրչափ չքնաղ կ'երևէր աչքիս . . . :

— Մտէպ այնպէս գեղեցիկ կ'երևին մեր երևակայութեան և լուսնկային՝ շատ բաներ որ ինքնին տգեղ են . . . :

— Հով մ'էր այն անցաւ, սիրելի Բէյն:

— Սակայն կղզի մը կայ, որ թէև հեռու և մշուշապատ, մեր սրտին աւելի մօտ, մեր սիրոյն աւելի արժանի է, ըսի, այս կղզին է Անկլիա, աղջիկս, մեր քնիկ հողն, ուր քանի մ'օրէն պիտի դիմեմ, այս տեղ իմ պաշտօնս լրացած լինելով: Արդեօք չե՞ս փափաքիր ինձի հետ դալ . . . :

— Չդիտես ուրեմն, սիրելի Բէյն, որ ես բուն Հայ եմ, ըսաւ Լիլի այնպիսի շեշտով մ'որ սիրտս յուզեց, և ինչ կայ Հայու մը համար Անկլիա . . . :

— Գիտեմ, աղջիկս. բայց ինչ փոյթ. միթէ հողմ փոխելով մարդ ազգութիւնը կ'փոխէ: Ասկէ զատ, չունի՞ս Հայր . . . մայր Անկլիա, որու օդով ու ջրով սնած ես, և ուր քեզի կ'սպասեն հարստութիւն, պատիւ, փառք, երջանկութիւն . . . :

— Երջանկութի՛ւն . . . և միթէ Նէլսօն աւելի չը՞սիրեր Հայաստան քան Անկլիա. միթէ աւելի չը՞նարեր իր նախնեաց հողին վրայ աղքատ ապրիլ քան թէ հարուստ՝ օտար երկրի մէջ . . . :

— Նէլսօն պատրաստ է քեզի հետևելու . . . :

— Ա՛խ ալիս, սիրելի Բէյն, նա կ'հետևի իր հօրը հրկիզակին, և ոչ Լիլիի կամքին . . . :

— Ուրեմն, փորձ մ'ըրէ . . . :

— Գառն փորձն առի. վկայ՝ իմ հիւանդութիւնս . . . »

— Սակայն, Էլիզ, դու հիմակ խելահաս օրիորդ մ'ես, և քաջ կ'ըդդաս, որ այս անորոշ վիճակը չկրնար շարունակուիլ . . . պէտք է վճռական որոշում մ'ընել . . . »

— Իմ որոշումն ըրած եմ . . . »

— Նելսօն և ես անաեղնակ ենք . . . »

— Պիտի իմանաք երբոր անոր մօտ գանուած ամեն թուղթերն, թէ՛ ընտանեկան և թէ պաշտօնական ինձ յանձնուին որ կարդամ . . . »

— Վտանգաւո՛ր պահանջում . . . . »

— Չէ, սիրելի Տոքթօր: Մի վախնար, հիւանդ չեմ լինիր. մէկ անգամ կ'կրէ մարդ յանկարծական հարուածի մը հետևանքը: Վարագոյրն ընկաւ. իրականութիւնը գէմ առ գէմ, ի մօտուստ կ'տեսնեմ, կ'ըդամ որ չեմ ինչ որ էի, և իմ ու Նելսօնի ապագայ երջանկութիւնը խղճի խայթի և աւազի վրայ չեմ ուզեր շինել . . . »

Աւելորդ է, սիրելի Վուտ, շարունակել այս խօսակցութիւնն, որու իմաստը հազորդեցի Պ. Նելսօնին: Նա ակամայ յանձնեց ինձ Էլիզի պահանջած թղթերը: Էլիզ մի քանի օր պահեց, և հետևեալ նամակն ուղղեց ինձ: Այդ նամակը Պ. Նելսօնին հետ կարդալէն եաև՝ օրինակը կ'ուղարկեմ քեզի: Դու ևս կարդա, Պարոն Վուտ, այդ գիրն, որ բոլոր կիսատուր խորհրդածութեանցս ու դիտողութեանցս ամփոփումն է, և՝ եթէ կարող ես, մի զմայլիր Էլիզի վեհանձնութեան վրայ, և Նելսօնը դատապարտէ:

ԷԼԻԶԻ ԱՌ ՏՈՔԹՕՐ ՌԻՉՃՆ

«Կարդացի, իմացայ ամեն պարագայ, ամեն դէպք և թշուառութիւն: Շնորհակալ եմ քեզի, Պ. Բէյն: Հիմակ աւելի որոշ ու պայծառ կ'տեսնեմ իմ կացութիւնս, աւելի կարող եմ որոշել իմ նպատակս: Արդէն ազատած էիր պատիւս,

կեանքս, որ քեզի քաջայայտ է, կ. Պօլիս դալով կ'ազատես Հոգիս, կ'փարատես տաժանելի կասկածները:

Մի քանի ամիս ի վեր՝ մութի մէջ էի, և այս մթութիւնն ինձ տանջանք մ'էր: Սէրս որ իմ ջահս էր, իմ խիզճս էր, Նելսօն իմ լուսատու ու կենսատու արևս էր, մարած էին և ես անպէտս կ'դիմէի ապագայի մ'որ իմիմէ կ'հեռանար: Այս պարագան իմ վրայ կ'ազդէր: Նելսօն անհանգիստ էր, թէև իմ առջև հանդարտ և զուարթ կ'երևէր, Նելսօն կը վարանէր, և իմիմէ շատ բաներ դալանի կ'պահէր . . . : Եւ ինչո՞ւ. վասն զի կ'սիրէր զիս, և կարծէր թէ պիտի վըշտանամ եթէ յայտնէր ինձ իր ծագումն, իր հօրը կտակն, իր հայութիւնն, իմ մօրս ընթացքն ու մահը . . . : Իր վիշտերը, տարակուսանքն ու հառաչանքը հրատապ տառերով դրոշմուած են, իրաւ, իր նամակներուն մէջ. սակայն այդ վարմունքը ճշմարտասէր և զգայուն մարդու վարմունքը չէր: Որքան Նելսօնն, նոյնքան կ'սիրէի ճշմարտութիւնն, և այս քօղարկելովը, կ'քօղարկէր իր սիրոյ. կ'սպառնար իմ Հոգիս, կ'դղրդէր վստահութիւնս, որու վրայ հիմնուած էր մեր սէրն, և ապագայ մը կ'պատրաստէր որ ոչ հիմ պիտի ունենար և ոչ յարատևութիւն . . . :

«Ահա այսպէս երկու սրի մէջ էր Նելսօն, ինչպէս որ կ'դուշակէի, այսպէս սիրոյ և նուիրական պարտաւորութեան մը մէջ կ'տարուբերէր, երբ՝ հայրենիք դառնալու համար փափաքս տեսնելով, առաջարկեց ինձ պատրաստութիւն տեսնել: Դիպուածն այնպէս բերաւ որ հօրը կտակագիրն և զանազան թղթեր ձեռքս ընկան և փիչ շատ վերահասու եղայ մեր վիճակին: Աւա՛ղ, ծանր, շատ ծանր եկաւ այս յայտնութիւնն իմ փափուկ սրտիս, յայտնութիւն մ'որու պարտաւոր էր զիս պատրաստել կանխաւ, և գրեթէ իրեն կաթուածահար ձեացի այն տեղն ուր կ'կարդայի այդ թղթերը . . . : Այնուհետև չգիտեմ ինչ պատահեցաւ, անկողնոյս մէջ հիւանդ էի և քեզ տեսայ, սակայն քաջ կ'զգայի որ

հիմնական այլայլութիւն մը Հոգիս կ'համակէր, կ'զգայի որ Նէլսօն դժբաղդ պիտի լինէր զիս սիրելով։ Այս գաղափարը սիրտս կ'հիւծէր, և իր ու հօրը կատկին դէմ գործելու երկիւղը բոլոր էութիւնս կ'սարսռէր . . . ։ Երանի թէ մեռնէի այս հիւանդութեանս ժամանակ. Նէլսօն իր ազատութիւնը կ'գանէր և գժկամակութեամբ իր սիրոյն ներշնչութեան չէր հետևէր, ես ալ դոհ ու երջանիկ սրտով սև հողը կը մտնէի՝ մտածելով որ սիրուած կ'մնայիմ անձէ մ'որու նուիրած էի իմ բոլոր հոգիս ու կեանքս, և որու համար զոհեր էի ամեն բան։ Բայց դու, սիրելի Տօքտօր Բէյն, մահուան ճիրանէն ազատեցիր կեանքս, բայց գոյ, սակայն կը պարտաւորիմ խոստովանիլ որ իմ սրտիս մէջ մեծ յեղաշրջում մը զգացի . . . սէրը կ'քակուէր իմ մարմինս, և կը սրանար ուրիշ աշխարհ մը՝ թողլով միայն համակրանք, զոհ բով այն էակին համար որ ազգութեան օրինաց պիտի զոհէր անշուշտ՝ ոչ միայն զիս այլ և իր կեանքն, եթէ հարկ լինէր . . . ։ Անտարակոյս հրեշտակ չէի, և մեծ պայքարս իմ սիրոյս դէմ չէր առանց վէրքի և արտասուքի . . . ։ Ունեցայ անուրջներ, երազներ, ստուերներ որ ժամանակ մ'իմ միտքս ու երևակայութիւնս կ'տանջէին, սակայն այդ տաժանելի վիճակն երկար չտևեց։ Մանաւանդ հիմակ աւելի յստակ, աւելի պարզ կ'տեսնեմ իմ պարտաւորութիւնս . . . չեմ մեղադրեր Նէլսօնը, նա չէ յանցաւոր, նա արատ, բիծ մը չունի իր սրտին մէջ, իր դիտաւորութեանց մէջ, այլ մեր բաղդը, ճակատագիրն է մեղապարտ, որ այսպիսի վախճան մը տուաւ մեր սիրայօդ կենաց և ուրիշ արահետ մը, ուրիշ ապագայ մը բացաւ մեր առջև . . . ։ Եթէ Նէլսօն մեծ է հոգւով և իր պարտքը կ'ճանչէ, ոչ նուազ մեծ է իր Լիլլին, որ այսօր իր հօրեղբօր աղջիկն է։

«Եւ ինչո՞ւ երկարեմ խօսքս։ Ալնուասիրտ ծերունի մը, իմ հօրեղբայրս՝ Ռափայէլ, Նէլսօնի հայրն, կ'յայտնէ ինձ իմ պարտաւորութիւնս . . . ։ Եթէ այսօր օրէնք, կամ-

ղնկոս, Պատրիարք իսկ թոյլ տային Նէլսօնի միանալ ինձ, ես բացարձակ պիտի մերժէի, վասն զի ամեն աշխարհային ու եկեղեցական հեղինակութենէ վեր կ'դասեմ այն ծերունիին դամբանական պատգամն որ դերեզմանին խորերէն իմ սրտիս կ'ազդէ, և անուղղակի կ'ըսէ ինձ. — «Դու Լիլլի, եղբօրս աղջկին ես, անձիդ պէս սիրէ հայութիւնն ու Հայաստանն, և Նէլսօնի հետ ապրէ իբրև քոյր։» Այս պատգամը պիտի պահեմ յիմհ, և այսպէս վարուելով շարունակած պիտի լինիմ իմ առաջին սէրս, սէր մ'որ այնքան աւելի սուրբ և անմեղ է որքան որ զիս մանաւանդ ազատեց այն անդունդէն որ օտարութիւն կ'կոչուի, և որու մէջ անհետ և աննշան պիտի կորսուէի եթէ Նէլսօնը չսիրէի . . . ։

«Կ'իմանաս, սիրելի Վուտ, իմ միտքս, որոշումս կ'գուշակես . . . ։ Քանի կ'կարդամ իմ աչքիս առջև գտնուած գիրերն այնքան այժ կ'ստանամ, այնքան իմ գիտաւորութեանս մէջ կ'հաստատուիմ. . . ։ Նէլսօն ազատ է . . . իմ եղբայրս է և ես կ'մնամ իր քոյրը . . . ։

«Իսկ դու, աղնիւ Տօքտօր, որ այնքան նեղութիւն ու վիշտ կրեցիր ինձի համար, դու որ հայրաբար գարման բերիր իմ մարմնոյ և հոգւոյ ցաւերուս, մնայիր միշտ մեզի հետ, մեր հայրն եղիր, և ցոյց տուր Նէլսօնի այն շաւիղն՝ որ մեծ, առաքինական գործերու և նպատակի կ'տանի, յայտնէ իրեն որ միայն հայութեան համար և Հայաստանի մէջ գործելով պիտի կատարէ ոչ միայն իր սիրական հօրը կտակն այլև իր Ճակատագիրը . . . ։»

Սիրելի Վուտ, այս սրտաշարժ ու պարզ գրոյն վրայ բառ մը չեմ աւելցներ։ Անմեղ, զգայուն ու վշտաբեկ սրտի մը բուրմունքն է որ անշուշտ իր գառնութիւնն ունի։ Երևակայէ թէ որքան աւելի ծանր ու փափուկ է ներկայ պարագայիս մէջ իմ բարոյական պաշտօնս քան ինչ որ էր բուժական գործս։ Լիլլիի դէմքն ու վարմունքը կ'հաստատեն գրածները։ Տրտում է, բայց վհատութեան

նշան մը չեմ տեսներ իր դէմքին ու աչքերէ մէջ, թէև միշտ վախ ունիմ որ այս մեծ զոհողութիւնն իր արդէն վտիտ ու փափուկ կազմուածքին վրայ չներգործէ և նոր տեսակ հիւանդութեան մ'առիթ չլինի: Վերանկում մը կրնայ շատ աղէտալի հետևանք ունենալ, և աչքս չորս բաց կ'հսկեմ այդ պիսի աղէտի մ'առաջն առնելու:

ՆԱՄԱԿ Ձ

ՎՕՒՏ ԱՌ ՆԵԼՍՕՆ

Լոնտոն . . .

Լուսթիւնդ, բարեկամ, կ'մտանէ դժդոհութիւնդ ու ցաւդ ինձի դէմ: Կ'ուզես հաշուիլ, այն միջոցին մանաւանդ որ երկին ու երկիր անհաշտ են քեզի հետ: Սակայն կ'խոստովանիմ որ այս հաշտութեան բուն միջնորդն Լիլլի գիրն է, անյուսալի գիր՝ որ բոլորովին շփոթեց միտքս: Զպայուն սրտի մը հեծեծանքը միացած են անոր մէջ հպարտութեան և պարտաւորութեան զգացմունքի հետ: Երբեմն շատ կ'մեղադրէի քեզ, հիմակ կ'արդահատիմ վիճակիդ, որու կերպով մը մեղսակից կ'գտնուիմ: Տօքթօր Բէյն և ես կայր բազդի մը դործիներն եղեր ենք անդէտս: Բոլոր մեր խուզարկութիւններն երևան հանեցին ճշմարտութիւն մ'որ, եթէ երբեմն քեզի ցանկալի էր, թերևս հիմակ աղէտալի կ'թուի: Գտար ինչ որ կ'տենչայիր, հայր, հայրենիք կտակ և գանձ, բայց կորուսիր այն պահուն զոր գլուխդ դնելու կ'վարանէիր . . . : Հաշիւդ ըրիր. կշիռն որոնց նպաստաւոր է, ելլից թէ մտից:

Ձեռքէդ ելածն ահագին կորուստ մ'է, ապագայ երջանկութիւնդ է, մինչդեռ շահդ անցեալն է: Եւ գուն անցեալին մէջ պիտի ապրիս, իբրև հին մարդ, վասն զի ներկան վայելել չգիտցար . . . :

Բայց անօգուտ են այս մեղադրանքն. կարող ես վերակազմել ապագայ մը, նոր նպատակ մ'ընտրելով: Աննպատակ մարդէ մ'աւելի թշուառ էակ մը չկայ աշխարհիս մէջ: Խընդրոյն էական կէտը պարզուեցաւ. Լիլլի միայն քոյրդ է. այս չբաւեր. պէտք է որոշել թէ ինչ կերպով անոր և քու երջանկութիւնը պիտի յարդարուին, ո՛ր պիտի հաստատես բնակութիւնդ, կ. Պօլիս, Անկլիա, թէ Հայաստան . . . : Լիլլի տրամադիր չերևիր նոր հայրենիքէն բաժնուելու, սակայն եթէ երբեք հաւանիս Հայաստան դառնալ, ինչ պիտի ընես Լիլլին, ինչ կեանք կարող է վարել այն վայրի և ամայի կողմերն անձ մ'որ փափկութեան և կենաց զանազանութեանց վարժած է . . . : Պէտք է որոշել, բարեկամ, այս կէտն, և թէ Լիլլին թէ քեզի համար աւելի նախապատ կ'համարիմ Անկլիա, ուր ձեր ապրուստեան դէմ գաւադրող չպիտի դանէք: Տօքթօր Բէյնի հետ ի նկատի առէք այս կէտն և շուտով ձեր որոշումն ըրէք . . . : Հայրենասէր մարդն թէ մօտուստ և թէ ի հեռուստ կրնայ ծառայել իր ազգին եթէ միայն կամք և միջոցներ ունենայ: Այս երկու պայմանները ձեզի չեն պակսիր:

ՆԱՄԱՆ ՁՄ

ՆԵԼՍՈՆ Ս.Ս. ՎՈՒՏ

Կ. Պոլիս. . . .

Աներկմիտ էի՝ որ ձիս անպարտ պիտի դտնես, բարեկամ, Էլլենին գիրը կարդալով: Երեւակայէ մի անգամ որ՝ եթէ ամեն բան գաղտնի մնար, ամեն պարտաւորութիւն և օրէնք առ ոտն կոխուէին, և ես եղնէի պսակը կատարելու, ինչ սոսկալի աղէտից դուռ մը պիտի բանայի, երբոր մեր ամուսնութենէն ետք՝ ամեն գաղտնիք երեան դար: Էլլենի խիղճը, նոյն իսկ իր սէրն՝ իրրեւ ապօրէն և պիղծ սէր, զինք պիտի տանջէին: Վաղուց պիտէի իր բնաւորութիւնը, դիտէի իր հպարտ, դիւրագրգռ հոգին, և իր մերժումը գուշակելով՝ անոր առաջն առնելու, խնդիրն օրինաւորութեան մէջ դնելու կ'ձդտէի: Աւաղ, դիպուածն իմ ձգտունքս ընդհատեց, գաղտնիքը ժամանակէն առաջ երեան հանեց, հետեւապէս փոթորիկը հասաւ, բոլոր խորհուրդներս տապալեց և իր աւերիչ հետքը մեր հոգւոյն մէջ թողլով՝ վերջապէս անցաւ. . . .

Հիմակ աւելի հանդարտ, աւելի գոհունակ սրտով իրաւունք երես կրնանք նայիլ, աւելի ընտանի ու սրբանուէր սիրով իրարու վրայ դուրգուրալ: Միթէ խնդիրն այսպէս լուծուելով՝ շատ բան կորուսի՞, կ'հարցընես ինձ, — Անշուշտ կորուսի ապագայ կենակից մը. սակայն եթէ անոր հոգւոյն հետ մարմինը դողնայի, ամեն բան ծածուկ պահելով, կ'յուսամ, բարեկամ, որ այդ դողնն ալ երանութեան տանէր. . . . ես չեմ յուսար: Հիմակ ոչ միայն մեր խիղճն աւելի հանդարտ, մեր կենակցութիւնն աւելի անդորր ու անուշ է, այլ և Էլլենի վտիտ, ժժգոյն ու մաղձոտ կերպարանն, ուրուականի պէս, չպիտի երեւի ինձ ըսելու. «Խոստեցայ, ինչ ըրիր. . .» այլ և իմ հօրս սպառնալի ստուերն չպիտի գայ ձիս հալածել իմ երջանկութեանս մէջ. . . : Դու՝ եթէ կամիս, նախապաշարում, կամ անհեդեդ խղճահարութիւն անուանէ այս, ես արդարութիւն կ'անուանեմ, և չեմ կարող ըմբռնել ընտանեկան հանգիստ և բարօրութիւն մեղսակցութենեն, գաղտնի սիրոյ և մտայոյզ ու մղեգին կրից մէջ. . . : Կ'նայիս, բարեկամ, որքան փոխած են լեզուս ու սիրոս ձշմարիտ սէրն ու հասուն խորհրդածութիւնը. . . :

Սակայն մի կարծեր թէ Էլլենն պիտի կապտեմ: Ինչպէս հիմակ ազատ է սրտով, նոյնպէս պիտի լինի ազատ իր դործելու ասհմանին մէջ: Եթէ նա իմ ազգականս է, բնաւ ստրուկս չէ: Նա մանաւանդ եթէ միակ, ջերմագին փափաք մ'ունիմ, այս է, անոր ապագայ երջանկութիւնը յարդարել և արժանի ու ընտիր ընկեր մը դտնել. . . :

Այս փափաքս յայտնեցի Տոքթօր Բէյնի: Գովեց իմ անձնուիրութիւնս, և ապա յարեց.

— Եւ միթէ դու մտադիր ես ուրիշ ընկերուհի մը, կին մը փնտռել. . . :

— Ո՛չ երբեք. ես կենացս մէջ չպիտի կարդսիմ. . . :

— Ուրեմն ի՞նչպէս կ'մտագրես ամուսին մ'առաջարկել Էլլենին, որու մէկ հատիկ մխիթարութիւնն է, դեռ առայժմ, քեզի հետ, իր սրտակից եղբօր հետ ապրիլ: Թոյլ տուր որ աւելի պարզուի իր ձակատս, աւելի բացուին երեսին վարդերն, սպիտանան իր սրտին վէրքերը, և ապա կարելի է առաջարկդ ընել:»

Շատ բանաւոր գտայ Տոքթօր Բէյնի դիտողութիւնն և միաքս դրի այս մասին բան մը չհինարկել Էլլենին:

Սակայն միւս խնդիրն, որու վրայ իրաւամբ կ'պնդես, այս է հաստատ բնակութեան վայր մ'որոշելու խնդիրը, դեռ անորոշ կ'մնայ: Տոքթօր Բէյն, որ իրաւամբ մեր Մէնաօրն է, յարմար չգտաւ մէկ Կ. Պոլիս բնակիլ, մանաւանդ Քալ-

կեդրն, ուր հին յիշատակներ տակաւին կենդանի են, և ոչ Անկլիա գառնալ, ուր լեմի Խտհէմի մահարձանը կրնայ ծանր տպաւորութիւն ընել Լիլիի վրայ, այլ կ'յորդորէ զնա Համբորդել, նոր օդ ծծել, նոր երկիրներ ու սովորութիւններ տեսնել, և սփոփել Լիլիի միտքն ու սիրտը, բնական, շքեղ տեսարաններու տպաւորութեամբ, բոլորովին վերանոր-ոգել իր կեանքն և տարբեր ուղղութիւն մը տալ իր զգացմունքներուն: Ինք ամենէ յարմար կ'դատի Հայաստանի կլիման ու հողը:

— Այն տեղ պիտի կազդուրի Լիլին սրտով ու մարմնով, կ'ըսէ Տոքթօր Բէյն, այն տեղ հայութեան հին նշխարներու և աւերակներու մէջ, ձեր նախնեաց շիրիմներուն և յիշատակարաններուն մէջ պիտի վերածնին ձեր ազգութեան զգացմունքը, պիտի միրտուի ձեր հոգին նոր հրով ու եռանդով: Դեռ դուք միայն անուամբ Հայ էք, Նէլսօն, և՝ եթէ կ'ուզէք ձեր հայութեան դրոշմն ընդունիլ, հայութեան ոգին ու տարերքն իւրացընել և ձեր եւրոպական կրթութեամբ կենդանացընել, պէտք է ոչ միայն Հայաստան դնալ, այլ և անոր եկեղեցւոյն ծոցը մտնել: Թերևս զարմանալի թուի այս յորդորը բժշկի մը կողմէ, որ նոր աշխարհի և նոր պետութեան զաւակ կ'համարուի, բայց ազգայնութեան խնդիրներու մէջ, ազգերու ներքին կենաց ու սովորութեանց մէջ, աւանդութեանց և օրինաց մէջ՝ պիտութեան զուտ, տեսական առածներն ու սկզբունքն որոշ կռուան մը չունին, և մարդ՝ որքան լուսամիտ լինի՝ պարտաւոր է քիչ շատ համակերպիլ իր ազգութիւնը կազմող տարրներուն, որ մտային յառաջդիմութեան համեմատութեամբ աստիճանաբար կ'այլայլին:

«Եւ դու, Նէլսօն, շարայարեց Տոքթօր Բէյն, արդէն Լիլիին հետ, աւելի պարտաւորութեան և գիտակցութեան, քան թէ հայրենի օրինասիրութեան ուժով՝ առաջին քայլը առիր՝ ղրկելով բազմամեայ սէր մը հօր մը հրամանին համաձայն, ուսանի այդ շաւղին մէջ դիւրին պիտի լինի քեզ նոր քայլեր առնուլ: Աղմուկ, բոմբիւն պէտք չէ այդ ընելու համար, և երբ միանգամ ձեր ուղևորութիւնն սկսիք, պիտի մտնէք բնապէս այն պայմաններուն մէջ և պիտի թողուցէք ձեր վրայէն ոչ միայն անկլիական ազգութեան այլ և անկլիական եկեղեցւոյ՝ այժմ ձեզի համար՝ օտարոտի նշանները: Ի սկզբան մտադիր էի ձեզ Լոնտոն դնալու յորդորել, սակայն աւելի հասուն խորհրդածութիւն մը ստիպեց զիս այս կարծիքս փոխել: Այսպէս ոչ միայն առողջապահութեան այլ և ազգապահութեան տեսակէտով շատ օգտակար պիտի լինի ձեզի այս ձամբորդութիւնն, որու տրամադիր կ'երևի արդէն Լիլի:

— Բայց, բարեկամ, պատասխան տուի Տոքթօր Բէյնի, պիտես արդէն որ Արևելք Եւրոպա չէ: Կենաց ամեն դիւրութիւնները կ'պակսին այն տեղ: Տաժանելի և ստէպ վտանգաւոր է ուղևորութիւնն ասիական նահանգներուն մէջ, ուր ոչ ճամբայ կայ, ոչ ապահովութիւն և ոչ հանգիստ: Մանաւանդ փափկասուն անձ մը՝ Լիլիին պէս, կարո՞ղ է տանիլ այնքան նեղութիւն ու դժուարութիւն, հապա վայրագ հրոսակներն ու ասպատակութիւնները քեզի ծանօթ չե՞ն, բարեկամ»

— Իմ կարծեօք, Նէլսօն, ոսկին ամեն պատուար կ'տապալէ, ամեն վտանգ կ'վանէ, ամեն եղուզակ՝ պատնուկ կ'դարձընէ: Լիլին վեհերոտ չէ, դու բաւական հարուստ ես, և կարող՝ ճամբուդ վրայ թափել ոսկիներ, որոյմէ կրնան օգտիլ և ազգակիցներդ: Իսկ Լիլիի ֆիզիքական վիճակին պատասխանելով՝ ես վստահ եմ որ աւելի պիտի օգտի իր մարմինն ու սիրտն Արարատայ և Արագածու լեռներու ու դաշտերու օդէն, աւելի պիտի ախորժի նա Եփրատայ ու Երասխայ ջուրը խմելով, քան թէ Լոնտոնի ածխային հեղձուկ օդը ծծելով ու Թէմիզի աղտոտ ջուրն ըմպելով, և իր կազմուածքն զգալի ոյժ ու կորով պիտի ստանայ:

— Շատ լաւ, բարեկամ, և ես կ'փափաքիմ գոնէ միանգամ հայրենի աշխարհս տեսնել, և պատրաստ եմ ստակ

չնայեր, սակայն պայմանաւ մը պիտի ընեմ այս ուղեւորութիւնը . . . :

— Եւ ի՞նչ է պայմանդ, Հարցուց Տոքթօր Բէյն:

— Այս է, որ դուն ես մեզի ընկերակցիս:»

Պահ մը խորհեցաւ եւս՝ Տոքթօր Բէյն պայմանս ընդունելու:

— Թէեւ տարիքս ու զօրութիւնս չեն ներեր, բայց ձեր սիրոյն համար պիտի ուղեկցիմ ձեզի, ըսաւ: Միայն երբ հրամայեմ ձեզի վերադառնալ, հրամանս պիտի կատարէք:

— Այդ ուրիշ խնդիր է:»

Այսպէս համաձայն դտնուեցան եւս՝ կ'ձնար Լիլիին հանդիպումը ստանալ: Լիլի պատրաստ էր:

— Եւ ինչպէս կասկած մը կ'տածէք իմ վրայ, ըսաւ նա: Զարմանքս պիտի տանէր միայն երբ Հայաստանէ զատ աշխարհ մ'առաջարկէիք ինձ՝ իբրեւ մեր ուղեւորութեան նպատակ: Սիբելի Բէյն, իմ հայրենիքս է այն տեղն ուր Նեղոսն կ'գտնուի, և Նեղոսի բնիկ հողն Հայաստանի հողն է: Ոչ միայն իմ առողջութեանս վիճակն, այլ և իր և իմ հայրենասիրութիւնս պարտ կ'դնեն մեր վրայ դէթ մի անգամ երթալ տեսնել այն աշխարհն՝ որու համար կ'տենչար արդէն Նեղոսն, երբ Անկլիացի էր: Իսկ հիմակ որ Հայ ես, յարեց նա ինձ դառնալով և անուշ ժպտելով, հիմակ աւելի չըմորոփեր Հոգիդ տեսնելու քու սիրականդ, որու երբեմն զոհեցիր սէրդ . . . : Ահա հասար փառասիրութեանդ, Նեղոսն, Հայրենի սէրն Լիլիի սիրոյն տեղը բռնեց, և Ճշմարիտը՝ սիրտդ ընտիր ու արժանի յաջորդ մը գտաւ իր նախորդ զգացման: Եթէ ուրիշ սէր մը գրաւէր սիրտդ, ես պիտի բողոքէի ասնոր դէմ. . . . : Սիբելի Բէյն, ուրախ եմ այդ ուղեւորութեան համար. Պ. Վուտ քիչ մը պիտի բարկանայ, դիտեմ, բայց դուն մեզի հետ ես, և այս կ'բաւէ, մեզ կ'պաշտպանես . . . : Շատ պաղ ու տխուր կ'երեւի ինձ այժմ Անկլիա, ուր համակրութեան, սիրոյ, շահու կապ մը չունիմ, այլ միայն վշտալի յիշատակներ: Եթէ Պ. Վուտ չդտնուէր այն տեղ՝ հազիւ պիտի յիշէի Լոնտօն որ իմ աղէտից թատրն եղաւ . . . : Ցաւագար, անզգայ հայր մը, մօր մը սգալէ նկարը միայն ինձ կ'սպասեն այն աշխարհն, ուր ո՛չ փափաք, ոչ նպատակ ունիմ առ այժմ դառնալու . . . : Ուստի պատրաստ եմ ձեզի հետեւելու . . . :»

Կ'տեսնես, սիրելի վուտ, խնդիրն այս կերպարանն առաւ: Վերստին կ'պրեմ քեզ երբ Զամբայ ելնեմ, և անտարակոյս Տոքթօր Բէյն պիտի համոզէ քեզ՝ թէ ի՞նչ պատճառաւ՝ ակնկալութեանդ հակառակ՝ այս ուղեւորութիւնն առաջարկեց մեզ:

ԳԱՄԱՆ ՁԲ

ՏՈՔԹՕՐ ԲԷՅՆ ԱՒ ՎՈՒՏ

Կ. Պոլիս . . .

Բարեկամ, Մարդ կ'առաջադրէ, Աստուած կ'տրամադրէ կ'ըսեն. սակայն այս պարագային մէջ, Լիլի կ'զգայ Նեղոսն կ'զգածուի, նա կ'խորհի, սա կ'գործադրէ: Իսկ ես ստիպուած եմ՝ իբրեւ բժիշկ և մանաւանդ իբրեւ հոգատար բարեկամ, անոնց ներքին տրամադրութիւնները զննել, և ըստ այնմ նիւթական ու բարոյական դարմաններ հրամայել:

Արդէն Նեղոսն գրած է քեզ, սիրելի վուտ, թէ Լոնտօն դառնալու խորհուրդն ես ինծի: Կ'հաւատամ, Հայաստան երթալու կ'պատրաստուիմ, ես որ այդ երկու սիրականներն, ինչպէս որ որոշած էինք, Լոնտօն բերելու մտադիր էի: Միտքս փոխեցի: Պատճառները յայտնի են: Մի տրամիր:

բարեկամ, այս ուղևորութիւնը շատ շատ հինդ վեց ամիս կրնայ տևել. . . : Յուսամ վերադառնալ Նելսոնի և Լիլլի հետ: Բայց դու մի կարծեր թէ մոռցուած ես: Կարելի չէ այս տեղ քայլ մ'առնուլ, խորհուրդ մ'ընել, առանց նոյնը քեզի յայտնելու: Թէև հեռու՝ միշտ մեր մէջն ես: Այնքան կ'համակրիս այս երկու էակներուն վիճակին, և ի բնէ անտի այնքան սերտ մտերմութեամբ կապուած ես Նելսոնի ու Լիլլիի հետ, որ բնապէս անոնց վրայ շարունակ տեղեկութիւններ առնուլ կ'փափաքիս: Ես այդ պաշտօնը պիտի կատարեմ, եթէ Նելսոն անհոգ դտնուի անդամ: Արդէն Անկլիոյ դեսպանատան հետ ամեն բան կարգադրած եմ մեր թղթակցութեան դիւրութեան համար, և միանդամայն անոր մէջօրայ բաւական ազդու յանձնարարական դիրեր ստացած եմ Բ. Դունէն՝ տեղական իշխանութեանց ուղղուած, որպէս զի մեր ճամբորդութեան ամեն դիւրութիւնները ընծայեն . . . : Դրամական կէտն ալ անտես առնուած չէ, թէև մեր երկու անփորձ սիրականներուն կարգադրութեանց մէջ ստակի խնդիրը շատ երկրորդական տեղ մը կ'բռնէ: Անկլիոյ Պանքայէն Պ. Նելսոնի անուան ղրկուելիք դումարները մեր դեսպանատունը պահեստի պիտի մնան, և՝ ի հարկին, անկից պիտի ստանանք որքան ստակ որ ուզենք:

Արտօրնօք կ'դրեմ դիրս: Ուղևորութեան պատրաստութիւն կ'տեսնուի: Լիլլի և Նելսոն սրտագին կ'ողջունեն քեզ և պիտի դրեն, Թերևս Տրապիզոնէն, կարմնէն կամ Մուշէն . . . : Մնաս բարեաւ . . . . . .

ՆԱՄԱԿ ՁԳ

ՏՈՐԴՈՒ ՌԻՑՆ Ս.Ա ՎՈՒՏ

Տարօն . . .

Գիտեմ, լռութիւնս այս անդամ երկար տևեց, բարեկամ, և կ'գուշակեմ որ արդէն մտահոգ կ'սպասես լուրի: Անհոգ եղիր, թէև երկար՝ այլ անվտանգ ուղևորութենէ մ'եաք՝ ահա հասանք Տարօն, Հայաստանի այս գաւառն որ երբեմն հռչակաւոր էր իր բնական ու իմացական բեղմնաւորութեամբը:

Աւելորդ է մանր նկարագրել քեզ մեր ճամբորդութեան բոլոր պարագաները. բաւ է ըսել միայն որ Նելսոն ու Լիլլի, քաղաքակրթութեան այս երկու թշուառ զաւակներն, կարծես թէ նոր հոգի ու թև առին կոխելով իրենց հայրենի հողն, ուր ամեն մէկ քայլին, նոր անակնկալ տպաւորութիւններ կ'ընդունին և շքեղ ու հրապուրելի տեսարաններու առջև կ'զմայլին կ'մնան: Ուստի մոռցած են գրեթէ այն տխուր յիշատակներն որ այնքան յուզած ու վրդոված էին իրենց կեանքն, և ահա այս էր և իմ նպատակս . . . :

Եւ արդարև՝ եթէ ոչ հայրենասիրական զղացում մը, նորոգութեան հրապոյր մը կ'դրաւէ նաև իմ միտքս Հայաստանի այս պատմական հին աշխարհին մէջ, որու փոշիին ներքեւ կ'հանդչին իրաւ եղերական, սրտաշարժ յիշատակներ, արիասիրտ դիւցազուններ և մարտիրոսներ, և որ սակայն իմ աչքիս կ'ներկայէ միայն նորոգիւտ և վայրենի աշխարհի մը բնական և ընկերական երևոյթները: Հին Հայաստանն Արարատայ և Տորոսի ներքին խաւերուն մէջ թաղուած է անշուշտ. մինչդեռ նորն, իր կեղևը, իր բուսայինն, հանքայինն ու կենդանական կարգերով, իրր սոսկալի երկրաբանական

դղրդումի մը ընորհիւ, կարծես թէ արդի ժամանակներս ըս-
կսած է կազմուիլ: Իր շքեղ ու ահարկու լեռներն ու կա-
պաններն, իր խորունկ հովիտներն ու վիհերն, իր բազմա-
ձիղ անկանոն դետերն ու առուներն, իր վայրի ծառերն ու
բոյսերն, մինչև անգամ իր կենդանիներն ու անոսպաս բնա-
կիչներն, իրենց ծակ ու ծուկ բնակարաններով՝ անբացատրե-
լի տպաւորութիւն մը կ'ընեն օտար ուղևորին վրայ:

Ա.յս միջոցիս՝ Մշոյ ընդարձակ դաշտավայրին արևելեան
ծայրը՝ բլրակի մը կատարն է մեր բնակարանն, Մաւնիկ ա-
նուն գիւղին մէջ: Սքանչելի դիրք մ'ունի, պտղատու ծա-
ռերու անտառ մը կ'շրջապատէ զայն, ալ կողմն Եփրատ
գետը կ'հոսի, հեռուն լեռներու պար մ'որ մինչև Սիմ կը
հասնի. դաշտին զանազան կողմերն ու բլրակներու ստորոտն
մանր մանր գիւղեր կ'տեսնուին: Երկար ժամանակ պիտի
մնանք այս գիւղակին և մր պիտի հաստատինք մեր կայանը,
դեռ ևս յայտնի չէ: Ա.յս միայն դիտեմ որ Լիլի շատ կ'ա-
խորժի այս պարզ գիւղային կեանքէն, և Հայաստանի արևուն
ու կլիմային տակ՝ օրէ օր իր փափուկ մարմինը նոր ոյժ և
կորով կ'ստանայ: Արդէն բնիկ Հայ աղջիկներուն պէս կը
հագուի, աւելի ընտիր ու վայելուչ ձև մը տալով իր հա-
գուստին, և իր բնական գեղեցկութեան՝ արևելեան նոր
փայլ և հրապոյր: Ձփնտուեր իր դիւր ու հանգիստ կեանքն,
իր հօրենական ապարանն ու համագամ կերակուրները, այլ
այս անշուք տնակն՝ որու մէջ կ'ապրի, այն կաթը, մածունն
ու պանիրը, նոյնպէս հաւերնու որսի միսն որով կ'կերակրի,
շատ աւելի համով ու սննդարար կ'գտնէ քան թէ ամենէ
ճոխ ու զարդարուն սեղանները: Երբ դուրս ման դալու ելլ-
նէ, բոլոր Հայ կիները, մանաւանդ աղջիկներն՝ իրենց գաշ-
տային աշխատանքը թողլով՝ զինք կ'շրջապատեն, հիանալով
կ'նային անոր շնորհալի երեսն, ու իրարու կ'փսփսան. «Հրեշ-
տակի պէս անուշ է:» Եւ Լիլի կարմրելով կ'ըսէ հայերէն
ընդուսա, — նս ձեր քոյրն եմ, . . .:» Պարզիկ աղջիկնե-

րուն հիացումը կ'աւելնայ, վհերոտ քայլով Լիլիին կ'մո-
տենան, ոմանք անոր երկայն գեղձան մազերը, այլք անոր
քնքուշ ձեռքերն և ուրիշներ անոր զգեստները կ'փայփայեն
կ'զգուեն, որպէս թէ կ'փափաքին ստուգել թէ իրօք Հայ աղ-
ջիկ մ'է Լիլի, մարդկայ'ն եակ մ'է, թէ ոչ օտարազգի
կամ երկնային հոգի մը . . .:

Ունինք նաև դրացիներ՝ որ թէև կերպարանքով քիչ շատ
Հայուն նման, կ'տարբերին սակայն իրենց վարած կեանքով,
ասոնք են Քուրդերն, դրեթէ երկրին տիրապետներն: Ա.յս
վրանաբնակ հրոսակներուն ստէպ հանդիպելնանք մեր Ճամ-
բորդութեան ժամանակ: Հիւրասէր են, քաջ և անվհեր,
սակայն երբեմն իրենց արիութիւնն անմեղներու և ուրիշին
հօտին ու արջառին վրայ կ'փորձեն: Մեզ իրրև Եւրոպացի
Հարուստ ուղևորներ նկատելով՝ դրամ կորզելու կամ կողոպ-
տելու փափաք մը տածէին թերևս, եթէ մեզի ուղեկից չլի-
նէին խումբ մը Հայ զինեալ կարիճներ, և մեր ընտիր հրա-
զէնները հետ խաղալու վտանգը չտեսնէին . . .:

Կ'աւարտեմ դիրս. թերևս քանի մ'օրէն Վանայ ծովուն
վրայ պտոյտ մ'ընելու ելնենք և Շամիրամայ քաղաքն այցե-
լենք: Յուսամ, դէպ ի Եւրոպա Ճամբայ ելնելէն առաջ՝ քեզի
վերստին դրել:

ՆԱՄԱԿ ՃԳ

ՏՈՐԴՈՐ ՐԻՑՆ ԱՒ ՎԱՆԻՑ

Մ—ղ . . .

Ա.յս պիտի լինի իմ վերջին դիրս, բարեկամ, վաղը Ճամ-

բայ կ'ելնեմ մինակս։ Նելսօն կամ՝ ինչպէս այս տեղ կ'անուանեն, Ներսէս ու Լիլի կ'մնան Հայաստան, ուր կարծես թէ սրտով և մարմնով կ'վերածնին . . . չեն այլ ևս երկու անկլիայի տարփածուներ այլ երկու ազգակից հոգիներ, Հայաստանի օրհնաց, աւանդութեանց և այս դեղջական կենաց սիրահարներ . . . ։ Հօրենական կտակին սկսած հոգեկան այլափոխութիւնը Հայրենի օդն ու հողը կ'աւարտեն, իսկ Գլակայ վանքն մեր ըրած մէկ այցելութիւնը բոլորովին զտեց ու մաքրեց Լիլիի ու Նելսօնի հոգին, որ դեռ կ'պաշարուէր մերթ ընդ մերթ հին տրամութեան մը ստուերներով։ Այս վանքին վանահայրը, պատկառելի, ուշիմ, պարզասէր ծերունի մը, Նելսօնի կենաց պատմութիւնն լմանալով լացաւ ու ըսաւ.

— Ա՛հ, քանի քանի Հայեր արդեօք ձեր բաղդին վիճակած են և ի սպառ կորած, մինչդեռ դուք ահա կ'վերածնիք Հայաստանի համար, Հայաստան, որ ոչ միայն իր ներքին տառապանաց վրայ դարերէ ի վեր կ'ողբայ, այլ և իր օտարասեր և կորուսեալ զաւակաց վրայ։»

Եւ ապա ծերունին հանդարտ այլ սրտառուչ ձայնով մը սկսաւ նկարագրել Հայաստանի աղէտից հին ու նոր պատճառները, զոր անքաղաքապիտութեան, կառավարական զեղծումունքի, տգիտութեան, օտարասիրութեան և դաղթականութեան վերագրեց և յարեց.

— Եւ սակայն Հայաստանի սիրտը դեռ կ'բախէ, դեռ նաշունչ ունի և այն ժամանակ պիտի շարժի, վերականգնի երբ իր ժիր զաւակներն, բանւոր, արհեստաւոր, մշակ, վաճառական, դիտուն, հարուստ, որ այժմ օտար աստղերու տակ կ'տառապին և կ'չքանան, որ Հայրենի երկրին անուշութիւններն ու թագուն դանձերը կ'անդիտեն, որ տար աշխարհներ իրենց գիտութեամբ, ճարտարութեամբ ու հարստութեամբ կ'ճոխացընեն, խմբովին վերադառնան Հայրենիք, քու օրինակիդ հետևելով, սիրելի Ներսէս, ղեհելով նիւթական

հանդիստ, օտարոտի փառք ու պաշտօն, ինչպէս դու ղեհեցիր, աւելի մեծ ղեհ, գժբաղդ սէր մ'որ սակայն նոր երանութեան մ'աղբիւրն և Հայրենասիրութեան վառարանը պիտի դառնայ . . . ։»

Այս պարզ խօսքերն այնքան խոր տպաւորութիւն ըրին մեր վրայ, որ Լիլիի աչքերը լցան և Նելսօն ըսաւ, գլխով ցոյց տալով.

— Հայր սուրբ, ահա մեր աղատարարն ու Հայրն. Տոքտօր Բէյնի պարտաւոր ենք մեր կեանքն ու Հայաստանն, և նա պիտի հաւանի անշուշտ թողուլ մեզ այս թշուառ այլ սիրական երկրին մէջ, և՝ եթէ կ'հաճի, ինքն ևս մեզի հետ մնալ։

— Աղատ ես մնալ, Նելսօն, ըսի. բայց այս հերիք չէ, հերիք չէ սիրել Հայաստանը, պէտք է գործել և այդ սէրն արդեամբ ցոյց տալ։

— Անտարակոյս, պատասխանեց Նելսօն, և Պ. Վռատ ու դու գործակից պիտի լինիք ինձ։

— Սակայն մեծ շահեր ու կալուածներ ունիս Անգլիա։

— Արդէն ամեն բան խորհած եմ, և իմ խորհուրդներս ժամանակին քեզ և Պ. Վռատին պիտի հաղորդեմ։»

Կ'տեսնես, Պարոն Վռատ, նեղ վիճակի մէջ էի։ Չէի կարող աւելի դիմադրել Պ. Նելսօնի փափաքին, զոր սակայն օրհնաբար կ'դատեմ։

Երբ մեր տնակը դարձանք, նոյն իրիկունն իսկ խորհրդի նստանք։

— Հայրենի սէրն ազնիւ բան է, Նելսօն, ըսի, և ես քիչ շատ դրդիռ եղայ, դիտեմ, այս ուղևորութեանդ, բայց միաքս ձեղի հետ դառնալ էր։ Լաւ կշռէ հետևանքը։ Այս հայրենիքդ զուրկ է այն ամեն պայմաններէն որոց մէջ ապրած է արդէն բարեկիրթ մարդ մը, մանաւանդ կին մը։ Կ'իմանամ ինչ է ուղևորիլ Հայաստան, զայն սիրել, համակրիլ անոր աղէտից և օդնել, սակայն կ'երկմտիմ երբ խնդիրն ա-

նոր ծոյը բնակելու վրայ դառնայ։ Ամեն ինչ կ'պակսին այս տեղ. կենայ դիւրութիւն, հանգիստ, ապահովութիւն, հաղորդակցութեան միջոցներ, ընկերութիւն, կ'պակսի մտաւորական շարժում. . .

— Այդ շարժումը կրնանք տալ անոր, պատասխանեց Նէլսօն։

— Ունինք կարողութիւն։

— Ունիմ հաբսբուրգեան և ֆոմֆ։

— Ակնարկութիւնդ կ'ըմբռնեմ. իմ գէնքով ղնս սպաննել կ'ուզես։

— Այո՛, սիրելի Բէյն, այս երկրին թշուառութեան գլխաւոր պատճառն, ըստ իս, ծուլութիւնն ու դրամագլխի պակասութիւնն է։ Ես բոլոր հարստութիւնս պիտի թափեմ այս դաշտերուն ու ժայռերուն վրայ և նոր հարստութեան աղբիւրներ պիտի դանեմ։

— Կ'գովեմ խորհուրդդ. բայց ես, Նէլսօն, պարտաւոր եմ մեկնիլ։»

Այս խնդրոյն վրայ վերստին խօսք չբացի, սիրելի Վուտ։ Նէլսօն և Լիլի անսասան կ'երևին իրենց պիտաւորութեան մէջ, և չեմ յուսար որ բարեկամութեան զոհեն ինչ որ չկրցան զոհել իրենց հին ու անկեղծ սիրոյն, հայրենասիրութիւնը։

Շատ սրտաշարժ պիտի լինի վաղն մեր բաժանումը, կ'ենթակայեմ, սակայն ուր որ դանուիմ, սիրելի Վուտ, անչինչ պիտի մնայ այս երկու անկեղծ ու ազնիւ հոգիներուն յիշատակն իմ սրտիս մէջ, որքան ժամանակ որ ապրիմ։

ՆԱՄԱԿ ԱՁ

ՆԵՐՍԷՆ ԱՌ ՎՈՒԴ

Մ՚ոռ. . .

Թարեկամ, Վերջապէս իմ ասժանդական ու տարտամ կեանքս կայան մը կ'գտնէ և իմ հոգիս ու միաքս՝ հանգիստ, այս է՝ անսպառ աշխատանք մը։ Կ'գտնուիմ իմ նախահարցս, Մամիկոնէից աշխարհն, ի Տարօն, և Լիլիի հետ կ'մնամ Հայաստան։ Պատմական, շքեղ ու անկախ Հայաստանը չէ այս, այլ աւերակ մը, գերեզման մը. . . . . Եթէ մարդ եմ, եթէ երակներուս մէջ հայու արիւն և ըղեղիս մէջ անկլիսպի աշխոյժ ու լոյս կ'շարժին ու կ'վառին, եթէ հաւատ ունիմ յառաջդիմութեան և ազատ գործունէութեան, պէտք-է որ այս լեռներն ու բլուրներն որ զիս կ'շրջապատեն, այս փլատակներն որ կ'մխան, այս արիւնաներկ դաշտերն որ դեռ տատասկներով ու ձահիճներով ծածկուած են, այս գետերն ու ձկնկներն որ անթումբ կ'յորդեն, կ'ողողեն, կ'աւերեն, այս անտառներն ուր գայլեր, օձեր ու վարազներ որջ դրած են, այս սարաւանդներն որոց վրայ կիսափուլ բոլոտուտ վանքեր և տաճարներ կ'երևին, այս ամեն բնութեան և արուեստի յուժերն, որ ընդ ունայն կ'սպառին, այս տգէտ, դանդաղ ու անհոգ բնիկներն որ իրենց կոխած հողին տէրն անդամ չեն, այս հրուտակներն որ անսանձ կ'արշաւեն ու կը թալլեն, այն զեղծմունքն որ անիշխանութեան վիժմունքն են, այն անստուգութիւնն որ ապիտութեան ու անհոգութեան հետևանքն է, այլափոխին, չէ թէ բուռն՝ այլ քաղաքակրթական միջոցներով, պէտք է որ հանքեր, այգեստաններ, նաւարկելի ծովեր ու ջրանցքներ, բանուկ ապահեռներ, գործա-

տուններ, պարտէզներ դառնան, պէտք է որ գործունի աշխատաւորներ, հողատէրներ, հանդարտ ու բարեկարգ, ժիր ու օրինաց հնազանդ քաղաքացիներ դառնան, պէտք է որ մետաղներ, զանազան արմտիք, ապրանք, ուսմունք ու լոյս սփռեն, պէտք է որ երկաթը, ղողին, ելեկտրական հեղուկն կենդանութիւն, շարժում տան այս անշունչ և փշալից բնութեան: Հսկայի՛ գործ, այնպէս չէ՞, սիրելի վ.ուա: Կարելի՞ է միթէ ընել այս հիմնական յեղաշրջումն, և միթէ ամեն փոփոխութիւն ու զարգացում բնական և մարդկային օրինաց համեմատ ասոնցմէ առանց տեղի չէն ունենար: Այո՛, բարեկամ, կարելի է, եթէ աշխատութիւն, ճարտարութիւն, դրամագլուխ, հող և դիտութիւն անոնի բաւեր չեն:

Արդէն ականատես վկայ այդ ոյժերէն յառաջ եկած աբեւմտեան քաղաքակրթութեան, արդէն քաջ գիտնալով որ կառավարութիւն մ'անոր մէջ երկրորդական ու երրորդական բաժին մ'ունի, և թէ մանաւոր ու հասարակական ոյժերու շնորհիւ աւելի կ'յառաջէ ժողովուրդ մը քան թէ արքունի հրովարտակներու և օրինաց շնորհիւ, ես հաստատապէս ուրոշած եմ լինիլ, Ալիլեի հետ որ այժմ Ջուշան կ'կոչուի, այն ոյժն որ հիմ կ'գնէ, որ մանաւոր և ապա հասարակական խորհուրդներ կ'իրագործէ:

Ունիմ բաւական դրամագլուխ, բարեկամ, և անոր արժէքը հիմակ կ'դնհատեմ, ունիմ արևմտեան գաղափարներ զոր՝ տեղւոյս հանգամանաց համեմատ՝ կրնամ գործադրել, և ասոնք Հայաստանի զարգացման պիտի նուիրեմ, յուսալով նաև որ հետևորդներ պիտի գտնեմ այն հարուստ մերազնէից մէջ, որ փառասիրութիւն ունին, բայց այդ փառասիրութեան օրինաւոր և արդիւնաւոր ուղղութիւն ու ասպարէզ մը տալու՝ եթէ ոչ տրամադրութիւն, պրպիւռ և շարժառիթ չունին:

Սակայն, բարեկամ, մի՛ կարծեր թէ այնքան անձնուէր ու պարկեշտ եմ, որ փառք ու անմահութիւն չեմ սիրեր, և թէ լոկ հայրենասիրութեան ներշնչութենանց կ'հնազանդիմ:

Ո՛չ, ես ևս փառասէր եմ, բայց կ'սիրեմ այն փառքն որ չէ թէ վարձկան դովաբաններու ու շողոքորթներու թմբուկի ու սրնդի ձայներով կ'ստացուի, այլ ճշմարիտ մեծագործութեան և մարդասիրութեան հոչակի վրայ կ'հիմնուի: Ըսէ՛, խընդրեմ, ամեն բան, հայր, մայր, հոգի, սէր և սիրուհի կորսնուցէ եռև՝ կարող էի ասկից աւելի օրինաւոր փառասիրութեամբ, այս է՝ հայրենի երկրին օգտակար լինելու փառասիրութեամբ՝ վառիլ, Անխորհո՛րդ բան մ'էր հին սէր, հին աղէտ ու յիշատակներ թաղել հայրենի երկրին աւերակներուն տակ և նոր կեանքով, նոր յոյսերով, նոր ապագայով վերականդնիլ թէ ոչ ի սպառ հալիլ ու մեռնիլ. . . . . :

Եթէ կամիս, երազ սեպէ այս խորհուրդս, բայց ներելի է ինձ պաքսնին խօսքը կրկնել թէ՝ — կարող եմ, ուրեմն կ'գործեմ» և յաւելուլ — «Հարցս հողը կ'կոխեմ, ուրեմն Հայ եմ և կայ Հայաստան մը, թէև նկուն և աւերուն:»

Գիտես իմ կարողութիւնս, բարեկամ: Անկլեայ հարստութեան ովկիանոսին մէջ կաթիլ մը ջուր է այն, իրաւ, բայց Հայաստանի համար կենսատու աղբիւր մը կրնայ դառնալ:

Իմ Հօրենական ստացուածքիս մէկ քառորդը կ'բաւէ գրեթէ բոլոր Տարօնոյ դաւառին տէր դառնալու համար: Արտադրութեան մէկ գործին, հողն՝ առատ ու հարուստ է այս տեղ, այլ միւս գործիքն, աշխատութիւն ու դրամ կ'պակսին: Արդէն սակարկութեան մէջ եմ և յուսամ դնել դանձեր, ընդարձակ հողեր որ, այժմ անբերրի ու անարդիւն, կրնան արդիւնաւորիլ աշխատութեամբ և դրամով: Ճոխութեան մէջ անօթի կ'մեռնի Հայաստանցին, նման այն մարդուն որ՝ ձեռքերը կապած՝ հարուստ ու զարդարուն սեղանի մ'առջև կ'դտնուի: Պէտք է քակել այդ ձեռքերն ու աշխատութեան վարժել:

Ուստի կ'ուզեմ իրացընել Անկլիա ունեցած բոլոր անշարժ կալուածքս, և թէ այս և թէ ուրիշ կարևոր գործերուս համար քիզ և պ. Ռէյնն իմ կողմէ գործակատար ու փոխա-

նորդ կ'կարդեմ: Այս փոխանորդութեան դերն արդէն յանձնած եմ մեր բարեկամին, որ վաղը մեկնելու մտադիր է: Անհրաժեշտ է մեր գրակցութիւնը շարունակել, ոչ միայն մեր հին բարեկամութիւնը յարատև մշակելու, այլ և ձեր ազգակցութիւնն ապահովելու՝ իմ մեծ ձեռնարկութեանս յաջողութեան համար: Դուք արևմտեան մարդիկ, լուսամիտ ու քաղաքակիրթ մարդիկ, մեզ Արևելցւոց պիտի հասցընէք լոյս մեքենայի հետ, ճարտարութիւն գործաւորներու հետ, արուեստ և դիտութիւն գիտուններու հետ: Այդ ամեն գործիքն ի հարկէ դրամի ուժով կ'շարժին Արևմուտքէն Արևելք, և այժմէն կ'յայտարարեմ որ Անկլիոյ Պանքայէն իմ տարեկան եկամուտս 1500 ոսկի միայն մշակական, գործարանական և այլ մեքենաներու ու բանուորներու պիտի յատկացընեմ: Ձեզ մնայն աւելի պիտի ունենամ աւելի մեծ ու որոշ հրահանգներ ձեզ ուղղել:

Արդէն գործի սկսած եմ: Շուշան, որ քանի կ'հայանայ Հայաստանի մէջ այնքան կ'գեղեցկանայ, Շուշան, որ արդէն կ'սիրուի և Հայ օրիորդներուն թագուհին ու պսակն է և իմ սրտակից խորհրդատուս, Շուշան իր բնաւորութեան և ղազմանց յարմար պաշտօն ու զբաղմունք մ'ընտրած է: Կ'պատրաստուի Հայ աղքատիկ, և շատեր կարօտ են, օրիորդներու համար ապաստաններ բանալ, քիչ շատ ուսմամբ վարժել և մանաւանդ զանազան կանայի արուեստներու ու ձեռագործի սպարապել, այս է կատեղէն, դուլպայ և այլն շինել տալ՝ ի հարկին գործիներու մէջտեղ: Նոյնպէս որբ ու անտերունչ աղջկանց համար յատուկ կայաններ պատրաստել, անտեսական ու երկրագործական դասեր տալ, այնպէս որ կարելի եղածին չափ օգուտ քաղէ երկիրն իր աշխարհներու բուրդէն, իր արջառներուն կաթէն, սերէն և զանազան բերքերէն: Ձգիտի մոռնայ նաև օժտել և կարգել այն աղջկունքն որ իրենց վարքով ու աշխատասիրութեամբ իր սէրն ու համբոյրը գրաւելու պիտի յաջողին: Աղնիւ և գեղեցիկ զբաղմունք:

Իսկ իմ գործս աւելի ծանր պիտի լինի, բարեկամ: Անշուշտ կարօտ եմ գործակիցներու: Կ'փափաքէի որ այս տեղ իմ քովս լինէիր, և մանաւանդ կ'ուզէի որ Անկլիայէն Ամերիկա և Աւստրալիա դաղթող անկլիացւոյ դասէն կարդ մը տոկուն, ժիր, պարկեշտ ու արհեստագէտ բանուորներ այս կողմերն ևս դաղթէին և գործակցութեան օրինակ տային բնիկներուն: Թերևս այս խորհուրդս ևս ի գործ դնեմ ժամանակին: Առ այժմ իմ բոլորտիքս միայն խոպան ու անապատ նիւթեր կան, հողային, բուսային, կենդանային ու մարդկային: Դժուարին է անաստուն աստուձէն զանազանել՝ իմացականութեան կողմէ. սակայն վստահ եմ որ Արևելցիին իմացական կարողութիւնը մոխրի ներքև ծածկուած հրատներու կ'նմանի, թեթև հով մը պէտք է որ բռնկի, և այդ հովը պէտք է դայ մեզի Արևմուտքէն . . . :

Առ այժմ հայ, քուրդ, ասորի, տաճիկ, թաթար՝ իմ նպատակս իմանալով, կ'դիմեն ինձ և գործ կ'խնդրեն: Օրողչէքն լոկ օրուան հացի դիմեն է. բաւական ժամանակ այսպէս պիտի շարունակուի, մինչև որ գործերն աւելի ընդարձակութիւն առնելով նոր գործաւորներու պէտքն զգալի լինի: Անգործ՝ հետևապէս աւերիչ թևեր ու յափշտակիչ ձեռքեր շատ կան: Աշխատանքն ու սովորականէն բարձր օրողչէք մը՝ ոստիկանութենէ աւելի գործ պիտի տեսնեն, յուսամ, և քիչ շատ կարգ կանոն հաստատելու պիտի օգնեն: Երբ մի անգամ արդիւնաբեր սեպհականութեան տէր դառնան այնպիսիները որ այժմ աւազակութեամբ կ'ապրին, պիտի սորվին յարգել ուրիշին իրաւունքն, որպէս զի իրենցն ալ յարգուի: Իսկ դիւրին հաղորդակցութեան, հսկողութեան և պաշտպանութեան ազդու միջոցներ պիտի ստիպեն անզուսպ հրոսակները քաշուիլ լեռներու քարայրներ, ուր սակայն երկար ժամանակ չպիտի կարենան ապրիլ, երբ իմ մտածած քաղաքակրթիչ գործիներն անոնց յետին բնական ամրութիւններն ալ արշաւեն:

Այսպէս, բարեկամ, աշխատութեան, գործունէութեան ու շահագործութեան մեծ ասպարէզ մը կ'ներկայի առջեւս: Իական կէտն է ձեռքիս տակ գտնուած բնական ու մարդկային ոյժերն ի գործ դնել: Այս բանիս պիտի նուիրեմ կեանքս, քարեկամ, և եթէ ապրիմ ու ծերութեանս ժամանակ տեսնեմ Տարօն ու շրջակայ գաւառներն, ինչպէս որ կ'երեւակայեմ, շէն, ծաղկած, արդասաբեր, պիտի համարձակիմ ըսելու.

— Իմ և Շուշանի ճգունքն ապարդիւն չեղան, Հայաստան իր ապագան ապահովեց:»

Իսկ ես Շուշանի հետ իմ հայրենակիցներէս, իրրև վարձք, ուրիշ բան չպիտի խնդրեմ, եթէ ոչ ինչ որ խնդրեց՝ ընկերային և քաղաքական փոթորիկներէն անցնող մեծ բանաստեղծ մը.

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՄԻՋ ՇԻՐԻՄ ՄԸ:

ՎԵՐՋ

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՆ

Այդ նահանջիս վիպական մասն, ինչպէս որ կ'երեւի, անաւարտ կ'մնայ: Այդ նաեւ ուրիշ մաս մ'որ կ'պատկանի Ներսէսի եւ Շուշանի խորհուրդներուն եւ՝ Հայաստանի մէջ՝ իրենց առաջադրած նպատակին գործադրութեան, սակայն այդ մասը զանց առի հրատարակելու, այլ եւ այլ պատճառներով, զոր աւելորդ կ'համարիմ յիշատակել:

Ես'խոստանամ սակայն այդ լրացուցիչ մասը լոյս հանել երբոր պարագաները ներեն:

Մ. Մ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0338551